Պիեսների սցենարական մշակումներ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԻԵՄՆԵՐԻ ՍՅԵՆԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

(ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիա)

Նվիրվում է ԵՊՀ մշակույթի կենտրոնի հիմնադրման 15-ամյակին:

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 82-2
ԳՄԴ 84-6
Պ 556

Կազմող՝
Կարինե Դավթյան

Պ 556 Պիեսների սցենարական մշակումներ / Կազմող՝ Կարինե Դավթյան: ԵՊՀ մշակույթի կենտրոն.- Եր.: ԵՊՀ հրատ., 2021.- 350 էջ + 8 էջ ներդիր:

Ժողովածուում զետեղված են ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի կողմից բեմադրված պիեսների՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար և բեմադրիչ Կարինե Դավթյանի մշակած ու գրած սցենարները:

ՀՏԴ 82-2
ԳՄԴ 84-6

ISBN 978-5-8084-2485-2

© ԵՊՀ հրատ., 2021
© Կազմողի համար, 2021

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Տարիներ առաջ, երբ ԵՊՀ շրջանավարտների միավորման կողմից ուսանողական թատրոն ստեղծելու գաղափարն առաջացավ, դժվար թե կարողանայինք պատկերացնել, որ 15 տարի անց հնարավորություն կստեղծվի տպագրելու նման ժողովածու: 2005 թվականին ստեղծվեց «Համալսարանական» թատրոն-ստուդիան, որը 1 տարի «Շրջանավարտների միավորման» կազմում էր: 2006 թվականի հունիսի 6-ին, երբ ստեղծվեց ԵՊՀ մշակույթի կենտրոնը, այն սկսեց գործել կենտրոնի կազմում: Դասական գրականությունը, դրամատուրգիան ուսանողությանն ավելի հասանելի դարձնելու մտքերը ստիպեցին որոշակի փոփոխությունների ենթարկել բուն գրական ստեղծագործությունները՝ դրանք բեմադրելու, հիմնական ասելիքը տեղ հասցնելու և ուսանողությանը հետաքրքրելու համար: Ստացվեց այնպես, որ կրճատվում կամ ավելացվում էին ոչ միայն տեքստերը, տեսարանները, այլև կերպարները: Բացի պիեսներից՝ բեմադրվեցին նաև պատմվածքներ, պոեմներ, իսկ Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» վերնագիրը կրող ներկայացման սցենարը ամբողջությամբ գրվեց ասելիքի շուրջ՝ ցանկանալով ներկայացնել հայ մեծանուն գրողի բազմաբովանդակ, հակասական կյանքն ու իր ստեղծագործությունները: Յուրաքանչյուր ներկայացում մեծ արձագանք էր գտնում, երբեմն նաև հակասական կարծիքների և քննարկումների առիթ տալիս, բայց կարևորն այն է որ տալիս էր մտածելու անհրաժեշտություն:

Պիեսների սցենարական մշակումների այս ժողովածուն ընդգրկում է 9 ներկայացման սցենար, որոնցից յուրաքանչյուրի սկզբում ներկայացված է փոփոխությունների վերաբերյալ մանրամասն նկարագրություն:

2020 թվականին լրացավ «Համալսարանական» թատրոն-ստուդիայի, իսկ այս տարի՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնի 15-ամյակը, և կարծում եմ, որ ժողովածուն կարող է մի յուրօրինակ նվեր լինել այս հոբելյաններին, նաև թատերասեր այն մարդկանց, որոնք համարձակ են և գնահատում են նորարարական մտածողությունը:

Երևանի պետական համալսարանում արդեն 15 տարի է գործում է բուհում գեղագիտական ճաշակ զարգացնող և արտալսարանային բազմաբովանդակ կյանք կազմակերպող կարևոր մի կառույց՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնը, որն իր գործունեության 15 տարիների ընթացքում կարողացել է կատարել իր առջև դրված բարդ և հայրենանվեր առաքելությունը: Բազմիցս նշել եմ, որ Մշակույթի կենտրոնը ԵՊՀ-ի կարևոր այցեքարտերից մեկն է: Կենտրոնում գործող խմբերով ՀՀ-ում և Հայաստանի սահմաններից դուրս մշտապես իրականացվում են բազմաբնույթ ծրագրեր, որոնց հաջողություններն ու ստացված արձագանքները փաստում են, որ Մշակույթի կենտրոնն արժանի է համարվել մայր բուհի զարկերակներից մեկը: Կենտրոնի ակտիվ ներգրավվածությունը ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող հանրային միջոցառումների կազմակերպմանը թույլ է տալիս ինչպես կենտրոնի սաներին, այնպես էլ մյուս ուսանողներին ինքնադրսևորվել որպես արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, ինչը մեծ դերակատարություն ունի միջանձնային հարաբերությունների ճիշտ հավասարակշռության գործում:

Պետք է նշեմ նաև կենտրոնի տնօրենի՝ իսկական համալսարանական Կարինե Դավթյանի անմնացորդ նվիրվածության մասին, որն իր կազմակերպչական ունակություններով և մշտապես նորարական մտահղացումներով նոր լիցք է տալիս բուհի մշակութային կյանքին: Համալսարանի այս երիտասարդ, բայց հագեցած կենսագրություն ունեցող կառույցն իր ներդրումն ունի պատվարժան քաղաքացու դաստիարակության և հայրենիքի արժեքները ճիշտ գնահատող սերունդ կրթելու գործում: Ողջունում եմ նաև կենտրոնի երգչախմբի համար արված երգերի մշակումների և 15 տարիների ընթացքում բեմադրված ներկայացումների պիեսների տպագրությունը: Սա կարևոր և բացառիկ նախաձեռնություն է և մնայուն արժեք, ինչպես մայր բուհի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար:

Հանձին Կարինե Դավթյանի՝ շնորհավորում եմ Մշակույթի կենտրոնի ողջ անձնակազմին, բոլոր տարիների սաներին կենտրոնի հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով հարատևություն և համալսարանին հեղինակություն բերող նորանոր ստեղծագործական հաջողություններ:

ԵՊՀ միջազգային համագործակցության
և հասարակայնության հետ կապերի գծով
պրոռեկտոր Արթուր Խաչատրյան

Մշակույթը կոչված է մարդու հոգու մաքրման, վերափոխման և հարստացման գործի առաքելությանը, այն լուծում է դաստիարակչական խնդիրներ և ձևավորում աշխարհայացք: Այս գաղափարական հենքի վրա 2006 թվականի հունիսին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ստեղծվեց մի յուրօրինակ մշակութային օջախ՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնը, որն այս տարի բոլորում է իր 15-ամյակը: Կենտրոնի առաջնահերթ խնդիրներն են բուհի մշակութային կյանքի, համալսարանականների շրջանում անցկացվող մշակութային միջոցառումների համակարգումը, ինչպես նաև ԵՊՀ-ում գործող կառույցների կողմից կազմակերպած միջոցառումների համակարգումը, համախմբումն ու դրանց որակական չափանիշների ապահովումը: Հիմնադրման օրվանից կենտրոնն իր առջև նպատակ է դրել մշակութային դաստիարակությամբ կրթելու երիտասարդ սերնդին: Այս տարիների ընթացքում ԵՊՀ մշակույթի կենտրոնը տաղանդավոր երիտասարդ ստեղծագործողների համար ստեղծել է նաև իրենց աշխատանքները հանրայնացնելու հնարավորություն՝ փառատոների և մրցույթների արդյունքում լավագույն ճանաչված ստեղծագործությունները տպագրելով գրական, կերպարվեստի ու երաժշտական հեղինակային ժողովածուներում: Կենտրոնի 15-ամյակի առիթով որոշեցինք տպագրել «Համալսարանական» թատրոն-ստուդիայի կողմից բեմադրված ներկայացումների սցենարները, որոնցից յուրաքանչյուրը հիմնված է գրական համանուն ստեղծագործությունների վրա, բայց իմ կողմից ենթարկվել է փոփոխությունների և նոր շունչ ստացել: Ինձ համար կարևոր է եղել նաև սցենարական աշխատանքներում ներգրավել իմ ուսանողներին, քանի որ վստահ եմ, որ նման համագործակցությունը նս շատ լուրջ կրթական աշխատանք է և իրենց համար կարևոր ինքնաբացահայտման հարթակ: Կարծում եմ, որ այս ժողովածուն, հասանելի լինելով մասնագիտական լայն շրջանակներին, կարող է օգտակար լինել այլ թատրոնների և ռեժիսորների համար նս: Պետք է նշեմ, որ այսպիսի ձևաչափով ժողովածու առաջին անգամ է տպագրվում, և մեզ համար պատվաբեր է հիմք դնել նման կարևոր նախաձեռնության, որը կդառնա շարունակական:

Շնորհակալություն եմ ուզում հայտնել ԵՊՀ ներկա և նախկին ղեկավարությանը մշակույթի կենտրոնի կայացման գործում իրենց կարևոր ներդրումն ունենալու, կենտրոնի կողմից կատարված աշխատանքներին աջակցելու և մեր գործունեությունը կարևորելու համար:

Մեծագույն սիրով և երախտիքի զգացումով շնորհավորում եմ ԵՊՀ մշակույթի կենտրոնի բոլոր տարիների սաներին, աշխատակիցներին, խմբերի ղեկավարներին, գործընկերներին, կենտրոնի հետ համագործակցող մշակութային կառույցներին և

անհատներին, համակիրներին ԵՊՀ մշակույթի կենտրոնի ծննդյան 15-ամյակի առիթով՝ ցանկանալով բազում հագեցած աշխատանքային տարիներ և ստեղծագործական հաջողություններ՝ ի նպաստ հայ մշակույթի զարգացման և մեր երկրի առաջընթացի:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի տնօրեն,
«Համալսարանական» թատրոն-ստուդիայի
գեղարվեստական ղեկավար
Կարինե Դավթյան

ՀԵ՞Յ, Ո՞Վ ԿԱ...

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է

«ՋԻՄ ԴԵՆԴԻ»-Ն

Ըստ Վիլյամ Սարոյանի
«Հե՞յ, ո՞վ կա» և «Ջիմ Դենդի» պիեսների

Սցենարի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Պիես՝ մեկ գործողությամբ

Նկարագրություն

Վիլյամ Սարոյանի «Հե՜յ, ո՞վ կա...» պիեսը տրագեդիա է՝ ռոմանտիկ սիրո մասին, որը տեղի է ունենում ԱՄՆ Թեքսասի նահանգի Մատադոր քաղաքում: Անբարոյական կինը, որն ամուսնացած էր, խաբեությամբ, մի խաղամոլ տղայի հանուն փողի նստեցնում է բանտ: Ճակատագրի բերումով տղան բանտում հանդիպում է մի աղջկա, որը բանտի սպասուհին է և սիրահարվում է իր կյանքի ամենաառղբերգական պահին, երբ, ըստ այդ քաղաքի օրենքի, ամուսնացած կնոջը պախարակող մարդուն քարկոծելով սպանում է հասարակությունը: Պիեսն ինքնին հարցադրումներ է նետում հասարակությանը՝ իր բարքերի հետ կապված: Այստեղ, միացնելով Վ. Սարոյանի «Ջիմ Դենդի» պիեսից որոշակի կերպարների մենախոսություններ, փորձել եմ պատասխանել իր «Հե՜յ, ո՞վ կա...» ստեղծագործության միջոցով նետած հարցադրումներին:

Գործողությունները տեղի են ունենում բանտում՝ ճաղավանդակի մեջ, բայց բեմում ճաղավանդակ է միայն բեմի ետևի մասը՝ դրանով ներառելով ամբողջ դահլիճը:

Բեմի կենտրոնում դրված է մի աստիճան՝ խորհրդանշելով կյանքի վերելքներն ու վայրէջքները, որը ներկայացման միակ դեկորացիան է:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

«Հե՜յ, ո՞վ կա...» պիեսը «Համալսարանական» թատրոն-ստուդիայի կողմից բեմադրված առաջին ներկայացումն է: Պրեմիերան տեղի է ունեցել 2005 թվականի ապրիլի 28-ին:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Տղա
Աղջիկ
Տղամարդ
Տղամարդ (2-րդ)
Կին
Ջիմ Դեվդի
Ֆիշկին
Ջոք
Ջոնի

Գործողությունները տեղի են ունենում ԱՄՆ Թեքսասի նահանգի Մատաղոր քաղաքում:

Ներկայացումը սկսվում է տեսանյութով, որտեղ ճաղավանդակի ետևից մարդիկ են անցնում, իսկ հանդիսատեսի համար կարծես կյանքն անցնում է ճաղավանդակների ներսում՝ բաժանվելով երկու մասի:

Գավառական քաղաքի փոքրիկ բանտի խցում մի տղա երգում է, այնուհետև, գդալն առած, մեջընդմեջ թխկթխկացնում է հատակը: Մի քիչ թխկթխկացնելով՝ ասես ճգնում էր ինչ-որ բան հեռագրել, վեր է կենում ու գնում-գալիս խցում: Ի վերջո կանգնում է խցի մեջտեղում և երկար ժամանակ մնում քարացած: Շոշափում է գլուխը. կարծես վիրավոր լինի: Նայում է չորս կողմը, ապա՝ աղաղակում:

ՏՂԱ – Հե՜յ, ո՞վ կա…
Դադար:
Հե՜յ… ո՞վ կա…
Երկարատև դադար:
Հե՜յ… ո՞վ կա, գոնե մեկնումե՜կը…
Մի աղջկա ձայն է լսվում, քաղցր ու անուշ ձայն:

ՁԱՅՆԸ – Էհե՜յ…

ՏՂԱ – Դո՞ւ ես, Քեյթի:

ՁԱՅՆԸ – Չէ… ես Էմիլին եմ:

ՏՂԱ – Ո՞վ: (*Անհամբեր*): Հե՜յ, ո՞վ կա:

ՁԱՅՆԸ – Էմիլին:

ՏՂԱ – Ի՞նչ Էմիլի: Ես Էմիլի անունով աղջիկ չգիտեմ: Չլինի՞ Սալինասում տեսածս աղջիկն ես, մի երեք տարի առաջ հանդիպեցինք, հիշո՞ւմ ես, Սեմի բարում:

ՁԱՅՆԸ – Չէ՛… ես էստեղի ճաշ եփողն եմ: Խոհարարուհին: Սալինասում երբեք չեմ եղել: Չգիտեմ էլ՝ որտեղ է:

ՏՂԱ – Ասում ես՝ էստեղի ճաշ եփո՞ղն ես:

ՁԱՅՆԸ – Հա:

ՏՂԱ – Է՛, բա ինչո՞ւ չես մի համով բան եփում, որ մարդ մատները հետն ուտի:

ՁԱՅՆԸ – Ինչ որ կարգադրում են, էն էլ եփում եմ: *(Դադար)*: Տխրո՞ւմ ես մենակ:

ՏՂԱ – Անտեր շան նման: Չե՞ս լսում՝ ոնց եմ կոկորդս պատռում: Հե՜յ, ո՞վ կա:

ՁԱՅՆԸ – Ո՞ւմ ես կանչում:

ՏՂԱ – Էհ… երևի ոչ ոքի: Անընդհատ մտածում էի՝ ում նամակ գրեմ, բայց ոչ մեկը միտքս չընկավ:

ՁԱՅՆԸ – Բա Քեյթի՞ն:

ՏՂԱ – Քեյթի անունով աղջիկ չգիտեմ:

ՁԱՅՆԸ – Էլ ինչո՞ւ էիր ասում. «Դո՞ւ ես, Քեյթի»:

ՏՂԱ – Քեյթին լավ աղուն է: Ինձ միշտ դուր է եկել: Չնայած երբեք էլ Քեյթի անունով աղջիկ չեմ ճանաչել:

ՁԱՅՆԸ – Իսկ ես ճանաչել եմ:

ՏՂԱ – Ճի՞շտ: Ինչ տեսակ աղջիկ էր: Բարձրահասա՞կ էր, թե՞ փոքրիկ-մոքրիկ:

ՁԱՅՆԸ – Փոքրիկ-մոքրիկ էր:

ՏՂԱ – Հե՜յ, լսո՞ւմ ես ինձ: Իսկ դո՞ւ ինչ աղջիկ ես:

ՁԱՅՆԸ – Ա՛հ, ի՞նչ իմանամ:

ՏՂԱ – Քեզ ոչ ոքի չի՞ ասել: Ոչ մեկը նման բաների մասին հետդ չի՞ խոսել:

ՁԱՅՆԸ – Ի՞նչ բաներ:

ՏՂԱ – Դու գիտես: Չի՞ խոսել:

ՁԱՅՆԸ – Չէ՛, չի խոսել:

ՏՂԱ – Այ քեզ դմբոներ, ո՜նց էլ չեն խոսել: Ես ձայնիցդ գլխի ընկա՝ դու հրաշալի աղջիկ ես:

ՁԱՅՆԸ – Գուցե էդպես է, գուցեև չէ:

ՏՂԱ – Ես դեռ ոչ մի անգամ սխալված չկամ:

ՁԱՅՆԸ – Հա՞: Երևում է: Դրա համար էլ հիմա բանտում ես:

ՏՂԱ – Եղած-չեղածը թյուրիմացություն է:

ՁԱՅՆԸ – Բա ասում են՝ բռնաբարություն է:

ՏՂԱ – Չէ՛… Սուտ է:

ՁԱՅՆԸ – Ախր խոսքերը մեկ արած՝ ասում են՝ ճիշտ է:

ՏՂԱ – Հիմարի գլուխներ:

ՁԱՅՆԸ – Է՜, ուրեմն կրակի մեջ ես ընկել: Վախենո՞ւմ ես:

ՏՂԱ – Մահու չափ: (*Հանկարծ*): Հե՜յ, ո՞վ կա:

ՁԱՅՆԸ – Ի՞նչ ես անընդհատ նույն բանը գոռում:

ՏՂԱ – Տխրում եմ մենակ: Տխրում եմ, տխրում անտեր շան նման: (*Երկար ու ձիգ*): Հե՜յ… ո՞վ կա…

(Կողքից՝ բանտախցի դիմաց, հայտնվում է մի աղջիկ: Հասարակ աղջիկ է՝ հասարակ շորերով):

ԱՂՋԻԿ – Ես էլ եմ տխրում:

ՏՂԱ – *(Շրջվում է, նայում նրան):* Հա՞… Ճի՞շտ ես ասում: Դո՞ւ էլ ես տխրում:

ԱՂՋԻԿ – Ըհը… Ես էլ եմ տխրում անտեր շան նման:

ՏՂԱ – Ո՞ւմ համար ես տխրում:

ԱՂՋԻԿ – Չգիտեմ:

ՏՂԱ – Ես էլ չգիտեմ: Հենց որ քեզ խոթում են սրա պես մի ծակուռ, ինչքան ծանոթ ու անծանոթ աղջիկ կա, միտքդ ես բերում ու տխրում ես ուզես-չուզես:

ԱՂՋԻԿ – Դե, պարզ է, բա ի՞նչ:

ՏՂԱ – Ո՛ւհ, սիրտդ պատռվում է: (*Դադար*): Իսկ դու սիրուն աղջիկ ես, գիտե՞ս:

ԱՂՋԻԿ – Ասում ես, էլի:

ՏՂԱ – Չէ՛, լուրջ եմ ասում… սիրուն ես: Կույրն էլ կտեսնի: Դու երևի աշխարհի ամենասիրուն աղջիկն ես:

ԱՂՋԻԿ – Իսկի էլ ամենասիրունը չեմ… դու լավ գիտես:

ՏՂԱ – Չէ՛, հենց ամենասիրունն ես: Էսքան թափառել եմ, բայց քեզնից սիրուն աղջիկ կյանքումս չեմ տեսել: Ես գիտեի, որ Թեքսասում բախտս կբերի:

ԱՂՋԻԿ – Բախտդ կբերի՞: Ախր բանտ ես ընկել: Մի ամբողջ ռոմակ վրադ ատամ է կրճտացնում:

ՏՂԱ – Ա՛հ, շատ պետքս է: Մի կերպ դուրս կպրծնեմ:

ԱՂՋԻԿ – Ո՞վ իմանա:

ՏՂԱ – Չէ՛, ամեն ինչ լավ կլինի, մանավանդ սրանից հետո:

ԱՂՋԻԿ – Ինչո՞ւ մանավանդ սրանից հետո:

ՏՂԱ – Որովհետև հանդիպեցի քեզ: Հիմա գոնե մի թանկ բան ունեմ: Գիտե՞ս, մինչև էստեղ ընկնելս հաստ ու բարակ ինձ համար մի գին էր: Հոգնել էի արդեն: (*Դադար*): Հոգնել էի լավ կյանքի հետևից վազ տալով, ձեռքս էդպես էլ ոչ մի բան չընկավ: Բայց հիմա հոգնածությունս միանգամից անցավ: (*Հանկարծ*): Հե՛յ, ո՞վ կա:

ԱՂՋԻԿ – Ո՞ւմ ես կանչում:

ՏՂԱ – Քեզ:

ԱՂՋԻԿ – Բայց ես էստեղ եմ:

ՏՂԱ – Գիտեմ: (*Կամացուկ*): Հե՛յ, ո՞վ կա:

ԱՂՋԻԿ – Էհե՛յ:

ՏՂԱ – Ա՛խ, իմ անուշ աղջիկ: (*Դադար*): Ես ուզում եմ ամուսնանալ քեզ հետ: Ուզում եմ՝ երկուսով գնանք էստեղից: Քեզ կտանեմ Սան Ֆրանցիսկո: Ես մորիցս նոր ծնվեցի: Տես՝ ինչ փողեր եմ շփելու: Խելքս, ոնց որ պետքն է, գլուխս կհավաքեմ ու շահածս փողը չեմ տա քամու բերան: Մենք ինչքան ասես փող կունենանք:

(Փոխվում են լույսերը, լսվում է երաժշտություն, և կերպարանափոխվում է Ջիմ Դենդիի կերպարի՝ դնելով գլխարկ և շարֆ, որոնք նախապես դրված էին աստիճանի վրա):

ՋԻՄ ԴԵՆԴԻ – Դուք կարող եք խառնվել հարուստներին: Դուք կարող եք: Աղքատներ, մուրացիկներ, գողեր, ինձ համար մեկ է, թե

ով եք դուք, որտեղ եք, ինչ են մտածում մարդիկ ձեր մասին, կամ թե ինչ բախտ եք ունեցել մինչև այժմ: Յուրաքանչյուր մարդու նախահայրերից մեկնումեկը եղել է իշխան կամ լորդ, քարոզիչ կամ սուրբ, և երբեք մի՛ մոռացեք այդ: Դադարեցե՛ք երազելուց: Արթնացե՛ք: Ժառանգեցե՛ք ձեր նախահայրերի հարստությունը, թո՛ւյլ տվեք, որ նախկին ջոկեյ Իրլ Քաթֆուտը վերահաստատի ձեզ արևի տակ՝ ձե՛ր տեղում, առողջ, հարուստ և իմաստուն: Դադարեցե՛ք մկան պես ապրելուց, ապրեցե՛ք, ինչպես հարուստ մարդիկ են ապրում: Միշտ փո՛ղ ունեցեք, առատ փող, փող աղքատին տալու համար: Ազատագրվեցե՛ք ձեր հազերից, մրսելներից, ցավերից ու վշտերից: Ազատագրվեցե՛ք ձեր վախերից: Խո՛ւյս տվեք ձեր մղձավանջերից: Նախկին ջոկեյ Իրլ Քաթֆուտը օգնել է ուրիշներին և կարող է ձեզ նույնպես օգնել: Ազդեցի՛կ եղեք, լա՛վ հագնված եղեք, վստա՛հ եղեք, կերե՛ք լավագույն ճաշարաններում, գնեցե՛ք լավագույն տոմսերը լավագույն կինոնկարների և պիեսների. դրանք... դաստիարակող, ձեզ օգտակար բաներ են: Բալետ գնացե՛ք և դիտեցե՛ք պարը: Գնացե՛ք օպերա և լսեցե՛ք երգն ու դիտեցե՛ք խաղը: Այս կյանքից ձեր բաժինը ստացե՛ք: Փոփոխությո՛ւն մտցրեք ձեր կյանքում: Այդպիսի փոփոխության արժանի մա՛րդ դարձեք: Չեզնից դրական ալիքներ թող դուրս գան, ուր էլ գնաք: Այնպիսի գործեր արե՛ք, որ մարդիկ հիշեն ձեզ: Թող մարդիկ ձեզ տեսնելիս ասեն՝ ահա գալիս է երջանիկ Հոկանը կամ երջանիկ Հարիկանը, կամ ինչ որ ձեր անունը լինի: *(Ջիմ Դևնդին վեր է կենում)*: Հանդիպեցե՛ք գեղեցիկ կանանց գեղեցիկ վայրերում և վարվեցե՛ք անհոգ: Յուրաքանչյուր երջանիկ մարդու համար մի գեղեցիկ կին կա աշխարհում: Նախկին ջոկեյ Իրլ Քաթֆուտը ասում է. «Աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդ երջանիկ է, եթե միայն իմանա այդ»: Ուրեմն ինչո՞ւ ժամանակ կորցնել: Դուք մի անգամ եք ապրում և ամեն ինչում ձեր իրավունքն ունեք, ուրեմն եղեք շահող:

Հ. Գ. Ամբողջը կյանքումդ հալածված մի՛ եղիր:
Վաստակի՛ր քո ծննդյան փողն՝ այժմ:

ԱՂՋԻԿ – Հաստա՞տ:

ՏՂԱ – Հաստատ, հաստատ: Անունդ ի՞նչ է:

ԱՂՋԻԿ – Էմիլի:

ՏՂԱ – Գիտեմ: Բայց Էմիլի ի՞նչ:

ԱՂՋԻԿ – Էմիլի Սմիթ:

ՏՂԱ – Ազնիվ խո՞սք:

ԱՂՋԻԿ – Ազնիվ խոսք, իմ անունը Էմիլի Սմիթ է:

ՏՂԱ – Ա՛խ, դու աշխարհի ամենաանուշիկ աղջիկն ես:

ԱՂՋԻԿ – Ինչո՞ւ:

ՏՂԱ – Չգիտեմ ինչու, բայց դու աշխարհի ամենաանուշիկ աղջիկն ես, պրծավ գնաց: Որտե՞ղ ես ծնվել:

ԱՂՋԻԿ – Թեքսասի Մատադոր քաղաքում:

ՏՂԱ – Իսկ դա որտեղ՞ է:

ԱՂՋԻԿ – Հենց էստեղ

ՏՂԱ – Մատադորը սա՞ է:

ԱՂՋԻԿ – Հա, սա է: Քեզ Ուիլինգից են էստեղ բերել:

ՏՂԱ – Ուրեմն ես… Ուիլինգո՞ւմ եմ եղել:

ԱՂՋԻԿ – Չե՞ս էլ իմանում՝ որ քաղաքում ես եղել:

ՏՂԱ – Բոլոր քաղաքները իրար նման են: Ոչ մի տարբերություն: Ուիլինգն ինչքա՞ն է հեռու էստեղից:

ԱՂՋԻԿ – Տասնվեց-տասնյոթ մղոն կլինի: Դու գլխի չընկա՞ր, որ քեզ տեղափոխում են:

ՏՂԱ – Ո՞նց գլխի ընկնեի, խելքս մաղվել էր… ուշագնաց էի: Չգիտեմ՝ ով էր, կապարե խողովակով, թե ինչով գլխիս հասցրեց: Չհասկացա՝ ինչու խփեց:

ԱՂՋԻԿ – Բռնաբարության համար… էդպես էին ասում:

ՏՂԱ – Ինչե՞ր են հնարել: *(Շվարած, կարծես ինքն իրեն):* Նա ինձանից փող էր ուզում:

ԱՂՋԻԿ – Փո՞ղ:

ՏՂԱ – Հա: Որ իմանայի էդ տեսակ կին է, ճիշտ եմ ասում, սուսուփուս կթողնեի, կգնայի, ինձ համար զբոսայգում մի տեղ կճարեի, մուշ-մուշ կքնեի:

ԱՂՋԻԿ – Ուրեմն նրա ուզածը դա՞ էր… փո՞ղ:

ՏՂԱ – Հա: Ամբողջ երկիրը ոտնատակ ես տալիս, թե բախտիդ դուռը մի օր պիտի բացվի, մի քոսոտ քաղաքից մյուսն ես քարշ գալիս, ինչ է՝ մի բարի մարդու պատահես, իսկ սա, արի տես, ուզում է քեզնից փող պլոկած լինել: Ես մտածում էի՝ նա էլ է տխրում: Ինքն էր ասում:

ԱՂՋԻԿ – Գուցեև տխրում էր:

ՏՂԱ – Չէ՛, նա ուրիշ պտուղ էր:

ԱՂՋԻԿ – Բայց, որ ամեն ինչ էդպես չստացվեր, երևի երբեք էլ չհանդիպեի քեզ:

ՏՂԱ – Էհ, ի՞նչ իմանաս… միգուցե ես հենց էս կողմերը գայի ու հանդիպեի քեզ քաղաքում մի տեղ: Միանգամից կճանաչեի:

ԱՂՋԻԿ – Կճանաչեի՞ր: Ի՞նձ:

ՏՂԱ – Բա ո՞նց: Հերիք է աչքս քեզ վրա ընկներ, տեղնուտեղը կճանաչեի:

ԱՂՋԻԿ – Ասենք թե ճանաչեիր, դրանցից ի՞նչ կփոխվեր:

ՏՂԱ – Դու կդառնայիր իմը, այ թե ինչ կփոխվեր:

ԱՂՋԻԿ – Ազնիվ խո՞սք:

ՏՂԱ – Ազնիվ խոսք, երդվում եմ:

ԱՂՋԻԿ – Բանտում ես, դրա համար էլ էդպես ես ասում:

ՏՂԱ – Չէ՛, դա կապ չունի: Դու կազմ ու պատրաստ ինձ սպասիր: Մենք էստեղից կպոկվենք ուղիղ Սան Ֆրանցիսկո:

ԱՂՋԻԿ – Դու պարզապես տխրում ես մենակ:

ՏՂԱ – Ամբողջ կյանքումս էլ տխրել եմ մենակ… դրան ճար ու հնար չկա… Բայց ես ու դու՝ երկուսով, գիտե՞ս ինչ կյանք կանենք: Դու բախտիս կապված դռները կբացես: Գիտեմ՝ կբացես:

(Փոխվում են լույսերը, լսվում է երաժշտություն, և կերպարանափոխվում է Ջոքի կերպարի՝ դնելով գլխարկ և շարֆ, որոնք դրված են նախապես ասրիճանի վրա):

ՋՈՔ – Երեկ գիշեր երազումս քայլում էի փողոցով: Ես երազում էի կանանց մասին, սիրո և իմ ոտքերի: Ես երազում էի Վերթերի և Շարլոտայի և կոշիկների մասին:
Վերթերը սիրում էր Շարլոտային
այնպես, որ բառերն անկարող են ասել:
Ուզում եք իմանալ՝ ինչպես հանդիպեց նրան:
Շարլոտան հաց ու կարագ էր կտրում:
Ուրեմն փողոցում դեմս է ելնում մի բիզնեսմեն, մի փողի մարդ, քաղաքի մի մարդ, մի կանանց մարդ, ինչպես ասում են, և ասում ինձ. «Ֆելիքս, տղա՛ս, վերցրո՛ւ այս կոշիկները, ես դրանք գնել եմ 1915 թվականին, որպեսզի հագնեմ Սան Ֆրանցիսկոյի միջազգային ցուցահանդեսում, բայց իմ ծառան սխալ տեղ էր դրել այն և միայն մի ժամ առաջ գտա: Նոր կոշիկներ են, ասում է նա, բայց ես նոր չեմ: Իսկ դու նոր ես, Ֆելի՛քս, տղա՛ս»: Ես զարմացա, բայց ճիշտ ժամանակին հիշեցի, որ քաղաքավարությունը միշտ էլ կարևոր է և որոշեցի նրան չվանել: Ներեցե՛ք ինձ,

ասում եմ, ուրեմն մի զույգ կոշիկը, որ գնել եք Սան Ֆրանցիսկոյի միջազգային ցուցահանդեսում և Համաշխարհային տոնավաճառում՝ հագնելու, այժմ այդ տուփի մե՞ջ է: Ճիշտ այդպես, տղա՛ս, ասում է նա, և ուզում եմ, որ վերցնես դրանք: Իսկական կոշիկնե՞ր, ասում եմ: Անշուշտ, ասում է նա ծիծաղելով, ինչպես հարուստներն են ծիծաղում և ասում՝ բոլորովին նոր, դեղին, կոճակավոր կոշիկներ: Հա՜հ, հա՛, հա՛, ծիծաղում է նա: Բայց բարությունը այնքան խորամանկ և ուղիղ է, որ ես ինչ-որ խաղից վախենում եմ: Այնուամենայնիվ, ես կարիք ունեմ նոր կոշիկների, և ինչ-որ բան նվագում է իմ արյան մեջ:

Ազատ աշխարհում՝ գլուխս ու սիրտս ազատ ամեն վշտից:
Իմ համեստ ոտքերը անհավատ կաշիի միջով հանդիպում են կեղտի.
Բայց, օ՜հ, ոչ մի մարդ չի կարող ասել ինչ հրաշալի էս օգտագործում,
Երիտասարդ Ջոքը կարող է տալ բոլորովին նոր դեղին կոճակավոր կոշիկներ:

Ասում եմ, եթե դուք կոշիկները նվիրում եք ինձ, անուս ոչ թե Ֆելիքս, այլ Ջոք Արիմաթա է: Ուրեմն աստված օրհնի ձեզ և շնորհակալություն: Ասելու կարիք չկա, տղա՛ս, ասում է նա, մտածեցի, որ դրանք կսազեն քո հագուստներին: Նա ինձ տալիս է տուփը, ցանկանում հաջողություն և ինձ թողնում փողոցում, մի մարդ, որ չունի ոչ մի միսիա, ոչ մի պատգամ և ոչ մի գրոշ: Այժմ ո՞վ սարքեց վաճառականական այս հրաշքը: Ո՞վ է պահում փողոցային այս ոտքի հաշիվն առանց տրամաբանության և ռիթմի, 1915 թվականին Դենդիի կորցրած կոշիկները բերեց Ջոքին: Ճիշտ ժամանակին: Արդյո՞ք մի սուրբ կա, որ հսկում է իմ ոտքերին: (*Դադար*): Թող լինի ինչպես նրա կամքն է, ես չգիտեմ: Դրանք կոշիկներ են, դա ճիշտ է, և դրանք նոր են, թեև այն ժամանակը, որի համար արտադրված են, վաղուց մեկնել է Քենտաքիից, բայց պե՞տք է հագնեմ դրանք: Այս է հարցը: Պե՞տք է հագնեմ դրանք, թե՞ թողնեմ՝ մնան, ինչպես էին, ինչպես մնացել էին այսքան տարիներ, մաքուր և գեղազարդ:

ԱՂՋԻԿ – Ո՜հ, հագի՛ր, հագի՛ր: Դու դրանք չես գողացել:

ՋՈՔ – (*Զարմացած*): Գողանալ դրա՞նք, Քեթի՛: Այս կոշիկները հնություն են: Ես ինձ կկախեմ, եթե մի օր այսպիսի բան

գողանամ: Ամբողջ աշխարհում մի ուրիշ զույգ չեմ կարող խնդրել կամ վոխ վերցնել:
Այժմ այդ կոշիկների մասին. ի՞նչ եմ անելու: *(Հանկարծ):* Ասեմ, թե ինչ եմ անելու: Հագնելու եմ: Ինչու չէ: Ես միայն մի անգամ եմ ապրում, և մի անգամը բավական է, շնորհակալություն: *(Նայում է, հանում հին կոշիկներից մեկը, պահում դիմացը):* Դու, իմ հին կոշիկ, բիյու և երթաս բարով: *(Նա նետում է կոշիկն իր գլխի վրայով):* Եվ դու իմ մյուս հին կոշիկ, դու էլ մնաս բարով, դու էլ գնա քո եղբոր հետ և մի անգամ էլ գնա առանց ինձ: Քեզ համար ճանապարհ բաց արա: Ես քեզ երկար ժամանակ պահել եմ ուղիղ ճանապարհի վրա: *(Նա նետում է իր երկրորդ կոշիկն իր գլխի վրայով, հագնում և կոճկում է նոր կոշիկներն ու վեր կենում):* Այժմ դուք, կոճակավո՛ր դեղին կոշիկներ, գնացե՛ք, քայլեցե՛ք, առաջնորդե՛ք ինձ վշտի միջով, տարե՛ք ինձ երեկվա, այսօրվա և վաղվա միջով: *(Նա ուրախ քայլում է):* Մեկ երկու, երեք չորս: Մեկ, երկու, երեք, չորս: Լուսամո՛ւտը բացեք, դո՛ւռը բացեք: Քայլե՛ք, սահե՛ք, ընթացե՛ք, օրորվե՛ք: *(Քեթին ծափ է տալիս ու ծիծաղում, քայլում նրա ետևից, ուրախացած պտտվում նրա շուրջը, հանկարծ Ջոքը բռնում է նրա ձեռքը, և նրանք միասին են պտտվում, կարծես միասին լինեն):*
Փոխվում է երաժշտությունը:
Իմ նոր կոճակավոր դեղին կոշիկներով
Ես քեզ բերում եմ սեր, վերջին նորությունը.
Հաճույուն մարդկանց, աշխարհում խաղաղություն:
Յուրաքանչյուրին՝ իր արժանիքի համաձայն:
Յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքի.
Մեկին ծաղիկ, մեկին հունդ:
Սեր նրան, ով արժեքավորում է սերը,
Կյանք նրան, ով արժեքավորում է կյանքը,
Ուրախություն նրան, ով արժեքավորում է խինդը,
Դրախտ նրան, ով վերև է նայում,
Կին նրան, ով տենչում է կին,
Երազ նրան, ով կարիք ունի երազի:
Շատ տարիներ նրան, ով ծերանում է,
Եվ ոսկի նրան, ով ծախվում է:
Եվ մինչ ես կապրեմ և կշնչեմ երկրի օդը,
Երկնքում միլիոնավոր կդառնամ:

Ես քեզ այնպիսի նվերներ կտամ, որ երբեք չես ունեցել,
Մի խայտացող օվկիան կանաչ և զվարթ,
Ծաղիկների մի կղզի քո անկողնու համար,
Ամպեղեն մի բարձ քո գլխի համար,
Մի ջազ նվագախումբ վարդերի միջով եկող.
Հեյ, բոբարիբոբ, և սուրբ Մովսես:
Դա առայժմ բավական է,
Շատ լավ է, երբ արևը բարձր չէ:
Բայց այժմ արևը շատ բարձր է լինում,
Ո՜հ, Քեյթի, Քեյթի, դու և ես,
Դու և ես երբեք չենք կարող մահանալ.
Ո՜հ, Քեյթի, Քեյթի, երբեք չմահանալ:

ՏՂԱ – Ես խաղամոլ եմ, բախտախնդիր: Աշխատելը իմ գործը չի: Բախտս պիտի բերի, թե չէ բանի պետք չեմ: Տարին տասներկու ամիս բախտս չի բերել: Արդեն երկու տարի է՝ դեսուդեն եմ ընկել: Ի՞նչ օգուտ. բախտս կապվել է ու կապվել: Դրա համար էլ Ուիլինգում գլխիս փորձանք եկավ: Հո պատահականություն չէ՞ր: Չար բախտն ամենուր հետևում է ինձ: Դրա երեսից է, որ հիմա էստեղ եմ ու դեռ քիչ էր մնում գլուխս էլ ջնջխեն: Կա-չկա նրա արածն է: Նրա պես կին ունենայի, մի օր չէի պահի, դուրս կշպրտեի:

ԱՂՋԻԿ – Կարծում ես, որ ես քո կողքին լինեմ, բախտդ կբերի՞:

ՏՂԱ – Իհարկե, կբերի: Ի՞նչ մի լավ բան է թրև գալ փողոցներում ու անընդհատ փնտրել մեկին, առանց իմանալու՝ կգտնե՞ս, թե՞ չէ: *(Հևչում է դաշնամուրային երաժշտություն):* Միշտ մեկնումեկը պիտի լինի կողքիդ թե՛ ձմռան ցրտին, թե՛ գարնան ծաղկունքին, թե՛ ամռան շոգին, երբ լողանալն է սրտիդ ուզածը. տարվա բոլոր եղանակներին, անձրևին, ձյանը, ուզածդ ժամանակ, միշտ մեկնումեկը պիտի լինի կողքիդ ու քայլի քեզ հետ մինչև մահվան դուռը: Լավ մարդ պիտի լինի. մեկը, որ վաղուց ճանաչում է քեզ: Միշտ էլ մեկը պիտի լինի կողքիդ, որ թեկուզ գիտի՝ դու վատն ես, լավը չես, բայց սիրում է քեզ: Ես վատն եմ, ի՞նչ արած: Եթե գաս ինձ հետ, կդառնամ ամենալավ մարդը: Էլ վատը չեմ լինի: Հասկանո՞ւմ ես, հենց որ փողի տեր ես դառնում, էլ վատը չես կարող լինել… դու կարգին մարդ ես, որովհետև քո փոխարեն արդեն փողն է խոսում: *(Քեթին և Ջորջ բևանցուկ իջևում են բեմից և բարչդրանում):* Ես շատ փող կունենամ, իսկ դու կլինես աշխարհի ա-

մենաչքնաղ աղջիկը: Քեզ թևանցուկ արած՝ հպարտ-հպարտ ման կգամ Սան Ֆրա նցիսկոյում, ու մարդիկ շրջվելով՝ կնայեն մեզ:

ԱՂՋԻԿ – Կարծում ես՝ կնայե՞ն:

ՏՂԱ – Քիթս կկտրեմ, թե չնայեն: Հենց հագնեմ-կապեմ ու քեզ թևանցուկ առնեմ, կտեսնես, Քեյթի, թե ոնց կշրջվեն: Նայելուց չեն կշտանա:

ԱՂՋԻԿ – Քեյթի՞:

ՏՂԱ – Հա, սրանից հետո առնունդ Քեյթի է: Դու առաջին աղջիկն ես, որին Քեյթի եմ ասում: Էս առունը հենց քեզ համար էի պահել: Լավ չի՞:

ԱՂՋԻԿ – Լավ է:

ՏՂԱ – Ես վաղո՞ւց եմ էստեղ:

ԱՂՋԻԿ – Երեկ գիշերվանից: Բայց մինչև առավոտ ուշքի չէիր գալիս:

ՏՂԱ – Ժամը քանի՞սն է: Ինը կլինի՞:

ԱՂՋԻԿ – Տասի կողմն է արդեն:

ՏՂԱ – Էս քնճռոտ խցի բանալին մո՞տդ չի:

ԱՂՋԻԿ – Չէ՛, ոչ մի բանալի ինձ չեն վստահում:

ՏՂԱ – Չե՞ս կարող մի հնարքով ճարել:

ԱՂՋԻԿ – Չէ՛, չեմ կարող:

ՏՂԱ – Միգուցե փորձե՞ս:

ԱՂՋԻԿ – Ինձ բանալիներին մոտ էլ չեն թողնում: Իմ առելիքը եփել-թափելն է, թե բանտարկյալ է լինում: Հավաքում եմ, մաքրում, գործ-մորձ եմ անում:

ՏՂԱ – Ախր ուզում եմ դուրս գալ էստեղից: Ո՞վ է էս որջի տերտիրականը, դու չե՞ս ճանաչում:

ԱՂՋԻԿ – Ճանաչում եմ, բայց նա բաց չի թողնի քեզ: Ասում են՝ քեզ ուրիշ քաղաք են տանելու:

ՏՂԱ – Հա՞: Ինչի՞ համար:

ԱՂՋԻԿ – Որովհետև վախենում են:

ՏՂԱ – Ի՞նչ կա վախենալու:

ԱՂՋԻԿ – Վախենում են՝ ուիլինգցիները գիշերը վրա տան ու ներս թափվեն բանտ:

ՏՂԱ – Չէ մի: Ինչի՞ համար պիտի վրա տան:

ԱՂՋԻԿ – Իրը չգիտես, թե ինչի համար:

ՏՂԱ – Դե, ասենք, թե գիտեմ:

ԱՂՋԻԿ – Չե՞ս վախենում:

ՏՂԱ – Պարզ է, վախենում եմ: Մարդ ոչ մի բանից էնքան չի վախենում, ինչքան անհայտությունից, երբ չգիտի, թե գլխին

ինչ է գալու: Խելոքի հետ կարող ես վիճել, բայց հիմարների հետ ի՞նչ պիտի վիճես. թեկուզ պայթես էլ, իրենց էշն են քշում: Մի բան արա, դուրս գամ էստեղից:

ԱՂՋԻԿ – Ի՞նչ կա իմ ձեռքին:

ՏՂԱ – Գոնե գտիր բանտապետին, ասա, որ հետը խոսելիք ունեմ:

ԱՂՋԻԿ – Նա տուն է գնացել: Բոլորը գնացել են:

ՏՂԱ – Ուրեմն ես էստեղ մեն-մենա՞կ եմ մնացել:

ԱՂՋԻԿ – Հա, էդպես է դուրս գալիս… եթե ինձ չհաշվենք:

ՏՂԱ – Խելա՜ռ են, ի՜նչ են… մեկնումեկը պիտի մնա էս անտեր տեղը, չէ՞:

ԱՂՋԻԿ – Ոչ ոք էլ չի մնում, բոլորը տուն են գնում: Ես էլ եմ հավաքում-մաքրում ու տուն գնում: Էս իրիկուն մի քիչ ոտքս կախ գցեցի:

ՏՂԱ – Ինչո՞ւ:

ԱՂՋԻԿ – Ուզում էի հետդ խոսել:

ՏՂԱ – Ինչի՞ մասին:

ԱՂՋԻԿ – Է՛հ, չգիտեմ: Գիշերը աչքս չէի կտրում քեզնից: Քնի մեջ խոսում էիր: Համ էլ ասացիր՝ քեզ դուր եմ գալիս: Բայց մտքովս չէր անցնում, թե ուշքի գալուցդ հետո էլ դուր կգամ քեզ:

ՏՂԱ – Ճի՞շտ: Ինչո՞ւ պիտի դուր չգայիր:

ԱՂՋԻԿ – Ի՞նչ իմանամ:

ՏՂԱ – Ո՞նց թե: Ախր դու հրաշք աղջիկ ես, գիտե՞ս:

ԱՂՋԻԿ – Ոչ ոք ինձ էդ տեսակ խոսքեր չի ասել: Քաղաքի բոլոր տղերքը… նրանք… (*Լռում է*):

ՏՂԱ – Ի՞նչ: (*Դադար*): Ի՞նչ են անում նրանք: Դե ասա… մի՛ լռիր:

ԱՂՋԻԿ – Ինձ ձեռ են առնում:

ՏՂԱ – Քե՞զ են ձեռ առնում: Խելքները շա՜տ է հասնում: Գնա ուսեցած-չուսեցածդ հավաքիր ու արի էստեղ: Ես կտանեմ քեզ Սան Ֆրանցիսկո: Քանի՞ տարեկան ես:

ԱՂՋԻԿ – Օ՜, արդեն մեծ եմ:

ՏՂԱ – Քանի՞ տարեկան… Սուտ չասե՛ս: Տասնվե՞ց:

ԱՂՋԻԿ – Տասնյոթ:

ՏՂԱ – Դե լավ, հորդ ու մորդ էլ բեր: Գնալուց առաջ մենք կամուսնանանք:

ԱՂՋԻԿ – Նրանք չեն թողնի, որ գամ:

ՏՂԱ – Ինչո՞ւ:

ԱՂՋԻԿ – Չգիտեմ, բայց չեն թողնի; Հաստատ չեն թողնի:

ՏՂԱ – Հորդ ասա հիմարություն չանի, լսեցի՞ր: Նա ի՞նչ է, ագարակապա՞ն:

ԱՂՋԻԿ – Չէ՛… ոչ մի բան էլ չի: Պետությունից մի քիչ նպաստ է ստանում որպես հաշմանդամ, ինչ-որ վնասվածք ունի: Ասում է՝ կողքն է ցավում: Չգիտեմ՝ ինչ է:

ՏՂԱ – Ի՜հ, փչանի մեկն է: Չէ՛, ես կտանեմ քեզ էստեղից, հասկացա՞ր:

ԱՂՋԻԿ – Աշխատածս փողն էլ ձեռքիցս խլում է:

ՏՂԱ – Իրավունք չունի:

ԱՂՋԻԿ – Գիտեմ, բայց խլում է:

ՏՂԱ – *(Կարծես ինքն իրեն)*: Ինչ էլ որ լիներ, դու էս քաղաքում չպիտի ծնվեիր ու էդ տեսակ հայր էլ չպիտի ունենայիր:

ԱՂՋԻԿ – Մեկ-մեկ էնպես մեղքս է գալիս:

ՏՂԱ – Իբր մարդ ես գտել, մեղքդ էլ գալիս է: *(Մատը ցցելով)*: Մի օր, ոնց որ պետք է, կխոսեմ հորդ հետ: Երկու խոսք կասեմ:

ԱՂՋԻԿ – Դու կասես, երևում է:

ՏՂԱ – *(Հանկարծ)*: Հե՜յ, ո՞վ կա… Է՜հ, ուր էր թե կարենայիր բանտապետին բերել էստեղ, գար, բաց թողներ ինձ:

(Փոխվում են լույսերը, լսվում է երաժշտություն, և մյուսում է Ջոքը և դիմում է աղջկան):

ՋՈՔ – Մտածում եմ՝ ինչքան ժամանակ է անցել ամեն ինչ սկսվելուց ի վեր: Ի՜նչ պատահականություն, որ վերջապես այստեղ ենք: Ինչ խղճալի կարճ ժամանակ, մինչև որ մենք ընդմիշտ բաժանված լինենք: Ինչ կարոտ կա բոլոր բաների մեջ, մի պահ միասին լինելու մեջ, ինչպես այժմ, երբ միասին ենք: Ինչ սարսափ, բացակայության մտածումից: Ինչ չար հաճույք է վերցնում ժամանակը մեր քառատրոփից: Ինչ գեղեցկություն ես դու, Քեթի՛: Օ՜ Քեթի, ի՜նչ աղվորն ես դու: Մտածում եմ, թե ինչպես պետք է լինի, Քեթի, որովհետև դու և ես այստեղից միասին ենք դուրս գալու: Պարզապես իրար ձեռք բռնած, Քեթի, երբ այստեղից միասին դուրս գանք, ամբողջ գեղեցիկ աշխարհը և գեղեցիկ ժամանակի մնացորդը մերը կլինեն:

(Փոխվում է երաժշտությունը: Վառվում են լույսերը, և նորից բանտում են):

ԱՂՋԻԿ – Ոչ ոք ինձ էստեղ բանի տեղ չի դնում… օրական հինսուն սենթ են տալիս ու վերջ: Իսկ ես տանջվում-չարչարվում

եմ… պատահում է, տասներկու ժամ ոտքի վրա եմ լինում: Մեկը չկա, որ ինձ բանի տեղ դնի:

ՏՂԱ – Ինչքա՞ն են վող տալիս:

ԱՂՋԻԿ – Հիսուն սենթ:

ՏՂԱ – *(Ասես արար աշխարհին դիմելով):* Ո՞վ է լսել: Հենց մենակ քեզ տեսնելու համար նրանք պիտի վող տան: Քո շնչած օդը շնչելու համար: Չեմ հասկանում: Մեկ-մեկ ուղղակի հավատս չի գալիս, թե էս բոլորի վերջը պիտի գա: Քեյթի, մի բան արա՝ դուրս գամ էստեղից: Ես վախենում եմ:

ԱՂՋԻԿ – Չգիտեմ՝ ինչ անեմ: Տեսնես՝ չե՞մ կարող դուռը կոտրել:

ՏՂԱ – Չէ՛, ուժդ չի պատի: Մուրճից բանից չկա՞:

ԱՂՋԻԿ – Ավելից բացի, ուրիշ բան չկա: Երևի ավելն էլ են փակի տակ դրել:

ՏՂԱ – Գնա տես՝ ոչ մի բան չե՞ս կարող գտնել:

ԱՂՋԻԿ – Լավ: (Գնում է):

ՏՂԱ – Հե՞յ, ո՞վ կա… *(Դադար):* Հե՛յ… ո՞վ կա… գոնե մեկնումե՛կը… *(Դադար):* Բանտարկե՛լ են: *(Արհամարհանքով):* Բռնաբարութ յո՛ւն: Էդ իրենք են բռնաբարում լույս աշխարհի ընկած ամեն մի լավ բան: *(Հանկարծ):* Հե՛յ, ո՞վ կա…

ԱՂՋԻԿ – *(Վերադառնալով):* Ոչ մի բան չեն թողել: Ամեն ինչ փակել, գնացել են:

ՏՂԱ – Գոնե ծխելու բան լիներ:

(Փոխվում են լույսերը, լսվում է երաժշտություն, և կերպարանափոխվում է Ֆիշկինի՝ դնելով գլխարկ և շարֆ, որոնք նախապես դրված են աստիճանի վրա):

ՖԻՇԿԻՆ – *(Դանդաղ, մեծ ճիգով):* Լավ ցերեկը լույս է: Գիշերը մութ է լինում: Ցերեկներ կան, որ նույնքան մութ են, որքան շատ գիշերներ, իսկ գիշերներ կան այնքան լուսավոր, ինչքան շատ ցերեկներ: Յուրաքանչյուր գիշերվանից հետո արշալույս է և ցերեկ: Ամեն ցերեկվանից հետո երեկո է և գիշեր: Ամեն ցերեկ որոշ կողմերով նույնն է և որոշ կողմերով տարբեր: Նույնն է նաև իմ ամեն գիշեր: Ամեն մարդ սկսվում է մթությա մեջ, և ամեն մարդ նույնն է որոշ բաներում և տարբեր ուրիշ բաներում, բայց հիմնականում՝ նույնը: *(Նա կանգ է առնում՝ իր ասածից շփոթված):* Առավոտյան, եթե գիշերը լավ եք քնել և վիշտ չեք զգացել, ամեն ինչում բարություն կա, նույնիսկ ոչ ճիշտ բաներում,

բայց երբեմն առավոտը ավելի վատ է, քան կեսօրը կամ գիշերը:

Երեկոյան՝ արևը մայր մտնելուց անմիջապես առաջ, երգ կա: Այդ ժամանակ շատերը, որոնք նույնիսկ հաճախ մարդ չեն, հրեշտակ կդառնան և իրար հետ կխոսեն առանց բառերի: Երեկոյան երգը ուրախ է, օդը լցված է համբույրով, բայց եթե երգը վշտոտ է, առարկաների շրթները միայն հաց կտեսչան: Մինչ լույսը մարում է, աղմուկն ու շարժումները դադարում են, նույնիսկ մարդաշատ վայրերում ամեն մարդ մենակ է լինում: Նախքան օրը աղբյուրի մոտի ծառից ընկած տերևի նման շնչի: Գիշերը ծնող է և տուն, դպրոց և եկեղեցի, սկիզբ և նպատակակետ: *(Հանկարծ):* Կոկորդս չոր է: Ինձ գինի տվեք, կամ ես կմեռնեմ: *(Լույսերը վառվում են, և նորից բանվորում է: Ներս է մտնում աղջիկը):*

ԱՂՋԻԿ – Ամեն ինչ փակ է, բոլոր դարակները, պահարանի դռները… ամեն, ամեն ինչ:

ՏՂԱ – Վայ, ո՞նց եմ ուզում ծխել, ուշքս գնում է:

ԱՂՋԻԿ – Սիգուցե կարենամ մի տուփ սիգարետ ճարել: Դեղատունը բաց կլինի: Էստեղից մի մղոն է:

ՏՂԱ – Մի մղո՞ն: Չեմ ուզում էդքան երկար մենակ մնալ:

ԱՂՋԻԿ – Ես վազեվազ կգնամ, վազեվազ էլ հետ կգամ:

ՏՂԱ – Դու ամենալավ աղջիկն ես աշխարհի երեսին:

ԱՂՋԻԿ – Ի՞նչ սիգարետ ես ուզում:

ՏՂԱ – Ա՜հ, ինչ որ լինի… «Չեսթըրֆիլդ», «Քեմըլ», թեկուզ «Լաքի Սթրայք»… ինչ կպատահի:

ԱՂՋԻԿ – Էս րոպեիս կբերեմ: *(Շրջվում է, որ վազի):*

ՏՂԱ – Բա փո՞ղը:

ԱՂՋԻԿ – Մոտս մի քիչ կա: Քսանհինգ սենթ հոգեպահուստ ունեմ: Ես ամբողջ ճանապարհը վազեվազ կգնամ: *(Ուզում է գնալ):*

ՏՂԱ – Սպասի՛ր, մո՛տ արի:

ԱՂՋԻԿ – *(Մոտենալով նրան):* Ի՞նչ է եղել:

ՏՂԱ – Տո՛ւր ձեռքդ: (*Բռնում է աղջկա ձեռքը և ժպիտը դեմքին՝ նայում նրա ձեռքին: Մոտեցնում է շուրթերին ու համբուրում):* Մահու չափ վախենում եմ:

ԱՂՋԻԿ – Ես էլ եմ վախենում:

ՏՂԱ – Վախենում եմ, որ էլ ոչ ոք չի գա էս խուլ, կորած-մոլորած քաղաքը ու չի գտնի քեզ: Վախենում եմ, որ դու վարժվես

ամեն ինչին ու հարմարվես: Վախենում եմ երբեք չգնաս Սան Ֆրանցիսկո ու չստիպես մարդկանց, որ շուռ գան, քեզ նայեն: Ի՞նչ կլինի… ինձ համար մի ատրճանակ ճարիր:

ԱՂՋԻԿ – *(Արտասվախեղդ)*: Վախենում եմ: Վախենում եմ՝ էլ չտեսնեմ քեզ: Եթե հետ գամ, ու դու էստեղ չլինես, ես…

ՏՂԱ – Հե՛յ, ո՞վ կա… գոնե մեկնումե՛կը…

ԱՂՋԻԿ – Քաղաքն էնպես ամայի է: Ոչ մի շունչ չկա, մենակ քամին է տխուր-տրտում ոռնում: Ես կմնամ էստեղ: Չեմ թողնի՝ քեզ տանեն:

ՏՂԱ – Լսի՛ր, Քեյթի: Ինչ ասում եմ՝ արա: Գնա վերցրու ատրճանակն ու հետ արի: Միգուցե նրանք էս գիշեր չգան: Միգուցե ընդհանրապես չգան: Ես ատրճանակը կպահեմ: Հենց որ ինձ բաց թողնեն, էլի կտանես, կդնես տեղը: Հետո երկուսով կգնանք էստեղից: Դե՛, շուտ արա…

ԱՂՋԻԿ – Լավ: *(Դադար)*: Քեզ մի բան եմ ուզում ասել:

ՏՂԱ – Ասա:

ԱՂՋԻԿ – *(Անհուն քնքշանքով)*: Եթե հետ գամ, ու դու էստեղ չլինես, գոնե ատրճանակը ձեռքիս կլինի, գիտեմ ինչ կանեմ:

ՏՂԱ – Դու կրակել գիտե՞ս:

ԱՂՋԻԿ – Գիտեմ:

ՏՂԱ – Գժություն չանես: *(Արհամարհում է կոշիկը, միջից փող հանում)*: Լսո՞ւմ ես, գժություն չանես: Ըհը՛. ես փող ունեմ: Ութսուն դոլար է: Վերցրո՛ւ էս փողը ու գնա Սան Ֆրանցիսկո: Չորս կողմդ կփնտրես, կգտնես մեկնումեկին: Հասկանո՞ւմ ես, խելքը գլխին մեկին, որ գոնե մի քիչ մարդու նման լինի: Խոսք տուր. եթե հետ գաս ու ինձ էստեղ չգտնես, ատրճանակը դեն կշպրտես ու կգնաս Սան Ֆրանցիսկո: Չորս կողմդ կփնտրես, կգտնես մեկնումեկին:

ԱՂՋԻԿ – Ես ոչ մեկին չեմ ուզում գտնել:

ՏՂԱ – *(Հապշտապ, հուսակտուր)*: Դե՛, արա, ինչ ասում եմ: Կհանդիպենք Սան Ֆրանցիսկոյում: Մյուս կոշիկիս մեջ էլ մի քիչ փող ունեմ: Սան Ֆրանցիսկոյում ես քեզ կգանգեմ:

ԱՂՋԻԿ – *(Տարակուսանքով)*: Սան Ֆրանցիսկոյո՞ւմ:

ՏՂԱ – Հա, հենց Սան Ֆրանցիսկոյում: Դա է մեր տեղը:

ԱՂՋԻԿ – Ես միշտ ուզեցել եմ Սան Ֆրանցիսկոյի պես մեծ քաղաք գնալ… բայց ո՞նց պիտի մենակ գնայի:

ՏՂԱ – Դե, հիմա էլ մենակ չես, պա՞րզ է:

ԱՂՋԻԿ – Գոնե մի քիչ պատմիր, թե ինչ քաղաք է:

ՏՂԱ – *(Հապճեպ, սկզբում գրեթե համբերահաւատ, բայց հետզհետէ ավելի դանդաղ, հուշերով տարված, ժպտադեմ)*: Դե, ամենակարևորը՝ Խաղաղ օվկիանոսի ափին է… որ կողմդ նայես՝ ջուր է: Ջով, մշուշ ու ճայեր: Աշխարհի բոլոր ծայրերից եկած նավեր: Քաղաքը փռված է յոթ բլուրների վրա: Նեղլիկ փողոցներով մեկ բարձրանում ես վեր, մեկ իջնում ներքև, ոլոր-մոլոր պտույտներ տալիս: Ամեն գիշեր նավերի շչակները ոռնում են մշուշի մեջ: Բայց մենք ականջ չենք դնի նրանց ոռնոցին:

ԱՂՋԻԿ – *(Տղայի խոսելու ընթացում կամաց-կամաց մոտեցել է նրան):* Իսկ մարդիկ ուրի՞շ են Սան Ֆրանցիսկոյում:

ՏՂԱ – Մարդիկ ամեն տեղ էլ նույնն են: Հենց սկսում են սիրել մեկնումեկին, նոր արդեն փոխվում են: Սերը միակ բանն է, որ մարդկանց ուրիշ է դարձնում: Իսկ Սան Ֆրանցիսկոյում շատերն են սիրում, բա՛:

ԱՂՋԻԿ – Ոչ մեկին աշխարհում էնքան չեն սիրում, ինչքան որ ես եմ քեզ սիրում:

ՏՂԱ – *(Շշուկով, ասես աշխարհին է դիմում)*: Քո խոսքերը լսելուց հետո մարդ, թեկուզ մեռնի էլ, իրեն բախտավոր կզգա: Դե, հիմա շտապի՛ր: Ու չմոռանաս. եթե հետ գաս ու ինձ էստեղ չգտնես, ե՛ս քեզ կգտնեմ Սան Ֆրանցիսկոյում:

Աղջիկը մի պահ նայում է նրան, ապա հետ-հետ գնալով՝ շրջվում է ու վազում: Տղան, տագնապահար ժպիտը դեմքին, անթարթ նայում է նրա հետևից: Հանկարծ նստում է ու գլուխը ձեռքերի մեջ առնում: Հեռվից լսվում է մոտեցող մեքենաների աղմուկ: Տղան ականջ է դնում: Մեքենաների դռները շրխկ-թրխկոցով բացվում են: Ինչ-որ մեկը բանալիով բացում է փայտե դուռը, ապա՝ շրխկացնում, միջանցքից ոտնաձայներ են հասնում: Զգույշ քայլերով, կարծես անվստահ, բայց և ամբարտավան տեսքով մտնում է մի տղամարդ:

ՏՂԱ – *(Անսպասելիորեն վեր է թռչում տեղից և այնպես գոռում տղամարդու վրա, որ քիչ է մնում՝ սրան սրտապատառ անի):* Դու ի՞նչ բանտապետ ես, տո գրողի՛ տարած: Քո փոխարեն գործդ ո՞վ պիտի անի: Դրա համար փող ես ստանում, չէ՞: Դե շո՛ւտ, բաց թող ինձ:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց ես բանտապետը չեմ:

ՏՂԱ – Հա՞: Բա ո՞վ ես, որ բանտապետը չես:

ՏՂԱՄԱՐԴ – Ամուսինը:

ՏՂԱ – Ամուսի՞նը որս է, ես ոչ մի ամուսին-չամուսին չգիտեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Շատ լավ էլ գիտես:

ՏՂԱ – Հա՜, սպասի՛ր, սպասի՛ր… *(Դադար: Տղամարդուն պնդողով)* Դու չէի՞ր, որ երեկ գիշեր գլխիս հասցրիր:

ՏՂԱՄԱՐԴ – Հենց ես էի:

ՏՂԱ – *(Արդարացի վրդովմունքով):* Ի՞նչ է, քեզ ուրիշ աներևիք չունե՞ս, որ բռնում ես, մարդկանց գլխին հասցնում:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՞վ իմանա: Իսկ դո՞ւ. ի՞նչ է, ուրիշ աներևիք չունե՞ս, որ… գլխիցդ մեծ գործեր ես բռնում:

ՏՂԱ – *(Գլուխը շոշափելով):* Քիչ էր մնում՝ գլուխս երկու կես աներ: Քեզ ո՞վ է իրավունք տվել, որ մարդկանց գլուխը ջարդես:

ՏՂԱՄԱՐԴ – *(Հանկարծ զայրույթից պոռթկալով):* Դու իմ հարցին պատասխանի՛ր: Ի՞նչ ես գլխիցդ մեծ գործեր բռնում:

ՏՂԱ – Լսի՛ր, է՛յ… ի՞նչ ես վրաս գոռում, փակի տակ եմ, դրա՞ համար: Քո արևին ամուսին ես: Կինդ կի՞ն է, որ ամուսին լինես:

ՏՂԱՄԱՐԴ – *(Հանում է աւրճաճակը)*: Չե՛նդ կտրիր…

ՏՂԱ – Դե՛, կրակի՛ր, ո՞ւմ ես սպասում… *(Հանդարտ):* Հարամ արա բոլորիդ ուրախությունը: Ի՞նչ կասեն ընկերներդ: Բա քեֆները չի՞ կոտրվի: Ի՞նչ հաճույք է կախել արդեն մեռած մարդուն:

(Տղամարդը պահում է աւրճաճակը):

Ես գիտեմ՝ եկել ես ասելու, թե ինչ պիտի անեին: Բայց ասելու կարիք չկա: Գիտեմ՝ ինչ եք անելու: Թերթ եմ կարդում, գիտեմ: Բոլորը թափվում են մի մարդու վրա ու շանսատակ անում, չէ՞: Շորերը ծվատում են ու ոտնակոխ տալիս, չէ՞: Կանայք ու երեխաներն էլ, աչքերը չորս արած, նայում են: Ի՞նչ է, էդպես չի՞: Բայց քանի չեք սկսել ձեր տոնահանդեսը, արի ծուռ նստենք, շիտակ խոսենք: Դուք գտնում եք, որ ձեզ անպատվություն եմ հասցրել: Որտեղից որտեղ մի անծանոթ է եկել ձեր քաղաքը ու պատվազուրկ արել ձեր պարկեշտ, առաքինի ու անբասիր կանանց: Դուք պարտավոր եք ամեն ինչ իր տեղը դնել: Ախր դուք եք ընտանիքի սուրբ պահապանները, կրթում-դաստիարակում եք ձեր զավակներին: *(Հանկարծ):* Լսի՛ր…

Ես չգիտեի, որ նա կինդ է: Մտքովս էլ չէր անցնում, թե մեկնումեկի կինն է:

ՏՂԱՄԱՐԴ – Սո՛ւտ ես ասում:

ՏՂԱ – Մեկ-մեկ պատահում է… բայց հիմա ճիշտ եմ ասում: Ուզո՞ւմ ես իմանալ, թե բանը ոնց եղավ:

(Տղամարդը չի պատասխանում, գլխով է անում):

Շատ լավ, ես քեզ ճշմարտությունը կասեմ, սուտ ասողը թող գետինը մտնի: Նրա հետ ծանոթացա բառի կանգնակի մոտ: Ներս մտավ թե չէ, եկավ, նստեց կողքիս: Ինչքան ասես ազատ տեղեր կային, բայց նա նստեց իմ կողքին: Չգիտեմ՝ ով էր, փող գցեց ավագարկիչի մեջ: Մի տղամարդ սկսեց երգել «Նյու Սան Անտոնիոյի վարդը»: Նա էլ խոսք բացեց էդ երգի մասին: Ինձ թվաց՝ բարմենի հետ է խոսում: Տեսա՝ չէ, սա նրան չի պատասխանում, ասի՝ ես պատասխանեմ: Էդպես էլ ծանոթացանք: Ոչ միտքս ծուռ էր, ոչ բան: Երկուսով դուրս եկանք, սկսեցինք ման գալ: Ու լսածս առաջին խոսքը սա էր. «Այ, էստեղ եմ ապրում»:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչ պտուղն ես, է՛, սուտասա՛ծ:

ՏՂԱ – Ճշմարտությունը չե՞ս ուզում իմանալ:

(Տղամարդը չի պատասխանում):

Ասեմ քեզ: Ինձ տուն հրավիրեց: Միգուցե մտքին բան կար, միգուցե և չկար: Է՛հ, ինձնից ի՞նչ էր գնում, ինձ համար մեկ էր. ի՞նչ տարբերություն՝ տխրում էր մենակ, թե ուրիշ բան էր մտքով անկացնում:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչ էլ պոչավոր ստե՛ր ես շարում:

ՏՂԱ – Ես ճիշտ եմ ասում: Երևի կինդ էլ է դուրսը՝ ընկերներիդ հետ: Կանչի՛ր, թող գա: Ես նրա դեմ ոչինչ չունեմ, ոչ էլ քո… կամ ձեզնից մեկնումեկի: Կանչի՛ր, հարցրո՛ւ: Դու սիրո՞ւմ ես նրան:

(Տղամարդը չի պատասխանում, գլուխը իջեցնում է ափերի մեջ):

Հա՛, գործդ վատ է:

ՏՂԱՄԱՐԴ – Մտքինդ ասա:

ՏՂԱ – Դե ի՞նչ ասեմ. դժվար թե սա առաջին անգամը լինի:

ՏՂԱՄԱՐԴ – *(Փութկոտ):* Չենդ կտրի՛ր…

ՏՂԱ – Է՛, դու ինձնից լավ գիտես: Միշտ էլ իմացել ես: Ուղղակի ընկերներիցդ ես վախենում, ուրիշ ոչ մի բան: Նա փող էր

ուզում: Դա էր ուզածը: Եթե նրան փող տված լինեի, հիմա ի՞նչ էի կորցրել էստեղ:

ՏՂԱՄԱՐԴ – *(Բառերը դժվարությամբ արտասանելով)*: Ինչքա՞ն էր ուզում:

ՏՂԱ – Չհարցրի՝ ինչքան: Ասի՝ սխալվել եմ, իրեն մարդու տեղ եմ դրել: Նա սպառնաց, որ ձայնը աշխարհով մեկ կանի, եթե փող չտամ: Իսկ ես տալ-առնել չեմ սիրում, ոչ էլ սիրում եմ, որ ինձ սպառնում են, դրա համար էլ ասի, որ գրողի ծոցը կորչի: Մեկ էլ ի՞նչ տեսնեմ. դուրս թռավ տանից ու հո չի ճղվում-ճչում: *(Դադար)*: Դե՛, հիմա դուրս արի ու նրանց ասա, որ ինձ ուրիշ բանտ տանեն…Դու էլ գնա տուն, եղած-չեղածդ հավաքիր ու հեռացիր նրանից: Դու լավ մարդ ես, ուղղակի ընկերներիցդ ես վախենում:

(Լսվում են փողոցի աղմուկ, մեքենաների հայներ, և երաժշտության տրակ ներս են մտնում այդ տղամարդու կինն ու երկու ընկերները: Սկսում են պտտվել տղայի շուրջը, այնուհետև կանգնում են չորս կողմերում, տղային հրում են գնդակի նման, հետո մեջ են նետում՝ բեմեզրին, այնուհետև հանում են ատրճանակներն ու հերթով կրակում տղային: Տղան ընկնում է):

ՏՂԱ – Հե՛յ… ո՞վ կա… *(Երկտրակվում է)*:

(Ներս է վազում աղջիկը և մեխվում տեղում՝ աչքերը տղայից չկտրելով):

ԱՂՋԻԿ – Փողոցում էնքան մարդ է իրար գլխի լցվել՝ էլ տղամարդիկ, էլ կանայք, էլ երեխաներ… ճարս կտրած՝ ետնաբակի լուսամուտով մտա: Ատրճանակը չգտա: Ամեն ինչ տակնուվրա արի, չկա ու չկա: Քեզ ի՞նչ է եղել:

ՏՂԱ – Ոչինչ… ոչինչ: Ամեն ինչ կարգին է… Լսի՛ր: Լսի՛ր, Քեյթի՛: Հեռացի՛ր էստեղից: Մտածդ տեղով դո՛ւրս արի ու վազի՛ր… Ինչքան ուժ ունես, վազի՛ր… ամբո՛ղջ գիշեր վազիր: Գնա՛ ուրիշ քաղաք ու գնա՛ցք նստիր: Լսո՞ւմ ես…

ԱՂՋԻԿ – Ի՞նչ է եղել:

ՏՂԱ – Փախի՛ր… շու՛տ արա, փախի՛ր էստեղից: Ինչ գնացք էլ պատահի, նստի՛ր… Սան Ֆրանցիսկո հետո կգնաս:

ԱՂՋԻԿ – *(Հեկեկոցից խեղդվելով)*: Առանց քեզ ոչ մի տեղ չեմ ուզում գնալ:

ՏՂԱ – Ես չեմ կարող գալ: Բան է պատահել: *(Նայում է աղջկան)*: Քեյթի, ես կգտնեմ քեզ Սան Ֆրանցիսկոյում… որովհետև սիրում եմ քեզ… Մյուս կոշիկիս մեջ էլ փող ու-

նեմ պահած… Իսկ թե փող ունես, ամեն ինչ էլ կարող ես անել…*(Ընկնում է երեսնիվայր)*:

(Հնչում է երաժշտություն, մտնում էՖիշկինը, Ֆիշկինի խոսքի ընթացքում յուղիկներն պարն է)։

ՖԻՇԿԻՆ – Մի անգամ Բուֆալոյում, երբ ձյուն եկավ, ես համարյա սառեցի: Ցած, ցած, ցած և ցած է իջնում: Ձյունը փափուկ է և սառը, և երբ դիպչում է այտերիդ, դու զարմանում ես, թե ո՞վ է, որ համբուրում է քեզ, թե ո՞վ է քեզ այդպես սիրում, որ քեզ համբուրում է այդպես: Մտածում ես, թե արդյո՞ք աստված ինքը չէ, որ կրկին ու կրկին համբուրում է քեզ, որովհետև անչափ սիրում է քեզ: Մտածում ես, թե արդյո՞ք աշխարհի բոլոր մարդիկ չեն, այն միլիոնավորներն ու միլիոնավորները, որոնց երբեք չես տեսել: Մտածում ես՝ արդյո՞ք միլիոնավոր ու միլիոնավորները չեն, որոնք վաղուց ապրել և ապրում են և այժմ չեն ապրում, բայց համբուրում են, որովհետև դու ապրում ես: Ձյունը համբույր է: *(Նրա ձայնը հանկարծ խզվում է)*: Ձյունը համբուրում է, կարծես նորից գեղեցկացած կին լինի, կարծես քո մայրը լինի, քո կինը կամ աղջիկը, հավերժ գեղեցիկ այն էակը, որ քեզ կրկին ու կրկին համբուրում է: Ձյունը ցած է իջնում երկչոտ, ամաչկոտ, փափուկ ու լուռ և ամեն ինչին տալիս է ամոթխածություն, փափկություն ու լռություն, դաշտին, քաղաքին, փողոցին, տներին, սրտերին: *(Էքսպրեսից բոլորովին դուրս չգալով, կայարանի և ուժեղ, համարյա հարձակվող)*: Ձյունը ասում է՝ քնի՛ր, ես քեզ սիրում եմ, քնի՛ր, քնի՛ր: Հանդարտվի՛ր, ես քեզ սիրում եմ: *(Համարյա անլսելի)*: Ես քեզ սիրում եմ *(Ձյունիկները, ես քեզ սիրում եմ ասելով, հեռանում են դահլիճից)*:

ՏՂԱՄԱՐԴ – Հրես շան որդին:

ՏՂԱՄԱՐԴ (2-րդ) – Եղավ: Բա՛ց արա խցի դուռը, Հարի՛:

ԿԻՆ – Ո՞ւր է: Ես ուզում եմ տեսնել նրան: Մեռե՞լ է: *(Նայում է տղային, մինչև տղամարդիկ շրջում են նրա դին)*: Նա է: *(Դադար)*: Հա, հենց նա է, որ կա:

ՏՂԱՄԱՐԴ – *(Արհամարհանքով նայում է կնոջը, ապա աչքերը հառում անկենդան տղային)*: Դե լավ … վերջացնենք գնա:

ՏՂԱՄԱՐԴ (2-րդ) – Ճիշտ ես ասում, Ջո՛րջ: Օգնի՛ր, Հարի՛:

(Վերցնում են տղայի դին)։

ԱՂՋԻԿ – *(Հանկարծ մոլեգին):* Ցա՜ծ դրեք նրան…

ՏՂԱՄԱՐԴ – Սա՞ ինչացու է:

ՏՂԱՄԱՐԴ (2-րդ) – Դու ի՞նչ ունես էստեղ: Ինչո՞ւ մյուսների հետ փողոցում չես:

ԱՂՋԻԿ – Ցա՜ծ դրեք նրան ու կորե՜ք էստեղից… *(Նետվում է տղամարդկանց կողմը)*:

ԿԻՆ – *(Բռնում է նրան)*: Դու էիր պակաս, սրա արած բաների՜ն նայեք:

ԱՂՋԻԿ – Բա՜ց թող ինձ: Դուք նրան տանելու իրավունք չունե՜ք….

ԿԻՆ – Պա՛հ, սրա՜ն տեսեք… *(Ապտակում է աղջկան և հրում գցում գետին)*: Էս մի մատ լրբի բերնի խոսքերի՜ն…

(Նրանք կանգնում են չորս կողմում):

ԱՂՋԻԿ – *(Դանդաղ վեր է կենում, էլ լաց չի լինում: Նայում է շուրջը, ապա շշնջում):* Հե՜յ … ո՞վ կա…

(Ամպրոպի և անձրևի ձայներ, ներս է մտնում Ջոքը):

ՋՈՔ – Ինչո՞ւ է անձրևը լաց լինում:

ԱՂՋԻԿ – Ինչո՞ւ է անձրևը լաց լինում:

(Տղան, որը մահացած էր, կենդանանում է և վեր կենում, սկսում է պատասխանել Ֆիշկինի խոսքերով):

ՏՂԱ – Անձրևը լաց է լինում, որպեսզի ցորենը աճի, որպեսզի ամեն ոք հաց ուենա: Անձրևը լաց է լինում, որպեսզի խաղողը հասունանա, որպեսզի ամեն ոք գինի ունենա: *(Հանդիսավոր, մի փոքր ինքն իրենից հոգնած):* Անձրևը լաց է լինում, որպեսզի ծաղիկները աճեն, որպեսզի ամեն ոք կարողանա տեսնել գեղեցկությունը: *(Կանգ է առնում):* Անձրևը լաց է լինում, որպեսզի փողոցները մաքրի: *(Նա հուսահատ է: Այժմ շշնջում է):* Անձրևը լաց է լինում, որովհետև…

Հայրս երբեք չի իմացել, թե ինչպիսի հիմարի է ծնունդ տվել: Մայրս հավանաբար մտածել է, թե ես զարմանալի մարդ եմ դառնալու: Եվ ես մինչև այս պահը երբեք չեմ իմացել, թե որքան էի սխալվում՝ ատելով հորս, մորս և բոլոր հայրերի ու մայրերի որդիներին: Մանկությունից ես ինձ ասել եմ՝ այդ ի՞նչ չար կատակ էր ինձ այսպիսի աղքատ տան մեջ, այսպիսի ֆիշկինյան մսի մեջ դնելը:

Ես այստեղ եկել եմ որպես որևէ մարդ՝ իմ դերը խաղալու, իմ դերը ստեղծելու և իմ ընտրությամբ որևէ մեկը լինելու: Ինչպիսի սխալ էր այդքան պարզ մի բանը այսքան ուշ հասկանալը: Ես եկա, որպեսզի խաղամ կամ որպեսզի իմ վրա խաղան, և մինչև այս պահը միշտ խաղացվել եմ և ամենաանհերևակայելի ձևով:

Բարի աստված, ես երբեք չեմ իմացել, որ մենք ծնվել ենք ոչ թե այս մարմնով, այլ մի ուրիշ: Մեզնից յուրաքանչյուրը՝ թվով երկու հազար միլիոն, ավելի լավ կյանքի, ավելի լավ դերի համար է ստեղծվել: *(Դադար):* Մի մարդ ժամանակին հարց է տվել՝ լինե՞լ, թե՞ չլինել: Բայց հենց հարցը պատասխան էր: Հարցնել լինե՞լ, թե՞ չլինել նշանակում է խաղացվել և ոչ թե լինել: Նրա հարցը պատասխան է: Նրա վրա խաղացել են: Եվ անձրևը լաց է լինում, որովհետև մեզ վրա խաղում են: Անձրևը լաց է լինում, որովհետև մեր ամենալավ խաղը գալիս է խաղացվելուց, ինչպես ընկնելը գալիս է սրի հարված ստանալուց, բայց ո՞րն է այդպիսի դերակատարման արվեստը: Որտե՞ղ են նրա ստեղծագործությունն ու կրոնը: Անձրևը լաց է լինում, որովհետև մենք իսկապես չենք գործում և կարող ենք, եթե կարողանանք բեմ և պիես գտնել: Անձրևը լաց է լինում, որովհետև մեր դերը անկյանք է՝ կյանքի դեմ, մահվան համար, որովհետև մեր դերը անարվեստ է, առանց ստեղծագործության և առանց դավանանքի: Ազնիվ մարդկանց ամբողջ մի ազգի արցունքները չեն բավարարի մեր ձախողության համար: Երկինքը պետք է լաց լինի մեր աղքատ բեմի և՛ ներկայացման, և՛ կատարման համար: Անձրևը լաց է լինում մեզնից յուրաքանչյուրի համար, մեզնից յուրաքանչյուրի ձախողման համար:

Այս աշխարհը որբանոց չէ, ո՛չ էլ գժանոց, ո՛չ էլ հիվանդանոց, ո՛չ էլ ոճրագործների ուղղիչ տուն: Այս աշխարհը տուն է, և մենք այդ տան երջանիկ ապրողներն ենք:

(Հնչում է երաժշտություն՝ Louis Armstrong, What a wonderful world)

Վերջ

ՔԱՋ ՆԱԶԱՐ

Ըստ Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար»
հեքիաթ-կոմեդիայի

Սցենարի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Երաժշտական ներկայացում՝
երկու գործողությամբ

Նկարագրություն

Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» հեքիաթ-կոմեդիան բաղկացած է 5 արարից և նախատեսված է փոքր-մեծերի ու մեծ-փոքրերի համար: 1973 թվականին Գ. Սունդուկյանի անվան թատրոնում գլխավոր ռեժիսոր Հրաչյա Ղափլանյանի կողմից բեմադրվեց այս ներկայացումը, որի համար ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանը գրել է երաժշտությունը, գրող և հրապարակախոս Արամայիս Սահակյանը՝ երգերի բառերը, իսկ գլխավոր դերում էր ԽՍՀՄ ու ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Խորեն Աբրահամյանը: Դրանից հետո՝ 2005 թվականին, երբ ստեղծվեց «Համալսարանական» թատրոն-ստուդիան, երկրորդ ներկայացումը, որին ձեռնամուխ եղավ, «Քաջ Նազար» երաժշտական ներկայացումն էր: Մեզ մոտ այն բաղկացած էր երկու գործողությունից, այդ իսկ պատճառով պիեսում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ. կրճատվել են տեսարաններ և կերպարներ, ինչպես նաև եղել են տեքստային փոփոխություններ, իսկ բեմադրական մասը բերել ենք մեր ժամանակներ: Հիմնական դեկորացիան եղել է սիմվոլիկ, դա սայլի անիվ էր, որը երկու գույնի էր և պտտվում էր իր առանցքի շուրջ, ինչպես կարող է լինել մարդու բախտի անիվը: Մյուս դեկորացիան՝ երկկողմանի, արծաթագույն ու գորշ գույների մեջ երկու ցանկապատ, որը կյանքի փոփոխություններն էր նախանշում: Եվ այդ բոլորը՝ տարբեր տեսարաններում, տարբեր դեկորացիաներ էին ստացվում:

Մենք 1973 թվականի ներկայացումից վերցրել ենք երաժշտության ժապավենային տարբերակը և վերածել ենք թվային տարբերակի, որն առաջինն էր այդ ժամանակ և օգտագործել ենք մեր ներկայացման մեջ:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

Բեմադրվել են նաև պարային տեսարաններ (պարային բեմադրությունը՝ աղջիկների պարային համույթի գեղարվեստական ղեկավար Իռէն Ուլիխանովայի):

Հագուստների ձևավորումն իրականացրել է ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանը:

Ներկայացման պրեմիերան եղել է 2005 թվականի դեկտեմբերի 27-ին:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Քաջ Նազար – մի ալարկոտ գյուղացի, որը դառնում է թագավոր
Ուստիան – Նազարի կինը
Տիրացու – ցնդած
Հարևանուհի – Նազարի և Ուստիանի
Երեխաներ – գյուղացի
Թամադա – աշխույժ թամադա
Իշխան Սաքո – սարսափելի, շողոքորթ, իշխանատենչ
Ոսկան – Ջորբաշենցի հերոս
Վարժապետ – մագաղաթե վարժապետը
Ղոռուբուղա – Ջորբստանի հսկա
Ղառաղուռա - Ջորբստանի հսկա
Ղուզղուն - Ջորբստանի հսկա
Փերիշան – հսկաների քույրը
Սենեկապետ – ճարտարախոս
Նազիր
Վեզիր
Ջորավար
Պալատականներ
Ժողովուրդ
Մասսայական տեսարաններ
Պարային համարներ

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

Բեմը պատրաստվում է հենց հանդիսատեսի հայացքի առջև: Հեքիաթասացը երգում է «Ես եկա, որ մի քիչ խոսենք», որի ընթացքում մի քանի տղաներ բերում են դեկորները:

Դեկորը սայլի անիվ է, որը պտտվում է իր առանցքի շուրջ, դիմացը մի փոքրիկ հարթակ է, որի հետևի կողմում դրված են նավթի տակառ, մի հատ գլոբուս, երկու կողմերից դրված են այգու փայտյա պարիսպներ, որոնց վրա կան կժեր, ծաղիկներ, մի փայտի վրա փաթաթած կտոր, բաղեղ և ավելուկ, սալա, մի շարք չորացրած պղպեղ, կարպետ, փայտյա նստարան, որ լինում է գյուղական տների բակում: Օրը թեքվում է, հեռվից լսվում են շների հաչոցներ, ծղրիդների և բուի ձայներ:

ՆԱԶԱՐ – *(Գզգզված մազերով մի գյուղացի մարդ՝ փափախը գլխին):* Ուստիա՜ն:

ՈՒՍՏԻԱՆ – *(Չարադեմ, կոպիտ և հասուկիկ կին, կերակուր է խառնում):* Հրամայի՜, աղա՜:

ՆԱԶԱՐ – Ուստիան, ի՞նչ եմ ասում, օրը թեքվեց, հը՞:

ՈՒՍՏԻԱՆ – Քո՞ռ ես, մտի՛կ արա:

ՆԱԶԱՐ – Ես էլ էդ եմ ասում:

ՈՒՍՏԻԱՆ – Դե որ էդ ես ասում, էլ ի՞նչ ես խոսում:

ՆԱԶԱՐ – Ասում եմ՝ գնամ գեղամեջ, թալանը բերեմ:

ՈՒՍՏԻԱՆ – *(Հեգաբրբրված):* Թալա՞նը, հա՞, ո՞ւր է, բեր:

ՆԱԶԱՐ – *(Ծոծորակը քորելով):* Ասում եմ՝ վեր կենամ մի գնամ: *(Վեր է կենում և մորթին քարշ տալով՝ բերում գցում է Ուստիանի կողքին և վեր ընկնում վրան)*: Գնամ, ասում եմ, էն իքը, գեղամեջ…

ՈՒՍՏԻԱՆ – Բը ե՜… էլ ո՞ւր վեր ընկար:

ՆԱԶԱՐ – Հա էդ եմ ասում ես էլ…

ՈՒՍՏԻԱՆ – Բա գնում էիր գեղամեջ՝ թալան բերես:

ՆԱԶԱՐ – Ես էլ էդ եմ ասում: Տեսնեմ տղերքը գեղամեջումն են: Մի զարկեմ սարը, քարվան-բաո անց կենալիս կլինի…

ՈՒՍՏԻԱՆ – Չեմ իմանում՝ ինչ ես ասում: Բա ասում էիր՝ թալանը եկել է:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ թալան:

ՈՒՍՏԻԱՆ – Կրեմ գլուխդ, բա ո՞ւր էիր ասում:

ՆԱԶԱՐ – Էդ չէ, ասում եմ Քյոռօղլու իգիթներ են եկել գեղը: Գնամ, մի տեսնեմ էդ ո՞նց են սիրտ արել:

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչ, էլի գնում ես գեղամիջում շնթռես: Ի՛նչ գործ ունիս գեղամիջում:

ՆԱԶԱՐ – Իգիթ եմ, պիտի գեղամիջում երևամ:

ՈՒՍՏԻԱՆ – Դու մկան ծակը հազար թումաև ես առնում, ասում ես իգի՞թ եմ:

ՆԱԶԱՐ – Կարգին խոսի:

ՈՒՍՏԻԱՆ – *(Մեծաբերան ու սպառնագին):* Բո, ո՞նց չէ, «կարգին խոսի»: Գեղի իշխա՞ն ես: Գլո՛ւխդ թաղեմ: Էդ ո՞նց է, որ կարգին չեմ խոսում:

ՆԱԶԱՐ – Չեմ հասկանում՝ դու ինձ ինչի տեղ ես դրել, որ ասում ես «իշխան եմ»: Ապա ի՞նչ եմ: Էդպես մի խոսի, թե չէ՛ վեր կացա, հա՛…

ՈՒՍՏԻԱՆ – Բոյդ թաղեմ, դու ո՞վ ես, որ վրադ չխոսեմ: Մի թալան ես բերում տո՞ւն, թե՛ մի հունար ունիս: Էդ էլ ինձ պահելու տե՞ղն է:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ ես դուրս տալիս, ե՞ս պիտի քեզ պահեմ, թե՞ դու ինձ:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե: Ինչո՞ւ չես աշխատում:

ՆԱԶԱՐ – *(Սպառնալիքով):* Էդ ի՞նչ իմացա, էդ ի՞նչ համարձակություն էր…

ՈՒՍՏԻԱՆ – *(Ակամա զարմացած):* Ի՛նչ եղավ:

ՆԱԶԱՐ – Թե հե՞նց բերնից թռցրիր: Նազարն աշխատի՞: Գիտե՞ս, աշխարհը իմանա, ի՞նչ կանի քեզ:

ՈՒՍՏԻԱՆ – Բո՛ո՛… թագավոր ես գլխիս, որ չաշխատե՞ս:

ՆԱԶԱՐ – Իմացի, որ ես չպիտի աշխատեմ. դո՛ւ պիտի աշխատես:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչո՞ւ, ցխեմ գլուխդ, դու ի՞նչ ես:

ՆԱԶԱՐ – Էնդուր որ ես ազնիվ եմ:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե ազնիվ ես: Էդ էլ ո՞ր հնարեցիր:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ պիտի հնարեմ: Գրքերի մեջ գրած է: Պապիս ապուպապը թագավոր էր: Մենք ցեղով ազնիվ ենք:

ՈՒՍՏԻԱՆ – Ցխեմ պապիդ գլուխը: Ցեղով ազնիվը դու դառար, հա՞: Չես աշխատում հերիք չի, հիմա էլ իմ ազնվությունն ուզում ես՝ ձեռիցս խլես: Ազնիվը դո՞ւ ես, թե՞ ես:

ՆԱԶԱՐ – Պո, դու է՞լ ազնիվ դուրս եկար, աշխարհք չի՞ իմանում:

ՈՒՍՏԻԱՆ – Ազնիվը ես եմ: Դու որ չես իմանում, աշխարհք չի՞ իմանում:

ՆԱԶԱՐ – Էդ ո՞նց էդար ազնիվ, խելքի տոպրակ:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՛նց թե: Ազնիվ որ չէի, էլ իմ հերը ո՞ւր կասեր:

ՆԱԶԱՐ – Ոտներդ քե՛զ քաշի: «Ազնիվ»: Չհամարձակվե՛ս Նազարի մոտ էդ խոսքերն ասես, մին էլ աշխարհքի աւնուն տաս: Սովոր ես՝ վրաս բերան պատռես: Աւնուս աշխարհք է դմբդմբացնում: Մի տես՝ իմ ահից Քյոռօղլին մոտենո՞ւմ է գեղին: Էդ ո՞ւմ շնորհքն է: Ա՛յ իմ գործը: Դու իգիթի պատիվն ի՞նչ ես իմանում: Ի՛հ… խոսեցրիր ու գործից գցեցիր: Ո՛վ է իմանում՝ գեղամիջում ինչ կռիվ է: Մի անգամ էդ Դաղստանի ավազակների աչքին երևամ, գեղին վնաս չտան: *(Վերցնում է մորթին ու քարշ տալիս, ընկնում է վրան):*

ՈՒՍՏԻՆ – Հավերին քըշ արա, բակը չմտնեն, թե չէ *(ցույց տալով պուճախը)* տեսել ե՞ս պապական դագանակը: Կարկաժդ կճղեմ:

ՆԱԶԱՐ – *(Մտիկ տալով):* Կաց, մի էս կռիվը վերջանա, տես, թե ինչ հարսանիք եմ սարքում գլխիդ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – *(Ներս մտնելով տան հետևի մուտքից):* Ուստիա՞ն:

ՈՒՍՏԻՆ – Ո՞վ է: Գյուլզա՞ր: Արի:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ի՞նչ ես շինում, ա կնիկ: Էս ո՞նց է, որ մարդդ տունը չի:

ՈՒՍՏԻՆ – Ոնց տանը չի: Հրեն շնթռել է դռան հետև:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – *(Մի փոքր ցած):* Էլի բանի չի:

ՈՒՍՏԻՆ – Ոնց կլինի, որ բանի լինի: Էսքան կնկա մարդ գնաց, աշխարհք թալանեց, բերեց տուն, սա ընկած է գլխիս պարապ հացակեր: Չեռիցը ոչ էական գալիս, ոչ աշխատանք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Գեղացիք նախրապան են ուզում: Չի մտնի:

ՈՒՍՏԻՆ – Նազարը նախրապան: Դու մելիք, իշխան ասա, անարդար, խան ասա, թե չէ նախրապանություն լայեղ կանի:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Բա ոնց է անելու:

ՈՒՍՏԻՆ – Ինչ իմանամ, էն է ընկած է միքելի պես ու առավոտ-իրիկուն սուլթանից ու մելիքից է խոսում:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ով է իմանում, այ կնիկ, կարելի է մելիք է դառնում: Ինչ կա որ: Կասի, կասի, մի օր էլ կդառնա:

ՈՒՍՏԻՆ – Էս, փսլնքոտը: Քիթը չի կարում սրբի, ասում ես մելիք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ես ասում եմ՝ կդառնա:

ՈՒՍՏԻՆ – *(Մտածելով):* Կդառնա՞… ինչ գիտես:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Լավ, չես ուզում դառնա:

ՈՒՍՏԻՆ – Ինչի չեմ ուզում: Պակաս մելիքի կնիկ եմ: Համա էս փալասի կտորը պիտի իմ գլխին մելիք դառնա: Սխալվեց իմ

հերը ինձ տվեց սրան: Թե չէ ես իմ հոր տանը մելիքի աղջիկ էի, հիմի ինչ է իմ հալը: Մի կտոր հաց չունենք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Դու էլ, որ տեսնում ես մարդդ անպետք է, ինքդ աշխատի:

ՈՒՍՏԻՄՆ – Ախր ոնց աշխատեմ, մատաղ: Էսօր հերս գեղի իշխան էր: Ինձ լայե՞ղ է, որ աշխատեմ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Բա ոնց է լինելու ձեր բանը:

ՈՒՍՏԻՄՆ – Ոնց է լինելու: Գլուխը կջարդեմ, աշխատել կտամ, կուտեմ: Տեսնեմ ո՞վ է մելիքը: Բա ինչ: Կթողնեմ, որ մելիքի աղջկան էսպես պահի, ու հըլը իշխանի տեղ իրեն դնի: Ազնիվը ես եմ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ինչ եմ ասում, Ուստիան, երեխես վախեցել է, մի գաս վախը չափես, հենց ապրես:

ՈՒՍՏԻՄՆ – Գնանք. հենց գեղամեջ էի գնում:

(Դուրս են գալիս սրան նայելի մուրքի դիմաց):

ՆԱԶԱՐ – *(Թմրել, ննջում է՝ գլուխը դռանը հենած):*

ՉԱՐԱՓՃԻ ԵՐԵԽԱՆԵՐ – *(Կամացուկ մուրճներում են և փայտով ձրա քթի հետ խաղալով՝ զարթեցնում են ձրան)*:

ՆԱԶԱՐ – *(Վեր թռչելով):* Հը՞, ո՞վ է: *(Ներս փախչելով)*:

ԵՐԵԽԱՆԵՐ – *(Փախչում են: Հեռվից):* Փսլնքո՜տ Նազար:

ՆԱԶԱՐ – Չեներդ կտրեցեք, լակոտներ, ձեր հերերն եք տեսել, չեք տեսել Քաջ Նազարը: Էս է, գալիս եմ:

ԵՐԵԽԱՆԵՐ – Վախկոտ Նազար:

ՆԱԶԱՐ – Սպասեցեք, ձեր հերը կանիծեմ:

ԵՐԵԽԱՆԵՐ – *(Հեռանում են)*:

ՆԱԶԱՐ – *(Պառկում է: Ճանճերը սկսում են անհանգստացնել: Քշում է ձրանց):* Քշա՜ … *(Ծույլ հորանջելով):* Չեն թողնում՝ քնի մարդը: Ի՜ի՜ … շան կնիկ, արի մի սրանց քշի. էդ էլ ես անեմ: *(Ներս է նայում):* Վա՜, գնացե՞լ է: Ուստիան: *(Ուզում է մորթին վերցնի, ձերս գա, ծուլանում է և վեր ընկնում):* Ի՜ի՜ … բեզարած եմ, թե վեր կենամ: Հիմի մութն էլ կընկնի… ո՞վ է իմանում… գողի, ավազակի տարի է: *(Ճանճերին):* Դե, քշա՛, է՜ … իմ ցավն ինձ հերիք չի, դուք էիք պակաս: *(Մորթին դեպի ձերս է քաշում մարմնով, և ինքն էլ սողում է ձերս):* Ի՜ի՜… Սատանան ասում է, վեր կաց ու միանգամից ջարդի, պրծի: *(Բարկանալով):* Տո, դուք ում հետ գործ ունեք *(խփելով իր երեսին)* այ քեզ, այ քեզ, այ քեզ: Հը, սատ-

կեցի՞ք: Դե գնացեք: Քաջ Նազարն եմ, ասող ու անող եմ: *(Նայելով վայր թափված ճանճերին):* Հը, քանիսն են: Մեկ, երկու, երեք, չորս, հինգ: *(Ծուլանալով):* Դե, էն է հազար ասա, պրծի: *(Գոռում է):* Քաջ Նազար, մին զարկեմ, ջարդեմ հազար:

ՄԻ ՑՆԴԱԾ ՏԻՐԱՑՈՒ – *(Նիհար, գիսախոռիվ, մազաղաթե գիրքը կռան տակին՝ ձերս է ընկնում)*:

ՆԱԶԱՐ – Ո՞վ է: *(Վեր է թռչում):* Հա՜, տիրացու…

ՏԻՐԱՑՈՒ – *(Ջույգ ուրքով փեղում տրտրինգ տալով):* Թալեմ բռնեմ, բռնեմ թալեմ: *(Նկատելով Նազարին):*
Բարի աջողում, եղբա՛յր Նազար,
Այդ ինչ այդպես ջարդես հազար:

ՆԱԶԱՐ – Ի՜ի՜… աշխարհքը. ալարում եմ, թե վեր կենամ ջարդեմ:

ՏԻՐԱՑՈՒ – Ժամանակի՜ նշան է:

ՆԱԶԱՐ – Բայց մտքումս դրել եմ՝ պիտի աշխարհքը ջնջեմ: Ճանճերից եմ սկսել:

ՏԻՐԱՑՈՒ – Ժամանակի նշան է:

ՆԱԶԱՐ – Ահա, տես, մեկ զարկեցի, ջարդեցի հազար:

ՏԻՐԱՑՈՒ – Ժամանակի նշան է: *(Դիտելով ճանճերին):* Ով Նազարե, այս ճանճերը ճանճեր չեն, այլ դյուցազուններ: *(Ոգևորված և հետզհետե արագ ու մեքենայական):* Դյուցազն մի ահավոր տեսա երազիս, աջին՝ սուր, ձախին՝ դրոշ: Հայտնվեցավ իբր հուր երկնային և ջարդեց հազար դյուցազն: Ողորմությամբ աստուծո, դու ես այդ դյուցազնը: Ով կատարումն երազիս: Դու կտիրես աշխարհին, Նազարիաս, և թագավորք կդողան քեզնից: *(Բաց է անում գիրքը և բակի մեջ շրջան գծելով՝ սկսում է նայել գրքին ու փնթփնթալ):* Ահա եկի, գտա, տեսի և ստուգեցի Տիրոջն օգնականությամբ: Օրն է մեծ, երազն ի բարին: Որ և ստուգեմ, և գուշակեմ, և մեկնեմ: Ահավասիկ *(համրում է ճանճերը)*, մեկ, երկու, երեք, չորս, հինգ, այսինքն՝ հազար: *(Գրքին նայելով):* Նշանն է ճշգրիտ: *(Մուրճալով պարիսի փռած մի ճերմակ փալասի):* Ահավասիկ և գրեմ, դրոշմեմ ի լուր աշխարհի: *(Մատը կոխելով իր բանաքամանի մեջ՝ գրում է փալասի վրա: Կարդում է.)*
Անհաղթ հերոս, Քաջն Նազար,
Մին կզարկի՝ ջարդի հազար:

(Փալասը ցույց տալով օդի մեջ)։ Նշան աստվածային, բան խորհախորհուրդ, դրոշ երկնապարգև, գիր զարհուրելի։ Որով և հույս աստված՝ կտիրես աշխարհին։ *(Փալասը կապում է Նազարի ձիգակին և մեկնում Նազարին)։* Առ՛ *(նայում է Նազարի աչքերին)*, առ՛ *(ավելի մոտենում է)*, առ՛…

ՆԱԶԱՐ – Ինչ անեմ… *(ետ-ետ է քաշվում)*։

ՏԻՐԱՑՈՒ – Ա՛ռ այս դրոշն աստվածազայր, Զարկ թշնամյաց բյուր ու հազար։

ՆԱԶԱՐ – Հա՛… դե հիմի ալարս գալիս է։ Դիր էն պուճախը, վաղը վեր կենամ, ջարդեմ աշխարհը։

ՏԻՐԱՑՈՒ – *(Դրոշակը դնում է անկյունում)։* Ահա դնեմ հանկյանն խորանին, և կատարի բանն մարգարեին, թե *(երգելով)* «Ծառա իմաստուն տիրեցե տերանց անտա՛ա՛ց»։ *(Հանում է ծոցից մի համայիլ)։* Ահավասիկ համայիլ մի։ *(Վերցնում է գետնից մի-երկու փոշի)։* Ահավասիկ փոշին հսկաներին։ *(Փաթաթում է փոշին համայիլի մեջ և մեկնում Նազարին)։* Ա՛ռ։

ՆԱԶԱՐ – Ինչ է, ինչ անեմ։

ՏԻՐԱՑՈՒ – Դի՛ր համայիլն այդ ի ծոցիդ և հաղթի՛ր թշնամյաց։ *(Նազարն առնում է։ Տիրացուն հանկարծ կանգ է առնում և տեղնուտեղը տրտինգ տալով՝ խնդմնդում է)։* Բռնեմ թալեմ, թալեմ բռնեմ։ *(Դուրս է ընկնում)։*

ՆԱԶԱՐ – Տիրացու, տիրացու, մոտս կաց, մարդու վնաս չտամ։ *(Ուզում է վեր կենալ և նրա հետևից գնալ, բայց ծուլանում է)։* Ի՛՛՛… *(Ականջ է դնում։ Վախ զգալով՝ իրան սիրտ է տալիս)։* Մթնում է, հա՛, մթնում է, քեզ տեսնեմ, Քաջ Նազար։ (*Հանկարծ վախեցած վազում է խրճիթը)։* Էս շան կնիկն ինչ եղավ։ Ուստիան։ *(Ավելի հեռվից)։* Ուստիան… *(Կրկին ներս է վազում և դուռը խփելով կողպում է։ Իսկույն դուռը ծեծում են)։* Ո՞վ է։ *(Ականջ է դնում)։* Հաջի-Մուրադ։ *(Լռություն)։* Գոմեշ-Պատռան դո՞ւ ես։

ՈՒՍՏԻԱՆ – Հը՞, սատանաները կերա՞ն։

ՆԱԶԱՐ – Բերանդ շաղ մի՛ տա։ Դու չես իմանում՝ ինչ ժամանակ է։ Ինչի՞ ուշացար։ Ո՞ւր էիր։

ՈՒՍՏԻԱՆ – Քե՞զ էի հարցնում։

ՆԱԶԱՐ – Էդ իսկի իգիթի կնգա պատասխան չէր։

ՈՒՍՏԻԱՆ – Էնդուր էլ սրտաճաք ներս ընկար, կասես՝ հետևիցդ ավազակ էր ընկել:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ պակաս մարդ եմ, որ հետևիցս ավազակ չընկնի: Փախչելն էլ մի հունար է, բաս ի՞նչ իգիթ եմ, կփախչեմ է՛լ, կփախցնեմ է՛լ, կզարկեմ է՛լ, կզարկվեմ է՛լ: Իգիթի բանն էդպես է:

ՈՒՍՏԻԱՆ – Էրնե՞կ ինձ: Մարդս իգիթ, ես էլ ոսկե պալատում լվլվում եմ:

ՆԱԶԱՐ – Վահ, վահ, վահ … *(Ցատկում է տեղից և պտրտվում չհնարու չորս կողմը՝ աշխատելով ազատվել դագանակի հարվածից):* Մի՛ վախի, բան չեմ անի: Դեսը տուր դագանակը:

ՈՒՍՏԻԱՆ – Կանգնի՛ տեղդ, կանգնի՛:

ՆԱԶԱՐ – Տո, կնիկմարդ տղամարդ ծեծի՞… էդ եղավ մարդկությո՞ւն… *(Փախչում է մյուսում սայլի անիվի դակ: Գլուխը դուրս հանելով):* Կա՞ց, ո՞ւր ես փախչում, գալի՞ս եմ: Հրես եկա, անզգամ կնիկ… Դեսը տուր դագանակը:

ՈՒՍՏԻԱՆ – Դո՛ւրս արի, գլուխդ ջարդեմ, սիրտս հովանա: Դո՛ւրս արի:

ՆԱԶԱՐ – Դուրս չեմ գա: Խոսքս խոսք է:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե դուրս չես գա:

ՆԱԶԱՐ – *(Տեսնելով վար դրած դագանակը և քաջալերվելով):* Հերսից տրաքվելո՞ւ եմ: Նալա՞թ չար սատանին: Վախենում եմ՝ մի վնաս տամ: Անզգա՞մ կնիկ: *(Դուրս է վազում ծակուռից, բայց հանգիստ մուտնում է հացի սուփրին):* Լա՛վ, ես կռվի գլուխ չունիմ: *(Նստելով):* Մենք ցեղով տղամարդ ենք, կնկա վրա ձեռք չեմ բարձրացնի: Ո՞ւր է վախից մի սար էլ չես գալիս, որ տեսնես ոնց եմ ավազակների գլուխը ֆռռացնում: Թե չէ տան չորս պատերն ես տեսել, սարսա՛ղ: Տանը դագանակ վերցնելը տղամարդկությո՞ւն է: Սպասի՛, տես, թե քո ջգրու ո՞նց եմ աշխարհքը քանդելու: Էդ քո ասած երևելի մարդկերանցից բարձրը պիտի բազմեմ: Ո՞նց ես, որ հիմի վեր կենամ, նստեմ աշխարհքի գլխին:

ՈՒՍՏԻԱՆ – *(Ամաններըը դեպի չախ դուրս է տանում):*

ՆԱԶԱՐ – *(Վեր է թռչում):* Է՛, է՛, է՛ … ո՞ւր, ո՞ւր:

ՈՒՍՏԻԱՆ – Գնա, նստի աշխարհքի գլխին, ո՞ւր ես գալիս: Տես՝ ամաններն եմ տանում՝ տեղը դնեմ:

ՆԱԶԱՐ – Մենակ ո՞ւր ես գնում: Սպասիր հետդ գամ՝ չվախենաս:

ՈՒՍՏԻՄՆ – *(Դուրս է եկնում)*:

ՆԱԶԱՐ – *(Հետևից գնալով)*: Ո՞նց թե: Էս գողի, ավազակի տարին ես կնիկմա՞րդ կթողնեմ, որ մենակ դուրս գա տանից: Խալխն իմանա՝ ի՞նչ կասի:

ՈՒՍՏԻՄՆ – *(Ներս է մտնում)*:

ՆԱԶԱՐ – *(Հետևում է նրան)*: Էդպես: Վախիլ մի: Ես էստեղ եմ:

ՈՒՍՏԻՄՆ – Էլ հերիք եղավ, քո մարդ ասողի հերն անիծած: *(Ներս մտնելով և դուռը փակելով)*: Դե գնա քարվան կտրի:

ՆԱԶԱՐ – Վա՜հ, վա՜հ, վա՜հ, դո՛ւռը, դո՛ւռը, ի՞նչ ես անում:

ՈՒՍՏԻՄՆ – Ռա՛դ եղի: Քեզ հետ ապրելու սիրտ չունեմ:

ՆԱԶԱՐ – Դուռը բաց արա, թե չէ կջարդեմ:

ՈՒՍՏԻՄՆ – Գնա՛ Դաղստան, գլուխդ պահի: Էլ քեզ կնիկ չեմ: *(Պառկում է)*:

ՆԱԶԱՐ – *(Վերցնում է զենքը, կապում և բռնում դրոշակը)*: Ուստիա՜ն, եկա՜ն… *(Նայում է ամուրաղի կողմը և կուչ գալիս դռան մոտ)*: Եկա՜ն: Բը՛, բը՛, բը՛… *(Ավելի բարձր)*: Բը՛, բը՛, բը՛… *(Ավելի բարձր)*: Բը՛, բը՛, բը՛... Ո՞ւմ վրա եք գալիս.. Կայծե՜րդ կհանեմ… Բը՛, բը՛, բը՛… էհե՜յ… *(Փախչում է սայլի ամիվի հետև, չախ կողմից)*:

(Երաժշտություն և պար, ծառերը պարողներն են):

ՍԱՔՈ – *(Ծառերի միջից ներս գալով աջակողմը, ձերմակ փափախը գլխին)*: Ամա՜ն աստվածասե՜ր, տո՞ւն է, գե՞ղ է, ո՞վ կան հասե՜ք, ճամփեն կորցրել ենք:

ՈՍԿԱՆ – *(Առաջ գալով ևրա հետևից, նույնպես ձերմակ փափախով)*: Ա՜յ տղա, ձին կապի ծառից, տեսնենք՝ ո՞ւր ընկավ:

ՍԱՔՈ – Ամա՜ն, Ոսկան, ձեռից գնացինք: Ջահանդամ-գարասին ենք ընկել:

ՈՍԿԱՆ – Աստված ողորմած է: Մի՛ վախի, Սաքո:

ՆԱԶԱՐ – *(Մուրևնալով չախից, բայց դեռ չի երևում)*: Քաջ Նազարն եմ հա՜, մի՛ն կզարկեմ, կջարդեմ հազա՛ր:

ՍԱՔՈ – Ամա՜ն, Ոսկան, էս ի՞նչ Նազար է:

ՈՍԿԱՆ – Չեմ իմանում: Նստի, ժաժ մի գա: *(Կուչ ևն գալիս թփերի մեջ)*:

ՆԱԶԱՐ – Համբո՞: Բուրջի ծերի՞ն ես: Լավ մտիկ տուր, դեմիցը քարվան է գալիս: Թե Քյոռօղլուն է, կտրենք: Էգուց Սարդարի մոտ ճաշի ենք: Ընծա տանենք: Էս է՝ ձիս թամբում եմ: Տղե՛րք, դուք էլ պատրաստվեցե՛ք: *(Լռություն, ինքն*

իրեն հարց է տալիս)։ Քաջ Նազար, էդ ո՞ւմ հետ ես խոսում։ *(Պատրաստաանում է)։* Ա՛շի, բեզարեցի, էդ Քյոռօղու զորքը ջարդելուց. տղերաանցը տանում եմ։ Գնանք՝ ջարդենք։ *(Հարց է տալիս)։* Էդ Քյոռօղլուց վախ չես գալիս էլի՞։ Մե՛ղք է բաշխի։ *(Պատրաստաանում է)։* Չէ՛, պիտի գլուխդ աղեմ. *(ականջ է դնում)* ո՞վ կա էդտեղ, Համբո, էդտեղ մինը կանգնել ականջ է դնում, տես՝ ո՞վ է, բռնի բե՛ր։ Բռնեցի՞ր։ Պոկի վիզը։ Պոկեցի՞ր։ Հա՞, դե լավ, դեմ գցի։ Էսպես։

ՍԱՔՈ – Ամա՛ն, վա՛յ թե մեր օրն էլ էստեղ պիտի հատներ։

ՈՍԿԱՆ – Սուս կաց։

ՆԱԶԱՐ – *(Սպառնագին և սարսափած)։* Հեեեեե՛պ…

ՍԱՔՈ – *(Արագ)։* Հիսո՛ւս-Քրիստոս… Հիսո՛ւս-Քրիստոս, Հիսո՛ւս-Քրիստոս…

ՆԱԶԱՐ – Բմբուլնե՛րդ կքոցնեմ երկինք, հա՛։ *(Լռություն)։* Էլի՞ մարդ կա։ Դալի-Ասլան, էն կուռը բռնի։ Գիջա-Ղուշի, է՛ս կուռը։ Էս՛ է՝ նստած եմ ձին։

ՍԱՔՈ – Ոսկա՛ն, փախչենք…

ՈՍԿԱՆ – Ո՞ւր, ճամփան կտրել են։

ՆԱԶԱՐ – *(Վազում է դեպի աջ՝ ձախաբեմ։ Ոսկանը մտնում է թփերի արանքը։ Սաքոն դուրս է վազում թփերից և մնում շփոթված։ Նազարը գալիս է, դիպչում Սաքոյին և ցած ընկնելով՝ սկսում սարսռալ)։* Հը՛ը՛ մմը՛ը՛մը՛…

ՍԱՔՈ – Հը՛ը՛ մմը՛մը՛մը՛… Քաջ Նազա՞ր…

ՆԱԶԱՐ – Քյոռօղլի՞…

ՍԱՔՈ – *(Փաթաթվում է Նազարի մեջքին և գոռում)։* Էհե՛յ…

ՆԱԶԱՐ – *(Նույնպես փաթաթվում է Սաքոյի մեջքին գոռում)։* Էհե՛յ…

ՍԱՔՈ – *(Գոռում է)։* Բա՛ց թող…

ՆԱԶԱՐ – *(Գոռում է)։* Բա՛ց թող… *(Երկուսն էլ հանկարծ իրար բաց են թողնում և փախչում. Նազարը՝ ձախ, դեպի տան հետևը, Սաքոն՝ աջ, թփերի մեջ)։*

ՈՍԿԱՆ – *(Թփերից դուրս գալով)։* Սաքո, ճղի՛… *(Վազում է աջ կողմ)։*

ՍԱՔՈ – Ամա՛ն, սո՛ւրբ Մայր աստվածածին։ *(Վազում է ևրա հետևից)։*

ԼՌՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶԱՐ – *(Բերանքսիվայր պառկում է գետնին, Ոսկանն ու Սաքոն նրա վրայով վազում են դեպի աջ և անհետանում: Նազարը դեռ պառկած է, ապա հետզհետե վեր է կենում: Ապա սկսում է դիտել Սաքոյի ֆիում: Մի քիչ վստահ):* Հը՞, անտե՞ր, տերդ կորցրե՞ց քեզ, թե՞ էլի գալու է: *(Լռություն):* Չէ՛, չի՛ երևում… Փախա՞վ, ի՞նչ արավ… կլինի որ փախավ… *(Վստահ):* Հը՛ ո՞վ է ասում թե քաջ չեմ: *(Գոռում է):* Էհե՛յ մի՛ն զարկեմ, հազա՛ր կջարդեմ: *(Մուրևանալով դռանը):* Ուստիաճ, դուռը բաց: *(Լռություն):* Է, սրանից դենը հերն անիծած էն տղամարդու, որ կնիկ մարդու անուն տա: Ես գնացի: Էհե՛յ, ճա՛մփա տվեք, խաբարդա՛: Քաջ Նազարը եկա՛վ: *(Ականջ է դնում: Ուշադիանը լուռ է):* Լավ, մնա, լուսը բացվի, մի շնաբակ տամ քեզ, հետո կերթամ: *(Լռություն):* Շա՛ն կնիկ, գնա՛ցի: *(Նայում է ֆիին)* էհե՛յ…

ՈՒՍՏԻԱՆ – *(Վեր ցատկելով՝ խլում դազանակը և դուռը բաց անելով՝ դուրս նետում):* Հերիք, զահլա չտանես *(Դազանակով հարվածում է Նազարին ու ֆիուն)*: Ա՛ռ քեզ, բյոթա՛կ:

ՆԱԶԱՐ – Է՛, է՛, է՛, ձին կվախցնի՞… *(Ձին փախցնում է նրան):* Փախցրե՛ց… ամա՛ն… հասե՛ք: *(Ձայնը հեռանում է և կանչում):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Ներս գալով):* Դե, հիմի գնա՛ սրտաճաք եղի, աչքդ էլ կարեմ: *(Ներս է մտնում):*

(Պարային երաժշտական անցում, որի ժամանակ փոխվում է դեկորացիան պարի միջոցով: Աղջիկները նստարանը բերում են կենտրոն, դիմացը փռում են սուփրան, վրան՝ մի գինու կուժ: Հավաքում են փայտե պարիսպի վրայի իրերը և պարիսպները, որոնք շարժական են, տանում են հետ):

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ՁՈՐԲԱՍՏԱՆՈՒՄ

(Մուրքը երաժշտությամբ: Ներս են մտնում Ջորբատաճի իշխանները, տերտերը և հյուրերը՝ մտավորականությունը, պարելով: Անտառ: Գյուղական քեֆ է: Հյուրերը բոլորել են սուփրի շուրջը):

ԹԱՄԱԴԱ – Գեղի իշխանավորներին՝ հրամա՛ն: Թասներդ լցրե՛ք: *(Երգում է «Կենաց երգը»):*

ՄԻ ՀՅՈՒՐ – Ջա՛ն, իշխանավո՛ր Թամադա: Հրամայի, մեր տերն ես:

ԴՐՍՈՒՄ ԱՂՄՈՒԿ Է ԼՍՎՈՒՄ

ԹԱՄԱԴԱ – Մի տեսեք՝ էն ո՞վ է:

ՁԱՅՆԵՐ – Ճամփորդ է:

ԹԱՄԱԴԱ – Ճամփորդը աստծո հյուրն է:

(Ներս են բերում Նազարին, որը, դրոշակը ձեռին, սուրը կապած, կանգնում է և վախեցած ու խոժոռ նայում է հյուրերին: Հյուրերն էլ կասկածելով մտիկ են տալիս նրան):

ԹԱՄԱԴԱ – *(Նայելով նրա դրոշակին և երևույթին կասկածոտ):* Համեցե՛ք: *(Իր մուր ևաստղներին):* Ա՛յ տղա, ճամփա տվեք հյուրին, անց կենա դեսը: *(Ճամփա են տալիս):*

ՄԻ ՀՅՈՒՐ – Սա որ էսպես դրոշակով, թրով ևստեց, սրա տակին շատ բան կլինի:

ԼՌՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶԱՐ – *(Հազում է):* Հը՛մ…

ԲՈԼՈՐԸ – *(Նայում են նրան):*

Ա.ՀՅՈՒՐ – Ի՞նչ ասավ:

Բ. ՀՅՈՒՐ – Ասավ «Հը՛մ»:

Գ. ՀՅՈՒՐ – Ի՞նչ ասավ:

Բ. ՀՅՈՒՐ – Ասավ «Հը՛մ»: *(Հերթով ևույն հարցն ու պատասխանը, մինչև հասնում է մի ծերուևու):*

ՄԻ ՀՅՈՒՐ – Որ ասավ՝ «Հը՛մ», ասել է Քյոռօղլին է:
(Ձեռքը ճակատին հովանի անելով և մտիկ տալով Նազարին): Չէ, Քյոռօղլու թոռն է:

ԼՌՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶԱՐ – *(Հպարտ):* Գյաղա՞: Մի բան կուզեմ իմանամ էս ժողովրդից: Դուք դաղստանցի՞ եք:

ԹԱՄԱԴԱ – Չէ, մենք զորբաշենցի ենք:
ՆԱԶԱՐ – Աշխարհքի աևո՞ւնը:
ԹԱՄԱԴԱ – Զորբաստան:
ՆԱԶԱՐ – *(Գլուխը ծանր շարժելով):* Զորբաստա՞ն: Շա՛տ լավ: Է՛դ կուզեի իմանայի: *(Բեղերը սրում է: Լռություն: Հազում է):* Գյադա՞, Հնդստանու ճամփեն ո՞ր կողմով է գնում:
ԹԱՄԱԴԱ – Չենք իմանում:
ՆԱԶԱՐ – *(Գլուխը ծանր շարժելով):* Չե՞ք իմանում: Հա՛: Լա՛վ: Էդ կուզեի իմանայի: *(Լռություն):*
ԹԱՄԱԴԱ – Հրամանդ ո՞ր աշխարհքից ես:
ՆԱԶԱՐ – Նազարստան աշխարհքից, Նազարաշեն քաղաքից:
Ա. ՀՅՈՒՐ – Ջանըմ , մի իմացեք, տեսեք ո՞վ է:
Բ. ՀՅՈՒՐ – *(Իր կողքինին):* Մի իմացի՝ ո՞վ է:

(Շարունակ բոթելով մեկմեկու և երբեմն մի քանի մարդ մեջ տալով՝ հարցնում են «ո՞վ է», մինչև հասնում են տերտերին, որ նստած է Նազարի կողքին):

ՎԵՐՋԻՆԸ – *(Տերտերին):* Տերտեր, մի իմացիր ո՞վ է, ի՞նչ մարդ է:
ՏԵՐՏԵՐ – *(Մտիկ անելով Նազարի դրոշակին և կարդալով՝ սարսափում է: Ապա դիմելով վերջին հարցնողին՝ կիսաձայն.)*
Անհաղթ հերոս, քաջն Նազար,
Միհ կզարկի՝ ջարդի հազար:
ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑՆՈՂԸ – *(Իր կողքինին, սա էլ հերթով մինչև Ա. հյուրը):*
Անհաղթ Նազար, քաջն Նազար,
Միհ կզարկի՝ ջարդի հազար:
ԹԱՄԱԴԱ – Հը՜մ…
ԲՈԼՈՐԸ – Հը՜մ…
ՆԱԶԱՐ – *(Հազում է):*
ՍԱՔՈ – *(Ներս է մտնում մռայլ ու հպարտ):*
ՀՅՈՒՐԵՐ – Օհո՜, Սաքո՜, բարո՜վ, Սաքո՜, համեցե՜ք:
ՍԱՔՈ – *(Լուրջ):* Աստծու բարին:
ԹԱՄԱԴԱ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ – Համեցեք, նստի, էս ո՞ր քամին քեզ բերեց:
ՍԱՔՈ – Կացե՛ք մի, խիստ բեզարած եմ:
ՀՅՈՒՐԵՐ – Ձիդ ո՞րտեղ է:
ՍԱՔՈ – *(Նստելով և խոր շունչ քաշելով):* Էս է, էնքան զորքը խոտի պես հարել թափել էի ոտիս տակ. էդ անտեր ձին տակիս չոքեց: Ոտով եմ եկել:
ՀՅՈՒՐԵՐ – Վահ, կռիվ կա՞ր:

ՍԱՔՈ – *(Սաստիկ տարված է պատմելու մարմանջով: Ամենքը ապասում են հետաքրքրքիր: Սաստիկ մեծամիտ ձայնով սկսում է):* Էն է, ախպեր ջան, ախպորս որ ասեմ, ձիս նստել գնում էի Դումանլու, Չամլըբել: Էնպես գիշերվա դառը կեսը կլիներ, մին էլ տեսա, ընկել եմ Ղարանլուխ Մեշի Ջահանդամ-դարասին: Հիմի, ախպեր ջան, ականջս ձենի՝ ձիուն հարաքյաթ, ղամշուն բարաքյաթ՝ գնում եմ: Ամա մի մթնագիշեր էլ է, որ աչք աչքի չի գալիս: Մին էլ մի ձեն ընկավ ականջիս: Ասի, յա գազան է, յա ավազակ: Ականջ դրի, որ գազանի, ավազակի բան չի, սելավի պես գալիս է: Այ տղա, էս ի՞նչ բան է: Էս մտքով էի, մին էլ տեսնեմ, մի զորք է գալիս, մի զորք է գալիս, ոնց որ ղիամաք: *(Ունկնդիրներըը սարսափով նայում են):* Չեն տվի, աղա էդ ո՞ւմ զորքն է: Չեն չտվին, էն է թուրս պլոկեցի, ձիս կրակեցի, ընկա էդ զորքի մեջն ու սկսեցի ղամշիլը:

ՈՍԿԱՆ – *(Ներս է մտնում չախից և տեսնելով, որ ամենքը զբաղված են, չիանգարելու համար զգույշ մուտնում է Սաքոյին և հետևը կանգնում: Ապա տեսնելով Նազարին՝ ճանաչում է և զարմանում, դրդում իր մոտ նստած հյուրերից մեկին):* Ո՞վ է:

ՄԻ ՀՅՈՒՐ – Քաջ Նազարն է:

ՍԱՔՈ – Սա փաթաթվեց ոտիս ու մենակ էսքանը գոռաց «Ամա՜ն, Քյոռօղլի, բաշխի՜»: Տո՜, քու Քյոռօղլու ըսենց ընենցը… Ախպեր ջան, սրան գցեցի ոտքերիս տակ, ը՜մ, հիմի ո՜նց եմ տալիս փորին, գլխին, մեջքին… մեջքին, փորին, քթին… շինեցի քյուֆթա… էստեղ լուսնյակը դուրս եկավ: Մտիկ տվի, որ Քաջ Նազարն է:

ԲՈԼՈՐԸ – *(Շփոթված):* Ա՛յ տղա, ա՛յ տղա… դե՛սը, դե՛սը… *(Հազում են):*

ՈՍԿԱՆ – Հա՜, էն մեր բանն ես պատմում…

ՍԱՔՈ – Շինեցի քյուֆթա… *(Հանկարծ նկատելով Ոսկանին):* Հա՛, հա՛…

ՈՍԿԱՆ – *(Ցած):* Սաքո, Քաջ Նազա՜րն է: Սաքո, Քաջ Նազարն է… *(Աչքով է անում և ցույց է տալիս Նազարի վրա):*

ՍԱՔՈ – *(Բոլորովին շփոթվելով):* Հա՛… հա՛… հա՛, է՜ ...Հա բաներ շատ եղան… բը, բը, բը, բը… (*Ցած ձայնով դիմում է իր կողքի ընկերներին):* Ի՞նչ եք ասում, ո՞վ է, ի՞նչ է…

Ա. ՀՅՈՒՐ – Քաջ Նազարն է:

Բ. ՀՅՈՒՐ – Քաջ Նազարն է:

Գ. ՀՅՈՒՐ – Քաջ Նազարն է:

ՍԱՔՈ – *(Կասկածով նայում է Նազարին և ետ նայում):* Ասեք, էլի՜… բը՛, բը՛, բը՛…

ՆԱԶԱՐ – *(Նույնպես ետ նայում է և կասկածով նայում Սաքոյին)*:

ՀՅՈՒՐԵՐ – Վերջը, ո՞նց եղավ: Զարդողն ո՞վ էր:

ՍԱՔՈ – Ո՞վ պիտի լիներ: Քաջ Նազար… Մենք էլ կռվի մեջ էինք ու… *(Իր կողքի ետդողներին):* Ո՞ր տեղի Քաջ Նազարն է:

ԿՈՂՔԻՆԸ – Նազարաշենի: Ճանաչ ե՞ս:

ՍԱՔՈ – Ո՞նց թե ճանաչ ես, տնաշեններ, Դաղստանու կռվին հինգ տարի միասին ախպերություն ենք արել: Տեսաք՝ ո՞նց լուս գցեցի Քաջ Նազարին: Այ հա՜յ, Դաղստանից մինչև Հնդստան երկու իգիթ եմ ճանաչում. մինը Քաջ Նազարն է, մինն էլ Քաջ Նազարն ինքը կասի՝ ով է: Իսկ հիմա թասերը բերեք խմենք Քաջ Նազարի կենացը:

ԹԱՄԱԴԱ – *(Նազարին):* Քա՛ջ Նազար ախպեր: Բարով եկար: *(Թամադան երգում է կենացի երգը՝ «Ջա՜ն, Քաջ Նազար, կենա՛ց», չեռ է տալիս նրան):* Անունդ վաղուց էինք իմացել, մենակ քեզ չէինք տեսել: Հիմի մեզ համար բախտավորություն է, որ տեսանք: Այ էպես, որ տեսնում ես մեզ, հենց բռնի՝ ամենքս գեղերի իշխաններ ենք: Բայց ի՞նչ անենք, որ գերի ենք մեր հարևանների ձեռին:

ԲՈԼՈՐԸ – Գերի՜ ենք, գերի՜ ենք:

ՆԱԶԱՐ – Ո՞նց թե գերի եք:

ԹԱՄԱԴԱ – Գերի՜ ենք, Նազար ախպեր, գերի՜ ենք: Չեն ուզում իրենց աշխարիքը մեզ տան: Չի՞ լինի՝ մեզ ազատես դրանց ձեռից: Մեզ կերան:

ՆԱԶԱՐ – Իրենց աշխարիքը ձեզ չե՞ն տալիս: Ո՞նց թե: Ես Նազարը լինեմ, ականջս էդպես բան իմանա: *(Ոտքը գետնին խփելով):* էդպե՞ս եք պահում իմ ժողովրդին: *(Բոլորը ցնցվում են):* Դրա համա՞ր են իմ պապերը թագավոր եղել, որ իմ ժողովուրդը զուր էսպես նեղության մեջ պահե՞ք:

ԲՈԼՈՐԸ – *(Ոտքի են կանգնում և փափախները հանում):*

ՆԱԶԱՐ – Է, չասե՞ք՝ ովքե՞ր են:

ԹԱՄԱԴԱ – Հսկաները:

ՆԱԶԱՐ – *(Վեր թռնելով տեղից, վախեցած):* Հսկանե՞ր… բը՛, բը՛, բը՛, բը՛ … *(Ամհանգիստ)* Որտե՞ղ են:

ՉԱՅՆԵՐ – Հեռու են:

ՆԱԶԱՐ – *(Հանգստացած)* Հա՜, հեռու են: *(Սրտապնդվելով)* /Էհ, ո՞նց են համարձակվել էդքան հեռու լինեն: Որտե՞ղ են: *(Սաքոյին)* Գյաղա, մի տես՝ որտեղ են՝ գնա բեր, մի հումհում ուտեմ դրանց: Հազար հատ էն օրը փշրեցի, ալյուր շինեցի, տվի քամուն: Էս երկու հատիկ փոշին մնաց՝ էն էլ դրի համայիլիս մեջ: *(Յույց է տալիս համայիլը):*

ԲՈԼՈՐԸ – *(Զարմացած և երկյուղած):* Պա՛հ…

ՏԵՐՏԵՐ – Տուր մի հատը մեր գեղին հիշատա՛կ, օրհնյա՛լ:

ՆԱԶԱՐ – *(Բաց է անում համայիլը, մի հատիկ տալիս է Տերտերին):* Ա՛ռ: *(Մյուսներին):* Կացե՛ք, էս հսկաներին էլ փոշի շինեմ, ամենքիդ մի-մի հատ կտամ հիշատակ: Դե՛, լնձնից հրաման իմ ժողովրդի քեթխուդաներին: Ձեր բոլոր հարևանների երկիրը ձե՛զ: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք: Քաջ Նազար:

ՏԵՐՏԵՐ – *(Մազաղաթի նման մարդ):* Հասա՜վ մեծ ժամանակը, եկա՜վ ազգի հերոսը: Մեծ Նազարը պիտի նստի թագավոր: Նա վեր է կացել բոլոր աշխարհքի, բոլոր ազգերի դեմ:

ԹԱՄԱԴԱ – Ջա՜ն, ջա՜ն:

ՏԵՐՏԵՐ – Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն: Մենք Քաջ Նազարի ազգն ենք և դրանով, գոհությունն աստծո, ամեն ազգից բարձր ենք:

ԹԱՄԱԴԱ – Տո էլ կարգդ օրհնվի, տերտեր, խոսի՜ մի, է՜:

ՆԱԶԱՐ – Վեր կենամ գնամ դրանց վերջացնեմ:

ԲՈԼՈՐԸ – Կեցցե՛ Քաջ Նազարը:

ԹԱՄԱԴԱ – Գնում ենք:

ԲՈԼՈՐԸ – Մենք էլ ենք գալիս:

ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ – *(Ամպառի խորքից աջից):* Ամա՜ն, հասեք, ի՞նչ բանի եք:

ԲՈԼՈՐԸ – *(Անհանգիստ):* Ի՞նչ կա…

ԳՅՈՒՂԱՑԻ – *(Ներս ընկալ):* Ամա՜ն, հասեք, վագր է լուս ընկել անտառ:

ԹԱՄԱԴԱ – *(Քահ-քահ ծիծաղում է):* «Վա՜գր է լուս ընկել»:

ԲՈԼՈՐԸ – *(Նույնպես ծիծաղում են):* «Վա՜գր է լուս ընկել»:

ԳՅՈՒՂԱՑԻ – *(Շփոթված)* Ինչի՞ եք ծիծաղում: Բան եմ ասում, վագր է լուս ընկել անտառը…

ԹԱՄԱԴԱ – *(Հանգիստ ժպտալով):* Լուս է ընկել, քող ընկնի… Նազարն էստեղ չի՞, վագրի հոգեառը:

ԳՅՈՒՂԱՑԻ – Ի՞նչ Նազար, ի՞նչ զառաֆաթ… շեները փչացրեց, հասեք…

ՍԱՔՈ – *(Հազում է և վեր կենալով կամաց-կամաց մուրենում է ձախ մուրքին և հանկարծ փախչում):*

(Տեսարանը կատարվում է երաժշտության ուղեկցությամբ):

ՁԱՅՆԵՐ – *(Ձախից)* Գալի՞ս է, գալի՞ս է…
Մեծ մասը փախչում է դեպի աջ:

ՁԱՅՆԵՐ – *(Աջից)* Գալի՞ս է, գալի՞ս է…

(Շփոթություն: Մի մասը փախչում է դեպի ձախ, մյուսը՝ աջ, երրորդը՝ դիմացի կողմ):

ՆԱԶԱՐ – Բը՛, բը՛, բը՛… *(Փախչում է դեպի դիմացի կողմ):*

ԴԻՄԱՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ – *(Եր վազելով):* Էս կողմից է գալիս…

ՆԱԶԱՐ – *(Եր է փախչում դեպի աջ):* Բը՛, բը՛, բը՛…

ԱՋԻՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ – *(Եր վազելով):* էս կողմից է գալիս:

ՆԱԶԱՐ – *(Եր է փախչում դեպի ձախ):* բը՛, բը՛, բը՛… *(Դուրս է վազում, բոլորն ընկնում են Նազարի հետևից: Նազարը ևերս է ընկնում դեմից, վազում դեպի աջ և ապա դուրս վազելով՝ ևերս է մտնում դեմից):*

ՁԱՅՆԵՐ – Եկա՞վ, եկա՞վ…

ԹԱՄԱԴԱ – Նազարի՛ն առաջ գցեցեք, Նազարին առաջ գցեցեք: *(Բոլորը թաքնվում են Նազարի բիկունքում):*
(Երևում է աջից: Նազարին հրում են վագրի վրա, և իրենք փախչում են դեպի ձախ: Նազարը սարսափից և շփոթությունից մնում է տեղում սառած):

ՁԱՅՆԵՐ – *(Հեռվից):* Փախե՛ք, փախե՛ք… *(Լռություն):*

ՆԱԶԱՐ – *(Ծամածուռ ձայնով, սարսափահար):* Ամա՞ա՞ն (*Փախչում և թաքնվում է):*

ԹԱՄԱԴԱ – *(Դիմաց՝ մուրքի մուտ՝ դեպի դուրս):* Ա՛յ տղա հասե՛ք, վագրին բռնե՛լ է, վագրին բռնե՛լ…

ՁԱՅՆԵՐ – Գալի՞ս ենք, գա՞լիս…

ԹԱՄԱԴԱ – Պի՛նդ բռնի, Քաջ Նազար, պինդ բռնի: Հասե՛ք, զարկե՛ք: *(Հետևում են նրան բահերով, փայտերով և քարերով. շրջապատում են վագրին և ամեն կողմից հարվածելով՝ սպանում նրան: Նազարը սարսափած նստած է: Լռություն):*

ՄԻ ՁԱՅՆ – Ուշքը վրեն չի:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ – Սո՛ւս կացեք, թունդ է չարացած:

(Մի քանիսը վագրը քաշում են դեպի խորքը՝ մաշկելու):

ՆԱԶԱՐ – *(Ուշքի գալով)* Ո՞ւր է վագրը:

ԲՈԼՈՐԸ – Սպանեցինք:

ՆԱԶԱՐ – *(Նայելով վագրին՝ հազում է ինքն իրեն):* Հա՛, հը՜մ.. էսպե՜ս էր եղել բանը… *(Վագրին դիմելով):* Լավ պրծար էս մի անգամն էլ: *(Բարձր հազալով՝ գյուղացիներին):* Բա էս անելո՞ւ բան էր, որ արինք:

ԲՈԼՈՐԸ – *(Շփոթված):* Ի՞նչ կա:

ՆԱԶԱՐ – Ի՞նչի սպանեցինք, ո՞վ էր ասում՝ սպանեք:

ԲՈԼՈՐԸ – Բա չսպանեի՞նք:

ՆԱԶԱՐ – Ես չէի՞ կարող սպանել: Ափսո՜ս: Վագրին էլ մարդ ձեռ տա՞: Անվնաս անասուն:

ԲՈԼՈՐԸ – Չէինք իմանում, էս մեկը բաշխի, էլ չենք անի:

ԹԱՄԱԴԱ – Ապրես, Քաջ Նազար, Էսպես էլ աշխարհքը գցես ոտքիդ տակ: *(Գյուղացիներին):* Դե, հիմի վեր կացեք, գնանք Նազարի հետ, ճարենք հսկաներին:

ԲՈԼՈՐԸ – Գալիս ենք:

ԹԱՄԱԴԱ – Եկե՛ք:

ՎԱՐԺԱՊԵՏ – Հառա՜ջ: *(Առաջ է ընկնում և իսկույն ետ գալիս):*

ՏԵՐՏԵՐ – *(Ետ-ետ գալով):* Ի զե՜ն, առա՜ջ:

(Բոլորը դուրս են գալիս դահլիճի միջով՝ պտտվելով և զորքաշենցիների երգը երգելով: Մտնում է պարի խումբը, պարելով հավաքում և պատրաստում քեմը):

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ՀՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Տեսարանը սկսվում է հսկաների երգով, երգում են՝ ուս ուսի տված)։

Հե՜յ հո՜, հե՜յո
Հա՜մ,
Այս սարերը մերն են
Այս ծառերը մերն են. չենք տա
Այս լեռները մերն են
Այս կողմերը մերն են. չենք տա

Հե՜յ հո՜, հե՜յո՜, հե՜յ հո՜, հե՜յ հո՜, հե՜յ հո՜
Հա՜մ, հա՜մ

Հե՜յ հո՜, հե՜յ հո՜
Հե՜յ հո՜, հե՜յո՜, հե՜յ հո՜, հե՜յ հո՜, հե՜յ հո՜
Հա՜մ, հա՜մ, հա՜մ

Այդ Նազարը ո՞վ է,
Սի՞թե ուժի ծով է, հա՜, հա՜
Չգիտի դեռ խեղճը, եկել է իր վերջը հա՜, հա՜

Հե՜յ հո՜,
Հա՜մ։

(Փոխվում է երաժշտությունը, ընդմիջման ժամանակ անցնում է Փերիշանը եղբայրների միջով, եղբայրները ժպտում են, իսկ նա ասում է)

ՓԵՐԻՇԱՆ – Ապեր, ապեր, ապեր: *(Ձեռքը դնելով ուսերին)։*

(Տերտերը բեմի դիմացի մասում հեւրևում է հսկաներին: Այդ պահին հսկաները տեսանում են նրան: Ղառաղուռան և Ղուզղունը բռնում են տերտերի ոտքերից ու ձեռքերից և ուզում են՝ տանեն)։

ՂՈՌՈՔՈՒՂԱ – Չէէէ՜… Կեցցե՛ք. բան պիտի հարցնեմ:
ՏԵՐՏԵՐ – Ամա՜ն, օրհնյալներ, բա՛ց թողեք, սիրտս կճաքի:
ՂՈՌՈՔՈՒՂԱ – Կա՜ց… Ինչո՞ւ հարևանություն չեք անում էլ.. Ինչո՞ւ քանի օր է՝ էլ աղ չեք ուղարկում մեզ.. Հը՞մմմ…
ՏԵՐՏԵՐ – *(Վեր թռչելով)։* Բոլոր աղը մատաղի ենք տվել, օրհնյալ: Աղ չի մնացել:
ՂՈՌՈՔՈՒՂԱ – Մատաա՞ղ… Հը՞, ի՞նչ մատաղ: Հը՞մ:

ՏԵՐՏԵՐ – Մի քաջ մարդ է լույս ընկել մեր աշխարհքը, մատաղ ենք անում աստծուն, որ նրա պատուհասից մեզ ազատե:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ի՞նչ մարդ է, անունն ի՞նչ է: Հը՜մ:

ՏԵՐՏԵՐ – Քաջ Նազար:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Քաջ Նազա՞ր… Ղոռոբուղա՞, քա՜ա՜ջ Նազա՜ր… Ղոռոնքի, քա՜ա՜ջ Նազա՞ր, հո՛, հո՛, հո՛, հո՛ *(հսկայաբար ծիծաղում է: Ծիծաղում են և մյուսները միևչև արնքալը):*

ՏԵՐՏԵՐ – Դուք ծիծաղում եք, օրհնյալներ, բայց Քաջ Նազարը գերի է արել մեր աշխարհքը: Ջարդում է ու ջարդում:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ապա էդ Քաջ Նազարը ինչի՞ է ջարդում ձեզ: Հը՜մ:

ՏԵՐՏԵՐ – Մեզ շատ չի ջարդում: Հսկաներին է ջարդում: Սին զարկում է, հազար ջարդում:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բոռո՞…ոնց թե:

ՏԵՐՏԵՐ – Դրոշակ ունի ձեռին, սրբոց ձեռամբ գրած, թե՝ անհաղթ հերոս, Քաջն Նազար, մին կզարկի, ջարդի հազար: *(Լացակումած):* Ա՜խ, օրհնյալներ, կրակ է դժոխային, հուր աստվածային:

ՂՈՒՉՂՈՒՆ – Հը՞ը՞… վախեցնո՞ւմ ես…

ՏԵՐՏԵՐ – Չէ՛, օրհնյալ, չէ, ճշմարիտ է, վկա աստված կենդանի: Այդ Քաջ Նազարը ձեզնից մեծ ուժի տեր է:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բո՜ռ՜:

ՏԵՐՏԵՐ – Ահավասիկ, ամենն ասեմ ձեզ և պատմեմ, զոր տեսի աչքով իմոք և լսե ականջոք: Տեսիլ զարմանահրաշ: Հինգ հարյուր հսկաներ իմ աչքի առջև ջարդեց, փշրեց, փոշի շինեց, տվեց քամուն: *(Ծոցից հանելով մի մանանարուտի և պրդուցով հանելով մի փոշի):* Ահա, էս մի հատիկ փոշին մնաց, այն էլ ես վերցրի հիշատակ: *(Լաց է լինում):* Մեղա՜ա՜ա՜…

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հըա՜ա՜մ: *(Շալակում է տերտերին):*

ՂԱՌՂՈՒՌԱՆ – *(Նայելով դեպի չախ)* Մեծ ապեր, մեծ ապեր, էն ովքե՞ր են: *(Յույց է տալիս չախակողմը):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հը՜ա՜մ:

ՏԵՐՏԵՐ – Ամա՜ն, Քաջ Նազա՜րն է:

ՀՍԿԱՆԵՐ – *(Սարսափում են):*

ԹԱՄԱԴԱ – *(Գոռում է):* է՜յ, հսկանե՜ր, ո՞ր ծակն եք մտել… Հիմի՜ դուրս արիք, է՜…

ՆԱՋԱՐ – Կամա՛ց, մի՛ գոռա, չփախչեն: Էս է՝ էս հսկաների գլուխն էլ կտրեմ ու պրծնեմ:

ՀՍԿԱՆԵՐ – *(Գլուխները պահում են):*

ԹԱՄԱԴԱ – *(Գոռում է):* Է՛յ, հսկաներ, ո՞ր ծակն եք մտել, հիմի՛ դուրս արիք: Է՛:

ՆԱԶԱՐ – Ա՛ա՛ա՛: *(Զանազան կողմեր է վազվզում և հանկարծ վախի կատաղության մեջ գոռում է):* Է՛հե՛յ… *(Բռնում է ծառի բնից):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Բաց թողնելով տերտերին՝ չոքեչոք վազում է նրա մոտ):* Օջախդ ենք ընկել, Քա՛ջ Նաազար: *(Ճակատը գետնին զարկելով և բարձրացնելով)*, Քա՛ջ Նա՛զար, լսել էինք անունդ, քեզ չէինք տեսել.. Շատ աղաչանք ենք անում, գաս դառնաս մեր մեծավորը, մենք էլ կդառնանք քո ճորտը: Հրամայի, աշխարհիք քանդենք, բերենք ոտդ: Մենակ բաշխի մեզ:

ՆԱԶԱՐ – Գյադա, ի՞նչ է ձեր աշխարհքի անունը:

ՏԵՐՏԵՐ – Հսկաստան:

ՆԱԶԱՐ – Հսկաստան: Լա՛վ: Բաշխեցի՛նք:

ՏԵՐՏԵՐ – *(Խաչակնքելով):* Խաղաղություն ամենեցուն: *(Ինքն իրեն):* Հազիվ ազատվեցինք: Օրհնյալ լինես, ո՛վ քաջ: *(Լռություն):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հա՛ա՛մ: Հրամա՞ն է, վեր կենենք, մեծավոր:

ՆԱԶԱՐ – Վեր կենա՞ք: *(Մտածում է):* Վեր կացեք ու… մի քիչ հեռու կանգնեցեք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Թուրդ հանի, մա՛տաղ, տակովն անցնենք:

ՆԱԶԱՐ – *(Հանում է թուրը և հսկաներն անց են կենում):*

ԼՌՈՒԹՅՈՒՆ

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հիմի ի՞նչ կհրամայես, մեծավոր:

ՆԱԶԱՐ – Ոչինչ չեմ հրամայի: *(Դես - դեն է նայում, որ հնար գտնի փախչելու: Մահ է գալիս):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Հետևում է նրան)* Հիմի ո՞նց է ուզում սիրտդ: Աղուհացի սուփրան էստե՞ղ բաց անենք, թե ներսը՝ ամրոցում, հա՛ա՛մ…

ՆԱԶԱՐ – *(Տարակուսանքով):* Սուփրա՞ն: Բաց արեք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ոնց որ քեֆդ է:

(Բոլորը գնում են՝ ամրոցի ներսը ճաշելու, Ղոռոբուղան հետ է գալիս հետադիտակով և հետևում է տարածքին, տեսնում է մի մարդու՝ դեսպանին՝ դրոշակով):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Փախած թշնամուց դեսպան է եկել, հաա՛մ... ներս է ընկել, կանչեք, տեսնենք, ներս է ընկել:

(Դեսպանը գալիս է առաջ, բարձրանում է բեմ):

ԴԵՍՊԱՆ – Հաղթված, ջարդված մեր քաջ զորքից, ժողովրդից ու աշխարհքից, մի խնդիրքով ենք եկել ահա, Քաջ Նազարին խնդրենք հիմա, մեր թագավորը սպանվեց էս կռվի մեջ, ժողովուրդն ու աշխարհքը մնացել են անթագավոր: Հիմի մեր ջարդված զորքը, ողջ աշխարհքը խնդրում է Քաջ Նազարին, որ նա մեր աշխարհքն էլ միացնի ձեր աշխարհքին և դառնա մեր ու ձեր թագավորը:

(Քաջ Նազարը Զոռբաշևնցիների ու հսկաների հետ մտնում է բեմ):

ՂՈՌՈՔՈՒՂԱ – Քաջ Նազար, կուզե՞ս թագավոր դառնաս:

ՆԱԶԱՐ – *(Ուշքի գալով, չայնը փորն ընկած):* Բերեք, կդառնամ:

ՂՈՌՈՔՈՒՂԱ – Գնա հայտնիր ձեր քաջ զորքին, ժողովրդին ու աշխարհքին, որ մեր Նազար մեծավորը դառավ մեր, ձեր թագավորը:

ԴԵՍՊԱՆ – Երթամ հայտնեմ մեր քաջ զորքին, ժողովրդին ու աշխարհքին *(հեռանում է)*:

ՎԱՐԺԱՊԵՏ – Կեցցե՛ թագավոր, փրկիչ Նազարը, ջարդեց հազա՛րը, ջարդի՛ հազարը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Կեցցե՛ Նազար թագավորը:

ՔԱՋ ՆԱՁԱՐԸ ԹԱԳԱՎՈՐ ԱՐԱՔ ՉՈՐԲՈՐԴ

Բեմում ամեն ինչ նույնն է:

Ջոռբաշենցիների երգի տակ մտնում է պարային խումբը և պարում, իսկ այդ ընթացքում հսկաները փոխում են բեմը: Նրանք պտտում են անիվը, որը կար բեմի վրա հակառակ կողմով, այն ոսկի և արծաթ գույնի կողմով, հարթակին փռում են գորգ, մեջտեղում գահի փոխարեն նավթի տակառն է, որի վրա գցված է վագրի մորթին, դրված է գլոբուսը, և 2 կողմերում դրված են բարձեր:

Փայտյա ճաղավանդակները նույնպես պտտում են և հետ տանում, որոնք նույնպես ոսկու և արծաթի գույնի են: Պարի ավարտից հետո ներս է մտնում Սենեկապետը՝ նոտակալը ձեռքին, ֆրակով և մեծ կարմիր բանտով, կանգնում է բեմի առջևում: Ողջունելով և օպերային երգեցողությամբ հերթով ներս են մտնում Նազիրը, Վեզիրը, Ջորավարն ու հոգևոր դասի ներկայացուցիչը:

ՆԱԶԻՐ – *(Ներս մտնելով խոնարհ՝ ողջունում է Սենեկապետին):* Տեր իմ: *(Երգելով)*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տեր իմ: *(Երգելով)*

ՆԱԶԻՐ – *(Կանգնում է սենեկապետի դիմացը):*

ՎԵԶԻՐ – *(Ներս մտնելով Սենեկապետին ու Նազիրին ջոկ-ջոկ):* Տեր իմ: *(Երգելով)*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տե՛ր իմ: *(Երգելով)*

ՆԱԶԻՐ – Տե՛ր իմ: *(Երգելով)*

Ողջ խոսակցությունը կատարվում է օպերային երգեցողությամբ և Սենեկապետի դիրիժորությամբ:

ՆԱԶԻՐ – *(Սենեկապետին):* Արթնացե՞լ է գերագույնը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Երեկոյան ընդունելով մահիճ՝ անփույթ ննջեց մինչև արշալույս, ծեգեց արեգական հետ և ահա իսկույն կճառագե արեգնափայլ:

ՆԱԶԻՐ – Անմոռաց օրեր են: Ի՞նչ էր մեր պատմության նավը մեր նախկին պարտված թագավորի օրոք: Ալեկոծյալ տախտակամած:

ՎԵԶԻՐ – Այո՛, ինչ գերագույնը հաղթեց մեր նախկին ժլատ ու ապիկար թագավորին, ես երջանկությունից չեմ քնում:

ՆԱԶԻՐ – Ես ևս չեմ քնում: Եվ արդարև: Նազար երջանիկը երջանկացրեց մեր պատմությունը ու հիմա արժան է և իրավ, որ ինքը հանգիստ առնե պահ մի: Սա թագավոր չէր, այլ երկնային մանանա՛: Վեց նահանգ սրա օրով ես կցեցի իմ իշխանության կալվածքներին:

ՎԵԶԻՐ – Չորս նահանգ էլ ես կցեցի:

ՋՈՐԱՊԵՏ – Ես կալվածատեր դառա, որ երբեք չէի լինի նախկինի օրոք:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Հոգևոր դասն էլ պարարեց օրինավոր:

ՆԱԶԻՐ – Միով բանիվ ամենքս լավ դրստվեցինք:

ՎԵԶԻՐ – Դու ղեռ սպասի՛ր, տեր իմ, է՛լի կդրստվենք:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Աստված մեծ է: Աղաչենք մի պատերազմ էլ տա:

ՆԱԶԻՐ – Այն աստված, որ միևը տվեց, մյուսն էլ կտա հայրաբար: Ուրեմն տիարք, օգնենք թագավորին իր ծանր պարտականությանց մեջ:

ԲՈԼՈՐԸ – Օգնե՛նք, օգնե՛նք:

ՆԱԶԻՐ – Եվ աստվա՛ծ պահե թագավորին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Անհանգիստ շարժ ու ձևերով դուրս է վազում և ներս մայելով):* Գերագու՛յնը…

ԲՈԼՈՐԸ – *(Երկրպագում են և մնում երեսները գետնին):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս վազելով ու երգելով):* Ահի՛վ կացցուք:
(Երաժշտության ուղեկցությամբ ներս է մտնում Նազարը՝ թագավորը, իրեն ուղեկցող մի խումբ պալատական կանանցով, որոնք իրենց հագուստների վրա ունեն «Միս Հաբեշստան», «Միս Տիտանստան», «Միս Գոգա», «Միս Մագոգա», «Միս Ամուձան», «Միս Պաճուճան», «Միս Նազարստան» ուսագոտիներ և շատ հպարտ գլխների վրայից անցնելով՝ առաջանում է դեպի թախտը ու կանգնում նրա մոտ՝ երեսը դեպի պալատականները: Նրա հետևից, նույնպես պալատականների գլխի վրայից անցնելով, գալիս է Իշխան Սաքոն, նոր զգեստներով ու դրոշակը ձեռին՝ կանգնում է նրա հետևը):

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Երգելով):* Երջանիկ ընդունելություն Նազար արքային: Օր երեսներորդ: Երկյուղածությամբ առա՛ջ մատիք: Աստվա՛ծ պահե թագավորին:

ԲՈԼՈՐԸ – *(Կիսաբոլոր կանգնում են Նազարի առաջ և խոնարհ երկրպագում):* Ամե՛ն: *(Մնում են երեսները գետնին):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Առաջ է գալիս և ոլորած թուղթ բանալով՝ գլուխ է տալիս Նազարին ու սկսում կարդալ):* Թագավո՛ր քաջ, արեգա՛նկ արդարության, ծո՛վ խելաց, կարողության բազուկ, բերան ճշմարտության, համարձակվում են կարդալ այսօրվան հրամանը, որ գիշերս հրամայեցիր այսօրվան օրվան, որ և ահավասիկ ահա: «Ես, Նազար հազարերորդ, անհասանելի կամոքն աստծո թագավոր և կրոնապետ Նազարստանի, Տիտանստանի, Գոգա և Մագոգա,

Աճուճա և Պաճուճա և այլն, և այլն, և այլն: Տեր աշխարհի, հաղթող ամենից և ամենայնի, ահավասիկ հրամայեմ, կարգադրեմ, օրինեմ և տնօրինեմ: Թող այսօ՛ր էլ արեգակը ծագե արևելքից և մայրամուտ ունենա, գործ մարդկային, որ գործվի, թող շարունակե գործվել: Որով թող կատարվի խոսքն աստծո և օրենքը մարդկային, թե «թագավորք հրամայեն և աշխարհք դառնա»: Ստորագրված է՝ «Նազար հազարերորդ»: Ընդ իսկականին ճիշտ է՝ քարտուղար-քարտուղարաց՝ Բաղախորիկ»:

ՆԱԶԱՐ – *(Ձեռքով նշան է անում, թե հավանում է):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Համարձակվում եմ բարձրացնել աչքս դեպի երկինքը երեսիարքիդ՝ սպասելով, թե ունե՞ս այլ հրաման, կենտրոն տիեզերաց:

ԼՌՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶԱՐ – *(Գրպանից հանելով բանալի և մեկնելով Սենեկապետին):* Քիշմի՛շ բեր: *(Սաքոն կրկնում է)*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Քի՛մ ընբաճաշակության, արդյոք Հնդկաստանի՞ խաղողաննույս կհաճեիր, թե՞ Հաբեշստանի:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ է դուրս տալիս: Քիշմի՞շ բեր, որը կլնի՝ կլնի: *(Սաքոն կրկնում է):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ստույգ հրամայեցիր, բերան ճշմարտության: Կնշանակե՝ երթամ բերեմ որևէ քիշմիշ:

ՆԱԶԱՐ – Հա՜, հա՜, «որևէ քիշմի՛շ», հայվա՛ն, դե հա՛յդա: *(Սաքոն կրկնում է):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է):*

ՆԱԶԱՐ – *(Ընկողմանում է թախտի վրա և աջ ոտը դնելով վերը՝ չախը կախ է գցում կիսովին: Համրիչը մեկնելով պալատականներին):* Է՛, դե՛սը մտիկ: Տերությունը կարգի՞ն է: Սխալություն հո չկա՞: Նազիր-վեզի՞ր:

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ – Ամեն ինչ օրինավոր է, թագավոր իրավազոր:

ՆԱԶԱՐ – Զորապե՞տ, զորքը ո՞նց է:

ԶՈՐԱՊԵՏ – Քա՛ջ, թագավոր քաջ:

ՆԱԶԱՐ – Խազնադա՞ր, խազնա՞ն ոնց է:

ԳԱՆՁԱՊԵՏ – Հաշիվներն ստույգ են, թագավոր բազմահարուստ:

ՆԱԶԱՐ – Հիմի կերթաք ու տերությանը լավ մտիկ կտաք: Ամեն բան կարգին: Զորք է, հաշիվ է, հարստություն է՝ լավ կպահեք, թե չէ, կարկաժնե՜րդ կճղեմ, հա՜ րամզադդաներ: Ահա ինձնից հրամանք: Տերության մեջ գողություն

չլինի: Թալանները լա՛վ տեղավորեք: Չգողանա՞ն: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, տեր արքա: *(Եվ դուրս են գալիս Զորապետը, Նազիր, Վեզիրը, Գանձապահը):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է մտնում մի սպասուհու հետ, որ չեռին մատուցարան ունի՝ վրան քիշմիշ: Սենեկապետը նշան է անում սպասուհին, որ հրամցնի թագավորին: Սպասուհին գանգատ չներ է անում, ապա աջ ծունկը գետնին դնելով և բարեշրացնելով՝ մոտենում է Նազարին և հրամցնում քիշմիշը և այս բոլորը երաժշտության ուղեկցությամբ):*

ՆԱԶԱՐ – *(Ապրակելով)* Ի՞նչ ես ծռմռվում մեյմունի պես: Քիշմիշը բեր, էլի՛:

ՍՊԱՍՈՒՀԻ – *(Քիշմիշը դնում է Նազարի բախտին):*

ՆԱԶԱՐ – Ռա՛դ եղիր:

ՍՊԱՍՈՒՀԻ – *(Հեռանում է գանգատ չներով):*

ՆԱԶԱՐ – *(Սենեկապետին):* Դո՞ւ ինչ տնկվեցիր իշի պես:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Պատկերդ գեղեցկության, երեսիարքդ այսօր դեռ լվացվումն ու օծումն չի ընդունել արքայաբար:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Արդյոք վարդաջրո՞վ հաճելի կլինի թարմացնել երեսիարքդ, ստվեր արեգական, թե՞ այլ բուրալից թարմաշունչերով:

ՆԱԶԱՐ – Չհասկացանք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Չյուն մաքրության, այսօր դեռ չես լվացվել:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ հորս ցավն է էդ ամեն օր լվացվելը: Ծովաքա՞ր եմ, թե՞ լվացքի տաշտ: Չի՞ լինի, որ չլվացվեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կարգ է թագավորաց: Գանձարան օրինապահության:

ՆԱԶԱՐ – Իշի կարգ: Ամեն օր լվացվի, հա՛ լվացվի:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կբարեհաճեի՞ր անցնել լողարանի օթյակ: Չայն ավետյաց:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ, բաղնի՞ս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այո՛, տեր իմ, բաղնիս:

ՆԱԶԱՐ – Երեսսրբիչը թրջի, բեր, թող վերջանա գնա: Ո՞վ գլուխ ունի տեղից վեր կենալու:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Խոր գլուխ տալով):* Կատարող եմ բոլոր հրամանացդ, էլ ոչինչ չե՞ս օրինում, գրի՛չ երկնային:

ՆԱԶԱՐ – Դե, էլ հերիք է, յա՛լլա: *(Քացի է տալիս):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գլուխ է տալիս և հեռանում):*

ՆԱԶԱՐ – *(Թիակն է տալիս ու քիշմիշ ուտելով՝ սկսում է երգել: Նրան չայնակցում է Իշխան Սաքոն):* «Այ ամա՛ն» Նազարի երգը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով):* Ունկն ողորմածության: Մի գեղջուկ կին է եկել և հրամանոցդ տեսությունն է խնդրում:

ՆԱԶԱՐ – Հա, հետո՞: Իշի՛ թոռ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Մի գեղջուկ կին է եկել, կհաճի՞ս արժանացնել իրեն ա-րեգնատեսիլ երեսիաքիդ:

ՆԱԶԱՐ – Չեմ հասկանում՝ ինչ ես ասում, գնա ասա *(երգելով)* հա՜…:

ՍԱՔՈ – *(Երգում է):* «Գնա ասա հա՜»…

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է):*

ՈՒՍՏԻՆ – *(Ներս է մտնում և կանգնում շեմքին):*

ՆԱԶԱՐ – *(Չի նկատում նրան, շարունակում է երգել ու պարել Սաքոյի ու պալատական երկու կանանց հետ «Վա՜յ, ա-մանը»):*

ՈՒՍՏԻՆ – *(Մի քայլ առաջ է գալիս):*

ՆԱԶԱՐ – *(Նայելով նրա կողմը):* Հը՞, ո՞վ է:

ՈՒՍՏԻՆ – (*Առաջ գալով):* Չես էլ ուզում ճանաչե՞ս… Ե՜ս եմ, Ուստիա՜նը:

ՆԱԶԱՐ – Փիե՞… Աղջի Ուստիա՞ն, դու ե՞ս: Արի՛, արի՛:

ՈՒՍՏԻՆ – Վա՞յ: Էս դրու՞ստ է: Էս ինչ բան է: Երազ է:

(Առաջ է գալիս և զարմացած նայում Նազարին: Էս ինչ բանի ես, ա՛յ մարդ):

ՆԱԶԱՐ – Տեսնում ես, էլի: Աշխարհիքը բռանս միջին:

ՈՒՍՏԻՆ – *(Տարակուսելով):* Վա՜յ, ինձ ասում էին, չէի հավատում: Յանի էս դրուստ է:

ՆԱԶԱՐ – Դրուստ է, Ուստիան խանում, դրուստ է: *(Մոտենում է և քիթը մոտեցնում Ուստիանի քթին):* Ասում էիր, թե ինձնից բան դուրս չի գա: Տեսար: Ասում էիր, թե վախկոտ եմ: Տեսար: Հիմի ով է ինձնից քաջ, ով է ինձնից խելոք, ինձնից հարուստ: Հա: Դու գիտես, թե տերությունները ես ինձնից դողում: Գիտես, թե տերությանս սահմանները, որ աշխարհքի ծերեն են: Դուռը վրաս կփակես: Դե գնա, հիմի թագավոր եմ: Կերար: *(Գնում է իր տեղը):*

ՈՒՍՏԻՆ – *(Աչքի տակով նայում է նրան):* Գլխի չեմ, թե էս ոնց եղավ…

ՆԱԶԱՐ – Լավ մտիկ տուր: Տեսածիդ հավատում ես: Թագավոր եմ:

ՈՒՍՏԻՆ – Ինչ ասեմ, դրուստ է, թագավոր ես:

ՆԱԶԱՐ – Հա, բա… թագավոր եմ ու աշխարհիք եմ դողացնում: Հիմի ինչ կասես քո խելքին:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչ պիտի ասեմ:

ՆԱԶԱՐ – Չէ, ասա էլի խելքդ խելք էր:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչ ասեմ: Մինչև ասեմ, մինչև հիմի ունեցած խելքով էսպես չպիտի լիներ: Հիմի երևում է, թե որ իմ խելքը դրուստ խելք չէր եղել:

ՆԱԶԱՐ – Հա, էդպես: Դե հիմի արի ձեռս պաչ արա ու դառի թագավորի թագուհի:

ՈՒՍՏԻԱՆ – Բո, բո… արևիդ մատաղ, դրուստ: *(Համբուրում է Նազարի ձեռքը):* Վա՜յ, խելքս կկորցնեմ, ես թագուհի եմ:

ՆԱԶԱՐ – Դե հիմի շորերդ փոխի ու խելքդ էլ հետը, էն հին խելք էր: *(Դեպի դուրս):* Է՜, տո, Սենեկապետ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է մտնում):*

ՆԱԶԱՐ – Ուստիան խանումի համար հին թագուհու շորերից մի լավ ձեռք հանել կտաս վերի ամբարից: Իմացար:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Խոնարհաբար իմացա, շեփոր հրամանի: Միայն, երկինք մտածության, զգեստը իբրև օծյալի, թե հարճի համար լինի:

ՆԱԶԱՐ – Մոտ արի: *(Սենեկապետը մոտենում է՝ ծոծրակին բոթելով):* Էը լեզվիդ մի տուր, էլի էդ լեզուն: *(Մի հատ բացի տալով):* Դե հայդե:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է, ետ գալիս):* Առաքեցի պատվերն առ պատկանելություն: Անձրև կենաց, և ճեպական արագությամբ կհեղվի զգեստը:

ՆԱԶԱՐ – Լավ: Սամուր քուրքս բեր գցի վրաս ու գնա: Ուստիան խանումի համար չարազ բեր, մինչև շորերը պատրաստեն: Էն ոսկե սինիով բեր, թող տեսնի:

(Սենեկապետը դուրս է գնում և ներս է մտնում սպասավորների հետ, որ բերում են Նազարի ծիրանին և միաժամանակ ոսկե մատուցարան՝ վրան զանազան քաղցրավենիք ու չոր մրգեղեն: Սենեկապետի ցուցմունքով հագցնում են Նազարին և ապա մատուցարանը դնում Ուստիանի առջև, որ, գյուղական կնոջ նման խունջիկմունջիկ անելով, վերցնում է): Հիմի էլ գնա ոսկի թագս բեր: *(Սենեկապետը գնում է: Նազարը նավթի տակառից հանում է թագը և դնում գլխին, որից հետո ձգվում է թախտի վրա):* Օխխա՜յ… էո՜ֆ… ա՜յ տղա, ի՞նչ լավ բան է թագավորությունը: Ափսոս չէ: Ի՞նչ էի անխելքացել, էնքան ժամանակ մնացել գեղում վեր ընկած: Մատս

մատիս չեմ կպցնում: Կե՛ր, խմի՛, քնի՛, վե՛ր կաց, գնա բաղչում ման արի, եկ ճա՛շդ անուշ արա, հետո թինկը տուր բարձին ու նարգիլե քաշի: *(Երգում է «Այ աման»):*

ԻՇԽԱՆ ՍԱՔՈ – *(Չայնակցում է):*

ՆԱԶԱՐ – Մի՛ սխմի, հայվա՛ն: *(Ուստիաևին):* Հա՛, առավոտից ախպեր ջան, նստում եմ թախտը ու հրամայում եմ մինչև ճաշ: Հետո բերում են ճաշը, ու աչքդ բարին տեսնի՝ դնում են առջևդ լավ եղը, մեղրը, կարագը, գաթան, գառան փլավը: Անու՛շ արա:

ՈՒՍՏԻԱՆ – Ե՞ս էի, որ չորքան էլ չունեի տանը:

ՆԱԶԱՐ – Պալատս, ախպորս ասեմ, հարստության ծով է: Հարյուր ու հինգ հազար ծալք տեղաշոր, լավ ղութնի յորղան-դոշակ մենակ էս վերի քյոշկում կա: *(Սևենկապետին քջջային հեռախոսով զանգում է և ասում):* Գյադա, աշխարհքը բեր, բռնեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է: Նազարը ևորից բացում է ևավթի տրակառը և հանում գլոբուսը ծիծաղելով):*

ՈՒՍՏԻԱՆ – Վո՛ւյ, ի՞նչ լավ է: Ասել է մեզ համար կապրենք հիմի:

ՆԱԶԱՐ – Կապրենք… քեֆ կքաշենք, ասա: *(Երգում է «Վա՛յ աման»):*

(Ուստիանը, Նազարին թևանցուկ, կանգնում է բեմի մեջտեղում և ասում.)

ՈՒՍՏԻԱՆ – Բարև ձեզ, ես Ուստիանն եմ, թագավոր Նազարի կինը, կապրենք ու սրանից դենը էլ իրար դիպչողական խոսք չենք ասի: Մարդ ու կնիկ ենք՝ ի՞նչ ունենք բաժանելու: Էսօր-էսօր դու թագավոր ես, ես՝ թագուհի: Մեզ համար հիմի սազական չի հասարակի պես ժաժ գալը, կռվելը, ես ի՞նչ իմանամ:

ՆԱԶԱՐ – Լավ կյանքի մեջ ընկա, Ուստիա՛ն, լավ, ափսոս առաջ չէր եղել: Ասում ես երազ է, էլի: *(Դեպի դուրս):* Է՛յ, գյադա, Սենեկապետ: *(Սևենկապետը ներս է գալիս):* Մո՛տ արի: *(Թեթև ապտակ է տալիս նրան):* Հը՛…

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ի՞նչ կհրամայես, տեր իմ:

ՆԱԶԱՐ – *(Քթից բռնում թափ է տալիս):* Հը՛… *(Սպասում է):* Ցավե՞ց:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ցավեց, տեր իմ:

ՆԱԶԱՐ – *(Բռնում է Սևենկապետի ականջը: Ուստիանին):* Ահաև, հիմի տես: *(Հուպ է տալիս: Սևենկապետը աշխատում է դեմքի կծկումները զսպել և կուչ ու ձիգ է գալիս՝ նստելով ու վեր կենալով):* Էս երա՞զ է: *(Սևենկապետին):* Ռա՛դ

եղիր: *(Սևեռկապերը գնում է):* Չէ՛, ջանմ, քեֆիդ նայիր, երազ չկա, բոլորը ճիշտ է: *(Երգում է):* Ա՛ման, ա՛ման, այ ջաաան: *(Իրան դրսրելով):* Էո՛ֆ… *(Ձանձրույթ զգալով):* Էհ, հիմի ի՞նչ անենք: Հա՛:

(Դեպի դուրս: Նազիր-վեզի՞ր: Գանձապետը):

ՆԱԶԻՐ – *(Ներս ընկնելով և դռան մեջ իրար դիպչելով):*

ՎԵԶԻՐ – Հրամայի՛ր, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – *(Դեպի դուրս)*: Ջորավա՛ր:

ՋՈՐԱՎԱՐ – *(Ներս ընկնելով):* Հրամայի թագավորն ապրած կենա *(որից հետո ներս են մտնում բոլոր պալատականները):*

ԳԱՆՁԱՊԵՏ – *(Լռություն):*

ՆԱԶԻՐ – Ի՞նչ կհրամայես, տե՛ր:

ՆԱԶԱՐ – Ինչ կհրամայե՞մ: *(Հայր-հայր արտրասանելով):* Ոչինչ չեմ հրամայում, գնացեք, գյաղե՛ք, դենն անցեք *(երաժշտության տակ քայլում են՝ դեմ դիմաց իրար միջով անցնելով):*

(Գյաղե՛ք, դեսն անցեք (նույն երաժշտության տակ պտրտվում են):
Ռա՛դ եղեք):

ՈՒՍՏԻՆ – Մի հատ էլ ես ասեմ, Նազա՛ր:

ՆԱԶԱՐ – Լավ ասա ու թող ռադ եղնեն:

ՈՒՍՏԻՆ – Գյաղե՛ք, դեսն անցեք ու ռադ եղեք:

(Երաժշտության տակ նորից անցնում են ու դուրս գալիս):

ՈՒՍՏԻՆ – Ինչի՞ կանչեցիր:

ՆԱԶԱՐ – Ոչինչ, հենց էնպես, քեֆի համար: *(Ծիրանին դրսրելով և իրան շրկռտրելով):* Էո՛ֆ, տեսնո՞ւմ ես, Ուստիան, ոնց են հոլի պես պտտվում չորս կողմս: *(Ուսրիանի ուրելը դիտելով):* Լա՛վ անուշ արա, Ուստիա՛ն, շա՛տ կա, վա՛խիլ մի: Մի քիչ էլ ջերդ ածա. բաղչում չարազ կանես. լավ Բաղդատու խուրմա կա մեջը:

ՈՒՍՏԻՆ – Է, ասել է, էլ տուն չենք գնա:

ՆԱԶԱՐ – Տո՞ւն: Ի՞նչ հորս ցավն եմ թողել տանը: Տունը պրծա՛վ: Հա՛յ գիտի տուն: Երազը նա էր: Իսկը որ երազ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով նաժիշտների հետ Ուսրիանի զգեստրելով):* Եթե թագուհին կբարեհաճի զգեստավորվել: Նաժիշտները պատրաստ են:

ՆԱԶԱՐ – *(Տնտղելով նրան և ծամածռելով):* Բե՛, բե՛, բե՛, բե՛…

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ուրեմն ի՞նչ կհրամայես կարգադրության մասին, Օրենսդիր շնորհաց:

ՆԱԶԱՐ – *(Հազու հանելով և ծամածռելով):* Բե՛, բե՛, բե՛, բե՛… լեզվիդ տուր…Ի՞նչ ես ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Թագուհու շորերը պատրաստ են, տե՛ր:

ՆԱԶԱՐ – Դե, էդպես ասա, իշի՛ կտոր: *(Ուսերիանին):* Դու շորերդ հագի, ես էլ մի բարձրաձամ այվանը, աչք ածեմ տերությանն, տեսնեմ՝ ամեն բան կարգի՞ն է, որ կպրծնես՝ իմաց արա, գնանք բաղչա: Իշխան Սաքո՛, դրոշակն առ: *(Սաքոն բռնում է դրոշակը):* Նազի՛ր, Վեզի՛ր:

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ – *(Ներս ընկնելով):* Հրամայի, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – Առաջ ընկեք, գնանք, տեսնենք՝ տերության գործերը ի՞նչ հալի են: *(Նազիրն ու Վեզիրը, մեջքները կուռցած, առաջ են ընկնում: Նազարը հետևում է նրանց և դուրս գալելով դիմացի դռնից՝ բարձրանում է ներսից երևացող պատշգամբը և սկսում է դիտել շուրջը: Սաքոն նրա մոտ բռնում է դրոշակը: Իսկ Նազիրն ու Վեզիրը ծածկվում են պատի այն կողմը):*

ՈՒՍՏԻՆ – *(Վեր է կենում, որ գնա, բայց մի բան մտաբերելով՝ կանգ է առնում և դառնում Սենեկապետին):* Ի՛նչ եմ ասում, գյաղա՛, լսու՞մ ես:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերապատիվ, այո՛: Արթուն է ականջս՝ լսելու զույգն հրամանիդ:

ՈՒՍՏԻՆ – Չե՞ս իմանում՝ ո՛նց դառավ թագավոր: Ախր Նազարս տանը մի քիչ վախկոտ էր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Սարսափից ժպտալով):* Ականջս չի լսում, համեստափայլ թագուհի:

ՈՒՍՏԻՆ – *(Բարձր):* Ասում եմ, էս մարդը առաջ վախկոտ էր, ո՞նց դառավ թագավոր: Էլի՞ չլսեցիր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կրկին չլսեցի, լուսեղեն, խնայիր, ես այստեղ չե՛մ… ես չկա՛մ…

ՈՒՍՏԻՆ – *(Շարժվելով դեպի դուռը):* Գլուխս մեռնի, թե բան եմ հասկանում: *(Սենեկապետին):* Էս դռնո՞վ պիտի գնանք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերաճշմարիտ, այո՛, այդ դռնով, երանություն տիեզերաց:

ՈՒՍՏԻՆ – Որ ասում եմ՝ երազ է: *(Դուրս է գնում: Սենեկապետը հետևում է նրան):*

ՆԱԶԱՐ – *(Այվանից դեպի դուրս):* Է՛յ, է՛յ, է՛յ , է՛յ, է՛յ, էդ ո՞վ է էդ գյաղեն:

ՆԱԶԱՐ – *(Այվանից դեպի դուրս):* Է՛յ, է՛յ, է՛յ , է՛յ, է՛յ, էդ ո՞վ է էդ գյադեն: Խարջը չի բերել, ձիաբեռ է տանում տո՞ւն: Տվե՛ք դրա կարկաժին: Տվե՛ք էդ հա՛ռռամզաղին, էս է վեր եկա, հա՛՛ա՛…

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վերադառնալով չղջիկի պես կծկվում է վարագույրի մոտ և սպասում: Ներս են մտնում ձագիր-վեզիր, ապա՝ և հետզհետե զորավարներ և այլ պալատականներ):*

ՆԱԶԻՐ – *(Սենեկապետին գլուխ տալով):* Տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գլուխ տալով):* Տե՛ր իմ:

(Վեզիրը և մյուսները, գլուխ տալով Սենեկապետին, նույն խոսքն են փոխանակում):

ՆԱԶԻՐ – *(Սենեկապետին)*: Ո՞ւր է Գերագույնը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Հաճեց ամբառնալու պատշգամբը՝ պետությանն ամ-ձամբ շրջահայելու:

ՆԱԶԻՐ – *(Զգույշ):* Պատերազմի շշուկներ դեռ չկա՞ն:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տակավին ոչ:

ՆԱԶԻՐ – Ի՞նչ է ասել Գերագույնը նորափթիթ մեր թագուհու հետ անույշը վայելելու մասին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Առանձնապես ոչինչ:

ՆԱԶԻՐ – Ուրեմն, տիա՛րք, պարապ չմնանք: Գնանք՝ օգնելու մեր թագավորին իր ծանր պարտականությունների մեջ:

(Քարշթրանանք պատշգամբ և դիտենք պետությունը):

ԲՈԼՈՐԸ – Գնանք: *(Դառնում են դեպի Սենեկապետը և գլուխ տա-լիս):* Տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Նրանց գլուխ տալով)* Տե՛ր իմ:
(*Հեռանում են և ծածկվում պատի հետևը: Սենեկապետը դուրս է գնում և իսկույն վերադառնալով՝ եւր է անում դռան վարագույրը: Ներս է մտնում Ուսուիանը՝ թագու-հու զգեստով և ծանր ու բարակ, լուրջ գալիս նստում է թախտի վրա: Սենեկապետը կծկվում է վարագույրի մոտ: Դուրսը անորոշ աղմուկ է լսվում: Սենեկապետը շտապում է այն կողմը):*

ՄՈՒՆԵՏԻԿԻ ՁԱՅՆԸ – Ահազա՜նգ, զարթնի՛ր կոչնա՛կ…

(Լսվում է փողերի ձայն):

ՆԱԶԱՐ – *(Ներս է վազում, Սաքոն նրա հետևից):* Գյադա, էս ի՞նչ է: Ա՛յ կնիկ, էս ի՞նչ բան է:

ՈՒՍՏԻՒՆ – Չեմ իմանում:

ՆԱԶԱՐ – *(Սաքոյին):* Մի տես՝ ի՞նչ եղավ:

ՍԱՔՈ – *(Վախենալով մուրենում է վարագույրին և հանկարծ դուրս գնալով՝ կծկվում է վարագույրի հետևը այնպես, որ երևում է նրա այնտեղ լինելը):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս վազելով):* Բազուկ հաղթության, սուրհանդակ:

ՍԱՔՈ – *(Ներս է վազում նրա հետևից):* Ղիյամաք է:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ ղիյամաք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ուզում է ասել՝ այլայլումն:

ՆԱԶԱՐ – Գնացե՛ք, կարգին բան իմացե՛ք: *(Սաքոն և Սևևկապերը դուրս են գնում, ներս են վազում Նազիր-վեզիր, զորավար և այլ պալատականներ):* Ի՞նչ կա: Ի՞նչ ղալմաղալ է:

ՆԱԶԻՐ – Թագավոր քաջ, սուրհանդակ եկավ և հայտնեց, որ թշնամի թագավորները՝ թվով տասն, խախտելով ուխտը հարևանության, զորք են կապել և հարավից, հյուսիսից, արևելքից և արևմուտքից առաջ են խաղում մեր երկրի վրա:

ՆԱԶԱՐ – Է՜, թագավոր եղանք պրծանք: Էլ ի՞նչ են ուզում: Նոր բան կա՞:

ՆԱԶԻՐ – Ուզում են մեր պետությունն ու թագը խլել:

ՆԱԶԱՐ – Թագը խլե՞ն: Ո՞նց թե… *(հանելով թագը և տալով Սևևկապերին)* Գյաղա, տար պահի: Շա՜նց կտամ դրանց թագը: *(Նազարը թագը դնում է ձավթի տակառի մեջ և փակում՝ ծիծաղելով Սևևկապերի վրա):*

ՋՈՐԱՎԱՐ – Թագավոր քաջ: Արդյոք զո՞րք կապենք, թե՞ դարձյալ դու մենակ անձնական զորությամբդ կխորտակես հանդուգն թշնամուն: Ինչպե՞ս կհրամայես:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ պիտի հրամայեմ: Գնացեք կռվեցեք:

ՋՈՐԱՎԱՐ – Ինչպե՞ս, մե՞նք կռվենք, թագավոր քաջ:

ՆԱԶԱՐ – Բա ի՞նչ, ե՞ս պիտի կռվեմ:

ՋՈՐԱՎԱՐ – Թագավոր քաջ, ես ուզում եմ ասել, որ դու կառաջնորդես, և զորքը հետևից կգա:

ՆԱԶԱՐ – *(Շվացնելով):* Շհյու՜ֆ… պրծա՜վ: Էլ Նազարը կռիվ չի՜ գնա: Ո՜նց որ կուզեք՝ արեք:

(Երկու սպասուհի բերում և մի տախտակ են փակցնում դարպասին՝ «Նազարն էլ կռիվ գնացողը չի»):

ՋՈՐԱՎԱՐ – Քաջ հրամայեցիր, թագավոր քաջ: Բայց եթե դու չգաս, զորքը մենա՞կ պիտի գնա թշնամու դեմ:

ՆԱԶԱՐ – Թող մենակ գնա: Ամեն անգամ ե՞ս պիտի գնամ:

ՆԱԶԻՐ – Թագավորն ապրած կենա: Այստեղ մի դժվարություն կա:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ դժվարություն:

ՆԱԶԻՐ – Ջորք շատ կջարդվի:

ՆԱԶԱՐ – Ջարդվում է՝ ջարդվի. շատ վեջս է:

ՆԱԶԻՐ – *(Ուրախացած):* Օ՜հ, թույլ ես տալի՞ս…

ԲՈԼՈՐԸ – *(Սաստիկ ուրախացած):* Երջանիկ բան եղավ:

ՆԱԶԻՐ – Այսպես առնվազը քառասուն հազար մարդ կջարդվի:

ՆԱԶԱՐ – Քառասուն հազա՞ր: Լավ, մեր աշխարհքում ինչքա՞ն մարդ կա, թե որ էդքանը ջարդվի:

ՎԵԶԻՐ – *(Թղթակալը բանալով և նայելով):* Ուղիղ հարյուր հազար բյուր և հազար ինը հարյուր հինգ մարդ:

ՆԱԶԱՐ – Որ էսպես է թող ջարդվի: Գնացեք, ասեք՝ թող կռվեն:

ԲՈԼՈՐԸ – *(Սաստիկ ուրախ):* Աստված պահի թագավորին: *(Գլուխ են տալիս և հեռանում):*

(Դուրսը լսվում են փողերի ձայներ, ռազմական շռինդ, աղմուկ, կեցցեներ, մուննետիկի ձայնը. «Պատերա՜զմ»… և այլն, որ հետզհետե դադարում է):

ՆԱԶԱՐ – Հա՛, թագավորական պարտքս կատարեցի: Հիմի թող նրանք կռվեն, մենք մեր քեֆին նայենք: *(Դեպի դուրս):* Է՛յ, գյադա՛: *(Սևեկապեւորը ներս է գալիս):* Գնա թագս բեր, մի քիչ էլ չարազ բեր: *(Սևեկապեւորը գնում է: Թիկն է տալիս բարձերին):* Էո՜ֆ *(Երգում է «Վայ ամանը»):* Հը՞, Ուստիա՛ն, թագուհի դառար. հիմի ո՞վ կդիմանա քեզ: *(Դիտելով նրան):* Հը՞, չե՛ս խոսում, ո՞նց է քո բանը, քեֆդ լավացա՞վ: Տեսա՞ր ուր հասար:

ՈՒՍՏԻԱՆ – *(Շատ լուրջ):* Գանգատ չունեմ աստծուց: Իմ քեթխուգա հոր սրտով եղավ: Ցեղս ազնիվ էր. հալբաթ որ…

ՆԱԶԱՐ – Էլի՛ ազնիվ ցեղդ մեյդան բերիր, ա՛յ կնիկ:

ՈՒՍՏԻԱՆ – Լսի՛ր, ի՞նչ եմ ասում, այ մարդ: Մի ուզում եմ՝ իմանամ, թե ո՞նց դառար թագավոր:

ՆԱԶԱՐ – Աստծո կամքով: Թագավորական հրամանի մեջ էդպես էլ գրված է. «Անհասանելի կամոքն աստուծո»: *(Արձագանքվում է ձայնը):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Երեսը խաչակնքելով):* Հալբաթ որ … մեռնեմ նրա գոթության:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Սպասավորների ձեռքով մրգեր է բերում ու հրամցնել է պալիս Նազարին և Ուստիային, ապա հեռանում են):*

ՆԱԶԱՐ – *(Մի քիչ ներղացած):* Է, ի՞նչ շատ ես հարցնում հենց մի գլուխ՝ «Ո՞նց եղավ, ո՞նց եղավ»:

ՈՒՍՏԻԱՆ – Մի տեղովը դրուստ չասիր, այ մարդ թե էս ոնց եղավ:

ՆԱԶԱՐ – Հասանք էլի՜…

ՈՒՍՏԻԱՆ – Կռվի-բանի մեջ եղա՞ր:

ՆԱԶԱՐ – *(Շվացնելով):* Շիյո՜ւֆ… էն էլ ո՞նց…

ՈՒՍՏԻԱՆ – Նեղ տեղեր շատ ընկա՞ր:

ՆԱԶԱՐ – Նեղ տեղե՜ր… Ասեղի ծակեր անցանք ու մազե կամուրջ-ներ ու հա, հա բան գիտե՞ս: Կռիվներ եղան, որ աշ-խարհիս ամբարի պես դմրդմբում էր:

ՈՒՍՏԻԱՆ – Ախր էս ամենը քաջության, խելքի բան է ու…

ՆԱԶԱՐ – Հա ղե, ի՞նչ խոսք: Քաջության, խելքի իրա կարգին *(Մտածում է):* Ի՜ի՜ ա՛յ-շի, ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ զառաֆաք: Բա՜խտն է բանը, բա՜խտը: Բախտ ու-նի՞ս, քեֆ արա, քոնն է աշխարհիքը: Քամին կպտտի, կպտտի՝ կբերի հարստությունը գլխիդ կածի: Այ տե՛ս՝ բախտ չի՞: Կռիվ է: Կոտորում են ճանճի պես: Ասող լինի՝ էդ ո՞ւմ համար եք էդպես կոտորվում: Իհարկե, Նազարի համար: Նրանք կոտորվում են, մենք ճաշ ենք անուշ ա-նում: Հիմի կռիվը կվերջանա: Թե կոտորվեցին, ինձ ի՞նչ: Թե չկոտորվեցին, փառք ու պատիվը ո՞ւմ պիտի տան: Իհարկե, Նազարի՛ն: Էստեղ ի՞նչ անի իմ խելքը: Ի՞նչ ա-նի քաջությունը: Բախտի՜ բան է, բախտի:

ՈՒՍՏԻԱՆ – Ասում ես բախտի բա՞ն, հը՞…

ՆԱԶԱՐ – Դրուստ ես ուզո՞ւմ: Մի ժամանակ կար, ձեղը որ ընկնում էի, վախենում էի: Վերջը տեսա, որ ամեն տեղ էլ դուրս եմ պրծնում: Հիմի էլ տեսնում եմ, որ հե՛րն անիծած, քե՛ֆ արա, մարդիկ էնքան սարսաղ են, որ ամեն տեղ էլ կպրծացնեն: Սարսաղ աշխարհք է, սարսաղ մաղիկ: Աշխարհքը էսպես սարսաղ եկել է, սարսաղ էլ պիտի գնա: *(Երգում է «Վա՜յ աման»):*

ՄԻՆԵՏԻԿ – *(Դրսից մուննաւրիկի ձայն):* Կոչնաաա՛կ: *(Աղմուկ է լսվում, որ հեւրգհեւրև մուրնաում է):*

ՆԱԶԱՐ – *(Վեր թռչելով):* Գյադա՛: Սենեկապե՛տ: *(Սենեկապետը ներս է վազում):* Գյադա, էս ի՞նչ է:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այլակերպում է վիճակի, տեր ի՛մ:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ ես դուրս տալիս:

(Սենեկապետը դուրս է վազում և իսկույն ներս գալիս Թամադայի, Սաքոյի, Ղո-ռոբուղայի և մյուս հսկաների հետ):

ՆԱԶԱՐ – *(Ներս գալով):* Կռիվը մեծացավ, արքայից արքա: Տագ-նապ է: *(Դուրս է վազում):*

ՆԱԶԱՐ – *(Մյուսներին):* Գնացեք դռանը կանգնեցեք: *(Թամադան, Սաքոն, Ղոռոբուդան դուրս են գալում):*

ՈՒՍՏԻՆ – Էս ի՞նչ զուլում էր: Անջախ իմ թագուհի ժամանա՞կս պիտի էդ շները թափվեին վրադ:

ՆԱԶԱՐ – *(Անհանգիստ):* Գյադա՛: Էս էսպես չի լինի: *(Պատրաստվում է փախչելու):* Հը՞: *(Աղմուկը մեծանում է)* Քաղաքը մտան: *(Դեսուդեն է ընկնում՝ փորը բռնած):* Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ…

ՈՒՍՏԻՆ – Ա՛յ մարդ, ի՞նչ եղավ:

ՆԱԶԱՐ – Զահուրմար եղավ, թագավորությունն չեղավ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ… Ֆոքոնա է, տերությունը խառնվեց:

ՈՒՍՏԻՆ – Հը՞… տերությո՞ւնը… ամա՛ն: *(Դեսուդեն է ընկնում և զանազան բանկագին իրեր է կոխում գրպանը: Հանկարծ կանգ է առնում և ականջ դնում):* Հը՞:

(Աղմուկը մեծանում է: Ուստիաևը ծոցն է դնում զանազան իրեր):

ՆԱԶԱՐ – Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ… *(Վազվզում է զանազան կողմեր):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս վազելով):* Օ՜ո ո… Գերագույն… օգնության հասիր… *(Դուրս է վազում):*

ՍԱՔՈ – *(Ներս է վազում)* Բը՛, բը՛, բը՛, բը՛…

ՆԱԶԱՐ – *(Տեսնելով նրան և չճանաչելով)* Ո՞վ է: *(Փախչում է զանազան կողմեր):*

ՍԱՔՈ – *(Խլում է դրոշակը և վազում Նազարի հետևից):* Բը՛, բը՛, բը՛, բը՛…

ՆԱԶԱՐ – *(Նրանից փախչում է դեպի դուրս)*: Բը՛, բը՛, բը՛, բը՛…

ՍԱՔՈ – *(Հետևում է նրան):*

ՆԱԶԱՐ – *(Վախից գոռում է):* Էհե՛յ… *(Գոռալով բարձրանում է այվանը):*

ՁԱՅՆԵՐ – *(Դրսից):* Քաջ Նազա՛րը, Քաջ Նազա՛րը…

ՁՈՐԱՎԱՐ – Վրա՛ տվեք…

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ – Փախե՛ք, փախե՛ք…

ԱՌԱՆՁԻՆ ՁԱՅՆԵՐ – Վրա՛ տվեք:

ՈՒՍՏԻՆ – Սուրբ Մարիամ Աստվածածին իրան եմ ապավինել, մեռնեմ իրեն: *(Երեսը խաչակնքում է: Աղմուկը մեծանում է):*

ՆԱԶԱՐ – *(Որ ևոր էր հասել այվանի վրա, արագ իջնում է ցած և վազում ևերս… Մտնում է գահի տակ):*

ՍԱՔՈ – *(Վազվզում է սենյակում):*

ՁԱՅՆԵՐ – Հաղթություն:

ՆԱԶԱՐ – *(Գլուխը դուրս է հանում):* Հը՞: Հաղթել ե՞ն: Գյադա՛, ո՞վ է հաղթել: *(Դուռը բախում են: Սաքոյին):* Բը՛, բը՛, բը՛, բը՛, դուռը կապի: *(Գլուխը ներս է պահում):*

ՍԱՔՈ – *(Դողալով գնում է դուռը կողպելու. Ուսերիանը բաց է անում վարագույրը, որ տեսնի դուռը):*

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ – *(Դրսից բախում են դուռը):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Հաղթությու՛ն, թագավո՛ր քաջ:

ՈՒՍՏԻՄՆ – Ա՛յ մարդ հաղթեցինք:

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ – *(Բախելով դուռը):* Թագավո՛ր քաջ, հաղթությո՞ւն:

ՆԱԶԱՐ – *(Դուրս է նայում գահի տակից:)*: Ո՞վ հաղթեց: Հը՞, մերո՞նք են… Հաղթեցի՞ն:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով ուրիշ դռնով):* Տե՛ր իմ, մերոնք հաղթեցին:

ՆԱԶԱՐ – *(Հանգստանում է, քրտինքը սրբելով դուրս է գալիս):* Հա՛, լա՛վ արին, որ հաղթեցին, թե չէ էն՝ աշխարհքը քանդում էի: *(Հազում է):* Ըհը՛…

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Դրսից):* Հաղթությո՛ւն, կեցցե թագավորը:

ՆԱԶԱՐԸ – Հա՛յ, բախտդ սիրեմ, Քաջ Նազար, էս էլ փրթեցիր: Է՛հ, Ուստիա՛ն, հիմի աչքդ բարին տեսնի, դու թալանին մտիկ, որ կբերեն:

ՈՒՍՏԻՄՆ – *(Խնդրուզի տալով):* Վո՛ւյ, ինչ լավ բան է թագավոր-թագուհին:

ՆԱԶԱՐ – Բա՛, քեֆ սրա՛ն կասեն: *(Սաքոյին):* Գյադա՛, բաց արա դուռը:

ՍԱՔՈ – *(Բաց է անում և գալիս է ներս դրոշակով կանգնում Նազարի մոտ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է մտնում առանձին չևերով):* Արքայից արքա, նազիր-վեզիրը, պալատականները ընդունելություն են խնդրում:

ՆԱԶԱՐ – Հրաման եմ ասում, որ ներս գան: *(Սենեկապետը դուրս է գնում: Ներս են գալիս նազիր-վեզիրը, զորավարներ):* Ի՞նչ կա, ի՞նչ եք իրար անցել:

ՆԱԶԻՐ – Թագավորն ապրած կենա: Ուրախացնում ենք ձեր արքայական սիրտը մեծ ուրախությամբ: Անարգ թշնամին խորտակված է:

ՆԱԶԱՐ – Շատ լավ բան է եղել, գյադա՛:

ՆԱԶԻՐ – Քո աներեվակայելի տեսքը, որ տեսան, ոչնչացան: Տասը թագավորն էլ սպանված են պատերազմի դաշտում: Մեր քաղաքի զորքը շնորհիվ քո թագավորական խելքի,

իմաստության և քաջության, անօրինակ գրոհով տապալեց թշնամուն:

ՆԱԶԱՐ – Շատ լավ բան է եղել, գյադա՛:

ՎԵԶԻՐ – Կեցցե՛ թագավոր քաջը:

ՆԱԶԻՐ – Թագավո՛ր քաջ: Ժողովուրդն անհամբեր է երկնային երեսհարքդ տեսնելու: Աղաչում է՝ քո հաղթության այս մեծ օրը գոնե մի անգամ երջանկացնես ժողովրդին և անձամբ դուրս գաս նրա ողջույնը ընդունելու:

ՆԱԶԱՐ – Լավ: *(Վեր է կենում և բարչդրանում պատշգամբը. նրան հետևում է Սաքոն դրոշակով):*

ՍԱՔՈ – *(Ժողովրդին:)* Թագավո՛րը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Դրսից):* Կեցցե՛ մեր քաջ թագավորը:

ՆԱԶԱՐ – *(Ձեռքով նշան է անում ժողովրդին, որ լռեն):* Շատ շնորհակալ եմ ժողովրդից:

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԸ – *(Արտասվակալելով):* Ի՞նչ երջանկություն:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Կեցցե, կեցցե, Կեցեե՛՛՛՛, կեցցե, կեցցե, կեցցեե՛՛՛՛:

ՆԱԶԱՐ – Ջորքին և ժողովրդին ճաշ տվեք:

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԸ – Ի՞նչ առատաձեռնություն:

ՆԱԶԻՐ – Ո՞վ ժողովուրդ: Մեր ողորմած թագավորը ոչ միայն հաղթեց թշնամուն իր քաջությամբ, այլև փայլեց իր առատաձեռնությամբ: Գնացե՛ք ճաշ կերեք և օրհնեցե՛ք թագավորին: Դե կեցցե, կեցցե ողորմած թագավորը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Կեցցե՛, կեցցե՛, կեցցեեեե՛, կեցցե՛, կեցցե՛, կեցցեեեե՛:

ՆԱԶԻՐ – *(Ներս է գալիս):*

ՎԵԶԻՐ – *(Առաջ գալով):* Թագավորն ապրած կենա, իսկ ավարը որտե՞ղ տեղավորենք:

ՆԱԶԱՐ – Ամբարներում:

ՎԵԶԻՐ – Շատ իմաստուն հրամայեցիր: *(Դեպի դուրս):* Թագավորը հրամայում է ավարը լցնել մթերանոցները:

ՆԱԶԱՐ – Կացեք մի, գյա՛դա: Էդ թալանից հալա բերեք մի Ուստիան խանումին շանց տվեք… *(Սևեկապևորը դուրս է վազում):* Հը՞, Ուստիան խանում, ինչ որ սիրտդ կուզի վերցրու: Լա՛վ թալան է, հախ աստծու:

ՈՒՍՏԻՄՆ – Վախենում եմ՝ երազ լինի:

ՆԱԶԱՐ – Մատդ կծի:

ՈՒՍՏԻՄՆ – *(Կծում է մատը):*

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Վանկարկում է):* Անհա՛ղթ Նազար, Քա՛ջ նազար, մին կզարկի, ջարդի հազար:

ՆԱԶԱՐ – *(Նազիրին)* Գյադա՛, ասա՝ ռադ ըլեն:

ՆԱԶԻՐ – *(Ուզում է գնալ, բայց Սաքոն ինքն է առաջ ընկնում և դիմում ժաղովրդին):* Դեսո արիք, ժողովո՛ւրդ, հավաքվեցեք: *(Ժողովուրդը հավաքվում է):* Ինձ մտիկ, գյաղե՛ք: Որ ձեզ ասում եմ ռադ ըլեք, էդ ժամանակ պիտի ռադ ըլեք, իմացա՞ք:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Իմացանք:

ՍԱՔՈ – Դե, յալա՛, հառամզադեք: *(Ժողովուրդը հեռանում է):*

ՆԱԶԱՐ – *(Վախեցած):* Բե՛, բե՛… Թագավոր է ուզում դառնա՛…

ՆԱԶԻՐ – Իշխան Սաքո՛…

(Սաքոն գալիս է):

ՆԱԶԱՐ ԵՎ ՍԱՔՈ – *(Վախեցած իրար են նայում):* Բե՛, բե՛ բե՛…

ՆԱԶԱՐ – Ի՞նչ կա…

ՍԱՔՈ – Բա՛… բա… բան չկա…

ՆԱԶԱՐ – Դե ռա՛դ եղի: *(Սաքոն գնում է):*

ՆԱԶԻՐ – Կհամարձակվե՞նք հեռանալ, անձրև կենաց:

ՆԱԶԱՐ – Կացեք, գյաղեք: Էգուց առավոտ կգաք, որ ես իմ ողջ տերության թագավորական խոսք պիտի ասեմ: Հիմի հրամանն է ինձնից, որ հեռանաք: Իմացե՛ք:

ԲՈԼՈՐԸ – Աստված պահե թագավորին: *(Գնում են):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Նրանց գնալուն պես վեր է կենում և սկսում ինչ-որ բան որոնել զանազան անկյուններում և գտնելով մի լայն կտավ՝ քերում է մեջտեղ ու կապում ջվալի պես):*

ՆԱԶԱՐ – Էդ ի՞նչ բանի ես, ա՛յ կնիկ:

ՈՒՍՏԻԱՆ – Հազիր ես իմ ձեռքով կպահեմ ու մի քնջում կտեղավորեմ: Դու ասում ես՝ երազ չէ: Ո՞վ է իմանում: Աշխարիք է, մին էլ տեսար դուրս եկավ, որ երազ է: Չեռներս մի բան էլ է կունենանք:

ՆԱԶԱՐ – Քեֆ արա, ջա՛նմ. բախտը կբերի: *(Երգում է «Վո՛ւյ ամաներ» և պարում են):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Կապած թոկը քաշելով):* Այ մարդ, խաղի ժամանակը չի: *(Թոկի ծայրը նրան տալով):* Քա՛շի, մի պնդացնենք: Քաշի՛… *(Երկուսով քաշում են):*

(Նազարը շարունակում է երգել և պարուհիների հետ պարել, դուրս են գալիս բոլորը: Ներս է մտնում Սաքոն, նայում է գահին և սկսում է երգել «Ժամանակներ շատ խառն են հիմա…»):

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՎԵՐՋԸ
Նույն պալատական սրահը

ՆԱԶԱՐ – *(Բազմած է թախտին. Սաքոն ձրա հետևում բռնել է դրոշակը: Նազիր-վեզիր, զորականներ, պալատականներ, տերտեր, թամադա, Ղոռոբուղա և մյուս հսկաները կանգնած են Նազարի դիմաց և երկյուղած սպասում են ձրա խոսելուն: Լռություն: Նազարը մտախոհ է):* Ինձ նայեք, գյաղե՛ք: Ձեզ հրաման պիտի տամ ու թագավորական խոսքս պիտի ասեմ: Շատ կռիվների մեջ եղա, շատ կռվեցի ու շատ հաղթեցի: Էս վերջին մեծ կռիվն էլ, փառք աստծու տեսաք, որ էլի հաղթող դուրս եկանք: Գյաղա՛, էս ի՞նչ բաներ են, գյաղա՛, էս ի՞նչ նշանակ է, էս ի՞նչ տուրք է, գյաղա՞, էս էն տուրքն է, գյաղա՛, էս էն օրենքն է, գյաղա՛, ես տեսնում եմ, գյաղա, որ աստծու մատը խառն է էս ամենի մեջ: Ու աստծու օրենքի մեջ էդպես էլ հատուկ ինձ համար գրած է, որ ամեն անգամ ես պիտի հաղթեմ: Դրա համար էլ ուզում եմ, որ սրբերի դասը դասվեմ:

ՏԵՐՏԵՐ – Եղիցի՛, եղիցի՛ և եղիցի՛:

ԲՈԼՈՐԸ – *(Երկյուղածությամբ խոնարհվում են):*

ՆԱԶԱՐ – Հիմի ինձ նայեք, գյաղե՛ք: Մինչև հիմի աստված էր օգնում ինձ, հիմի իմ գործը ես իմ ձեռքով պիտի տեսնեմ: Հիմի ես ամենքին կհաղթեմ: Դրա համար էլ, գյաղե՛ք, հիմի ես ուզում եմ, որ ողջ աշխարհը գցեմ ոտիս տակ: Ինչացո՞ւ է էսքան տերությունն ու թագավորը: Ես հերիք եմ:

ՏԵՐՏԵՐ – Եվ եղիցի՛:

ԲՈԼՈՐԸ – Ամե՛ն:

ՆԱԶԻՐ – Ստվեր աստուծո: Երջանիկ միտք է ծագել արքայական գլխիդ մեջ: Հրամայի՛ր՝ կատարենք:

ՆԱԶԱՐ – Հիմի ես հրամանք եմ անում թագավորական: Գնացեք ձեր զորք կապեցեք և հրաման տվեք իմ կողմից, որ գնա ողջ աշխարհի վրա, թալանի ու բերի ինձ: Ժողովրդին էլ հրամանք, որ ձեր հարկեր տա: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, թագավոր սուրբ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով):* Ժպի՛տ հյուրընկալության: Թագուհին բարեհաճում է ընդունվելու:

ՆԱԶԱՐ – Հը՞:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Թագուհին գալիս է:

ՆԱԶԱՐ – Գալիս է՝ թող գա. ի՞նչ ես նախրի էշի պես առաջ վազում: *(Սենեկապետը գնում է):* «Թագուհին»: Աղունիկի ձու՛ է: Մերաշ չփխլվի՛: *(Ներս է մտնում Ուստիանը՝ թագուհու զգեստով):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Ծանր ու բարակ առաջանալով դեպի Նազարը և նրա կողքին բարձ որոնելով և չգտնելով՝ ներս է կանչում Սենեկապետին):* Սենեկապե՛տ: *(Սենեկապետը ներս է գալիս):* Քյոփակ, ո՞ւր է բարձս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Վա՛յ, բարձը չե՛ն բերել: *(Դողում է):*

ՆԱԶԱՐ – *(Գավազանով խփում է Սենեկապետին):* Շո՛ւն, շա՛ն որդիք: Ուստիան թագուհին գա նստելու, բարձ չբերե՞ք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Չոքելով):* Հանդերձապետն է մեղավոր, խնայի՛, կարկո՛ւտ բարկությանդ:

ՆԱԶԱՐ – Գլուխը կտրեցեք: *(Սենեկապետը դուրս է գնում):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս գալով):* Թագավորն ապրած կենա: Հանդերձապետի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ – Հողե՛մ գլուխը: Շատ էլ լա՛վ արին: Արարմունքի՛ն մտիկ: Սենեկապետը դուրս է գնում և բարձ է բերել տալիս մանկլավիկի ձեռքով, որ դրվում է Ուստիանի տակ:

ՆԱԶԱՐ – Սրանից ետ ավելի փափուկ բարձ բերեք: Ուստիան թագուհու մսերը փափուկ են: *(Լռություն):*

ՈՒՍՏԻԱՆ – Քեֆդ ինչո՞ւ է խարաբ:

ՆԱԶԱՐ – *(Չգնով):* Է՜, տերության գործը շա՜տ էր էսօր: Թամամ բեզարեցի: Մի քիչ քեֆ անենք: *(Սենեկապետին):* Է, գյադա՛: *(Սենեկապետը ներս է գալիս):* Ճա՛շ բեր: *(Սենեկապետը գնում է):* Մի լավ ճաշ ուտենք. հը՞, Ուստիան խանում:

ՈՒՍՏԻԱՆ – *(Շատ լուրջ):* Թե ուզում ես, ուտենք: *(Ներս է մտնում Սենեկապետը սպասավորների հետ, որ ճաշ է բերում սինիներով՝ վրան պես-պես խորտիկներ, ծաղիկներ և այլն: Սինիները դնում են Նազարի և Ուստիանի առջև՝ խոնչայի վրա: Երկու սպասավորներ անցնում են Նազարի և Ուստիանի կողմը՝ թևքերին և ուսերին զանազան սրբիչներ ու սպասում են, որ սրանք ուտեն: Սպասավորները բաց են անում սրբիչները, ու երբ Նազարը կամ Ուստիանը ուզում են բերանները, մատները սրբել, կիսովին եր են շրջում դունչերը կամ ձեռքերը, և սպա-*

սավորները սրբում են հետևից): Էո՜ֆ: Լազա՜թ: *(Հանկարծ բրնձի հատիկն ընկնում է Նազարի քիթը):*

ՆԱԶԱՐ – *(Փռշտալով և դեմքը ծամածռելով):* Է՛, է՛, է՛…

ՈՒՍՏԻԱՆ – Ամա՜ն, ի՞նչ է…

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Արհավի՜րք, արհավի՜րք, կոչնա՜կ… Բրնձի հատիկ ընկավ Գերագույնի քիթը… *(Ներս են վազում բոլոր պալատականները. դրսից լսվում է):* «Արհավի՜րք»:

(Կոչնակ են զարկում):

ԲՈԼՈՐԸ – Արհավի՛րք… *(Ջոքում են):*

ՆԱԶԱՐ – Խոհարարն է մեղավոր:

ԲՈԼՈՐԸ – Ի՜նչ ոճիր:

(Դեպի դուրս):

ՎԵԶԻՐ – Կտրեցե՛ք խոհարարի գլուխը: *(Գնում են՝ հրամանը կատարելու):*

ՆԱԶԱՐ – Փլա՛վ տվեք…

ՏԵՐՏԵՐ – Հրաշագործ փրկություն արքային մերո:

ԲՈԼՈՐԸ – Փա՜ռք տիրոջ… *(Արտասվում են):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Դեպի դուրս):* Ցնծությո՜ւն, ժողովո՜ւրդ… *(Դուրսն ուրախության ձայներ, կոչնակ և այլն):* Հայտնվեց հատիկը վեհի քթից:

ՎԵԶԻՐ – *(Ներս գալով):* Թագավո՛ր մեծ, խոհարարի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ – Կա՛րեմ բերանը. շատ էլ լավ արին, թագավորական փլավն էապե՞ս կեփեն…

ՆԱԶԱՐ – Դե գնացե՛ք, գնացե՛ք, յա՜լլա: *(Բոլորը դուրս են գնում):* Ի՞նչ էի ասում: Իշի՛ կտորներ: Թողնո՞ւմ են, որ մարդու միտքը տեղը մնա: Հա՛: Փլավից էլ մի քիչ դեսն արեք: *(Հեռացնում են, ուտում է):* Էո՜ֆ: Գինի՛ լցրեք: *(Նազիր, վեզիր, զորավար և պալատականներ ներս են վազում):*

ՆԱԶԻՐ – Թագավոր քա՛ջ: Հազար յոթ հարյուր մարդ էլի ջարդվեց:

ՆԱԶԱՐ – Դրանք էլ ի՞նչ հավես արին ջարդվելու: Փլավի՞ն են քշում: *(Լռություն):* Է՜, լավ, ինչի՞ էին ջարդվում:

ՆԱԶԱՐ – Դե հիմի ռա՛դ եղեք ու էլ զայլա մի՛ տարեք: Տերության գործը մնաց: Կերակուրները սառեցին: Ես գործ ունեմ: Ես հաց պիտի ուտեմ: Հասկացա՞ք, հայվաննե՛ր: Էլ մի սրանից դենը քանի կջարդվի՝ զարկեցեք, քանի կջարդվի՝ զարկեցեք: Ու մին էլ, թե ներս եք եկել ու կռվի վրա

խոսք եք բաց արել, կարկաժներդ միջից կկիսեմ: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք: Ստվեր աստծո:

ՆԱԶԱՐ – Հա՛յդե, յա՛լլա *(Գնում են):* Է՛, մեր գործին նայենք: *(Սևեկապեւրին):* Գյադա արի հացը հավաքի: Ուստիա՛ն, մի քիչ էլ գնանք կտեր ծերին նստենք, ղայլա՛ն քաշենք: *(Սևեկապեւրին):* Կասես, որ ղայլան բերեն: Իշխան Սաքո՞: Դրոշակը ա՛ռ: *(Սաքոն վերցնում է դրոշակը: Դուրս են գալիս Ուսրիանի հետ: Նրանց գնալուց հետո Սևեկապեւրը ներս է կանչում սպասավորներին, նշան անում, որ սեղանը հավաքեն: Հավաքում են և հեռանում: Ապա մի վայրկյան դուրս գալով՝ իսկույն էլ են վազում և կծկվելով կպչում է վարագույրին):*

ՋՈՐԱՎԱՐ – *(Ներս վազելով):* Ո՞ւր է թագավոր քաջը: Ամբողջ զորքը լքել է ռազմադաշտը ու ետ է գալիս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերագույնը նարգիլե է խնկարկում ի պետս հայրենյաց:

ՋՈՐԱՎԱՐ – Շուտափույթ պետք է հայտնել իրեն: Եվ քանի որ թագավոր քաջը մահվան սպառնալիքով արգելեց մեզ իր հետ խոսել զորքից և պատերազմից, շատ կաղաչեի, որ ի սեր հայրենյաց, ինքդ հանճն առնեիր այդ մահը: Հայտնի՛ր թագավորին լուրը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Անպատճառ: Իմ անձը հենց հայրենիքի համար եմ պահել, որ զոհեմ: Միայն իսկույն չեմ կարող լուր հայտնել, քանի որ Գերագույնը հենց նոր ավարտեց նարգիլեի առաջին կրակը: Երկու կրակ ևս կավարտի, և ես կհայտնեմ:

ՋՈՐԱՎԱՐ – Ուրեմն հուսամ քո անձնվիրության վրա: Տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կատարելապես: Տե՛ր իմ:

ՋՈՐԱՎԱՐ – *(Գնում է):*

(Ներս են մտնում նազիրը և վեզիրը):

ՆԱԶԻՐ
ՎԵԶԻՐ } *(Գլուխ տալով սևեկապեւրին):* Տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գլուխ տալով)* Տեր ի՛մ:

ՆԱԶԻՐ – Հուսանք, որ նոր լուրերը հայտնել ես արքային:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ինձ ոչինչ հայտնի չէ: Դուք որևե բա՞ն գիտեք, տիարք ի՛մ:

ՆԱԶԻՐ – Կատարելապես ոչինչ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ուրեմն ի՞նչ նոր լուր է, տիա՛րք:

ՎԵԶԻՐ – Ների՛ր, Տե՛ր իմ: Կարծես նոր լուր ասիր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ոչ, պարզապես սայթաքումն բարբառի:

ՆԱԶԻՐ – Եվ ի՞նչ է քեզ հայտնի, տեր ի՛մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ականջս խուլ է, և ինքս այնքան մտազբաղ… (*Լռություն*): Իսկ…

ՆԱԶԻՐ
ՎԵԶԻՐ } Հա՛…

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Բա՞ն ասիք, տիա՛րք:

ՆԱԶԻՐ
ՎԵԶԻՐ } Ոչինչ:

ՎԵԶԻՐ – Ինչպե՞ս է քո կենցաղավարությունը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերերջանիկ: Աստված պահե թագավորին: *(Լռություն)*: Առո՞ղջ եք, տիա՛րք:

ՆԱԶԻՐ
ՎԵԶԻՐ } Կատարելապես, Տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այն ժամանակ իսկույն պահիկ մի հեռանամ և արքային նախապատրաստեմ, որ ոչ մի լուր չկա:

ՆԱԶԻՐ – Ճշմարիտ կետին նշանեցիր, տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Դուրս է գնում, բայց և իսկույն դրսից մուրհակով վարագույրին՝ սկսում է այնտեղից ականջ դնել: Երևում է նրա կերպարանքը վարագույրի հետևից)*:

ՎԵԶԻՐ – Փա՜ռք աստծո:

ՆԱԶԻՐ – Քանի որ կան տերություններ, որոնց ժողովուրդը ապստամբում է թագավորի դեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այո՛, այլայլումն ինչ-ինչ և տվայտանքը պես-պես:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տեր ի՛մ: *(Գլուխ են տալիս: Նազիր և վեզիր հեռանում են)*: «Երեխան խաշվե՜ց, օրհնյալնե՜ր, ուրի՜շը բերեք»:

(Վարագույրի հետևում ձայներ: Սենեկապետը թաքնվում է նրա ծալքերում):

ՆԱԶԱՐ – *(Երգում է)*: Ամա՜ն, ամա՜ն այ ջաաաա՜ն: *(Իջնում է կտուրից Ուսրիանի հետ)*:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է գալիս և կանգնում ժպտադեմ)*:

ՆԱԶԱՐ – *(Նրան)*: Հը՞, ներս ու դո՛ւրս արա, ներս ու դո՛ւրս արա մկան պես: Ի՞նչ կա էլի: Հը՞: Դո՛ւրս, հառամզադա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Անշարժ կանգնած է)*:

ՆԱԶԱՐ – Չե՞ս իմանում, քյաֆթա՛ռ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կենա՛ց աղբյուր: Նախկինն պատերազմի պարտված թագավորի թագուհիները եկել են և լուսապայծառ տեսությանդ են հայցում:

ՆԱԶԱՐ – Թագուհիները… ի՞նչ են ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Նազիրը գիտե, թագավոր կենաց:

ՆԱԶԱՐ – Կանչի գա Նազիրին: *(Սենեկապետը գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Բան չունե՞ս: Ինչիդ են պետք թագուհիները: Ճամփի՛, գնա՛ն:

ՆԱԶԱՐ – *(Բազմում է թախտի վրա):* Օխա՜յ… էո՜ֆ… հը. Ուստիա՞ն, աշխարհքի թագավոր ենք դառնում: Ո՞նց է քո բանը:

ՆԱԶԻԲ – *(Ներս մտնելով և մոտենալով Նազարին մի քիչ կամաց):* Թագավոր սուրբ: Մեր թշնամի թագավորների թագուհիները, տեսնելով, որ իրենց ամուսինները սպանվեցին պատերազմում, լսելով ձեր խելքի և քաջության համբավը, սիրահարվել են ձեզ և եկել են՝ ընկնելու ձեր ոտքերը, սեր հայցելու:

ՆԱԶԱՐ – Սիրո՞ւն կտորներ են:

ՆԱԶԻԲ – Լուսնյակի տասնհինգը:

ՆԱԶԱՐ – Կերթաս, իմ կողմից խանումներին կասես, որ իրենց վրա սեր եմ կապել, թող ներս հրամմեն: *(Նազիրը գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Բան եմ ասում: Չի՞ լինի, որ չկանչես:

ՆԱԶԱՐ – Չէ՛, ո՞նց կարող եմ: Թագավորի արք է, ազնի՛վ թագուհի են:

ՈՒՍՏԻԱՆ – Ազնիվ թագուհին որն է, ջանմ, թագուհին թագուհի չի՞:

ՆԱԶԱՐ – Չէ՛: Կա խամ թագուհի, կա ազնիվ թագուհի: Ազնիվ թագուհին աշխարհքի թագուհին է:

ՈւՍՏԻԱՆ – Լավ, էդ որ ուրիշների ես բերում, էլ ես սազական թագուհի չե՞մ: Բա էդ անելու բան է, որ անում ե՞ս:

ՆԱԶԱՐ – *(Կեղծ գործնական և հասարակ):* Լսի՛ր: Ուստիա՛ն, մի քիչ թագավորական գործ ունիմ, գնա մյուս օթախը: Ծանդր բան է թագավորական գործը, ծանդր:

ՈՒՍՏԻԱՆ – Մե՜ղա: Սիրուն կնիկները ներս առ, թե «թագավորական գործ ունեմ»: Էս եղավ թագավորական գո՞րծ: Էնպես են խոսում, կարծես թե էստեղ թագուհի չեմ, իրավունք չունեմ:

ՆԱԶԱՐ – Մենք անող ենք, Ուստիան խանում:

ՈՒՍՏԻԱՆ – Չէ՛, չեմ թողնի, որ անես:

ՆԱԶԱՐ – Արյունս գլուխս մի խփիր տա, թե չէ վեր կացա, հա՜ա՜ա՜… Գլուխս մի տանի: Մի քիչ ազնիվ ցեղի պիտի խառնվիմ: Ժամանակ չունեմ: Բանի՛դ գնա:

ՈՒՍՏԻԱՆ – Լա՛վ, հիմի ես ի՞նչ պիտի անեմ:

ՆԱԶԱՐ – Եսի՜մ: Փող, ապրանք կտամ, գնա գեղը:

ՈՒՍՏԻԱՆ – Բո՜ո՜… Էստեղից հեռացողը չեմ:

ՆԱԶԱՐ – Կերթա՜ս, Ուստիան խանում, կե՛րթաս:

ՈՒՍՏԻԱՆ – Չե՛մ գնա: Ղալմաղա՛լ կանեմ:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ ղալմաղալ:

ՈՒՍՏԻԱՆ – Կասեմ՝ վախկոտ ես:

ՆԱԶԱՐ – Ո՞վ է վախկոտ:

ՈՒՍՏԻԱՆ – Դու:

ՆԱԶԱՐ – Գտա՜ր վախկոտը, աշխարհքնե՜ր եմ զարզանդեցնում:

ՈՒՍՏԻԱՆ – Օյիններ են ջանմ, սուտ բան է: Տեսնես՝ ինչ ֆանդեր ես բանացրել: Հիմի որ բաց անեմ, ո՞նց է բանդ *(երգում է «Ուսրիանի երգը»)*:

ՆԱԶԱՐ – *(Հարչակվելով Ուսրիանի վրա)*: Ո՛ւյ, քեզ հիմի, հառամ…մմ… *(Խոսքը կիսատ՝ ներս են մրնում ձագիր վեզիր, սենեկապետ, պալատականներ, թամադա, Ղոռոքուղա և նրանցով շրջապատված երեք թագուհիներ, որ, ժպտալով ու խունջիկ-մունջիկ անելով, առաջ են գալիս և բարև բռնած կանգնում Նազարի առջև: Ուսրիանին՝ դեմքը բթվեցնելով և կեղծ գործնական)*: Ուստիա՛ն, ժողովք է հիմի, գլուխներս խառն է, մի քիչ գնա էն օթախը:

ՈՒՍՏԻԱՆ – *(Կեղծ քաղաքավարի)*: Հա՞ ժողո՞վք է: Լա՜վ: *(Վեր է կենում, որ գնա աջ կողմից)*: Ո՛չ բարով վայելես: *(Խեթ նայում է Նազարին)*:

ՆԱԶԱՐ – *(Կասկածով նայում է Ուսրիանին և ինչ-որ ուզում է ասել, բայց թագուհիների տեսքը շլացնում է նրան և նրանց նայելով՝ մոռանում է Ուսրիանին)*:

ՈՒՍՏԻԱՆ – *(Հեռանալով աջ կողմից՝ մի անգամ էլ մրիկ է տալիս թագուհիներին և մրթմրթում)*: Լրբերի՜ն մտիկ, սիրահարվե՛լ են… Հողեմ ձեր գլուխը: *(Դուրս է գնում)*:

ՆԱԶԱՐ – Մաեստրո փլիզ դը մյուզիք *(երաժշտություն, պարում է աղջիկների հետ ու երգում «Նազարի երգը»)*:

ՈՒՍՏԻԱՆ – *(Ներս մրնելով՝ սկսում է ականջ դնել նվագին, հետո առաջ է գալիս դեպի նախաբեմ)*: Էը՜… *(Երաժշտությունը մեղմանում է, Ուսրիանը առաջ գալով)*: Տեսա՞ք դուք փսլնքոտ Նազարին: Երկու էշի գարի չէր կարում բաժնի: Տեսա՞ք՝ ինչ փառքի հասա՛վ: Մի՜տք ես անում, մի՜տք, էս աշխարհքի բանը, ճաքում ես, տրաքվում, թե ախր էս բանը ո՞նց է լինում: Չեմ իմանում, բա՜խտ է, էլի՞: Տեսա՞ք՝ ոնց է սարսաղացրել աշխարհքն ու վրան ծիծա-

ղում, թե աշխարհքը սարսաղ է ու սարսաղ պիտի գնա՞: Դու էն սարսաղներին ասա, թե ո՞նց են կատու կտրել էդ նապաստակի առաջին: Բա՛խտ է, էլի: *(Երաժշտությունը շարունակվում է: Թագուհիները քջքջում են):* Հա՛, մե՛ծ գործի վրա եք: Բախտավորներ: Հողեմ ձեր անամոթ գլուխը: Նա էլ որ երեսին ամոթ չունի՛: Հը՞մ: *(Մտածելով ու գլուխը թափ տալով):* Դու էդ թող՝ բախտին մտիկ, որ միշտ բերում է: Բա՛խտ է էլի: *(Թագուհիները հերթով պարում են):*

ՆԱԶԱՐ – Այ ջա՛ն… *(Ինքն էլ է պարում):*

ՈՒՍՏԻԱՆ – Մի կաց, ես քո ապո՛ւրը կեփեմ: *(Անկյունից վերցնում է մահակը):*

ՆԱԶԱՐ – Ամա՛ն, ամա՛ն այ ջա՛ան…

ՈՒՍՏԻԱՆ – *(Մահակը չեռին ևերս վազելով):* Է՞դ է քո թագավորի ժողովը, հա՞… *(Մահակը խփելով գլխին):* Կե՛ր, քյո՛փակ… *(Թագուհիներն ու սազանդարևերը փախչում են դուրս):*

ՆԱԶԱՐ – Բե՛, բե՛, բե՛, բե՛… *(Փախչում է մի կողմ: Ուստիաևը ընկնում է ևրա հետևից, բայց նկատելով ևերս մտնող սևեռկապետին՝ զսպում է իրան ու նայ քաշվում: Նազարը, նստելով գահին, ոտևերը ծալապատիկ քաշում է իրան):* Գյադա՛ սեռեկապետ, կանչիր նազիր-վեզիրին… ես գանգատ ունեմ տերությանն: *(Սևռեկապետը գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Խո՛րեմ թագավոր գլուխդ… *(Սևռեկապետը վերադառնում է նազիր-վեզիրի, զորավարի և ալաուրականևերի հետ):*

ՆԱԶԻՐ – Հրամայի՛ր, կենտրոն տիեզերաց:

ՆԱԶԱՐ – Ես հրամայում եմ, որ… *(Ուստիաևը խնդ նայում է իրան, Նազարը զսպում է իրան և լռում):* Հը՛մ… *(Սակայն համբերությունից դուրս գալով):* Բե՛… *(Վեր է թռչում նստած):* Բե՛… *(Վեր է թռչում):* Ի՞նչ է՝ թագավոր չե՞մ, բերանս պիտի ջուր առնե՛մ… *(Դրսից աղմուկի ձայն է գալիս: Դուռը ծեծում են):* Գյադա՛, էս ժողովո՞ւրդ է, ի՞նչ է, ի՞նչի է կանգնել էնտեղ: Կռիվ չի՞ գնացել:

ՆԱԶԻՐ – Ո՛չ, Տե՛ր իմ:

ՆԱԶԱՐ – Յա… ի՞նչ է ասում: Գյադա՛, ո՞վ է իմացել՝ թագավորը հրամայի, ժողովուրդը կռիվ չգնա: *(Դառնում է Սաքոյին)*: Սաքո, գնա՛:

ՍԱՔՈ – *(Սաստիկ վախեցած):* Գը, գը, գը, գը, գնա՞մ…

ՆԱԶԱՐ – Յա՛լլա, հառամզադա: Ի՞նչ: Թագավոր ես ուզում դառնա՞ս, դե՛ առաջ ընկի:

ԲՈԼՈՐԸ – Իշխան Սաքո՛, հառա՛ջ…

ՍԱՔՈ – *(Գնում է պատշգամբ և դիմում ժողովրդին):* Գյաղե՛ք, թը-թը-թագավորը հրամայում է: *(Սարսափած նայ է փախչում):* Ամ-մա՛-ա՛-ա՛ն…

ՆԱԶԱՐ – *(Դիմելով ժողովրդին)* Յա՛, յա՛… տո գնացե՛ք *(դիմելով պալատականներին)*: Սեմեկապե՛տ, գնա՛, զորապե՛տ, գնա՛, նագի՛ր, վեզի՛ր, Դռռոբուղա՛:

ՈՒՍՏԻՄՆ – *(Ներս էր մտել և լսում էր վերջին խոսքերը: Բամփելով նրա գլխին):* Ցխեմ թագավոր գլուխդ, նրանց ուր ես գարկում:

ՆԱԶԱՐ – *(Վախով նայում է Ուստիմին: Իսկ պալատականները սարսափում են Նազարից և սպասում, թե նա ինչ կանի):*

ՈՒՍՏԻՄՆ – Դուք էլ մա՛րդ գտաք վախենալու *(Մահակը բարձրացնում է և հարձակվում Նազարի վրա: Խփելով):* Ա՛ռ, քյո՛փակ… *(Նազարը փախչում է դուրս: Պալատականները շշմում են: Ուստիմը վազում է Նազարի հետևից դահլիճով մեկ):*

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Հիմի հրա՛շք կպատահի:

ՈՒՍՏԻՄՆ – *(Մահակը իջեցնելով գլխին):* Թա՛ղեմ գլուխդ…

(Նազարը փախչում է աջ):

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով դեպի Ուստիմը):* Համեստափայլ թագուհի…

ՆԱԶԱՐ – Կայծե՛րդ կհանեմ… *(Վազում է չախ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով դեպի Նազարը):* Թագավո՛ր քաջ…

ՈՒՍՏԻՄՆ – *(Վազելով Նազարի հետևից և մահակը խփելով):* Խո՛րեմ գլուխդ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով նրա հետևից):* Համեստափա՛յլ թագուհի…

ՆԱԶԱՐ – Կտո՛ր-կտո՛ր կանեմ… *(Վազում մտնում է գահի տակ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով դեպի նա):* Թագավոր քաջ…

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՍԱՔՈ – *(Շարժում են անում դեպի Ուստիմը՝ խնդրելու չնով: Ուստիմը մի հարված է տալիս Սաքոյի գլխին, մահակը շարժում է մյուս պալատականների կողմը):*

ՍԱՔՈ – Ամա՛ն *(Փախչում է դուրս: Պալատականները ետ են քաշվում):*

ՆԱԶԱՐ – Տո հերիք չեղա՞վ, ամոթ չունե՞ս…

ՈՒՍՏԻԱՆ – Ամոթը ե՞ս պիտի ունենամ, թե դու: Կրե՛մ գլուխդ… *(Մահակը կոխում է գահի տակ և բոթում Նազարին):*

ՆԱԶԱՐ – Բո՛, բո՛, բո՛… Տո՛, տո՛ բռնեք դրան… Ուստիա՛ն…

ՈՒՍՏԻԱՆ – *(Գահը գլորելով մի կողմ):* Դե հիմի կաց, քեզ խալխի առաջ ղնգատեմ, որ աշխարհը տեսնի քեզ…

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Հիմա հրաշքը կպատահի…

ՆԱԶԱՐ – *(Դուրս է փախչում):* Ամա՞ն… *(Ուստիանը հետապնդում է):*

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ – Տեսա՞ք հրաշքը…

(Հանկարծ փոքրում է մի ընդհանուր քրքիջ, որ անզուսպ կերպով սկսում է ուժեղանալ և լցնել դահլիճը: Հսկաները նորս են բախվում և զարմացած նայում: Ամենից շատ ապշել է Ղոռոբուղան):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Հանկարծ գլխի ընկնելով՝ պայթում է մի հսկայական ծիծաղով):* Փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ…

ՄՅՈՒՍ ՀՍԿԱՆԵՐ – Հո՛, հո՛, հո՛, հո՛ հո՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ…

(Մթնում է: Ապա լուսավորվում է, ժողովուրդը վանկարկում է՝ «Կեցցե բազավորը»: Լուսավորվում է բազավորի գահը, և գահին նորից Նազարն է: Մթնում է: Լուսավորվում է բեմը, և ոչ ոք չկա գահին: Մթնում է: Նորից վանկարկում են՝ «Կեցցե բազավորը», վառվում են լույսերը, և գահին նստած են երեխաները՝ մեր ապագա ղեկավարները):

ՎԵՐՋ

ՋՈՐԲԱՇԵՆՑԻՆԵՐԻ ԵՐԳԸ

(«Քաջ Նազար» ներկայացումից)

Խոսք՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻ — Երաժշտ.՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ



Գնանք, կռվենք, փշրենք, ջարդենք՝
Հանուն արդարության:
Ուրիշներին կյանքից զրկենք՝
Հանուն արդարության:
Ուրիշների հողը խլենք,
Ոսկին խլենք զոռով,
Ուրիշների կանանց գրկենք՝
Հանուն արդարության:

Կրկներգ. Սուրբ է, սուրբ է մեր պայքարը,
Նպատակը՝ համեստ:
Կուզենք գերել ողջ աշխարհը,
Ի՞նչ վատ բան կա այստեղ:
Դրոշը մեր Նազարն է քաջ:
Փա՛ռք մեզ:
Ի զե՛ն:
Առա՛ջ:

Անհնազանդ ազգեր հնձենք՝
Հանուն արդարության,
Եվ մեր ազգին ամուր հեծնենք՝
Հանուն արդարության:
Ազատություն տանենք մարդկանց՝
Նվիրելով շղթա,
Արդարության հե՛րն անիծենք՝
Հանուն արդարության:

Կրկներգ. Սուրբ է, սուրբ է մեր պայքարը,
Նպատակը՝ համեստ:
Կուզենք գերել ողջ աշխարհը,
Ի՞նչ վատ բան կա այստեղ:
Դրոշը մեր Նազարն է քաջ:
Փա՛ռք մեզ:
Ի զե՛ն:
Առա՛ջ:

ԿԵՆԱՑ ԵՐԳ

(«Քաջ Նազար» ներկայացումից)

Խոսք՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻ — Երաժշտ.՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ

Tempo di brindisi

Թամադա



Թամադա. Եկեք խմենք մենք հոտնկայս
Նազարի կենացը թանկ.
Ամեն մարդու բախտ չի տրվում
Ապրել նրա դրոշի տակ:
Այսքան լավ մարդ, այսքան հպարտ,
Այսքան խիզախ, քաջարի՝
Ոչ եղել է, ոչ կա հիմա,
Ոչ էլ պետք է որ լինի:

Խումբ. Ջա՛ն Քա՛ջ Նազար, կենացդ,
Հալալ լինի կերածդ.
Կեր, վայելիր քանի կաս,
Միշտ մեր գլխից անպակաս:

Թամադա. Մենք երջանիկ պիտի լինենք,
Որ տեսնում ենք նրան ահա:
Որ կարող են լսել նրան,
Կյանք զոհել հանուն նրա:
Ում երեսին ձեռքը դիպչի,
Ում որ նա մի պահ նայի՝
Հավիտյանս հավիտենից
Բախտավոր թող համարվի:

Խումբ. Ջա՛ն Քա՛ջ Նազար, կենացդ,
Հալալ լինի կերածդ.
Կեր, վայելիր քանի կաս,
Միշտ մեր գլխից անպակաս:

ՆԱԶԱՐԻ ԵՐԳԸ

(«Քաջ Նազար» ներկայացումից)

Խոսք՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻ — Երաժշտ.՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ

Andante giocoso



Ա՛յ ամա՛ն, ա՛յ ամա՛ն, ա՛յ ամա՛ն...
Թագավոր լինելուց լավ բա՞ն.
Կեր, խմի, քեֆ արա շարունակ,
Աշխարհը խալի է ոտիդ տակ:
Աշխարհը հենց ե՛ս եմ, ի՞նչ աշխարհ.
Աշխարհը քիչ է ինձ համար:
Բոլորն աղոթում են ինձ արդեն,
Կարող է աստված եմ՝ չգիտեմ:

Չէ՛, մարդիկ ստեր են հորինում,
Իսկ հետո ստերին հավատում:
Աշխարհը որ սարսաղ չլինի՝
Նազարը թագավոր չի լինի:
Ա՛յ ամա՛ն, ա՛յ ամա՛ն, ա՛յ ամա՛ն...
Թագավոր լինելուց լավ բա՞ն.
Կեր, խմի, քեֆ արա անդադար,
Մարդիկ էլ մեռնեն քեզ համար:

ՈՒՍՏԻԱՆԻ ԵՐԳԸ

(«Քաջ Նազար» ներկայացումից)

Խոսք՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻ — Երաժշտ.՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ



Ինձ ուզեցին հազար իշխան,
Հազար աղա, քյոխվի տղա.
Ե՛վ առանձին, և՛ միասին՝
Ուզում էին տանել ինձ կին:

Ինչո՞ւ առա ես Նազարին,
Սերս կպավ չոր աթարին:
Սիրո համար այդքան պատիժ՝
Փնտրում ես մարդ՝ գտնում ես գիժ:

Ե՛վ ստախոս, և՛ պարծենկոտ.
Բո՛ղդ թաղեմ, հայվա՛ն վախկոտ:
Կուզես՝ գնա, կուզես՝ մնա,
Բայց ես էլ քեզ չեմ դիմանա:

«Հե՜յ, ո՞վ կա...» պատասխանում է «ՋԻՄ ԴԵՆ ԴԻ»-ն, Վ. Սարոյան



«Քաջ Նազար», Դ. Դեմիրճյան

«Ես իմ անուշ Հայաստանի...», Ե. Չարենց

«Ցուցակը», Ա. Այվազյան

«Ընկ. Բ. Փանջունի», Ե. Օտյան

«Կարոտ», Ն. Դումբաձե

«Եվ այր մի Մաշտոց անուն», Պ. Սևակ

«Ռոմեո և Ջուլիետ», Վ. Շեքսպիր

«Հայկական էսքիզներ», Վ. Պետրոսյան

ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ…

Նվիրված է Ե. Չարենցի ծննդյան 110-ամյակին

Ըստ Ե. Չարենցի ստեղծագործությունների

Սցենարի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Նկարագրություն

Հայ մեծանուն գրող Եղիշե Չարենցի կյանքի մասին որևէ գեղարվեստական գրականություն գոյություն չունի: Մեծ գրողի կյանքի և ստեղծագործական ճանապարհները եղել են հակասական՝ բազմաթիվ վերելքներով և վայրէջքներով լեցուն: Ընդհանուր առմամբ իր ապրած տարիների ընթացքում Ե. Չարենցի ստեղծագործությունները չեն գնահատվել ըստ արժանվույն: Միայն տարիներ անց տարբեր գրականագետների ուսումնասիրությունների արդյունքում տրվել են ավելի խորը վերլուծական գնահատականներ, և նրա թողած գրական ժառանգությունը շատ բարձր են գնահատել: «Ես իմ անուշ Հայաստանի...» ներկայացման սցենարի համար նյութ է ծառայել իր կյանքը և ողջ ստեղծագործական ժառանգությունը: Եվ քանի որ, այդ ամենը շատ բազմազան, գունեղ և հարուստ էր, այդ իսկ պատճառով դժվար էր կենտրոնանալ մի կետի վրա, և մտահաղացա ստեղծել գրողի երեք կերպար՝ երիտասարդ ու սիրահարված քաղաքացի Չարենց, գրող և հասարակական գործիչ Չարենց և փիլիսոփա Չարենց: Նրա կյանքի ողջ ճանապարհը փորձել եմ զուգորդել իր ստեղծագործությունների հետ՝ ներառելով նաև անտիպ գործերը, օգտագործելով իր աղջկա՝ Անահիտ Չարենցի կողմից պատմած պատմությունները, Չարենցի տուն-թանգարանում եղած նյութերը և տարբեր գրականագետների ու իր ընկերների կողմից տպագրված հոդվածները: Ներկայացման մեջ բոլոր կերպարներն իրական են, որոնք եղել են իր կյանքում: Ոչ մի մտացածին կերպար չկա: Այստեղ ևս իրական կերպարները զուգորդվել են Չարենցի պոեմներում ու ստեղծագործություններում կերտած կերպարների հետ:

Ներկայացման մեջ օգտագործվել են արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Արամ Սաթյանի գործերը, կոմպոզիտորի որդու՝ Դավիթ Սաթյանի, Խ. Ավետիսյանի, Ա. Մանդակունյանի, Ա. Տերտերյանի, Ռ. Ամիրխանյանի, Մ. Լյուտավսլավսկու ստեղծագործություններից հատվածներ:

Ներկայացման մեջ որպես դեկոր օգտագործվել են կարմիր կլոր բեմ և երեք էկրան: Երկու էկրաններն ավելի փոքր են, մեկը՝ մեծ: Փոքրերի դիմաց կան փոքրիկ կիսակլոր հարթակներ, օգտագործվել են արխիվային կադրեր, պարային բեմադրություններ և երգչախմբային կատարումներ:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին և «Նախագահական մրցանակի» մրցույթին:

Հագուստների ձևավորումն իրականացրել է ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանը, իսկ պարային բեմադրությունը՝ աղջիկների պարային համույթի գեղարվեստական ղեկավար Իռէն Ուլիխանովան:

Երգչախմբային կատարումները իրականացրել են ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախումբը, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան և գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան:

Պրեմիերան տեղի է ունեցել 2007 թվականի հոկտեմբերի 11-ին:

Բեմադրող ռեժիսորը, դեկորացիաների և երաժշտական ձևավորումների հեղինակը Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Չարենց 1 – գրող
Չարենց 2 – փիլիսոփա
Չարենց 3 – քաղաքացի
Աստղիկ – Չարենցի առաջին սերը
Կարինե Քոթանջյան – Չարենցի սերը
Արմենուհի Տիգրանյան – Ա. Տիգրանյանի դուստրը
Լեյլի – Մոսկվայում բնակվող գրող
Արփենիկ – Չարենցի առաջին կինը
Գործավարուհի
Նիկոլ Աղբալյան – Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության և արվեստի նախարար
Գևորգ Աբով – գրող
Ազատ Վշտունի – գրող
Իզաբելլա – Չարենցի երկրորդ կինը
Մարտիրոս Սարյան – նկարիչ
Քամի 1
Քամի 2
Բանվոր
Մենշևիկ

Մասսայական տեսարաններում՝
Պարային համույթ – «Դանթեական», «Սոմա», «Տաղ անձնական»
Երգչախումբ – «Երազ տեսա», «Չյունապատ լեռներ» «Ինտերնացիոնալը»

Բեմի վրա՝ մեջտեղում, մեծ էկրան է, աջ և ձախ կողմերում՝ փոքր էկրաններ, որոնց դիմաց դրված են կիսակլոր հարթակներ: Դահլիճում բեմի դիմաց դրված է կարմիր կլոր հարթակ: Ձախ կողմում դրված է նստարան, ետևում բնական ծառ է, կարմիր կլոր հարթակի վրա նստած է Գրող Չարենցը, բայց ամբողջովին կծկված, գլուխը կախ: Մթություն է, երեք էկրանների վրա միաժամանակ միանում են արխիվային կադրեր Չարենցի մասին: Հնչում է դաշնամուրային երաժշտություն, Գրող Չարենցը բարձրացնում է գլուխը, և արթնանում են հիշողությունները՝ հանդիպում է իր առաջին սիրուն՝ Աստղիկին: Բեմ է մտնում Քաղաքացի Չարենցը սպիտակ վարդով և սպասում է Աստղիկին: Մտնում է Աստղիկը, Քաղաքացի Չարենցը դնում է վարդը նստարանին, փորձում է գրկել Աստղիկին, նա փախչում է ծիծաղելով, Չարենցը վազում է նրա ետևից, բայց աղջիկը փախչելով դուրս է գալիս բեմից: Տղան տխուր մոտենում է նստարանին, վերցնում է դրված վարդը և հեռանում է բեմից:

(Երաժշտությունը ավարտվում է, և հնչում է յայնագրություն):

ՉԱՅՆ – Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար
Ես երազեցի արևի մասին:
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար–
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին:

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն՝
Արևանման, արնավառ խոսքի,–

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար–
Խոսքեր չկային ու արև չկար…

(Լուսային ակնարկ, վառվում են երկու կողմերի էկրանների հետևի լույսերը, որոնց միջից երևում են Քաղաքացի Չարենցը և Փիլիսոփա Չարենցը, գալիս են բեմի կենտրոն, նրանց է միանում նաև Գրող Չարենցը: Լուսային ակնարկ: Երաժշտություն):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ, ՓԻԼԻՍՈՓԱ, ՔԱՂԱՔԱՑԻ – *(Բոլորը միասին):* Ես գալիս եմ
ահա:

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ես գալիս եմ ահա:
– Նայեցե՛ք, նայեցե՛ք: *(Լույսերը աստիճանաբար վառվում են):*
Ես գալիս եմ ահա – դարերից…
Ու բերել եմ ինձ հետ երազները իմ սեգ
Ու երգերը ցնդած օրերի:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Նայեցե՛ք – նայեցե՛ք. դուք ինձ չե՞ք ճանաչում. *(հանդիպում)*
Ես սիրել եմ աշխարհը – այնքա՜ն…
Բայց հիվանդ օրերի թունավոր կանաչում
Ես թաղել եմ թևերս արնաքամ:

Թաղեցի օրերում, երբ գիշերը անհուն
Խավարով փայփայում ու գերում էր – ձեզ:

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Ես գալիս եմ ահա՝ հազարադեմ բյուրանուն,– *(բոլոր լույսերը վառված են):*
Պոռնիկի պես ընկած, աղոթքի պես հեզ…

(Հնչում է երաժշտություն, որի ժամանակ լինում է մթություն, Փիլիսոփա և Քաղաքացի Չարենցները գնում են կանգնում էկրանների հետևում, Մի կեսի լույսերը հանգչում են, և վառվում է սենյակի լույսը՝ թույլ: Գրող Չարենցը քնապ է և տանջված, նա մոտենում է գրասեղանին, հանում է կոստյումը և փողկապը, դնում է աթոռի հենակին, վառում է լամպը, սկսում է ծխել ու գրել: Փիլիսոփա Չարենցը գալիս և նստում է էկրանի դիմացի հարթակի վրա):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Օրորվելով կառքն էր վազում սրընթաց
Դաշտի միջին ճանապարհով ցեխապատ,
Գնում էինք: Ո՞ւր: Չգիտեմ:
Վերջ չկար: Գնում էին: Անխոս: Անձայն ու անքուն…

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Քնել չի լինում, հիմա երբ այնպես ուզում եմ քնել,
Ամե՛ն, ամե՛ն ինչ մտքիցս հանել:
Հայացքներս՝ անփակ՝ թափառում են լուռ –
Ու միտքս տարտամ, դեգերում է մութ
Դաշտերում տխուր:

Մթության գրկում լալիս է դողդոջ
Լույսը լապտերիս՝ մեռնող աղջկա
Հոգեվարքի պես…
Մեկը բախում է դռներն անցածի –
(սենյակի լույսերը հանգչում են)
Ու հիշում եմ քեզ:

(Տեսարանն այգում է, ներս է մտնում Չարենցը՝ ծաղիկը ձեռքին, ասպում է ասպարանին, գալիս է Ասղիկը)։

ԱՍՏՂԻԿ – Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին,
Ու լավում է նրանց հեռվիցը եկող երգը տխրագին…

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Օտար է հոգիս քեզ համար,
Ինչպես օտար դաշտերից բերած ծաղկեփունջ՝
Տանջանքի վարդեր, հույզի ծաղիկներ,
Երազի աստղեր, հույսերի ցոլքեր–
Ու կարմի՞ր, կարմի՞ր խաշխաշներ ցավի,–
Այս ծաղիկներով զարդարված հոգիս քեզ նվեր բերի,
Որ քո կույս հոգին իմի հետ ցավի…

ԱՍՏՂԻԿ – Իմ աչքերի մեջ այնքա՞ն կրակներ եմ մարել ես
Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքա՞ն աստղեր եմ մարել:

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.
Կյանքս կանցնի, կմարի – բայց երգս կա, կապրի դեռ:

ԱՍՏՂԻԿ – Հավիտյան գոց ու անխոս՝ թափառել եմ ու լռել.

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ոչ ոք, ոչ ո՛ք չգիտե՝ արդյոք ի՞նչ է կյանքս, ես.
Միայն գիտեմ, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել:

ԱՍՏՂԻԿ – Ինչպես գիտեմ, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը սրբազան.
Կյանքս թողած անհունում – ես երգել եմ սերը խոր
Ու կարոտը թևերիս, որ երբե՞ք քեզ չհասան...

(Ասղիկը գնում է, բայց դուրս չի գալիս: Կիսամութ Չարենց գրողի սենյակում)։

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Այս անքուն, անքուն ու լուռ գիշերին
Ախ, էլ չեմ ուզում վերհիշել կրկին
Անցյալը անմիտ ու անմխիթար.
Էլ ինչո՞ւ ես դու գալիս անդադար
Եվ ուշ գիշերով փորել ես ուզում
Իմ հոգին տկար…

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Մի գիշեր էր մութ: Անձրև էր գալիս:

Խավար էր իջել իմ մթնած հոգում,–
Ամայություն էր հեկեկում այնտեղ
Հին, անվերադարձ երազների տեղ:
Եվ ես դուրս եկա: Ցեխոտ փողոցով
Քայլեցի երկար:
Չգիտեմ, թե ո՞ւր. ինձ համար արդեն
Ճանապարհ չկար:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ինձ համար մեռավ ամեն սրբություն:
Գնա՛, սիրելիս:
Թող կյանքը գլխիս մրրիկներ տեղա
Ու մոխիր ցանի–
Էլ ոչ մի զղջում իմ երազը հին
Ետ չի դարձնի…
Գնա՛, սիրելիս.
Ու թող մի վայրկյան մտքիցս հանեմ,–
Ուզում եմ քնեմ – ա՜խ, ինչպե՞ս քնեմ…

(Չարենց գրողը՝ մեջքով դեպի հանդիսատեսը՝ էկրանի մոտ, որի վրա ցուցադրվում են արխիվային նյութեր 1915 թվականի մասին: Անցում: Պար՝ «Դանթեական առասպել» /երաժշտություն/ռոք: Կարմիր լույս, ներս է մտնում Քաղացի Չարենցը՝ զինվորական շինելով):

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ես ինքս էլ լավ միտ չբերի,
Թե ոնց Կարսի այգուց, 15 թվի վերջերին
Արթնացա զորքերի շարքում:
Կամավոր: Հայկական բանակ:
Հրացան: Ռումբեր:
Եվ ահա Այգեստանը Վանա:
Ես կարծում էի այնտեղ, ռումբերի ահեղ որոտում
Կգտնեի քո դեմքը լուսե.
Բայց գտա դիակներ փայտե…

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Երկա՜ր կանգնեցինք:
(Միանում է քաղաքացի Չարենցին): Մի զինվոր-ընկեր,
Դիակն հրելով, խնդաց խելագար:
Բայց չէ՞ որ նա՛ էլ կրել է զենքեր,
Եղել է մեզ պես կյանքի սիրահար:
Ես մտածեցի՝ գնում ենք մենք է՛լ
Այսպիսի դիակ դառնալու համար:

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:

Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր–
Կյանքը դարձնում նզովյա՛լ գեհեն:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – *(Գրող Չարենցը ևս միանում է նրանց):*
Եվ մենք այդ գիշեր մնացինք այդտեղ՝
Մեռած Քաղաքի ավեր շենքերում:
Ամբոխվել էին տեսիլներն ահեղ.
Խեղերի նման ցատկում ու պարում,
Ու դառնում էին մեռելներ մի տեղ՝
Սատանայական տենդոտ շուրջպարում:

Խե՛նթ երգում էին, որ Աստղիկը կա,
Ապրում է այնտեղ – ջրերի խորքում.
Թող բուքը ոռնա՛ աշխարհի վրա–
Իրեն ինչ՝ նա կա - անմահ, անհերքում,–
Եվ մի՛շտ գեղեցիկ ու կույս կմնա
Իր աստվածային, անհուն եզերքում:
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Թնդանոթները թնդում էին թունդ,
Եվ սրտատրոփ տեսնում էինք մենք,
Թե ինչպես այնտեղ, լեռներում կապույտ
Ավեր է փռում նա, հարված ու վերք,
Ու դառնում են շեն գյուղեր – մոխրակույտ,
Ու ծուխը, կապույտ, բարձրանում է վեր:

Ու մութ է հիմա այնտեղ, ամայի,
Քամին է միայն ոռնում ու կոծում,
Տոնելով վայրագ հարսնիքը Մահի:
ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Իսկ մենք ապրում ենք ու շնչում ենք դեռ
Մենք՝ զոհ, մենք՝ դահիճ՝ ուրիշի ձեռքում...
ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Օ՜, դու բարբարոս, խելագար, ցավոտ,
Երբեմն իմաստուն, երբեմն-գազան,
Աշխարհներ շինող բախտի գավազա՜ն,–
Դիվային գավազան՝ ճահիճների մոտ,
Ոչինչի՜ մասին – աղո՜թք սրբազան…
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – *(Բոլորը միասին տեղում քայլելով):*
…Ու պե՜տք է քայլե՜լ ու քայլել համառ՝
Ապրելու հսկա տենչը բեռ արած–
Քայլել անիմաստ մի կյանքի համար,

Մարել ու վառել աստղերը մարած,
Որ տիեզերքի զառանցանքը մառ
Չցնդի՞ երբեք ու մնա – երազ…

(Վերջանում է երաժշտությունը: Մթություն և լույս Չարենց փիլիսոփայի վրա, մյուսները հեռանում են):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում
Թափառում է նա տիեզերական Լաբիրինթոսում:
Անցնում է բոլոր ճամփաները սուտ ու անբեր երկրի,–
Որ պայծառ, մաքուր, դարդերից հետո,– Քո գրկում բերկրի:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – *(Սենյակից):* Բայց ե՞րբ կհասնի հոգիս, որպես սեգ, սրբացած մի զոհ,–
Մայրամուտային Եզերքը կապույտ,– լույս եզերքը քո… *(Դուրս է գալիս):*

(«Չյունապատ լեռներ» – Երգում է երգչախումբը, և պարում են 3 աղջիկ: Երգից և պարից հետո մթություն: Չարենց գրողը մտնում է՝ լամպը ձեռքին, նստում է սեղանի դիմաց):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Լուսամփոփի պես աղջիկ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի պես երազի,
Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում,
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն,
Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի պես աղջիկ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի պես երազի,
Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի պես աղջիկ...

(Այգու փեսարան: Հանդիպում Կ. Քոթանջյանի հետ. Քաղաքացին Չարենցը և Կարինե Քոթանջյանը: Կապույտ ու դեղին լույս):

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Երեք ճաճանչ, երեք երանգ, երեք գույն,
Որ անցան
Քո՜ւյր, կապել են քո աչքերում, իմ հոգում –
Ծիածան:

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,
Կապույտը – թախիծ,
Կապույտը – կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ:

ԿԱՐԻՆԵ – Կապույտը քրոջ աչքերի անհուն առավոտն է թաց:
Կապույտում հոգիս մի հին իրիկուն
Անզոր հեծկլտաց:

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Կապույտը ծեգին աղոթքի կանչող
Ղողանջն է զանգի:
Կապույտը – արցունք, ու կապույտը – ցող
Հոգու, երկնքի:

ԿԱՐԻՆԵ – ՔՈՔ. Կապույտում անսուտ խոսքեր են հոսում
Երկնքից – երկինք:
Հոգիս – Կապույտի լաբիրինթոսում
Սրբացած կնիք:

(Այգու տեսարանը քարանում է):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՈՍ – Այն, որ չի եղել, որ պե՛տք է լինի
Մանկական սրտում–
Հոսում է, որպես լուսավոր գինի–
Հոգու կապույտում:

(Անցում):

Կապույտից հետո և ոսկուց հետո,
Քո՛ւյր, փռվեց ահա իմ տրտմած հոգում,
Որպես երազում ապրած երեկո–
Մի խամրած մշուշ մանուշակագույն

(Մանուշակագույն լույսը խառնվում է կապույտին: Չարենց գրողը սենյակից):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Հիշում եմ հիմա, որ մի իրիկուն,
Ժպտալուց հետո, երբ ոսկի շղթան
Ընկավ ամոթխած գիրկը լռության–
Փռվեց քո դեմքին, իմ տրտմած հոգում
Մի խամրած մշուշ մանուշակագույն…

(Անցում դեպի այգու տեսարան, որը շարունակվում է: Մանուշակագույն լույս: Քաղաքացի Չարենցը և Կարինե Քոթանջյանը մեջքմեջքի կանգնած են):

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ջինջ ճախրում են ղողանջները հորիզոնից հորիզոն

Ինչ տրտում է կապույտ աղջիկ, հրաժեշտի երեկոն:

ԿԱՐԻՆԵ ՔՈԹ. – Տրտմություն ու լույս է իջել քո աչքերում, իմ հոգում:
–Օրհնենք, օրհնենք այս երկրային հրաժեշտի երեկոն…
Եվ թող հալվեն, ծուլվեն, մարեն իրիկնային կապույտում
Մեր կույս հոգու իրիկնային սպասումները տրտում:
Եվ զանգերը անրջորեն հորիզոնից հորիզոն,
Օրհներգելով թող օրորեն հրաժեշտի երեկոն…

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Դու մոտեցար իբրև քույր ու հեռանում ես ահա,
Աղոթք դարձած, խնկաբույր – դու հեռանում ես ահա:
Ինչո՞ւ եկար և ինչո՞ւ անրջացար ու չկաս
Հրաժեշտի մի համբույր – դու հեռանում ես ահա:

(Կարինե Քոթանջյանը հեռանում է):

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – *(Մենակ)* Գուցե սուտ է սերը այս – հրաժեշտի մի երազ,
Քույր, հուշ դարձած հեռավոր, դու հեռանում ես ահա:

(Տեսակադրեր, դեղին, կարմիր լույս: Պար՝ «Սոմա» Տերտերյանի երաժշտության տակ: Ողջ ներսարանի ժամանակ պարը շարունակվում է):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՍ – *(Աջ կողմի փոքր էկրանի դիմացից)*
Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,
Ու սիրտս – գարուն,
Կյանքս երգ չինած՝ քե՛զ էի փնտրում
Այս չար աշխարհում:

Ու չէի գտնում, Սո՛մա, ո՛չ մի տեղ
Քո դեմքը հրե,–
Բայց ես գիտեի,որ մեռնում է նա,
Ով որ քեզ սիրե:

Ու սիրտս տված մահի անուրջին,–
Մա՛հ էի տենչում,–
Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին
Այս աղջամուղջում:

Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհաբերում.
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում:
Եվ քեզնով հարբած՝ կանչեցի նրանց

Հրդեհի պարիճ,–
Եվ կյանքս տվի, պարզ ու սրտաբաց,
Վառվող աշխարհիճ…

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – *(Ձախ կողմի փոքր էկրանի դիմացից)*

Սո՛մա, օ՛ , Սո՛մա, սրբազան խմիչք,
Սրբազան դու սեր,
Ոգևորության դու քաղցր գինի,
Երկունքի գիշե՛ր:

Սո՛մա, օ՛ , Սոմա, օրհնվի՛ թող այն
Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար,
Երբ մարդու սրտում առաջին անգամ
Հրի փոխվեցիր ու Ագնի դարձար...
Վառե՛լ ենք հիմա աշխարհը նորից,
Ուխտի ենք ելել խենթ ու խելագար,
Օրհնվի՛ թող քո անունը նորից,
Որ հուր դարձրեց մեր սրտերը քար:
Հուրդ մեր սրտում թող սուրբ փրփրի.
Խմե՛լ ենք արդեն, ելել ենք պարի,
Խառնել ենք իրար հիմա կյանք ու մահ.
Բռնկվի՛ր կրկին ու կրկին անգամ,
Վառվի՛ր մեր սրտում, ծփա՛ արնաքամ,
Խելագա՛ր Սոմա՛…-
Սոմա՛, գինիդ, որով հարբել,
Խենթ ենք հիմա–
Դա՛ր ու դարե՛ր տվել է մեզ
Երկունք ու մահ:
Պար ենք բռնել խելագար,
Հրդեհում ենք ու վառում –
Այն ամենը ինչ որ կար
Հազարամյա աշխարհում:
Ու արյունը մեր՝ խառնված հրին՝
Վառվում է ագահ,–
Ու լույս է տալիս վառվող աշխարհին
Դեմքդ հեռակա:

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՍ – *(Աջ կողմի փոքր էկրանի դիմացից)*

Ու դառնում է մեր շուրջպարը արագ,
Եվ մեր շուրջպարում – հրդեհի պարում
Հեքիաթ է կյանքը, ու մարդը – կրակ:
Հրթիռ-հրթիռ վեր են թռչում

Կյանքերը մեր կարեվեր,
Ու վառվում է աղջամուղջում
Ողջակիզվող սիրտը մեր:

Ամբոխները զրահապատ
Ծափ են զարկում ու պարում,
Ջա՜հ է դարձել ամեն մի մա՛րդ
Կրակապատ աշխարհում:
Ու պար բռնած ու խելագար
Երգ ենք ասում կրակին –
Ու վառվում է աշխարհը քար
Մրրիկներում կրակի:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ու գալիս են անվե՜րջ, անվե՜րջ
Ամբոխները ահագին,
Որ կյանքը հին ու սնամեջ
Ողջակիզեն կրակին:

Ու հուրն ընկած, անդարձ, անել,
Այրվում է կյանքը քար –
Ու հրդեհում պար են բռնել
Ամբոխները խելագար:

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – *(Ծնկում է Սոմայի դիմաց):*
Սոմա՛, աշխարհում թող կամքդ լինի Տիեզերական:–
Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ
Քո ոսկի հրում–
Բայց վառվի՜ պիտի սիրտս մոխրացած
Քո բոլո՜ր գալիք արշալույսներում… *(պարի ավարտը):*

(Մթություն):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – *(Կլոր հարթակի վրայից):*
Մի՞թե չի ապրելու երկիր Նախրին,
Մի՞թե հեռուներից ոչ մի կրակ չի հասնելու նրան:

(Սառը կապույտ լույս):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – *(Կանգնած է բեմի մեջտեղում մեջքով, հնչում է թավ ջութակի երաժշտությունը):* Որպես լքված թավջութակի ճգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջին քնար,–
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես

Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի-
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողին:

(Երկու փոքր էկարների ետևից վառվում է լույս, և երևում են երկու մարդ՝ իրենց ձեռքին օղակված պարան):

Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մերկ ու երերուն,
Մի գորշ պարան ինչպես տխուր այս օրերում
Ամբոց մորմոքը նահրյան իմ ո՛րբ հոգու:
իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
Ու լռություն մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող:
Ու խանութները գորշ կքած, ու այն մարդիկ.
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ–
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա:
Եվ արդյոք ով է երազել այդքան դաժան–
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ով դարձրեց – մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով մի լուսնահար
Ոչ մի կրակ հեռուներից ձեզ չբերի
Ու ցանկացա, որ չօրհներգե ոչ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նահրի...

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նահրյան իմ երազի վերջին սիրով,–
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ–
Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:

Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,–

(Հանգչում են փոքր էկաների լույսերը, և ավարտվում է երաժշտությունը)։

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ոչ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

(Մթություն։ Ցուցադրվում են արխիվային կադրեր։ Կարմիր լույս)։

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՈՍ – *(Աջ կողմի փոքր էկրանի դիմացից)։*
Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան
Կարմիր վառվեց արևը բորբ, որպես կռվի ազդանշան,
Երբ բռնկվեց արևելքում արևը՝ նոր լույսով վառված–
Դու՞րս նետվեցին կայարանից ամբոխները խելագարված։

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – *(Ձախ կողմի փոքր էկրանի դիմացից)։*
Դեմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արևագույն,
Ու մշուշում շոգիացող, առավոտի մարմանդ միգում,
Կրկեսի պես մի վիթխարի, խայտաբղետ, խայտանվագ–
Եզերքի մոտ ճանապարհի երևում էր քաղաքը քար…

(Կամաց-կամաց մուրևնում է ամբոխը)։

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Աչքերն հառած հեռու՞-հեռու՞ն կարմիր վառվող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արև՞ն էին գնում ամբոխները խելագարված…

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ, ՓԻԼԻՍՈՓՈՍ, ԳՐՈՂ – *(Ասում եմ հաջորդաբար)։*
Դոփու՛մ են, դոփու՛մ են, դոփու՛մ են ձիերը,
(Բոլորը միասին) Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
Պայտերը խփում են, խփում են հողին.–
Անծա՛յր է գիշերը, անհայտ է ուղին։
Գնու՛մ են, գնու՛մ են, գնու՛մ են ձիերը,
Մոտիկ են, հեռու են, դոփում են պայտերը,
Պայտերը դոփում են քունքի՛ս մեջ հիմա.–
Անհա՛յտ է աշխարհը՝ անցնում է ու մահ…

(Ամբոխը, որը սև կտորի մեջ է, և երևում են միայն գլուխները, ևս միանում է դոփյուններին և խոսքին։ Մթնում է։ Լսվում է քամու ձայն և վերափոխվում երաժշտության։ Մրնում են քամու երկու կերպարները)։

ՔԱՄԻ 1 – Քամին,
Աշնան քամին

Թռցնում է դեղին ճժույգները իրա
Ինչ-որ մի տեղ հիմա
Հավաքել է ի մի
Ու փչում է աշնան հոգեվարքի ժամին
Իր ահռելի հոգին մի վիթխարի բերան:

ՔԱՄԻ 2 – Քամին,
Աշնան քամին
Հռնդում է հիմա.
Փոշու հսկա դեզեր փախցնում են իրար՝
Սարսափահար դարձած նախիրների նման
Քամին,
Աշնան քամին...
Քաղաքը գորշ ու մութ:
Ամեն անցորդ դեղին զառանցանք է հիմի,
Որ իրիկվա մեգին երազվել է քամուն:
Փողոցները երկա՜ր,
Ու ճանճրալի, աշնան անձրևների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժան, անհրապույր, չարկամ,–
Որքա՜ն, որքա՜ն որքա՜ն ահավոր են հիմա:

ՔԱՄԻ 1 – Քամին,
Աշնան քամին:
Մոլորվել է այստեղ.
Մահվան սարսուռ առած վիրավոր է նա մի:
Ու կարող է հիմա ամեն արգելք քանդել:

ՔԱՄԻ 2 – Քամին,
Աշնան քամին...
Հռնդում է,
Փչում,
Ահեղացունց ցնցում ցուցանակները չոր.
Ջրնգում են ահից պատուհանները հնչուն,
Ու թռչում է քամին,– երկաթաթև թռչուն,–
Ջարհուրելի, զազիր փողոցների միջով...

Խելապտույտ, անմարդ փողոցներում կորած,
Ջարհուրելի ոխով ու զայրույթով իրա,
Որպես ոսոխ տեսած մի վիթխարի հովազ
Հայացքներում՝ փոշի և արնամուժ ավազ,–

Քամին, աշնան քամին հարձակվում է ահա,
Անօգնական կքած բուլվառների վրա:

ՔԱՄԻ 1 – Ու բուլվառի հիվանդ ծառերը որբ ու խեղճ,
Ցնցոտիներ հագած պառավների նման,–
Ծվատում են նրանք դեղին մազերն իրենց,
Գլուխները ցնցում ու մորմոքում հիմա:

Ծառերը ծե՛ր, հիվա՛նդ,
Ծառերը ծուռ ու չոր
Մուրացկանների նման ծառերը խեղճ ու մերկ.
Քամին ծեծում է ծեր գլուխները նրանց
Ու ճչում է մահվան չարագուշակ ճչով.-
Երբե՛ք,
Երբե՛ք,
Երբե՛ք...

ՔԱՄԻ 2 – Օ՛, գթացե՛ք հիմա.
Այդ ծառերին՝ խաչված բուլվարներին ամա,
Օ, փրկեցե՛ք նրանց հարվածներից քամու,
Որ բերում է նրանց մահվան մորմոք ու մահ:

Օ՛, գթացե՛ք հիմա.
Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք.–

ՔԱՄԻ 1 – Այս ահռելի, դաժան, հոգեվարքի ժամին՝
Պիտի դառնա որ ձեր հոգիները խուժե
Քամին,

ՔԱՄԻ 2 – Աշնան քամին...

(*Կադրեր: Լևին: Երաժշտություն*):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՍ – 1919 թվական: Հոկտեմբերի 18: Երևանում կարդացվում է առաջին հրապարակային դասախոսությունը Եղիշե Չարենցի ստեղծագործության վերաբերյալ: Հիշեցնում ենք հայ գրասերներին, որ այսօր՝ ժամը 8-ին, կայանալու է Հայաստանի գրական ընկերության հերթական գրական երեկոն, ուր Նիկոլ Աղբալյանը խոսելու է:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Մի լուրջ քննադատ մի օր
Սարսելով դահլիճն ու ֆոյեն–
Ավետեց ամբողջ աշխարհին

Ն. ԱՂԲԱԼՅԱՆ – Ծնվել է մի մեծ պոետ... Եղիշե Չարենց:

(Դրսում լսվում է Չարենց քաղաքացու ձայնը)։

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ես եմ հիմա մի պոետ, ու իմ անունն է Չարենց։
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ընկեր Աղբալյան, մեկն ուզում է Ձեզ տեսնել։
ԱՂԲԱԼՅԱՆ – Ներս թող։

(Ներս է մտնում Չարենց քաղաքացին, ետևանի մուր ևսւրած է Աղբալյանը)։

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Բարև Ձեզ։
ԱՂԲԱԼՅԱՆ – Նստեցե՛ք։ Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում։
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ես Եղիշե Չարենցն եմ։ Լրագրում կարդացել եմ դասախոսության մասին, եկել եմ Ձեզ մոտ։
ԱՂԲԱԼՅԱՆ – Ուսուցի՞չ եք։
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Այո՛, Ղարսի շրջանում։

(Տեսարանը քարանում է և մթնում)։

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՍ – *(Աջ կողմի էկրանի դիմացից)* 1920 թվական։ Հունվարի 26։ Եղիշե Չարենցը նշանակվում է լուսավորության և արվեստի հատուկ հանձնարարություններ կոմիսար։

(Լույսը վերանում է, բացվում է մյուս տեսարանի վրա, որտեղ ևսւրած է Չարենց գրողը գրասեղանի դիմաց։ Ներս է մտնում Արմենուհի Տիգրանյանը)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ – Բարև Ձեզ։ Կարելի՞ է, ընկ. Չարենց։
ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂԸ – Խնդրեմ, համեցե՛ք։
ԱՐՄԵՆՈՒՀԻ – Ինձ ընկ. Աղբալյանն է ուղարկել։ Ուսումնական պլանն էր ուզում։ Ես լսել եմ Ձեր վերջին տպագրված գրքի մասին։ Բայց չունեմ։ Չէիք բարեհաճի մեկ օրինակ ինձ նվիրել։
ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Իհարկե։ Խնդրեմ, Արմենուհի՛։

(Վերցնում է և գրքի վրա գրում է այն բանաստեղծությունը, որը պետք է կարդա։ Արմենուհին գնում է, բայց դուրս չի գալիս կանգ է առնում, բացում է գիրքը և կարդում։ Քարանում է։ Կարդում է Չարենցը ջութակի երաժշտության ուղեկ)։

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂԸ – Ես ինչպե՞ս Ձեզ չսիրեմ.– Դուք արվեստ եք ու հոգի։
Օ, կարելի՞ է արդյոք պրոֆիլը ձեր չսիրել։
Ով երգ ունի իր սրտում ու սովոր է գեղեցկի՝
Նա պարտավոր է Ձեզ բյուր. հազա՛ր սոնետ նվիրել։

Դուք այնպես մե՛ղմ եք խոսում։ Երբ դուք կարդում եք, տիկի՛ն,
Ձեր շրթունքները գունատ նմանվում են հասմիկին։
Եվ Ձեր աչքերը, գիտե՞ք, առանց ներքին կրակի,
Լուսաշող են՝ Ձեր կրծքի քարերի պես թանկագին։

Իսկ երբ ականջ են դնում ես Ձեր թեթև քայլերին–
Թվում է ինձ, թե նոքա տրիոլետներ են երգում
Եվ այդ երգով հմայված՝ սիրտս տխուր է լռին:

Եվ դուք գիտե՞ք, որ սիրուց հիվանդացած իմ հոգում
Ես միշտ լսում եմ թեթև, թավ թրթիռներ ջութակի-
Երբ համբուրում եմ ես Ձեր բարակ մատներն ապակի:

(Մթության միջից ուղղորդված լույս):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – *(Աջ կողմի էկրանի դիմացից):* Հանրային կրթության և արվեստի պարոն մինիստրին: Նույն մինիստրության պաշտոնյա Եղիշե Սողոմոնյանից: Խնդիր. «Սրանով պատիվ ունեմ խնդրելու, որ ինձ հունիսի 1-ից ազատ կացուցեք մինիստրությանդ հատուկ հանճնարարության կոմիսարի պաշտոնից: Հատուկ հանճնարարության կոմիսար՝ Եղիշե Սողոմոնյան: 1 հունիսի, 1920 թվական: Երևան»: 1920 թվականի կեսերին Չարենցը դաստիարակ-ուսուցիչ է Երևանի հիվանդ երեխաների ամերիկյան մանկատանը կից դպրոցում:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Քաղցած են երեխաները, մերկ են, բայց պիտի սովորեն հայոց լեզուն: *(Մտնում են երեխաները նրանց դիմելով):*
Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դարերում հին: *(Երեխաները հեռանում են):*

(Չարենց գրողը վերադառնում է իր գրասեղանի մոտ: Մտնում է Լեյլին ճամպրուկով: Սովորական դեղին լույս Չարենց գրողի սեղանին):

ԼԵՅԼԻ – Լսել եմ, ընկ. Չարենց, ամուսնանում եք Արփենիկի հետ:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Այո՛, Լեյլի, Արփենիկը լավ աղջիկ է, նա սուրբ է, ես նրան այնքան եմ սիրում, որքան Շամիրամը Արային: Չեմ իմանում, թե ինչու դուք էդպես մի օրվա մեջ ինձ էդքան հարազատացաք:

ԼԵՅԼԻ – Ես մի բանաստեղծություն եմ գրել, ուզում եմ կարդալ.
Փողոցները մարդաշատ, փողոցները ամայի
Շրջեցի ես երկար, ես երկար:
Շուրթերս եմ խածել, որ չլինի թե լայի,
Որ չլինի թե սիրտս հեկեկար...

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Հոյակապ է էս քո նոր բանաստեղծությունը:
Шедевр! Шедевр! Шедевр! *(Գրում է թղթի վրա և տալիս Լեյլիին):*

ԼԵՅԼԻ – Hy, ընկ. Չարենց, ես գնամ: Մոսկվա եմ մեկնելու: Գործերով:

(Լեյլին դուրս է գալիս: Փոխվում է տեսարանը: Ներս է մտնում Արփենիկը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ Չարենց գրողը: Չարենց գրողը ասում է տող առ տող, իսկ Արփենիկը կրկնում է: Քայլելով գալիս են դեմ դիմաց կանգնում):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ ԵՎ ԱՐՓԵՆԻԿ – Ինչքան որ հուր կա իմ սրտում բոլորը քեզ:
Ինչքան կրակ ու վառ խնդում բոլորը քեզ,
Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա,
Դու չմրսես ձմռան ցրտում բոլորը քեզ:

(Չարենը գրկում է Արփենիկին, և դուրս են գալիս: «Երազի» տեսարանը երգչախմբի հետ: Տեսարանը կատարվում է «Երազ տեսա» բանաստեղծության վրա գրված երգով):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Հաճելի՞ է, չէ՞, էլի ձեզ Տերյանի երգը թքոտ,
Բայց էսօր հոգիս թող ձեզ լիզի երկաթե թեժ...

(Դռան զանգ):

ՉԱՐԵՆՑ ՉԱՐԵՆՑ – Արփենի՛կ, տես՝ ո՞վ է զանգում դուռը:

(Գալիս են Ա. Վշտունին, Գ. Աբովը):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – «3-ի դեկլարացիան»: Կրակ Տերյանի և սալոնական կանանց վրա:

Գ. ԱԲՈՎ – Նոյն էր միևչև երեկ
Նստել էր վերը
Արարատի գլխին,
Էսօր վար ենք բերե,
Որ խուղերը մաքրե
Աշխատավոր խալխի:

Ա. ՎՇՏՈՒՆԻ – Եվ զանգահար,
Զանգակատան կտուր,
Ու զանգը տուր:

ԱԲՈՎ – Հիշո՞ւմ եք, չէ՞,
Ձեր սենյակի տեսքը լիճե...

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ի՞նչ պետք է լինի արդի հայ բանաստեղծության բախտը:

Գ. ԱԲՈՎ – Պետք է մտածել հայ պոեզիայի հեռանկարների մասին:

Ա. ՎՇՏՈՒՆԻ – Վաղը՝ երեկոյան ժամը 8-ին, կկայանա «Շեվորահանդես», դասախոսություն, արտասանություն երեքի, մուտքը ազատ է և ձրի բոլոր քաղաքացիների համար անխտիր:

(Մի երեխա հայտարարություն է անում նույնը և շրջում է դահլիճում: Երևան: Ասրաֆյան փողոց: Ասրաֆյան փ. պեսարաևը: Ամիրխանյանի «Տաղ անձնական» երգի ներքո ներս է մտնում պարի խումբը և պարում: Երգի դադարի պահին ներս են մտնում մյուս դերակատարները: Լույսերի խաղ):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ընկերնե՛ր:

Էս ես եմ սարքե ձեզ համար
Աջողել եմ կամ շատ, կամ քիչ
Ոչինչ:
Բավական է, ինչքան ձեզ խաղան
Անտիգոնե,
Նամուս,
Օթելլո, Քին:
Ինչների՞ղ է էսօր հարկավոր
«Դատաստան», «Ջանգ ջրասույզ»,
Էսպիսի խոսքեր ճռճռան
Էդպիսի շորեր մե թավուր,
Ձեր պապն է տեսե երազում:
Մեկ է: Մերը կարմիր:
Հասարակ է՞:
Ընչի հասարակ:
Աշխարհքն է էսպես է միշտ էղե:
Ի՞նչ, ուրի՞շ մասալ են ձեզ արած...
Սուտ է:
Ձեր գլուխն են եղե:
Մենք հիմի սրանց կտանք խալխին
Էդ բոլոր խաղերը լկտի...

(Աղմուկ, աղաղակ):

– Ընկերնե՛ր, ես գնամ էստեղից, թող իրենք խաղան:

ՄԵՆՇԵՎԻԿ – Ես – նախագահ:

Լսեցե՛ք: Թագավորը չկա.
Մենք հիմի տնով-տեղով
Ընտրելու ենք էստեղ սահմանադիր ժողով:
Ընկերնե՛ր: Ում պիտի ընտրեք:
Իհարկե նրան, ով խոստանում է ձեզ տալ
Հաց, ջուր, տուն, 8 ժամվա աշխատանք.
Ձայն տվեք №1-ին:

ԲԱՆՎՈՐ – Товарищи, ընկերներ.

Էսպես: Թագավորը չկա.
Ձայն տվեք №4-ին.
Ժողավրդին էս 2-ը
Ճախեցին անփող:

(Մի խումբ պիոներական վզկապներով, Խորհրդային Հայաստանի և Խորհրդային միության դրոշներով, թմբուկի հնչյունների տակ անցնում է՝ ինտերնացիոնալ երգելով):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ինչ որ չի, չի երազել
Դեռ ոչ մի պոետ - աստղաբիլը,
Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ
Արև՛ը խրեմ՝ փողկապիս:
Առնեմ որպես սինի,
Երկինքը աստղերի խաղով
Ու տանեմ այն հարսանիք
Որպես միրգ՝ մի ճուք խաղող:
Հասկանո՞ւմ ես, ասում է, Չարենց,
Ես ուզում եմ նրանց պես լինեմ...
Եթե դու պետքական ես, պոետ,
Երգերի տեղ երկրներ շինե:
Տողերդ կամուրջներ թող լինեն,
Օղակեն գետերը զնգուն,
Որ անցնեն հազար տարիներ
եվ հազարն էլ թափվեն Ջանգուն:
Թե կարող ես – այնպես արա դու,
Որ այստեղ... նոր քաղաք բուսնի...
Ես սիրում եմ քեզ, Երևա՛ն,
Ինչպես մեր այն հին հեքիաթում
Դավթին սիրում էր իրա ձին:

(Հնչում է նույն երգի շարունակությունը, և երաժշտության ներքո բոլորը հեռանում են պարելով: Չարենց գրողը մնում է մենակ: Լույսերի խաղը դադարում է և դառնում սովորական, սառը):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում,
Որ ես իզուր վիրավորում եմ իմ խեղճ
Ու խայտառակ գոյությամբ
վեհությունը աշխարհի...
Եվ ո՞վ ասաց ինձ – մի կատու...
–Ինձ մեղադրում են հազար ու մի մեղքում, իսկ իրենք լենինիարներ են, իսկ ո՞վ է Լենինին ինձանից լավ երգել: Ոչ ոք: Տղամարդ են, թող մի

«Լենին ու Ալին» գրեց: Թե չէ ասում եմ՝ անկումային, հա, անկումային: Իրենք են անկումայինը, Черт побери: Ես հերքեցի Տերյանին և ստեղծեցի իմ գրականությունը, բա ինչո՞ւ դուք ինձ չեք հերքում, եթե ուզում եք ձեր գրականությունը ստեղծել: Ասենք՝ ես ի՞նչ խեր տեսա հերքելով, որ դուք ինչ խեր տեսնեք: Ի՞նչ հերքել: Տերյանին ո՞նց կհերքես: Սխալ տպված լուր է, հողված է Տերյանը, որ հերքես: Տերյանը մի ամբողջ կուլտուրա է: Կուլտուրան հերքե՞լ կլինի: Պետք է առաջ անցնել, յուրացնել և առաջ անցնել: Վայ նրան, ով հեղափոխության, էլեկտրականության, մոտորների լենինյան մեր դարում կնստի եզասայլը: Տեղ չի հասնի նա, չի դիմանա ժամանակի քննությանը:

– Մեռա ձեզ խելք սովորեցնելով:

Օ՜, դուք ասպետներ չնչին դավերի
Ի՞նչ եք քչփչում ճանկերդ սրած,
Ես ոգով հիմա պինդ եմ ավելի,
Ավելի տոկուն, քան էի առաջ,
Եվ եթե երգով ես այլ եմ հիմա,
Այլևս այն չեմ,
Նշանակում է՝ նոր հուն եմ մտել,
Ավելի խորունկ, ավելի անշեղ:

(Մթություն, լույս Չարենց փիլիսոփայի վրա):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՈՍ – 1930 թվականի հունվար: Լույս է տեսնում «Էպիքական լուսաբաց» ժողովածուն:

(Տեսարան Չարենցի սենյակում: Լույս Չարենց գրողի վրա: Կարդում է գիրքը):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Նվիրում եմ այս գիրքս հիշատակին կնոջս, ընկերոջս, հերոսական բարեկամիս՝ Արփենիկ Չարենցին՝ Տեր-Աստվածատրյանին՝ վախճանված 1927 թվականի հունվարի 1-2 գիշերը Երևանի առաջին հիվանդանոցում:

(Հնչում է երաժշտությունը՝ դաշնամուր):

Նայադների՜ նման, նայադների՜ նման
Կարոտներիս ձայնով կանչում է ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք
Եվ թողնելով մորմոք ու կորուստի կսկիծ...

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՈՍ – *(Կլոր հարթակի վրայից)* 1931 թվականին Չարենցը ամուսնանում է Իզաբելլա Նիազյանի հետ:

1932 թվականին Եղիշե Չարենցը նշում է գրական գործունեության 20-ամյակը բարեկամների փոքր շրջանում:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – 20 տարի... Իզաբելլա, Իզաբելլա: Մի փայտի կտոր, մի բան բեր:

ԻԶԱԲԵԼԼԱ – Սա կլինի՞, Եղիշե՛:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Կլինի, կլինի, տուր: Մարտիրո՛ս, Մարտիրո՛ս...

ԻԶԱԲԵԼԼԱ – Բայց կլսի՞:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Կլսի, կլսի: Տա՛ր, տեղը դի՛ր:

(Մտնում է Մ. Սարյանը):

ՄԱՐՏԻՐՈՍ – Բարև, բարև, Չարե՛նց:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ա՛յ տղա, էսօր գրական գործունեությանս 20-ամյակն է լրանում: Մի մի թաս բան չխմե՞նք: Իզաբելլա՛, գնա իմ էն կոնյակից բեր՝ խմենք:

(Իզաբելլան բերում է կոնյակը: Երեքով նստում են սեղանի մոտ):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ճիշտ է, էսօր մենք քիչ ենք, բայց մեր մեջ շատ ջերմություն կա: Խմենք:

ՄԱՐՏԻՐՈՍ – Շնորհավորում եմ գրական գործունեությանդ 20-ամյակը, Չարենց, բայց ափսոս կառավարությունը չի նշում:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Չնչին, ինչպես Արարատին նետած քար՝
Դավերը սև մարդուկների այդ անկար—
Օ, չըհասած քղանցքներին անգամ քո՝
Վայր են թափվում համայնացած քո կամքով —
Եվ առհավետ կորչում անզոր ու անկար,
Ինչպես անհաս Արարատին նետած քար...

(Լսվում է երեխայի լացի ձայն):

Իզաբելլա՛, տե՛ս՝ ինչու են լալիս երեխաները:

(Իզաբելլան հեռանում է):

Մարտիրո՛ս, չես պատկերացնի ի՜նչ հրաշալի բան է ծնողական զգացմունքը:

ՄԱՐՏԻՐՈՍ – Դե մի-մի թաս էլ լցրու՝ խմենք էրեխեքի կենացը:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Մեր արյան շարունակողների կենացը: *(Խմում են):*

ՄԱՐՏԻՐՈՍ – Դե լավ, ես գնամ: Գործեր ունեմ, Չարե՛նց:

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Շնորհակալություն, Մարտիրո՛ս, որ եկար:

(Չարենց գրողը վառում է ծխախոտը, նստում է աթոռին):

...Եվ այսպես, ահա ստեղծագործական աշխատանքով հայրենի հերկը խոփով ոգեկան հերկելուց հետո տոնում եմ իմ հոբելյանը մենակ ու հա-

լածական…, պոետ՝ աքսորյալ սեփական հայրենիքում, հերկի եզերքին հայրենական երգի՝ ամայացած դաժանագույն եռանդով սեփական նախարարների և պետերի՝ հայրենի երգակիցների, դեռ մնացած մի քանի խեղճերի հախուռն ցնծության ներքո...

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՈՍ – *(Նայած է բեմի ձգրիհ՝ աջ կողմում):* 1937 թվականին Իզաբելլան ստանում է Չարենցի գրած վերջին նամակը բանտից:

(Մթություն: Լույս Իզաբելլայի վրա: Կարդում է նամակը: Հնչում է ձայնը):

«Ինչպե՞ս եմ կարոտել, Բոժիկին, Ադոկին, է՞հ, լավ է՝ չգրեմ: Աստծով կհանդիպենք իրար: Ամո՛ւր եղիր, հարազա՛տս, եթե նույնիսկ փողոց գցեն: Չէ՞ որ միայն մենք չենք տառապում, այլ շա՞տ –շատերը, նույնիսկ մարդիկ, ինչպես մենք ենք: Միայն աշխատիր պահել քեզ և երեխաներին: Ես քեզանից պահանջում եմ միայն դա: Թող Աստված ձեզ պահապան լինի, չէ՞ որ մենք, հարազա՛տս, ոչ ոք չունենք: Համբուրում եմ ձեզ շատ, միլիո՛ն անգամ և ավելին»:

ԻԶԱԲԵԼԼԱՆ – Համբուրում եմ ձեզ շատ, միլիո՛ն անգամ և ավելին:

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓՈՍ – Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:

(Իզաբելլան բեմի վրա լամպի լույսի տակ գիրք է կարդում):

Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր,
Տարտամ շարժումով գիրքը կգոցեն,
Եվ թախիծը խոր հուշս կողողե:
Եվ գուցե միայն սենյակում մի խուլ
Գլուխը թեքած պատկերիս վրա՝
Կնայի մի կին աչքերիս տխուր,
Եվ կարցունքոտվեն աչքերը նրա:–

(Չարենց փիլիսոփան գալիս է և կանգնում է հարթակի վրա):

Եվ ինչպես կյանքում՝ տարինե՛ր առաջ,
Հուշերում հանկարծ անցյալը բուրի,
Երազներում գուցե իմ անցած
Եվ արդ իմ հառնած գրքում հուշերի...
Այն, որ ե՛ս էի, որ ի՛մն էր առաջ,
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում
Եվ ո՛չ մի գրքում՝ աշխարհում գրած,

(Իզաբելլան հեռանում է բեմից)։

Եվ ո՛չ մի գրքում։

(Փիլիսոփա Չարենը դուրս է գալիս, մտնում է գրող Չարենցը և կանգնում կլոր հարթակի վրա)։

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Եվ ես դիմում եմ քեզ, ով Արարիչ,
Ինչպես վկան մեր հին, Նարեկացին,
Քանզի կարոտ ոգու և անարյուն հացի
Տեսնում եմ լոկ Կացին արեգնացյալ։
Ինչո՞ւ այսպես անօգ ես մնացի,
Եվ այնքան բորբ՝ հանկարծ անվերադարձ հանգով
Անդրդվելի հավատս դեպի գալիքն անգամ
Եվ ինձ գերող ներկան դարձավ անծիր

Չե՞ս զարմանում, Տեր իմ, որ ես դիմում եմ քեզ,
Ես՝ բանաստեղծս անահ և մարտնչողս արի,
Տարօրինակ է, չէ, որ ես դիմում եմ քեզ,
Աստվածային վերին ճանապարհի,

Այլևս ինչ մնաց քեզ խնդրելու կյանքից,
Օ՜ անհանգիստ սիրտ իմ ու անկարող
Ա՜խ, խոնջենքի միայն անեզրական կարոտ,
Խաղաղություն անխոհ, մահվան հանգիստ...

(Մթնում է։ 3 Չարենցները բեմի վրա են։ Ուղղորդված լույս միայն իրենց վրա)։

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ և ինքնուրույն։
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Իմ օրերում ես ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն։
ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Իմ օրերում դժվար էր շատ լինել հաստատ ու մնայուն. –
Իմ օրերում պատմությունն էր յուրաքանչյուր բառիս նայում։
ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Բայց թե կա երգերում իմ գեթ մի շեշտ կամ բառ իմ օրերից։
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Ես կմնամ հար ու հավետ, ես կարթնանամ մահից նորից...
ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Մեծ եմ և վեհ իմ օրերով – ես այդ գիտեմ – հուր հավիտյան։
ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Ողջո՜ւյն իմ երգ։
ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Իմ խնդություն։
ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Իմ օրերի անհուն մատյան... *(Մթնում է)։*

(Հնչում է ձայնը)։

ՁԱՅՆ – Ծնվում է, աճում է մի բան, յուրաքանչյուր վայրկյան կյանքում,
Մեռնում է, կորչում է մի բան, յուրաքանչյուր վայրկյան կյանքում,

Բայց ծնվողը ծնվում է պայքարով, պայքարով է մեռնում և մեռնողը,
Եվ այսպես կոփվում է ապագան յուրաքանչյուր վայրկյան կյանքում:

(Լույսերը հանգչում են, հավաքվում են բոլորը և կանգնում հանդիսասրեսի շարքերի միջև, հնչում են զանգերը, աղոթք «Ես իմ անուշ Հայաստանի»):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ես իմ անուշ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում:

(Շշուկով կրկնում են բոլորը, ովքեր կանգնած են հանդիսասրեսի շարքերի արանքներում):

ՉԱՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻ – Մեր հին սազի ողբանվագ, լացակումած, լարն եմ սիրում:

(Կրկնում են բոլորը):

ՉԱՐԵՆՑ ՓԻԼԻՍՈՓԱ – Արնաքամած ծաղիկների ու վարդերի բույրը վառման:

(Կրկնում են բոլորը):

ՉԱՐԵՆՑ ԳՐՈՂ – Ու ճախրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

(Կրկնում են բոլորը: Նորից զանգեր. վառվում են բոլոր լույսերը, և բանաստեղծության շարունակությունը ամբողջությամբ ասում են բոլորը միասին):

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև,
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ո՛ւր էլ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՞ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան - յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

(Երեք Չարենցները գնում են դեպի բեմի խորքը. մթնում է. Չարենց գրողի դիմանկարը՝ կաղրով մեծ էկրանին):

ՎԵՐՋ

ՑՈՒՑԱԿԸ

Ըստ Աղասի Այվազյանի
«Ցուցակը», «Կնուտ Համսունի երկու ոճական սխալը»,
«Հայ հայը» և «Ալիծը» պատմվածքների

Սցենարի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Նկարագրություն

Աղասի Այվազյանի «Ցուցակը» բեմադրության սցենարը ստեղծվել է նրա 4 ստեղծագործությունների համադրման հիման վրա՝ «Ցուցակը», «Կնուտ Համսունի երկու ոճական սխալը», «Հայ հայը» և «Ալիծը»: Հիմքում ընկած է «Ցուցակ» ստեղծագործությունը, որտեղ օգտագործված են հասարակության տարբեր շերտերը, որոնք գնում են քար նետելու Հիսուսի վրա, յուրաքանչյուրը՝ իր մեղքի համար: Մյուս ստեղծագործություններում բացելով հայ մարդու պատմականորեն կատարած մեղքերն ու սխալները՝ կարծես հիշեցվում է մարդկությանը, որ վերլուծի, քննի իր կատարած սխալները և աշխատի անել միայն լավը: Ողջ ներկայացման դեկորացիան էկրանն է, որի վրա խաչված Հիսուսն է: Օգտագործվել է «Էնիգմա» խմբի երաժշտությունը, բոլոր կերպարները բոբիկ են՝ բացի մեկից, նա Թարսիսն է՝ գրող, փիլիսոփա: Ամբողջ ներկայացումը լույս ու ստվերի մեջ է և ապահովում է կերպարների շարժը բեմում:

Ներկայացումը մասնակցել է «Արտ-ֆեստ», «Հայ ֆեստ» միջազգային և «Այվազյանական» հանրապետական թատերական փառատոներին:

Պրեմիերան եղել է 2008 թվականի հոկտեմբերի 8-ին:

Հագուստների ձևավորումն իրականացրել է ՀՀ վաստակավոր նկարչուհի Անահիտ Հարությունյանը:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Թարսիս – գրող փիլիսոփա
Հակոբ – քաղաքական գործիչ
Ռեբեկա – անբարոյական կին
Սաղաքիել – վաճառական
Աքազ – անտուն հիվանդ, թափառաշրջիկ
Զաքարիա – պետական համակարգի աշխատող
Հուդա – դավաճան
Ալիծ – տնայինն տնտեսուհի
Ծերունի
Սուլթան Համիդ
Հիտլեր

Բեմում էկրան է, և ուրիշ ոչինչ: Կիսամութի միջից գրողը, աթոռը քաշելով, բերում և դնում է բեմում, նստում է մեջքով հանդիսատեսին, էկրանին Աղասի Այվազյանի նկարչական գործերն են՝ տեսանյութային տարբերակով և երաժշտության ուղեկցությամբ, հետո հնչում է հետևյալ տեքստը.

«Կա սևահեր հայ, և կա շիկահեր հայ, կա տաքարյուն հայ, և կա սառնասիրտ հայ, կա գործարար հայ, և կա անօգնական հայ… Բայց կա մեկը ևս, որ իմ մեջ մի մխմխացող զվարթակերպ տխրություն է առաջացնում: Դա Հայ հայն է: Նա երբեք չի մտածում, թե ինքն ինչ է: Հայ հայը երբեք չի վհատվում. ամեն ինչ նրա շուրջն է, ամեն ինչ իրենն է, և ինքը ոչինչ չունի: Հայ հայը գիտեր, որ Հայաստանը մի շնորք ունի, և այդ շնորքը բաղկացած է մասնիկներից: Խոսում էին՝ վիրահատել են Հայ հային, նրա միջից հանել են նախանձի մարմնի մասը, ինչպես հանում են կույր աղիքը: Թեպետ ես կտրվածքը չտեսա նրա վրա. հավանաբար վիրահատությունը Հայկ Նահապետի կողմից էր կատարված: Չեռք էին առնում, ծաղրում էին Հայ հային, իսկ նա գոհ խնդմնդում էր քթի տակ: Նրա քթի տակ շատ ավելի իմաստություն կար, քան ոմանց գլխի մեջ: Ու այդպես քթի տակ, անաղմուկ նա կուտակում էր իր հարստությունը՝ Հայաստանի շնորհքը»:

Տեսանյութի ավարտից հետո գրողը վեր է կենում, աթոռը տանում է ետևաբեմ, մտնում է բեմ:

ԳՐՈՂ – Իմ առջև դրված են Հայ հայի հատորները: Նա, գլուխը կախ, ամբողջ իր կյանքի ընթացքում հավաքում էր հայերեն բառեր: Ո՞ւմ համար, ի՞նչ նպատակով… Այդ հարցը մի այլ ոքի մեջ կարող է ծագել, բայց ոչ Հայ հայի: Տառերը բացում էին իր գեների սկզբնաստեղծ և ի վերուստ սահմանած կազմախոսությունը: Այդ տառերն ու բառերը նկարագրություններ էին այն խոչ ու խութ արահետի, որ տանում էր իր կյանքի հազարամյակների սկիզբը, ու էլի նրա նախագո ծայրը գնում, արմատանում էր Աստվածների մոտ: Ու Հայ հայը ոչ թե հիսուն տարեկան էր այդժամ, այլ մշտամնա ոգու կյանքի այդքան երկար ժամանակի մեջ:

Մտքերը տանում են ինձ հեռուն, և ես հիշում եմ, թե ինչ մեծ ջանքերի գնով վերջապես հաջողվեց նորվեգացի Կնուտ Համսունին տեսակցության իրավունք ստանալ սուլթան Աբդուլ Համիդի հետ:

(Գրողը շուռ է գալիս դեպի էկրանը, մեջքով դեպի հանդիսատեսը և սլմվերային Աբդուլ Համիդի հետ զրուցում է):

ԳՐՈՂ – *(Դեմքով դեպի էկրանը)* Ի՞նչ տեսաք մեր երկրում:

(Էկրանի վրա երևում է սլմվերով, և ձայնը արձագանքվում է):

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ – Ամեն ինչ չքնաղ էր, աներևակայելի:

Դո՛ւք՝ եվրոպացիներդ, ցասկոտ հայացքով եք նայում մեր երկրին. շատ քչերն են մեզ ճիշտ հասկանում:

ԳՐՈՂ – *(Դեմքով դեպի հանդիսատեսին):* Երևի թե այն պատճառով, որ շատ քչերն են ընդհանրապես լինելիությունը ճիշտ հասկանում:

30 տարի անց Կնուտ Համսունը կատարեց իր երկրորդ ցանկությունը. նա կանգնած էր Ադոլֆ Հիտլերի դիմաց:

ԳՐՈՂ – *(Դեմքով դեպի էկրանը):* Ի՞նչ տեսաք մեր երկրում:

(Էկրանի վրա երևում է ալիվերով, և չայնը արչագանքվում է):

ԱԴՈԼՖ ՀԻՏԼԵՐ – Ամեն ինչ չքնաղ էր, աներևակայելի:

Դո՛ւք՝ եվրոպացիներդ, ցասկոտ հայացքով եք նայում մեր երկրին. շատ քչերն են մեզ ճիշտ հասկանում:

ԳՐՈՂ – *(Դեմքով դեպի հանդիսատեսին):* Երևի թե այն պատճառով, որ շատ քչերն են ընդհանրապես լինելիությունը ճիշտ հասկանում:

ԳՐՈՂ – 1950 թվականին նոբելյան մրցանակի դափնեկիր 90-ամյա Կնուտ Համսունը փորձում էր վերականգնել իր զրույցները սուլթան Աբդուլ Համիդի և Ադոլֆ Հիտլերի հետ, ու մի փոքրիկ կնճիռ էր առաջանում նրա ուղեղի մեջ այդ հանդիպումներից: Ու լոկ այդ կնճիռն էր ուզում մտաբերել Համիդի ու Հիտլերի դեմքերին առաջացած սրտմտանքի հազիվ որսալի արտահայտության պատճառը… Ի՞նչ ասաց ինքը, ի՞նչ սխալ թույլ տվեց նախադասության մեջ խոսքի վարպետը, որ կարող էր այդ բարեհամբույր, ոգևորված զրույցի մեջ անհարթություն առաջացնել, և հիշեց, ամբողջ երկու զրույցներից միայն այդ հիշեց. Համիդի հետ զրուցելիս «հայ» բառը օգտագործեց, Հիտլերի հետ զրուցելիս՝ «հրեա» բառը:

Կնուտ Համսունը ժպտուն կշտամբանքով ինքնաքննադատաբար մտածեց. «Ինչպե՞ս կարելի էր մի սխալը երկու անգամ թույլ տալ»:

Ես զարմանում եմ, թե ինչպես մարդիկ դարեր շարունակ իրենց գործած մեղքերի համար մեղավորներ են փնտրում՝ չխնայելով անգամ Հիսուսին:

(Հնչում է երաժշտությունը, մտնում է ժողովուրդը և գրողին տանում իրենց հետ՝ մեջքով դեպի հանդիսատեսը քայլելով):

ՌԵՔԵԿԱ – *(Ժողովրդի խմբից դուրս գալով):* Ժողովուրդը կանչում է… Ինչ էլ լինի, կգնամ: Հովհաննեսն այնտեղ կլինի: Կգտնեմ

դրան: Ասում է՝ հոգնել է ինձնից, զզվել է իմ հետապնդումներից: Դեռ էդ ինչ է որ: Վրեժս կլուծեմ: Հըլա դեռ հարցնում է. «Ի՞նչ է ինձնից ուզածդ, ի՞նչ: Սերս քեզ պետք չի… էլ ի՞նչ ես ուզում»: «Թո՛ւի,– ասում եմ նրան, սեր: Ինձ քո սերը պետք չէ: Դու ինձ ոտից գլուխ ես պետք: Թեպետ դու էլ ինձ պետք չես…, թեպետ դու դեռ կիմանաս, թե ում ես լքել, կիմանաս՝ ումից ում մոտ ես գնացել: Կհիշես, որ ես Ռեբեկան եմ: Ես քեզնից լավն եմ: Ես երդվել եմ, որ քո կողքին էլ ոչ մի կին չի լինելու…, ու կմեռնես մենակ, մի կաթիլ ջուր տվող էլ չի լինի…, ես հիմա հետապնդելու եմ, բամբասելու եմ, թունավորելու եմ քո խեղճուկրակ գոյությունը, նշանակվելու եմ քեզ մարդկանց առաջ… կգտնեմ քեզ ուր էլ որ լինես, ցանկացած ամբոխի մեջ: «Գիշատիչ աչքեր» ունեմ, հա՞, իսկ նա բարակ պռոշներով է, դու չե՞ս հասկանում, թե դա ինչ է նշանակում… դու առհասարակ ոչինչ չես հասկանում… ու ես Ռեբեկան չեմ լինի, եթե վրեժս չառնեմ… դու մենակ ես լինելու, միշտ մենակ… կամ էլ ինձ հետ… այնտեղ… ատում եմ…, ահա այս քարը քեզ համար է, քո խելացի գլուխը ջարդելու համար…, ամբոխի մեջ ո՞վ ինչ կհասկանա…»:

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Հակոբը: Ժողովուրդը մնում է մեջքով կանգնած, տարբեր դիրքերով):

ՀԱԿՈԲ – Տեսնես՝ ինչքա՞ն մարդ կհավաքվի: Եթե ժողովուրդը մի քանի հազարի հասնի, նրանցից նույնիսկ կեսին վճարելը ծանր հարված կլինի Հերովդեսի քսակի համար… Բայց ո՞վ գիտի՝ ում ինչքան է վճարում… Ինձ, օրինակ, քիչ… ես ստորին շարքի գործակալներից եմ: Ինձնից պահանջվում է գոռալ «ամոթ», «պատժել», «խաբեբա», «ժողովրդի թշնամի»… Եվ պետք եղած դեպքում նետել այս մի քանի քարը, որ գոգնոցիս մեջ եմ պահում: Թե մնացածները քանի հոգի են և ինչքան են ստանում, քանի բառ են գոռալու և քանի քար են նետելու, իրենց գործն է ու վճարողի: Թե ո՞վ է վճարում ինձ, գաղափար չունեմ ու չեմ էլ ուզում ունենալ… Գիտենալուց վտանգավոր բան չկա… Մի բան եմ ներըմբռնողությամբ զգում, որ ես պաշտոնական բարձր կողմից եմ, որտեղ վերևում Հերովդեսն է, հետո՝ քահանայապետերն իրենց փոքր ու մեծ համակիրներով, որոնք ամենատես են ու խելացի: Հիմա էլ ամեն կողմից աչքիս է երևում նրանց բազմական ներկայությունը… միայն թե չցամաքի ապրուստի իմ աղբյուրը… Ուրեմն ի՞նչ եմ անելու: Սպասելու եմ շուկայի մոտ, երբ մարդիկ հավաքվեն,

կամաց-կամաց կմիանամ բազմությանը ու հետո արդեն կգոռամ ու կնետեմ քարերս…

(Երաժշտություն: Բոլորը՝ երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Թարսիսը: Ժողովուրդը մնում է մեջքով կանգնած՝ փոխելով դիրքերը):

ԹԱՐՍԻՍ – Տարիների հետ մեջս ամրապնդվում է այն եզրահանգումը, որ մարդկային ցեղում ևս կան առյուծներ, ձիեր, ցուլեր… նապաստակներ, և ես նապաստակ եմ: Ի սկզբանե և փոփոխության չենթարկվող մի թույլ արարած, որին կարող են որսալ, որն անընդհատ պիտի խուսափի ուժեղներից, միշտ փախուստի մեջ լինի, որին անընդհատ պիտի հետապնդեն, որի համար վախը շարունակական ուղեկից է, և ինձ երբեք չպետք է հարգեն ու սիրեն: Սիրում են միայն առյուծներին, երբեմն նաև ցուլերին, աղվեսներին, բայց երբեք՝ նապաստակներին: Ես չեմ ուզում նապաստակ լինել, բայց պետք է համակերպվեմ ի վերուստ պարտադրված եղելության հետ, չեմ կարող ո՛չ առյուծ, ո՛չ էլ աղվես լինել… Ամբոխը մեծ, ճգողական ուժ ունի, կմտնես մեջը, կդառնաս զանգվածի մի մասը…, ու… կարծես թե դու առյուծ ես:

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Սաղաթիելը: Ժողովուրդը մնում է մեջքով կանգնած՝ նորից փոխելով դիրքերը):

ՍԱՂԱԹԻԵԼ – Իմ հեղձանախանձ արյունը հետևողաբար մի կետի է խփում… Ինձ՝ առևտրական Սաղաթիելիս, խաբել են… Ի՞նչ ապտակ: Էլ ինչի՞ եմ պետք… Ինչպե՞ս եմ վերականգնելու իմ հարթուհարմար որպիսությունը… ինչպե՞ս, ինչո՞վ մխիթարվեմ ես… Աջուձախ եմ ընկնում՝ վաճառատնից վաճառատուն…, իսկ արյունս խփում է մի կետի…: Քառասունչորս արծաթ են տվել հիսունի փոխարեն… Հիմա իմ բողոքն էլ կմտնի այս ամբոխի բողոքավորների մեջ, և իմ բողոքը կդառնա ընդհանրական մի բողոք՝ ոչ մի բանի դեմ, հավիտենական բողոք ինքն իր մեջ…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, շարքից ժողովուրդը դուրս է շպրտում Աբագին: Նա գլորվում է գետնին, իսկ ժողովուրդը շուռ է գալիս, մեջքով կանգնում):

ԱՔԱՋ – Հիվանդությունս անբուժելի է, ես ոչ մեկին պետք չեմ: Ասում են՝ ախտակիր մարմինս խոնավությունն ու գարշահոտությունը այս պատին են անցել… Ես նրանց մերը… Ծեծեցին ինձ,

ծաղրեցին ինձ, փոշու մեջ թավալեցին, գնացին… Նստել եմ այսպես, ինքս ինձ հետ զրույց եմ անում, ձեռ եմ առնում, տականքներ, թե ո՞ւմ հետ եմ խոսում… Ես ոռնալ եմ ուզում, ուզում եմ մեր հայհոյել… Ըհը, ամբոխը… Իսկը իմ ուզածն է… կհայհոյեմ սրտիս ուզածի չափ… Ոչ մեկը չի իմանա, որ էդ ե՛ս եմ…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Զաքարիան):

ԶԱՔԱՐԻԱ – Ոչ թե եռանդն է իմ մեջ, այլ ինքս եմ եռանդի պատյանում: Շարժունակ ու ճարպիկ, աննկուն ու դյուրաթեք, միշտ ամեն ինչի և ամեն գործի առջևում եմ, առաջին խոսք ասողն եմ, առաջին ձեռք բարձրացնողը, առաջին ըմբոռնողը, առաջին համաձայնողը և առաջին խուսափողը: Եռանդս ամեն բանի հերիքում է, և մի քիչ էլ մնում է հաջորդ օրվա համար: Բայց չկարծեք, թե աղմկարարի մեկն եմ, ամենաանաղմուկ մարդն եմ: Ես միայն առաջին խոսքն եմ ասում, որից հետո ըմբոշխնում եմ արձագանքները… Ահա փողոցի ծայրից առաջացող մարդկային խմբերը շատրվանում են տարբեր տեղերից, միանում իրար, հիմա բոլորից առաջ կանցնեմ. «–Լսի՛ր, զինվո՛ր, ո՞վ է այդ երիտասարդ գանգրահերը, սպիտակամորթ մարդը, որ խաչի տակ կքած հազիվ է ոտքերը քարշ տալիս: Իեշուաև»,– ասում է,– Հրեաստանի նոր թագավորը, հի, հի, հի… *(Ձայնը արձագանքվում է):*

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Հակոբը: Նա երկու գույնի երես ունի՝ սև և սպիտակ):

ՀԱԿՈԲ – Բազմությունը իմ սպասածից մեծ է, ուրեմն շատ է պետական, ուրեմն իմ գործողությունները մեծ կարևորություն ունեն, մի նոր տագնապ է խուժում մեջս, բայց այս կեղտոտ մարդկային աղբի մեջ ո՞վ է նկատելու իմ անբանությունը…

(Երաժշտություն: Բոլորը՝ երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Ռեբեկան՝ շարքերի միջով անցնելով):

ՌԵԲԵԿԱ – Ես կգտնեմ քեզ: Քո ճաղատը իմ սուր աչքերից չի վրիպի: Մի էդ խայտառակին նայեք… Ասում է՝ սիրե՛ք իրար… Տականք… Բա տղամարդն էլ սիրի՞… Պակասավո՛ր… Կանացիակերպ… Խայտառակ… Քո մեջ է Հովհաննեսը… Թող

սպանեն Հովհաննեսին, որ թեթևանա մաղձս, մի քիչ հանգստանա սիրտս…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, վազելով առաջ է գալիս Հակոբը):

ՀԱԿՈԲ – Խայտառակությո՛ւն… չէ, այսպես չէ, ավելի բարձր և վստահ պետք է գոռամ՝ ինքնակո՛չ… Ամո՛թ, ամո՛թ… Թագավոր է ուզում դառնալ… Ամեն մեկն էլ կուզի, ես էլ կուզեմ… Ա՛ռ քեզ… *(Նետում է քարը):* Ա՛յ քեզ չարք, զինվորի ոտքին կպա, կաճխամտածված մահափորձ կդիտեն… Ա՛ռ քեզ… *(Նորից է նետում քարը):* Փառք քեզ, Տե՛ր, ուղիղ խաչին դիպա… գլորվեց Իեշուայի կրծքին… փառք Աստծո... «Փառք Աստծո՞»: Սա հաճելի՞ է նրա աչքին: Զինվորը վրաս նայեց, կմատնի… *(Մեկուսի):* Ամոթ: Տվե՛ք դրա վերջը, սպանե՛լ մեր թագավորի թշնամուն:

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Աբազը գլորվելով):

ԱԲԱԶ – Ես մահացու հիվանդ եմ, իսկ նա գեղակազմ, առողջ մարմին ունի, հիմա մեխերը պիտի մտնեն նրա երիտասարդ առողջության մեջ, և նա պիտի ավրվի, նեխի իմ մարմնից շուտ: Իմ թարախակալած մարմինը նրանից ավելի երկար կմնա երկրի վրա: Թեկուզ մեկ օրով, թեկուզ մեկ ժամով, բայց ավելի երկար…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Սաղաթիելը):

ՍԱՂԱԹԻԵԼ – Վեց արծա՞թն է շատ, թե՞ այս մի առողջ կյանքը: Սրա կորուստը ավելի մեծ է, և սա ավելի է խաբված: Խաբողների մեջ ես էլ կամ: Որովհետև ես այստեղ եմ, նա՝ խաչի վրա: Ես այնքան էլ խաբվողը չեմ: Ես տանուլ չեմ տվել սրա համեմատությամբ: Խաբեբա՛, խաբեբա՛… Խաչե՛լ… Սպանե՛լ խաբեբային…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Զաքարիան, մուրճնում է ծերունուն, որը մեխում է Իեշուայի ոտքը խաչին):

ԶԱՔԱՐԻԱ – Լսի՛ր, չե՞ս տեսնում արդեն Իեշուայի մյուս ոտքը մի քանի անգամ դուրս է պրծնում մանր գլխանի մեխից, ա՛յ էս մեկը

վերցրու *(պալիս է մի երկար մեխ)*, երկար է, տեսնո՞ւմ ես, տե՞ս՝ ինչ հեշտությամբ ու սահուն է մտնում ոտքի մեջ, գլխիկն էլ իսկն է, դու բարեխիղճ ես, իսկ ես հմուտ եմ գործիս մեջ… *(ուժեղ հարվածում է, և արյան շիթերը թռչում են վերնաշապիկի վրա),* հե՛յ, մի քիչ ավելի զգույշ չե՞ս կարող… շապիկս արնոտեցիր…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Թարսիսը՝ ուսով խփվելով, հանդիպելով Հուդային):

ԹԱՐՍԻՍ – Ամբոխը, ասում են, մի վերացական, անճև բան է: Բայց նրա մեջ ՅՈՒՅԱԿ գոյություն ունի միշտ… նրանց ՅՈՒՅԱԿԸ, որ տպվել է հավերժության մարմնի վրա: Եվ ոչ մեկը չէր կարող դուրս մնալ այդ դաջվածքից: Զարմանահրաշ, խենթացնելու չափ զարմանահրաշ է փաստ-ճշմարտությունը: Դաջված իրականների մեջ անիրական՝ հավիտենության մարմնին: Նրա վրայից չի ջնջվում ո՛չ մի հոգոց, ո՛չ մի բիծ, ո՛չ մի շարժում… Նրանում շատ հակոբներ, շատ ռեբեկաներ, շատ աքազներ, շատ թարսիսներ և շատ հուդաներ կան…, ղե հա, ես տեսա Հուդային, ամբոխի մոտ աչքերն էր տրորում… չեմ հասկանում ո՞ւմ համար էր ողբում… ի՞նչ համար…
Քանի՞ հոգի ուներ ՅՈՒՅԱԿԸ…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Հուդան):

ՀՈՒԴԱ – Իհարկե, ինձ նույնպես… համընդհանուր մեղքը նաև իմ ուսերին է… Հոգնել եմ, հոգնել եմ դրա անվերջությունից…, ամեն մեկի մեղավորությունից և համընդհանուր մեղավորություններից… բայց որտե՞ղ է սրա վերջը…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Թարսիսը):

ԹԱՐՍԻՍ – Նրանցից յուրաքանչյուրը լինելիության ցուցակի մեջ է: Չեզ չի՞ հետաքրքրում այդ անկրկնելի ցուցակը: Մի մեծ ու որոշակի կերպար, ոչ պակաս որոշակի, քան մեր գիտցած Քրիստոսի: Ինձ տանջալիորեն հետապնդում է նրանցից ամեն մեկի կոնկրետությունը, հանվանե, որոնցից կազմվել է այն սարսափելի հզոր ուժը, այն մեծ մշտաբնակը, որ ժամանակի տերն էր: Միգուցե անսահմանության տերը: Թերևս հավերժությունը երկու տեր ունի՝ Քրիստոսը և ՅՈՒՅԱԿԸ: Եվ այդ

ցուցակի բեռը ավելի՞ ծանր է: Եվ եթե չլիներ այդ ցուցակը, Աստծո որդին մարդու կերպարանքով չէր հայտնվի: Եվ այդ կերպարանքը ձևված էր ՅՈՒՑԱԿԻ մոդելով… Մեղա՜ Աստված…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ է գալիս Ալիծը՝ ձեռքին սպիտակ արյունոտ վերնաշապիկ, և կարծես ձեռքով լվանում է արյունը: Նրան է մոտենում Զաքարիան):

ԱԼԻԾ – Փնքի՛, չէի՞ր կարող փոքր-ինչ զգույշ աշխատել, որ վրադ չկեղտոտեիր: Ըհը, չի մաքրվում, էս ի՞նչ ես թափել վրադ, նե՞րկ է, արյո՞ւն է, ի՞նչ է…Վաստակածդ մի բան չէ, բայց ծախսերդ… Չի մաքրվում… էսպես էլ կհագնես… էս կարմիր բծերով… *(Վերնաշապիկը նետում է Զաքարիայի վրա):*

ԶԱՔԱՐԻԱ – Մի՛ փնթփնթա, կնի՛կ, ամեն ինչ էլ պատահում է… աշխատանքի մեջ հագուստ էլ կկեղտոտվի: Դու ասա՝ միշտ աշխատանք լինի…

(Երաժշտություն: Բոլորը երեք քայլ առաջ, երեք քայլ հետ են անում, առաջ են գալիս բոլորը և կանգնում տարբեր տեղերում երեք շարքով, այս անգամ՝ դեմքով դեպի հանդիսատեսը):

ԹԱՐՍԻՍ – Այդ ցուցակում այն ժամանակ ես էլ կայի:

ՍԱՂԱԹԻԵԼ – Փոքր տղա էի, նստած էի հորս ուսերին… ճգվում էի ամբոխի գլուխների վրայով, որ տեսնեմ նրան:

ԲՈԼՈՐԸ – Սքանչելիին… *(Նայելով էկրանի վրայի Հիսուսին):*

ՍԱՂԱԹԻԵԼ – Հայրս բարձրաձայն հեկեկում էր, ես էլ նրա հետ էի լաց լինում: Արյունից կարմրած դեմքով նա շրջվեց իմ կողմը և…

ԲՈԼՈՐԸ – …ժպտաց… *(Նայելով էկրանի վրայի Հիսուսին):*

ԱՔԱՋ – ու ես ձայնս կտրեցի…

ՌԵԲԵԿԱ ԵՎ ԱԼԻԾ – Հետո ինքս էլ միշտ ժպտում էի փոքրիկ երեխաներին…

ՀԱԿՈԲ – Բայց երեխաները հասակ էին առնում… ու… համալրում էին ՅՈՒՑԱԿԸ…, տես՝ ինչ մեծ է նրանց համրանքը… գնա՛ ու հաշվի՛ր…

(Գալիս են առաջ, մի շարք կազմում, ձեռքով ցույց տալիս դահլիճը):

ԲՈԼՈՐԸ – Գնա՛ ու հաշվի՛ր…

(Ապա մեջքով շուռ են գալիս և երաժշտության տակ հեռանում բեմից):

Վերջ

ԸՆԿ. Բ. ՓԱՆՋՈՒՆԻ

Ըստ Երվանդ Օտյանի
«Ընկ. Բ. Փանջունի ի Ծապլվար» երգիծական վեպի

Պիեսի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Տեքստի վերամշակող՝ Արթուր Գեղամյան

Պիես՝ երկու գործողությամբ

Նկարագրություն

Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի ի Ծապլվար» ստեղծագործությունը ինքնին նամականի է: Ամողջ ընթացքում նամակներով են նկարագրվում տեղի ունեցող գործողությունները: Այն դարձվել է պիես, և բոլոր նամակների մեջ նկարագրված գործողությունները կարծես կենդանի լինեն: Մեծ փոփոխություններ են տեղի ունեցել կերպարների որակական զարգացման ընթացքի մեջ: Օրինակ՝ երկում Սառայի կերպարում համր կին է, որը խոսում է ժեստերի լեզվով, իսկ պիեսում նա համր չէ, ավելին՝ հասարակ գյուղացուց դառնում է լուրջ քաղաքական գործիչ և Փանջունու համակիրը: Այդ գործընթացի մեջ է մտնում նաև տղան՝ Կարոն, որը դառնում է դպրոցի աշակերտության հեղափոխական առաջնորդը:

Բես Սերգոն հասարակ գյուղապետից դառնում է արդարության ջատագով և պայքարում սուտ հեղափոխության ու անարդարության դեմ: Պիեսում ներմուծված են ժամանակակից լրագրողների ու ծառաների կերպարներ, որոնք չեն եղել, և ինչ-որ մի պահի XIX դարի գյուղական միջավայրից տեղափոխվում է XXI դար՝ ժամանակակից քաղաքական դաշտ: Այս ներկայացումը նս համեմված է երգերով ու պարերով: Ներկայացումը նվիրվել է «Համալսարանական» թատրոն-ստուդիայի 5-ամյակին:

Երաժշտական ձևավորման և երգերի հեղինակն է ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանը:

Հագուստների ձևավորումները՝ ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանի:

Պարային բեմադրությունը՝ աղջիկների պարային համույթի գեղարվեստական ղեկավար Իռէն Ուլիխանովայի:

Երգերի բառերը գրվել են Արթուր Գեղամյանի, **Սոսի Խանիկյանի**, ինչպես նաև բեմադրող ռեժիսոր Կարինե Դավթյանի կողմից:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

Պրեմիերան տեղի է ունեցել 2010 թվականի մայիսի 3-ին:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Ընկեր Բ. Փանջունի – հեղափոխական գործիչ
Բես Սերգո – գյուղապետ
Տեր Սահակ – քահանա
Սառա – գյուղացի կին, որն ամուսին չունի
Կարո – Սառայի որդին
Խև Ավո – մշակ
Մանուկ Փանջունի
Փանջունու հայր
Անշարժ գույքի գործակալ
Կոլոշենց Սերգո – գյուղացի
Փանջունու եղբայր
Բժիշկ
Ոստիկան
Եղբոր կին – Փանջունու եղբոր կին
Սմենց Վարդան – գյուղացի
Հասո – քուրդ
Քելեշ Մրկո – քուրդ
Ուսուցիչ
Անծանոթ – մի կին
Լրագրող
Ծառա 1
Ծառա 2
Թոռնուհի
Մի կին
Երեխա 1
Երեխա 2
Դիմահարդարներ
2 ոստիկաններ
Պարողներ

ՏԵՍԱՐԱՆ 1

Սա մի քաղաք է, որն իր անցուդարձով, եռուզեռով հիշեցնում է 1890-ական թվականների Պոլիսը: Ամբողջ քաղաքի պատկերը և անցուդարձը տեղի է ունենում ստվերային խաղով: Փողոցը լի է վաճառականներով, երգող-թափառականներով, ինչ-որ անհայտ երեխաներով: Նրանք փողոցի դիմագիծը լրիվ փոխում են, հաղորդում են տեմպ, լցնում նոր ռիթմով, ընկնում անցորդների ոտքերի տակ, վաճառականներից գողանում միրգ, կռվում միմյանց հետ: Հանկարծ հեռվում նկատվում է ինչ-որ մեկի ստվերը: Փողոցը պատկառանք ունի նրա նկատմամբ: Աշխույժ երեխաները զգաստանում են, նայում են նրան, սարսափում: Վաճառականները առանց գումարի առաջարկում են իրենց ապրանքները, կոշիկ մաքրողները հրավիրում են կոշիկները փայլեցնելու: Նա ոստիկանապետն է, քաղաքի կարգ ու կանոնը, օրենքը քաղաքի: Ոստիկանապետը, սովորության համաձայն, մտնում է կոշիկ մաքրողներից մեկի մոտ, ոտքը հանդիսավոր դնում է աթոռակին, ձեռքը մեջքին հենում, և նա աշխարհի տերն է: Այդ միջոցին նա լսում է կանանց անզուսպ ծիծաղը: Կանայք են: Երկու կանայք են: Կանայք գեղեցիկ են: Նրանք գիտեն՝ որտեղ են ծիծաղում, որտեղ լալիս, ում ժպտում, ում ուշադրություն դարձնում: Նրանց ձեռքում անձրևանոցներ կան: Միմյանց ականջներին ինչ-որ բան են շշնջում: Կանայք այս քաղաքում խորամանկ են: Ծերերն այս քաղաքում անտեսված են: Նրանց միայն հիշում է Աստված, երբ տեր Սահակը հուղարկավորության է գնում նրանց մոտ: Տեր Սահակը քաղաքի միակ քահանան է: Նա այդ կարգավիճակում է հայտնվել իր խելքից և քաղաքի խորամանկ կանանցից մեկի՝ Սառայի պատճառով: Այս փողոցում մի մեծ տուն կա: Անցորդները կա՛մ արագ են անցնում, կա՛մ մնում են՝ ուշադիր լսելու այնտեղից եկող ձայները: Մի տարիքավոր մարդ ու բժիշկ այս անգամ ընկել են մի փոքրիկի ետևից: Բժշկի համար սա արտասովոր դեպք է և ամեն կերպ ջանում է բռնել նրան: Սակայն փոքր տղան շատ ավելի ճարպիկ է դուրս գալիս: Տղան նույնիսկ դուրս է գալիս տանից և վազում փողոց: Իսկ հետո, երբ այս փոքրիկի օգնությամբ քաղաքը դուրս է գալիս ստվերից, միանգամից պարզ է դառնում, որ իսկի քաղաք էլ չէ: Պարզապես քաղաքից եկած բարքերով ապրող գյուղ է, մի միֆ, մի Ծապլվար: Բայց այս ամենը կատարվում է ստվերային խաղով երաժշտության տակ: Դահլիճից դեպի բեմ վազելով:

ՀԱՅՐ – Կանգնի՛ր, ասում եմ:

ՄԱՆՈՒԿ Փ. – Չեմ կանգնի:

ԲԺԻՇԿ – Կանգնի՛ր, կսրսկեմ:

ՄԱՆՈՒԿ Փ. – *(Գոռում է):*

ՀԱՅՐ – Որ ձեզ ասում էի բժիշկ: Անտանելի է: Մի բան արեք:

ՄԱՆՈՒԿ Փ. – *(Ավելի բարձր է գոռում):*

ԲԺԻՇԿ – *(Բռնելով ականջները)*... Ես կխլանամ... լռի՛ր... Աստծու սիրուն:

ՀԱՅՐ – Ձեռք չտաս…

ՄԱՆՈՒԿ Փ. – *(Վերցնում է բանկարժեք ծաղկամանն ու կուրծում):*

ՀԱՅՐ – Ծո, ի՞նչ ես ըրեր ամոթը:

ՄԱՆՈՒԿ Փ. – Շինեցի հայրիկ:

ՀԱՅՐ – Ծո, ի՞նչ շինել, կոտրել ես, շան զավակ:

ՄԱՆՈՒԿ Փ. – Չէ՛, հայրի՛կ, շինեցի: *(Գոռում է անդադար խոսելով...):*

ՀԱՅՐ – Ի՞նչ կասես բժիշկ…

ԲԺԻՇԿ – Ճար ու դարման չկա, այս տղան միշտ պիտի խոսի:

ՀԱՅՐ – Բայց տանը մեզ ալ դիմացվելիք բան չէ:

ԲԺԻՇԿ – Բամբակ խոթեցեք ականջնիդ, այս է միակ միջոցը: *(Ականջները բռնելով՝ հեռանում է):*

ՀԱՅՐ – Շնորհակալություն բժիշկ: *(Գոռում է հետևից):*

(Մանուկ Փանջունին փախչում է հորից և մտնում սրվակի մեջ: Գործողությունը տեղի է ունենում սրվակում):

ՓԱՆՋՈՒՆԻ – Երկիրը եթե կլոր լիներ, մենք ինչպես պիտի տեղում մնայինք, կգլորվեինք:

ԲՈԼՈՐԸ – Այո՛…:

ՓԱՆՋՈՒՆԻ – Բայց միևնույնն է, 5x5=50: Եվ այդ ո՞վ ասաց, որ 5x5= 25: 5x5 = 50:

ԵՐԵԽԱ – Չէ…, 5x5 =25:

ՓԱՆՋՈՒՆԻ – Չէ, 5x5= 50:

ԵՐԵԽԱ – Ո՛չ, 25:

ՓԱՆՋՈՒՆԻ – 50:

ԵՐԵԽԱ – 25:

ՓԱՆՋՈՒՆԻ – 50:

ԵՐԵԽԱ – Լավ, ես թող այդպես գիդնամ, թե՝ 25, դունա էլ այնպես գիտցիր, թե 50, ու էլ չխոսինք, երթանք միատեղ՝ գնդակ խաղանք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Չըլլար, պետք է նախ համոզվիս, որ 5x5 50 կընե:

ԵՐԵԽԱ – Այդ անկարելի է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Անպատճառ պետք է, որ քեզ համոզեմ:

ԵՐԵԽԱ – Երբեք չեմ կրնար համոզվիլ, և դուն ալ երբեք չես կրնար ապացուցանել ըսածս:

ՓԱՆՋՈՒՆԻ – Չեմ կրնար ապացուցանել, չեմ կրնար ապացուցանել: Առ քեզի համոզիչ ապացույց մը…:

(Վերցնում է քարն ու խփում մանկան գլխին: Այդ ժամանակ խառնաշփոթ է լինում, փոքր-ինչ կռիվ, որի ժամանակ սեղանին նստած մեկը, չեռքը պարզելով, ապառնում է ինչ-որ մեկին: Հանկարծ դիմացինը ընկնում է աթոռին նստած Փանջունու հետևից, և Փանջունին դուրս է գալիս սրվակից):

ՏԵՍԱՐԱՆ 2

(Փանջուևու եղբոր տունն է բեմի վրա: Թակում ևն դուռը):

ՓԱՆՋՈՒՆԻ – Ես այստեղ չեմ:

ԿԻՆ – Ես կբացեմ:

ԱՆԾԱՆՈՒԹ – Բարև Չեզ:

ԿԻՆ – Բարև:

ԱՆԾԱՆՈՒԹ – Փանջունին տա՞ննէ:

ԿԻՆ – Իհարկե:

ՓԱՆՋՈՒՆԻ – Աաաաա….. *(բղավում է կուլիսից):*

ԿԻՆ – Սիրելի՜ս…Սիրելի՜ս…Թանկագի՞նս:

ԵՂԲԱՅՐ – Գալիս եմ, գալիս եմ: Այո՞: Ինչով կարո՞ղ եմ օգտակար լինել:

ԱՆԾԱՆՈՒԹ – Դուք չէ…… Չեր եղբայրը:

ԵՂԲԱՅՐ – Իմ եղբայրն ի՞նչ**:**

ԱՆԾԱՆՈՒԹ – Ես նրան եմ փնտրում:

ԵՂԲԱՅՐ – Իսկապե՞ս: Ես էլ եմ նրան փնտրում: Միգուցե գիտե՞ք՝ ուր է նա:

ԱՆԾԱՆՈՒԹ – Դուք՝ Փանջունիներդ, իսկապես գիժ եք: Փոխանցեք նրան, որ ամբողջ գիշեր բարում նստելուց, հարբելուց, ուտելուց և ուրախանալուց հետո վճարում ենք, ոչ թե թողնում ու փախչում ենք՝ պատճառաբանելով, թե վաղը կտամ: Պա՞րզ է: Նա պարտքեր ունի, պետք է վճարի:

ԵՂԲԱՅՐ – Դե իհարկե:

ԱՆԾԱՆՈՒԹ – Ուրեմն վճարե՛ք:

ԵՂԲԱՅՐ – Ո՞վ…

ԱՆԾԱՆՈՒԹ – Դուք:

ԵՂԲԱՅՐ – Ինչո՞ւ:

ԱՆԾԱՆՈՒԹ – Փանջունի չե՞ք:

ԵՂԲԱՅՐ – Ո՞վ:

ԱՆԾԱՆՈՒԹ – Դուք:

ԵՂԲԱՅՐ – Ինչո՞ւ:

ԱՆԾԱՆՈՒԹ – Ինչպես թե ինչու: Ես ի՞նչ իմանամ:

ԵՂԲԱՅՐ – Բա ես ի՞նչ իմանամ: *(Դադար):* Կվճարի:

ԱՆԾԱՆՈՒԹ – Ո՞վ:

ԵՂԲԱՅՐ – Փանջունին:

ԱՆԾԱՆՈՒԹ – Ե՞րբ:

ԵՂԲԱՅՐ – Երբ չէ… Ինչո՞ւ:

ԱՆԾԱՆՈՒԹ – Ինչո՞ւ:

ԵՂԲԱՅՐ – Ի՞նչը ինչու:

ԱՆԾԱՆՈԹ – Չգիտեմ:

ԵՂԲԱՅՐ – *(Ուրախանալով)* Չգիտե՞մ….Չգիտեմ, պարո՛ն:

ԱՆԾԱՆՈԹ – *(Գոռալով)* Ես էլ չգիտեեե՞մ: Գժվեցրիք ինձ: Որտեղ բռնացրի՝ ձեռքիցս չի պրծնի:

ԵՂԲԱՅՐ – Ինձ էլ շատ հաճելի էր: Հուսով եմ՝ էլի կտեսնվենք:

ԱՆԾԱՆՈԹ – Ոոոո՛չ….Շնորհակալ եմ: Դուք էլ, ձեր ընտանիքն էլ: *(Դռան շրխկոց):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Գնա՞ց *(կուլիսից հանելով գլուխը):*

ԲՈԼՈՐԸ – Այո՛:

(Վախենալով մտնում է բեմ: Ձեռքում հանգուցյալ հոր նկարն է: Կախում է պատից ու մի բարչյր հոգոց հանում: Եղբայրն էլ է կանգնում նրա կողքին: Միասին խաչակնքվում են: Կինը գնում է թեյ բերելու):

ԵՂԲԱՅՐ – Մի՛ անհանգստացիր, հայրի՛կ, ես եմ տառապում քո փոխարեն: Եղբա՛յր, նստի՛ր. խոսելու բան կա:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իսկապե՞ս:

ԵՂԲԱՅՐ – Այո՛, բան եմ մտածել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Զարմանալի է:

ԵՂԲԱՅՐ – Ինչո՞ւ: Ի՞նչ կա զարմանալի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Զարմանալի է, որ բան ես կարողացել մտածել, որովհետև դուք՝ վաճառականներդ, կապիտալիստներդ, մտածելու կարողություն չունիք:

ԵՂԲԱՅՐ – *(Հազիվ իրեն զսպելով: Խոսում է արևմտահայերեն):* Մտածեցի, որ այստեղ պարապ ժամանակ անցկացնելու փոխարեն քեզ ուղարկեմ Մարսելի վաճառականների դպրոց: Այնտեղ 3 տարի ուսանելուց հետո վաճառականի վկայական կունենաս: Հետո կվերադառնաս ինձ մոտ, և մենք միասին կշարունակենք մեր հայրիկի գործը:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իսկ հայրիկի հարստությո՞ւնը… Չէ՞ որ նա մեզ փող է թողել:

ԵՂԲԱՅՐ – Իհարկե, թողել է, բայց եթե դու այսպես շարունակես, ոչինչ չի մնա…

(Կինը ներս է գալիս՝ ճամպրուկները ձեռքին):

ԿԻՆ – Մենք քեզ շատ կկարոտենք, սիրելի՛ տագր:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ի՞նչ:

ԿԻՆ – Ասում եմ՝ հետդ օծանելիք կբերես: Գեղեցիկ հագուստներ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Շատ լավ գաղափար է: Ընդունվեց սիրով:

(Ուրքի է կանգնում, սեղմում է եղբոր ձեռքը: Երաժշտություն, որի ընթացքում բեմը դասավորում են՝ վերածելով հեռուստաընտանեական փաղավարի: Ամբողջ ընթացքում Փանջունին պատմում է գլխի եկածը Եվրոպայում ռեպի միջոցով):

ՏԵՍԱՐԱՆ 3

(Բեմում դրված մի քանի շարժական աթոռակները հարմարեցնում են այնպես, որ սրացվի հաղորդման ստուդիա: Սկզբում ներս է մտնում լրագրողը, որին ուղեկցում են դիմահարդարները: Փոքր-ինչ նրան շպարելուց հետո հեռանում են: Սկզբում լրագրողը արտասանում է անհմաստ տեքստ, ինչը պատճառ է այն բանի, որ Փանջունին ուշանում է: Հետո ձայներ են լսվում կուլիսից, ներս է գալիս Փանջունին: Ամբողջ ընթացքում նա խոսում է արևմտահայերեն):

ԼՐԱԳՐՈՂ – Եվ այսպես, վերջապես նա համաձայնեց գալ մեր տաղավար: Սոցիալական գիտությունների թեկնածու, պատմաբան, հեղափոխական նոր գաղափարներով լեցուն պարոն Բ. Փանջունին: Բարև Ձեզ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Բարև, սիրելի՛ ընկերներ:

ԼՐԱԳՐՈՂ – Ասացե՛ք խնդրեմ: Ինչո՞ւ հատկապես Ծապլվարում պիտի գործեք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Սիրելի՛ ընկերներ: Վերևից հրահանգները ստանալուն պես ճամփա ընկա Արաբկիր, հետո՝ Շեփիկ, Վաղշեն, Կրանի և Մաշկերտ գյուղերը, մի գիշեր մնալուց ետքը հասա Ծապլվար, որ, ըստ իս, մեր պրոպոգանդի համար հարմարագույն վայր մըն է:

ԼՐԱԳՐՈՂ – Ի՞նչ քաղաքական ծրագրեր ունեք՝ այս գյուղի հետ կապված:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հարկ է նշել, որ Ծապլվար գյուղը թաղված է խոր տգիտության մեջ: 15 օր է՝ հոս եմ և հասած օրից սկսած՝ պրոպոգանդում եմ, սակայն չեմ կարողանում այս գյուղացիների գլխում մտցնել կապիտալիզմի գործած ոճիրները: Այս գյուղը խնդիր և պրոբլեմ չունի, ինչը, ըստ իս, շատ անհարմար կթվա: Ծապլվարի մեջ գոյություն չունեն դասակարգային բաժանումներ կամ բաժանումների գիտակցություն: Իմ գործը պետք է լինի՝ նախ կազմակերպել այդ դասակարգային բաժանումը, հետո՝ պայքարել այդ դասակարգի դեմ, պետք է կռվի պատրաստել այս տգետ գյուղացիներին, և դա հեշտ գործ չէ:

ԼՐԱԳՐՈՂ – Ընկե՛ր Փանջունի, այս 15 օրվա մեջ հասցրի՞ք ինչ-որ մեկի հետ ծանոթանալ: Եվ ընդհանրապես որտե՞ղ եք մնում:

ՓԱՆՋՈՒՆԻ – 2 շաբաթ անընդմեջ շփման մեջ եմ գյուղի բոլոր բնակիչների հետ: Գյուղն ունի մի ծերուկ քահանա՝ տեր Սահակը: Նա ներկայացնում է միջնադարյան կղերականությունը, խավարամտությունը, օսքուրաթիզմը: Անհրաժեշտ է տաք պայքար

մղել Ծապլվարի բուրժուազիան ներկայացնող Րես Սերգոյի և նրա մի քանի արբանյակների դեմ: Այդ կեղտոտ բուրժուան մի մեծ հարստություն ունի՝ 3 արտ, 2 կով, 1 էշ, 2 այծ: Արդյունք՝ խեղճ գյուղացիների վրա ի գործ դրած դարավոր կեղեքումներ: Տեսեք, թե ինչ աստիճան տգիտության մեջ եք թաղված: Հարկ է նշել, որ տեր Սահակը շաբաթը մի քանի անգամ ճաշում է Րես Սերգոյենց տանը. կղերականության և բուրժուականության կապն ակնհայտ է՝ խեղճ ընչազուրկ գյուղացիներ: Բնականաբար, բացի ներքին թշնամիներից՝ Ծապլվարն ունի նաև արտաքին ախոյաններ, որոնք անընդհատ փակ են պահում սահմանը՝ ոչինչ չզիջելով: Քրդերը մեր բնական նեցուկներն են: Հարկ է եղբայրական դաշինք կնքել նրանց հետ քարացած սկզբունքների լուծման համար: Բայց սրանք ապագայի հարցեր են: Իսկ այժմ ամենակարևորը. խոսքս ուղղում եմ Ծապլվարից դուրս մեր հայրենակիցներին. մի քիչ փող ուղարկեք:

(Հանկարծ դահլիճում նստած մի քանի հոգի ծափ են տալիս: Փանջունին զարմանում է, լայնացնում աչքերը: Ամծանոթները քայլում են դեպի Փանջունին):

ԼՐԱԳՐՈՂ – Լսե՛ք՝ ինչ եք անում: Դուք խանգարում մեք: Սա ուղիղ եթեր է:

ՀԱՍՈ – Հանգիստ, առանց ձեռքերի: Մեզ դու լավ ես ճանաչում, որ մի բանի կարիք ունենաս, մեզ կասես:

ԼՐԱԳՐՈՂ – Անշնորհք…*(հեռանում է):*

ՄՐԿՈ – Անունս Քելեշ Մրկո:

ՓԱՆՋՈՒՆԻ – Փանջունի:

ՀԱՍՈ – Հասո:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Ծիծաղում է):*

ՀԱՍՈ – Ի՞նչ *(բարկացած):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Ոչինչ:

ՄՐԿՈ – Ես լսեցինք քո ճառերը: Չեզ էդ ի՞նչ ես հասկանում, որ ասում էիր՝ քրդերը մեր բնական նեցուկներն են:

ՓԱՆՋՈՒՆԻ – Դե ոնց ասեմ… Իբրև հենարան:

ՀԱՍՈ – Ի՞նչ *(բարկացած):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Ոչինչ… Մեկ պետության մեջ հայ, քուրդ, ռուս ի՞նչ իմաստ ունի: Բոլորս ալ մարդ ենք:

ՄՐԿՈ – Քելեշ Մրկո, այսինքն՝ ես կներկայացնի Քուրդ Քոմրաշ գյուղի մտավոր հասարակայնությունը: Մեր հարուստ բարեկամները՝ մյուս մտավորականները, հրավիրում ենք՝ օխչար ուտեն: Մենք շատ ենք սիրում հյուր:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ճիշտն ըսած՝ ես կուզեի այցելել Քոմրաշ՝ բարիդրացիական հարաբերությունները կայունացնելու նպատակով: Բայց դժբախտաբար, ժամանակ չունեմ: Կոչս՝ մանիֆեստս, պիտի գրեմ: Ներեցե՛ք:

ՀԱՍՈ – Ի՞նչ *…(բարկացած):*

ՄՐԿՈ – Փանջունի: Շատ քրդի կգտնես էս ժամանակներում, որ հյուր կանչի հայիհ: Չես գտնի, այնպես որ… Համեցի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ասածս ուժի մեջ է. *(հանդիսատեսին)* մի քիչ փող ուղարկեք:

(Երաժշտության տակ փոխում են բեմը: Հյուրասիրում, խմեցնում, պարեցնում են Փանջունուն: Նրան ծանոթ քրդերը հեռանում են: Անծանոթները բալանում են, հանում են շորերը: Քրդերից մեկը սլորագրել է պալիս մի կարևոր փաստաթուղթ: Տպավորություն է, թե բալանում են, Փանջունուն գցում են գետնին: Կրքերը հանդարտվում են: Րես Սերգոյի պռունն է բացվում):

ՏԵՍԱՐԱՆ 4

(Խև Ավոն գաղտնի գալիս է և ուզում է ինչ-որ բան գողանալ, երբ Փանջունին արթնանում է):

ՓԱՆՋՈՒՆԻ – Խաբեցին, նորիի՛ց… պատմական խաբեությունները թափվեցին գլխիս: Ով էր քրդերից մի լավ բան տեսել, որ ես էի ուզում: Չնայած լավ կերա, խմեցի, ոչինչ, որ թալանեցին, ժողովուրդս հետո կիմանա, թե ինչ խիզախությունների միջով է անցել իրենց առաջնորդը, *(թակում են դուռը)* հաստատ նրանք են: Ի՞նչ անեմ. բացե՞մ: Եթե պիտի ծեծեն, թող ծեծեն: Թող հասարակությունը տեսնի ու դատի, թե ինչ աստիճան ստրկամիտ կյանքով են ապրում *(բացում է դուռը):*

ԽԵՎ ԱՎՈ – Բարև…

ՓԱՆՋՈՒՆԻ – Բարև ձեզ… ինչո՞վ կարող եմ օգնել:

ԽԵՎ ԱՎՈ – Չգիտեմ: Դուք կանչել եք ինձ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ե՞ս: Աաաա… հիշեցի: Դուք Ավոն եք, մեղմ ածականով՝ Խև:

ԽԵՎ ԱՎՈ – Հա, ես Խև Ավոն եմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ես լսել եմ, որ դուք խնդիրներ ունեք Ծապլվարի մեջ:

ԽԵՎ ԱՎՈ – Ե՞ս:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ծապլվարցիք ընդհանրապես վատ վերաբերմունք ունեն քո պես երիտասարդի մասին: Քեզ ճանաչում են հիմար և անբարո:

ԽԵՎ ԱՎՈ – *(Անշրպտյուն շարժումներով մոտենում է սեղանին, որի վրա դրված է փայլուն ծաղկամանը: Ուզում է գողանալ):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Դա արդյունք է միջնադարյան կղերական ոգիի՝ միացած բուրժուական անճոռնի ըմբռնումների հետ: *(Փանջունին ջանում է էլ ավելի ընդլայնել բառային ֆոնդը):*

ԽԵՎ ԱՎՈ – *(Այդ ընթացքում նա արդեն վերցրած է լինում ծաղկամանը):*

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Բարձր գոռալով):* Որովհետև նա տանտերերի բացակայության ժամանակ իրենց տնից մի քանի ի՞ր է վերցրել: Որովհետև նա դաշտի մեջ Կրպոյենց Սեխոյի աղջկան բնական պահանջ է մղել, նրա հետ հարաբերվե՞լ է: *(Գոռալով):* Որովհետև…

ԽԵՎ ԱՎՈ – *(Վախից վեր է թռչում ու չեռքից բաց է թողնում ծաղկամանն ու կուրծում):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Տեր Սահակից փող է ուզել, իսկ սևազգեստ կղերամիտ անճը չի տվել. Ավոն էլ քարկոծել է: *(Հանդարտ):* Հիմա ի՞նչ: Այժմ այդ տղան կնկատվի իբրև մի տեսակ հիմար չարագործ, և

նրա դեմ սարքված է հալածանք և դավադրություն: Նայե՛ք այս խեղճ թշվառին: Տեսեք՝ ինչ անմեղ է: Հասարակությունն է մեղավոր, որ այս 18-ամյա կտրիճ պատանին այս վիճակում է: Միշտ միևնույն պատմությունն է՝ կա՛մ պետք է խոնարհի ստրուկ լինել կեղտոտ բուրժուաների և կա՛մ գլուխ ծռել կեղեքիչ նախապաշարումներին և կա՛մ հալածվել այդ ռհմակների կողմից: Բայց ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում, ասում է ֆրանսիական առածը: *(Դիմելով նրան):* Դու լավ խմոր ես: Դու կատարյալ հեղափոխական ուժի տեր երիտասարդ ես: Մոռանում ես այն, ինչ եղել է, այժմ դու լրիվ ուրիշ մարդ ես: Դու Ծապլվարի հեղափոխական գործուն շարքերի մեջ կարևոր դեր ստանձնող մեկն ես, դու՝ Խև Ավո:

(Թակում են դուռը: Խև Ավոն վախից, որ կուրծել էր ծաղկամանը, պառկում է ջարդածի վրա: Փանջունին, գոհ իր մենախոսությունից, գնում է՝ բացելու դուռը):

ՓԱՆՋՈՒՆԻ – Ի՞նչ եք ուզում..

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Մենք Քոմրաշի անշարժ գույքի գործակալությունից ենք: Հիշեցի՞ք մեզ: Երբ մեզ մոտ էիք, պայմանավորվեցինք Քոմրաշի բարձր հասարակության համար հավաքատեղի հիմնել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Աաա… դե այո՛: Համեցե՛ք: Նախ ծանոթացեք Ծապլվարի երիտասարդական առաջնորդ, հիանալի բարի, մաքուր առաջնորդ՝ Խև Ավո: Երևի քաղցած կլինեք: Խնդրեմ նստեցեք: *(Առանձին):* Բայց տանն ախր ուտելու բան չկա:

ԽԵՎ ԱՎՈ – Դու հոգ մի տանիր: *(Դուրս է գալիս):*

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Ուրեմն ասում եք հավաքատեղի: Իսկ ինչ նպատակ է հետապնդելու: Ժամանցայի՞ն:

ՓԱՆՋՈՒՆԻ – Միանշանակ քաղաքական ու հայրենասիրական: Ոչ մի ժամանցային: Հայրենիքը, ազատագրումն առաջին հերթին:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Իսկ ի՞նչ ազատագրում: Ումի՞ց:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ստրկամիտ կղերականությունից, բուրժուական համակարգից և այն դասակարգից, որ նոր պիտի հիմնվի իմ և իմ կուսակցության կողմից: Այդ պատճառով էլ կուսակցության գործերն առաջնային են: Որպեսզի բոլորը տեսնեն և համոզվեն նրա փաստացի ճիշտ գործելու մեջ, ես կանվանեմ այն Քոմրաշի սոցիալ-հեղափոխական Կարլ Մարքս քլուբ:

(Ներս է մտնում Խև Ավոն՝ չհոքում 2 հավ):

ԽԵՎ ԱՎՈ – Եկա պարոն:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հետո…

ԽԵՎ ԱՎՈ – Բերեցի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ի՞նչ:

ԽԵՎ ԱՎՈ – 2 հավ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչպես թե:

ԽԵՎ ԱՎՈ – Շատ արագ: Րես Սերգոյի պարտեզից գողացա: Ճիշտ այդ միջոցին, երբ իր կինն ու 2 հարսներն իր մոտ էին:

ԲՈԼՈՐԸ – *(Ծիծաղում են):*

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Շատ ճարպիկն ես:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ես ասում էի, չէ՞… Լավություն անելու համար խելքն իրենը չի: Տեսա՞ք՝ ինչ արագ լուծեց բոլոր հարցերը:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Պարոն Փանջունի, ուրեմն պայմանավորվեցինք: Մինչ ձեր հաջորդ այցելությունը երևի պատրաստ կլինի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Այո՛: Սկզբնական շրջանում հավաքները էլի կլինեն գոմում, բայց չէ որ դա ժամանակավոր է: Ճիշտ է՞:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Կարլ Մարքս քլաբ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Կլուբ:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ – Դե հա…կլուբ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Փոխանցեք, որ մի քիչ վող ուղարկեն:

ՏԵՍԱՐԱՆ 5

(Րեև Սերգոյի պուճն է: Սեղան: Գինի: Մի քանի բաժակներ: Ջրուցում է պեր Սահակի հետ):

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Համեցի՛ր, տե՛ր Սահակ, մի փոքր շունչ կքաշես, ճորից գործիդ կանցնես:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Շնորհակալ եմ, սակայն գործերս շատ են:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ոչինչ: Գործերդ չեն փախչի: Բացի դրանից՝ ես կարևոր բան պիտի ասեմ քեզ:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ծապլվարի հարավում անմշակ հողեր կան: Հողը լավն է: Կարելի է գինի ստանալ: Կարտահանենք Քոմրաշ: Բազում մարդկանց կներգրավենք այդ աշխատանքի մեջ:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Պարո՛ն, ինձ անհանգստացնում է Սմենց Վարդանի հարցը: Նա լավ մարդ է, լավ աշխատավոր: Սակայն այսօր գործազուրկ է:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Անհոգ եղիր: Ես այդ մասին մտածել եմ: Ես կանխամտածված եմ նրան գործից ազատել, որպեսզի փոքր-ինչ սթափվի: Այս վերջերս ոչինչ չէր անում:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Թույլ տուր՝ խոսեմ նրա հետ: Բացատրեմ իրավիճակը: Համոզված եմ՝ կհասկանա: Կարծում եմ՝ ներողություն էլ կխնդրի:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ներողություն խնդրելու կարիք չկա: Ես, այնուամենայնիվ, այսպես, թե այնպես նրան աշխատանքի եմ վերցնելու մոտակա 3 օրերի ընթացքում:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Պարո՛ն, ես անհանգիստ եմ նորակառույց դպրոցի համար: Այն շքեղ է, գեղեցիկ, սակայն մի խելքը գլխին ուսուցիչ չունենք: Երեխաներն ափսոս են: Նրանք արժանի են լավ կրթության որակ ունենալուն:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Այս հարցը առաջնայինն էր՝ իմ սեղանին դրված: Նամակով դիմել եմ բարձր մարմիններին: Ուսուցիչն արդեն համաձայնել է:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ես չեմ դադարում զարմանալ Ձեր հեռատեսության վրա: Մի խնդրանք էլ ունեմ: Կարելի է:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ի՞նչ խոսք…, իհարկե:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Եթե դպրոցի հարցերը լուծվեն, խնդրանքս է, որ վանքին կից մի ծխական դպրոց բացվի: Հասկացեք ինձ, Րես Սերգո, ես ծեր եմ, իսկ գործս շարունակող է պետք:

(Այդ ժամանակ ներս է մտնում Կարոն, հետո՝ Սառան)։

ՍԱՌԱ – Բարև Ծապլվարի պետական մարմիններ։

ԵՐԿՈՒՍՈՎ – Բարև, Սառա՛։

ՍԱՌԱ – Էլի երկի՞ր եք շինում։

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Այո՛, շինում ենք…, սակայն Երկիրը շենք չի, որ շինես։ Ինչ էլ անես, միևնույնն է, մի բան պակասում է։

ՍԱՌԱ – Լավ-լավ…Չեզ էլ միայն թեմա լինի։ Չէի պատկերացնի, որ այս աստիճան խորացել եք։ Օրիորդ, տե՛ր Սահակ։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Աստված քեզ պահապան, զավա՛կս։

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Մենք գինի էինք փորձում նոր բերքից...Կարող ես միանալ մեզ։

ԿԱՐՈ – Տե՛ր Սահակ...

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ասա՛, տղա՛ս։

ԿԱՐՈ – Տե՛ր Սահակ...Երեկ եկեղեցում՝ պատարագի ժամանակ, ես տեսա, որ դուք մենակ հնչեցրիք զանգերը։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Մի տեսեք, թե ինչ ուշադիր է։

ՍԱՌԱ – Իսկը հոր կտորն ա *(կիսաձայն)։*

ԿԱՐՈ – Իսկ կլինի տեր Սահակ, որ ես էլ մի օր Չեզ հետ հնչեցնեմ կոչնակը։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Տեսնում եք, Րես Սերգո, ես այս դեպքերի համար էի ասում ծխական դպրոց բացել։

ՍԱՌԱ – Ուզում եք հետնորդ պատրաստե՞լ։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Դա Աստծո կամքն է։

ՍԱՌԱ – Տեսնում ենք էլի Աստծո կամքը։

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Տղա՛ս, ուզո՞ւմ ես սովորել։

ԿԱՐՈ – Այո՛, շատ։

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Երբ ուսուցիչ ունեցավ Ծապլվարը, դու կուսանես նրա մոտ։

ՍԱՌԱ – Երբեք դեպքերից առաջ մի՛ ընկեք։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Արևն արդեն կեսօրին է մոտենում։ Գնա՞նք եկեղեցի։ Դու ուզում էիր կոչնակը զարկել, տղա՛ս։

ԿԱՐՈ – Այո՛, այո՛։ Շնորհակալություն։ Մայրի՛կ, կարելի է՞։

ՍԱՌԱ – Կարելի է *(հեգնանքով)։*

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Հիանալի տղա է։ Սակայն դու շատ ժամանակ աչքաթող ես անում նրան։

(Կարոն ու տեր Սահակը հեռանում են)։

ՍԱՌԱ – Լսի՛ր, Րես Սերգո, ես ամեն բան անում եմ. ջանք ու եռանդ չեմ խնայում, ինձ ամեն ինչից զրկում եմ, որպեսզի հոգ տանեմ, մեծացնեմ նրան, իսկ դու, դու ի՞նչ ես անում:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ինչպես թե ինչ եմ անում..., ինչ որ դու ես ուզում, այն էլ անում եմ: Անում եմ՝ դրա համար էլ հարավային հողերը չենք կարողանում վերցնել: Ֆինանս չկա:

ՍԱՌԱ – Դե, իհարկե: Հենց միայն սեփական հողերիդ մասին ես մտածում, իսկ սեփական որդուդ մասին՝ ո՞չ:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – *(Վեր է թռչում)* Լռի՛ր... Կամա՛ց խոսիր: Քեզ քանի անգամ եմ զգուշացնել՝ այդ մասին բարձր մի՛ խոսիր:

ՍԱՌԱ – Բարձր եմ խոսում, քանի որ դու ինձ անուշադրության ես մատնել:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Հիմա՛...: Հիմա ի՞նչ ես ուզում:

ՍԱՌԱ – Կոլոշենց Սեթոյի կինը սեփական ծառաներ ունի: Նրանք հոգ են տանում իր համար, գնում շուկա, հետևում արտաքինին: Իսկ ե՞ս...

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Հա ի՞նչ, ի՞նչ ես ուզում:

ՍԱՌԱ – Ես ուզում եմ հետ չմնալ նրանից: Ինչո՞վ եմ նրանից պակաս: Նրանից գեղեցիկ եմ և խելացի: Հասկացա... պարզապես նրանից անբախտ եմ: Անբախտ եմ, որ քեզ նման մեկին ունեմ: Ինձ ծառաներ կվարձես, այլապես բոլորը կիմանան՝ ով ով է:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Լավ: Ամեն բան կանեմ:

ՍԱՌԱ – Շնորհակալություն, սիրելի՛ս... ես գիտեի, որ ինձ չես մերժի:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Հուսամ, որ այս խնդրանքդ կլինի վերջինը:

ՍԱՌԱ – Այո՛, այո՛..., կարող ես հանգիստ լինել: Վերջինն է: Երևի: Լսի՛ր, սիրելիս: Լսե՞լ ես ոմն ընկեր Բ. Փանջունու մասին:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ո՞ւմ...Փանջունու: Դե հա... Այն չկայացած հեղափոխականի մասի՞ն:

ՍԱՌԱ – Չկայացա՞ծ:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Այո՛, չկայացած:

ՍԱՌԱ – Հարգելի՛ Րես Սերգո, մեկ-մեկ դուրս է պետք գալ, մարդկանց խոսակցություններին ականջ դնել... Փանջունին եկել է հեղափոխություն անելու:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Նրա նման գիտես՝ ինչքան մարդիկ են եկել ու գնացել Ծապլվար:

ՍԱՌԱ – Բայց չկա մեկը, ով եվրոպական կրթություն ունի, սոցիալական գիտությունների թեկնածու, հեղափոխական: Մի խոս-

քով ես քեզ զգուշացրի, որ հետո չասես, թե բան չգիտեի ու քեզ ոչինչ չեմ ասել:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Համարիր, որ բան էլ չես ասել: Փանջունին և կամ նրա նմանները փուչիկ են: Օդ: Ինչպես հայտնվել են, այնպես էլ կանհետանան:

ՍԱՌԱ – Այդ դեռ ես կպարզեմ... Ծառաներս ե՞րբ կլինեն իմ տանը:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Ծառանե՞ր ես ուզում: Կունենաս… Ինչպես միշտ:

ՍԱՌԱ – Ցտեսություն, սիրելի՛ս: Եվ բարև, Փանջունի՛:

(Մթնում է):

ՏԵՍԱՐԱՆ 6

(Փանջունու տաճը)

ՓԱՆՋՈՒՆԻ – Խև Ավո…, Ավո ջան: Ծապլվարի մեջ մեր կուսակցությանն հարում է ևան Սմենց Վարդանը: Դա Րես Սերգոյի մշակներից մեկն է: Այդ կեղտոտ բուրժուան դուրս է հանել Վարդանին՝ պատճառաբանելով, թե նա ծույլ է ու գող: Սմենց Վարդանը շատ լավ մարդ է, եթե հաշվի չառնենք այն փաստը, որ նա աշխատավոր է: Այդ կապակցությամբ նա պիտի ներկայացնի Ծապլվարի աշխատավորությունը իմ կուսակցության մեջ:

Հրամայում եմ քեզ՝ գնա և բեր նրան այստեղ, որպեսզի շուտափույթ իրավաբանական լուծում տրվի այս հարցին:

Խև ԱՎՈ – Բայց նա տեր Սահակի մոտ պիտի գնար՝ ներում հայցելու համար:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչի՞ համար: Ուրիշի մեղքի՞: Անթույլատրելի է: Շուտ կերպով բեր նրան այստեղ: Հովիվը հոգ է տանում իր ողջ հոտի համար, ու երբ մի ոչխար մոլորված է, նա կթողնի ողջ հոտը և այդ մեկի հետևից կընկնի:

ԽԵՎ ԱՎՈ – *(Հեռանում է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Հիմա գրում եմ հետևյալ հրավեր-հայտարարությունը, որ մինչ արևի ծագելը Խև Ավոն պետք է փակցնի եկեղեցու պատին. այդպես է պահանջում կոմիտեն: *(Կանգնում է աթոռին):* Աշխարհի աշխատավոր դասակարգ: Աիազանգը հնչեց: Սմենց Վարդանի ու Րես Սերգոյի դեպքը հայտնի է բոլորիդ: Հակառակ մեր կուսակցության խաղարարար ջանքերին՝ ագրարային կապիտալիզմը անողոք պատերազմ կհայտարարի հողագործ պրոլետարիատի մասսաների դեմ: *(Կամաց-կամաց հավաքվում են անկապ մարդիկ):* Վատություն է մեր կողմից լռելը, վատություն է չգործելը: Հաղթելու ենք: Ծապլվարի մութ ուժերը կազմակերպված կուզեն ջախջախել բանվոր դասակարգի իրավունքներն ու տապալել նորածագ անկախությունը, որ մենք այդքան զոհողություններով ձեռք բերեցինք: Ծապլվարի բոլոր աշխատավորները հրավիրված են կիրակի օրը Մկրենց կալը, ուր տեղի կունենա հրապարակային բողոքի մեծ միտինգ: Պիտի բանախոսի ընկեր Փանջունին *(բղավում են),* Խև Ավոն *(բղավում են),* ագրարային կապիտալիզմի նախագահ Սմենց Վարդանը:

Անկցի կապիտալիզմը, Անկցի օպսքուրաթիզմը, կեցցե՛ սոցիալիզմը, կեցցե՛ պրոլետարիաև: Կեցցե….մայիսի 1-ը: *(Գալիս է Խև Ավոն Սմենց Վարդանի հետ):*

ԽԵՎ ԱՎՈ – Հանգիստ պարոն, այդ ո՞ւմ համար եք այսքան գոռում:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ոնց թե ո՞ւմ՝ ժողովրդիս…

ԽԵՎ ԱՎՈ – Հա, բայց այսօր առավոտից ողջ գյուղը դաշտ է գնացել՝ աշխատանքի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ոչինչ…սա փորձություն է, որ անցնում եմ: Խև Ավո… Ահա քեզ հրավեր-հայտարարությունը: Կպցրու եկեղեցու պատին: Այսուհանդերձ պիտի հուսամ, որ հայտարարությունս ցնցող տպավորություն պիտի բերի երեկոյան, երբ գյուղացիները կվերադառնան տուն: Շտապիր: *(Մեկնում է չհոբը):* Ընկեր Փանջունի՝ կուսակցության նախագահ *(չհոբը մնում է օդում: Հետո ինքն է բռնում Սմենց Վարդանի չհոբը):* Սմենց Վարդան…ճիշտ է՞…:

ՎԱՐԴԱՆ – Ըհը…

ՓԱՆՋՈՒՆԻ – Դուք Բես Սերգոյի մշակներից եք, այո՞:

ՎԱՐԴԱՆ – Ըհը…

ՓԱՆՋՈՒՆԻ – Եվ նա ձեզ օգտագործել է: Ընդլայնել բիզնեսը, գումար կուտակել և ձեզ վռնդել գործից:

ՎԱՐԴԱՆ – *(Լուռ է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Դուք ամուսնացա՞ծ եք:

ՎԱՐԴԱՆ – Այո՛:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լավ է: Երեխաներ ունե՞ք:

ՎԱՐԴԱՆ – Ո՛չ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչո՞ւ…

ՎԱՐԴԱՆ – Ինչպես թե ինչո՞ւ: Այդպես է ստացվել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Վատ է: Ձեր կնոջ ծնողները կենդանի՞ են:

ՎԱՐԴԱՆ – Այո՛:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչո՞ւ:…ը….ը….Կներեք: Այ՛ տեսնո՞ւմ եք Ձեր երեխա չունենալու պատճառը: Ծանր հոգեբանական-բուրժուական տրավմա: Աշխատավորների իրավունքների խախտումով: Դուք չպետք է տեղի տաք:

ՎԱՐԴԱՆ – Վայ չէ, ի՞նչ եք ասում:

ՓԱՆՋՈՒՆԻ – Պայքար ու պատիժ է հարկավոր:

ՎԱՐԴԱՆ – Ո՛չ, ավելի լավ է՝ ներում խնդրեմ՝ տեր Սահակի միջնորդությանը դիմելով: Բես Սերգոն չար մարդ չէ. ինձ կների:

ՓԱՆՋՈՒՆԻ – Տեսեք, թե ուր է հասել ստրկամտությունը: Որպեսզի հետո ուրացումներ կամ խեղաթյուրումներ տեղի չունենան, գրավոր կերպով կներկայացնենք նվազագույն պահանջներդ՝ իբրև նախահիմք մեր ապագա բանակցություններին:

ՎԱՐԴԱՆ – *(Զարմացած է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – **Ա.** Րես Սերգոն պետք է վճարի Սմենց Վարդանին գործի ընդունվելու և ազատվելու ժամանակներից կուտակած գումարը: **Բ.** Օրականի հավելում և աշխատանքների ժամերի նվազում: **Գ.** Վտանգավոր աշխատանքների ապահովագրում: **Ե.** Րես Սերգոն հանճնառու պետք է լինի մինչև 20 տարի իր կողքը պահել Սմենց Վարդանին: **Զ.** Այս ամենի համար Րես Սերգոն ինճ և իմ կուսակցությանը՝ իբրև ծառայությունների փոխարեն, դրամական կարևոր նվեր պիտի անի Ծապլվարի գանճարանից: Ինչպես տեսնում ես, հարցը տեղափոխեցի սկզբունքային հողի վրա:

ՎԱՐԴԱՆ – Հիմա ես ի՞նչ անեմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Գրավոր թուղթը ներկայացնել Րես Սերգոյին և պահանջել իրավունքներդ: Վերջ:

ՎԱՐԴԱՆ – Լավ, շնորհակալություն:

ՓԱՆՋՈՒՆԻ – Նախևառաջ կեցցե՞ սոցիալիզմը, ազատությունը և պայքարը:

(Փանջունին ստիպում է, որ Սմենց Վարդանը կրկնի նրա ետևից: Հիպնոսացնում է նրան, և Սմենց Վարդանը հետևնում է: Իսկ Փանջունին կանգնում է իր հստակ տեղում ամբիոնի դիմաց: Բոլոր լույսերը մթնում են, միայն նրա վրա է լույս վառվում):

ՓԱՆՋՈՒՆԻ – Խոսքս ուղղում եմ ժողովրդիս: Վերջին անգամ փողի մասին պահանջմունքս մնաց անպատասխան: Խնդրեմ ուշադրություն դարձրեք այդ մասին: Դա էական հարց է: Մի քիչ փող ուղարկեք: *(Պառկում է քնելու):*

ՏԵՍԱՐԱՆ 7

(Վազելով ներս է մտնում Խև Ավոն ձեռքին պատռված հրավեր ևամակը և քնից հանում Փանջունուն):

ԽԵՎ ԱՎՈ – Ընկեր Փանջունի:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Չայն չկա):*

ԽԵՎ ԱՎՈ – Ընկե՛ր Փանջունի, աշխարհը փուլ է գալիս, վե՛ր կացեք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ի՞նչ է պատահել:

ԽԵՎ ԱՎՈ – Հրավեր-նամակը պատռել են *(Ցույց է տալիս):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչպե՞ս թե: Չեմ կարող ականջներիս հավատալ: Այո՛, ճշմարիտ է: Նայիր Ավո, հազիվ մի քանի կտոր են թողել, էն էլ չեն կարողացել պատռել, լավ ես կպցրել: Ապրես: *(Առանձին):* Ովքեր կարող էին գործած լինեին այս սրբապղծությունը:

ԽԵՎ ԱՎՈ – Պարո՛ն, բայց գյուղացիները բոլորը դաշտում են: Եկեղեցու շրջակայքում էլ մարդ չկար**:**

(Երևում է տեր Սահակը):

ՓԱՆՋՈՒՆԻ – Ուրեմն դավադրությունը սարքված է շատ խորհրդավոր կերպով: Համենայն դեպս այս անողը ենթադրել է, թե ռեակցիան զինաթափ պիտի լինի:

ԽԵՎ ԱՎՈ – Պա՛րոն, տեր Սահակը:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Աստված պահապան, զավակնե՛րս:

ՓԱՆՋՈՒՆԻ – Բարև, տե՛ր Սահակ: Ձեր ճառը իրոք որ տպավորիչ էր Սմենց Վարդանի վրա: Այդ ինչպես էր համբուրում ձեր ձեռքերը, օրհնում Րես Սերգոյին: Մի՞թե կարելի է այդ կերպ պաշտպանել հանցագործին:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Հանցագո՞րծ, Րես Սերգոն Ծապլվարի ամենաբարի մարդն է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչպիսի պրիմիտիվ պատասխան: Րես Սերգոյի զիջողությունները ոչ մի կերպ բավարարություն չեն տալիս մեր պահանջմունքներին:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Եվ ի՞նչ կուզեք: Սակայն Րես Սերգոն համաձայն է հետ վերցնել Սմենց Վարդանին հին աշխատանքին:

ՓԱՆՋՈՒՆԻ – Դա երկրորդական հարց է: Բուն, էական հարցը սկզբունքային է: Գյուղացիներն իրենց տունն ու հողային սեփականությունը միայն այն ժամանակ կարող են փրկել, երբ իրենք դառնան ընկերական սեփականություն և ընկերական ար-

տաղրություն, իսկ անհատական սեփականությամբ գյուղացին կորուստ է կրում: Հիմա շատ ավելի կարևոր հարցեր կան: Ազատագրումը և թե ով է պատռել հրավեր-հայտարարությունը:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Բայց օրհնած, դրանք ի՞նչ կապ ունեն Սմենց Վարդանի ճամփվելու հետ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ա՜…. Ուրեմն դուք խոսքներդ մեկ եք արել: Այժմ մի ուժեղ հակագրոհ է պետք:

ԽԵՎ ԱՎՈ – Ընկեր Փանջունի, թող Րես Սերգոյի տունը վառեմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Այ տղա, հո դու ֆաշի՞ստ չես: Քաղաքակիրթ եղանակ ա պետք:

ԽԵՎ ԱՎՈ – *(Զարմացած է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Սիտինգ է հարկավոր: Ու հենց այս պահիս:

(Հանում է դեր Սահակի գլխից գլխարկն ու հարմարեցնում մի երկար փայտի վրա՝ պալով Խև Ավոյի ձեռքը: Շարժվում են դեպի Րես Սերգոենց տուն):

ՓԱՆՋՈՒՆԻ – Տղե՛րք, վար տվեք այդ դավաճանի ապակիները:

ԽԵՎ ԱՎՈ – Հա, բայց սա ապակի չունի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ափսո՜ս: Բայց ոչինչ, թող ձեր սրտները հանգիստ լինեն, քանի որ միտինգը հաջող անցավ:

(Հանկարծ Րես Սերգոյի տան դուռը բացվում է, բոլորը վախից թաքնվում են, երևում է Սմենց Վարդանը, ձրան բացիով դուրս է շպրտում տանուտերը՝ Փանջունու գրած պահանջները ծալած բերանը խցկած):

ԽԵՎ ԱՎՈ – Ի՞նչ է պատահել, բարեկա՛մ: Անկաշկանդ ասա՝ կուսակցությունը մեջքիդ է:

ՎԱՐԴԱՆ – Եկա, որ ձորից գործի անցնեմ: Հանդիպեցի տեր Սահակին, նա օրհնեց: Մտա Րես Սերգոյի տուն, սեղանին դրեցի պահանջների թուղթը, նա նայեց, նայեց ու հարձակվեց վրաս, ասես գազան լիներ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ծապլվարի բնակիչներ: Տեսնում եք՝ ով գործող կառավարության կազմից չէ, այլևս գործի չի կարող ընդունվել: Սա այսպես թողնել չի կարելի: Խև Ավո…

ԽԵՎ ԱՎՈ – Լսում եմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Պետք է կազմել ստորաբաժանումներ և շրջափակել Ծապլվարի կենտրոնը: Հրամայեք, որ ժողովուրդը զինվի. պայքարը թեժ է լինելու:

ԽԵՎ ԱՎՈ – Դպրոցական հասակի երեխաները շատ են, նրանց կվստահենք փողոցները: Համ էլ երեխաներին ով մատով կկպնի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լավ գաղափար է: Վազի՛ր հենց հիմա այրի Սառայի տուն ու բեր նրա որդուն՝ Կարոյին:

ԽԵՎ ԱՎՈ – *(Վազելով հեռանում է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Բես Սերգոյի տան մեջ գյուղի մեծ ազատականությունը, գումարած կղերականության և ռեակցիայի մութ ուժերը, կազմեցին մի սատանայական խորհուրդ: Այն է՝ դիմել միացյալ ընկերության և խնդրել Ծապլվարի մեջ դպրոց բացեն *(երևում են Սառան և Կարոն, որոնք, ոգևորված նրա ելույթով, կանգնում են նրա կողքը)* պայմանով, որ ծախսերը գյուղացիները հայթայթեն:

ՍԱՌԱ – Այս միջոցով այդ կեղտոտ բուրժուաները կուզեն իրենց ճանկի մեջ առնել Ծապլվարի դպրոցականությունը, ապականել այդ մատղաշ էակները, ստրկության խմորով շաղախել նրանց անարատ հոգիները և փչացնել ամբողջ ապագա սերունդը*: (Սառան հեռանում է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Վտանգն ահագին է, և պետք է անմիջական դարման: Սիրելի՛ երիտասարդներ, տեսեք, թե ինչ սարսափելի դավ է նյութվում ձեր դեմ: Դուք իրավունք ունեք ձեր չսիրած դասատուին հեռացնելու, իրավունք ունեք դասի չգնալու, դասադուլ հայտարարելու:

(Լսվում են գոռոցներ):

ՓԱՆՋՈՒՆԻ – Մի՛ սովորեք… Անցե՛ք մեր շարքերը…: Նրանք ձեզ ոչինչ չեն սովորեցնի: Եկե՛ք այստեղ: Եկե՛ք միասին պայքարենք ազատության համար: Ռե՛ս Սերգո, հեռացի՛ր: Սերգո՛, հեռացի՛ր:

ԽԵՎ ԱՎՈ – Կուսակիցնե՛ր և հավատակիցնե՛ր: Ձեզ եմ ներկայացնում դպրոցականների առաջնորդ, հզոր խելքի տեր Կարոյին:

ԲՈԼՈՐԸ – *(Սուլում են, բղավում են):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Բան չի մնացել: Հաղթելու ենք: Պայքար է հարկավոր մինչև վերջ:

ՎԱՐԴԱՆ – Մենք թույլ չենք տա՝ մեր իրավունքները ոտնակոխ արվեն:

ԽԵՎ ԱՎՈ – Թույլ չենք տա՝ մեր փողերը գողանան մեզանից կեղտոտ բուրժուաները:

ԹՈՌՆՈՒՀԻ – Սատանանե՛ր: Փանջունին սատանա է: Նա սպանեց միակ այծս: Միակ ապրուստի միջոցս:

ԽԵՎ ԱՎՈ – Փանջունին, լավությունից բացի, վատություն երբեք չի արել:

ԹՈՌՆՈՒՀԻ – Նրա գրածը այծս կերել է և սատկել: Ոչ թե նյութից, այլ գրվածքի բովանդակությունից: Պատկերացնում եք՝ ինչեր էր

գրել, որ այծս չի դիմացել: Մոտ չգաք նրա գրածներին: *(Ծիծաղում են):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Հարգելի՛ կուսակիցներ: Խուճապի մատնվել պետք չէ: Վաղը չէ մյուս օրը բոլորս միահամուռ, մեկ մարդու պես հավաքվում ենք Կարոյենց դպրոցում, որպեսզի լուծում տանք մեր պայքարին: Մենք չենք հանդուրժի անարդարությունը: Րես Սերգոյի կառավարությանը հաշված օրեր են մնացել: Սերգո՛, հեռացի՛ր:

ԲՈԼՈՐԸ – Սերգո՛, հեռացի՛ր: *(Պտտվում են ողջ դահլիճով մեկ և հեռանում):*

ՏԵՍԱՐԱՆ 8

(Եկեղեցի: Տեր Սահակը աղոթում է: Հայտնվում է Սառան)

ՍԱՌԱ – Մեղքերիդ թողություն ես աղերսում, թե խնդրում ես, որ չտեսնես ինձ: Չնայած խնդրես, չխնդրես: Ես եղել եմ կամ ու կլինեմ, քանզի մեր տղան մեծանում է:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Դու ի՞նչ ես ուզում: Հիմա ի՞նչ ես ուզում: Միշտ ուզում ես… *(չի ավարտում):*

ՍԱՌԱ – Միշտ ուզում եմ ուշադրության կենտրոնում լինել:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Է հետո՞, չկաս…Եկեղեցական կյանքում քեզ այնպես եմ ներկայացրել, որ մահիցդ հետո նկարդ կարող են Սրբերի շարքը դասել:

ՍԱՌԱ – Դե՛ վերջացրու: Ես հետմահու ոչինչ չեմ ուզում: Ռեալ է պետք լինել, տե՛ր Սահակ *(Մոտենում է):*

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ռեալ ես…, դրա համար էլ տղայիդ շեղել ես իրական ճանապարհից:

ՍԱՌԱ – Մեր տղային…

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Դե բավական է…, հիմարություններ մի՛ խոսիր:

ՍԱՌԱ – Հիմարություն…Թե մոռացել ես, որ մինչ քահանա դառնալդ դու սովորական քաղաքացի ես եղել: Թե մոռացել ես այդ օրվա բարձր տրամադրությունդ, հաճոյախոսություններդ: Քո սև քողի տակ իսկական սրտակեր է թաքնված…:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Չհամարձակվես…: Սա քեզ համար փողոց չի: Ինչո՞ւ ես եկել:

ՍԱՌԱ – Լավ-լավ…, չէի պատկերացնի, որ այս աստիճան չոբան կլինես:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Համբերությունս մի՛ չարաշահիր:

ՍԱՌԱ – Ուրեմն ինձ լսի՛ր, Սահակ: Խաղերն ավարտվել են: Ղեկն այլևս մեր ձեռքում է: Քեզ լավ տարբերակ եմ առաջարկում. կա՛մ մեր կողմից ես, կա՛մ մեզ դեմ: Ժամանակ ունես մտածելու ընդամենը մինչև վաղը: Հենց վաղն էլ, երբ ես հանդիպացնեմ 2 հակադիր ուժերին, դու հնարավորություն կունենաս անցնելու մեր կողմը: Հնարավոր է, որ ես թողնեմ քեզ նույն պաշտոնին:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Դուք բոլորդ խելքներդ թռցրել եք...: Ի՞նչ եք անում: Այս երկիրը հանձնում եք փանջունիներին: Ի՞նչ է՝ վատ եք ապրում... Ի՞նչ է եկեղեցի չունեք..., ազատություն չունե՞ք..., բանակ չունե՞ք..., կառավարություն չունե՞ք... Խելք չունեք, խելք...

ՍԱՌԱ – Ես ասացի այն, ինչ պիտի ասեի: Հա ևս մի բան...Դու չպետք է քվեարկես Րես Սերգոյի օգտին...: Այլապես:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Այլապես ի՞նչ:

ՍԱՌԱ – Այլապես բոլորը կիմանան մեր փոքրիկ գաղտնիքի մասին, որը արդեն 14 տարեկան է:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Անիծվի այն օրը:

ՍԱՌԱ – Սա փողոց չէ, տե՛ր Սահակ: Չհամարձակվես: Ես գնում եմ, իսկ դու հետևություններ արա: Տե՛ս՝ չսխալվես...

(Սառան հեռանում է: Տեր Սահակը անկյունում վառած մոմը հանգցնում է, խաչակնքում: Մթնում է):

Վարագույր

II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱՐԱՆ 1

(Քոմարշի Կարլ-Մարքս հեղափոխական կլուբ: Փանջունին ստվերի մեջ է: Նա ներկայանում է մի քանի կերպարներով: Ստվերից երևում են, թե դա որևէ հանրահանաչ դեմք է: Բարձրանում է վարագույրը: Սառա և Փանջունի տանգո դուետը, որից հետո նա մոտենում է միկրոֆոնին՝ իբրև միտինգում իրեն լսելու ամենահարմար գործիք):

ՓԱՆՋՈՒՆԻ – Հարգելի՛ ներկաներ: Խնդրում եմ ուշադրություն: Ես պաշտոնական հայտարարություն ունեմ: Այսուհետ մեր կուսակցությունը դիմելու է կտրուկ գործողությունների: Դա նշանակում է, որ մեր քայլերն ընդդեմ այս անարդար պետական մեքենայի թեժանալու են: Ես հիմա հավատակիցներ եմ փնտրում, որոնք իմ կողքին կլինեն՝ փլուզելու այն հասարակարգը, որ կառուցում է Րես Սերգոն:

ՍԱՌԱ – Ժողովուրդ, երեկ ինչ որ երազում էինք, կատարվում է, ժողովո՛ւրդ: Ես գնացել էի Րես Սերգոյենց հրապարակ: Առաջին խմբի հետ քայլելով եկել եմ, երբ նրա մարդիկ ուզում էին պատնեշել, չթողնել մեզ, բայց կոտրվեց իրենց պատը: Ժողովո՛ւրդ, դուք հպարտությունն եք, արժանապատվությունն եք այս երկրի: Ապրենք բոլորս, ապրի մեր բոլորի առաջնորդը՝ կոնգրեսական Ընկեր Փանջունին:

(Հավաքվածները երկար ժամանակ վանկարկում են՝ «Փանջունի, նախագա՛հ»):

ՓԱՆՋՈՒՆԻ – Խոսք ունի ասելու մի կին:

ՄԻ ԿԻՆ – Սիրելի՛ հավատակիցներ: Դեռ չկառուցված, բայց արդեն դպրոցի տնօրեն ընտրված Րես Սերգոյի հարսը օգոստոսի 18-ին աշխատանքից ազատել է դպրոցի բոլոր ուսուցիչներին: Իսկ քանի որ այս դպրոցում աշխատելու էր բավականին շատ՝ 2 ուսուցիչ, որևէ բան հարկավոր է ձեռնարկել: Ես դպրոց եմ գնացել 36 տարեկան հասակում, սովորել 3 ամբողջ տարի… Մանկավարժ եմ, իսկ նա, որն ընդամենը մեկ տարի է մեր դպրոցում, և հազիվ այն տարիքին լինի, ինչքան ես եմ, գրչի մի հարվածով ինձնից ազատվեց: Մեր դպրոցում բացել է իր մասնավոր դպրոցը՝ Ծապլվարակը, և հիմա ամեն ինչ ուզում է անել, որ բոլորը իրենց երեխաներին տանեն իր մասնավոր դպրոցը: Հարգելի՛ ընկեր Փանջունի, մեզ օգնեք՝

լուծելու այս խնդիրը: Նոր ուսուցիչը ճանապարհին է: Մի բան պետք է ձեռնարկել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Այժմ մեր պայքարը շարունակվում է: Պետք չէ ընկճվել, պետք չէ հուսախաբ լինել, ամեն բան ուրախ և միասնական: Մեր լավ քույրիկի հարցն այսպես չենք թողնելու: Նախևառաջ պետք է սուր միջոցներ ձեռնարկել, կանխելու այն ստրկամիտ կղերականության մուտքը, որ ճանապարհին է..., պետք է կանխել չար ուսուցչի մուտքը մեր քաղաք: Նրանք ուզում են պատերազմ, նրանք այդ պատերազմը կստանան: Այժմ անակնկալ բոլորի համար: Ես կարող եմ հայերեն երգել: Մաեստրո՛, երաժշտություն: Պարում են բոլորը:

(Երգում է Փանջունիի 6x8 ռիթմով, և բոլորը պարում են, իրեն չայնակցում է Սառայի ծառան: Հավաքվում են... Խմբվում, զինվում, պատրաստվում գնալու քաղաքի կենտրոն, երբ Կոլոշենց Սեթոն մի կողմ է տանում):

ԿՈԼՈՇԵՆՑ ՍԵԹՈ – Պարո՛ն Փանջունի, կարելի՞ է Ձեզ մի րոպեով: *(Տալիս է մի ծրար, որի մեջ փող է դրված)*:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հանուն ինչի՞:

ԿՈԼՈՇԵՆՑ ՍԵԹՈ – Հանուն մեր կուսակցության, հանուն կոնգրեսի: Հանուն բարի գործի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իհարկե:

ԿՈԼՈՇԵՆՑ ՍԵԹՈ – Խոսքը Րես Սերգոյի մասին է: Նա իմ վաղեմի թշնամին է: Ճիշտ է՝ նա մի քանի արտ է ինձ նվիրել, բայց ես հիմա մասնայաբար կհրաժարվեմ և հետ կվերադարձնեմ այն պայմանով, որ երբ վերջ տաք նրա կառավարությանը, ես վրեժ լուծեմ և դառնամ պաշտոնակից: Իհարկե, ես Ձեր լավության տակից դուրս կգամ: Կոնգրեսին և Ձեզ մի կլորիկ գումար կտամ: Չէ՞ որ մեզ գումար հարկավոր է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Վրեժխնդիր ժողովուրդն է ուզում լինել, իսկ դու ժողովրդի մի մասն ես: Իսկ փող կուսակցությանն ամեն դեպքում անհրաժեշտ է:

ԿՈԼՈՇԵՆՑ ՍԵԹՈ – Ուրեմն պայմանավորվեցինք:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Շարունակում է երգել, և բոլորը պարում են)*:

(Հավաքվում են, և բոլորը միասին գալիս են բեմ առաջ: Հանդիսատեսի շարքերից բեմ է գալիս ուսուցիչը: Ինչ-որ բան է ման գալիս, երբ կատարած ամբոխը հարձակվում է նրա վրա):

ԽԵՎ ԱՎՈ – Պարո՛ն, ինչպես դուք եք ասում, ես սրան մի հատ դաս իս ֆանտաստիշ աձե՞մ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ամեն բան իր ժամանակն ունի, միայն մնում է պարզել, թե երբ է այդ ժամանակը: *(Առանձին):* Հարգելի՛ ուսյալ անձնավորություն, ինչպես քաղաքակիրթ ֆրանսիացիներն են ասում, խոսե՞նք տետ ա տետ:

ՈՒՍՈՒՑԻՉ – Մենք ծանո՞թ ենք: Ի՞նչ է այստեղ կատարվում: Դուք Րես Սերգոյի մարդի՞կ ե՞ք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ավելին՝ մենք նրա հավատակիցներն ենք: *(Բոլորը ծիծաղում են):* Կարելի է իմանալ Ձեր այցի նպատակը:

ՈՒՍՈՒՑԻՉ – Նոր կրթական ծրագիր: Ես ուսուցիչ եմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հարգելի maître, հուսով եմ, որ մեր քաղաքավարի մերժումը Ձեզ բավարար կլինի, որպեսզի Դուք հետ գնաք այն ճանապարհով, որով հայտնվել եք այստեղ:

ՈՒՍՈՒՑԻՉ – Ի՞նչ իրավունքով: Ես ներկայացնում եմ համաեվրոպական կրթական ծրագրի պահանջը այս տարածաշրջանում, ես կոնկրետ գործի և առաքելության համար եմ կանչված, իսկ Դուք ինձ ասում եք…

ԽԵՎ ԱՎՈ – Նվաստը կարծես չի հասկանում: Մենք բավականաչափ կրթված ենք և Ձեր ծառայությունների կարիքը չենք զգում:

ՈՒՍՈՒՑԻՉ – Ինչպե՞ս կարող եք չզգալ, երբ գյուղում դպրոց՝ որպես կառույց, գոյություն չունի, էլ չեմ խոսում ուսուցիչների պակասի մասին: Րես Սերգոյի հետ նամակագրությունից հետո պարզ ընդունվեց այն որոշումը, որ պետք է բացվի դպրոց ոչ միայն Ծապլվարի, այլև Քոմրաշ ազգային փոքրամասնություն գյուղի համար:

ՓԱՆՋՈՒՆԻ – Նախևառաջ սուտ են այն ինֆորմացիաները, թե Ծապլվարում դպրոց չկա: Կա: Նա էլ ապագա ուսուցչուհին է *(ցույց է տալիս կնոջը),* իսկ նա *(ցույց է տալիս Կարոյին)*՝ ապագա տնօրենը:

ՈՒՍՈՒՑԻՉ – Բայց նա դեռ դպրոցական է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իհարկե: Ով ավելի լավ կհասկանա դպրոցի ու դպրոցականի խնդիրները, եթե ոչ այդ ոլորտի ներկայացուցիչը: Բացի դրանից, մեր նոր կառավարությանն անհրաժեշտ են երիտասարդ կադրեր: Այդ պատճառով ասում ենք Ձեզ, որ Դուք սխալ հասցեով եք եկել:

ՈՒՍՈՒՑԻՉ – Սա երևի թյուրիմացություն է: Ես ուզում եմ տեսնել Րես Սերգոյին կամ էլ ոստիկանապետին:

ԽԵՎ ԱՎԱՈ – Դե հերիք եղավ, բոլ եղավ: Հանուն կոնգրեսի, հանուն մեր ազգի *(Ձեռքի մահակով հարված է հասցնում ուսուցչի գլխին)*:

ՈՒՍՈՒՑԻՉ – Օգնեցե՛ք…Ծեծում են: Ոստիկանություն:

(Աղմուկ է բարձրանում… Հետզհետե ուժեղանում է: Հայտնվում են ոստիկաններ: Երաժշտություն: Երևում է ոստիկանապետը ստվերում իր երկու ոստիկանների հետ: Ձերբակալում են մի բղդի, որին հետապնդում էին 3 տարի: Ամբոխը շարժվում է դեպի կիսաքանդ մի շենք, որ դպրոց էր… դուրս է գալիս՝ բեմից աղմկելով):

ՏԵՍԱՐԱՆ 2

(Մութ է, վագելով ներս է մտնում Խև Ավոն):

ԽԵՎ ԱՎՈ – Պարո՛ն, արթնացեք, խնդրում եմ Ձեզ…Պարո՛ն…

ՓԱՆՋՈՒՆԻ – Եվ դա կլինի մեր միակ փրկությունը: *(Պտտվում է կողքի):*

ԽԵՎ ԱՎՈ – Կեցցե՜ պուրժուազիան…

ՓԱՆՋՈՒՆԻ – Իիիի՜նչ…Դո՞ւ… *(Հարչակվում է վրան):*

ԽԵՎ ԱՎՈ – Ո՛չ, ո՛չ պարոն, ես պարզապես ասեցի, որ Ձեզ քնից հանեմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Էլ մի ստի՛ր…Ես լավ եմ ճանաչում քեզ, Րես Սերգո:

ԽԵՎ ԱՎՈ – Ես եմ պարոն, Խև Ավոն… Ուշքի՛ եկեք, արթնացե՛ք: Կեցցե՜ հեղափոխությունը: Կեցցե՜… Փանջունին:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ա՜, այդ դու ես Ավո: Ինչ է պատահել այս ուշ ժամին:

ԽԵՎ ԱՎՈ – Բանն այն է, որ մի կին կա, որին Դուք, իհարկե, ճանաչում եք: Սառան:

ՓԱՆՋՈՒՆԻ – Սառան ի՞նչ..

ԽԵՎ ԱՎՈ – Նա խելագարվել է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Բնական է:

ԽԵՎ ԱՎՈ – Խելագարվել է Ձեր կուսակցության պատճառով:

ՓԱՆՋՈՒՆԻ – Արդարացի է…, իիի՞նչ:

ԽԵՎ ԱՎՈ – Այո՛, պարոն: Նա ասում է, որ եթե Ձեզ չտեսնի, կմեռնի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչպե՞ս թե:

ԽԵՎ ԱՎՈ – Շատ ծանր է վիճակը…

ՓԱՆՋՈՒՆԻ – Բա ի՞նչ անենք…

ԽԵՎ ԱՎՈ – Տեսնել է անհրաժեշտ, այն էլ շտապ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լավ, հանուն հայրենիքի: Ո՞ւր ենք գնում:

ՏԵՍԱՐԱՆ 3

Ծառա 1 – *(Սառայի տունն է: Մեծյակից դուրս է գալիս տիրուհու գլխաշորով):* Պատկերացնո՞ւմ ես, հետո նա նայեց ուղիղ աչքերիս մեջ ու ասաց, որ չքվեմ, քանի նա իր 2-րդ հանգուցյալ ամուսնու պատմությունը չի սարքել գլխիս *(ծիծաղում է):*

Ծառա 2 – Չգնա՞նք շուկա:

Ծառա 1 – Բա որ տիրուհին դուրս գա:

Ծառա 2 – Իբր նրան չես ճանաչում: Նա մտել է՝ լոգանք ընդունելու: Մտել է առավոտ 9:30-ին, հիմա 12:30 է, նա դուրս կգա մոտավորապես 2-ի, 2:30-ի կողմերը ու կսկսի *(տիրուհու ձևան է խոսում).* Անո՛ւշ, ես քեզ զգուշացրի բաղնիքի գոլորշին շատացրու, հետո դիմում է քեզ, Անգի՛ն, որ դուրս եմ գալիս, պատուհանները փակի՛ր, թե չէ կարող է ականջների բորբոքում սկսվի մոտս: Դե շո՛ւտ անցեք գործի:

Միասին – Իսկույն, տիրուհի՛ս:

Ծառա 1 – Լսի՛ր, ես պատրաստվում եմ, իսկ դու չես անհանգստանո՞ւմ:

Ծառա 2 – Ինչի՞ համար:

Ծառա 1 – Ոնց թե: Ինքը՝ Փանջունին, մեր տուն է գալու:

Ծառա 2 – Լսի՛ր, դու իսկապես կարծում ես, որ Փանջունին կհավատա այդ պատրվակին, թե տիրուհին գժվել է, և կգա՞:

Ծառա 1 – Ես հավատում եմ, գոնե հույս չեմ կորցնում: Աչքս ճամփին մնաց…:

Ծառա 2 – Մի խելագար էլ դու ես…:

Ծառա 1 – Դու նախանձում ես ինձ, որ ես աչք եմ դրել քաղաքի ամենաազդեցիկ տղամարդուն, և խանդից մեռնում ես:

(Ներս է գալիս Սառան, ընկնում են իրար հեւրևից և սպասում Փանջունուն: Մթնում է: Փանջունին Խև Ավոյի հետ):

ՓԱՆՋՈՒՆԻ – Սա՞ է:

ԽԵՎ ԱՎՈ – Այո՛:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հանգիստ է շատ: Ձայներ էլ չեն գալիս:

ԽԵՎ ԱՎՈ – Երևի նոպան դեռ չի բռնել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Չէ՛: Կա՛մ մենք սխալ ենք եկել, կա՛մ նա մեռել է: Աստված հոգին լուսավորի՛:

(Թակում է դուռը: Միանգամից լսվում են Սառայի հիստերիկ բղավոցները):

ԽԵՎ ԱՎՈ – Ըհը…: Աստված հոգին լուսավորեց:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ներեցե՛ք, կարող ենք ներս գալ:

ՍԱՌԱ – Ո՜չ: *(Գոռում է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչո՞ւ:

ՍԱՌԱ – Որովհետև դեռ պատրաստ չենք:

ԾԱՌԱ 1 – Տիկին այս մեկը՞ *(կուլիսից):*

ՍԱՌԱ – Ո՛չ:

ԾԱՌԱ 2 – Իսկ այս մեկը:

ՍԱՌԱ – Այո՛, դա: Շո՛ւտ արեք:

ՍԱՌԱ – Չլսեցի՞ք: *(Հեռանում են ծառաները): (Փանջունուն):* Պատրաստ ենք: *(Հանդիսատեսին)* Թելը քաշիր, դուռը կբացվի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Գնալով հետաքրքիր է դառնում, Խև Ավո ջան:

ԽԵՎ ԱՎՈ – Ջգույշ եղեք, պարո՛ն, հնարավոր է նա զինված լինի:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ջինվա՞ծ:

ԽԵՎ ԱՎՈ – Դե այո, Ռոմեո և Ջուլիետը հիշեք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լսի՛ր, Ավո, դու իսկապես խև ես, ինչ Ռոմեո-Ջուլիե՞տ… *(ևերս է մրմնում):*

ԽԵՎ ԱՎՈ – *(Առանձին):* Սե՜րը: պարոն Փանջունի: Սեեե՜րըըը….

ՓԱՆՋՈՒՆԻ – Բարև Ջեզ:

ՍԱՌԱ – Դեռ կհասցնենք բարևել: Եկեք միանգամից գործից խոսենք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ի՞նչ գործ:

ՍԱՌԱ – Մեր:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ներեցե՛ք տիկին, ինչ մեր, ինչ գործ:

ՍԱՌԱ – Դուք հավատում եք հրաշքներին:

ՓԱՆՋՈՒՆԻ – Շատ պուրժուական հարց եք տալիս: Իսկ դուք հավատո՞ւմ եք:

ՍԱՌԱ – Եթե դուք այստեղ եք, ուրեմն դա արդեն հրաշք է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լսե՛ք, տիկի՛ն:

ՍԱՌԱ – Դուով, դուով խոսեք ինձ հետ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լսի՛ր, տիկին, ես իմ թանկագին ժամանակը թողել-եկել եմ այստեղ, որպեսզի դուք հրաշքներից խոսե՞ք: Ինձ ասացին, որ դուք խելագարվել եք:

ՍԱՌԱ – Ես չեմ խելագարվել: Ես խելագարվում եեեեմ…… *(Ուշաթափվում է ընկնելով Փանջունու գիրկը):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Աստված իմ: Օգնեցե՛ք, ջուր:

ԾԱՌԱ 1 – Ահա խնդրեմ, համեցե՛ք:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Խմում է):*

ԾԱՌԱ 1 – Անուշ *(ձեռքը պտրելով)*:

ՓԱՆՋՈՒՆԻ – Շնորհակալություն:

ԾԱՌԱ 1 – Չէ՛, սխալ հասկացաք: Անունս Անուշ է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Շատ հաճելի է, Ընկեր Բ. Փանջունի:

ՍԱՌԱ – Լավ-լավ…, գոլորշիացիր:

ԾԱՌԱ – Ես ա՛յն սենյակում եմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լսե՛ք, տիկի՛ն, դուք հո խայտառակ չե՞ք *(ծառային):*

ՍԱՌԱ – Ի՞նչ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Բժշկի գնացել ե՞ք:

ՍԱՌԱ – Իմ բժիշկը դուք եք: *(Վեր է կենում և դանդաղ մուրենում ձրան):* Դուք երբևէ սիրահարվել ե՞ք:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Խառնված):* Ոո՛չ:

ՍԱՌԱ – Հո դուք ապուշ չե՞ք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իհի՞նչ:

ՍԱՌԱ – Դե ես դա չէի ուզում ասել: Ուզում էի ասել, ինչ անուշադիր եք, այսպիսի կին է Ձեր առջև կանգնած…:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ավելի շուտ գիրկս նստած…:

ՍԱՌԱ – Դե լավ նստած…Դուք անտարբեր եք, իսկ Ձեզ կին է պետք, քնքշանք…: Սեկը, ով կցրի մտքերը, կվանի բոլոր թեկնածուներին: Ես Ձեզ համար ամեն ինչ կանեմ, նույնիսկ հացադուլ եմ հայտարարել, պարո՛ն Փանջունի…, սիրելի՛ս…

ՓԱՆՋՈՒՆԻ – Իհի՞նչ…

ՍԱՌԱ – Ինչ լսեցիք…

ՓԱՆՋՈՒՆԻ – Հանգիստ թողեք ինձ…

ՍԱՌԱ – Դուք չեք փոշմանի: Ես շատ կապեր ունեմ Ծապլվարում, որքան հաջողությունների կհասնենք միասին:

ՓԱՆՋՈՒՆԻ – Օգնեցեե՛ք…

ՍԱՌԱ – Լավ-լավ, չէի պատկերացնի, որ այս աստիճան ռոմանտիկ եք:

(Ներս է գալիս հաջորդ ծառան՝ սուրճի սկուտեղը ձեռքին):

ԾԱՌԱ – *(Կուրրատրվելով):* Ձեր սուրճը:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Աչքերը պլշած, բերանը բաց):* Mersi…

ՍԱՌԱ – Գլողը քեզ տանի *(այնպես, որ Փանջունին չլսի):*

ԾԱՌԱ – Եթե ինչ-որ բանի կարիք ունեք, ես այն սենյակում եմ *(հեռանում է):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Դուք երբևէ սիրահարվե՞լ եք:

ՍԱՌԱ – *(Առանձին):* Կարծես սկսում ենք հասկանալ միմյանց: Այո՛, սիրելի՛ս, հենց Չեեեեեե…. *(չի հասցնում ավարտել):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Հո դուք ապո՞ւշ չեք:

ՍԱՌԱ – Ի՞նչ…

ՓԱՆՋՈՒՆԻ – Դե ոչ, սխալ հասկացաք: Ես ուզում էի ասել *(նայում է Սառայի գիրկը)*, թե ինչ տղամարդ է ձեր առջև կանգնած:

ՍԱՌԱ – Ես նույնիսկ կասեի՝ գիրկս պառկած:

ՓԱՆՋՈՒՆԻ – Դե լավ, գիրկը պառկած: Անուշաղիր եք: Նրանք ովքե՞ր են, է՞: Անընդհատ խանգարում են:

(Ներս են մտնում ծառաները):

ՍԱՌԱ – Նրանք քրդեր են:

ՓԱՆՋՈՒՆԻ – Յախք…

ՍԱՌԱ – Իմ ծառաները:

ՓԱՆՋՈՒՆԻ – Յիաա՞ …

ՍԱՌԱ – Նրանք հիմա կգնան:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ո՛չ:

ՍԱՌԱ – Ինչո՞ւ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հիմա կբացատրեմ: Նստեցեք: Դուք էլ: Բյուզանդիոնի ընթերցողները, եթե իմ դասախոսությունների շնորհիվ կրցած են գիտակից հասկացության մը տիրանալ, չեք պատկերցնե, թե մտքովս ինչ փայլուն գաղափար մը անցավ…

ԲՈԼՈՐԸ – Իսկապե՞ս…մերն էլ… *(Գալիս են դեպի նրան):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Ո՛չ, սխալ հասկացաք, պետք է ստեղծել կանանց միություն….Օգնեցեեեք: *(Հայտնվում է Խև Ավոն):*

ԽԵՎ ԱՎՈ – Ձեր պահապան Խև հրեշտակ Ավոն ձեր կողքին է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Մի քիչ փող ուղարկեք *(ամբիոնի առջև կանգնած)*:

(Սառան սկսում է երգել: Ընթացքում էլի նորից ընկնում է Փանջունու հետևից: Բեմը նախապատրաստում են պաշարման):

ՏԵՍԱՐԱՆ 4

ԿԱՐՈ – Բարև ձեզ, տե՛ր Սահակ:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Բարև տղաս: Ես ուրախ եմ, որ այցելեցիր ինձ: Եկել ես՝ օգնե՞ս ինձ, որ կոչնակը հնչեցնենք՝ պատարագի համար:

ԿԱՐՈ – Ո՛չ, ես եկել եմ՝ խոսեմ Ձեզ հետ:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ես լսում եմ քեզ, ասա՛:

ԿԱՐՈ – Եկել եմ ասեմ, որ Աստված չկա, որ դու մարդկանց խաբում ես, նրանց թաղելու ժամանակ անհասկանալի լեզվով ես խոսում, փողը վերցնում:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Թող Աստված ների քեզ, տղա՛ս, քանզի չես հասկանում՝ ինչ ես խոսում:

ԿԱՐՈ – *(Գոռալով):* Ես լավ էլ հասկանում եմ ու համոզվել եմ դրանում:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Կարո՛, տղա՛ս, գրքում այդպես է գրված, ապաշխարե՛ք, առանց դրա չեք մտնի Աստծո արքայությունը: Ես պարզապես միջնորդ եմ Աստծո և մարդկանց միջև:

ԿԱՐՈ – Դու պարզապես խաբեբայի մեկն ես: Դու ինձ մոլորեցրել էիր կղերականության և … և.. Օպսքուրանթիզմի մեթոդներով:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ինչե՞ր ես խոսում: Ինչե՞ր ես խոսում:

ԿԱՐՈ – Այո՛, կեցցե ազատությունը և ընկ. Փանջունու կուսակցությունը:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ա … ահա թե ինչ: Ուրեմն այդ սատանա՞ն է քեզ վարակել իր տխմար գաղափարներով:

ԿԱՐՈ – Չհամարձակվե՛ք... դուք պատասխան եք տալու մեր այս վիճակի համար:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ի՞նչ վիճակ, մի՞թե վատ եք ապրում:

ԿԱՐՈ – Այդ երկրորդական հարց է: Բուն էական հարցը շատ ավելի սկզբունքային է, քանզի ձեր հավատով խախտում եք մարդու իրավունքը:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Աստված իմ, այս ինչպե՞ս են քեզ զոմբիացրել: Դու խոսում ես այնպես, ինչպես այդ Փանջունին, որը բան չունի ասելու: Նա միայն խոսում է, անընդհատ խոսում է, բայց ոչ մի կարգին միտք չի ասում:

ԿԱՐՈ – Ես այստեղ եմ, որպեսզի դուք Փանջունուն հանձնեք եկեղեցու գանձարանը**:**

ՏԵՐ ՍԱՀԱԿ – *(Ծիծաղելով)։* Ի՞նչ, լսի՛ր, իսկապես խելքդ թռցրել ես։ Ի՞նչ գանձարան։

ԿԱՐՈ – Մեռելների գանձարանը։ Նրանց հարազատները քեզ վող են տալիս, որպեսզի դուք մեռելախոսական կարդաք։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Դե բավական է։ Ես այլևս չեմ կարող լսել քո անհեթեթությունները։ Հեռացի՛ր այստեղից։ *(Սպառնում է)։*

ԿԱՐՈ – Ընկ. Փանջունին ասաց, որ եթե դուք այս պահից չհանձնեք գողոնը, նա հեղափոխությունը կարմիր վարդերով կվերջացնի։

ՏԵՐ ՍԱՀԱԿ – *(Գոռալով)։* Լռի՛ր… *(Կարոն հեռանում է, Սահակը ծնկում է աղոթքի։ Սառան գալիս է անկապ)։*

ՏԵՍԱՐԱՆ 5

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Բարկացած)։* Խև Ավո: Քեզ քանի անգամ կարելի է ասել: Ֆինանսական հարցերը այժմ տնօրինում է Սառան: Եվ բացի դրանից՝ նորաստեղծ կանանց կուսակցությանը, ֆրանսերեն ասած, ղեկլամացիոն է հարկավոր՝ ճանաչում գտնելու Ծապլվարում՝ կանանց իր մեջ ներառելու համար:

ԽԵՎ ԱՎՈ – Այո՛, պրն Փանջունի, ես հասկանում եմ: Բայց չէ՞ որ միտինգավորներին կերակրել է պետք: Նրանք տուն չեն գնում: Ինձ հո չե՞ն ուտելու:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իհարկե, ոչ: Ամեն բան կարգավորված է և լուծված: Այսօր պարզ կլինի ամեն բան:

ԽԵՎ ԱՎՈ – Չհասկացա:

ՓԱՆՋՈՒՆԻ – Դու երբեք էլ չես հասկացել: Գնա և ժողովրդիս պատրաստիր հանդիպման:

ԽԵՎ ԱՎՈ – Հիմա *(մուրևնալով առաջնաբեմին)։* Ծապլվարի գիտակից ժողովուրդ *(մրմնում է դահլիճ),* Ձեր առաջնորդը նորություն ունի ձեզ հայտնելու:

ՓԱՆՋՈՒՆԻ – Սիրելի՛ ընկերներ: Պաշարման դրությունը կշարունակվի, և մենք 8 օր է փակված ենք դպրոցի շենքի մեջ՝ ռազմական պահանջմունքների համեմատ: Այժմ շատ ուշադրություն: Մի շատ ուրախալի լուր: Երեկ մեծ ջանքերի գնով: Բազում զիջումների գնալով, մի կերպ լեզու գտնելով՝ դպրոցական միության նախագահ Կարոյի մայրը եկավ ու միացավ մեզ: Սառան: Նա մի խելոք կին է, հզոր անձնավորություն, դժբախտությունների մեջ թրծված: Եվ նրա հետ պետք է խոսել բացարձակապես ֆրանսերեն *շհիշհլա ֆաաաամ*, քանի որ բացառիկ գեղեցիկ է: Սառայի ներկայությունից օգտվելով՝ կոմիտեն անմիջապես ձեռնարկեց կազմել Ծապլվարի գիտակից կանանց «ՀԱՌԱՋ» ակումբը և դրան կից՝ օժանդակ մարմին՝ «Ծապլվարի գեղեցիկ կանանց անձնվեր խումբ»:

ՍԱՌԱ – Այս վերջին կազմակերպությունը ստեղծվեց, որպեսզի փոքրինչ հոգ տանի ընկ. Բ Փանջունու մասին, քանի որ վերջին օրերի լարվածությունը, անդադար աշխատանքը, երգն ու պարը տառապեցրել էին նրան, և նա հիվանդացել էր մայասուլով:

ՓԱՆՋՈՒՆԻ – Լավ մեկ խոսքով: Սիրելի՛ ընկերներ, երևաց Քոմրաշի Կարլ Մարքս կլուբի մի ցնցող մանիֆեստը, որ եղբայրական ձեռք է

մեկնում Ծապլվարի մեջ վառվող իր գաղափարակից ընկերներին: Հողային բանվորությունը ևս մեկ անգամ ապացուցում է իր բողոքը ընչազուրկ պրոլետարիատի դեմ:

ՍԱՌԱ – Ծապլվարի գեղեցիկ կանանց անձնվեր խումբ: Խնդրում եմ՝ տարե՛ք ընկ. Բ. Փանջունուն և պատրաստեք պաշտոնական հանդիպման:

(Ծառաները դուրս են գալիս, Սառան իջնում է դահլիճ: Բեմը կիսամթնում է: Սառան շարժվում է դեպի դահլիճ. իբրև թե քաղաքի վերջն է):

ՍԱՌԱ (ՄԵՆԱԿ) – Տեսնո՞ւմ եք՝ ժողովրդական պայքարը որչափ հզոր ուժ է: Մարդկային կաստաները կառավարելու լավագույն ձևը նրանց մեջ մտնելն է: Ո՞վ չի սիրի իր առաջնորդին, երբ նա ամեն ժամանակ քո կողքին է, ցեխի, կեղտի մեջ քո կողքին է, շոգին ու ցրտին քո հետ է, սոված կամ կուշտ: Մարդկային կաստաները առաջնորդի կարիք ունեն, նրանք են ընդունում իրենց հերոսներին: Մարդը երբեմն էշանում է, էշը երբեք չի մարդանում…: Սա է կյանքի օրենքը *(Երևում է Բես Սերգոն):*

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Ինչ հարկ կար հանդիպելու քաղաքի ծայրամասում…:

ՍԱՌԱ – Այստեղ ոչ ոք մեզ չի տեսնի: Ես չեմ ուզում ինձ քեզ հետ տեսնեն: Ես այժմ ուրիշ կարգավիճակում եմ:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Ինձ չի հետաքրքրում կարգավիճակդ: Ինչ ես մոգոնել: Խոսի՛ր. մարդ չկա: Ժամանակ չունեմ… շատ կարևոր գործեր կան հիմա:

ՍԱՌԱ – Նորից բողոքում ես: Բայց բամբասանքից առաջանում է բողոք: Բողոքից ցույց: Ցույցից հեղափոխություն: Իսկ Փանջունին հեղափոխությունների առաջնորդն է:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Փանջունի՞ն: Նորից զառանցանքդ սկսվե՞ց: Կանչել ես այստեղ, որ նրանի՞ց խոսենք: Խոսե՛նք… շա՛տ լավ: Լսի՛ր ուրեմն… Փանջունին ոչինչ չունի: Ոչ ոքի չունի: Նա անիմաստ ճառող է, լավ հռետոր ու վատ պոլիտիկ և իր փուչիկ, չիրականացվող գաղափարներով կործանում է Ծապլվարը: Նա շառլատան է և վերջ:

ՍԱՌԱ – Նա ունի ժողովուրդ: Անմիտ կառավարիչ ես, քանզի չես ճանաչում քեզ դեմ գնացողներին: Դու չես էլ ենթադրում, թե ինչ մեծ ուժ է իրենից ներկայացնում Փանջունին:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Նա երբեք էլ կարևոր դեր չի ստանձնել և չի էլ կարող: Ինչպես կարող է ժողովուրդը հավատալ մեկին և հետևել, որն իրենց կործանման է տանում:

ՍԱՌԱ – Վատ է, որ այդպես ես մտածում: Նա շատ ճիշտ քաղաքականություն է վարում: Ճանաչում է նրանց, ում դեմ պատերազմում է:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Իհարկե, կճանաչի: Չէ որ դու ես այնտեղ՝ նրա կողքին:

ՍԱՌԱ – Դա ոչ մի նշանակություն չունի: Ես այնտեղ եմ, որովհետև քաղաքական հոտառություն ունեմ, կանացի ինտուիցիա: Եվ այն ինձ հուշում է, որ այսօր ավելի ապահով է նրա կողքին, քան քո:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Իսկ վա՞ղը: Վա՞ղն էլ է ապահով Փանջունու կողքին: Թե մի քամուց քշված կհայտնվի, և քո քաղաքական հայացքները կրկին կփոխվեն: Հասկացի՛ր…Ապագան արդեն այսօր է:

ՍԱՌԱ – Ես քեզ լավ տարբերակ եմ առաջարկում:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ի՞նչ…Տարբերակ: Դեռ համարձակվում ես կեղտոտ խաղդ շարունակել: Սխալվում ես, Սառա: Այժմ խաղաքարտերը իմ ձեռքում են: Ամեն բան կլինի այնպես, ինչպես ես կուզեմ: Եվ դու արդեն զգուշացիր ինձանից:

ՍԱՌԱ – Սպառնո՞ւմ ես:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Բնավ: Զգուշացնում եմ:

ՍԱՌԱ – Ես եմ զգուշացնում, պարո՛ն Րես Սերգո: Քիչ հետո հանդիպում եմ կազմակերպում…, այդ ժամանակ մենք պիտի լսենք ձեր պաշտոնական ճահանջը, այլապես իմ գաղտնիքը մահացու զենք կարող է լինել ձեր քաղաքական կյանքի համար: Այնուհետև հետևություններն անում ես ինքդ:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Չհասկացա՝ ի՞նչ հետևություններ: Ինչե՞ր ես խոսում:

ՍԱՌԱ – Այդ արդեն հետո կհասկանաս: *(Պաթետիկ):* Իսկ այժմ… քաղաքական դեբատը, որն այդքան սպասելի է, կայանում է: Րես Սերգո և ընկեր Բ. Փանջունի:

(Ներս է գալիս Լրագրողը իր օգնականների հետ: Կախում են ճոճանակները, որոնք կարծես կշեռքի երկու կողմեր լինեն: Քեմը լցվում է մարդկանցով, որոնք ասպում են 2 հակառակ կողմերում: Դահլիճը նույնպես մասնակցում է. Սառան ասպում է դահլիճի աթոռներից մեկին: Այս ընթացքում նրանց առաջնորդում է այդ հաղորդման երաժշտությունը: Լրագրողը սկսում է խոսել):

ԼՐԱԳՐՈՂ – Տիկնա՛յք և պարոնա՛յք: Այսօր չափազանց կարևոր և պատասխանատու պահ է բոլորիս համար: Երկու հակադիր ուժեր: Երկու բևեռներ՝ մեր նոր՝ հեռուստակամուրջ ծրագրի շրջանակներում: Հիշեցնեմ մեր երրորդ կողմն այսօր ներկա-

յացնում է «ՀԱՌԱՋ» ակումբի նախագահ տիկին Սառան: Պարոն Րես Սերգո՞: Ո՞ւմ հետ եք եկել հաղորդման:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Ինձ հետ է տեր Սահակը, որը Ծապլվարի հոգևորականությունն է ներկայացնում:

ԼՐԱԳՐՈՂ – Իսկ Դո՞ւք *(Փանջունուն):*

ՓԱՆՋՈՒՆԻ – Ահավասիկ, ինձի հետ է ժողովուրդս և Խև Ավոն:

ԼՐԱԳՐՈՂ – Դուք կարող եք միմյանց հարցեր ուղղել..., բանավիճել..., վարկածներ դնել քննարկման... սա Ծապլ-TV-ն է և «Հեռուստակամուրջ» ծրագիրը: Մեզ այժմ հետևում են մի քանի երկրներում միաժամանակ՝ շնորհիվ մեր մեծահարուստ բարեկամների, որոնք գտնվում են արտասահմանում: Եվ միանգամից հարց երկու կողմերին էլ. ինչպե՞ս եք պատկերացնում այս կրիտիկական վիճակից դուրս գալու մոդուլը:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հարցը ունի պարզ և հանճարեղ պատասխան: Ամեն մի քաղաքական բաժանում ունի իր հատակ կառույց մը. Մենծ Էֆենդին պետք է լինի ազգատյաց, փառամոլ, ազգին շահն իր շահին զոհող. պուրժուան պետք է ըլլա ապականված, դրամապաշտ, անպարոյական: Հարուստը պետք է լինի կեղեքիչ, անխիղճ: Յեղափոխականը՝ իդեալիսթ, մաքուր, անշահախնդիր, անկեղծ, անճնվեր և այսպես ըստ կարգի: Եթե այս կառույցի մեջ մեկն ու մեկը իր գործը անսխալական կատարե, կրիտիկական վիճակից ելնելու մոդուլը պատրաստ է:

ԼՐԱԳՐՈՂ – Արտառոց պատասխան տվեցիք: Իսկ դո՞ւք:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Անճնուրաց աշխատանքի դիմաց քաղաքացին վարձատրվում է իր թափած քրտինքի չափով: Կրթություն, ընտանիք, լուսավոր ապագայի նկատմամբ հավատը և համապատասխան աշխատանքները այդ ուղղությամբ: Սա է մոդուլը՝ իրավիճակից ելնելու: Հարցս ուղղում եմ ընկեր Բ. Փանջունուն:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Նկատեցի, որ պարոն Փանջունին փոխվել է. ինչ-որ այլ բաներից է խոսում: Այլ գաղափարներից: Ձեր մեջ էվոլուցիա՞ է տեղի ունեցել:

ԼՐԱԳՐՈՂ – Պարոն Փանջունի՞:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հիմա ես եղեր եմ ծայրահեղ՝ **ուլթրա** ապակենտրոնացումի մարդը:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Բայց ես կկարծեի, որ քո սկզբունքները հաստատուն ու անփոփոխ գամված են գլխիդ մեջ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Կյանքի փորձությունը այդ գամերեն մեկ քանի քաշեց հանեց ու անոնց տեղ նոր գամեր դրեց:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Իսկ ի՞նչ է այդ **ուլթրա** ապակենտրոնացում ըսածդ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Բացատրեմ...: Ես հիմա՝ Ծապլվարի տառապանքների միջոցին, սա համոզումին եկա, թե ամեն հայ անհատ, ինքն իր մեջ ամբողջություն մըն է և կներկայացնե ամբողջ հայությունը: Ան, որ որևէ միջոցով կը հաջողի ինքնզինք փրկել, փրկած կլինի նաև ամբողջ հայությունը: Մենք պետք է մեր ուժերը կենտրոնացնենք ինքնզինքն փրկելու և ոչ թե ուրիշի: Ահա թե ինչ է **ուլթրա** ապակենտրոնացումը:

ՐԵՄ ՍԵՐԳՈ – Դա պարզապես եսասիրություն կամ էգոիզմ կըսեն:

ՓԱՆՋՈՒՆԻ – ՉԷ... Էգոիզմ կըլլա, ան ատեն, երբ իբրև մարդ մեր անձը փրկել ջանանք, բայց երբ իբրև հայ ջանանք փրկել, այն ատեն կլինի հայրենասիրական գործ, հեղափոխական ակտ: Հիմա ես հարց մը ունիմ Րես Սերգոյին: Զինված ոստիկանախմբերին ինչո՞ւ մեր դեմ հանեցիք:

ԼՐԱԳՐՈՂ – Հարգելի՛ բարեկամներ, սա երևի ամենաղիպուկ հարցն էր և, ինչու չէ, ամենավտանգավոր: Կրքերը կթեժանա՞ն: Պարո՞ն..., համեցե՛ք:

ՐԵՄ ՍԵՐԳՈ – Անշուշտ, երբեք չեմ թույլատրել ոստիկանների մուտքը հանրահավաք: Ավելի լավ է մեռնեմ, քան դիմում անեմ կառավարությանը այդ հարցով: Դուք ամբոխին այն աստիճան եք կատաղեցրել, որ այն պարզապես անկառավարելի է դարձել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչպե՞ս եք համարձակվում:

ՐԵՄ ՍԵՐԳՈ – Հիմա մեր երկրին ներքին խաղաղություն է պետք, քանզի թշնամին առիթից օգտվող է: Ուզում եմ տեղեկացնել, որ թուրքերը երեկ կրակ են բացել մեր սահմանի ուղղությամբ և կրկին խախտել հրադադարը: Մենք մեր կողմից պատասխան հարված չենք արձակել: Եթե այսպես շարունակվեց, լուծման ելքը պատերազմն է,իսկ այն կտանի կործանման: Ես այժմ այստեղից խաղաղության և միավորման կոչ եմ անում:

ՓԱՆՋՈՒՆԻ – Այո՛, պարոն Րես Սերգո, երբ որ ժամանակը կը գա, մեր ընկերները կողք կողքի կբարձրանան խորհրդարանական ամպիոնը և կը պահանջեն հավասարություն ստեղծել պետական բյուջեի մեջ՝ Եվրոպայի մեջ գոյություն ունեցող **տիֆերենսիալ** եղանակով, ամեն գնով հետապնդել ցարիզմի տապալմանը, ուժ տալ Պարսկաստանի սահմանադրությանը, քաջալերել Չինաստանի նորահաստատ հանրապետությու-

ՆԸ, Պելժիական Քոնկոն փրկել մետրոպոլի հսկողութեանեն, Սեքսիկայի անկախությունը ապահովել Սիցյալ նահանգներու վրա, Թիպետի մեծ լամային առանձնաշնորհումները ջնջել, Սոմալիանտի մեջ հիմնել մշակութային-դպրոցական հաստատություններ:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Վերջապես պիտի առարկենք՝ մի՞թե այդ պլատֆորմի մեջ Ծապլվարի մասին հոդվածներ չկան:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ափսո՜ս, որ այդ կետը չեմ հիշեր... հո ամեն բան մտածել չէր կարելի...

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Նշանակում է, որ Դուք խոսում եք ոչնչի՞ց:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Այս մարդը պարզապես չգիտի՝ ինչ է ուզում: Բայց հաստատ գիտի՝ ինչ է անում

Խև ԱՎՈ – Մեր կուսակցությունը ձգտում է միայն արդարության:

ԼՐԱԳՐՈՂ – Պարոնա՛յք...: Հանդարտվե՛ք..

(Սառան դահլիճում նստած ծափ է տալիս 3 հայր: Կանգնում է: Նայում է հանդիսատեսին):

ՍԱՌԱ – Իսկ ո՞վ է մեղավոր այս ամենի մեջ:

ԼՐԱԳՐՈՂ – Հիշեցնեմ, որ Սառան ներկայացնում է ժողովրդի ձայնը, այսինքն՝ նա ժողովրդից հարցեր է ստանում և հետո ուղղում մեզ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իհարկե, Րես Սերգոյի կառավարությունը: Նա է մեղավոր ամեն ինչում: Քանդեց Ծապլվարը... Քարը քարին չթողեց:

ԼՐԱԳՐՈՂ – Պարոն Րես Սերգո՞, դուք ինչ կասե՞ք:

ՐԵՍ ՍԵՐԳՈ – Փոխանակ մի լավ գործ անելու, ամբողջ ժամանակ ճառում եք և մարդկանց սխալ ճանապարհով տանում, պարոն Փանջունի... Ի՞նչ է՝ միքինգ անելը հերոսությո՞ւն է, պայքա՞ր է, նոր կառավարության ստեղծո՞ւմ է: Միքինգ անելը ձեր գոյության տեսակն է պարզապես: Դուք սովոր եք մարդկանց ամբոխներ լարել իրար դեմ: Միայն դա եք լավ անում: Սա է ամբողջ պատճառը, ուրիշ ոչինչ: Այս է իրականությունը: Կատարված դեպքերից մեկ շաբաթ առաջ ստացել եմ Քոմրաշ գյուղի ծանուցագիրը, որտեղ նրանք Ծապլվարցիքից 40 ոսկի են ուզում, որպեսզի կատաղությունները նվազեն: Այս հարցի շուրջ պետք է մտածել պարոն Փանջունի: Այսօր, սակայն, ժողովուրդը զբաղված է մի հեղափոխությամբ, որն ավելի ճիշտ կլինի ձևակերպել՝ հեղատապալում:

ՓԱՆՋՈՒՆԻ – Դուք պարզապես չեք հասկանում, թե ինչ մեծ սխալ եք գործում: Այս կոռումպացված երկիրը վերջապես ե՞րբ է ձեզանից ազատվելու:

ՍԱՌԱ – Ընկեր Փանջունի: Իսկ ինչո՞ւ պետք է ժողովուրդը հետևի ձեզ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ես անապատում կանչողի ձայնն եմ: Ես մեսիան եմ: Ես եկել եմ փրկելու ձեզ: Ես եկել եմ կործանելու հինը, հին բարքերը, հին լեզուն, հին կառավարիչներին, հին գիտությունը, հին գիտակցությունը: Ես նորի մարդն եմ: Ես շինում եմ նոր գաղափարախոսություն՝ կործանելով եղածը:

ՍԱՌԱ – Հետևություն արեցիր... Րես Սերգո: Այժմ ժամանակն է, որ ժողովուրդը իմանա, թե ով էր իրենց առաջնորդը: Ես քեզ զգուշացրի, այլընտրանք չթողեցիր: *(Առանձին):* Սիրելի՛ր..., այս մարդը, որ կանգնած է ձեր առջև, անբարո է և խաբեբա:

ՓԱՆՋՈՒՆԻ – Դե դա նորություն չէ:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Պարո՞ն *(լրագնապած):*

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Թող խոսեն…

ՍԱՌԱ – Նա ապօրինի զավակ ունի: Նա խաբեբայի մեկն է: Եվ ինչպես ենք մենք վստահել նրան:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ասում էի, չէ՞, որ ամեն ինչում նա է մեղավոր, այս կեղտոտ պուրժուան:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Այժմ ինձ լսի՛ր, Ծապլվարի ժողովուրդ: Ընկեր Բ. Փանջունին՝ այս չկայացած հեղափոխականը, շարքային հարբեցող է եղել Պոլիսի թաղամասերում, իբր թե սովորել է եվրոպական համալսարաններում: Մի հարցնող լինի՝ որտե՞ղ եք սովորել, ընկե՛ր Փանջունի:… Տեսնո՞ւմ եք, պատասխան չկա: Իսկ այս կինը, որը անհիմն մեղադրանք է ներկայացնում ինձ՝ առանց ապացույցի, այսօր ես բերել եմ քո ապացույցը: *(Կուլիսից բեմ է բերում Կոլոշենց Սեթոյին):* Դու ճանաչում ես այս մարդուն, Սառա՛:

ՍԱՌԱ – Ես առաջին անգամ եմ տեսնում:

ԲԵՍ ՍԵՐԳՈ – Այս մարդը Սառայի ոչ պաշտոնական ամուսինն է և Կարոյի օրինավոր հայրը: Դա պարզել են իմ ծառաները, որոնց ես հանձնարարել էի հետևել Սառային: Տեսնո՞ւմ եք: Սա՞ է Չեր ապագան: Սա՞ է ձեր երկրի կառավարիչը: Ես այլևս ոչինչ չունեմ ասելու: Ոչ, միայն մի բան կասեմ..., համախմբվի՛ր,

Ծապլվարի՛ ժողովուրդ, քանի ժամանակ ունես *(տեր Սահակի հետ հեռանում է)*:

ՓԱՆՋՈՒՆԻ – Փոստը եկավ, նամակներ և թերթեր եկան, հրահանգներ եկան, բայց փող չկա: Խնդրեմ ուշադրություն դարձրեք այս կենսական հարցի վրա:

ԼՐԱԳՐՈՂ – Դե ի՞նչ, սիրելի՛ բարեկամներ: Հուսով եմ՝ եզրակացություններն ինքներդ կանեք և կգնահատեք արժանավորին, քանի որ ընտրությանը հաշված օրեր են մնացել: Դե իսկ քաղաքական թոհուբոհերը չեն նվազում:

(Լրագրողը հեռանում է):

ԽԵՎ ԱՎՈ – Պարոն-պարոն, սա այսպես թողնել չի կարելի: Վտանգավոր է: Այդ Րես Սերգոն ուժեղ գտնվեց: Հիմա մեր մասին ի՞նչ կմտածեն:

ՍԱՌԱ – Ինչ ուզում են, թող մտածեն:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ինչ ուզում են, թող մտածեն: Կարևոր է, որ միսիան հասնի իր նպատակին: Վաղն առավոտ ավելի իմաստուն կլինի, քան այս երեկոն: Գնացինք:

ԼՐԱԳՐՈՂ – Սա Ծապլվար-TV-ն էր և «Հեռուստակամուրջ» ծրագիրը: Կհանդիպենք:

(Մթնում է):

ՏԵՍԱՐԱՆ 6

(Կարոն մի քանի հասակակիցների հետ ինչ-որ բան է պատրաստում)։

ԿԱՐՈ – Գաղափարակից ընկերներ…

ԵՐԵԽԱ 1 – Լավ, ա՛յ տղա, Փանջունին էլ այստեղ չի, կարող ես հանգիստ, առանց լարվելու խոսել: Գաղափարակից ընկերներս ո՞րն ա:

ԿԱՐՈ – Գաղափարակից ընկերներ… Մեր գործը ավարտին հասցնելու պայմանով ընկեր Փանջունին խոստացել է յուրաքանչյուրիս մի լավ պաշտոն: Մենք արժանի ենք դրան:

ԲՈԼՈՐԸ – Այո՜…

ԿԱՐՈ – Սա մեր գործունեության արդյունքն էր: Մենք արեցինք այս ամենը: Եվ հիմա պետք է շատ լարված ու պատասխանատու լինենք՝ մեր ամենակարևոր գործը վերջացնելու համար: Այսօր պատասխանատու օր է բոլորիս համար:

ԿԱՐՈ – Տղե՛րք, զգույշ, որ հանկարծ ձեռքներիցդ չընկնի:

ԵՐԵԽԱ 2 – Կարո՛, էլ գյուղում երկաթի կտոր չմնաց: Ամբողջը հավաքել ենք:

ԿԱՐՈ – Իսկ թռուցիկների հարցն ինչ եղավ:

ԵՐԵԽԱ 1 – Ի՞նչ թռուցիկ:

ԿԱՐՈ – Դե քաղաքական զբոսանքները: Փանջունին չէ՞ր տվել օրինակը: Պետք է արտագրեիք ու ձեռքից ձեռք տայիք: Փանջունին ասաց, որ դա պրոպոգանդի հիանալի միջոց է:

ԵՐԵԽԱ 1 – Հա, բայց գյուղում ոչ ոք կարդալ չգիտի:

ԿԱՐՈ – Ա՛յ եղբայր, այ հորդ Աստծուն մատաղ, այ պրոպոգանտ *(լարվում է, որ ավելի խելացի խոսի)* ես քո ինտրիգան էությանը ղուրբան, բայց քեզ ով էր ասում գրելիք:

ԵՐԵԽԱ 2 – Բա՞…

ԿԱՐՈ – Պարզ և հանճարեղ…Րես Սերգոյի նկարն էր թղթի վրա, նկարի վրա կարմիրով գիծ քաշած, որ նշանակում է «Ո՛չ Րես Սերգոյին», պա՞րզ է:

ԵՐԵԽԱ 1 – Հա, բայց ես նկարել էլ չգիտեմ…

ԿԱՐՈ – Թուուուու….

ՎԱՐԴԱՆ – Տղանե՛ր, գործերն ինչպե՞ս են ընթանում:

ԿԱՐՈ – Շատ լավ: Չտեսնվաաած…*(մռութները կախ)։*

ՎԱՐԴԱՆ – Կարո ջան, տղաներիցդ մի քանիսը պետք են: Էդ սննդի հարցը պիտի լուծենք: Մարդիկ շատանում են, իսկ կերակուրը

պակասում ա: Հլը լավ ա, որ մի քանի խմբեր հացադուլ էին հայտարարել, թե չէ ոնց պիտի հասցնեինք:

ԿԱՐՈ – Մամաո էլ էր, չէ, էդ խմբի մեջ: Ավո ջաո, բայց որտեղից պիտի սնունդ բերեք:

ՎԱՐԴԱՆ – Մի քանի ճարպիկ տղերք, որ ինձ տաս, Քոմրաշի հարուստների ոչխարները դմակով եո:

ԿԱՐՈ – Քրդերի՞ց:

ՎԱՐԴԱՆ – Բա Ծապլվարի՞ց: Էլ բաո չմնաց մեր մոտ խոտից բացի: Լավ տես՝ ինչ ենք հիմա անում: Առավոտվա կողմ Փանջունին պատրաստվում է ելույթի:

(Տղերքին զինում ես, Րես Սերգոյի ծանոթների, բարեկամների տներն ու խանութները գիտե՞ք: Ըհը…երբ տեսաք, որ ժողովուրդը սկսեց շարժվել, մտնում եք ու բալանում, ջարդում: Դե մենք գնացինք: Առավոտվա կողմ կտեսնվենք):

ԿԱՐՈ – Հա, մեկ էլ իմացել ես, որ թուրքերը կարող ա հարձակվեն:

ՎԱՐԴԱՆ – Րես Սերգոն ասած կլինի, չէ՞: 1 ամիս առաջ էինք իրար հետ քեֆ անում: Գնացինք: *(Հեռանում են):*

(Բեմում Կարոն է, մի քանի իր հավատակից ընկերները: Նրանք պատրաստվում են խուլիգանությունների: Նրանց չեռքում են երկաթներ, կտրող գործիքներ: Այդ ժամանակ ներս է վազում մի տղա):

ՏԵՍԱՐԱՆ 7

(Փանջունին և նրա ընկերներն են բեմի վրա: Վերջին հանրահավաք)

ՓԱՆՋՈՒՆԻ – Այսօրվա հավաքը տոնական է՝ կապված մի քանի քաղբանտարկյալների ազատ արձակվելուն: Թեև օրը տոնական է, սակայն ես կաշխատեմ տուրք չտալ զգացմունքներին: Նախ և առաջ չի կարելի չհամաձայնել համընդհանուր այն կարծիքի հետ, որ քաղբանտարկյալների ազատ արձակումը մեծագույն հաղթանակ էր՝ ձեռք բերված, առաջին հերթին, ժողովրդի հերոսական պայքարի շնորհիվ *(Գոռում են, սուլում, վանկարկում...)*: Բարեբախտություն է, որ Շարժման մասնակիցների մեծագույն մասը շատ ավելի հասուն ու գիտակից գտնվեց:

ՍԱՌԱ – Ես խոսում եմ Ծապլվարի գիտակից տիկնանց «ՀԱՌԱՋ» ակումբի անունից, հանձին տիկին Սառայի գլխավորությամբ: Մեր համընդհանուր վերջին ժողովից հետո պահանջներ պետք է ներկայացվեն գյուղապետարան, որպեսզի Ծապլվարում բաց արվեն այնպիսի հավաքատեղիներ, ուր հնարավոր կլիներ կանանց և աղջիկների արտաքին տեսքը բերել պատշաճ, եվրոպական պահանջներին համապատասխան: Ակումբն աշխատում է նաև այն ծրագրի շուրջ, որ կթվորուհու պաշտոնը հանվի և կամ ավտոմատացվի:

ՍՄԵՆՑ ՎԱՐԴԱՆ – Քաղբանտարկյալների ազատ արձակման գնահատականը լիարժեք չի կարող լինել, եթե այդ իրադարձությունը չդիտարկենք նաև հակառակ կողմից, այսինքն՝ իշխող վարչախմբի կամ ավազակախմբի տեսակետից: Այսօր գյուղի հոգևոր կառավարիչն ուզում է հանդիպել ընկեր Փանջունու հետ: Բայց սիրելի՛ ժողովուրդ, դա հետին մտքեր ունեցող քաղաքական ֆարս է, որ ուզում է գլխատել կուսակցությունը: Մենք այդպիսի բան թույլ չենք տա:

(Գալիս է Խև Ավոն՝ գողոնը ձեռքին, և մի քանի տղաների հետ):

ԽԵՎ ԱՎՈ – Այսուհետ կուսակցականները սոված չեն մնա: Մեր թուրք բարեկամները նվերներ են արել կոնգրեսին: Երեկոյան կողմ նաև խմիչք էլ կլինի, ծխողների համար՝ ծխախոտ…

ԲՈԼՈՐԸ – Տերտերը գալիս է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Տեղ բաց արեք նրա համար:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Խաղաղություն բոլորիդ: Ես եկել եմ, որ Փանջունին ընդունի ինձ…, նրա հետ կարևոր խոսակցություն ունեմ:

ՓԱՆՋՈՒՆԻ – *(Պատուհանից):* Ես լսում եմ քեզ: Զգուշացնեմ կանխավ, որ քարոզ կարդալու համար սխալ եք եկել:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Ես եկել եմ ասելու այն, ինչ վաղուց եմ ասել: Պահը օրհասական է: Թուրքերն արդեն վաշտերը կազմել են: Նրանց հարձակումն անխուսափելի է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Թուրքե՞րը: Դեռ այսօր նրանք մեզ սնունդ են ուղարկում, որպեսզի մեր պայքարի մասնակիցներն էլ ավելի քաջալերվեն, իսկ դուք ասում եք հարձակվում են:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Անհնարին է: Ծանուցագիրը Րես Սերգոյի հետ ես եմ կարդացել: Եթե չվճարենք, գյուղը ձեռքներիցս կառնեն:

ՓԱՆՋՈՒՆԻ – Իսկ ո՞վ վճարի… Ո՞վ…. Ժողովո՞ւրդը, ե՞ս, թե՞ եկեղեցին: Ամեն բանի մեջ Րես Սերգոն է մեղավոր, նա էլ թող վճարի: Ժողովրդի վողերը գողացավ, ծախեց նրանց կուտակած խոտն ու պարենը, այսօր նորից մեզնից է վող ուզում:

ՏԵՐ ՍԱՀԱԿ – Նա ոչ մի բանում մեղավոր չէ:

ՓԱՆՋՈՒՆԻ – Այդ մենք դեռ կպարզենք…: Ձերբակալել դրան…

(Տեր Սահակին բռնում են, կապում ոտքերն ու ձեռքերը, ձեւրում դպրոց):

ՓԱՆՋՈՒՆԻ – Այժմ ինձ լսի՛ր, իմաստուն ժողովուրդ: Ժամանակն է քո կրած ցավերի ու չարչարանքներին ապաշխարանք տալ: Րես Սերգոն հիմա տանն է: Պետք է նրան շուտ բռնացնել, քանի դեռ երկիրը վերջնականապես չի ծախել: Հաշվեհարդար է հարկավոր: Կեցցե՛ ազատությունը, կեցցե՛ հեղափոխությունը, կեցցե՛ համաժողովրդական շարժումը: Գնացինք: Խնդրում եմ չմոռանալ փողի մասին: Այն հիմա շատ հատկանշական է մեզ համար:

(Երաժշտություն, որի ընթացքում ավերում են ճանապարհին ամեն բան: Կաշառում են ոստիկաններին, սպանություններ, պայթյուններ, քաոս: Հասնում են Րես Սերգոյենց տան մոտ: Այս ամենը կատարվում է սրվերային խաղով):

ՏԵՍԱՐԱՆ 8 (ՎԵՐՋԻՆ)

(Րեա Սերգոյի տանը)

ՓԱՆՋՈՒՆԻ – Բարև, Րեա Սերգո:

ՐԵԱ ՍԵՐԳՈ – Ինչ հարկ կար բռնի ուժով հասնել այստեղ, եթե ամեն ժամանակ ես այստեղ եմ եղել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ոչինչ… էլ այստեղ չես լինի: Ձեր խոնարհ և կեղտոտ ձևերով մեզ բարևելը դեռ ամեն ինչ չէ:

ՐԵԱ ՍԵՐԳՈ – Բայց ինչ հարկ կա նաև բռնի մտնելու, քանի որ դուռը միշտ բաց պիտի գտնեք:

ՓԱՆՋՈՒՆԻ – Նույնիսկ եթե դուռը բաց գտնենք, նախ պիտի խորտակենք ու հետո ներս մտնենք, այս է իրականության հրամայողական պահանջը:

ՐԵԱ ՍԵՐԳՈ – Իսկ քո պահանջը ո՞րն է:

ՓԱՆՋՈՒՆԻ – Ես ամբոխի ծառան եմ:

ՐԵԱ ՍԵՐԳՈ – Այսինքն…

ՓԱՆՋՈՒՆԻ – Իսկ ամբոխը զորավոր է: Եթե տեր Սահակը ճիշտ է ասում, նշանակում է փողերը ձեր տանը պիտի լինի:

ՐԵԱ ՍԵՐԳՈ – Ես աղաչանքներով ու երդումներով պնդում եմ, որ տանը մի լումա անգամ չունեմ: Դա Կոլոշենց Սեթոյի մի սուտ խոսքն էր, որ անձնական հակառակության համար էր ասել:

ՓԱՆՋՈՒՆԻ – Հարցը գումարի կամ դրա քանակության վրա չէ, եթե նույնիսկ փող էլ չգտնեինք քեզ մոտ, մենք ամեն գնով պիտի հարձակվեինք, քանի որ այդ էր ժողովրդի որոշումը:

(Այս բանակցության միջոցին Կոլոշենց Սեթոն հանկարծ վերցուց իր հասպ գավազանը և ուժգին խփեց Սերգոյի գլխին: Գլուխը պայտռվեց, և արյունը սկսավ հոսիլ: Դա եղավ կռվի ընդհանուր ձշանը):

ԽԵՎ ԱՎՈ – Կռվեցե՛ք, տղե՛րք, կռվեցե՛ք քաջ-քաջ, անվեհեր կանգնած թշնամու առաջ:

(Ու ահա մեկեն Սերգոյի տնեն դուրս խուժեցին տղաքն ու փեսաները՝ բիրերով զինված: Պայքարը սկսավ սոսկալի երևույթ, կռվողներու կատաղությունը մեկ կողմե, կիներու և մանուկներու վայնասունը մյուս կողմե, մի անկարագրելի տեսարան կը պարզեին: Մեր տղերքը անկման քաջություն ցույց կու տային, և, անշուշտ, վերջնական հաղթանակը կը մնար մեզ, երբ լսվեց կիներու մի ահաբեկ աղաղակ):

ԲՈԼՈՐԸ – Թուրքե՛րըըըը……..

(Վերջը բալաձումներ, Փանջունին փախչում է և թաքնվում: Բոլորը հեռանում են: Փանջունին դուրս է գալիս թաքստոցից: Մենակ է, ոչ ոք չկա, իսկ ֆեռքին ճամպրուկն է):

ՓԱՆՋՈՒՆԻ – Այսպես ուրեմն գաղափարային ազնիվ կռիվը տվավ իր անդրանիկ զոհերը, արյունը հոսեց և ոռոգեց դասակարգային պայքարի դաշտերը, որոնք, իհարկե, պիտի արգասավորվեն ու պիտի տան իրենց արդյունքը: Մենք կատարեցինք մեր պարտականությունը և այժմ խղճի հանդարտությամբ կը սպասենք քաղելու մեր ջանքերու պտուղը: Առ այժմ մտաղիր եմ մնալ Մաշկերտ: Գյուղը բազմամարդ է, քան Ծապլվար: Գործունեության մի նոր դաշտ կա հոս, նոր պրոպականտ, նոր կազմակերպություն, նոր պայքար, նոր արդյունք: Երևույթները մխիթարական ու քաջալերիչ են: Պետք չէ վհատիլ և պետք է պատրաստել կռիվի նոր ասպարեզ: **ՅՎԱԾԵՂ ԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽ ՊԵՏՔ Է ՅՈՒ ՋԱՐԴԵԼ:** Այժմ իմ ժամերս սուղ են: Ես լծված էի մի փրկարար աշխատանքի. ես պետք է քանդեի հնությունը, հին լեզուն, հին կրոնքը, հին օրենքը, հին բարոյականը, հին միտքը, հին ըմբռնումը, հին աշխարհը և նրա վրա կանգնեցնեի նորը. դա հեշտ գործ չէ: Պիտի կարողանա՞մ անել այդ ամենը. չեմ կարծեր: Թերևս հաջողեմ մի միայն քանդել, այդ արդեն բավականություն կու տա ինձ: Իմ հաջորդը թող լծվի վերաշինության գործին: Ես վայելում եմ քանդումի հեշտանքը, իմ հաջորդս թող կրի վերաշինության տաժանքը:

ՓՈՂ ՈՒՂԱՐԿԵՔ ԻՄ ՆՈՐ ՀԱՍՑԵԻՆ:

Վերջ

ՈՍՏԻԿԱՆԻ ԵՐԳԸ

(«Ընկեր Բ. Փանջունի» ներկայացումից)

Խոսք՝ Կ. ԴԱՎԹՅԱՆԻ

Երաժշտ.՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ





Ինձ ասում են՝ մարդ օրենքի,
Ո՞ւր ես դու, արի մեզ փրկի:
Որի՞ն բռնեմ, որի՞ն թողնեմ,
Հանցագործին պիտի գտնեմ:
Իսկ ո՞վ է ճիշտ, և ո՞վ՝ սխալ,
Ո՛վ գիտի՝ պե՞տք է իմանալ:

Կրկներգ. Ես պաշտպանն եմ ճշմարիտի.
Երբ փողը կա՝ ո՞վ չի ստի:
Ճիշտը նա է, ով փող ունի,
Երբ փող ունես՝ բանտ չես ընկնի:

Ես պետք է որ դաժան ձևանամ,
Արդար լինելը չմոռանամ,
Բայց, ինձ լսեք, հիմա՛ր Սերգո
Եվ Փանջունի՛ դու մեծարգո,
Ինձ մեկ է թե ով կհաղթի,
Միայն թե փորս կուշտ լինի:

Կրկներգ. Ես պաշտպանն եմ ճշմարիտի.
Երբ փողը կա՝ ո՞վ չի ստի:
Ճիշտը նա է, ով փող ունի,
Երբ փող ունես՝ բանտ չես ընկնի:

Փանջունու առաջին երգը

(Ռեպ – կարող է լինել ցանկացած ռիթմի մեջ)

Ու այդպես արագ՝ հապշտապ կերպով
Եղբայրս՝ կնոջ հետ երկուսով,
Խաբեցին, համոզեցին, չգիտես՝ ինչով,
Ու ճամպրուկները ձեռքս տալով՝
Ասացին. «Հավերժ մնաս բարով»
Ու ճամփեցին Մարսել ինձ զոռով:
Ա՜խ, Մարսե՜լ, Մարսե՜լ, քեզնով հիացա,
Վաճառականների դպրոցը մոռացա,
Հազիվ մի անգամ ոտքս դրեցի,
Ծրագիրը տեսա ու սարսափեցի.
Թվեր ու հաշիվ՝ դուրս եկավ հոգիս,
Ամեն բան թողի ու փախա Փարիզ:

Փարիզում կյանքս եղավ շատ զբաղված՝
Սոցիալ գիտության ջատագով դարձած,
Ժեն գնացի՝ ազատ ունկնդիր,
Խնջույքի պահին ծեծեցի բանկիր,
Ու հաստատեցի ընկերվարության
Նոր հայեցակետ փանջունիության:
Մի օր սակայն նամակ ստացա
Եվ, կարդալով, ցավով իմացա,
Որ եղբայրս՝ միակ, հարազատ,
Հիմա դարձել է սնանկ ու աղքատ:
Մի ելք պիտի գտնեի շատ շուտ,
Քանի դեռ սովից չէի սատկել անշուշտ:
Ունեի լավ ընկեր, սակայն, խելագար,
Բայց նա միտք տվեց ինձ շատ օգտակար.
– Եկո՛ւր քեզ շինենք հեղափոխական գործիչ՝
Կդառնաս անխելք մտքերի ցրիչ,
Երկիր կքանդես՝ անվերջ խոսելով,
Գումար կխնդրես՝ անվերջ ստելով:

Բառերի հեղինակ՝ Արթուր Գեղամյան

ՍԱՌԱՅԻ ԵՐԳԸ

(«Ընկեր Բ. Փանջունի» ներկայացումից)

Խոսք՝ Ս. ԽԱՆԻԿՅԱՆԻ — Երաժշտ.՝ Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ





Գյուղում ինձ նմանը չկա,
Միշտ այնտեղ եմ, որտեղ ուժ կա,
Ունեմ գանձեր, տեսք ու խելք,
Ամեն խնդրից միշտ գտնում եմ ելք:
Ունեմ մի տղա, ում համար
Ճարել եմ հարուստ երկու հայր:

Կրկներգ. Գյուղում ինձ կոչում են Սառա,
Բոլորին դարձրել եմ ծառա.
Փանջունի, Սերգո ու Սահակ
Իմ ձեռքը ընկել են կրակ...

Բոլորից ունեմ մի գաղտնիք.
Նրանց համար ես՝ սպառնալիք,
Փանջունուն ճանկս եմ գցել,
Նրա հետ տիրուհի դարձել:
Սերգո ու Սահակ, լավ մնաք,
Բարով, Փանջունի, Դուք եկաք:

Կրկներգ. Գյուղում ինձ կոչում են Սառա,
Բոլորին դարձրել եմ ծառա.
Փանջունի, Սերգո ու Սահակ
Իմ ձեռքը ընկել են կրակ...

Փանջունու և Սառայի սպասուհու դուետը

(Կարող է կատարվել 6x8 չափի մեջ ցանկացած երաժշտական ոիթմով)

Ախ Փանջունի, առաջնորդ ես,
Ուսուցիչ ես, ամեն ինչ ես,
Դու մեր հույսն ես,
Մեր արևն ես, մեր Փանջունի:

Ախ Փանջունի, առաջնորդ ես,
Դու Փրկիչն ես, ամեն ինչն ես,
Դու մեր հույսն ես, մեր Փանջունի

Մենք պարում ենք,
Պարելով մենք երգում ենք,
Երգելով կործանում ենք
Ամեն ինչ:

Պայքարում ենք,
Պայքարով կործանում ենք,
Կործանելով վռնդում ենք
Ռես Սերգոյին:

Ախ Փանջունի, առաջնորդ ես,
Դու փրկիչն ես, ամեն ինչ ես,
Դու մեր հույսն ես,
Մեր հավատն ես, մեր Փանջունի:

Ախ Փանջունի, առաջնորդ ես,
Դու Փրկիչն ես, ամեն ինչ ես,
Դու մեր հույսն ես,

Դու մեր ընկեր, դու մեր ընկեր,
Մեր Փանջունի:

Բառերի հեղինակ՝ Կարինե Դավթյան

ԿԱՐՈՏ

Ըստ Նողար Դումբաճեի համանուն պատմվածքի

Սցենարի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Պիես՝ մեկ գործողությամբ

Նկարագրություն

Նողար Դումբաճեի «Կարոտ» պատմվածքն իր հետաքրքիր բովանդակությամբ և լուծումներով դարձավ մի նոր պիեսի նյութ, որը կարծես մարդու և տիեզերքի միջև եղած կապի ու կյանքի նկատմամբ կարոտի մասին է: Բեմադրության ժամանակ օգտագործվել էին աշխարհահռչակ Իմա Սումակի ձայնագրությունները՝ վերերկրային թեթև մթնոլորտ ստեղծելու համար, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների տեսանյութի, բեմի վրա կատարվող գործողությունների և լազերային լույսերի միջոցով, փորձել էի ստեղծել բնության և տիեզերքի միախառնումը: Արդյունքում ստացվեց մի փոքրիկ ներկայացում՝ մարդկանց միմյանց հետ շփվելու, վստահելու, հավատալու և իրենց զգացմունքներից խոսելու հնարավորություն ընձեռնելու նպատակով:

Ներկայացման պրեմիերան տեղի է ունեցել 2008 թվականի հունիսի 17-ին:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

Նկարչական ձևավորումներն իրականացրել է ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանը:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Թիթեռնիկ – այլ մոլորակից եկած աղջիկ
Հայր – Գրիգոր
Գրիգորի աղջիկները – Արփի (12 տ.) և Արփինե (17 տ.)
Պարողներ – այլմոլորակայիններ
Թիթեռնիկի մայր

(Բեմում կա էկրան, հետևում միստիկ ծառ է դրված, և ամբողջ դեկորացիան կազմված է սպիտակ շղարշե կտորներից, որոնք կախված են տարբեր հարթություններում: Ներկայացումը սկսվում է տեսանյութով, որի ընթացքում հնչում է Գրիգորի ձայնը, նա կարդում է հետևյալ տեքստը)։

Գարնանային այգ էր, մեղմ ու զովաշունչ առավոտ: Խոհերով տարված՝ ես կանգնել էի բյուրերանգ ծաղիկներով ծածկված դաշտում: Հանկարծ հեռու երկնակամարում մի տարօրինակ մրրիկ հայտնվեց: Շղարշված ծիածանի բոլոր գույներով՝ նա պարելով գալիս էր դեպի ինձ: Աղամի ժամանակներից մնացած այս լքյալ ու տարաբախտ լորենու տակ էի: Արևատես, բազմերանգ ու անսահման երջանիկ մրրիկը սուրում էր տափաստանով: Նա նման էր դաշտի ծաղիկներին առանձին-առանձին և բոլորին միասին: Հանկարծ նա թավշյա գլխաշոր դարձավ և փողփողալով փաթաթվեց լորենուն: Այն, ինչ հաջորդեց դրան, հրաշք էր, հրաշք կլիներ, եթե այդպես չլիներ: Յոթներանգ գլխաշորը ջերմություն պարգևեց ծառին, և ծառը կանաչեց, ծաղկեց, կյանք առավ, տերևներն սկսեցին շրշալ: Յոթներանգ հրաշքը հետո մի մեծ թիթեռ դարձավ և թևասփյուռ բազմեց ծփացող հսկայի կատարին:

(Բեմից էկրանի հետ խոսում է Գրիգորը)։

ԳՐԻԳՈՐ – Ներքև իջիր,– խնդրեցի ես: Դա ավելի կարոտ էր, քան խնդրանք: Եվ թիթեռը ներքև թռավ:

(Էկրանը փակվում է, և թիթեռնիկը հայտնվում է բեմում)։

ԳՐԻԳՈՐ – Մի բան ասա,– կրկին կարոտեցի ես:

(Թիթեռը փոխարկերպվեց ծիածանագույն, ոսկեհեր, սպիտակ մեծ ժապավենով, կապտաչյա և բափանցիկ մարմնով մի աղջկա: Աղջիկը կանգնել էր իմ առջև ու ժպտում էր: Կլիներ յոթ-ութ տարեկան)։

ԳՐԻԳՈՐ – Բարև,– համարյա շշուկով ողջունեցի ես, քանզի վախենում էի, որ զարմանահրաշ տեսիլքը կչքանա:

ԹԻԹԵՌՆԻԿ – Բարև ձեզ, հարգելի՛: Դա պատասխան խոսք չէր, երգ էր, երաժշտական թովիչ արտահայտություն: Այսուհետ, երբ աղջիկը կխոսի, միշտ պատկերացրեք, որ ծիածանն է երգում:

ԳՐԻԳՈՐ – Դու ծիածա՞ն ես,– հարցրի ես:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ո՛չ:

ԳՐԻԳՈՐ – Գարո՞ն:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ո՛չ:

ԳՐԻԳՈՐ – Իսկ ո՞վ ես: Անունդ ի՞նչ է: *(Դեպի հանդիսատեսը)*
Աղջիկն այնպիսի անուն տվեց, որի նմանը չկա, ուստի ես չկարողացա հիշել:

ԳՐԻԳՈՐ – Այնուամենայնիվ, ո՞վ ես դու:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ես Ամեն ինչն եմ: – Հետո վանկատելով աղջիկը երգեց այս բառերը՝ «ամեն» և «ինչ»:

ԳՐԻԳՈՐ – Ինչպես թե՝ ամեն ինչ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Շատ պարզ,– պատասխանեց նա և տարակուսանքով նայեց ինձ, որ չհասկացա: Ահավոր կասկած սողոսկեց սիրտս:

ԳՐԻԳՈՐ – Դու ուրիշ մոլորակի՞ց ես եկել,– պատասխանին սպասելիս արյունս ասես պաղեց երակներիս մեջ:

Աղջիկը գլխով արեց: Ես կծեցի շրթունքս, և երբ արյան համ զգացի բերանումս, համոզվեցի, որ երազում չեմ:

ԳՐԻԳՈՐ – Ի՞նչ է քո մոլորակի անունը:

Աղջիկը կրկին այնպիսի անուն տվեց, որի նմանը չկա, ուստի ոչ էլ դա կարողացա հիշել:

ԳՐԻԳՈՐ – Ինչպիսի՞ն է ձեր մոլորակը:

Աղջիկը թոթվեց ուսերը:

ԳՐԻԳՈՐ – Լեռնայի՞ն է, ծովաշա՞տ է, հովտայի՞ն է, տա՞ք է, ցո՞ւրտ է: Ինչպիսի՞ն է:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ինձ նման է:

ԳՐԻԳՈՐ – Գույնզգույն, թափանցիկ և անմարմի՞ն:

Աղջիկը ժպտաց և, ի նշան համաձայնության, նորից գլխով արեց:

ԳՐԻԳՈՐ – Ձեր մոլորակը հեռո՞ւ է:

Նա չհասկացավ «հեռու» բառի իմաստը, ուստի ես վեր նայեցի ու ձեռքս երկինք պարզելով՝ բացականչեցի՝ հեռո՜ւ, հեռո՜ւ…

ԹԻԹԵՌՆԻԿ – Հեռո՜ւ, հեռո՜ւ…,– իր հերթին ձեռքը դեպի երկինք պարզելով՝ շարունակեց աղջիկը:

ԳՐԻԳՈՐ – Մեր լեզուն ո՞վ է սովորեցրել քեզ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Հիմա եմ սովորում:

ԳՐԻԳՈՐ – Ձեր լեզուն ինչպիսի՞ն է:

Աղջիկը երգեց անընդհատ ձայնով *(հնչում է Իմա Սումակի ձայնը)*: Ասես երկինքն ու երկիրը շարժվեցին. նրա հետ երգում էին բոլորը՝ լորենին, ծաղիկները, հողը, ջուրը, օդը: Իսկ ես, ինչպես ծուկը ակվարիումի մեջ, լողում էի այդ կախարդիչ հնչյունների աշխարհում: Այդպես շարունակվեց մոտավորապես մեկ րոպե:

ԳՐԻԳՈՐ – Դա՞ է ձեր լեզուն,– հարցրի դողացող ձայնով:

ԹԻԹԵՌՆԻԿ – Այո՛: Հավանո՞ւմ ես:

ԳՐԻԳՈՐ – …Եվ դու կարծո՞ւմ ես, թե այդ լեզուն բոլորը կհասկանան:

ԹԻԹԵՌՆԻԿ – Իհարկե՛:

ԳՐԻԳՈՐ – Բայց ինչպե՞ս:

Աղջիկը նորից սկսեց երգել: Երգելիս նա ձեռքը մեկնում էր դեպի տարբեր առարկաներ, հավանաբար նրանց անուններն էր տալիս, քանի որ առարկան, որին ուղղում էր խոսքը, գույնը փոխում էր ու աղջկա ձայնով երգում: Դա այնպիսի հույզ ու կարոտ էր, որոնց համար կարելի էր նույնիսկ մահ տենչալ, եթե իմանայիր, որ այդ կարոտն ու հույզը շիրիմում էլ կշարունակվեին:

Զգալով, ինչ-որ բան է կատարվում ինձ հետ՝ աղջիկը լռեց ու մտածմունքի մեջ ընկավ:

ԳՐԻԳՈՐ – Ինձ մոտ արի,– խնդրեցի աղջկան:

Աղջիկը մոտեցավ:

ԳՐԻԳՈՐ – Ավելի մոտեցիր: Ես ուզում եմ գրկել քեզ, փաղաքշել: Կարելի՞ է:

Աղջիկն ընդհուպ մոտեցավ: Ես նրան առա թևերիս մեջ, սեղմեցի կրծքիս ու զգացի, թե ինչպես նրա մարմինը աստիճանաբար ծուլվեց իմ մարմնին՝ կենարար ջերմություն ներարկելով սրտիս…

(Երաժշտություն և լազերային լույսի առկայծում):

ԳՐԻԳՈՐ – Ինչպե՞ս հայտնվեցիր այստեղ, փոքրի՛կս:

ԹԻԹԵՌՆԻԿ – Մայրիկիս մոտից եմ փախել:

ԳՐԻԳՈՐ – Մենակ չե՞ս վախենում:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ինչի՞ց պիտի վախենամ:

ԳՐԻԳՈՐ – Բա որ կորչես, ու մայրիկդ քեզ չգտնի՞:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ես մայրիկիս կկարոտեմ, նա՝ ինձ ու կգտնի:

ԳՐԻԳՈՐ – Իսկ եթե տուն գնալ ուզես, ինչպե՞ս ես գնալու:

ԹԻԹԵՌՆԻԿ – Կկարոտեմ ու կգնամ:

ԳՐԻԳՈՐ – Կկարոտես և ուրիշ ոչի՞նչ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ուրիշ ոչինչ:

(Կարծես ինքն իրեն):

ԳՐԻԳՈՐ – «Ինչու» և «ինչպես» բառերը կորցրին իրենց իմաստը: Այդ պահին ամեն ինչ ինձ համար և՛ հասկանալի էր, և՛ անհասկանալի, և՛ շատ պարզ, և՛ անչափ բարդ ու խճճված:

ԳՐԻԳՈՐ – Երկրագնդի վրա առաջի՞ն անգամ ես լինում:

ԹԻԹԵՌՆԻԿ – Առաջին անգամ:

ԳՐԻԳՈՐ – Այլ մոլորակների վրա եղե՞լ ես:

Աղջիկը գլխով արեց:

ԳՐԻԳՈՐ – Որևէ տեղ կյանքի հանդիպե՞լ ես:

(Պատասխանին սպասելիս արյունս ներից պաղեց երակներիս մեջ: Շունչս կտրվում էր):

ԹԻԹԵՌՆԻԿ – Շատ մոլորակների վրա եմ եղել, հարգելի՛,– ժպտաց աղջիկը:

ԳՐԻԳՈՐ – Նրա՞նք էլ մերի նման են:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ո՛չ, հարգելի՛, տարբեր են,– աղջիկը ձեռքերը տարածեց ու երկինք նայեց:

ԳՐԻԳՈՐ – Այսի՞նքն:

ԹԻԹԵՌՆԻԿ – Դժվարանում եմ ասել: Ես ուր էլ գնում եմ, դառնում եմ այնպիսին, ինչպիսի կյանքի հանդիպում եմ:

(Լռություն...)

ԹԻԹԵՌՆԻԿ – Ո՞վ ես դու, – հանկարծ հարցրեց աղջիկը:

ԳՐԻԳՈՐ – Ե՞ս... Դու չգիտե՞ս՝ ով եմ ես:

(Աղջիկը թոթվեց ուսերը):

ԳՐԻԳՈՐ – ...Ես մարդ եմ: Երկրագունդը իմ տունն է: Սնվում եմ ջրով, օդով, արևով, մսով, բույսերով...:

ԹԻԹԵՌՆԻԿ – Իսկ դո՛ւ, ասածդ դու ո՞վ ես:

ԳՐԻԳՈՐ – Հո ասացի՝ մարդ: Ես ունեի իմ ծնողները, նրանք՝ իրենց ծնողները, նրանք՝ իրենցը, նրանք էլ՝ իրենցը, և այսպես շարունակ...

ԹԻԹԵՌՆԻԿ – Մինչև ո՞ւր:

ԳՐԻԳՈՐ – Չգիտեմ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ուրեմն՝ չգիտես, թե դու ով ես:

ԳՐԻԳՈՐ – Չէ՛, չգիտեմ,– ստեցի ես:

(Աղջիկը ներից ժպտաց):

ԹԻԹԵՌՆԻԿ – Այստեղ ի՞նչ ես անում,– հարցրեց նա ու հայացքով զննեց շրջակայքը:

ԳՐԻԳՈՐ – Այստե՞ղ... Ոչինչ: Հենց այնպես կանգնել եմ... Ես հիվանդ եմ: Գիտե՞ս՝ ինչ ասել է՝ հիվանդ: Այսինքն՝ երբ մարդ իրեն վատ է զգում: Ես հիվանդ եմ: Ամեն առավոտ գալիս եմ զբոսանքի, մաքուր օդ եմ շնչում այս ծաղկառատ հովտում: Այս սմքած-չորացած լորենու տակ եմ լինում: Ուզում եմ առողջությունս վերականգնել և ներից կյանք առնել այնպես, ինչպես դու կյանք տվեցիր ու առողջացրիր էս լորենուն:

ԹԻԹԵՌՆԻԿ – Քեզ ի՞նչ է պատահել,– կարեկցանքով հարցրեց աղջիկը:

ԳՐԻԳՈՐ – Ես շատ ծանր հիվանդացա: Սիրտս էր ցավում: Գիտե՞ս՝ ինչ ասել է սիրտ: Մարդ առանց սրտի չի կարող ապրել, և, ինչպես բոլոր մարդիկ, ես էլ սիրտ ունեմ՝ բաբախող, կենդանություն պարգևող սիրտ: Ով, ահա, մի քանի տարի առաջ սիրտս ճաք տվեց, տե՛ս:

(Բացում է վերնաշապիկը, և հնչում է երաժշտություն, լուսային էֆեկտներ)։

ԳՐԻԳՈՐ – …Հա՛, ես ամեն օր այս ծաղկահովիտն եմ գալիս, որպեսզի սիրտս առողջանա: Հիմա համեմատաբար լավ եմ, բայց արդյո՞ք նախկինի պես կբաբախի, կջերմանա…:

(Երաժշտություն, և թիթեռնիկը մուտենում է տղամարդուն և չեռքը դնում կրծքին)։

ԳՐԻԳՈՐ – Իսկ դուք հիվանդանո՞ւմ եք,– հարցրի ես:

ԹԻԹԵՌՆԻԿ – Այո՛, իհարկե՛,– ժպտաց նա:

ԳՐԻԳՈՐ – Ձեզ ի՞նչ կարող է պատահել:

ԹԻԹԵՌՆԻԿ – Գունաթափվում ենք, խամրում:

ԳՐԻԳՈՐ – Իսկ ինչպե՞ս եք բուժվում:

ԹԻԹԵՌՆԻԿ – Իրար գույն ենք տալիս: Երանգավորում ենք մեկմեկու: Մեկս մյուսիս գույնն ենք առնում:

ԳՐԻԳՈՐ – Սինչև ե՞րբ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ընդմիշտ: Ի վերջո միմյանց հավերժական գույն ենք փոխանցում: Մեր մոլորակի անունը ձեր լեզվով մոտավորապես կլինի այսպես՝ Հավերժական գույների մոլորակ: Լա՞վ է:

ԳՐԻԳՈՐ – Հրաշալի է:

(Շրջվելով դեպի հանդիսատեսը)։

ԹԻԹԵՌՆԻԿ – Իմ մայրիկն է,– ուրախ բացականչեց աղջիկը և շրջվեց դեպի ցոլանքը:

ԳՐԻԳՈՐ – Հանկարծ անծայրածիր տափաստանը ողողվեց երաժշտության կախարդիչ հնչյուններով:

(Պար՝ լազերային լույսերի էֆեկտներով)։

ԳՐԻԳՈՐ – Ես անզոր եմ վերարտադրելու այդ երաժշտությունը: Ինքներդ պատկերացրեք, որ տափաստանի բոլոր ծաղիկները դարձել են երաժշտական գործիքներ և հոգեզմայլ ու անչափ ախորժալուր հնչյուններ են արձակում: Դա բնության փառահեղ հիմն էր: Դա տիեզերքի աղբյուրն էր: Դա հավերժական գույների մոլորակի, երկու լուսատուների՝ միմյանց կարոտած մոր ու դստեր սրտահույզ զրույց էր: Իմ առջև կրկին իմ ծանոթ, կապուտաչյա, զմայլելի աղջիկն էր:

ԹԻԹԵՌՆԻԿ – Մնաք բարով, հարգելի՛,– ասաց նա:

ԳՐԻԳՈՐ – Դո՞ւ գնում ես,– կակազելով հարցրի ես:

ԹԻԹԵՌՆԻԿ – Պետք է գնամ: Մայրս կանչում է:

ԳՐԻԳՈՐ – Ինձ էլ տա՛ր, ջանի՛կս, սիրո՛ւն աղջիկ: Ինձ էլ տա՛ր քո Հավերժական գույների երկիր: Աղաչում եմ քեզ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Սի՞թե այդպես հեշտ ու հանգիստ կթողնես քո տունը, ո՛վ մարդ,– զարմացած հարցրեց նա:

ԳՐԻԳՈՐ – Եթե սիրտս չի առողջանալու, եթե, այնուամենայնիվ, չեմ ապրելու, մեկ չի՞… Տա՛ր ինձ, քանի կենդանի եմ, քանի դեռ հող չեմ դարձել: Ինձ տո՛ւր քո գույնը, քո զեփյուռայնությունը, քո անմահությունը և տա՛ր հետդ: Ես վախենում եմ մահից…: Տա՛ր ինձ,– խնդրեցի ես ու ծունկի եկա նրա առաջ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ես չեմ կարող քեզ տանել, ով մարդ,– աղջիկն ափսոսանքով տարածեց իր փոքրիկ ձեռքերը:

ԳՐԻԳՈՐ – Ինչո՞ւ,– վշտացա ես:

ԹԻԹԵՌՆԻԿ – Որովհետև դու մարդ ես, մարմնական: Ո՛չ գույն ես, ո՛չ կարոտ: Երբ գույն ու կարոտ դառնաս, միայն այդ դեպքում կկարոտեմ քեզ և միայն այդ դեպքում կարող եմ տանել քեզ:

ԳՐԻԳՈՐ – Կարոտի՛ր,– խնդրում եմ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Ինչպե՞ս կարոտեմ, երբ այստեղ եմ՝ քեզ մոտ,– զարմացած պատասխանեց աղջիկը:

ԳՐԻԳՈՐ – Կարոտի՛ր այնտեղ՝ Հավերժական գույների քո երկրում:

ԹԻԹԵՌՆԻԿ – Եթե ուզում ես կարոտեմ, դու պետք է գույն ու կարոտ դառնաս:

ԳՐԻԳՈՐ – Ե՞րբ: Ինչքա՞ն կտևի:

ԹԻԹԵՌՆԻԿ – Այդ արդեն քո մայրը՝ Հողը, պիտի որոշի:

ԳՐԻԳՈՐ – Հետո կկարոտե՞ս ինձ:

ԹԻԹԵՌՆԻԿ – Այո՛:

ԳՐԻԳՈՐ – Շնորհակալ եմ,– ասացի ես ու վեր կացա: –Սպասիր, մի՛ գնա,– խնդրեցի ես,– եթե կարելի է, թույլ տուր՝ մի անգամ էլ քեզ գրկեմ, գուրգուրեմ:

(Հնչում է երաժշտություն, մոտենում և գրկում է տղամարդուն):

ԹԻԹԵՌՆԻԿ – Չեզ ի՞նչ պատահեց, հարգելի՛,– հարցրեց աղջիկը, թեև զգաց՝ ինչ կատարվեց ինձ հետ:

ԳՐԻԳՈՐ – Ոչինչ, քաղցրի՛կս: Ցտեսությո՛ւն:

ԹԻԹԵՌՆԻԿ – Մնաք բարով, հարգելի՛,– ձեռքը օդում թափահարելով՝ պատասխանեց նա:

(Տեսանյութի երկրորդ մասը, նույն տեսանյութը, որտեղ ավարտվել էր, այնտեղից հետո է պտտվում դեպի սկիզբ, բայց երաժշտության ներքո ու առանց բառերի: Փակվում է վարագույրը, և դիմացը նստած է Գրիգորն իր աղջիկների հետ: Գրիգորն այդ ամբողջը պատմում էր իր աղջիկներին):

ԳՐԻԳՈՐ – Հետո որպես անկրկնելի երազ, երգ ու գույների ցոլք անէացավ երկնքի մովում. անէացավ, գնաց, թողեց միայն այս խորհրդավոր շրշացող կանաչ լորենին, երաշխիքը՝ իր գոյության ու անմահության…

ԱՐՓԻՆԵ – Դու իսկապե՞ս հիշում ես, որ այս լորենին հիվանդ էր, չորացած,– պատմությունս վերջացնելուց հետո հարցրեց ավագ դուստրս և հայացքն ուղղեց կատարը երկինք հասած, ուրախ սոսափող հսկայական ծառին: Երբ դրականորեն գլխով արեցի, նա հազիվ նշմարելի ժպիտով նայեց կրտսեր քրոջը:

ԱՐՓԻ – Հետո՞,– հարցրեց կրտսերը և լեզվի ծայրով լպստեց հուզմունքից չորացած շրթունքները:

ԳՐԻԳՈՐ – …Երեք օր ու գիշեր երեսնիվեր պառկեցի այս ծաղիկների մեջ՝ ունկնդրելով գույների զարմանահրաշ երգը: Ես հիմա էլ եմ լսում այդ ծանոթ հնչյունները: Մի՞թե դուք չեք լսում,– հարցրի զավակներիս:

(Երեխաները հայացքով չափեցին ամբողջ տափաստանը, հետո կարեկցաբար գլխով արեցին՝ չէ, չենք լսում):

ԳՐԻԳՈՐ – Հապա պառկեք ծաղիկների մեջ և ուշադիր լսեք,– ասացի ես:

(Նրանք պառկեցին, աչքերը գոցեցին ու դարչյան համակ ուշադրություն: Մուր հինգ րոպե չայն-ծպտուն չէին հանում):

ԳՐԻԳՈՐ – Լսո՞ւմ եք,– ի վերջո հարցրի ես:

ԱՐՓԻ – Ո՛չ,– պատասխանեց կրտսերը:

ԱՐՓԻՆԵ – Լսում եմ, միայն թե՝ շատ հեռվից ու շատ թույլ,– հարեց ավագը:

ԳՐԻԳՈՐ – Ոչինչ, կարևորն այն է, որ լսում ես:

ԱՐՓԻՆԵ – Բացի քեզանից՝ ուրիշ որևէ մեկը տեսա՞վ այդ աղջկան,– անսպասելիորեն հարցրեց ավագը:

ԳՐԻԳՈՐ – Չէ՛, շատերին հարցրի, շատերին պատմեցի, բայց ոչ ոք չէր տեսել: Ոչ էլ հավատում էին ինձ…

ԱՐՓԻՆԵ – Մայրի՞կը:

ԱՐՓԻ – Մայրիկը՝ ի՞նչ:

ԱՐՓԻՆԵ – Մայրիկն էլ չհավատա՞ց:

ԳՐԻԳՈՐ – Ոչ էլ ձա հավատաց:

ԱՐՓԻ – Իսկ ի՞նչ ասաց:

ԳՐԻԳՈՐ – Ասաց, որ գժվել եմ… Ի՞նչ, ձե՞զ էլ է ասել…:

(Աղջիկները գլուխները կախեցին):

ԳՐԻԳՈՐ – Դուք էլ չե՞ք հավատում:

ԱՂՋԻԿՆԵՐ – Հետո ի՞նչ եղավ:

ԳՐԻԳՈՐ – Հետո այն եղավ, որ ամեն գարնան, համարյա ամեն օր գալիս եմ այս ծաղկառատ դաշտը, կանգնում այս հազարամյա լորենու տակ, հայացքս հառում հեռուն և սպասում, թե երբ է ինձ կարոտելու իմ փոքրիկ բարեկամը, երբ է հորիզոնում հայտնվելու որպես յոթներանգ հրաշագեղ մրրիկ, երբ է գալու, երբ է տանելու ինձ…

(Այս անգամ լռությունը ավելի քան երկար տևեց):

ԱՐՓԻՆԵ – «Ե՞րբ է կարոտելու, ե՞րբ է գալու, ե՞րբ է տանելու»,– լացակումած կրկնեց ավագը:

ԱՐՓԻ – Իսկ մե՞նք,– հարցրեց կրտսերը:

ԳՐԻԳՈՐ – Դուք՝ ի՞նչ:

ԱՐՓԻ – Մենք, մենք ի՞նչ պիտի անենք առանց քեզ:

(Նրա խոշոր մեղրագույն աչքերը լճացել էին արցունքներից: Ներքին շրթունքը ծռվել էր, իսկ կզակը կափկափում էր: Չախ կրծքիս տակ ինչ-որ բան այրեց: Մուրեցա աղջկաս, թևերիս մեջ առա ու ամուր սեղմեցի կրծքիս: Սեղմեցի ու ապշեցի. ձա աստիճանաբար չուլվեց մարմնիս, և ես զգացի, թե ինչպես կենարար ջերմություն ներարկվեց սրտիս ու հոգուս: Ներս է մտնում Արփինեն՝ մի փունջ չեռքին, երբ բաց է անում փունջը, թիթեռները թռչում են: Նրանք երեքով երջանիկ ձայում են վերև, և հնչում է երաժշտությունը, կարծես թիթեռնիկները վերևից ողջունում են իրենց):

ՎԵՐՋ

ԵՎ ԱՅՐ ՄԻ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ

Նվիրված է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին:

Ըստ Պ. Սևակի համանուն պոեմի, Մ. Խորենացու «Հայոց պատություն» և Կորյունի «Վարք Մաշտոցի» ստեղծագործությունների

Պիես՝ մեկ գործողությամբ

Հեղինակ՝ Կարինե Դավթյան

Նկարագրություն

Ներկայացումը նվիրվել է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին: Այն պատվիրվել է Մաշտոցի 1650-ամյակի միջոցառումների՝ Հայաստանի Հանրապետական հոբելյանական հանձնաժողովի կողմից և եղել է միակ ներկայացումն այդ թեմայով: Պիեսը արվել է Պարույր Սևակի համանուն պոեմի հիման վրա, ինչը զուգորդվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» և Կորյունի «Վարք Մաշտոցի» ստեղծագործություններով: Սցենարում կառույցն այնպես է արված, որ ժամանակակից երիտասարդները գնում են քաղաքից դուրս և սեղանի շուրջ սկսում են խոսել հայոց պատմությունից: Ջրույցի ընթացքում վերականգնվում է պատմությունն իր պատմական կերպարներով, խոսում և գնահատում են Պարույր Սևակի ստեղծագործության միջոցով: Ընդհանուր առմամբ որպես հիմք օգտագործված է այսօրվա սերնդի գնահատականը պատմական անցքերի, հատկապես հայոց այբուբենի ստեղծման խորհրդի մասին:

Երաժշտական ձևավորումները և երգերը գրվել են կոմպոզիտոր Արթուր Հակոբյանի կողմից, իսկ բառերը վերցվել են Պ. Սևակի ստեղծագործությունից: Զուգորդվել են նաև պարային բեմադրություններով ու լուսային էֆեկտներով:

Նկարչական ձևավորումներն իրականացրել է ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանը, իսկ պարային բեմադրությունները՝ աղջիկների պարային համույթի գեղարվեստական ղեկավար Իռէն Ուլիխանովան և տղաների պարային համույթի ղեկավար Համլետ Հովհաննիսյանը:

Պրեմիերան տեղի է ունեցել 2011 թվականի նոյեմբերի 14-ին:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է:

Գործող անձինք

Մեսրոպ Մաշտոց – հայ գրերի ստեղծողը
Մովսես Խորենացի – պատմիչ
Սահակ Պարթև – կաթողիկոս
Վռամշապուհ – թագավոր
Կորյուն – Մեսրոպ Մաշտոցի աշակերտ
Հայ կին – Մարիաննա
Աշակերտներ
Ժամանակակից երիտասարդություն
Տիգրան
Շուշան
Սուսաննա
Հասմիկ
Նելլի
Մարի
Լուսինե
Ջեմմա
Միկա
Պարային տեսարաններ, մասսայական տեսարաններ, երգեր, երգիչներ

Ծնունդի տեսարան

(Բեմի կենտրոնում խաչն է նկարված (կտորե դեկոր), և երկու կողմերում հայկական ժայռապատկերների հատվածներ (կտորե դեկոր) են կախված: Հնչում է երաժշտություն, և ներս են մտնում երեք կանայք, երկուսը տրանում են մի կնոջ, որը ցավերի մեջ է: Հետո մտնում են էլի կանայք, երեքը՝ յախ կողմից, և երկուսը՝ աջ, որոնք բերում են կժերով ջուր, թաս ու կտորներ: Լսում է մանկան ճիչ: Բոլոր կանայք դուրս են գալիս և կանգնում են դեմքով դեպի խաչը):

ԽՈՐԵՆԱՑԻ – 361 թվականին Տարոն գավառի Հացիկ գյուղում՝ «Երաշելի» Վարդանի տանը, ծնվեց արու մի զավակ կամ այր մի՝ Մաշտոց անունով:

ԲՈԼՈՐԸ – Անունն ի՞նչ է:

ԲՈԼՈՐԸ – Մաշտոց, Մաշտոց….. *(Տեսարանի ավարտը):*

(Մտնում են երկու ժամանակակից երիտասարդներ՝ Տիգրանն ու Միքայելը):

ՏԻԳՐԱՆ – Մենք կայինք նաև նրանի՛ց առաջ և դարեր առաջ:

ՇՈՒՇԱՆ – Մենք բռնությունից խույս էինք տալիս բեղուն դաշտերին՝ գերադասելով լեռները քարոտ:

ՏԻԳՐԱՆ – Իսկ մեզ ոտնկոխ հետապնդողին դիտապաստ անում

ՇՈՒՇԱՆ – Եվ դրանով իսկ անուն ստանում՝

ՏԻԳՐԱՆ ԵՎ ՇՈՒՇԱՆ – կոչելով մեզ Հայկ:

(Հնչում է խիստ ժամանակակից երաժշտություն, ներս են մտնում երկու աղջիկ և կտորները գցում են գետնին: Հետո ներս է մտնում մի աղջիկ կիթառով, մյուսները՝ պարելով: Ապա սեղան են դնում գետնին՝ փռված կտորի վրա, և նստում):

ՇՈՒՇԱՆ – Մենք անշունչ քարը դարձնում էինք ձուկ,

ՀԱՍՄԻԿ – ձո՛ւկ *(ցույց է տալիս իսկական ձուկ)*,

ՏԻԳՐԱՆ – Որ անջրդի լեռնալանջերի շիկացած հողից
Իր փորը վառած
Կիսաբաց բերնով
Երկնքից անջուր
Գոնե անձրևի շիթ էր պահանջում

ՇՈՒՇԱՆ – լեռը ծակելով:
Մենք նրա միջով ջուր էինք տանում
Ու շռայլ բանում
Մեր այգիների այրի արգանդին:

ՍՈՒՍԱՆՆԱ – Իսկ ամուլ կավին տալիս էինք մենք
Չնը վարսանդի

Եվ կոչում կարաս,

ՏԻԳՐԱՆ – որի մեջ հետո լողացնում էինք գարին մեր մաքուր
(Հեռքին գարեջրով լի բաժակ է)
Եվ մկրտության այդ ջուրը դեղին հարբածությունից
նույնիսկ առավել
Զարմանք էր ազդում այն գոռոզներին
Որ մեզ այնուհետ
Չէին հանդգնում կոչել «բարբարոս»,
Մենք համառ ոսկուն ստիպում էինք նաև մայրանալ
Դառնալ դիցուհու արձան անթերի
Եվ այդ հլությունն անձնատուր ոսկու
Անվանում էինք մայր զգաստությանց՝ մեծն Անահիտ:

ՇՈՒՇԱՆ – Մենք տալիս էինք անհատակ վիհին մի նոր խորություն,
Երկնամուխ կիրճին՝ բարձություն մի նոր
Եվ……. կոչում Գառնի:

ՏԻԳՐԱՆ – Մենք կայինք նաև նրանի՛ց առաջ,
Մեր արքաների և իշխանների արածի վրա չարածը դրած՝
Նրանց գործն էինք դեռ շարունակում
Լարերի վրա բամբ բամբիռների
Եվ… դա անվանում երգ Վիպասանաց

ՆԵԼԼԻ – Արշակները մեր՝
Հայրենի հողին ոտքով շփվելով,
Լոկ հպարտության խոսքերով էին շուրթերը բանում
Եվ ըմբերանում տիրակալներին:

ԼՈՒՍԻՆԵ – Մուշեղները մեր՝
Օտար զորության ընդդիմանալիս
Նրանց հարեմը գերի առնելով
Ու ձեռք չտալով և ոչ մի կնոջ՝
Առնականության և վեհանձնության դաս էին տալիս,
Այնպիսի մի դաս,
Որ ոսոխն անգամ անգիր էր անում…

ՏԻԳՐԱՆ – Մենք կայինք նաև նրանի՛ց առաջ
Մենք աստղերն էինք մեր աչքով զննում,
Արշալույս էինք թելերով հիմնում,
Տաճարից ելնում ու թատրոն գնում
Վայելում նաև հաճույքը վսեմ
Մեր այն պարուհի-կաքավողների,
Որոնց մարմինը նվագ էր լռած,

Եվ որոնք նաև «երգեին ձեռամբ»…

(Մթնում է: Հետևում վառվում է լույս, Տիգրանը նվագում է կիթառով ու երգում է Մաշտոցի երգերից մեկը)։

ԽՈՐԵՆԱՑԻ – Մաշտոցը շատ լավ ըմբռնում էր, որ հայության ինքնության ու միասնության համար անհրաժեշտ էր ստեղծել բարոյական կռվաններ ու հասարակական երաշխիքներ՝ հայ հոգևոր արժեք, Հայ եկեղեցին՝ որպես հասարակական կազմակերպչական ուժ:

ՍՈՒՍԱՆՆԱ – Սա ո՞ւմ երգն է, Տիգրա՛ն:

ՏԻԳՐԱՆ – Մեսրոպ Մաշտոցի:

ՋԵՄՄԱ – Մեսրոպ Մաշտոցը երգե՞ր է գրել:

ՏԻԳՐԱՆ – Այո՛, մենք կայինք նրանից առաջ:

ՍՈՒՍԱՆՆԱ – Սակայն աշխարհի լայնքի վրայով մի չտեսնված մրրիկ էր անցել,
Հրեա մի գունատ՝
Քշված իր երկրից,
Օտարականի ու հյուրի տեսքով,
Ինքն իրեն տարավ աշխարհից աշխարհ:

ՇՈՒՇԱՆ – Զորավոր էին Աստվածները հին
Այնքան զորավոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում,

ՄԱՐԻ – Իսկ երբայեցին եկավ ասելու. «Մարդ եմ ես»
Եվ… դարձավ աստված՝
«մարդ եմ» ասելով…,
«Այս է մարմինն իմ: Առեք ու կերեք» *(ցույց է տալիս լավաշ հացը)*:

ՍՈՒՍԱՆՆԱ – «Այս է արյունն իմ ըմպեցեք սիրով» *(ցույց է տալով գինով լի բաժակը)*:
Իսկ երբայեցին ասաց. «Մարդ եմ ես»:
Եվ... դարձավ աստված
«Մարդ եմ» ասելով...

ՀԱՍՄԻԿ – և կործանվեցին աստվածները հին,

ԼՈՒՍԻՆԵ – մարդուց խլեցին իր հավատը հին,
Իսկ հավատը նոր հաստատվեց խոսքով,
Միմիայն խոսքով.
Դեռ նորը չկար

ՄԱՐԻ – Եվ այսպես՝
Կյանքից մնաց մի «մեղա»,

Որ պիտի ևաև… բարձր չհնչեր:
Եվ այսպես՝
Անցավ ողջ հարյուր տարի,
Որ կարճ է թվում, երբ գիրք ես կարդում,
Իսկ երբ ապրում ես և ամեն րոպե
Զգում ես մաշկի՛դ, զգում ես սրտով,
Ուղեղիդ բոլոր ծալքերով՝
Այնժամ…

ՆԵԼԼԻ – Հենց այսպես էինք մենք ապրում այնժամ
Հայաստան կոչված աշխարհն էլ արդեն
Լոկ անունով էր Հայաստան կոչվում:

ՏԻԳՐԱՆ – Ջոհված արջառի տաքուկ սրտի պես
Մեր հողն էր կիսված
Ու բռնի քաշված
Երկու շիկացած ու սուր շամփուրի,
Որոնցից մեկը պարսիկն էր բռնել կրակի վրա,
Մյուսը բռնել էր մոմերի վրա նենգ բյուզանդացին:

(Անչրև, ամպրոպ, բոլորը հավաքվում դուրս են գալիս, մնում են Տիգրանը, Շուշանն ու Միքայելը):

ՄԻՔԱՅԵԼ – Խորովվում էինք.
Արցունքի տեղակ
Մեր ճենճերն էին կաթում-կաթկթում,
Ասես կամենում էին իրենց խորովող կրակը մարել:
Սակայն ճենճերից այդ ո՞վ չգիտի՝ չի մարում կրակ,
Այլ բորբոքվում է մոլությամբ մի նոր:

ՇՈՒՇԱՆ – Մե՛ր հողի վրա,
Մե՛ր երկնքի տակ
Մենք դարձել էինք օտարի գաղութ:

(Տղաների պար: Ավարտից հետո նորս են մտնում Շուշանն և Զեմման, նստում են գետնին՝ մեջք մեջքի):

Նույնիսկ մեր հորը երկրպագելու
Եվ կամ թե որդուն երկրպագելու համար
Այլ արքունիքից պիտի խնդրեինք մի թույլտվություն,
Որ եթե հասներ՝
Պարտավոր էինք համարել շնորհ
Եվ շնորհակալ մնալ հավիտյան *(դուրս է գալիս)*:

ԶԵՄՄԱ – Հայաստան կոչված աշխարհը կիսված

Նստել էր արդեն
Իրար չկպած ծայրերի վրա ա՛յն աթոռների,
Որոնց տակ անտակ անդունդն էր բացվում:

(Ջեմման դուրս է գալիս, ներս է մտնում Մովսես Խորենացին):

ԽՈՐԵՆԱՑԻ – Ուստի Մաշտոցը *(ներս է մտնում Մաշտոցը)* միտք դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել և աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան վտրձերով չարչարվում էր:

(Խորենացին դուրս է գալիս, գալիս է Կորյունը):

ԿՈՐՅՈՒՆ – Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն խնդրով զբաղվելուց հետո՝ այնուհետև, վեր կացավ, եկավ հասավ Մեծ Հայաստանի Սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ էր, որին և պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ, և նրանք, միասին սիրով մեկտեղ գալով, առավոտ կանուխ մեծ աղոթքներով Աստծուն էին դիմում, որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբար փրկություն:
Ապա ամենաբարի Աստծուց պարգևեց նրանց՝ Երանելի միաբանյալների աշխարհահոգ ժողով և հայ ազգի համար նշանագրեր գտնել:

(Աշխարհահոգ ժողովի տեսարան: Երաժշտության ներքո մտնում են 4 իշխաններ և ողջունում են միմյանց, այնուհետև մտնում է Մաշտոցը, որից հետո մտնում է կաթողիկոսը: Բոլորը շրջվում են դեպի նա և խոնարհվում: Կատարվում է աղոթք, բոլորը ծնկած են՝ բացի կաթողիկոսից: Ավարտին խոսում է կաթողիկոսը):

ԿԱԹՈՂԻԿՈՍ – Քաջերի սահմանն իրենց զենք է հենց:
Քաջեր մի՛շտ էլ կան,
Ջե՛նք է հարկավոր:

ՄԱՇՏՈՑ – Քաջեր մի՛շտ էլ կան
Պետք է ասպարեզ,
Որ նու՛յնպես չկա

ԿԱԹՈՂԻԿՈՍ – Կա միայն պարիսպ,
Որ տարածվում է աշխարհից աշխարհ:

ՄԱՇՏՈՑ – Եվ կան նաև ազնիվ ճակատներ,
Որոնցով երբեք պարիսպ չես քանդի…

ԿԱԹՈՂԻԿՈՍ – Աշխարհի վրա իշխում է արդեն մի ճշմարտություն,
Որ 100 տարի,

100 ձի՛գ տարի
Չի կարողանում իր ճշտությունը կարգին հաստատել
Մի ճշմարտություն,
Որ ամեն վայրկյան
Կամա ակամա հերքում է իրեն,

ՄԱԾՏՈՑ – Իսկ իսկությունը…

(Մրմնում է բագավորը՝ Վռամշապուհը, բոլորը պարիվ են տալիս)։

ԹԱԳԱՎՈՐ – Իսկ իսկություն չէ,
Որ զորքից հետո
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում
Եվ ինչ չի կարող ո՛չ մի զորք անել՝
Լեզուն է անում…

ԲՈԼՈՐԸ – Այո՛:

(Թագավորը կանչում է Մաշտոցին։ Նա ծնկում է նրանց առջև)։

ԹԱԳԱՎՈՐ – *(Հանում է հրովարտակը)։* Ես՝ հայոց արքա Վռամշապուհ թագավորս,

ԿԱԹՈՂԻԿՈՍ – Եվ ես՝ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևս,

ԹԱԳԱՎՈՐ – Հրամայում ենք քեզ գնա՛ և ստեղծի՛ր նշանագրերը՝ ի բարօրություն հայ ազգի և մեր ….

ԿԱԹՈՂԻԿՈՍ – Աստված օգնական։ Հավիտյանս հավիտենից, ամե՛ն:

(Մաշտոցը վեր է կենում և ասում)։

ՄԱԾՏՈՑ – Աստված վկա, ես կանեմ հնարավոր և անհնար ամեն ինչ, որ փրկեմ իմ ժողովրդին (*Մաշտոցը առանձին*)։

(Ապա հեռանում են նախարարները։ Մաշտոցը հեռանում է՝ գլուխ տալով, Կոչյունը և մի աշակերտ հետևում են նրան)։

ՏԻԳՐԱՆ – Ոչ ոք չգիտեր՝ վաղն ինչ կբերի:
Եվ ապագայի երաշխիք չկար:
Բերք չէին տալիս արտերը բերրի
Նույնիսկ խոստացյալ երկինքը վերին
Դարձել էր մի կեղծ-անկենդան նկար
Անդնդանում էր անորոշություն մի ամենաքամ,
Որ վատ է անգամ որոշյալ մահից:
Մի անհայտություն, որ ինքն էր դարձել երկրի իրական տիրակալը չար:
Եվ կործանումի սուր հոտ էր փչում

Ո՛չ միայն հացից, ջրից ու հողից,
Այլ նաև օդի՛ց ու քամուց անգամ:

ՇՈՒՇԱՆ – Պետք էր, շատ էր պետք ինչ-որ բան անել,
Սակայն ինչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս

ՄԱՐԻ – Ու բոլորն էին այդ հարցը տալիս,
Իսկ պատասխանող չկա՛ր ու չկա՛ր...

(Մաշտոցի տանջանքները. համր տեսարան, որտեղ անհաջող փորձեր է անում տառերի ստեղծման իր երկու աշակերտների հետ: Ապա ջղային նետում է տետրերը և առանձնանում՝ լեռներում ադոթելու: Հանկարծ Մաշտոցը վեր է կենում և ասում)։

ՄԱՇՏՈՑ – Սո՛ւրբ Մարիամ, մի հնար տո՛ւր ինձ:

(Մաշտոցը տանջանքների մեջ փակում է աչքերը և մի տեսիլք է տեսնում, դրանք հայոց տառերն էին, որ ներկայանում են աղջիկների պարով: Պարի ավարտին Մաշտոցը ավարտում է հայոց այբուբենի տառերը և հավաքում իրերն ու հեռանում: Մտնում է Տիգրանը)։

ՏԻԳՐԱՆ – Եվ այդ պահին էր, որ աշխարհ եկավ
Նա՝
Այր մի՝
Մեսրոպ Մաշտոց անունով,

ՆԵԼԻ – Որտեղից եկավ,

ՀԱՍՄԻԿ – Ինչ ակից բխեց,

ՋԵՄՄԱ – Եվ ինչպե՞ս եկավ,

ԼՈՒԻՍԻՆԵ – Հոսեց ինչ հունով:

ՇՈՒՇԱՆ – Այդպես արցունք է ծնվում աչքի մեջ,
Երբ որ աչքի մեջ ընկնում է ավազ:

ՄԱՐԻ – Այդպես դառնում է ավազն ապակի,
Եվ ապակին է հայելի դառնում,
Այդպես՝ արևը ամենից առաջ
Լուսավորում է բարձրաբերձ ծառի
Կատարին թառած թռչունի բույնը,

ՍՈՒՍԱՆՆԱ – Այդպես գոյության ահեղ պայքարում
Անփոփոխ պահած իր ներքինն էլի՝
Գազանն է փոխում իր մաշկի գույնը,
Եվ դա թվում է անսպասելի…

ՏԻԳՐԱՆ – Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում:

ԼՈՒՍԻՆԵ – Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել նրանց։՛

ՀԱՍՄԻԿ – Ժողովրդի մեջ ննջում են նրանք,
Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին,

ՆԵԼԻ – Ինչպես ընտանի աքաղաղի մեջ՝
Իր իսկ երբեմնի թռչունությունը,

ՋԵՄՄԱ – Ինչպես մանուկի պարապ բերանում՝
Ակռա-ատամը:

ԼՈՒՍԻՆԵ – Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
Որպեսզի դառնան նոր զորեղություն:

ՍՈՒՍԱՆՆԱ – Նրանք ծնվում են ինչ-որ հանճարեղ մի հոգնությունից,
Որպեսզի դառնան հանճարեղություն:

ՏԻԳՐԱՆ – Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար:

ԿՈՐՅՈՒՆ – Եվ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տքնությունները և արտասվալից պաղատանքները, խստամբերությունները, աշխարհահեծ հոգսերը՝ հիշելով մարգարեի ասածը, թե երբ որ հեծեծես, այն ժամանակ կապրես»:
Եվ այսպես նա քրիստոսաբար ճգնեց ու շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը: Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերենի նշանագրեր:

ԽՈՐԵՆԱՑԻ – Եվ արդ, երբ հիշելին եկավ, մոտեցավ թագավորական Արարատյան նոր քաղաքին՝ Վաղարշապատին, իմաց տվեցին թագավորին և սուրբ կաթողիկոսին: Նրանք, նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն առնելով, քաղաքից դուրս եկան, Ռահ գետի ափին դիմավորեցին Երանելիին: Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո այնտեղից ցնծության ձայներով և հոգեկոչ երգերով, բարձրաձայն օրհնություններով հետ դարձան քաղաք:

(Երաժշտության տակ ներս են մտնում երկու կողմից աղջիկները՝ ծաղկած ճյուղեր ձեռքերին, և երգելով դիմավորում են Մաշտոցին ու իր աշակերտներին,

որոնք քերում են հայոց պառերն ու հայերեն ձախադասությունը: Նրանք մրմնում են դահլիճից՝ անցնելով մարդկանց միջով):

ԵՐԳՉԱԽՈՒՄՔ – Փառք Մաշտոցին, հայ գրերին... *(երգում են):*

(Աղջիկները պարում են Վաղարշապատի պարը):

ՏԻԳՐԱՆ – Այսպես էլ ծնվեց մեկը նրանից,
Ծնվեց նա՝
Այր մի Մաշտոց անունով,
Եվ նա չծնվեց, որ ավելացնի
Հարց տվողների քանակն անպակաս
Նա եկավ աշխարհ՝ պատասխանելու
Եվ պատասխանը գտավ իսկապես

ԹԱԳԱՎՈՐ – Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց,
Եվ նա էր ահա, որ ձևավորեց
Մի զենք ժանգախույս,
Եվ ծովավորեց
Ասպարեզ մի նոր
Ուր թույլ-ուժեղի,
Շատ ու սակավի,
Քիչ ու բազումի

Մրցության համար ասպարեզ չկա,
Քանզի նորատիպ այդ մաքառման մեջ
Այրուձիի տեղ մտքերն են կռվում,
Թանաք է հեղվում արյան փոխարեն,
Եվ հաղթանակը կոչվում է մատյան:

(Պար: Տառեր: Թրեր, պարում է տղաների խումբը: Պարի ավարտին մի հայ կին, մայր, որ գիրքն է պահպանում պարսերազմից, երեխան ու գիրքը չեռքին, անցնում է ու դուրս է գալիս առանց երեխայի՝ միայն գիրքը չեռքին: Նոր սերունդից մի տղա մուտենում է, որ օգնի. ինքը բարչրանում է):

ՄԱՐԻԱՆՆԱ – *(Գիրքը հանչնում է):* Վերցրո՛ւ մանչս, ճանաչի՛ր զիմաստություն և զխրատ, իմացի՛ր զբանս հանճարո, պահի՛ր ու փոխանցի՛ր քո հաջորդներին:

(Մարիաննան հետանում է երաժշտության ներքո):

ՏԻԳՐԱՆ – Մենք կայինք, այո՛, նրանից առաջ,
Սակայն նա ծնվեց,
Որ գա ու դառնա ինչ-որ նոր Սկիզբ:

ՇՈՒՇԱՆ – Նրանից առաջ կային աստվածներ՝
Երկնքի, սիրո պտղավորումի,
Ինչպես, նաև… դպրության:

ՄԱՐԻ – Եթե բոլորը՝ մինչև իսկ ստույգ,
Վերջինս սուտ էր, սուտ ստուգապես.

ՋԵՄՄԱ – Աստված կար, սակայն դպրություն չկար:
Նա հավատավորն է իր նոր հավատի,

ՍՈՒՍԱՆՆԱ – Դպրության մեր սուտ աստծուն վռնդեց,
Եվ ինքը մնաց նրա փոխանակ:

ԼՈՒՍԻՆԵ – Բայց մինչ դպրության հին աստվածը մեր
Շարունակ միայն մի գործ էր անում՝
Մարդկանց հոգին էր առնում ու տանում,
Սա եկավ, որ մեզ հոգի՜ պարգևի...

ՄԱՐԻ – Միջահատված էր մեր հողը բնիկ,
Ճեղքված էր արդեն հայրենիքը մեր:

ՏԻԳՐԱՆ – Եվ նա չծնվեց ինչ-որ մորից:
Նա հենց այդ ճեղքից ծառացավ հանկարծ,
Որ ճեղքը լցնի գեթ ինքն իրենով:

ՄԱՐԻ – Եվ այդ ճեղքը նա լցրեց իսկապես.
Մեր բաժան-բաժան հողերը նորից:
Այդ նա էր միայն, որ բերեց իրար
Ու միավորեց… արդեն մեր մտքում:

ՇՈՒՇԱՆ – Եվ այդ օրից ի վեր
Ու մինչև այսօր
Այդ միացումը մնում է անխախտ՝
Ընդդեմ ճչացող այն խախտումների,
Որ բախտն է անում սուսուփուս այնպես,
Եվ անում անձայն մի քմծիծաղով,
Որի տակ պիտի ամոթն իր ծածկի,

ՀԱՍՄԻԿ – Բայց իզո՜ւր.
Ծածկել չի՛ կարողանում,
Ինչպես չի ծածկում ծածկույթը խոտի,
Ճահճի գոլորշին՝ քրտինքն ամոթի...

(Բոլորը հեռանում են, մնում է միայն Միքայելը, նստում է բեմի եզրին, ներս է մտնում Խորենացին):

ԽՈՐԵՆԱՑԻ – Մաշտոցի վերադարձից հետո թագավորից հրաման առավ սկսելու սովորեցնել. երկրում սկսվեց կուլտուր-լուսավորական, իր ժամանակի համար բացառիկ ծավալ

ընդունած, մի աննախընթաց շարժում, որը ղեկավարում էին Հայ առաքելական եկեղեցու երկու սյուները՝ Սեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, և այնուհետև աստվածային գործի մշակությունն ավելով՝ սկսեցին ավետարանական արվեստը թարգմանել՝ սկսելով Սողոմոն Իմաստունի առակներից: Արարատյան գավառի թագավորների ու քահանայապետերի նստավայրում բխեց հայերի համար աստծու պատվիրանների շնորքը, ինչպես ասվում է Ավետարանում. «Աղբյուր կբխի այնտեղ՝ Դավթի տանը»: Նրանք կրթեցին իրենց մոտ եղած արքունիքը բոլոր՝ ազատագունդ բանակի հետ միասին: Եկեղեցու հզոր սյուները սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել և Հայաստան՝ ազգի զանազան կողմերն ու գավառները սկսեցին ուղարկել ճշմարտության աշակերտներին՝ նրանց համար կանոն և օրինակ դնելով իրենց վաստակը ու պատվիրելով այդ կանոնի մեջ մնալ: Եվ այնուհետև Երանելին Տիրայրի ու Մուշեղի հետ գնաց հեթանոսների սփյուռք՝ Գողթն՝ այնտեղ կյանքի խոսքը անձամբ սերմանելու: Ճիվաղների սփյուռքը և կես Հայոց աշխարհը լցվեց քրիստոսի ավետարանի ողջույնով:

ՄԻՔԱՅԵԼ – Չունեինք արդեն պետ ու պետություն,
Ծաղրանկար էր եղածը արդեն՝
Գծված ձեռքերով երկու նկարչի,
Որ ատում էին իրար ոչ պակաս,
Քան թե մենք իրենց:

ԿՈՐՅՈՒՆ – Մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո
Քրիստոսի սիրելին մտածեց նաև հոգ տանել բարբարոսական կողմի համար:
Եվ սկսեց այբուբեն հորինել Վիրքի ժողովրդի համար:

(Գալիս է կենտրոն):

Գրեց, դասավորեց և օրինավոր կերպով հարդարեց
Ու իր աշակերտներից լավագույնների հետ միասին գնաց Վիրքի կողմերը:
Այնտեղ ներկայացավ վրաց Բակուր թագավորին և Մովսես եպիսկոպոսին:
Նա, իր արվեստը առաջարկելով, խրատեց, հորդորեց նրանց:

Վրաց արքան հրամայեց իր իշխանության զանազան կողմերից և գավառներից մանուկներ ժողովել ու տալ վարդապետին:
Վիրքի բոլոր կողմերում կարգի դնելով Աստվածապաշտության գործը և դպրությունը՝ Երանելին վերադարձավ հայոց երկիրը:

(Կորյունը գնում է, գալիս է Ջեմման):

ՋԵՄՄԱ – Ու հետո մենք պիտի գաղութ դառնայինք
Գաղութի մարզպան-կառավարիչով:
Հետո մեզ պիտի դարեր շարունակ
Տանեին անվերջ անկումից անկում:

(Ջեմման գնում է, խոսելով գալիս է Խորենացին)

ԽՈՐԵՆԱՑԻ – Իր կարգած գավառներն ու տեղերը շրջելուց հետո Սուրբ Երանելին մտածեց նաև հայոց մյուս կես ազգի համար, որ Հոռոմների թագավորի իշխանության տակ էր և շատ աշակերտների հետ միասին գնաց հունական կողմերը:
Իր կատարած բարի գործերի համբավի շնորհիվ մեծ ընդունելություն գտավ Թեոդոս կայսեր կողմից, որը հրաման տվավ վայել մեծարանքով Ակումիտ կոչեն սրբին:
Ջատիկն անելուց հետո Երանելին բացատրեց կայսերը, իր պիտույքի հանգամանքները և անընդդիմանելի հրաման առավ. կայսերագիր դրոշմած սակարներով մանուկներ ժողովեց, ուսուցանում էր անդադար, և հայոց մյուս կես ազգն էլ լցվեց Քրիստոսի լինելիությամբ և ողջությամբ: Այն ժամանակ նրան հանդիպեց աղվան մի երեց՝ Բենիամին անունով, և Երանելին քննեց աղվաներեն լեզվի բարբարոս խոսքերը, ապա ի վերուստ պարգևված աստվածատուր կորովամտությամբ նշանագրեր հորինեց Աղվանից համար: Այնուհետև՝ Արարատյան նոր քաղաք մտնելուց հետո, գնաց Աղվանքի կողմերը: Այնտեղ աղվանաց Արսվաղ թագավորը և Երեմիա եպիսկոպոսը մեծ հնազանդությամբ ընդունեցին նրան, հանձն առան ընդունել դպրությունը և մատղաշ մանուկներ ժողովել:

Եվ Մաշտոցը, իր աշակերտներից մի քանիսին վերակացու կարգելով աղվանաց վրա, հեռացավ այնտեղից…:

(Մեկ-մեկ մտնում են երիտասարդները և կանգնում զուգահեռ թևք գծով):

ՄԻՔԱՅԵԼ – Հետո մենք պիտի մեր ոտնահետքի
Դրոշմը դարձրած յուրովի դրոշ
Մխեինք բոլոր լայնքների վրա
Երկիր կոչեցյալ այն կլոր գնդի,
Որտեղ պիտի որ ամեն ճանապարհ
Վերստին բերի իր տեղը նախկին:

ՇՈՒՇԱՆ – Եվ նա չծնվեց ինչ-որ մի մորից,
Նա այդ փլվածքից բուսնեց սխրանքով,
Որ այդ փլվածքը ողջանա նորից:

ՍՈՒՍԱՆՆԱ – Եվ այդ փլվածքը իրոք ողջացավ.
Այն, ինչ-որ անել չկարողացան

ԱՐՇԱԿ – Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Սա՛ արեց միայն՝
Անգեն ու անզորք.

ԼՈՒՍԻՆԵ – Մեզանից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր,
Չեղյալ պետություն,

ՋԵՄՄԱ – Թագավորություն մի հզորազոր՝
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛,
Երբեք չխլվող հոգիների մեջ:

ՏԻԳՐԱՆ – Եվ այնուհետև անվախճան եղավ
Թագավորական նրա տունը մեծ,
Եվ մեր հոգևոր թագավորության
Գահին բարձրացող ամեն թագավոր
Ծնվեց նո՛ւյն տնից,
Նո՛ւյն ցեղից սերեց:
Եվ պատվով-փառքով-վեհությամբ կրեց
Նո՛ւյն տոհմանունը՝
Մեսրոպ - Մաշտոցյանք:

ՄԱՐԻ – Մեզ սպառնացող վտանգի չափ մեծ
Եվ այդ վտանգից նաև ահագին՝

Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնությունը կոփեց ու կռեց.
Օտար եկամուտ վարակի դիմաց
Մահ համտես արած մեր ամենիմաց
Առողջությունը որմի պես դրեց:

ՄԻՔԱՅԵԼ – Դրեց խարդախված կաթի դեմ՝ մերաև,
Քանակի դեմ՝ թև,
Թևի դեմ՝ թանաք,
Սրի դեմ՝ գրիչ.
Եվ դարանի դեմ՝ Մատենադարան:

(Մտնում են Խորենացին, Կոյունը և աշակերտները, թագավորը, կաթողիկոսն ու իշխանական աղջիկները ծաղկած ճյուղերի միջով: Երկխոսություն երկու ժամանակների միջև: Կանգնում են բեմի հակառակ կողմում):

ՏԻԳՐԱՆ – Հաղթեցինք դաժան ժամանակներին,
Կանգուն առ կանգուն թաղվելով հողում՝
Հառնեցինք դարձյալ,
Մնացինք կանգուն.
Անվերջ ընկնելով՝
Վերաթևեցինք.
Մեռնելով անվերջ՝
Գոյատևեցինք…

ՀԻՆ – Եվ հիմա արդեն այդ մե՛զ չեն պեղում *(բոլորը միասին)*,

ՆՈՐ – Այլ մենք ենք պեղում *(բոլորը միասին)*.

ՀԻՆ – Այդ մե՛զ չեն հիշում *(բոլորը միասին)*,

ՆՈՐ – Այլ մենք ենք հիշում *(բոլորը միասին)*.

ՀԻՆ – Մե՛զ չեն վկայում *(բոլորը միասին)*,

ՆՈՐ – Մենք ենք վկայում.

ՋԵՄՄԱ – Այսպե՛ս ապրեցինք,
Եվ այստե՛ղ հասանք

ՍՈՒՍԱՆՆԱ – Այսպես շիթվելով՝
Դարձանք գոռ հոսանք:

ՆԵԼԻ – Մենք հինը հնից
Նորացա՛նք նորից:

ԼՈՒՍԻՆԵ – Եվ այս ամենը՝
Նրա՛ շնորհիվ:

ՄԻՔԱՅԵԼ – Այսքանից հետո ինչ կոչեն նրան
Մեր կեռմանաշատ երթուղու վրա:

ՋԵՄՄԱ – Մի նշանածից:

ՆԵԼԻ – Մի սյուն
Կամ թե ձո՞ղ:

ՀԱՍՄԻԿ – Ինչ-որ գրեիր ինչ-որ ստեղծո՞ղ:

ՏԻԳՐԱՆ – Ու եթե պիտի գիր ու տառ հիշվի,
Ապա նա ինքն է այն մեծատառը,
Որով հասարակ ու պարզուկ բառը
Աճում է, հասնում խորհրդանիշի,

ՀԻՆ – Եվ մարդը ձգվում ու դառնում է Մարդ *(բոլորը միասին)*,

ՆՈՐ – Անցողիկ մարտը՝ հավերժական Մարտ *(բոլորը միասին)*,

ՀԻՆ – Խեղճ տքնությունը՝ զորեղ Տքնություն *(բոլորը միասին)*:

ՆՈՐ – Ինքնությունն անուժ՝ հուժկու Ինքնություն *(բոլորը միասին)*,

ՀԻՆ – Պաշտողը՝ Պաշտող *(բոլորը միասին)*:

ՏԻԳՐԱՆ – Իսկ հայը՝ … Մաշտոց:
Մաշտո՜ց…
Այսինքն՝ ա՛յր մի, որ եկավ ապացուցելու,
Թե մի տեղ վերջը դառնում է սկիզբ:

(Խորհնացու և Կորյունի տեսարան. նստած են և կարդում են զուգորդելով):

ԿՈՐՅՈՒՆ – Եվ հենց միևնույն տարում՝ երաշելի Սահակի մահից 6 ամիս անցնելուց հետո, հայոց բանակը Սուրբ վարդապետի հետ միասին գտնվում էր Արարատյան նոր քաղաքում, և մի քանի օրվա հիվանդությունից հետո՝ մահեկան ամսի 13-ին, վրա հասավ սրբի քրիստոսակոչ վախճանը: Եվ մինչև Քրիստոսի գնդին խառնվելը, ցավերից թեթևանալով և սթափվելով, վեր կացավ, նստեց ժողովի մեջ և ձեռքերը համատարած երկինք բարձրացրած՝ բոլորին հանձնարարեց Աստծու շնորհին և նրանց համար օգնություն խնդրեց: Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկառված էին դեպի երկինք, խաչանման սքանչելի տեսիլ երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երաշելին, և՛ ես, և՛ ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց:

ԽՈՐԵՆԱՑԻ – Եվ շուտով չանհետացավ այդ շողքը, ամբողջ բազմությանը տեսանելի եղավ այն, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին: Այս ժամանակ ժողովված բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց այն պարկեշտ մարմինը թաղելու տեղի պատճառով: Բազմությունը բա-

ժանվել էր 3 խմբի. մի մասն առաջարկում էր տանել Տարոն՝ Սրբի ծննդավայրը, մյուսները՝ Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատում՝ սրբերի հանգստարանում: Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որն ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր, քանի որ պարսիկները նրան էին վստահել Հայոց երկրի հազարապետությունը: Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դագաղի վրա գնում էր դեմ հանդիման ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանն աներևույթ եղավ:

ՏԻԳՐԱՆ – Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Հզոր թե տկար՝
Մարմին էինք մենք:

ՍՈՒՍԱՆՆԱ – Սակայն նա եկավ, որ հո՛գի դառնա.
Շոշափվո՞ղ հոգի,
Եվ անմե՞ռ հոգի:

ՇՈՒՇԱՆ – Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Քիչ թե շատ՝ կար հաց,
Եվ ունեինք ջո՞ւր,

ՏԻԳՐԱՆ – Սակայն նա ծնվեց, որ Սո՛ւնդ դառնա:

ԲՈԼՈՐԸ – Ծնվե՛ց, որ ծնե՞նք,
Եղա՛վ, որ լինե՞նք,
Եվ անմահացա՛վ,
Որ անմահանա՞նք:

(Վերջին երգը, երգում են 3 հոգի):

Վերջ

ԵՎ ԱՅՐ ՍԻ՝ ՍԱՀՏՈՑ ԱՆՈՒՆ

(համաձուն ներկայացումից)

Խոսք՝ ըստ Պ. ՍԵՎԱԿԻ — Երաժշտ.՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ



Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Հզոր թե տկար՝
Մարմին էինք մենք:

Սակայն Նա եկավ, որ Հոգի՛ դառնա.
Շոշափվո՛ղ հոգի,
Եվ անմե՛ռ հոգի:

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Քիչ թե շատ՝ կար հաց,
Եվ ունեինք ջուր:

Սակայն Նա ծնվեց, որ Սնո՛ւնդ դառնա:
Ծնվե՛ց, որ ծնե՛նք,
Եղա՛վ, որ լինե՛նք...

Սակայն Նա ծնվեց, որ Հոգի՛ դառնա...
Եվ անմահացա՛վ,
Որ անմահանա՛նք...

ՓԱՌՔ ՄԱՇՏՈՑԻՆ

(«Եվ այր մի՝ Մաշտոց անուն» ներկայացումից)

Խոսք՝ ըստ Պ. ՍԵՎԱԿԻ — Երաժշտ.՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ



Փա՛ռք Մաշտոցին,
Հայ գրերին...

Դու ծնվեցիր, որ ապացուցես,
Որ վերջը մի տեղ դառնում է Սկիզբ,
Որ այնտեղ է սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՛ն հնար...

Փա՛ռք Մաշտոցին,
Հայ գրերին...

Դու ծնվեցիր, որ ապացուցես,
Որ վերջը մի տեղ դառնում է Սկիզբ,
Որ այնտեղ է սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամե՛ն հնար...

Դու մեր փրկիչ, Մեսրոպ Մաշտոց:
Փա՛ռք Մաշտոցին,
Հայ գրերին,
Փա՛ռք հայ ազգին,
Սուրբ Մաշտոցին...

ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ

Ըստ Վիլյամ Շեքսպիրի
«Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության

Սցենարի հեղինակ՝ Կարինե Դավթյան

Պիես՝ երկու գործողությամբ

Նկարագրություն

Ներկայացումը նվիրվել է Վիլյամ Շեքսպիրի 450-ամյակին և ԵՊՀ 95-ամյակին:

Սցենարում տեղի են ունեցել փոփոխություններ. կրճատվել են որոշ տեսարաններ և որոշակի կերպարներ՝ Պարիս, պարոն և տիկին Մոնտեգյուներ, մի խումբ սպասավորներ, դեղավաճառ, երաժիշտներ, մանկլավիկներ: Այս ամենի փոխարեն ավելացել են չորս ծաղրածուներ՝ 2 տխուր և 2 ուրախ դիմակներով: Կան նաև բավականին իրադարձություններ, որոնք ներկայացվում են ծաղրածուների կողմից: Վերոնայի իշխան Էսկալոսը հանդես է գալիս միայն ձայնով, իսկ Հայր Լավրենտիոսը սցենարում երևում է տեսանյութով: Ռոմեոն ներկայանում է որպես երգիչ և երգահան: Պարիսը որպես կերպար չկա, միայն խոսվում է նրա մասին:

Հիմնական դեկորացիաներից մեկը կարմիր վարագույրն է, որը հատկանշական է եղել իտալական շրջիկ թատրոնի համար, այստեղ ունի լուրջ դերակատարում, և հաջորդ կարևոր դեկորացիան շարժական ու բազմաֆունկցիոնալ նավն է, որը տարբեր տեսարաններում տարբեր նշանակություն ունեցող դեկոր է: Հիմնական գաղափարական իմաստն այն է, որ կարծես սա շրջիկ թատրոն է, և այն կարող է լինել տարբեր երկրներում, իսկ ծաղրածուները ներկայացնում են այս պատմությունը, որը տեղի է ունեցել Իտալիայի Վերոնա քաղաքում: Ծաղրածուները նույնպես ներմուծված կերպարներ են:

Ներկայացման համար գրվել է նոր երաժշտություն, որի հեղինակն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Էդգար Գյանջումյանը, նաև երեք երգ՝ Ռոմեոյի, Ջուլիետի համար և վերջերգ, որի ժամանակ կենդանանում են գլխավոր հերոսները՝ Ռոմեոն և Ջուլիետը, ինչը խորհրդանշում է սիրո հավերժության գաղափարը:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» և «Արտ ֆեստ» միջազգային թատերական փառատոններին:

Հագուստների էսքիզները հեղինակել է ՀՀ վաստակավոր նկարչուհի Աննա Հարությունյանը, պարային բեմադրությունը՝ աղջիկների պարային համույթի գեղարվեստական ղեկավար Իռէն Ուլիխանովան:

Երգերի բառերի և դեկորների մտահղացման հեղինակը բեմադրության ռեժիսոր Կարինե Դավթյանն է:

Պրեմիերան տեղի է ունեցել 2014 թվականի հունիսի 17-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԷԱԿԱԼՈՍ – Վերոնայի իշխանը
ՆՈՒՎՈԼԱ 1 – ուրախ ծաղրածու
ՆՈՒՎՈԼԱ 2 – ուրախ ծաղրածու
ՊԱՅԼԱՉՈ 1 – տխուր ծաղրածու
ՊԱՅԼԱՉՈ 2 – տխուր ծաղրածու
Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հակառակորդ գերդաստանի պարագլուխ
ՏԻԿԻՆ ԿԱՊՈՒԼԵՏ – Կապուլետի կինը
ՋՈՒԼԻԵՏ – Կապուլետի դուստրը
ՌՈՄԵՈ – Մոնտեգյուների որդին
ԴԱՅԱԿ – Ջուլիետի դայակը
ՄԵՐԿՈՒՏԻՈ – իշխանի ազգականը և Ռոմեոյի բարեկամը
ԲԵՆՎՈԼԻՈ – Մոնտեգյուի եղբորորդին և Ռոմեոյի բարեկամը
ՏԻԲԱԼՏ – տիկին Կապուլետի եղբորորդին
ՀԱՅՐ ԼԱՎՐԵՆՏԻՈՍ – Ֆրանսիսկյան մի կրոնավոր
ՄԵՐԻ – Սպասուհի
ՍԱՄՍՈՆ – Սպասավոր
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ – մասսայական տեսարաններ
ՊԱՐՈՂՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(Մտնում են ուրախ ծաղրածուները՝ դահլիճից հայտարարելով)։

ՊԱԼԱՑՈՈ 1 – Այսօր երեկոյան ժամը 7-ին

ՊԱԼԱՑՈՈ 2 – Տեղի կունենա Վիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ներկայացումը։

(Երաժշտություն։ Բարձրանում են բեմ։ Բեմում երկու տխուր ծաղրածուները լաց են լինում, սպիտակ վարագույրը բաց է, կարմիր վարագույրը՝ փակ։ Դիմացը դրված է 2 սպիտակ շարժական պոմպա և տխուր դիմակներ)։

ՊԱԼԱՑՈՈ 1 – Բեմը ցույց կտա չքնաղ Վերոնան,
Ուր կային երկու հայտնի գերդաստան,
Որ բորբոքելով հինավուրց մի վեճ՝
Ջեռք էին թաթախում միմյանց արյան մեջ։

ՆՈՒՎՈՒԼԱ 1 – Այդ ոսոխների արգադներից չար
Ծնվեցին երկու դժբախտ սիրահար,
Որոնց վշտերն ու մահը դառնաղետ,
Տոհմական քենը ջնջեցին հավետ։

ՊԱԼԱՑՈՈ 2 – Ահեղ անցքերն այս սիրող սրտերի
Եվ ծնողների ոխը կատաղի,
Որ այդ խեղճերի մահով հագեցան,
Մեր բեմին երկու ժամվա նյութ դարձան,

ՆՈՒՎՈՒԼԱ 2 – Որը եթե լսեք դուք համբերանքով,
Ինչ որ թերի է, կուղղենք հաճույքով։

(Ծաղրածուները բացում են կարմիր վարագույրը, տեսարանը փոխվում է։ Բեմում կանգնած են ամբոխը և բոլոր կերպարները, որոնք մեջքով են կանգնած, լսում են Վերոնայի իշխանի ձայնը)։

Վերոնայի իշխան Էսկալոսի ձայնը – ձայնագրություն
Մի՞թե չեք լսում։ Օ՜, անարգ մարդիկ, է՜, դուք գազաններ,
Որ ձեր չարաղետ բարկության հուրը ճգնում եք մարել
Այս բոսորագույն շատրվաններով, որոնք ցայտում են ձեր երակներից։
Մահվան տանջանքով սպառնում եմ ձեզ. արնոտ ձեռքերից
Վար շպրտեցեք ձեր ոճրամուխ զենքերը իսկույն
Եվ ականջ դրեք ձեր՝ զայրույթով լի իշխանի վճռին։
Քաղաքացիական երեք պատերազմ՝ օդային մի փուչ խոսքից բռնկված՝
Քո ձեռքով, Կապուլետ և քո՝ Մոնտեգյու,
Խիստ վրդովել են մեր փողոցների հանգստությունը,

Եվ Վերոնայի հին քաղաքացիք,
Երիցս իրենց ծանր հագուստը ղեն շպրտելով,
Ծերացած ձեռքով նիզակ են բռնել,
Վերջ տալու ժանգոտ ձեր ատելությանը,
Եթե հանդգնեք վրդովել նորից մեր փողոցները,
Ձեր կյանքը պետք է տուգանք հատուցի մեր խաղաղության,
Բոլորդ ցրվե՛ք:

(Ձայնը լսելուց հետո բոլորը հեռանում են):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Բենվոլիոն՝ մենակ, հեռվից երևում է Ռոմեոն)։

ԲԵՆՎՈԼԻՈ – *(Մեկուսի)։* Տեսե՛ք՝ գալիս է Ռոմեոն։
Կա՛մ ես կիմանամ իր սրտի ցավը, կա՛մ խիստ կմերժվեմ։
Բարի լույս, զարմի՛կ։

ՌՈՄԵՈ – Մի՞թե դեռ օրը այդքան դալար է։

(Տխուր, հոգնած, սիրահարված)։

ԲԵՆՎՈԼԻՈ – Նոր զարկեց ինը։

ՌՈՄԵՈ – Ա՜խ, տխուր ժամերն երկար են թվում։

ԲԵՆՎՈԼԻՈ – Այդ ի՞նչ թախիծ է ժամերդ երկարում։

ՌՈՄԵՈ – Այն, ինչ որ չունեմ, որն ունենալով՝ շատ չէի թախծի։

ԲԵՆՎՈԼԻՈ – Սիրահարվա՞ծ ես։

ՌՈՄԵՈ – Դրանից զուրկ եմ։

ԲԵՆՎՈԼԻՈ – Դու սիրուց զո՞ւրկ ես։

ՌՈՄԵՈ – Նրա շնորհից, որին սիրում եմ։

ԲԵՆՎՈԼԻՈ – Վա՜հ, ինչո՞ւ սերը, որ իր պատկերով այդքան քնքուշ է,
Կարող է լինել այդքան բիրտ ու չար իրականի մեջ։

ՌՈՄԵՈ – Որի երեսին դեռ քող կա ընկած,
Առանց աչքերի կարող է տեսնել դեպի նպատակ տանող շավիղները։
Օ՜, կռվարար սեր, սիրաշաղախ քեն,
Ոչնչից ստեղծված դու ամենայն ինչ,
Օ՜, ծանր թեթևություն, լուրջ ունայնություն,
Օ՜, անճև քաոս սիրուն ձևերի,
Կապարյա փետուր, լուսապայծառ ծուխ, սառնաշունչ կրակ,
Մշտարթուն թմբիր, որ այն չէ, ինչ է։
Այս սերն եմ զգում, մի սեր, որի մեջ ես սեր չեմ զգում։ Դու չես ծիծաղում։

ԲԵՆՎՈԼԻՈ – Ոչ, ի՛մ բանկագին, լավ է՝ արտասվեմ։

ՌՈՄԵՈ – Ինչո՞ւ, բարի մարդ։

ԲԵՆՎՈԼԻՈ – Քանզի տեսնում եմ քո ազնիվ սիրտը այդպես ճնշված։

ՌՈՄԵՈ – Ավա՜ղ այդպես է սիրո հանցանքը։
Ցավերս ամուր ճնշում են կուրծքս,
Իսկ դու ուզում ես ծավալել դրանց
Սրտիդ ցավերով։ Ասածդ սերը նոր ցավ է բարդում
Արդեն խիստ տրտում իմ սրտի վրա։

Ուրիշ ի՞նչ բան է: Մի խենթություն է ամենից խելոք,
Մի խեղդող լեղի և հավետ անմար մի անուշություն:
Մնաս բարով, Բենվոլիո:

ԲԵՆՎՈԼԻՈ – Կա՛ց, ես էլ կգամ,
Եթե ինձ այդպես լքես ու գնաս, սաստիկ կանարգես:

ՌՈՄԵՈ – Ինքս այստեղ չեմ,
Սա Ռոմեոն չէ, նա ուրիշ տեղ է:

ԲԵՆՎՈԼԻՈ – Դու ինձ լուրջ ասա, սիրածդ ո՞վ է:

ՌՈՄԵՈ – Ուզում ես, ուրեմն, որ ես հեկեկա՞մ պատմելու պահին:

ԲԵՆՎՈԼԻՈ – Ինչո՞ւ հեկեկաս:
Լուրջ կերպով ասա՛ ո՞ւմ ես սիրում:

ՌՈՄԵՈ – Հրամայի՛ր հիվանդին, որ նա լուրջ կերպով իր կտակն անի.
Ավա՜ղ, այդ բանն իզուր ես խնդրում այնպիսի մեկից,
Որ խիստ հիվանդ է: Լրջորեն ասած՝ սիրում եմ մի կնոջ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Կետին զարկեցի, երբ ենթադրեցի, որ դու սիրում ես:

ՌՈՄԵՈ – Որին սիրում եմ, շլացուցիչ է:

ԲԵՆՎՈԼԻՈ – Որքան նշանը շլացուցիչ է, այնքան դյուրին է ճիշտ կետին զարկել:
Ինձնից խրատ առ՝ մոռացի՛ր խորհել դու նրա մասին:

ՌՈՄԵՈ – Մի ուղի ցո՛ւյց տուր, որ կարողանամ խորհելը մոռանալ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Աչքերիդ արձակ ազատություն տո՛ւր, նկատի՛ր ուրիշ գեղեցկություններ:

ՌՈՄԵՈ – Այդ այն միջոցն է,
Որ չնաշխարհիկ անվանեմ նրա գեղեցկությունը:
Բոլոր բախտավոր այն դիմակները, որ սիրուն կանանց դեմքն են համբուրում,
Իրենց տակ ծածկված չքնաղ դեմքերն են մեր միտքը բերում,
Իր աչքի լույսի այն անգին գանձը, որից զրկվել է:
Հրաշատեսիլ մի կին ցո՛ւյց տուր ինձ,
Ի՞նչ բան է նրա սիրունությունը, եթե ոչ մի էջ,
Ուր ես կարող եմ կարդալ, թե ո՞վ է,
Որ գերազանց է այդ անզուգական գեղեցկությունից:
Դե, մնաս բարով, դու անկարող ես ինձ մոռացության դասը սերտել տալ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Ես այդ ուսմունքը քեզ կհատուցեմ և կամ կմեռնեմ քեզ պարտք մնալով:

(Գնում են: Ծաղրածուների երգ: Մտնում են երկու ծաղրածուները՝ Նովուլա 1 ու Պալյաչո 1, հետո՝ Նովուլա 2 ու Պալյաչո 2, ևսրում են տումբաների մուտ):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

(Ծաղրածուները խաղում են՝ Պ. Կապուլետի և Պարիսի դերերը՝ պատմելով)։

ՆՈՒՎՈՒԼԱ – Տեսար՝ ինչ տեսարանի ականատես եղանք…..

ՊԱԼՅԱՉՈ – Ես պետք է կրկնեմ, ինչ-որ ասացի:
Իմ զավակը աշխարհի համար դեռ օտարուհի է,
Հազիվ է տեսել տասնչորս տարի:
Թող երկու գողտրիկ ամառ էլ խամրեն իրենց պերճանքում,
Նախքան մենք նրան հարս կասենք կյանքում:

ՆՈՒՎՈՒԼԱ – Շատ կան նրանից մանկահասակներ, որոնք բախտավոր մայրեր են արդեն:

ՊԱԼՅԱՉՈ – Այդքան վաղաժամ պսակվածները կանուխ են թոշնում,
Երկիրը լափեց բոլոր հույսերը, նրանից բացի,
Նա է կալվածքիս ժառանգն հուսալի:
Սիրտդ բա՛ց արա, սիրելի՛ Պարիս, և քո սրտի մեջ նրա սերը լից,
Իմ ցանկությունը մի մասն է միայն իր հավանության,
Եթե ընդունի, այդ ընտրությանը
Ներդաշնակ է իմ հավանությունը և սրտիս ձայնը:
Ես այս գիշերը, ինչպես ընդունված հին կարգ է մեզ մոտ, խնջույք եմ տալու,
Որին շատ սիրված հյուրեր են գալու:
Եթե այնտեղ գալ դու բարեհաճես,
Մեծ ուրախություն ինձ կպատճառես:
Իմ խղճուկ տան մեջ դիտի՛ր այս գիշեր երկրաճեմ աստղեր,
Որոնց լույսերից պիտի խավարեն երկնային լույսեր:
Այնպիսի հրճվանք, ինչպես հեշտասեր մարդիկն են զգում,
Երբ կաղ ձմեռվա կրունկի վրա
Շքեղազարդված ապրիլն է ճեմում, այդպիսի հեշտանք
Կզգաս այս գիշեր կանացի այն թարմ կոկոնների մեջ:
Լսի՛ր բոլորին, դիտի՛ր ամենքին
Եվ սիրի՛ր նրան, ով արժանիքով բարձր է բոլորից:
Եվ իմ աղջիկն էլ կլինի մեկը այդ շատերի մեջ,
Մեկը՝ լոկ թվով, իսկ հաշվով՝ ոչինչ:
Մի՛ լացիր, տե՛ս նամակ, գնանք՝ կարդանք:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

(Տեսարան փողոցում: Ներս են մտնում Ռոմեոն և Բենվոլիոն):

ԲԵՆՎՈԼԻՈ – Խելագարվեցի՞ր , Ռոմեո՛:

ՌՈՄԵՈ – Ո՛չ, խելագար չեմ, բայց կաշկանդված եմ ավելի ամուր, քան մի խելագար,
Բանտի մեջ փակված և սնունդից զուրկ,
Բարև, բարեկա՛մ:

(Հանդիպում են ծաղրածուներին: Նրանց մոտ նամակ կա: Նամակը մեկնելով խոսում է Պալյաչոն 1):

ՊԱԼՅԱՉՈ 1 – Աստծո բարին պարոն: Աղաչում եմ, պարո՛ն, կարո՞ղ եք կարդալ:

ՌՈՄԵՈ – Այո՛, կարող եմ, եթե ծանոթ են տառերն ու լեզուն:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Դուք ճիշտ ասացիք: Աստված Ձեր գործին հաջողություն տա: *(Ուզում են գնալ):*

ՌՈՄԵՈ – Սպասի՛ր, այ մարդ, ես կարդալ գիտեմ: *(Կարդում է):*
Սինյոր Մարտինոն, իր կինը, աղջիկները:
Կոմս Անսելմոսը և իր գեղանի քույրերը: Որբևայրի տիկին Վիտրուվիոն:
Սինյոր Պլաչենտիոն և իր սիրասուն եղբոր աղջիկները:
Մերկուտիոն և իր եղբայր Վալենտինը:
Իմ հորեղբայր Կապուլետը, իր կինը և աղջիկները:
Իմ սիրուն քեռադուստր Ռոզալին: Լիվիան,
Սենյոր Վալենտինոն և իր եղբորորդի Տիբալտը:
Լուչիո Լու պայծառադեմ Հելենան»:
Հրաշալի փունջ է: Որտե՞ղ պետք է գան:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Այնտեղ՝ վերևը:

ՌՈՍԵՈ – Որտե՞ղ:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Հիմա ձեզ կասեմ: Կապուլետների տանը: *(Գնում են):* Ի տեսություն, պարո՛ն:

ԲԵՆՎՈԼԻՈ – Կապուլետի հնավանդ այս խնջույքի մեջ,
Վերոնայի բոլոր այն հրաշալի սիրուհիների հետ,
Ընթրելու է նաև քո այնքան սիրած չքնաղ Ռոզալին:
Այնտեղ շտապի՛ր և խստապահանջ աչքով բաղդատի՛ր
Դու նրա դեմքը մի այլ դեմքի հետ, որ ես ցույց կտամ,
Եվ կհամոզվես, որ քո կարապը ագռավ է եղել:

ՌՈՄԵՈ – Եթե ջերմեռանդ հավատը աչքիս նման կեղծիք թույլ տա,

Թող արցունքներս փոխվեն բոցերի:

ԲԵՆՎՈԼԻՈ – Նա գեղեցիկ է երևացել քեզ, քանզի չես տեսել նրա մոտ ոչ ոք,
Նա կշռվել է միայն ինքն իր հետ՝ երկու աչքիդ մեջ:
Սակայն բյուրեղյա այն նժարներում դիր սիրուհուդ մոտ մի այլ օրիորդի,
Որ ես ցույց կտամ ճառագայթելիս այդ խրախճանքում,
Եվ դու կտեսնես, որ Ռոզալինդ ստվեր է անգույն:

ՌՈՄԵՈ – Կգամ, Բենվոլիո, ոչ թե այդպիսի մի գեղեցկություն տեսնելու համար,
Այլ իմ սիրածի գերազանց փայլով սքանչանալու:

(Գնում է: Ծաղրածուների երաժշտության շարունակությունը՝ կեսից: Ռոմեոն և Բենվոլիոն դուրս են գալիս: Փակվում է կարմիր վարագույրը):

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Կապուչեւրների տրանը: Մտնում է Մերին՝ սպասուհին, տրումբաների վրա է գցում կարմիր կտորները, դուրս է գալիս, բացվում է կարմիր վարագույրը, հետո մտնում են տիկին Կապուլեւրը և դայակը):

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Դայա՛կ, աղջիկս ո՞ւր է, այստեղ կանչի՛ր նրան:

ԴԱՅԱԿ – Վկա՝ կուսությունս, երբ որ տասներկու տարեկան էի,
Ասել եմ, որ գա: Ո՞ւր ես, գառնո՛ւկս, ո՞ւր ես, քաղցրի՛կս,
Մեղա քեզ, Աստված: Աղջիկս ո՞ւր կորավ: Որտե՞ղ ես: Ջուլիե՞տ:

(Մտնում է Ջուլիետը):

ՋՈՒԼԻԵՏ – Ո՞վ է կանչում ինձ:

ԴԱՅԱԿ – Ձեր մայրն է կանչում:

ՋՈՒԼԻԵՏ – Այստեղ եմ, մայրի՛կ: Ի՞նչ էր Ձեր կամքը:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Գործ ունեմ քեզ հետ: Դայա՛կ, հեռացի՛ր:
Ծածուկ խոսք ունենք: Ո՛չ, վերադարձի՛ր:
Միտքս փոխեցի, դու մեր խորհրդին պետք է գտնվես:
Ինչպես դու գիտես, աղջիկս իր ծաղիկ հասակի մեջ է:

ԴԱՅԱԿ – Հավատա, տիկի՛ն, նրա տարիքի մինչև իսկ ժամը կարող եմ ասել:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Դեռ չի բոլորել տասնչորս տարին:

ԴԱՅԱԿ – Գրազ կգայի տասնչորս ատամ,
Որքա՞ն է մնացել Պողոս-Պետրոսին:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Մի տասնհինգ օր, մի քիչ ավելի կամ մի քիչ պակաս:

ԴԱՅԱԿ – Ավելին կամ պակաս տարվա օրերից,
Պողոս-Պետրոսի ճրագալույցին նա կբոլորի տասնչորս տարին:
Շուշանս և նա, հոգին լույս դառնա քրիստոնյա մարդու. տարեկից էին: *(Լացակումած):*
Շուշանս հիմա աստծո մոտ է, նա աչքիս լույսն էր: Ինչպես ասացի,
Պողոս-Պետրոսի ճրագալույցին նա կբոլորի տասնչորս տարին:
Ուղիղ տասնչորս, այդ լավ եմ հիշում:
Այն երկրաշարժից անցել է արդեն տասնմեկ տարի,
Նա այն ժամանակ մենակ կանգնում էր: Չէ՞, խաչը վկա,
Կարողանում էր դեսուդեն վազել:
Մի օր առաջ էլ ճակատը կոտրեց:
Իմ ամուսինը, ողորմի իրեն.

Շատ ուրախ մարդ էր, երեխային վերցրեց
Եվ ասաց նրան. «Երեսի՞դ ընկար,
Մեջքիդ կփռվես, երբ որ ավելի խելահաս դառնաս,
Այնպես չէ՞, Ջուլի *(ծիծաղելով)*:
Եվ չարաճճին իր լացը կտրեց ու ասաց՝ «այո՛»:
Ինչպես կատակը իրական դարձավ:
Հավատացնում եմ, թեկուզ ես հազար տարի էլ ապրեմ, չեմ մոռանա այդ:
Այնպես չէ՞, Ջուլի՛,– ասաց իմ մարդը,
Եվ սիրուն խենթը իր լացը կտրեց ու ասաց՝ «այո՛»:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Խնդրում եմ՝ լռի՛ր, հերի՛ք է՝ խոսես:

ԴԱՅԱԿ – Լա՛վ, տիկի՛ն: Բայց ես չեմ կարողանում ծիծաղս զսպել,
Երբ միտս եմ բերում, թե ինչպես երեխան իր լացը կտրեց,
Ու ասաց՝ «այո՛»:
Ճակատի վրա, հավատացնում եմ, փոքրիկ ճվի չափ
Ուռուցք էր բուսել:
Շատ վատ էր ընկել և ճվճվում էր,
Ամուսինս ասաց. երեսի՞դ ընկար,
Մեջքիդ վրա կընկնես, երբ որ մեծանաս *(ծիծաղելով)*:
Այնպես չէ՞, Ջուլի՛: Նա լացը կտրեց ու ասաց՝ «այո՛:

ՋՈՒԼԻԵՏ – Խնդրում եմ, դայա՛կ, փակի՛ր բերանդ:

ԴԱՅԱԿ – Սո՛ւս, արդեն պրծա: Աստված օրհնի քեզ:
Ամենասիրուն երեխան էիր, ում ծիծ եմ տվել:
Թե բախտ ունենամ այնքան ապրելու, որ քեզ հարս տեսնեմ,
Սրտիս փափագը առած կլինեմ:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հենց այդ է նյութը,
Որի շուրջ ես ուզում եմ խոսել:
Ասա՛ ինձ, Ջուլիե՛տ, իմ անգին դուստր,
Ի՞նչ է քո կամքը ամուսնության մասին:

ՋՈՒԼԻԵՏ – Դա մի պատիվ է, որ չեմ երազում:

ԴԱՅԱԿ – Պատի՞վ ասացիր: Թե չլինեի միակ ծծմայրդ,
Կասեի, որ դու իմաստություն ես կերել կաթիդ հետ:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Լավ խորհի՛ր այժմ ամուսնության մասին, քեզնից փոքրերը
Արդեն պատվական մայրեր են դարձել Վերոնայի մեջ:
Թե չեմ սխալվում, ինքս մայր էի,
Քո այդ հասակից պակաս հասակում:
Կարճ ասած՝ լսի՛ր,
Կտրիճ Պարիսը քո ձեռքն է խնդրում իր սիրո համար:

ԴԱՅԱԿ – Օ՛, ընտիր մարդ է, անուշի՛կ օրիորդ,

Աշխարհում նրա նմանը չկա, այնքան սիրուն է, կարծես մոմ լինի:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Վերոնայի ամառը նման ծաղիկ չունի:

ԴԱՅԱԿ – Ճիշտ որ ծաղիկ է, իսկակա՜ն ծաղիկ:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հը, ի՞նչ ես ասում, կարո՞ղ ես սիրել այդ ջենտլմենին:
Դու այս գիշերը մի խնջույքի մեջ կտեսնես նրան:
Ջահել Պարիսի դեմքի հատորը կարդա ուշադիր
Եվ կզգաս այնտեղ այնպիսի բերկրանք,
Որ գեղեցկության գրչով է գրված:
Ջննի՛ր երեսի ամեն մի գիծը:
Եվ տես, թե որքան ներդաշնակորեն հյուսված են իրար.
Եվ եթե մի բան այդ պերճ հատորում քեզ անհայտ մնա,
Կգտնես գրված նրա աչքերի լուսանցքի վրա:
Լավ, ինձ կարճ ասա, հավա՞ն ես արդյոք Պարիսի սիրուն:

ՋՈՒԼԻԵՏ – Եթե տեսնելը սիրել է բերում, կաշխատեմ տեսնել ու սիրել նրան,
Բայց իմ աչքերը ես չեմ մխրճի ավելի հեռու,
Ջեր հաճությունը թող նրան ուժ տա առաջ թռչելու:

(Մտնում է սպասուհին):

ՄԵՐԻ – Տիկի՛ն, հյուրերը եկել են, ընթրիքը պատրաստ է:
Ջեզ կանչում են: Իմ օրիորդին են հարցնում:
Խոհանոցում դայակին անիծում են, և ամեն ինչ տակնուվրա է:
Ես պետք է շտապեմ գործիս: Խնդրեմ, շո՛ւտ եկեք: *(Հեռանում է):*

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Գնա, գալիս ենք: Ե՛կ, Ջուլիե՛տ, կոմսը սպասում է մեզ:

ԴԱՅԱԿ – Գնա՛, ա՛յ աղջիկ, ուրախ գիշերներ որոնի՛ր ուրախ օրերիդ համար: *(Խփում է հեպույքին):*

(Գնում են):

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

(Դահլիճից մտնում են Ռոմեոն, Մերկուտիոն, Բենվոլիոն՝ դիմակներով ու ջութակներով մոմեր)։

ՌՈՄԵՈ – Լռությա՞մբ մտնենք,
Թե՞ մուտքի համար ներման ճառ ասենք։

ԲԵՆՎՈԼԻՈ – Երկար ճառերի դարը անցել է։
Համարձակ մտնենք, և թող մեզ չափեն ցանկացած չափով,

ՌՈՄԵՈ – Տվե՛ք ինձ մի ջահ։ Պարել չեմ կարող, ոտքերս ծանր են. մոմը կպահեմ։

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ո՛չ, պետք է պարես, ազնիվ Ռոմեո։

ՌՈՄԵՈ – Ո՛չ, հավատացեք դուք կաքավելու կոշիկներ ունեք թեթև ներբանով։
Ես ունեմ հոգի կապարի նման,
Որը ինձ ամուր գամում է գետնին։ Պարել չեմ կարող։

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Դու սիրահար ես, Կուպիդոնի լույսի թևերը վոխ առ
Եվ սուրա՛ բարձր, ուր որ չի կարող ոչ մի մարդ սուրալ։

ՌՈՄԵՈ – Ես նրա նետով այնպես եմ խոցված,
Որ նրա թևով չեմ կարող ճախրել և այսպես կապված
Չեմ կարող մի թիզ անգամ սլանալ իմ ծանր ցավից,
Սիրո բեռն ահեղ վար է ճնշում ինձ։

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Դու ճնշի՛ր սերը, և նա կսուզվի քո ծանրության տակ,
Դա ծանր բեռ է սիրո պես քնքուշ մի կազմի համար։

ՌՈՄԵՈ – Սերը քնքո՞ւշ է։ Ո՛չ, նա շատ կոշտ է,
Շատ բիրտ է, շատ բուռն, փշի պես խայթող։

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Եթե սերը քեզ հետ խստությամբ վարվի, խիստ եղիր իր հետ,
Նա քեզ խայթում է, խայթի՛ր դու նրան, և նա կպարտվի։
Տվե՛ք մի դիմուսկ դեմքս ծածկելու։

(Դիմակ է հագնում)։

Դիմակի վրա դիմակ է դրված։
Բնավ հոգս չէ, Եթե խուզարկու աչքը նկատի տգեղություններ։
Ահա հաստ հոնքեր, որ իմ փոխարեն կարող են շիկնել։

ԲԵՆՎՈԼԻՈ – Բախենք և մտնենք, հենց որ ներս գնանք,
Ամեն ոք իսկույն թող գործի դնի իր սրունքները։

ՌՈՄԵՈ – Թող թեթևասիրտ հեշտասերները պարի մեջ մտնեն,
Իսկ ես, խրատված մի պապենական հին ասացվածքով, կղի-տեմ լոկ։

Բնավ չեմ տեսել այսքան հաջող խաղ, բայց ես սուզվում եմ...

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Խեղդվողն է սուզվում: Եթե սուզվում ես,
Մենք դուրս կքաշենք քեզ ճահճի միջից,
Կամ, ներողություն, այն սիրո տիղմից, ուր դու խրված ես
Մինչև ականջներդ:

ՌՈՄԵՈ – Մենք այդ հանդեսում շատ լավ կղիտենք, բայց խելացի չէ այնտեղ գնալը:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Իսկ ինչի համար:

ՌՈՄԵՈ – Ես այս գիշերը մի երազ տեսա:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ես նմանապես:

ՌՈՄԵՈ – Ի՞նչ երազ տեսաք:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Որ երազատեսները հաճախ ստում են:

(Հնչում է երաժշտություն, Մերկուտիոն սկսում է խաղալ՝ մասնակից դարձնելով խաղին Ռոմեոյին և Բենվոլիոյին):

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Երազիս տեսա, որ Մաբ թագուհին այցելել էր ձեզ
Նա փերիների մանկաբարձուհին է և հայտնվում է,
Ոչ ավելի մեծ, քան մի ակնաքար,
Որ ալդերմանի ցուցամատին կա:
Դշխուհու կառքը քաշում են մի լուծ աննշմար ճիեր՝
Տանելով մարդկանց քթերի մոտով, երբ որ քնած են:
Կառքի ճաղերը շինված են սարդի երկար ոտներից,
Երասանները՝ սարդի ոստայնից,
Ձիերի սարքը՝ լուսնի խոնավիկ ճառագայթներից,
Եվ խարազանը՝ ծղրիդի ոսկրից, իսկ դրա փունջը՝ ոստայնի թելից,
Կառապանը մի փոքրիկ մժեղ է գորշ համազգեստով,
Մի ծույլ օրիորդի մատներով բռնված լվի կեսի չափ,
Մաբի կառքը կաղնու մի փուչ կեղև է,
Որ ատաղձագործ սկյուռն է շինել և պառավ ճիճուն,
Որն անհիշելի ժամանակներից այդ փերիների կառագործներն են,
Եվ այսպես զուգված գիշերից նա արշավում է սիրահարների ուղեղի միջով,
Եվ նրանք սիրո երազ են տեսնում:
Պալատականների ծնկների վրա, որ երգում են խոնարհություններ,
Դատավորների մատների միջով, որ անմիջապես կաշառք են տեսնում,

Կանանց շուրթերով, որ ցնորում են իսկույն համբույրներ,
Սակայն զայրացած Մաբը հաճախ ծածկում է նրանց շուրթերը վերք ու պալարով,
Եվ նրանց շունչը ապականված է օծականներով:
Մերթ սլանում է պատուտականի քթի վրայով,
Եվ այն ժամանակ նա հոտոտում է մի խոշոր պաշտոն,
Երբեմն էլ գալիս է տասնորդ՝ առած մի խոզի պոչով,
Եվ խտուտ է տալիս տերտերի քիթը քնած ժամանակ,
Եվ նա տեսնում է մի շռայլ հասույթ:
Երբեմն հեծնում է զինվորի վզին.
Եվ այն ժամանակ նա երազում է թշնամիների վզերը կտրել,
Խրամատների ու դարանների, և իսպանական սրերի մասին,
Եվ թմբուկներ, որոնց թնդյունից զարթնում է քնից
Ու սարսափահար մեկ-երկու բերան աղոթք ասելով՝
Քնում է նորից: Այդ հենց նույն Մաբն է,
Որ հյուսում է ձիերի բաշը գիշեր ժամանակ,
Եվ հանգուցում է նրանց խճճված վարսերը իրար,
Որ եթե բացվեն մեծ աղետների պատճառ կդառնան
Դա այն վհուկն է, որ աղջիկները երբ պառկում են մեջքների վրա,
Ճնշում է նրանց և սովորեցնում դիմանալ ճնշման՝
Դարձնելով նրանց պնդակազմ կանայք: Այդ կախարդն է, որ...

ՌՈՄԵՈ – Լռի՛ր, Մերկուտիո՛, լռի՛ր, հերիք է, փուչ բան ես խոսում:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ճիշտ նկատեցիք, ես երազների վրա եմ խոսում,
Որ ծույլ ուղեղի արգասիքներն են.
Որոնք ծնվում են ունայն ցնորքից,
Որ օդի նման մի թեթև նյութ է,
Եվ խիստ հարափոխ, քան թե այն հողմը,
Որ այս րոպեիս տարփում է հյուսիսի սառցապատ լանջը,
Սակայն գազազած՝ դեմքը շուռ տալով
Փչում է դեպի ցողասփյուռ հարավ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Քո ասած հողմը փչում, տանում է մեր ուշքն ու միտքը:
Ընթրիքը պրծել է, մենք ուշ կհասնենք:

ՌՈՄԵՈ – Իսկ ես կարծում եմ՝ շատ վաղ ենք եկել, քանզի իմ հոգին:
Կարծես զգում է, որ մի չար աղետ աստղիս առընթեր,
Պիտի դառնորեն սկսի դժնի իր տարեթիվը՝
Հենց այս գիշերվա խրախճանքներից վախճան դնելով
Այն անարգ կյանքին, որ ամփոփված է իմ այս կրծքի մեջ,
Տարաժամ մահվան նվաստ հարվածով,

Բայց նա, ով կյանքիս ընթացքն է վարում,
Ուղեցույց լինի թող առագաստիս:
Հառա՛ջ, կորովի՛ երիտասարդներ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Զարկե՛ք թմբուկներ:

(Բոլորը դուրս են գալիս):

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

(Մտնում է Մերին, հետո՝ Սամսոնը: Պարահանդես Կապուլետների տանը):

ՄԵՐԻ – Երբ մի տան մաքրությունն հանձնված լինի մեկ կամ երկու մարդու ձեռք, և այդ ձեռքերն էլ անլվա են, դա շատ կեղտոտ բան է:

ՍԱՄՍՈՆ – Ձեզ սպասում են, ձեզ կանչում են, ձեզ խնդրում են,
Ձեզ փնտրում են մեծ սրահում:

ՄԵՐԻ – Ի՞նչ է, հազար կտոր լինելու չենք:
Շուտ արեք, տղերք, մի քիչ աշխույժ շարժվեք:
Ով վերջինը մնա, թող ամբողջը ինքը տանի:

(Հնչում է տարաևտելլան: Բացվում է սպիտակ վարագույրը, ծաղրածուների պարը..., պարահանդեսի մասնակիցները ներսում են, մտնում է Պ. Կապուլետը):

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Բարով, պարոններ, բարի գալուստ ձեզ: Այն տիկինները,
Որոնց ոտքերը զերծ են կոշտերից, թող պարեն ձեզ հետ:
Ա՜, հա՜, օրիորդներ, ո՛ր մեկը ձեզնից
Պարից խուսս կտա: Նա, ով նազ կանի,
Երդվում եմ, ոտքին կոշտուկներ ունի: Ձեր սրտին կպա:

(Ներս են մտնում Ռոմեոն, Մերկուտիոն և Բենվոլիոն):

ՌՈՄԵՈ – Ո՞վ է այն օրիորդը, որ այն ասպետի բազուկն է պճնում:

ՍՊԱՍԱՎՈՐ – Չգիտե՛մ, պարո՛ն:

(Բոլորը քարանում են):

ՌՈՄԵՈ – Օ՜, նա վառվում է ջահերից պայծառ,
Գիշերվա այտի վրա այնպես է շողում,
Ինչպես ճոխ գոհար՝ տիրելու համար, խիստ չնուշխարհիկ՝ աշխարհի համար:
Երբ պարն ավարտվի, ես նրա կանգնած տեղը կդիտեմ
Եվ իմ բիրտ ձեռքը կերջանկացնեմ՝ հպելով նրան:
Արդյոք սիրե՞լ է սիրտս մինչ այժմ, երդվեք, իմ աչքեր,
Քանզի չեմ տեսել ստույգ գեղեցկություն մինչև այս գիշեր:

(Ռոմեոն նայում է դաշնամուրի մուր և նվագում է):

ՏԻԲԱԼՏ – *(Դիմելով պ. Կապուլետին):* Ձայնից երևում է, որ Մոնտեգյու է: *(Դիմելով սպասավորին):*
Սուսերս բեր, տղա՛: Եվ այս ստրուկը համարձակվել է,
Կոպիտ դիմակով իր դեմքը ծածկած այստեղ շտապել՝
Մեր այս հանդեսը անարգելու և ծաղրելու համար:

Երդվում եմ տոհմիս հնամյա պատվով,
Որ մի հարվածով նրան մեռցնելը բնավ էլ մեղք չէ:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ ես այդպես կատաղել, Տիբալտ:

ՏԻԲԱԼՏ – Այս մարդը, հորեղբա՛յր, մի Մոնտեգյու է՝ մեր ախոյանը,
Մի թշվառական, որը, ի ոխ մեզ այստեղ է եկել
Մեր այս գիշերվա հանդեսն հեգնելու:

(Տարաւորեալ՝ որպես ֆոն, միացվում է):

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Սա Ռոմեո՞ չէ՞:

ՏԻԲԱԼՏ – Այո՛, նա ինքն է՝ սրիկա Ռոմեոն:

(Տեղից վեր է կենում):

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հանդարտ, սիրելի՛ս, ձեռք չտաս նրան *(բռնում է Տիբալտի ձեռքը),*
Իրեն պահում է նա մի վեհաշուք ջենտլմենի պես:
Եվ, ստույգն ասած, մեր վերոնացիք գովում են նրան,
Իբրև մի պարկեշտ և կիրթ պատանու:
Քաղաքիս ամբողջ գանձերը ինձ տան,
Չէի կամենա իմ այս հարկի տակ անպատվել նրան,
Դրա համար էլ զսպի՛ր ինքդ քեզ, ուշ մի դարձրու,
Իմ կամքն այս է. թե հարգում ես ինձ,
Ցո՛ւյց տուր ուրախ դեմք և վանի՛ր քեզնից նայվածքները չար,
Որ վայելուչ չեն մի տոնի համար:

(Պարում են տարաւորեալ):

ՏԻԲԱԼՏ – Խիստ վայելո՞ւչ է, երբ որ մեզ հյուր է նման սրիկան:
Նրան հանդուրժել ես անկարող եմ:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Պետք է հանդուրժել, տաքգլո՛ւխ տղա:
Ասում եմ, պետք է. եկ, գնա բանիդ:
Տանտերը ո՞վ է՝ ե՞ս եմ, թե՞ ինքդ, գնա ասում եմ:
Չես հանդուրժելու, վա՜հ, տեր իմ Աստված,
Չլինի՞ ուզում ես աղմուկ բարձրացնել իմ հյուրերի մոտ, մի կռիվ սարքել:
Դա մարդու գո՞րծ է:

ՏԻԲԱԼՏ – Սակայն, հորեղբա՛յր, այդ մեզ ամոթ է:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Գնա, գնա բանիդ: Հանդուգն տղա ես *(հրելով):*
Մի՞թե այդպես չէ: Այդ հոխորտանքը,
Կարող է գլխիդ մի փորձանք բերել, գիտեմ՝ ինչ կլինի:
Դու ինձ դեմ գնա՞ս: Վա՜հ, ես իմ հոգին, հենց այդ էր պակաս *(զայրացած):*

Սքանչելի է: Շատ աներեսն ես. հանգիստ կաց, կամ թե...
(Ձեռքը բարձրացնում է, ուզում է հարվածել):
Էլի լույս բերեք, էլի լույս բերեք: Քաշվիր, ամոթ է:
Ես քեզ կստիպեմ հանդարտ մնալու: Ավելի աշխույժ, իմ թանկագիններ:

(Բարձր երաժշտություն, որը հետզհետե դառնում է ֆոն, ներսարանը քարանում է):

ՏԻԲԱԼՏ (ՄԵՆԱԿ) – Բռնի կաշկանդված համբերությունս, դեմ առնելով իմ կատաղությանը,
Ամբողջ մարմինս դողահարում է:
Ես պետք է գնամ: Այս բռնի մուտքը՝ արտաքուստ խաղաղ,
Փոխարկվելու է մի դառն մաղձի արյունաշաղախ:

(Շարժվում են: Երաժշտություն: Տիբալտը հեռանում է: Փակվում է սպիտակ վարագույրը, Ռոմեոն և Ջուլիետը մնում են բեմում: Հանդիպման երաժշտություն):

ՌՈՄԵՈ – Եթե պղծում եմ անարժան ձեռքով այս սուրբ վանքը,
Արդ սա թող լինի իմ այդ հանցանքի քաղցր տուգանքը.
Շուրթերս՝ իբրև երկու շիկադեմ ուխտավոր, սիրով
Պատրաստ են քավել այդ բիրտ հպումը քնքուշ համբույրով:

ՋՈՒԼԻԵՏ – Դուք խիստ եք դաժան դեպի ձեր ձեռքը, ազնիվ ուխտավոր,
Որ իր ջերմեռանդ հարգանքն է տածում սիրով բախտավոր:
Ուխտի եկողը ձեռքով հպում է ձեռքը սրբերի *(Ձեռքերը հպում են իրար):*
Ափ ընդ ափ լինել՝ անբիծ համբույրն է ուխտավորների:

ՌՈՄԵՈ – Սի՞թե սրբերն ու ուխտավորները շրթունքներ չունեն:

ՋՈՒԼԻԵՏ – Ունեն, ուխտավոր, բայց գործադրում են աղոթքի համար:

ՌՈՄԵՈ – Այն ժամանակ թող շուրթերն անեն ձեռքի արածը,
Տես, աղոթում են, շնորհիր նրանց իրենց խնդրածը:
Չլինի անասան հավատը փոխես հուսահատության:

ՋՈՒԼԻԵՏ – Սրբերն անշարժ են նույնիսկ աղոթքին ընդառաջելիս:

ՌՈՄԵՈ – Սի՛ շարժվիր, ուրեմն, միանչն աղոթքիս արդյունքը քաղեմ
Եվ իմ շուրթերից քո շրթունքներով հանցանքս քավեմ:

(Համբուրում է նրան, հանդիպման երաժշտությունը հնչում է բարձր, հետո դառնում է ֆոն):

ՋՈՒԼԻԵՏ – Այդ քաղած մեղքը շուրթերիս մնաց:

ՌՈՄԵՈ – Սե՞ղք իմ շրթունքից, օ՛, անուշ հանցանք: Ետ տուր ինձ կրկին:
(Նորից համբուրում է):

(Ավարտվում է երաժշտությունը, մնում է դայակը):

ԴԱՅԱԿ – Տիրուհի՛, մայրդ ձեզ հետ խոսք ունի: *(Ջուլիետը գնում է)։*

ՌՈՄԵՈ – Ո՞վ է իր մայրը:

ԴԱՅԱԿ – Սի՞թե չգիտեք:
Իր մայրը այս տան տիրուհին է,
Մի բարի կին է՝ անչափ իմաստուն և առաքինի:
Նրա աղջկան, որի հետ այժմ դուք խոսում էիք, ես կաթ եմ տվել,
Ձեզ բան եմ ասում, ով կարողանա ձեռք բերել նրան,
Շահած կլինի ոսկու գանձարան:

ՌՈՄԵՈ (ԱՌԱՆՁԻՆ) – Նա Կապուլե՞տ է:
Օ՜, ծանր հաշիվ, կյանքս, ուրեմն, պարտք եմ թշնամուս:

(Բարձրանում է սպիտակ վարագույրը, հնչում է տարանջատելու, ապա դառնում է ֆոն)։

ԲԵՆՎՈԼԻՈ – Գնանք, խնջույքի եռուն շրջանն է:

ՌՈՄԵՈ – Ավա՜ղ, այդպես է և իմ տագնապը, նույնիսկ ավելին:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ո՛չ, ո՛չ, պարոններ, սպասեք դեռ, փոքրիկ խնջույք ունենք:
Սի՞թե գնում եք, ուրեմն բոլորիդ շնորհապարտ եմ:
Շնորհակալ եմ, ազնի՛վ պարոններ, բարի գիշեր ձեզ:
Լո՛ւյս բերեք այստեղ, գնանք խոնջելու: Ա՜հ, ուշ է արդեն,
Հավատացեք ինձ՝ պիտի գնամ, քնեմ:

(Ներս է մտնում Մերին և մոմերը դնում դաշնամուրին: Բոլորը գնում են՝ բացի Ջուլիետից և դայակից)։

ՋՈՒԼԻԵՏ – Այստե՞ղ եք, դայա՛կ: Այն պարոնն ո՞վ է:
Թե պսակված լինի, Իմ առագաստը շիրիմս կլինի:

ԴԱՅԱԿ – Անունն է Ռոմեո, մի Մոնդեգյու է,
Ձեր մեծ թշնամու մեկ հատիկ որդին:

ՋՈՒԼԻԵՏ – Միակ սիրածս, ավա՜ղ, զավակն է միակ ոսոխիս:
Շուտ տեսա նրան, ուշ ճանաչեցի:
Անհնարին սեր ծնվեց իմ սրտում,
Եվ պետք է սիրեմ իմ ժանտ թշնամուն:

ԴԱՅԱԿ – Այդ ի՞նչ է: Ի՞նչ է:

ՋՈՒԼԻԵՏ – Մի հանգախաղ է, որ սովորեցի մեկից, որի հետ հիմա պարեցի:

(Ներսից կանչում են՝ Ջուլիե՜տ)։

ԴԱՅԱԿ – Հենց հիմա, իսկույն:
Շուտ արա գնանք, բոլոր հյուրերն արդեն գնացին:

(Բարձր Տարանւրելլան, Մերին և Սամսոնը հավաքում են կարմիր կլորները: Իջևում է սպիտակ վարագույրը: Մյուսում են ծաղրածուները):

ՆՈՒՎՈՒԱ 2 – Անցավ այն նախկին սիրո հուրն անշեջ,
Մի նոր սեր ծնվեց նրա սրտի մեջ:
Հոգու չափ սիրած այն գեղեցկուհին
Խավարեց չքնաղ Ջուլիետի կողքին:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Ջուլիետն ու Ռոմեոն սիրում են իրար,
Դյութում են միմյանց հայացքներով վառ:
Տղան պատմում է, իսկ ոսոխն անբիծ
Խայծ է գողանում այդ ահեղ կարթից:

ՆՈՒՎՈՒԱ 2 – Իբրև թշնամի՝ Ռոմեոն, սակայն,
Չի կարող ազատ սիրել աղջկան:
Ջուլիետն էլ սաստիկ սիրում է նրան,
Սակայն անզոր է գնալ տեսության:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Բայց կիրքը նրանց ուժ կտա ու սեր
Եվ ժամանակը՝ հանդիպման պահեր՝
Խառնելով նրանց ծայրահեղ վշտին
Նույնչափ ծայրահեղ ուրախություններ:

(Գնում են):

ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

(Վերոնա: Մի բացօթյա տեղ՝ Կապուլետների պարտեզի առաջ, մտնում է Ռոմեոն):

ԲԵՆՎՈԼԻՈ – Ռոմեո՛, Ռոմեո՛:

ՌՈՄԵՈ – Կարո՞ղ եմ շարժվել, երբ սիրտս այստեղ է.
Ետ դարձիր, թույլ հող կենտրոնդ գտիր:

(Պատի վրայով ցատկելով՝ պարտեզի մեջ թաքնվում է Ռոմեոն: Մտնում են Բենվոլիոն և Մերկուտիոն):

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Նա խելոք մարդ է:
Կյանքովս եմ երդվում, որ տուն է ծլկել և քնել հանգիստ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Նա այս կողմ վազեց,
Այս պարտեզի պատից ներս ցատկեց:
Ձա՛յն տուր, Մերկուտիո՛:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ձայն կտամ նույնպես բոլոր դևերին *(Խաղում է կարծես դերասանը):*
Ռոմեո՛, լսի՛ր, ա՛յ գիժ, քմահաճ, ա՛յ խենթ տարփածու,
Մի հառաչանքի կերպարանք առ դու և երևա մեզ,
Մի հանգ գեթ ասա, և գոհ կլինեմ:
Գոչիր «ափսոս ինձ», «սեր» արտասանիր, մի մրմունջ հանիր,
Դու իմ կնքահայր Վենուսին գոնե մի ջերմ խոսք ասա,
Մի մականուն տուր Վենուսի որդուն՝
Հավկուր Աղամին, որն այնքան դիպուկ նետը արձակեց,
Երբ սիրահարվեց Կոնֆետուա արքան աղքատ աղջկան:
Ո՛չ, նա չի լսում, չի շարժվում տեղից, չի երևում, չէ,
Կապիկը մեռած է: Ես նրա ոգուն պիտի թախանձեմ:
Կախարդում եմ քեզ ես Ռոզալինի պայծառ աչքերով,
Բարձր ճակատով, կարմրաթիր շուրթով,
Սիրուն ոտքերով, հոլանի սրունքով, սարսռուն ազդրով
Եվ նրան հարակից բոլոր կալվածքով՝
Երևա դու մեզ քո կերպարանքով:

ԲԵՆՎՈԼԻՈ – Եթե խոսքդ լսի, պիտի բարկանա:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Խոսքս չի կարող բարկացնել նրան: Նա կբարկանա,
Եթե ես նրա սիրած աղջկա շրջանակի մեջ
Մի տարօրինակ ոգի կանչեի՝ թողնելով նրան այնտեղ կանգ առած,
Մինչև սիրուհին դևերով նրան ի չիք դարձներ:

Այդ բանը մի տեսակ անարգանք կլիներ, բայց իմ աղերսը
Հեզահամբույր է և առաքինի: Ես իր սիրուհու անվան զորությամբ
Իրեն կկանչեմ, որ գա, երևա: Այլապես հնար չկա:

ԲԵՆՎՈԼԻՈ – Գնանք, սիրելիս, նա իրեն թաքցրեց այս ծառերի մեջ,
Որ ընկերակցի մռայլ գիշերին:
Իր սերը կույր է, և մութը միայն հարմար է դրան:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Թե սերը կույր է, նա անկարող է նշանին զարկել:
Այժմ կնստի խնձորենու տակ
Եվ կցնորի, որ իր սիրուհին մի խնձորի պես վերևից ընկներ,
Ինչպես կույսերն են իրարու կանչում խնդալու ժամին:
Ռոմեո՛, երնեկ սիրած աղջիկդ մի խնձորի պես վերևից ընկներ...
Բարի գիշեր, Ռոմեո՛, երթամ պառկելու:
Այս բաց մահիճը չափազանց ցուրտ է քնելու համար:
Գալի՞ս ես, թե՞ ոչ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Գնանք, իզուր է:
Նրան այստեղ փնտրել, նա մտադիր չէ իրեն ցույց տալ:

(Գնում են):

ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

(Կապուլետների պարտեզը, մտնում է Ռոմեոն)։

ՌՈՄԵՈ – Սպիների վրա ևս է ծիծաղում, ով վերք չի տեսել։

(Ռոմեոն երգում է իր երգը։ Բացվում է սպիտակ վարագույրը. Ջուլիետը ևստած է ևավակի մեջ՝ պատշգամբի դիմաց, իսկ Ռոմեոն ևերքևում է)։

ՌՈՄԵՈ – Տե՛ս՝ ևա իր այտը հենում է ձեռքին։
Երևեկ այդ ձեռքին ձեռևոց լինեի,
Որ կարենայի դիպչել այդ այտին։

ՋՈՒԼԻԵՏ – Ավա՜ղ։

ՌՈՄԵՈ – Արդեն խոսում է։
Օ՜, խոսի՛ր կրկին, լուսափառ հրեշտակ, քանզի գիշերով
Այնպես փառահեղ դու շողշողում ես իմ գլխի վերև,
Ինչպես թևավոր մի պատգամաբեր,
Մահկանացուների ճերմակ, երկևապիշ աչքերի առաջ,
Որ ետ են թեքվում նրան դիտելու,
Երբ դանդաղասահ ամպերի վրա աշտանակելով,
Թեթև լողում է եթերի կրծքին։

ՋՈՒԼԻԵՏ – Օ՜, Ռոմեո՜, Ռոմեո՜։ Ինչո՞ւ ես Ռոմեո։
Ուրացիր հորդ, ժխտի՛ր անունդ։
Եթե կամք չունես, ուխտի՛ր ինձ սիրել,
Եվ կդադարեմ Կապուլետ լինել։

ՌՈՄԵՈ – *(Մեկուսի)* Լսեմ ավելի՞ն, թե՞ պատասխան տամ։

ՋՈՒԼԻԵՏ – Անունդ միայն թշնամի է ինձ։
Դու ողջը ինքդ ես. դու Մոնտեգյու չես։
Ի՞նչ է Մոնտեգյուն։ Ո՛չ ձեռք է, ո՛չ ոտք,
Ո՛չ բազուկ, ո՛չ դեմք, ո՛չ էլ մի այլ մաս
Մարդուն պատկանող։ Առ ուրիշ անուն։
Ի՞նչ կա անվան մեջ։ Այն ծաղիկը, որին վարդ ենք անվանում,
Մի այլ անունով դարձյալ կարճակեր նույնչափ անուշ բույր։
Նույնպես Ռոմեոն, եթե Ռոմեո անվամբ չկոչվեր,
Դարձյալ կունենար այն անգին ձիրքը, որ այժմ ունի,
Առանց այդ կոչման։ Նետի՛ր անունդ,
Դրա փոխարեն, որ քո մասը չէ,
Առ ինձ ծայրեծայր։

(Հնչում է հանդիպման երաժշտությունը, հետո ֆոն է դառնում։ Ռոմեոն բարձրանում է պատշգամբ)։

ՌՈՄԵՈ – Քեզ հավատում եմ:
Ինձ սիրածդ գոչիր, և ես նորից կլինեմ մկրտված:
Էլ այսուհետև ես Ռոմեո չեմ:

ՋՈՒԼԻԵՏ – Այդ ի՞նչ մարդ ես դու, որ վարագուրված գիշերվա քողով,
Գալիս կորզում ես սրտիս գաղտնիքը:

ՌՈՄԵՈ – Ես ինչ անունով ասեմ, թե ով եմ:
Անունս, սրբուհի՛, ատելի է ինձ,
Որովհետև նա թշնամի է քեզ:
Թե գրված լիներ, ես պատառ-պատառ կանեի նրան:

ՋՈՒԼԻԵՏ – Իմ ականջները չեն ըմպել դեռևս
Այդ լեզվով ասված գոնե հարյուր բառ, բայց այդ ինչյունը ես ճանաչում եմ,
Դու Ռոմեոն չե՞ս և մի Մոնտեգյու:

ՌՈՄԵՈ – Եթե երկուսն էլ քեզ ատելի են, ո՛չ այս եմ, ո՛չ այն, չքնա՛ղ հրեշտակ:

ՋՈՒԼԻԵՏ – Ասա ինչպե՞ս եկար, ինչո՞ւ եկար այստեղ:
Մեր այս պարտեզի պատերը բարձր են, դժվար է մագլցել:
Մահացու վայր է, եթե նկատվի քո ով լինելը,
Կամ մեկնումեկը իմ ազգատոհմից տեսնի քեզ այստեղ:

ՌՈՄԵՈ – Ես սիրո թեթև թևերով ելա այս պարիսպները,
Քարե պատնեշը չի կարող պատվար լինել սիրո դեմ:
Սերը պատրաստ է միշտ խիզախելու դեպի նպատակ,
Ուստի չեն կարող ազգականներդ
Արգելք լինել ինձ:

ՋՈՒԼԻԵՏ – Եթե տեսնեն քեզ, մահդ ստույգ է:

ՌՈՄԵՈ – Ավա՜ղ, ինձ համար առավել վտանգ կա քո աչքերում,
Քան նրանց երկու տասնյակ սրի մեջ: Ժպտա՛ քաղցրաղեմ
Եվ ինձ կզինես նրանց ոխի դեմ:

ՋՈՒԼԻԵՏ – Ես ոչ մի գնով չէի կամենա քեզ տեսնել այստեղ:

ՌՈՄԵՈ – Գիշերվա թիկնոցը պատսպարում է ինձ նրանց աչքից:
Սիրի՛ր ինձ, թող նրանք ինձ այստեղ գտնեն:
Գերադասում եմ մեռնել ես նրանց ատելությունից,
Քան թե հապաղել մահվան դողի մեջ՝ քո սիրուն կարոտ:

ՋՈՒԼԻԵՏ – Ասա, դու ինչպե՞ս գտար այս վայրը, ո՞վ առաջնորդեց:

ՌՈՄԵՈ – Սե՜րը: Նախապես նա ինձ ներշնչեց հարցուփորձ անել:
Նա ինձ խելք տվեց, ես նրան՝ աչքեր:
Ես նավավար չեմ, սակայն եթե դու
Ամենահեռու ծովով ողողվող եզերք լինեիր,

Ես այդ վտանգը հանձն կառնեի այդչափ թանկագին մի գանձի համար:

ՋՈՒԼԻԵՏ – Գիշերվա դիմակը երեսիս վրա է:
Թե չէ կուսական մի շիկնածություն այտերս կայրեր
Այն խոսքի համար, որ դու այս գիշեր ինձնից լսեցիր:
Կարող էի կեղծել, կարող էի չասել, ինչ որ ասացի:
Բայց կորչեն ամեն փուչ ու կեղծ ձևեր: Սիրո՞ւմ ես դու ինձ:
Գիտեմ՝ «այո» կասես, և կհավատամ ես քո խոսքերին:
Բայց եթե երդվես, միգուցե հետո երդումդ դավես:
Դիոսն, ասում են, սիրահարների սուտ երդմանց վրա խիստ ծիծաղում է:
Ազնիվ Ռոմեո, եթե սիրում ես, անկեղծ ասա ինձ,
Եթե կարծում ես, որ շուտ հաղթվեցի,
Ես կխոժոռեմ, կլինեմ անգութ և կմերժեմ քեզ,
Որ դարպասես ինձ: Այլապես, եթե աշխարհը ինձ տան, ես այդ չեմ անի,
Ճիշտն ասած, ես խիստ սիրահարված եմ, չքնաղ Մոնտեգյու:

(Բարչրանում է երաժշտությունը, գրկում է Ռոմեոյին):

Գուցե իմ վարքը թեթև համարես,
Բայց հավատա ինձ, ես շատ ավելի հավատարիմ եմ,
Քան նրանք, որոնք զուսպ են երևում խորամանկությամբ:
Ես կարող էի ամոթխած լինել, խոստովանում եմ,
Սակայն դու ծածուկ լսեցիր ինձնից,
Իմ անկեղծ սիրո անզուսպ պոռթկումը: Ուստի, ների՛ր ինձ,
Եվ մի վերագրիր այս թուլությունը անհաստատ սիրո,
Որ մութ գիշերը ի լույս ընծայեց *(ուզում է գնալ)*:

ՌՈՄԵՈ – Օրհո՛րդ, երդվում եմ այն օրհնյալ լուսնով:

ՋՈՒԼԻԵՏ – Լուսնով մի երդվիր, անհաստատ լուսնով,
Որ ամեն ամիս փոխում է ձևը իր պարունակում,
Միգուցե սերդ նույնպես փոփոխվի:

ՌՈՄԵՈ – Ի՞նչ բանով երդվեմ:

ՋՈՒԼԻԵՏ – Մի՛ երդվիր երբեք:
Եթե ուզում ես, քո առաքինի անձովդ երդվիր,
Որը աստվածն է իմ պաշտամունքի,
Եվ կհավատամ:

ՌՈՄԵՈ – Եթե իմ սրտի հորդաբուխ սերը... *(Ջուլիետը չեռքով փակում է Ռոմեոյի բերանը):*

ՋՈՒԼԻԵՏ – Ո՛չ, ո՛չ, մի՛ երդվիր:
Թեպետ իմ սիրտը հրճվում է քեզնով,

Սակայն այս գիշեր հաճույք չունեմ դաշինք կռելու:
Դա խիստ հանդուգն է և խի՜ստ անխոհեմ, խիստ հանկարծական,
Սիրո բողբոջն այս, հասունանալով շնչով ամառվան,
Կարող է դառնալ մի չքնաղ ծաղիկ հաջորդ հանդիպման:
Դե, բարի գիշեր, դե, բարի գիշեր, և թող քո սրտում
Նույն քաղցր ննջն ու անդորրը տիրի, որ կան իմ լանջքում:

ՌՈՄԵՈ – Ուրեմն այդպես անհագո՞ւրդ գնամ:

ՋՈՒԼԻԵՏ – Ի՞նչ հագուրդ կուզես առնել այս գիշեր:

ՌՈՄԵՈ – Որ դու իմ ուխտը փոխադարձ սիրո ուխտով հատուցես:

ՋՈՒԼԻԵՏ – Ես իմը տվի նախքան խնդրելդ:
Սակայն կուզեի, որ այն տակավին տրված չլիներ:

ՌՈՄԵՈ – Ետ առնե՞լ կուզես: Իսկ ինչո՞ւ, սեր իմ:

ՋՈՒԼԻԵՏ – Որ առատ ձեռքով վերստին քեզ տամ,
Իմ սերը խորն է. որքան ես քեզ տամ,
Այնքան շատ ունեմ, երկուսն էլ անեզր ու անսպառ են:

(Դայակը ներսից կանչում է՝ «Ջուլիե՜տ»):

ՋՈՒԼԻԵՏ – Ներսից ձայն է գալիս: Հիմա գալիս եմ:
Մի երեք բառ էլ, անգի՛ն Ռոմեո, և բարի գիշեր:
Եթե քո սերը առաքինի է,
Եվ նպատակդ ամուսնանալն է, վաղը ինձ լուր տուր
Մի մարդու ձեռքով, որ քեզ կուղարկեմ,
Թե որտեղ և երբ դու մտադիր ես մեր հարսանեկան ծեսը կատարել:
Եվ իմ ողջ բախտը ոտքիդ կհանձնեմ,
Ու, տեր իմ, մինչև աշխարհի ծայրը կհետևեմ քեզ *(Գրկում են իրար և համբուրվում)*

ԴԱՅԱԿ – *(Ներսից):* Տիրուհի՜:

ՋՈՒԼԻԵՏ – Արդեն գալիս եմ:
Սակայն քո միտքը եթե բարի չէ. աղաչում եմ քեզ...

ԴԱՅԱԿ – *(Ներսից):* Օրիո՜րդ:

ՋՈՒԼԻԵՏ – Արդեն գալիս եմ:
Որ դադարեցնես սիրաբանելդ և մենակ թողնես ինձ իմ վշտի հետ:
Վաղը կուղարկեմ:

ՌՈՄԵՈ – Վկա՜ է հոգիս:

ՋՈՒԼԻԵՏ – Դե, հազար անգամ քեզ բարի գիշեր:

ՌՈՄԵՈ – Օ՜, հազար անգամ մութ է գիշերը առանց քո լույսի:

(Երաժշտություն: Ռոմեոյին դուրս է ուղարկում):

ՋՈՒԼԻԵՏ – Սը՛ս, սը՛ս, Ռոմեո:

ՌՈՄԵՈ – Իմ սեր:

ՋՈՒԼԻԵՏ – Վաղը ո՞ր ժամին ուղարկեմ քեզ մոտ:

ՌՈՄԵՈ – Իններորդ ժամին:

ՋՈՒԼԻԵՏ – Միտքս կպահեմ: Քսան տարի է մինչև այդ ժամը:
Մոռացա, թե քեզ ինչու հետ կանչեցի:

ՌՈՄԵՈ – Այստեղ կկանգնեմ մինչև դու հիշես:

ՋՈՒԼԻԵՏ – Ես կմոռանամ, երբ այստեղ լինես,
Անվերջ հիշելով, թե որքան քաղցր է ներկայությունդ:

ՌՈՄԵՈ – Իսկ ես կկանգնեմ, որ դու չհիշես՝ ինչու կանչեցիր,
Եվ ես մոռանամ ուրիշ ամեն տուն՝ բացի այս տնից:

ՋՈՒԼԻԵՏ – Լույսը բացվում է, ուզում եմ գնաս,
Սակայն ոչ հեռու, դե բարի գիշեր:

ՌՈՄԵՈ – Դե՛, բարի գիշեր, օ՛, օրհնյալ գիշեր: Ես վախենում եմ,
Որ այս ամենը լոկ մի երազ է գիշերվա ծոցում,
Քանզի չի կարող այսքան անուշ բան իրական լինել:

ՋՈՒԼԻԵՏ – Բաժանումն այնքան անուշ մի վիշտ է,
Որ բարի գիշեր պիտի կրկնեմ ես մինչ առավոտ:

(Ծաղրածուները բեմից դուրս են հանում նավը):

ՌՈՄԵՈ – Նինջ գա աչքերիդ և հանգիստ՝ լանջիդ:
Երնե՛կ ես հանգիստ և նինջ լինեի, որ քեզ անդորր ու հանգիստ բերեի:
Այժմ հոգևոր հորս խուցն երթամ.
Օգնություն խնդրեմ և պատմեմ անցքը բախտիս պատմությա՛ն:

(Փակվում է ապիտակ վարագույրը):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

(Ռոմեոն գնում է Հ. Լավրենտիոսի մոտ: Այս տեսարանում Հ. Լավրենտիուսը ներկայանում է տեսանյութի միջոցով, որը երևում է էկրանից: Ռոմեոն, էկրանի դիմաց կանգնած, լսում է):

Այս մեր երկիրը, որ մայրն է բնության, նաև դամբանն է,
Իր որդիներին ծնող արգանդը իր գերեզմանն է:
Նրա արգանդից ամեն տեսքի էակ է ծնվում,
Եվ իր մայրական անուշ կաթով են ամենքը սնվում:
Ամեն մեկն ունի իր արժանիքը, ամենքն այլազան:
Օ՜, այս երկիրը ինչպիսի՜ հարուստ ուժ է ամբարում
Ամեն խոտի մեջ, ամեն տունկի մեջ և ամեն քարում...
Չկա ոչ մի բան երկրի երեսին, որքան էլ չնչին,
Որ յուրատեսակ մի օգուտ չտա մեր հողագնդին:
Ոչ էլ մի լավ բան, որ երբ իր ազնիվ կոչումից շեղվի,
Չդիմադառնա իր ծագումի դեմ և չկործանվի:
Ազնվությունը վատ ընթացքի մեջ վատթարանում է,
Եվ մոլությունը գործով երբեմն ազնվանում է:
Այս նվազ ծաղկի դալար բաժակում հաստատած ունի
Թույնը՝ իր բույնը, դեղը՝ իր տեղը՝ երկուսն էլ գաղտնի:
Եթե հոտ առնես՝ կարբեցնի հոգիդ,
Եթե ճաշակես, իր հյութով նա վերջ կտա քո կյանքին:
Երկու այսպիսի ներհակ ոսոխներ մղում են պայքար
Թե՛ մարդու սրտում, թե՛ տունկերի մեջ հավերժ անդադար:
Բարին լուսաբույր և չարն անհամբույր են միշտ միասին,
Երբ չարը հաղթի, մահվան թրթուրը կուտի այդ բույսին:
Մի պատճառ միայն ինձ ստիպում է, որ ես քեզ օգնեմ:
Այս միությունը կարող է հանգել մեծ երջանկության,
Վերջ տալով ընդմիշտ ձեր ընտանեկան հին թշնամության:

(Ավարտից հետո շրջվում է և ասում):

ՌՈՄԵՈ – Ուրեմն իմացեք՝ սիրտս հանձնել եմ ես Կապուլետի չքնաղ աղջկան,
Նա ինձ է սիրել, իսկ ես էլ նրան:
Մեր մեջ զուրգորդված է արդեն ամեն բան, բացի մի բանից
Որ մեզ զուգորդես անխախտ կապերով սուրբ ամուսնության:

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

(Մի փողոց: Մտնում են Բենվոլիոն և Մերկուտիոն, հետևում սև կտորի մեջ Վերոնայի ժողովուրդն է, իսկ սպիտակ վարագույրը դեռ փակ է)։

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ո՞ր դժոխքն է մտել մեր այս Ռոմեոն,
Սի՞թե գիշերը նա տուն չի եկել:

ԲԵՆՎՈԼԻՈ – Իր ծառան ասաց՝ տանը չի եղել:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ա՜խ, այն քարասիրտ դեղնած աղջիկը, այն Ռոզալինը,
Այնպես է տանջում, չարչարում նրան, որ նա կգժվի:

ԲԵՆՎՈԼԻՈ – Ծեր Կապուլետի ազգական Տիբալտը
Գիր է ուղարկել նրա հոր տունը:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Արևս վկա, մենամարտի հրավեր կլինի:

ԲԵՆՎՈԼԻՈ – Ռոմեոն նամակին կպատասխանի:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ամեն մարդ, որ գրել գիտե, կարող է պատասխանել նամակի:

ԲԵՆՎՈԼԻՈ – Ո՛չ, նա կպատասխանի նամակի տիրոջը՝ սպառնալիքի դեմ սպառնալիք կարդալով:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ավա՜ղ, խեղճ Ռոմեո: Նա արդեն մեռածի պես է.
Դաշունահար եղած մի դալուկ աղջկա սև աչքերից և ականջից
նետահար՝ նրա մի սիրային երգով:
Սի՞թե այդ տեսակ մարդը կարող է Տիբալտի հետ մենամարտի
դուրս գալ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Վա՜հ, դու էլ: Իսկ Տիբալտն ո՞վ է:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Տիբա՞լտը: Նա կատուների իշխանից ավելի արիասիրտ է, հավատացնում եմ:
Օ՜, նա պատվի քաջասիրտ հարյուրապետն է:
Նա մենամարտում է այնքան հմտորեն, ինչպես Դուք
մի ճայնագրված երգ եք երգում *(խաղում է սուսերով)*:
Կանոնավոր կերպով պահում է չափը, ժամանակը և ներդաշնակությունը: Հաշվի է առնում ամենավոքրիկ դադարը: Մեկ-երկու և երրորդը ձեր կրծքի մեջ է: Հեռվից մետաքսե կոճակի վրա այնպես է անվրեպ հարվածում, կարծես դրա դահիճը լինի: Մի դուելիստ է, մի դուելիստ, առաջնակարգ տան մի ազնվական, մենամարտության արվեստի I և II պատճառը կատարելապես իմացող *(հիացմունքով)*:
Ա՜յն, նրա անման պասսադոն, նրա պուենտո ռեվերսոն, նրա հեյը:

ԲԵՆՎՈԼԻՈ – Այն ի՞նչը *(ջղայնացած)*:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Գրողը տանի այս խենթ ու խելառ թոթովախոս սեթևեթներին,

Այս նորաձևան բառերը և անվուր արտասանությունը ներմուծողներին:
Տեր Աստված, ի՜նչ սքանչելի սուր խաղացնող է, ի՜նչ բարձրահասակ մարդ է, ի՜նչ շնորհալի պոռնիկ»:
Վահ, բարեկամս, ցավալի չէ՞ միթե,
Որ մենք շարունակ պետք է տանջվենք այս օտարերկրյա մոդակներից, այս pardonne-moi-ներից *(խոնարհվելով)*,
Որոնք այնքան ամուր են կպել նոր մոդային,
Որ միևչև անգամ չեն կարողանում հանգիստ նստել հնաձև նստարանների վրա:
Օ՜, դրանց bon-ե՜րը, դրանց bon-ե՜րը:

(Մտնում է Ռոմեոն):

ԲԵՆՎՈԼԻՈ – Ահա Ռոմեո՜ն, ահա Ռոմեո՜ն:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Խեղճ տղա, նման է ձկնկիթը հանված մի չորացած հարինգի:
Ով գեր ու պարարտ մարմին, ինչպե՞ս եղավ, որ ցամաքած ձուկ դարձար:
Հիմա նա կարտասանի այն ոտանավորներից, որ Պետրարկայի բերանից էին առատորեն բխում: Լաուրան իր սիրուհու համեմատությամբ մի խոնարհուհի է եղել: Բայց իմ հոգին, նրա սիրեկանը ավելի լավ բանաստեղծություն է նվիրել սիրուհուն: Դիդոնը մի գարշելի կին է եղել, Կլեոպատրան՝ մի գնչուհի, Հելենը և Հերոն՝ պոռնիկներ և հարճեր: Թիբսեն՝ մի անփայլ աչք կամ դրա նման մի բան, և ոչ թե ինչ-որ պետք է:
Սինյո՛ր Ռոմեո, bonjoun, ահա քեզ մի ֆրանսիական ողջույն քո ֆրանսիական անդրավարտիքի համար *(խոնարհվելով)*:
Դու երեկ զիշեր լավ խաղ խաղացիր մեր գլխին:

ՌՈՄԵՈ – Բարի լույս երկուսիդ: Ի՞նչ խաղ խաղացի:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ծլկեցի՜ր, պարո՛ն, ծլկեցի՜ր: Սի՞թե գլխի չես ընկնում:

ՌՈՄԵՈ – Ների՛ր, սիրելի՛ Մերկուտիո, խիստ կարևոր գործ ունեի:
Իմ այն վիճակում գտնվող ամեն մարդ կարող էր շեղվել քաղաքավարությունից:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Այդ միևնույն է, թե ասել, որ քո այն պարագայում գտնվող մարդը պարտավոր էր ծունկը թեքել *(նրանք սկսում են միասին խաղալ մեկը մյուսի հետ և սրամտություններ ասել միմյանց հասցեին)*:

ՌՈՄԵՈ – Այսինքն՝ խոնարհվե՞լ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ճիշտ դիպար մտքիս:

ՌՈՄԵՈ – Դա մի շատ քաղաքավարի բացատրություն է:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Իմացի՛ր՝ ես քաղաքավարության վարդն եմ:

ՌՈՄԵՈ – Այսինքն՝ ծաղի՞կը:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Այո՛:

ՌՈՄԵՈ – Դրա համար ոտնամաններս վարդի պես ծաղկել են:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Լավ ասացիր:
Հիմա այնքան հետապնդիր այդ կատակը, մինչև որ ոտնամաններդ ծակվեն, և կատակդ առանց հողաթափի մնա:

ՌՈՄԵՈ – Օ՜, տակը ծակ կատակ, որ եզակի է միայն իր բոբկությամբ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Օգնության հասի՛ր, բարի՛ Բենվոլիո, իմ սրամտությունը ուժասպառ է դառնում:

ՌՈՄԵՈ – Մտրակի՛ր, մտրակի՛ր: Հարվածի՛ր գավազանով,
Եթե կարող ես, այլապես ես կգոռամ՝ հաղթեցի:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Բա՜հ, եթե քո սրամտությունը վայրի սագի ետևից է արշավում,
ապա ես պարտված եմ, որովհետև քո միայն մեկ ունակության մեջ ավելի շատ վայրի սագ կա,
քան թե իմ հինգի մեջ, հավատացնում եմ:
Չլինի՞ դու ինձ սագի տեղ ես ընդունել:

ՌՈՄԵՈ – Եթե ինձ հետ ես եղել, կնշանակի, բացի վայրի սագից, ուրիշ բան չես եղել:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ես այդ կատակի համար ականջդ պիտի կծեմ:

ՌՈՄԵՈ – Մի՛ կծիր, բարի սագ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Խելքդ շատ թթու խնձոր է: Չափազանց կծու հյութ ունի:

ՌՈՄԵՈ – Մի՞թե մի պարարտ սագ համեմելու համար հարկավոր չէ կծու հյութ:

(Միասին՝ կծու հյութ, կծու հյութ):

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Քո միտքը այժմ նման է այծի կաշու, որ ընդարձակվելով մի մատ նեղությունից կարող է մի կանգուն լայնության հասնել:

ՌՈՄԵՈ – Ես իմ խելքը հենց այդ «լայն» բառի համար եմ լայնացնում,
Որ ավելացնելով մի սագի վրա՝ ցույց տամ, որ դու ամենամեծ սագն ես աշխարհում: *(Ծիծաղում են):*

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Հիմա ինձ ասա՝ մի՞թե ավելի լավ չէ այսպես կատակել ու ծիծաղել,
Քան թե նստել ախուվախ անել սիրո համար:
Հիմա դու ընկերության մարդ ես, հիմա դու Ռոմեոն ես:
Այժմ դու այն ես, ինչ որ կաս թե՛ արվեստով և թե՛ բնությամբ:
Այդ խելագար սերը նման է մի մեծ տխմարի,

Որ լեզուն դուրս հանած վեր ու վար վազում է՝ գավազանը մի ծակ խրելու համար:

ԲԵՆՎՈԼԻՈ – Այդտեղ կանգ առ. այդտեղ կա՛նգ առ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Կուզե՞ս, որ խոսքս կիսատ թողնեմ:

ԲԵՆՎՈԼԻՈ – Վախենում եմ, որ պատմությունդ շատ երկարացնես:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Օ՛, սխալվում ես: Ես ուզում էի կարճացնել,
Որովհետև հասել էի իմ պատմության ամենախոր տեղը և, ճշմարիտն ասած, մտադիր էի շուտով ավարտել:

ՌՈՄԵՈ – Այդ լավ խոսք է:

(Սպիտակ վարագույրը բացվում է, ժողովուրդը կանգնած է, երևում են միայն չեռքերն ու գլուխները, դեմքերը սպիտակ են ներկված, իսկ չեռքերին սպիտակ չեռնոցներ են, երաժշտություն: Մտնում է դայակը):

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Առագա՛ստ է գալիս: Առագա՛ստ է գալիս:

ԲԵՆՎՈԼԻՈ – Երկու առագաստ՝ մի շրջազգեստ և մի անդրավարտիք:

ԴԱՅԱԿ – Բարի լույս ձեզ, պարոննե՛ր:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Բարի երեկո ձեզ, գեղեցիկ տիկին:

ԴԱՅԱԿ – Մի՞թե հիմա երեկո է:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Երեկո է, հավատացեք, որովհետև արևի ժամացույցի լիրբ ձեռքը ուղիղ կանգնած է կեսօրվա մեջտեղի կետին *(պառկում է գետնին)*:

ԴԱՅԱԿ – Գրողը քեզ տանի, ի՞նչ տեսակ մարդ ես:

ՌՈՄԵՈ – Մի մարդ է, տիկին, որ Աստված ստեղծել է ինքն իրեն ապականելու համար:

ԴԱՅԱԿ – Արևս վկա, լավ ասացիր՝ «ինքն իրեն ապականելու համար», այնպես չէ՞:
Պարոննե՛ր, արդյո՞ք ձեզնից մեկնումեկը կարող է ասել,. թե որտե՞ղ կարող եմ գտնել երիտասարդ Ռոմեոյին:

ՌՈՄԵՈ – Ես կարող եմ ասել, բայց երիտասարդ Ռոմեոն ավելի ծերացած կլինի,
Երբ նրան գտնես, քան թե էր, երբ դու սկսեցիր որոնել նրան:
Ես եմ այդ անունը կրողներից ամենաերիտասարդը, եթե ավելի վատը չգտնվի:

ԴԱՅԱԿ – Լա՛վ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Մի՞թե: Ուրեմն, ավելի վատը լա՞վ է: Լավ ես նկատում:
Խելքդ ո՞ւր է, խելքդ գլուխդ բեր:

ԴԱՅԱԿ – Եթե այդ Դուք եք, ես ցանկանում եմ ձեզ հետ առանձին խոսել:

ԲԵՆՎՈԼԻՈ – Նա նրան ընթրիքի է հրավիրելու:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Կավատ է, իսկական կավատ: Սպասի՛ր, սպասի՛ր:

ՌՈՄԵՈ – Ի՞նչ բան է, ո՞րս գտար:

(Երաժշտությունը հնչում է ցածր, հետո մի քիչ բարձրանում է):

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Նապաստակ չէ, պարո՛ն, գուցե պասվա կարկանդակի մեջ դրված մի ճագար է,
Որ նախքան ուտվելը թթվում է և բորբոսնում:

(Երգում է՝ բռնելով գլխաշորի ծայրերը և պտտվելով դայակի շուրջը):

Մի հին ճագար, հոտած ճագար, ընտիր ճաշ է պասվա համար:
Բայց ծեր ճագարն ինչպե՞ս ուտվի, երբ չկերած՝ կմգլոտի:
Ռոմեո՛, չե՞ս գալիս հորդ տունը: Գնում ենք այնտեղ ընթրիքի:

ՌՈՄԵՈ – Դուք գնացե՛ք, ես կգամ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – *(Հրաժեշտ տալով դայակին):* Մնաք բարով, պառավ տիկին,
Մնաք բարով, ա՛յ տանտիկին, տիկի՛ն, տիկի՛ն, տիկի՛ն:

(Ավարտվում է երաժշտությունը: Դայակը հրում է Մերկուտիոյին, նրանք հետևում են):

ԴԱՅԱԿ – Աստված իմ, վերջապես ազատվեցինք: Բերանդ չորանա: *(Շատ ջղայնացած):*
Ասացեք խնդրեմ, պարոն, ո՞վ էր այս անամոթ չարչին, որ բերնից եկածը ափեղ-ցփեղ դուրս էր տալիս:

ՌՈՄԵՈ – Մի շաղակրատ ազնվական է, դայա՛կ,
Որ սիրում է ինքն իր ասածին ականջ դնել:
Նա ավելի շատ կարող է խոսել մի րոպեի մեջ,
Քան թե լսել մի ամբողջ ամսվա ընթացքում:

ԴԱՅԱԿ – *(Զայրացած):* Եթե համարձակվի մի բան ասել իմ դեմ, թող լավ իմանա,
Որ ոչ միայն իր պես լկտիին, այլև իր պես քսան թեքնսոլիկի ես ինչպես պետք է, ցույց կտամ:
Եթե ես ինքս չկարողանամ, մարդիկ կգտնեմ, որ կկարողանան:
Անամո՛թ թշվառական: Ես նրա կարծած խուճջիկ-մուճջիկներիցը չեմ:
Ես նրա լիրբ ընկերուհիներից չեմ:
Աստված վկա, ես այնպես զայրացած եմ, որ բոլոր անդամներս դողում են *(սկսում է չեռքերը դողացնել)*:
Խնդրեմ, պարոն, մի խոսք ունեմ Ձեզ հետ:
Եվ ինչպես Ձեզ ասացի, իմ երիտասարդ տիրուհին հրամայել է ինձ գտնել Ձեզ:

Ինչ որ կարգադրել է Ձեզ հայտնելու, ես Ձեզ չեմ ասի:
Բայց ամենից առաջ ես Ձեզ այս կասեմ *(հանդիմանելով)*,
Եթե ուզում եք նրան տանել հիմարների դրախտը, ինչպես ասում են,
Դա Ձեր կողմից մեծ կոպտություն կլինի, որովհետև օրիորդը շատ երիտասարդ է:
Ուստի եթե դուք նրա հետ երկերեսանի վարվեք,
Դա շատ վատ բան կլինի մի օրիորդի համար և շատ ստոր մի գործ:

ՌՈՄԵՈ – Դայակ, քո տիկնոջը և տիրուհուդ իմ կողմից շատ բարև արա:
Երդվո՜ւմ եմ քեզ... *(շատ բաղաքավարի և սիրալիր)*:

ԴԱՅԱԿ – Հասկացա: Ազնիվ սիրտ ունեք:
Եվ հոգիս վկա. ես այդ բանը կասեմ նրան:
Օ՜, տեր իմ, տեր իմ, ինչքա՜ն կուրախանա:

ՌՈՄԵՈ – Ի՜նչ պիտի ասես նրան, դայակ: Դու իմ խոսքը չլսեցիր:

ԴԱՅԱԿ – Ես նրան կասեմ, պարո՛ն, որ դուք երդվում եք, իսկ դա, իմ կարծիքով, մի ազնվավայել առաջարկություն է:

ՌՈՄԵՈ – Դու նրան ասա մի միջոց գտնի:
Եվ այսօր, ուղիղ կեսօրից հետո գա խոստովանանքի:
Հայր Լավրենտիոսի խուցի մեջ, այնտեղ կխոստովանվի և կամուսնանա:
Վերցրո՛ւ քո վարձը *(պալիս է քսակը)*:

ԴԱՅԱԿ – Ո՛չ, ի՞նչ եք անում: Մի՞թե կվերցնեմ թեկուզ մի պեննի:

ՌՈՄԵՈ – Վերցրո՛ւ, ասում եմ:

ԴԱՅԱԿ – *(Քսակը վերցնելով)*: Կեսօրից հետո՞: Նա այնտեղ կլինի:

ՌՈՄԵՈ – Դու, բարի դայակ, դու էլ սպասիր վանքի պատի տակ:
Մի ժամից հետո իմ ծառան կգա:
Եվ քեզ կբերի մի հանգուցավոր պարանե սանդուղք,
Որով ես պետք է խավար գիշերին
Մագլցեմ դեպի իմ երջանկության բարձր կատարը:
Դե՜, գնաս բարով: Հավատարի՛մ եղիր, քեզ կվարձատրեմ,
Բարի ճանապարհ: Սրտագին ողջույն տար քո տիրուհուն:

ԴԱՅԱԿ – Աստված օրհնի ձեզ: Բայց լսե՛ք, պարո՛ն:

ՌՈՄԵՈ – Ի՞նչ ես ասելու, սիրելի՛ դայակ:

ԴԱՅԱԿ – Արդյո՞ք ձեր ծառան գաղտնապահ մարդ է:
Չե՞ք լսել միթե՝ գաղտնիքի համար երկուսից մեկը միշտ ավելորդ է:

ՌՈՄԵՈ – Ապահով եղիր, սպասավորս պողպատի նման հավատարիմ է:

ԳԱՅԱԿ – Չեզ մի ուրիշ բան էլ ասեմ, պարո՛ն, իմ տիրուհու պես անուշիկ օրիորդ չկա:

Տեր Աստված, տեր Աստված, երբ նա մի փոքրիկ ճղճղան երեխա՜ էր...

Օ՜, մի ազնվական կա քաղաքում, պարոն, անունը Պարիս է:

Նա ուզում է նրան իր ճանկը գցել:

Բայց իմ տիրուհին, խե՜ղճ աղջիկ, ավելի ուրախ կլինի, եթե մի գորտ տեսնի, մի իսկական գորտ, քան թե նրան:

Ես մեկ-մեկ բարկացնում եմ նրան՝ ասելով, որ Պարիսը ամենահարմար փեսացուն է,

Բայց հավատացեք, երբ ես այդ բանը ասում եմ, նա այնպես է գունատվում, երեսը կարծես ամեն լվանալու շոր լինի: *(Ծիծաղում է):*

ՌՈՄԵՈ – Տիրուհուդ բարևիր:

(Գնում է):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍԵՐԿՈՒԵՐՈՐԴ

(Վարագույրը փակվում է, մյուսում է Մերին, փոում է կտորները, ընթացքում լավում է ծաղրածուների 2-րդ երգի վերջին մասը: Գործողությունը տեղի է ունենում Կապուլետների տանը, մյուսում է Ջուլիետը):

ՋՈՒԼԻԵՏ – Ժամը ինը զարկեց, երբ ուղարկեցի ես իմ դայակին:
Նա ինձ խոստացավ կես ժամից ետ գալ:
Ո՞վ գիտի, գուցե չի գտել նրան, դա չէ պատճառը:
Այդ կինը կաղ է:

(Մյուսում է դայակը):

Աստված իմ, գալիս է: Ի՞նչ լուր ես բերել, Ասա, տեսա՛ր նրան:

(Ջուլիետը մուրենում է և գրկում դայակին):

Հիմա, իմ քաղցրիկ, անուշիկ դայակ... վա՜հ, տեր իմ Աստված, ինչո՞ւ ես տրտում:
Եթե լուրերդ տխրագին լինեն, դու զվարթ պատմիր:
Եթե բարի են, մի՛ ամաչեցրու քաղցր լուրերի երաժշտությունը
Այդքան դառնադեմ նվագելով այն:

ԴԱՅԱԿ – Ամա՜ն, մարեցի, թող քիչ շունչ քաշեմ:
Օ՜, ոսկորներս ինչքան են ցավում: Որքա՜ն եմ վազել:

ՋՈՒԼԻԵՏ – Ա՜խ, երանի թե դու ունենայիր իմ ոսկորները, իսկ ես՝ լուրերդ *(անհամբեր)*:
Ո՛չ, խոսի՛ր, խոսի՛ր, խնդրում եմ, խոսիր, իմ բարի ծծմայր:

ԴԱՅԱԿ – Ի՞նչ ես շտապում, մի քիչ համբերիր: Չե՞ս տեսնում միթե՝ շունչս կտրվեց *(հևարավորինս ցգելով)*:

ՋՈՒԼԻԵՏ – Ինչպե՞ս կտրվեց, երբ դու քո շնչով ասում ես, որ քո շունչը կտրվեց:
Ուշանալու համար բերած պատճառդ ավելի երկար է, քան ասելիքդ,
Որ դիտավորյալ չես ուզում պատմել:
Գոհացում տուր ինձ. լա՞վ լուր է, թե՞ վատ:

ԴԱՅԱԿ – Գիտեք ինչ, դուք շատ հասարակ ընտրություն եք արել:
Դուք տղամարդ ընտրելու ձևը չգիտեք: Ռոմեո. մի՞թե նա տղամարդ է:
Ո՛չ, վատ չի, թեև դեմքը ավելի սիրուն է, քան որևէ մի այլ մարդու,
Այնուամենայնիվ, նրա սրունքը բոլորից գերազանց է:

Իսկ ձեռքերը, իսկ ոտքերը, իսկ մարմինը,
Թեև դրանց վրա շատ բան չկա խոսելու,
Բայց ամեն համեմատությունից բարձր են:
Նա քաղաքավարության ծաղիկը չէ, բայց կարող եմ քեզ վստահեցնել,
Որ գառնուկի պես հեզ է: Գնա՛ բանիդ, աղջի՛, գնա՛, Աստծուն աղոթք արա:
Ի՞նչ է, չլինի արդեն ճաշել եք:

ՋՈՒԼԻԵՏ – Ո՛չ, դեռ չենք ճաշել: Բայց այդ բոլորին ես նախապես իրազեկ եմ:
Պատմի՛ր, թե ինչ է ասում նա մեր ամուսնության մասին: Ի՞նչ լուր դրանից:

ԴԱՅԱԿ – Աստված իմ, գլուխս ինչպե՞ս է ցավում, և ի՞նչ գլուխ ունեմ,
Այնպես է զարկում, կարծես ուզում է քսան կտոր լինել,
Հապա իմ մեջքը, ամա՞ն, իմ մե՞ջքը...
Ի՞նչ անխիղճ ես դու, ինձ ուղարկում ես,
Որ գնամ մեռնեմ՝ դես-դեն վազելով:

ՋՈՒԼԻԵՏ – Իրավ, ցավում եմ տանջվելուդ համար:
Իմ քաղցրի՛կ դայակ, պատմի՛ր, ի՞նչ ասաց իմ սիրեկանը:

ԴԱՅԱԿ – Ձեր սիրեկանը մի պարկեշտ մարդու պես և մի քաղաքավարի,
Եվ մի բարի, և՛ մի գեղեցիկ, և հավատացնում եմ,
Մի առաքինի մարդու պես ասաց... *(մի պահ դադար է տալիս)*
Ո՞ւր է Ձեր մայրը:

ՋՈՒԼԻԵՏ – *(Ջղայնանալով)*: Ո՞ւր է իմ մայրը: Իմ մայրը տանն է: Ո՞ւր պետք է լիներ:
Ի՞նչ զարմանալի պատասխան է այդ:
Ձեր սիրեկանը մի առաքինի մարդու պես ասաց... Ո՞ւր է Ձեր մայրը:

ԴԱՅԱԿ – Մայր Աստվածածին, ի՞նչ անհամբերն ես, մի քիչ զուսպ եղիր.
ա՞յդ է սպեղանին ցաված ոսկորներիս: Այսուհետև ինքդ պատգամներդ տար:

ՋՈՒԼԻԵՏ – Մի՛ հուզվիր, դայա՛կ: Խոսի՛ր, այ կնիկ, Ռոմեոն ի՞նչ ասաց *(հրամայելով)*:

ԴԱՅԱԿ – Կարո՞ղ ես այսօր խոստովանքի գնալ:

ՋՈՒԼԻԵՏ – Այո՛, կարող եմ:

ԴԱՅԱԿ – Ուրեմն վազի՛ր հայր Լավրենտիոսի մոտ:
Այնտեղ կգտնես դու մի փեսացու, որ քեզ կին կառնի:
Կայտառ արյունդ տե՛ս՝ ինչպես լցվեց քո թշերի մեջ:

Մի որևէ լուր, և անմիջապես փոխվում ես վարդի: Վազի՛ր եկեղեցի:

Իսկ ես գնում եմ, մի սանդուղք բերեմ, որով սիրածդ պետք է մագլցի թռչնակի բույնը, երբ մութը ընկնի:

Բեռնակիրն ես եմ: Ես չարչարվում եմ, որ դու վայելես:

Բայց ծանր բեռը ինքդ ես կրելու, հենց այս գիշերը...

Ես գնամ ճաշի, իսկ դու շտապի՛ր դեպի այն խուցը:

ՋՈՒԼԻԵՏ – Վազեմ փարվելու գերագույն բախտիս:

Իմ ազնիվ դայակ, դե՞, մնաս բարով... *(գրկում և համբուրում է):*

(Գնում են):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

(Մտնում է Մերին, հավաքում է կտորները: Ստվերային տեսարան ապիրակ վարագույրի հետևում: Պահակադրություն: Հնչում է հանդիպման մաժորային երաժշտությունը):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ

(Վերոնա՝ մի հրապարակ, մտնում են Մերկուտիոն, Բենվոլիոն և երկու ծաղրածու):

ԲԵՆՎՈԼԻՈ – Աղաչում եմ քեզ, բարի Մերկուտիո, արի հեռանանք:
Օրը շատ տաք է, Կապուլետները այժմ դրսում են.
Եթե հանդիպենք, անկարելի է խույս տալ բախումից:
Այս շոգ օրերին ըմբոստ արյունը դյուրագրգիռ է:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Դու նման ես մի մարդու, որ երբ մտնում է գինետուն,
Սուրը շպրտում է սեղանի վրա՝ ասելով.
Տա Աստված, որ քո կարիքը այլևս չունենամ:
Բայց հենց որ երկրորդ գավաթը ներգործում է,
Սուրը քաշում է նույնիսկ մատռվակի վրա, երբ դրա հարկը չկա, իսկապես:

ԲԵՆՎՈԼԻՈ – Մի՞թե ես նման եմ այդպիսի մարդու:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Լա՜վ, լա՜վ, դու այնպիսի վախկոտ տաքգլուխն ես,
Ինչպիսիք են Իտալիայի բոլոր տաքգլուխները:
Տրամադիր ես արագ բորբոքվել, իսկ երբ բորբոքվում ես,
Իսկույն էլ լեղաճաք ես լինում:

ԲԵՆՎՈԼԻՈ – Ի՞նչ ասացիր:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Այո՛, եթե քեզ նման երկու հոգի լինեին աշխարհում,
Շատ չանցած՝ ոչ ոք չէր մնա, որովհետև միմյանց կսպանեին:
Դո՜ւ, դու մարդու հետ կռիվ կբանաս,
Եթե իմանաս, որ նրա մորուքը մեկ մազով ավելի կամ պակաս է քոնից:
Դու մարդու հետ կռիվ կսարքես, եթե նա քեզ մոտ սխալմամբ կաղին կոտրի,
Միայն այն պատճառով, որ աչքերդ կաղնեգույն են:
Դու մեկի հետ կռվեցիր նրա համար, որ հազացել էր փողոցում և իր հազով զարթնեցրել արևի տակ պառկած քո շանը: Դու

կռվեցիր մի դերձակի հետ, որ համարձակվել էր Զատկից առաջ նոր բաճկոն հագնել:

ԲԵՆՎՈԼԻՈ – Եթե ես քո չափ կռվասեր լինեի,
Իմ կյանքի ամբողջ ժառանգությունը կվաճառեի առաջին հանդիպողին՝
Մեկ և քառորդ ժամ ապրելու համար:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ամբողջ ժառանգությո՞ւնը: Օ՜, հիմարություն:

ԲԵՆՎՈԼԻՈ – Գլուխս վկա, ահա գալիս են Կապուլետները:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Կրունկս վկա, բնավ հոգս չէ:

(Մտնում է Տիբալտը, բարդ շրանում է սպիտակ վարագույրը, կանգնած են ժողովուրդը՝ կարմիր չեռնոցներով, և ծաղրածուները, հնչում է ցածր երաժշտություն):

ՏԻԲԱԼՏ – Մոտիկից հետևեք ինձ, որովհետև ես ուզում եմ խոսել նրանց հետ:
Բարի երեկո, պարոննե՛ր: Ես մի խոսք ունեմ ձեզնից մեկի հետ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Հենց միայն մի խոսք մեզնից մեկի հե՞տ:
Մի բան էլ միացրեք դրան, դարձրեք մի խոսք և մի հարված:

ՏԻԲԱԼՏ – Ես պատրաստ եմ, պարո՛ն, եթե միայն առիթ տաք:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Չե՞ք կարող միթե մի առիթ գտնել առանց մեր տալու:

ՏԻԲԱԼՏ – Մերկուտիո, դու Ռոմեոյի նվագախմբի՞ց ես *(ծաղրելով)*:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Նվագախմբի՞ց: Ինչ է, չլինի՞՝ դու մեզ նվագածուներ ես կարծում:
Եթե դու մեզ նվագածուներ ես կարծում,
Ապա մի ակնարկիր ուրիշ նվագ, բացի անախորժ ձայներից:
Ահավասիկ իմ ջութակափայտը: *(Սուսերը հանելով):* Սա է, որ ձեզ կստիպի պարել:
Գրողը տանի: Նվագախմբի՞ց ես:

ԲԵՆՎՈԼԻՈ – Հրապարակի մեջ լավ չէ վիճելը,
Կամ եկեք քաշվենք առանձին մի տեղ,
Կամ հանգիստ վիճեք,
Եվ կամ թե ցրվենք: Այստեղ ամեն աչք մեզ է ուղղված:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Աչքը տրված է նայելու համար: Թողեք՝ թող նայեն:
Ոչ ոք չի կարող ինձ տեղից շարժել:

(Մտնում է Ռոմեոն):

ՏԻԲԱԼՏ – Լավ, հաշտվենք, պարո՛ն, իմ մարդը եկավ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Պատրաստ եմ կախվել, եթե նա հագնի ձեր համազգեստը:
Ասպարեզ մտեք, նախ դու, ապա նա,
Միայն այդ դեպքում կարող եք նրան ձեր մարդն անվանել:

ՏԻԲԱԼՏ – Լսի՛ր, Ռոմեո՛, առ քեզ ունեցած ատելությունս
Չի թելադրում ավելի լավ բան, քան թե այս խոսքը՝ «դու սրիկա ես»:

ՌՈՄԵՈ – Պատճառը, Տիբա՛լտ, որ պարտադրում է ինձ քեզ սիրել,
Իմ ցասումն է զսպում այդպիսի ստոր ողջույնիդ համար չեմ կարող ասել՝ ես սրիկա չեմ:
Արդ մնաս բարով: Ես տեսնում եմ, որ ինձ չես ճանաչում:

ՏԻԲԱԼՏ – Լսի՛ր, երեխա՛, դա չի կարող սրբել այն անարգանքը, Որ արել ես ինձ:
Ուստի ետ դարձիր և քաշիր սուրդ:

ՌՈՄԵՈ – Հավատա, ես քեզ անարգած չկամ,
Այլ քո կարծածից սաստիկ եմ սիրում, այդ կհասկանաս,
Երբ որ իմ սիրո պատճառն իմանաս:
Ուրեմն, գոհ եղիր, բարի Կապուլետ:
Օ՜, այդ անունը իմ անունի չափ սիրելի է ինձ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Օ, հեզ, անպատիվ, անարգ հլություն.
Թող ալլա ստոկկատոն այդ բիծը մաքրի:
Տիբալտ, մուկ բռնող, պատրա՞ստ ես մարտի *(սուրը չեռքին՝ մոտենում է Տիբալտին)*:

ՏԻԲԱԼՏ – Ի՞նչ ես ուզում ինձնից:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ոչինչ չեմ ուզում, կատուների մեծահոգի թագավոր,
Ես ուզում եմ միայն քո հինը կյանքերից մեկը:
Այդ մեկի հետ ուզում եմ խաղալ,
Որպեսզի քո հետագա վարմունքի համեմատ մյուս ութն էլ քթիցդ դուրս քաշեմ:
Արդյոք չե՞ս բարեհաճի քո սրի ականջներից բռնած դուրս քաշել պատյանից:
Շտապի՛ր, եթե չես ուզում, որ իմը ավելի շուտ փայլատակի ականջներիդ տակ:

(Հնչում է կռվի երաժշտությունը):

ՏԻԲԱԼՏ – Կանգնած եմ Ձեր դեմ:

(Սուրը մերկացնելով):

ՌՈՄԵՈ – Ազնի՛վ Մերկուտիո, սուրդ տեղը դիր:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Պարո՛ն, պասսադոն քոնն է, սկսի՛ր:

(Մենամարտում են):

ՌՈՄԵՈ – Բենվոլիո՛, շտապ զինաթափի՛ր սրանց:

Ամոթ է, պարոննե՛ր, վե՛րջ տվեք կռվին:
Տիբա՛լտ, Մերկուտիո՛, չէ՞ որ իշխանը
Խիստ արգելել է այս փողոցային ընդհարումները Վերոնայի մեջ:
Ետ կանգնիր, Տիբալտ, բարի Մերկուտիո...

(Տիբալտը Ռոմեոյի թևի տակից վիրավորում է Մերկուտիոյին և փախչում):

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Վիրավորված եմ: Ժանտախտը լափի երկու տներն էլ, իմ վերջը եկավ:
Սի՞թե նա փախավ առանց մի վերքի:

ԲԵՆՎՈԼԻՈ – Վիրավորվա՞ծ ես:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Այո՛, քերծվածք է, մի փոքրիկ քերծվածք, բայց այդ էլ բավ է:
Գնա՛, մի վիրաբույժ բեր:

ՌՈՄԵՈ – Սիրտդ պի՛նդ պահիր, վերքդ մեծ բան չէ:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Ո՛չ, նա մի ջրհորի պես խոր չէ և ոչ էլ մի եկեղեցու դռան չափ ընդարձակ,
Բայց բավական է իր գործը կատարելու համար:
Վաղը իմ մասին լուր հարցրու, և դու կտեսնես, որ ես գերեզմանի մարդ եմ: *(Փորձում է խաղալ):*
Հավատացնում եմ, ես այս աշխարհից գնացի: Ժանտախտը իջնի ձեր երկու գերդաստանների գլխին էլ: Սատանան տանի, մի՞թե մի շուն, մի մուկ կամ մի կատու
Կարող է այնպես ճանկռոտել, որ մարդ մեռնի, մի պոռոտախոս, մի խեղկատակ, մի սրիկա,
Որ թվաբանության բոլոր կանոնների համաձայն է մենամարտում:
Ո՞ր դժոխքից լույս ընկար դու մեր մեջտեղ:
Ես քո թևի տակից վերք ստացա *(ընկնում է)*:

ՌՈՄԵՈ – Ես ուզում էի օգնել:

ՄԵՐԿՈՒՏԻՈ – Բենվոլիո, ինձ մոտիկ մի տուն հասցրու,
Թե չէ մարում եմ: Ժանտախտը լափի ձեր երկու տունն էլ,
Ինձ ճիճուների կերակուր դարձրին: Իմը ինձ հասավ,
Այն էլ շատ սաստիկ: Ա՜խ, ձեր տները...

(Բենվոլիոն, Մերկուտիոյին գրկած, դուրս է):

ՌՈՄԵՈ – Այս ազատանին, սերտ բարեկամս,
Որը իշխանի մոտ ազգականն է, հենց իմ պատճառով
Մահացու կերպով վիրավորված է: Եվ իմ հռչակին
Սև բիծ է նետված Տիբալտի այս ժանտ մարդասպանությամբ:

Անզուսպ Տիբալտի, որ մի ժամից վեր իմ ազգականն է:
Օ՜, քնքուշ Ջուլիետ, գեղեցկությունդ դարձրել է ինձ անզոր կին-
նարմատ
Եվ փափկացրել է իմ բնության մեջ պողպատն արիության:

(Բենվոլիոն վերադառնում է վազելով):

ԲԵՆՎՈԼԻՈ – Ռոմեո՜, Ռոմեո՜, խիզախ Մերկուտիոն հոգին ավանդեց:
ՌՈՄԵՈ – Այս դաժան բախտը որքա՜ն աղետներ դեռ պիտի բերի.
սա լոկ սկիզբն է ահեղ օրերի:

(Տիբալտը վերադառնում է):

ԲԵՆՎՈԼԻՈ – Կատաղի Տիբալտը ետ եկավ կրկին:

(Հնչում է կռվի երաժշտությունը):

ՌՈՄԵՈ – Ո՜ղջ և հաղթակա՜ն, իսկ Մերկուտիոն սպանված...
Արդ, թռի՛ր երկինք, խոհեմ մեղմություն:
Եվ դու, հրաչյա իմ կատաղություն, առաջնորդի՛ր ինձ:
Դե, հիմա: Տիբա՛լտ, սրիկա՛, խոսքը ետ առ վերստին,
Որ մի քիչ առաջ ինձ շնորհեցիր:
Մերկուտիոյի հոգին սպասում է մեր գլխավերևում.
Որ հոգիդ իրեն ուղեկից դառնա:
Կա՛մ դու, կա՛մ թե ես և կա՛մ երկուսով պետք է հետևենք:

(Նրանք մենամարտում են. Տիբալտն ընկնում է և մահանում):

ԲԵՆՎՈԼԻՈ – *(Վախեցած):* Փախի՜ր, Ռոմեո՛, հեռացի՛ր շտապ.
Տիբալտն սպանվեց, քաղաքացիները ոտքի են կանգնած:
Մի՛ կանգնիր ապշած, իշխանը մահվան կդատապարտի,
Եթե քեզ բռնեն: Շո՛ւտ արա, գնա՛, փախի՛ր այստեղից:
ՌՈՄԵՈ – Ես բախտի խենթ եմ: Ավա՛ղ, ավա՜ղ ինձ:
ԲԵՆՎՈԼԻՈ – Ինչո՞ւ ես կանգնել:

(Ռոմեոն փախչում է՝ սուսերը ձեռքին: Փակվում է կարմիր վարագույրը, հնչում է տխուր երաժշտություն):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ

(Գալիս են ծաղրածուները, Նուվոլան լալիս է, մուրևնում է Պայլաչոն, պատմում են կատարվածը)։

ՊԱԼՅԱՉՈ 1 – Լավ բավական է լաց լինես, հիշում ես ինչպես ասաց...
Ո՞ւր են այս կռվի չար դրդիչները:

ՆՈՒՎՈԼԱ 1 – Թույլ տվեք պատմել
Ձեզ այս չարաբաստ կռվի ցավալի հանգամանքները:
Ահա այն մարդը, որ Ռոմեոյի ձեռքով սպանվեց,
Որ սպանել էր իշխանի ազգականին՝ քաջ Մերկուտիոյին:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Ո՞վ այս արյունոտ կռիվն սկսեց:

ՆՈՒՎՈԼԱ 1 – Տիբալտը, որին Ռոմեոն տապալեց այստեղ,

ՊԱԼՅԱՉՈ 1 – Ռոմեոն՝ Տիբալտին, իսկ Մերկուտիոյին նա տապալեց վար,
Ո՞վ կհատուցի նրա այդ անգին արյունի համար:

ՆՈՒՎՈԼԱ 1 – Ռոմեոն՝ երբեք: Նա Մերկուտիոյի բարեկամն էր,
Նրա մեղքն այն էր, որ նա ավարտեց
Ինչ որ օրենքը պիտի վերջացներ՝ Տիբալտի կյանքը:

ՊԱԼՅԱՉՈ 1 – Այդ մեղքի համար
Մենք արտաքսում ենք նրան այս երկրից:
Ինքս զոհ դարձա ձեր ատելության.
Ձեր բիրտ ու վայրագ վեճերի համար հոսում է ահա և արյունն իմ տան,
Արցունք ու աղերս մեղք չեն քավելու,
Չդիմեք դրանց: Ռոմեոն թող շուտ այստեղից չքվի.
Եթե բռնվեց, այդ նրա վերջին ժամը կլինի:

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ

(Ծաղրածուները բացում են կարմիր վարագույրը, երևում է ննջակը՝ Ջուլիետի անկողինը, և Ջուլիետը երգում է իր երգը: Մյուսում է դայակը՝ պարանը ձեռքին):

ՋՈՒԼԻԵՏ – Նա լուր է բերում և ամեն լեզու, որ Ռոմեոյի անունն է հնչում.
Երկնային վսեմ լեզվով է խոսում:
Դե, խոսի՛ր, դայա՛կ: Այդ ի՞նչ է քեզ մոտ, այն պարանը, չէ՞,
Որը Ռոմեոն խնդրեց քեզ բերել:

ԴԱՅԱԿ – Այո՛, պարանն է: *(Խիստ տխուր և վրդովված):*

(Պարանը նետում է ցած):

ՋՈՒԼԻԵՏ – Վա՜յ ինձ, ի՞նչ լուր կա: Ինչո՞ւ ես ձեռքերդ այդպես գալարում:

ԴԱՅԱԿ – Ա՜խ, ինչ սև օր է: Նա մեռա՜վ, մեռա՜վ:
Մեր տունը քանդվեց, մեր տունը քանդվեց:
Ավա՜ղ, նա մեռավ: Գնա՜ց, սպանվե՜ց: Նա մեռա՜վ, մեռա՜վ...

ՋՈՒԼԻԵՏ – Կարո՞ղ է երկինքն այդքան չար լինել:

ԴԱՅԱԿ – Ռոմեոն կարող է,
Իսկ երկինքը՝ ոչ: Օ՜, Ռոմեո՜, Ռոմեո՜:
Ո՞ւմ մտքով կանցներ... ավա՜ղ, Ռոմեո՜...

ՋՈՒԼԻԵՏ – Ինչ ճիվաղն ես դու, որ այդ աստիճան չարչարում ես ինձ:
Նման տանջանքից կարող են միայն դժոխքում գոռալ:
Սի՞ր Ռոմեոն անճնասպան եղավ, գեթ ասա՝ «այո»,
Իսկ եթե ճիշտ չէ, արագ ասա՝ «ոչ»:
Մի կարճ հնչյունով թող ես կործանվեմ կամ երջանկանամ:

ԴԱՅԱԿ – Տիբալտը մեռած է, Ռոմեոն՝ աքսորված,
Եվ Ռոմեոն է սպանել նրան և նետվել աքսոր:

ՋՈՒԼԻԵՏ – Ռոմեոն Տիբալտի արյո՞ւնն է թափել: Օ՜, տեր իմ Աստված:

ԴԱՅԱԿ – Ա՜խ, թափե՜ց, թափե՜ց: Վա՜յ, ինչ սև օր է: Տիբալտին սպանեց: *(Լաց է լինում և գոռում):*

ՋՈՒԼԻԵՏ – Օձ սիրտ, ծածկված ծաղկազարդ դեմքով:
Արդյոք վիշապը ունեցե՞լ է այսքան սիրունատես որջ:
Չքնաղ բռնակալ, օ՜, դու սատանա հրեշտակաղեմ.
Ասա, բնություն, էլ ի՞նչ գործ անես դու դժոխքի հետ,
Երբ ամփոփեցիր մի դևի հոգին
Այսքան պերճ մարմնի՝ այս մահկանացու արքայության մեջ:
Եղե՞լ է մի գիրք, որ պարունակի այսչափ զազիր նյութ
Այսքան ճոխ կազմով:

ԴԱՅԱԿ – Էլ տղամարդկանց չպետք է վստահել:

Ո՛չ պատիվ ունեն, ո՛չ պարկեշտություն: Բոլորը դավող,
Բոլորն ուխտադրուժ, բոլորը չնչին և կեղծավոր են:
Ամոթ Ռոմեոյին:

ՋՈՒԼԻԵՏ – *(Խիստ հուզված):* Պալարվի լեզուդ այդ խոսքի համար:
Նա ձախատինքի համար չի ծնված,
Ամոթը նրա ճակատի վրա շիկնում է բազմել,
Դա փառքի գահն է, ուր լոկ պատիվը պետք է թագադրվի՝
Իբրև միակ տեր համայն աշխարհի:
Օ՜, ինչ հրեշն եմ, որ հանդգնեցի նրան կշտամբել:

ԴԱՅԱԿ – Գովում ես մեկին, որ սպանել է մորեղբորորդո՞ւդ:

ՋՈՒԼԻԵՏ – Պարսավես մեկին, որ ամուսի՞նս է:
Ավա՜ղ, իմ խեղճ տեր, էլ ո՞վ կարող է անունդ շոյել,
Երբ ես՝ ընդամենը երեք ժամվա կինդ, հոշոտել եմ այն,
Բայց դու, անօրեն, ինչո՞ւ սպանեցիր մորեղբորորդուս,
Մորեղբորորդիս պիտի սպաներ քանզի ամուսնուս:
Տիբալտը մեռած է, Ռոմեոն՝ աքսորված:
Այդ «աքսոր» բառը, այդ մեն մի բառը՝ «աքսոր», «աքսորված,
Ուղիղ տասը հազար Տիբալտ սպանեց:
Ռոմեոն աքսորվա՜ծ:
Չկա ո՛չ վախճան, ո՛չ սահման, ո՛չ չափ
Այդ բառի մահվան: Եվ չկան բառեր այդ վշտի համար:
Իմ ծնողները որտե՞ղ են, դայա՛կ:

ԴԱՅԱԿ – Ողբում են, կոծում Տիբալտի վրա: Ուզո՞ւմ ես գնալ, ես քեզ կտանեմ:

ՋՈՒԼԻԵՏ – Թող նրանք լվան արտասուքներով նրա վերքերը, երբ դրանք ցամքեն,
Երկար կհոսի դեռ իմ արցունքը իմ Ռոմեոյի աքսորի համար:
Վերցրո՛ւ պարանը:
Եվ մահը պետք է կուսությունս առնի, ոչ թե Ռոմեոն:

ԴԱՅԱԿ – Գնա՛ սենյակդ, ես Ռոմեոյին իսկույն կգտնեմ,
Որ քեզ սփոփի: Իր տեղը գիտեմ.
Լսի՛ր՝ Ռոմեող նույնիսկ այս գիշեր այստեղ կլինի:
Գնում եմ բերեմ: Նա թաքնված է սրբազան հոր մոտ:

ՋՈՒԼԻԵՏ – Օ՜, գտի՛ր նրան: Այս մատանին տուր ազնիվ ասպետիս:
Ասա շտապով թող գա՝ իր վերջին հրաժեշտն առնի:

(Գնում են, փակվում է ապիրատակ վարագույրը):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆՅՈՓԵՐՈՐԴ

(Եկեղեցի: Ռոմեոն ներս է մտնում շատ հուզված, հանում է դաշույնը պատյանից և ուզում է ինքնասպան լինել):

Հ. ԼԱՎՐԵՆՏԻՈՍ – (Տեսանյութ)
Կանգնի՛ր, հեռո՛ւ տար հուսահատ ձեռքդ:
Տղամա՛րդ ես դու: Քո մարմնի ձևը աղաղակում է, որ տղամարդ ես,
Բայց արցունքներդ կնոջ են վայել. քո բիրտ արարքը
Գազանի անմիտ մոլեգնություն է միայն ցույց տալիս
Սուրը կարգս վկա, ես կարծում էի՝ տոկուն ես հոգով:
Տիբալտին մեռցրիր, այժմ ուզում ես քե՞զ էլ մեռցնել
Եվ քո Ջուլիետին, որը ապրում է միայն քեզանով,
Մի անիծյալ ոխ գլխիդ բարդելով:
Ինչո՞ւ ես հեգնում քո ծնված օրը, երկինք և երկիր,
Քանի որ ծնունդ, երկիր և երկինք համախմբված են
Իրրև մեկ՝ քո մեջ, որ դու ուզում ես հանկարծ կորցնել:
Թո՛ւհ, թո՛ւհ, ամո՛թ է:
Դե՛, վեր կաց, ա՛յ մարդ. Ջուլիետդ ողջ է,
Ում սիրո համար հենց մի քիչ առաջ մեռած էիր դու:
Դու բախտավոր ես: Տիբալտը մեռցնել էր կամենում քեզ,
Սակայն Տիբալտին ինքդ մեռցրիր, այդ բանի մեջ էլ դու երջանիկ ես:
Օրենքը, որ քեզ մահ էր սպառնում, ընկեր դարձավ քեզ
Եվ փոխարինեց մահը աքսորով: Այդ էլ մեծ բախտ է:
Բուռ-բուռ օրհնանք է թափվում քո գլխին:
Սիրուհուդ մոտ գնա, ինչպես որոշված էր:
Եվ իր սենյակը, սփոփիր նրան,
Բայց շուտ դուրս արի, քանի տակավին պահակ չի կարգված,
Քանզի չես կարող անցնել Մանտուա,
Ուր պիտի ապրես, մինչև որ գտնենք պատշաճ ժամանակ
Հռչակելու ձեր ամուսնությունը և ձեր տները իրար հաշտեցնել,
Իշխանից խնդրել, որ ետ կանչի քեզ,
Բյուրաբյուր անգամ ուրախություններ սրտիդ շաղ տալով,
Քան թե մեկնում ես այժմ ողբալով: *(Մտնում է դայակը):*
Շտապի՛ր, դայա՛կ, տիրուհուդ բարևի՛ր,
Պատվիրի՛ր նրան, որ արագացնի բոլորին քնել,
Հիմա Ռոմեոն այնտեղ է գալու:

ՌՈՄԵՈ – Այո՛, և հայտնիր իմ սիրեցյալին, որ պատրաստ լինի ինձ կշտամբելու:

ԳԱՅԱԿ – Նա այս մատանին խնդրեց ձեզ հանձնել:
Շտապե՛ք, տե՛ր իմ, շո՛ւտ արեք, ուշ է:

(Գնում է):

ՌՈՄԵՈ – *(Մայրաքին մարդը դնելով):* Ինչպե՞ս սա սրտիս նոր ուժ է տալիս:
Եթե չկանչեր ինձ մի ավելի մեծ ուրախություն,
Մեծ վիշտ կլիներ այսքան շուտափույթ անջատվել քեզնից:
Մնաս բարով, հայր սուրբ:

(Գնում է):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ

(Մտնում է Մերին, փռում է կարմիր կտորները: Մի սեվյակ Կապուչեփի տրանը, մտնում են պարոն և տիկին Կապուչեփները, հնչում է երաժշտություն)։

Պ. ԿԱՊՈՒՉԵՏ – Դեպքերը այնքան տարաբախտ ընթացք ստացան,
Որ մեր աղջկան նախապատրաստել ժամանակ չեղավ:
Նա մեր Տիբալտին խիստ շա՜տ էր սիրում,
Նույնպես և ինքս: Բայց մենք ծնված ենք մեռնելու համար:
Իսկ հիմա ուշ է: Նա այսօր այլևս ներքև չի գալու:
Խոսե՛ք նրա հետ և միտքն իմացե՛ք իր ամուսնության:

Տ. ԿԱՊՈՒՉԵՏ – Իմ աչքի վրա: Առավոտ կանուխ միտքը կիմանամ,
Իսկ այսօր գիշեր նա միայնակ է իր տրտմության հետ:

Պ. ԿԱՊՈՒՉԵՏ – Այ կին, լսիր ինձ, քնելուց առաջ նրա մոտ գնա
Եվ հայտնիր իրեն Պարիսի սերը,
Եվ ասա նույնպես, լավ ականջ դիր ինձ, գալ չորեքշաբթի...
Այսօր ի՞նչ օր է:
Երկուշաբթի՞ է: Լավ, չորեքշաբթին շատ շուտ կլինի:
Հինգշաբթին լավ է. որ այս հինգշաբթի
Նա պատրաստ լինի պսակվելու ազնիվ կոմսի հետ:
Բարի գիշեր Ձեզ:

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ

(Բացվում է սպիտակ վարագույրը: Ռոմեոյի և Ջուլիետի անկողնային տեսարանը՝ սրվերային, նավակի վրա, որն ուղեկցվում է երաժշտությամբ: Լույսը բացվում է: Դուրս են գալիս սրվերից):

ՋՈՒԼԻԵՏ – Գնա՞լ ես ուզում, դեռ լույսը մոտ չէ:
ՌՈՄԵՈ – Գիշերվա ջահերն արդեն հանգչում են,
Իմ գնալը կյանք է, իսկ մնալը՝ մահ:
ՋՈՒԼԻԵՏ – Այն փայլուն լույսը արշալույսը չէ, ես ճանաչում եմ:
Ուստի քիչ էլ կաց, դեռևս շուտ է, ինչո՞ւ ես մեկնում:
ՌՈՄԵՈ – Թող ձերբակալեն, թող սպանեն ինձ,
Ես գոհ կլինեմ, եթե մնալս հաճելի է քեզ:
Եկ, մահ, եկ բարով, քանզի այդպես է Ջուլիետի կամքը:
Այդպես չէ՞, հոգյակ, խոսե՛ նք, դեռ լույս չէ:
ՋՈՒԼԻԵՏ – Օ՛, լույս է, լույս է, շտապ հեռացիր:
Արտույտն է այդքան անդադար երգում՝
Խառնաձայն շեշտեր և անդուր ճիչեր վեր արձակելով:
Ոմանք ասում են, թե արտույտն ունի անուշ գեղգեղանք:
Այս մեկն այդպես չէ, որովհետև նա անջատում է մեզ:
Հիմա գնա, լույսն հետզհետե պայծառանում է:
ՌՈՄԵՈ – Լույսը հետզհետե պայծառանում է, իսկ մութն անընդհատ տիրում մեզ վրա:

(Մտնում է դայակը):

ԴԱՅԱԿ – Տիրուհի՛:
ՋՈՒԼԻԵՏ – Ի՞նչ է, դայակ:
ԴԱՅԱԿ – Ձեր մայրը հիմա այստեղ է գալու:
Լույսը բացվում է, զգույշ եղեք, զգո՛ ւյշ:

(Գնում է):

ՋՈՒԼԻԵՏ – Ուրեմն, լուսամուտ, լույսը թող ներս գա, կյանքը դուրս գնա:
ՌՈՄԵՈ – Դե, մնաս բարով: Մի համբույր միայն, և ես ցած կիջնեմ:

(Համբուրում է և իջնում):

ՋՈՒԼԻԵՏ – Ուրեմն գնացի՞ր իմ տեր, իմ ընկեր և իմ սիրական.
Ինձ լուր ուղարկիր օրվա ամեն ժամին:
ՌՈՄԵՈ – Օ՛, մնաս բարով: Եվ ոչ մի առիթ չեմ փախցնի կյանքում,
Որ քեզ ուղարկեմ ես սեր ու ողջույն:

ՋՈՒԼԻԵՏ – Սի՞թե հույս ունես, որ մեկ անգամ էլ մենք կհանդիպենք:
ՌՈՄԵՈ – Տարակույս չունեմ: Եվ մեր այս քաշած բոլոր ցավերը
Մեզ համար քաղցր զրույց կդառնան գալիք օրերում:
ՋՈՒԼԻԵՏ – *(Հիասարսուռ):* Աստվա՜ծ իմ, հոգիս չարագուշակ է:
Հիմա որ ցած ես, կարծես այստեղից
Ես քեզ տեսնում եմ գերեզմանի մեջ:
Կամ աչքս է խաբում, կամ դու ես գունատ:
ՌՈՄԵՈ – Հավատա, հոգիս, ճիշտ այդպես դու ես աչքիս երևում:
Դե մնաս բարո՜վ:

(Գնում է):

ՋՈՒԼԻԵՏ – Օ, բա՜խտ, ասում են՝ դու հեղհեղուկ ես:
Թե անհաստատ ես, էլ ո՞ւր ես բախվում այնպիսի մարդու,
Որ հռչակված է իր տոկունությամբ:
Սակայն հեղհեղուկ եղիր դու, ով բախտ,
Քանզի հույս ունեմ նրան շատ երկար չես պահի քեզ մոտ,
Այլ ետ կդարձնես:

(Ջուլիետը պառկում է անկողնում):

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – *(Ներսից)* Դո՛ւստր իմ, արթո՞ւն ես:
ՋՈՒԼԻԵՏ – Ո՜վ է ինձ կանչում:
Սի՞թե իմ մայրն է: Նա դեռ չի՞ քնել, թե՞ վաղ է զարթնել,
Ինչո՞ւ է այսքան կանուխ այցելում:

(Մտնում է տիկին Կապուլետը):

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ինչպե՞ս ես, Ջուլիե՛տ:
ՋՈՒԼԻԵՏ – Մա՛յր իմ, ես լավ չեմ:
Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Դեռ արտասվո՞ւմ ես Տիբալտի վրա:
Արցունքո՞վ կուզես իր գերեզմանից դուրս մղել նրան:
Թեկուզ և հանես, բայց անկարող ես վերստին կյանք տալ:
Ուրեմն վերջ տուր, մի քիչ ողբ ու լաց սիրո նշան է,
Իսկ սաստիկ վիշտը նշան է քիչ խելքի:
ՋՈՒԼԻԵՏ – Սեծ է կորուստը, թո՛ւյլ տուր արտասվեմ:
Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Լացով կարող ես դու կորուստն զգալ,
Բայց ոչ թե նրան, որին ողբում ես:
ՋՈՒԼԻԵՏ – Ես նրան զգալ այլ կերպ չգիտեմ, քան անվերջ ողբալ:
Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ես գիտեմ, աղջի՛կ, այնքան չես լալիս Տիբալտի համար,
Որքան չարագործ այն սրիկայի, որ դեռ ապրում է:
ՋՈՒԼԻԵՏ – Ո՞ր սրիկայի:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Այն նույն սրիկան, ինքը՝ Ռոմեո՞ն:

ՋՈՒԼԻԵՏ – *(Մեկուսի)* Նա և սրիկա՞ – հազար մղոնով հեռու են իրարից:
Օ՜, ներիր, Աստված: Ես բոլոր սրտով ներում եմ նրան:
Թեպետ դեռ ոչ ոք սիրտս չի այրել այդ մարդու նման:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Պատճառը այն է, որ մարդասպանը դեռ կենդանի է:

ՋՈՒԼԻԵՏ – *(Մեկուսի)* Եվ այնքա՞ն հեռու իմ բազուկներից:
Ինքս կուզեի Տիբալտի մահվան վրեժը լուծել:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Մենք այդ կլուծենք, դու անհոգ եղիր:
Մի լար այլևս, կգրեմ մեկին Մանտուայի մեջ,
Ուր պետք է ապրի նաև այդ շրջիկ աքսորականը,
Նրան այնպիսի մի թույն խմեցնել,
Որ Տիբալտի մոտ իսկույն սլանա:
Այնժամ հույս ունեմ դու գոհ կմնաս:

ՋՈՒԼԻԵՏ – Ո՛չ, Ռոմեոյով ես չեմ հագենա Մինչև չտեսնեմ ես սրան... մեռած *(կեղծում է խոսքը)*,
Տիբալտի համար այնքան սաստիկ է խեղճ սիրտս խոցված:
Եթե կարող ես դու գտնել մեկին,
Որ թույնը տանի, ինքս հանձն կառնեմ խառնուրդը շինել:
Ընդունելուն պես Ռոմեոն իսկույն
Հանգիստ քուն կառնի... սիրտս այրվում է,
Երբ որ ես նրա անունն եմ լսում, ու ձեռքս չի հասնում,
Որ իմ ազգական Տիբալտի հանդեպ զգացած տապը
Ես նրա մարմնի վրա զովացնեմ:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Դու թույնը շինի՛ր, ես մարդ կգտնեմ:
Իսկ հիմա, աղջիկ, քեզ պետք է ուրախ լուրեր հաղորդեմ:

ՋՈՒԼԻԵՏ – Սուգի օրերին վայել չէ խնդալ: Ի՞նչ ուրախ լուր է…

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հայրդ, դու գիտես, խի՞ստ հոգատար է:
Այդ վիշտը քեզնից վանելու համար
Նա հանկարծակի վճռել է տոնել մի ցնծության օր,
Որին դու երբեք չէիր սպասում, և ոչ էլ՝ ինքս:

ՋՈՒԼԻԵՏ – Աչքս լույս, մայրի՛կ, իսկ այդ ի՞նչ լուր է:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Այն է, զավակս, որ այս հինգշաբթի՝ վաղ առավոտյան,
Սեծատոհմիկ կոմս, ջահել Պարիսը, Սուրբ Պետրոսի մեջ
Քեզ բախտ կունենա առաջնորդելու որպես ուրախ հարս:

ՋՈՒԼԻԵՏ – Երդվում եմ Պետրոսի սուրբ եկեղեցով, նաև Պետրոսով,
Որ ես նրա հետ չեմ ամուսնանա:
Զարմանում եմ այս հապճեպի վրա:
Նա, ով ուզում էր ինձ հետ պսակվել,

Նախապես պետք է սեր հայտնած լիներ:
Խնդրում եմ, մայրի՛կ, հայտնեք իմ հորը և իմ տիրոջը,
Որ ես չեմ ուզում ղեռ ամուսնանալ:
Իսկ երբ այդ լինի,
Կգերադասեմ ես Ռոմեոյի համար կին դառնալ, որին ատում եմ,
Քան թե Պարիսին: Իսկապե՞ս լուր էր:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հայրդ գալիս է: Ինքդ ասա նրան
Եվ տես, թե ինչպես նա կընդունի այդ:

(Մտնում են պ. Կապուլետը և դայակը):

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Երբ որ արևը անհետանում է, մեղմ ցող է իջնում,
Բայց եղբորորդուս արևից հետո անձրևում է հորդ.
Ի՞նչ է, աղջիկս, արտասուքների աղբյուր ես դարձել,
Դեռ տարափո՞ւմ ես, փոքրիկ մարմինդ
Թե նավ, թե օվկիան, թե հողմ ես շինել:
Քանզի աչքերդ ծովի են նման,
Ուր արցունքն անվերջ տեղատվում է և մակընթացում:
Մարմինդ նավ է:
Եվ նավարկում է այդ աղի ծովում:
Հառաչանքներդ հողմեր են ծովի,
Որ մաքառում են արցունքներիդ հետ, դրանք էլ՝ նրանց:
Թե հանկարծահաս մի խաղաղություն վրա չհասնի,
Քո փոթորկածուփ մարմինը շատով նավաբեկ կանեն:
Ի՞նչ է, այ կնիկ, արդյո՞ք հայտնեցիր մեր կամքը նրան:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Հայտնեցի, տեր իմ, բայց նա չի ուզում:
Գլուխը քարը, թող պսակվի իր գերեզմանի հետ:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Սպասի՛ր, ա՛յ կին, համբերի՛ր տեսնեմ:
Ի՞նչ է, չի՞ ուզում: Եվ մեզանից էլ շնորհակալ չէ՞:
Եվ չի՞ պարծենում և չի՞ համարում իրեն բախտավոր,
Որ մենք իր նման անարժան մեկին գտել ենք այդպես
Մի առաքինի, ազնիվ փեսացո՞ւ:

ՋՈՒԼԻԵՏ – Ես չեմ պարծենում, բայց Ձեր արածից շնորհակալ եմ:
Ինչպե՞ս պարծենամ ատելի բանով *(հեգնանքով)*:
Այո՛, և նույնիսկ շնորհապարտ եմ... ատելի մարդուն:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ի՞նչ է այդ, ի՞նչ է, հիմար իմաստակ *(զայրացած)*:
Այդ ի՞նչ խոսքեր են, «ես պարծենում եմ», «ես չեմ պարծենում»,
«Շնորհակալ եմ», «շնորհակալ չեմ»: Օրիորդ փափկասուն,

Կուզես պարծեցիր կամ մի պարծենա,
Շնորհակալ եղիր կամ թե մի լինիր,
Գողտրիկ ոտքերդ սակայն պատրաստի՛ր, որ այս հինգշաբթի
Կոմս Պարիսի հետ Սուրբ Պետրոս գնաս,
Թե չէ բռնությամբ ես քեզ քարշ կտամ:
Կորիր աչքիցս, դու, կին անպիտան, կորիր, ընկեցիկ,
Դեղնաղեմ դու լիրբ: *(Ձեռքը բարձրացնում է, որ խփի)*:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ամո՛թ է, ամո՛թ, գժվեցիր, ի՞նչ է:

ՋՈՒԼԻԵՏ – Ա՜խ, բարի հայր իմ, տես, պաղատում եմ, ես ծունկի իջած,
Մի քիչ համբերիր, թող մեկ բառ ասեմ:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Չքվի՛ր աչքիցս, դու անհնազանդ, հիմար, անզգամ:
Ահա իմ խոսքը՝ կա՛մ այս հինգշաբթի պետք է ժամ գնաս,
Կա՛մ թե երեսիս երբեք չերևաս:
Ո՛չ խոսք, ո՛չ ծպտուն: Մի՛ պատասխանիր,
Ձեռքս քոր է գալիս... Ա՛յ կին, տեսնո՞ւմ ես, տրտնջում էինք,
Թե ինչու աստված մեկ զավակ տվեց, ոչ թե ավելին:
Այժմ տեսնում ենք՝ այդ մեկն էլ շատ է,
Եվ դա աներեք է մեզ համար տրված:
Չքվի՛ր անմո՜թ *(հրում է, գցում գետնին Ջուլիետին)*:

ԴԱՅԱԿ – Փրկի՛ր Նրան, Աստվա՛ծ:
Տեր իմ, ամոթ է այդպես կշտամբել ձեր խեղճ աղջկան:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Իսկ ինչի՞ համար, տիկին խելքի ծով:
Լեզուդ քեզ քաշիր: Գնա՛, քեզ նման պառավների հետ դու շատախոսի՛ր:

ԴԱՅԱԿ – Վատ բան չասացի:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Լռի՛ր, ասում եմ:

ԴԱՅԱԿ – Բերան բանալու իրավունք չկա՞:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Պապանձվի՛ր, քավթա՜ռ:
Խելոք խոսքերդ պահի՛ր սանամորդ բաժակի համար: Այստեղ մեզ պետք չէ:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Շատ եք տաքացած:

Պ. ԿԱՊՈՒԼԵՏ – Վկա է Աստված, կխելագարվեմ:
Ցերեկ և գիշեր, տանը թե դրսում,
Մարդկանց շրջանում կամ թե առանձին մի հոգս է եղել՝
Պսակել Նրան:
Եվ այժմ, երբ որ իշխանատոհմիկ մի մարդ եմ գտել,
Կալվածքով հարուստ, ջահել, բարեկիրթ,
Որ խճողված է, ինչպես ասում են, ազնիվ ձիրքերով,

Եվ ներդաշնակ է, որքան կարող է միտքը պատկերել,
Եվ հանկարծ մի խենթ ճղճղան հիմար,
Մի լալկան տիկնիկ իր բախտից փախչի՝
Պատասխանելով «ես չեմ պսակվի», «չեմ կարող սիրել»,
Շատ դեռահաս եմ, «խնդրեմ, ինձ ներեք»:
Կներեմ միայն, երբ ամուսնանաս.
Թե չէ արածիր, ուր որ կամենաս, ինձ հետ չես ապրի:
Կշռիր, լավ խորհիր, կատակ չեմ անում:
Հինգշաբթին մոտ է, ձեռքդ դիր սրտիդ և լավ մտածիր.
Թե իմ աղջիկն ես, ուրեմն, կտամ քեզ բարեկամիս.
Եթե ոչ, կորի՛ր, հաց մուրա դրսում,
Մեռի՛ր փողոցում, էլ այսուհետև իմ աղջիկը չես:
Ոչ էլ կտանաս մի մազ իմ տանից:
Հաստատ իմացիր, գլխիդ ճարը տես, ուխտս անխախտ է:

(Հեռանում է զայրացած):

ՋՈՒԼԻԵՏ – Սի՞թե ամպերում գութ չկա թառած,
Չէ՞ որ նա վշտիս հատակն է տեսնում:
Օ՜, քաղցր մայրիկ, ինձ դուրս մի նետեք,
Գոնե մեկ ամսով կամ մեկ շաբաթով պսակս ուշացրեք:
Թե դեմ եք դրան, իմ հարսանեկան մահիճն ուրեմն,
Այն մռայլ շիրմում, ուր որ Տիբալտն է, այնտեղ շինեցեք:

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ինձ հետ մի խոսիր, բերան չեմ բանա,
Ինչ կուզես արա, քեզ հետ գործ չունեմ:

(Գնում է):

ՋՈՒԼԻԵՏ – Օ՜, տեր իմ, Աստված: Դայա՛կ, ի՞նչ անեմ:
Ամուսինս այստեղ՝ երկրի վրա է, երդումս՝ երկնքում:
Ինչո՞ւ երկինքը դավեր է լարում
Ինձ պես մի տկար, խեղճ էակի դեմ: Խոսի՛ր, իմ դայակ,
Սի՞թե խոսք չունես ինձ մխիթարող:

ԴԱՅԱԿ – Ունեմ, լսիր ինձ: Ռոմեոն արդեն
Աքսորի մեջ է: Ամբողջ աշխարհով գրազ կգամ ես,
Որ չի հանդգնի նա այլևս գալ և պահանջել քեզ:
Գալու դեպքում էլ ծածուկ պետք է գա:
Ուստի քանի որ գործը այսպիսի ընթացք ստացավ.
Կարծեմ լավն այն է, որ ամուսնանաս կոմս Պարիսի հետ:
Հոգովս եմ երդվում, կբախտավորվես
Դու քո այս երկրորդ ամուսնության մեջ.

Նա գերազանց է, քան առաջինը: Եթե լավ էլ չէ,
Քո առաջինը արդեն մեռած է կամ թե մեռածի նման մի բան է,
Թե ողջ էլ լինի, քեզ օգուտ չկա:

ՋՈՒԼԻԵՏ – Սրտո՞վ ես խոսում:

ԴԱՅԱԿ – Նույնպես և հոգով, թե սուտ եմ ասում, երկուսն էլ չքվեն *(խաչակնքում է)*:

ՋՈՒԼԻԵՏ – Ամե՜ն: *(Սառը հայացքով):*

ԴԱՅԱԿ – Ի՞նչ:

ՋՈՒԼԻԵՏ – Ինձ սքանչելի մխիթարեցիր:
Ներս գնա, դայա՛կ, և ասա մորս, որ ես իմ հորը սաստիկ վշտացրի,
Ուստի գնում եմ հայր Լավրենտի մոտ՝
Խոստովանելու և արձակվելու այդ մեղքի համար:

ԴԱՅԱԿ – Իսկույն կգնաս: Խելացի քայլ է:

(Գնում է):

ՋՈՒԼԻԵՏ – *(Բղավելով)* Նզովյալ պառավ, օ՜, դև զազրելի:
Գնա, խորհրդատու, սրանից հետո
Դու և իմ սիրտը երկպառակտված եք:
Գնամ սուրբ հոր մոտ մի ճար խնդրելու,
Թե հնար չեղավ, ինքս զորություն ունեմ մեռնելու:

(Գնում է: Փակվում է սպիտակ վարագույրը):

ՏԵՍԱՐԱՆ ՔԱՂԱՆԵՐՈՐԴ

(Եկեղեցի: Ներս է մտնում Ջուլիետը՝ սև թիկնոցով, և ծնկում էկրանի առջև):

Հ. ԼԱՎՐԵՆՏԻՈՍ – Եթե ուժ ունես անճնասպան լինել,
Քան ամուսնանալ կոմս Պարիսի հետ,
Այդ դեպքում, գուցե, անարգանքից խույս տալու համար
Դու կձեռնարկես մահվան պես մի բան,
Դու որ հոժարես նույնիսկ բուն մահվան:
Թե քաջասիրտ ես, ես կտամ ճարը:
Լսի՛ր, ուրեմն, ուրախ տուն գնա և համաձայնվիր
Ամուսնանալու կոմս Պարիսի հետ: Վաղը չորեքշաբթի է:
Այնպես կարգադրիր, որ այդ գիշեր դու մենակ քնես
Եվ դայակիդ էլ սենյակ չթողնես:
Առ այս սրվակը: Երբ անկողին մտնես, խմիր այս ամբողջ թորված հեղուկը,
Եվ վայրկենապես երակներիդ մեջ
Կհոսի մի պաղ, թմրեցուցիչ հյութ,
Քո բազկերակը այլևս չի բախի բնական հունով, այլ կդադարի,
Շունչ ու ջերմություն չեն հայտնի, որ դու տակավին ողջ ես,
Այտերիդ, շուրթիդ կարմիր վարդերը իսկույն կխամրեն,
Մոխրի գույն կառնեն. կփակվեն աչքիդ լուսամուտները,
Ինչպես լինում է մահվան ժամանակ:
Ամեն մի մարմին, զրկվելով ճապուկ իր ղեկավարից,
Մահվան պես կարծր ու պաղ կդառնա:
Եվ մեռելային այդ անիրական նմանության մեջ
Կմնաս ամբողջ քառասուներկու ժամ,
Հետո կզարթնես, կարծես մի անուշ բերկրալի քնից:
Արևածագին, երբ որ փեսան գա
Քեզ զարթնեցնելու, նա քեզ կգտնի մահճիդ մեջ մեռած:
Այդ նույն ժամանակ, նախքան կսթափվես,
Ես Ռոմեոյին նամակով շպապ լուր կտամ մեր այդ հնարքի մասին:
Նա այստեղ կգա, և միևնույն դու քնից զարթնես:
Եվ հենց նույն գիշեր
Նա քեզ կփախցնի դեպի Մանտուա:

(Ծաղրածուն Ջուլիետին է փոխանցում սրվակը և հեռանում):

ՋՈՒԼԻԵՏ – Սե՛ր, դու ինձ ուժ տուր, դա ինձ կփրկի: Մնաս բարով, հայր սուրբ:

(Հեռանում է):

ՏԵՍԱՐԱՆ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

(Կապուլետների տանը: Ներս է մտնում Ջուլիետը, հանում է սև թիկնոցը և հագնում է սպիտակ հագուստը):

ՋՈՒԼԻԵՏ – Մնացեք բարով, Աստծուն է հայտնի, թե ե՛րբ մենք իրար կտեսնենք մեկ էլ:
Մի թույլ պաղ երկյուղ գալարվում է իմ երակների մեջ,
Որ սառեցնում է գրեթե բոլոր իմ ջերմությունը:
Ետ կանչեմ նրանց, քաջալերեն ինձ:
Դայա՛կ: Բայց այստեղ նա ավելորդ է:
Ինձ հարկավոր է մեն-մենակ խաղալ իմ զարհուրելի այս տեսարանը:
Ուրեմն՝ եկ, սրվակ:
Վահ, ի՞նչ կլինի, թե այս ըմպելին վրիպի հանկարծ...
Մի՞թե ինձ պետք է բռնի պսակեն կոմս Պարիսի հետ:
Ո՛չ, սա թույլ չի տա: Դու այստեղ պառկիր:

(Դողքին մի դաշույն դնելով):

Եվ կամ ո՞վ գիտե, գուցե սա թույն է, որ խաբեությամբ
Քահանան տվեց, որ ինձ մեռցնի:
Չէ՞ որ նա ինքն էլ այս ամուսնությամբ անպատիվ կլինի,
Քանզի նախապես ինձ պսակել է Ռոմեոյի հետ:
Այդ երկյուղն ունեմ, միաժամանակ կարծում եմ, որ դա անկարելի է:
Նա ճանաչված է որպես մի սուրբ մարդ:
Իսկ ի՞նչ կլինի, երբ պառկած լինեմ գերեզմանի մեջ
Եվ հանկա՞րծ զարթնեմ նախքան Ռոմեոն
Գա ինձ փրկելու, այդ է սոսկալին:
Արդյոք չե՞մ խեղդվի ես այդ վիրապում.
Որի գարշ բերնով ներս չի թափանցում ոչ մի առողջ օդ:
Չե՞մ մեռնի խեղդված, նախքան Ռոմեոն օգնության կգա:
Կամ եթե ապրեմ, հավանական չէ՞,
Որ ժանտ մտքերը մահվան և դժնի գիշերվա մասին
Եվ այդ սոսկալի վայրի սարսափը,
Մի հին շիրմի մեջ, մի հնադարյան շտեմարանի,
Ուր հարյուրավոր տարիներ ի վեր
Բոլոր պապերիս ոսկերքն են դիզված.
Ուր որ արյունոտ Տիբալտն է նեխվում իր պատանքի մեջ,
Որ նոր հող մտավ, ուր որ ասում են,

Գիշերվա որոշ ժամերին հանկարծ ղևերն են գալիս...
Վա՜յ ինձ, ա՜խ, վա՜յ ինձ: Հավանական չէ՞, որ ես զարթնելով
Չխելագարվե՞մ այս ժանտատեսիլ կերպարանքների ահեղ շուրջպարում:
Արդյոք չե՞մ խաղա խելագարի պես նախահայրերիս կմախքների հետ:
Օ՜, ինձ թվում է՝ մորեղբորորդուս ոգին եմ տեսնում,
Կարծես փնտրում է նա Ռոմեոյին, որ սրով շամփրեց նրա մարմինը:
Հեռու կաց, Տիբա՛լտ: Եկա, Ռոմեո՛: Ահա կենացդ:

(Խմում և ընկնում է իր անկողնու վրա, նավի վարագույրի ետևում):

ՏԵՍԱՐԱՆ ՔԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

(Ջուլիետի սենյակը, մտնում է դայակը)։

ԴԱՅԱԿ – Ջուլիե՛տ, տիրուհի՛ս, Ջուլիե՛տ, տիրուհի՛ս, ինչ խորն է քնած:
Հայդե՛, ուլի՛կս, հայդե՛, տիրուհի՛ս, ամոթ է, վե՛ր կաց:
Ինչ ծուլն ես եղել: Վե՛ր կաց, քաղցրի՛կս, վե՛ր կաց, հարսի՛կս:
Ծպտուն չի հանում: Չլինի՞՝ ուզում ես
Մի շաբաթ քնել: Միամիտ եղիր,
Կոմսը այս գիշեր այնքա՜ն տանջի քեզ,
Որ քունդ փախչի: Վա՜հ, տեր իմ Աստված,
Այսքա՞ն էլ խոր քուն:
Բայց պարտավոր եմ արթնացնել նրան:
Օրիո՛րդ, տիրուհի՛ս, փեսան գալիս է, նա քեզ կթողնի անկողնում պառկած,
Քեզ վեր կթռցնի քնից սարսափած:
Վարագույրը մի կողմ է քաշում:
Վա՜հ, այս ի՞նչ բան է, շորերը հագել, նորից քնե՞լ է: Պետք է արթնացնեմ:
Օրիո՛րդ, արթնացի՛ր, օրիո՛րդ, շուտ վե՛ր կաց:
Վա՜յ ինձ, օգնեցե՛ք, ավա՜ղ, օգնեցե՛ք: Օ՜, նա մեռած է:
Վա՜յ իմ սև օրին, ինչո՞ւ ծնվեցի:
Ինձ օղի հասցրեք, իմ տե՜ր, իմ տիկի՜ն:

(Դայակը ընկնում է գետնին և լաց լինում: Մտնում է տիկին Կապուլետը)։

Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Այս ի՞նչ աղմուկ է:
ԴԱՅԱԿ – Օ՜, ողբալի օր:
Տ. ԿԱՊՈՒԼԵՏ – Ի՞նչ է պատահել:
ԴԱՅԱԿ – Այստեղ նայեցեք: Օ՜, ինչ սև օր է:
Տ. ԿԱՊՈՒԼԵ – Վա՜յ ինձ, օ՜, վա՜յ ինձ: Միակ զավակս, իմ միակ կյանքս:
Վե՛ր կաց, աչքդ բաց, եթե ոչ, ես էլ քեզ հետ կմեռնեմ:
Ճչա՛, այ կնիկ, օգնության կանչի՛ր:

(Փակվում է կարմիր վարագույրը, գալիս են ծաղրածուները, վարագույրի ետևից հնչում է դաշնամուրի կենդանի ևվագակցությունը, ծաղրածուները բացում են վարագույրի մի կեսը)։

ՏԵՍԱՐԱՆ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

(Մանտուա: Կարմիր վարագույրի մի մասն է բաց, և Ռոմեոն վառում է դաշնամուրի վրայի մոմերը, ևսւրում և ևվագում է: Վարագույրի առջևում ևսւրած են բոլոր ծաղրածուները, Նուվոլա 1-ը լաց է լինում):

ՆՈՒՎՈՒԼԱ 1 – Խե՛ղճ Ռոմեո, նա Մանտուայում տառապում է՝ իր երազների մեջ խորհելով:

ՌՈՄԵՈ – Եթե հավատամ քնի քաղցրաբույր հավաստիքներին,
Իմ երազները ինձ ավետում են ցնծագին մի լուր.
Սրտիս իշխանը թեթև է նստել իր գահի վրա:
Այս ամբողջ օրը անսովոր մի ուժ
Ինձ թև է տալիս ուրախ մտքերով:
Երազում տեսա սիրուհիս եկավ, մեռած գտավ ինձ:
Անսովոր երազ, որ թույլ է տալիս մեռյալին խորհել:
Համբույրով այնպես մի կյանք ներարկեց նա շուրթերիս մեջ,
Որ կենդանացա և ինձ զգացի արքա աշխարհի:
Ա՜խ, որքան պետք է սերն անուշ լինի.
Երբ իր ստվերը այսքան անուշ է:

ՊԱԼԱՅԱՉՈ 1 – Հենց այդ պահին էլ իր ծառան մի չարագույժ լուր բերեց Վերոնայից՝ ասելով.
Ջուլիետը լա՜վ է...
Նրա մարմինը ննջում է հանգիստ Կապուլետների դամբարանի մեջ:

ՆՈՒՎՈՒԼԱ 1 – Ռոմեոն ասաց:

ՌՈՄԵՈ – Ջուլիե՛տ, այս գիշեր քեզ մոտ կննջեմ: Եկ հնար գտնեմ:
Օ՜, դու կործանում, ինչ շուտ ես ցատկում հուսահատ մարդկանց մտածության մեջ:

ՊԱԼԱՅԱՉՈ 1 – Եվ գտավ հնար՝ գնելով թույնը դեղավաճառից:

(Պալյաչո 1-ը վաճառում է թույնը Ռոմեոյին, մյուս ծաղրածուները փակում են կարմիր վարագույրը և դուրս են գալիս):

ՌՈՄԵՈ – Ահա քո ոսկին՝ մարդկային հոգու նողկալի թույնը,
Որը գործում է առավել զազիր սպանություններ այս գորշ աշխարհում,
Քան թե այս խղճուկ բաղադրությունը, որ արգելված է վաճառքի համար:
Ես քեզ թույն տվի և ոչ թե դու ինձ:
Դու ոչ թե թույն ես, այլ սպեղանի:

Եկ գնանք ինձ հետ, Ջուլիետի շիրմի վրա քեզ կըմպեմ:

(Գերեզմանատունը. ծաղրածուները բացում են կարմիր վարագույրը ամբողջությամբ, դամբարանի տեսարանը՝ նորից նավմ է, բայց հակառակ կողմով հնչում է տխուր երաժշտություն):

ՌՈՄԵՈ – Շատ հաճախ մարդիկ հոգեվարքի մեջ
Զգում են հանկարծ մի ուրախություն:
Փայլակ են գոչում դա մահից առաջ:
Օ՜, ինչպես ես այս
Փայլակ անվանեմ: Օ՜, սեր իմ, կին իմ:
Մահը, որ ծծեց քո շնչի մեղրը,
Անզոր է եղել քո գեղեցկության վրա իշխելու:
Դու դեռ չես պարտված:
Դրա նշանը փայլում է բոսոր շուրթերիդ վրա և քո այտերին:
Տակավին մահվան գունատ դրոշը չի հասել այնտեղ:
Տիբալտ, այդտեղ ես, արյունաշաղախ քո պատանքի մեջ:
Օ՜, ինչ առավել շնորհ կարող եմ մատուցել ես քեզ,
Քան այն նույն ձեռքով, որ երիտասարդ կյանքդ կործանեց,
Կործանեմ նրան, որ թշնամիդ էր:
Ների՛ր ինձ, Տիբա՛լտ, մորեղբորորդի:
Օ՜, քաղցրիկ Ջուլիետ *(կռանում է և գրկում նրան):*
Ինչո՞ւ տակավին այդքան սիրուն ես:
Հավատա՞մ արդյոք, որ անմյուռ մահը սիրահարված է,
Եվ այդ գարշելի վտիտ հրեշը
Քեզ իբրև հարճ է պահում իր տանը այս խավարի մեջ:
Ես այդ երկյուղից քեզ մոտ կմնամ,
Այս սև պալատից չեմ մեկնի այլևս:
Այստեղ կմնամ, միշտ այստեղ, այստեղ,
Քո որդերի հետ, քո ճաժիշտների:
Այստեղ կգամեմ հավիտենական իմ հանգրվանը՝
Ցնցելով դժպիհ աստղերի լուծը
Աշխարհից հոգնած մարմնիս վրայից:
Աչքեր, նայեք մի վերջին անգամ,
Բազուկներ, մեկ էլ գրկախառնվեք:
Շրթունքներ, ով դուք շնչի դռնակներ, անմենգ համբույրով
Մի հավերժական դաշինք կնքեցեք ագահ մահի հետ:
Եկ, դառն ուղեցույց, եկ, ժանտ առաջնորդ, անհույս նավավար:

Եկ և ջախջախիչ ժայռերին զարկի՛ր քո հողմահալած տաղտուկ նավակը,
Սիրուս կենա՛ցը:

(Խմում է):

Այսպես մեռնում եմ ես մի համբույրով *(համբուրում է և ընկնում նավի վրա՝ Ջուլիետի կողքին)*:

ՋՈՒԼԻԵՏ – *(Զարթնելով):* Ես լավ հիշում եմ, թե որտեղ պետք է այժմ լինեի,
Եվ այնտեղ եմ ես: Ո՞ւր է Ռոմեոս:
Վա՜հ, այս ի՞նչ բան է: Սիրածիս ձեռքում գավաթ կա սեղմված:
Ավա՜ղ, տեսնում եմ, որ թույնն է նյութել տարաժամ վախճան:
Օ՜, ժլա՜տ, անխի՜ղճ:
Բոլորը խմել և ինձ չես թողել մի անուշ կաթիլ՝ փրկության համար:
Ես կհամբուրեմ քո շրթունքները,
Գուցե մի քիչ թույն դեռ նրանց վրա մնացած լինի,
Որ ինձ կազդուրի մեռնելուց առաջ:

(Համբուրում է նրան):

Շուրթերդ տաք են:
Մարդիկ են գալիս:
Ուրեմն շտապեմ, երջանիկ դաշույն.
Ահա քեզ պատյան:
Ժանգոտվի՛ր այդտեղ և տո՛ւր ինձ հանգիստ:

(Ինքնասպանություն է գործում: Մտնում են ծաղրածուները: Հավաքվում են բոլոր դերակատարները դամբարանում, հնչում է իշխանի ձայնը):

ԻՇԽԱՆԻ ՁԱՅՆ – Այս լուսաբացը իր հետ բերում է աղոտ հաշտություն:
Արևը վշտից չի ուզում ցույց տալ իր դեմքն երկնքում.
Քանզի չի եղել լուսնի տակ երբեք մի ողբ այնքան խոր,
Որքան Ջուլիետի և Ռոմեոյի վեպը սգավոր:

(Կենդանանում են գլխավոր դերակատարները՝ Ռոմեոն և Ջուլիետը, և սկսում են երգել վերջին՝ «Սիրո երգը» հավերժացնելով սերը):

ՎԵՐՋԵՐԳ

Վերջ

ՍԻՐՈ ԵՐԳ

(«Ռոմեո և Ջուլիետ» ներկայացումից)

Խոսք՝ Կ. ԴԱՎԹՅԱՆԻ

Երաժշտ.՝ Է. ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆԻ



Սե՛ր, դու անվերջ ես,
Քո հուրն անշեջ է,
Իմ սե՛ր, հավերժում,
Միացնում ես սրտերը:
Սե՛ր իմ, անհուն ես,
Միշտ կպաշտեմ քեզ, ի՛մ Տեր երկնային,
Դու աննյութ մի պարգև ես:

Կրկներգ. Մեր սերը հույս, մեր սերը լույս է:
Կյանքն առանց սեր միշտ էլ մահ է:
Մեզ ծուլում է, ապրեցնում է,
Կյանքը հավերժում է...

Սե՛ր, դու անվերջ ես,
Իմ ջահակիր հուրն անշեջ,
Երկնքում միացնում է սրտերը:
Մեր սիրո նավը
Մեզ աշխարի ծայր բերեց
Ու շունչն իմ
Քո շնչին զարկեց, սե՛ր իմ...

Կրկներգ. Մեր սերը հույս, մեր սերը լույս է:
Կյանքն առանց սեր միշտ էլ մահ է:
Մեզ ծուլում է, ապրեցնում է,
Կյանքը հավերժում է...

ՋՈՒԼԻԵՏԻ ԵՐԳԸ

(«Ռոմեո և Ջուլիետ» ներկայացումից)

Խոսք՝ Կ. ԴԱՎԹՅԱՆԻ

Երաժշտ.՝ Է. ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆԻ



Շուրջս սևազգեստ գիշերն է,
Շուրջս այս պարկեշտ գիշերն է,
Էութեամբ հավերժ սիրո այդ լույսն եմ զգում ես,
Դու օգնիր սիրուն հաղթել դաժան խաղում այս:
Սիրո մի ողջ կյանք եմ ես տվել, սակայն դեռ չեմ գտել:
Արի՛ դու, հույս իմ, լույս իմ, սեր իմ:

Գիշեր, իմ առջև կանգնած ես,
Մերկությամբ դու մեզ պարուրում ես:
Սերն անսպառ ու անսահման է ծովերի պես:
Իմ հոգում, մտքում, սրտում միայն դու ես:
Տեր իմ, քեզ հանձնել եմ բախտս ողջ:
Սիրո նավով աշխարհի ծայրն էլ ես կգամ քեզ հետ, սեր:

ՌՈՄԵՈՅԻ ԵՐԳԸ

(«Ռոմեո և Ջուլիետ» վերկայացումից)

Խոսք՝ Կ. ԴԱՎԹՅԱՆԻ — Երաժշտ.՝ Է. ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆԻ

Andante ma ben energico



Աստվածային պայծառ արև ես,
Ծագի՛ր, շքե՛ղ արեգ, ծածկի՛ր խանդոտ լուսնին:
Աշխարհ, կանգնի՛ր՝ երգեմ ես սերն իմ՝
Ամենաթանկ գանձին երկրի ու երկնքի:

Կրկներգ. Առանց պայքար չեմ հանձնվի՝
Թեկուզ աշխարհն իմ դեմ ելնի:
Դու իմ հրեշտակ, իմ ջահ անմար,
Դու արեգակ ես ինձ համար:
Հեքիաթային լուսե թիթեռ ես,
Անձրևներով է քո պատկերը նկարված:
Իմ մենության հուշի թևին ես:
Սուրա՛, անզո՛ւսպ քամի, կերտի՛ր իմ սիրածին:

Իմ սե՛ր անգին, վառվիր ջահի պես,
Ինձ ուղեցույց եղիր, եղիր դու ինձ փարոս:
Իմ սե՛ր անգին, վառվիր ջահի պես,
Եղիր դու սպեղանի կյանքիս համար, անգին:

Կրկներգ. Առանց պայքար չեմ հանձնվի՝
Թեկուզ աշխարհն իմ դեմ ելնի:
Դու իմ հրեշտակ, իմ ջահ անմար,
Դու արեգակ ես ինձ համար:
Հեքիաթային լուսե թիթեռ ես,
Անձրևներով է քո պատկերը նկարված:
Իմ մենության հուշի թևին ես:
Սուրա՛, անզո՛ւսպ քամի, կերտի՛ր իմ սիրածին:
Իմ սե՛ր...

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

Ըստ Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզներ»
վիպակ-էսսեի

Համահեղինակներ՝ Կարինե Դավթյան
Անի Միքայելյան

Պիես՝ երկու գործողությամբ

Նկարագրություն

Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզներ» ստեղծագործությունը էսսե-վիպակ է: Միաժամանակ 70-ական թվականներին Վ. Պետրոսյանի կողմից Երևանի պետական դրամատիկական թատրոնի համար գրվել է սցենար, որը բեմադրվել է տվյալ թատրոնում: Ստանալով իր ընտանիքի թույլտվությունը՝ ես վերցրի իր սցենարական տարբերակն ու վիպակ-էսսեն և բեմադրության համար ստեղծեցի մի նոր սցենար, որտեղ կատարվել են շատ փոփոխություններ ու կրճատումներ, եղել են տեքստային ավելացումներ: Ավելացվել են նաև մի քանի էսքիզներ՝ «Արցախյան ազատամարտ», «Պատմական զուգորդություն», որտեղ Վ. Պետրոսյանի ստեղծագործությանը շաղկապվել են այդ ժամանակաշրջանի հայտնի անձանցից՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Արկադի Տեր-Թադևոսյանի, Մոնթեի, Թաթուլ Կրպեյանի, Դուշման Վարդանի, Լեոնիդ Ազգալդյանի կերպարները: Ավելացվել են սփյուռքահայի իրական կերպար և իրական պատմություն՝ Գլոնիկայի մասին՝ «Ծիրանի ծառ» էսքիզում, Արցախյան հերոսամարտից՝ կին հրամանատար Անահիտ Մարտիրոսյանի կերպարը, ինչպես նաև 2016 թվականի ապրիլյան Քառօրյա պատերազմի մասին էսքիզներ: Կերպարների անվանումները, բացի կոնկրետ պատմական անուններից, մնացածը սիմվոլիկ անուններ են, որոնք ես մտահղացվել են իմ կողմից:

Օգտագործվել են հին հայկական երգեր, օրորոցայիններ, Կոմիտասի, Է. Գյանջումյանի, Ա. Տերտերյանի, ինչպես նաև ժամանակակից կոմպոզիտորների այլ ստեղծագործություններից հատվածներ:

Որպես դեկորացիա ծառայել է սիմվոլիկ կլոր դեկորը, որը խորհրդանշում է աշխարհը, որի կենտրոնում գտնվում է Հայաստանը: Այս դեկորը բազմաֆունկցիոնալ է. բաժանվում է մի քանի մասերի, և տարբեր տեսարաններում տարբեր դեկորներ են ստացվում: Ներկայացման ամբողջ ընթացքում դեկորին լրացնում է նաև էկրանը, որի վրա ցուցադրվում են ինչպես տեղանքի, այնպես էլ մարդկանց տարբեր ժամանակների լուսանկարներ:

Սա հայ ժողովրդի պատմությունն է՝ խոհափիլիսոփայական վերլուծություններով, թույլ տված սխալների և լավ գործերի մասին:

Ներկայացումը մասնակցել է «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին:

Հագուստների ձևավորումն արվել է նկարիչ և դիզայներ Լիլիթ Մելիքյանի կողմից:

Ներկայացման ռեժիսորը և բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարինե Դավթյանն է, ով նաև դեկորների և երաժշտական ձևավորմների հեղինակն է:

Պրեմիերան տեղի է ունեցել 2018 թվականի հունիսի 7-ին:

Գործող անձինք

- **Գրող**
- **Սփյուռքահայ տղա**
- **Սփյուռքահայ աղջիկ**
- **Հայաստան տղա**
- **Հայաստան աղջիկ**
- **Արցախ տղա**
- **Արցախ աղջիկ**
- **Սովետական ժամանակաշրջանի տղա**
- **Սովետական ժամանակաշրջանի աղջիկ**
- **Գոթական ժամանակաշրջանի տղա**
- **Գոթական ժամանակաշրջանի աղջիկ**
- **Ծիրանի ծառ տղա**
- **Ծիրանի ծառ աղջիկ**
- **Անահիտ Մարտիրոսյան (ջոկատի հրամանատար)**
- **Վազգեն Սարգսյան**
- **Մոնթե Մելքոնյան**
- **Կոմանդոս (Արկադի Տեր-Թադևոսյան)**
- **Թաթուլ Կրպեյան (ազատամարտիկ)**
- **Անդրանիկ (Զորավար)**
- **Լեոնիդ Ազգալդյան (ազատամարտիկ)**
- **Դուշման Վարդան (ազատամարտիկ)**
- **Վահան Պասկալ**
- **Ներսես Աշտարակեցի (կաթողիկոս)**
- **Վարուժան**
- **Սասունիկ**
- **Գագիկ Գինոսյան (պարուսույց)**
- **Մարե**
- **Սեդա (Թաթուլ Կրպեյանի մայրը)**
- **Զարիկ մայրիկ**
- **Գրոնիկա (սփյուռքահայ)**
- **Նկարչուհի**
- **Սոնա մորաքույր**
- **Նորօրյա Սեդա**
- **Նորօրյա Մոնթե**
- **Նորօրյա Սեդայի հայր**
- **Նամակ ընթերցող**

- **Լրագրող**
- **Երգչուհի**
- **Հարբած երիտասարդ 1, 2**
- **Աշակերտուհի**
- **Մասսայական տեսարաններ, ժողովուրդ**
- **Պահակ**
- **Սփյուռքահայ (ծերունի)**
- **Չինակից**
- **Թուրք գերի**
- **Հովակիմ Թութունջյան – ամերիկահայ**

Բեմի կենտրոնում դրված է դեկոր, որը կլոր է և խորհրդանշում է պտտվող գլոբուս: Աջ կողմում դրված է սեղան՝ վրան թափթփված թղթեր, գրիչներ, հայկական կոնյակ ու բաժակ: Բեմի չորս անկյուններում դրված կախիչների վրա կախված են տարբեր ժամանակների հայկական հագուստներ՝ թագավորի, թագուհու, ուսուցչուհու, գեղջկուհու, գյուղացու և վանականի: Բեմի ավանսցենայից կախված է սպիտակ շղարշե վարագույր, որը սկզբում փակ է, և այդ վարագույրի դիմաց դրված է սեղանը: Բեմը մութ է, շղարշի վրա գրված է ներկայացման վերնագիրը (պրոեկտորով): Դահլիճից ուղղորդող լույսով ներս է մտնում գրողը, որը խոսում է հեռախոսով:

ԳՐՈՂ – Այո՛, եղբա՛յր, ես վաղը կամ մյուս օրը անպայման կվերջացնեմ սցենարը և կհանճնեմ քեզ, խոստանում եմ:

(Նա բարչրանում է բեմ, նստում է սեղանի դիմաց, փորչում է գրել և բավականին տանջանքներից հետո հանկարծ սկսում է ստեղծագործել, մոտենում է սպիտակ շղարշե վարագույրին, այդ պահին հնչում է փոքր երաժշտական մաս, կարծես թե պտտվում է երկրագունդը, բացում է իր մտքի փակ շղարշը, և ժամանակը հետ է պտտվում՝ հիշեցնելով հայ ժողովրդի պատմությունը):

Մեջտեղում կլոր գլոբուս հիշեցնող դեկորի վրա նստած են ներկայացման մասնակիցները, այն պտտվում է և կանգ առնում: Էկրանի վրա գրվում է՝ «Առաջին մաս, Էպիզ Հայաստան»:

Առաջին մաս

«Էսքիզ-Հայաստան»

(Բեմի կենտրոնում՝ երկրագունդ: Նրա վրա՝ փոքր Հայաստանը: Դանդաղ պտտվում է երկրագունդը, կանգ է առնում):

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Հայաստան, քարերի երկիր են կոչում Հայաստանը: Աշխարհի հիշողության մեջ Հայաստանը լեռների, քարափների, ժայռերի ու ձորերի մի զանգված է, և եթե ծառ է, ապա ոտները՝ քարերի արանքում թողած, եթե խաղողի վազ է, արմատները՝ ծակած-անցած քարերը, եթե բարակ հողաշերտ է, ապա՝ քարափների արանքում:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Սիլիոնավոր աղբյուրների ակունքների վրա կործած մի վիթխարի քարաստան՝ Արագած, համաչափության բոլոր կանոններով սարքած հսկա քարաժխոր՝ Ծաղկեվանք, և ի վերջո, ամայության մեջ ժայթքած քարե զույգ շատրվան՝ Արարատ…

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Քարերից ենք շարել մեր տների պատերը:

Կամուրջները:
Վանքերն ու բերդերը:
Գերեզմանները:
Հիրավի, քարե Հայաստան:

ԳՐՈՂ – Քարե՞…, իսկ ինձ թվում է՝ քարացած, ավելի ճիշտ՝ քարացրած:

(Երաժշտություն):

Փոքր տղա լինեի, դեռ կհավատայի հեքիաթներին, պարզ-պարզ կպատկերացնեի նույնիսկ այն չար, զարհուրելի կախարդին, որ անհիշելի ժամանակներում անցավ մեր աշխարհով: Անցավ, տեսավ ու նախանձեց: Նախանձեց ու սև գավազանը բարձրացնելով՝ ծղրտաց.

ՉԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ: – Քարացե՛ք:

(Դանդաղ պտտվող երկրագունդը կանգ է առնում, լռություն):

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Ու քարացան զմրուխտ բլուրները, դաշտերում սվսվացող միլիոնավոր ծաղիկները, անգույն քարակտորների փոխված, թափվեցին հողին, անշարժացան անտառները, հողը կծղեց ու կարծրա-

ցավ, նույնիսկ մեր աշխարհի գլխի ամպերը ծանրացան ու քարե անձրև տեղաց: (ՈՐՈՏ, ԴՂԻՐԴ, ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՌՆՈՑ)

(Երկրագունդը շարունակում է դանդաղ պտտվել):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Նայեց, գոհ նայեց կախարդը, հռհռաց քարե ամայության երեսին: Նրա ծիծաղն էլ քարակտորների պես շպրտվեց այս ու այն կողմ:

(Երաժշտություն):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Ու անցավ ժամանակ:

Ու ծնվեց իմ ժողովուրդը՝ այստեղ ապրելու: Արարիչը չտվեց նրան ուրիշ հրաշք գավազան, որ կարողանար քանդել կախարդանքը, մատներ տվեց, արթուն միտք ու քարե համբերություն:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Եվ իմ ժողովուրդն սկսեց իր մատներով, մտքով ու համբերությամբ թիզ առ թիզ քանդել կախարդանքի կծիկը, վերադարձնել հողին իր քնքշությունը, ծաղիկներին՝ իրենց գույները, անտառներին՝ իրենց աղմուկը:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ՏՂԱ – Հողից քրքրեց-հանեց քարերը:

Վանքեր շինեց:

Բերդեր:

Տներ ու կամուրջներ:

Ավաղ, նաև գերեզմաններ:

Նույնիսկ ժամացույց շինեց,ասեղնագործեց քարերի վրա տղամարդու հանճարեղ մատներով:

(Երաժշտություն: Արշավող ձիերի դոփյուն, աղաղակներ, տագնապալից զանգեր):

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – Բայց խանգարեցին նրան:

Արշավեցին, եկան, քանդեցին, ավերեցին, նորից շատացրին անպտուղ քարերը, իմ ժողովրդի ձեռքերին ստիպեցին սուր վերցնել, թեպետ միշտ մուրճ են երազել նրա մատները:

ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – Փշրեցին, որովհետև այս նորերն արտաքինով մարդու էին նման, բայց անում էին նույնը՝ ավելի վայրենի, ավելի տևական:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Քարե կարկուտ թափվեց մեր գլխին. հառաչեցին հայ մայրերը զանազան դարերում, և նրանց հառաչանքն արձագանքվեց-մնաց մեր երգերի մեջ:

(Ծնվում է հինավուրց մի երգ, կենդանի կատարում)։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Այսպես եղավ անընդհատ, չնչին դադարներով։

Բայց իմ ժողովուրդն անընդհատ, անգամ առանց այդ չնչին դադարների, շարունակում էր մայր-հողն ազատել քարե կախարդանքից: *(Երգից ծնունդ է առնում մի այլ երաժշտություն)։*

ՀԱՅԱՍՏԱՆ- ԱՂՋԻԿ –Եվ բացվեց մի օր, որ սկիզբ առավ, և իմ ժողովուրդը կարող էր արդեն հանգիստ, անշտապ շարունակել դարերի գործը։

ԳՐՈՂ – Բացե՛ք ձեր պատուհաններն ու նայեք դուրս: *(Լուսավորվում են բեմը, դահլիճը, երկրագունդը կանգ է առնում)*։

Ջարթնում է քարացած Հայաստանը։

(Բոլոր դերակատարները վեր են կենում և կանգնում)։

Ես գիտեմ՝ կվերադառնան մեր բոլոր անտառները, կզարթնեն քարե քնից մեր բոլոր դաշտերի ծաղիկները, ամպերը կթեթևանան, և մենք նորից կնետենք վերև՝ դեպի երկինք, ջուր առած քարերը վտակ-վտակ կհոսեն մեր հողի երակներով, քարաժայռերի մեջքը կծակեն-դուրս կգան մեր զսպված աղբյուրները։
Իսկ մնացա՞ծ քարերով…
Մնացած քարերով մենք տներ կշինենք։
Արձանններ։

(Հնչում է Ա. Տերտերյանի 3-րդ սիմֆոնիայից հատված, և ամբողջ բեմը վերադասավորվում է, բոլոր դերակատարները բեմի վրա սկսում են հագնել նախապես կախիչների վրա դրված հագուստները, և տեղի են ունենում անցումներ, որոնց ընթացքում հագուստների միջոցով տեղի է ունենում ժամանակների փոփոխություն, հետվում երևում է մի մարդ՝ սովետական կարմիր դրոշով, որը ծածանում է)։

Անցում՝ Սովետական Հայաստանի դրոշով

«Էսքիզ-Այբուբեն»

(Էկրանին գրվում է «Էսքիզ-Այբուբեն», և փոխվում է նկարը: Նկարում քայլող գիվորներ են, իսկ բեմի վրա՝ մի խումբ մարդիկ՝ հրացաններով, որոնք նույնպես քայլում են, և դիմացից սպիտակ կտորով փակ է)։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ճանապարհը երկար էր, իսկ գնալ հարկավոր էր, մոտեցող հեռվում մեռնում էր Հայաստան աշխարհը, որ առջևից գնացողների հայրենիքն էր: Երևի դրա համար էլ առջ-

նից գնացողներն ավելի էին շտապում, ավելի, թեպետ սառնամանիք էր, ձյուն:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Առջևից գնացող մի զինվոր հանկարծ բարձրացրեց ձեռքը. մատների մեջ ստվարաթղթից սարքած տառ էր:

(Դիմացի զինվորներից մեկը բարձրացնում է ստվարաթղթի վրա գրված Ա տառը):

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Զինվորներից ով որ լսեց, բարձրացրեց ծանրացած գլուխը:

ԳՐՈՂ – Մանրամասն տեսան ձևավոր ստվարաթուղթը, որը ճոճվում էր քամուց: Տեսան, բայց նրանց մեծ մասը դպրոց տեսել էր միայն երազում, և դրա համար միայն երկու-երեք ձայն գտավ պատասխանը.

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – «Ա» տառն է այդ…

ԳՐՈՂ – Ու բանակը շարժվեց, որովհետև հեռվում մեռնում էր Հայաստան աշխարհը:

(Ձիերի և քայլող զինվորների քայլերի ձայն, իսկ զինվորը տառերը փոխում է ու հարցնում):

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Ի՞նչ տառ է:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Բեն:

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Ի՞նչ տառ է:

(Այս անգամ պատասխանում էին տարբեր շարքերից՝ իրար հանգարեցնելով, հուշելով, իրարից հարցնելով):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Բեն…Բեն…Բեն… *(Արձագանք)*

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Ի՞նչ տառ է…:

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Ծա…Ծա…Ծա… *(Արձագանք)*

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Ի՞նչ տառ է…

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Ռա…Ռա…Ռա… *(Արձագանք)*

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Այսպես նրանք հասան Հայաստան՝ հրացանը ձեռքներին, մեսրոպյան այբուբենը սովորելով, և երեսուն հազար քառակուսի կիլոմետր քարի, հորի, տեղ-տեղ նաև հողի վրա հաստատեցին իրենց ժողովրդի շարունակվելու իրավունքը:

(Գրողն ու Սովետական Հայաստան-տղան շարքից դուրս են գալիս և կանգնում սպիտակ կտորի դիմաց):

ԳՐՈՂ – Եղե՞լ է, թե՞ առասպել է:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Այդ ո՞ր անանուն զինվորն էր, որ բքի ու հոգնության մեջ կարողացավ մտածել ստվարաթղթե այբուբենի այդ հրաշքը:

ԳՐՈՂ – Չգիտեմ: Ես հավատում եմ առասպելներին, ես նախանձում եմ մարդկանց, որ կարողանում են առասպել հորինել, իսկ այս ամենը լսել եմ մի զինվորից, որ այբուբենը սովորել է այդ դժվար ճանապարհին:

(Գրողը մուրհնում է իր գրասեղանին, իսկ Սովետական Հայաստան-տղան դուրս է գալիս: Մթնում է, մոմը չեռքին մի աղջիկ սև հագուստով անցնում է, և էկրանին գրվում է «Էսքիզ-Ներսես Աշտարակեցի», և փոխվում է նկարը):

«Էսքիզ-Ներսես Աշտարակեցի»

ԳՐՈՂ – Հիշում եմ՝ ռուս դեկաբրիստ Եվդոկիմ Լաչինովի օրագրում եմ կարդացել: 1826 թվականի դեկտեմբերի 29-ի առավոտյան Ներսեսն այցի է գալիս հոր գերեզմանին: Նրա հետ ռուս գեներալ Կրասովսկին էր, սպաներ, զինվորներ, Աշտարակի մեծահարուստներ, հասարակ ժողովուրդ: Ներսեսը չոքում է հոր գերեզմանի առաջ, աղոթում և ասում է:

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ – Հա՛յր, լսո՞ւմ ես, վերջապես եկավ ժամը, որ երազում էր քո լուսավոր հոգին. մեր ժողովուրդը կապրի: Բարձրացրո՛ւ գլուխդ, հա՛յր, տե՛ս՝ ով է իմ կողքին…

ԳՐՈՂ – Ես հանկարծ կարծես շատ մոտիկից զգում եմ Ներսեսի ձայնը, թեպետ մեր շուրջը ոչ ոք չկա. համեստ, միաձև տապանաքարեր են, որ լուռ են ու կնճռոտ: Ես մտածում եմ Ներսես Աշտարակեցու պետական խելքի, նաև բազկի քաջության մասին: Նրա կրծքին Գրիգոր Լուսավորչի խաչն էր, կողքին՝ թուր: Ես Ներսեսին արձան կդնեի, իսկ այդ պատմությունը՝ հոր գերեզման գալու մասին, դու հասկանո՞ւմ ես, քանդակել կտայի մարմարի վրա: Ախր, մենք ե՞րբ պիտի գնահատենք պետական խելքի տեր մարդկանց: Մերը խենթ քաջությունն է, բանավոր հայրենասիրությունը:

(Մթնում է, և թույլ լույսի մեջ երևում են 2 հոգի, ընկերն իր ընկերոջը ճանապարհում է Մոսկվա):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Որ հասնես Մոսկվա, իմաց տուր, բարի ճանապարհ:

(Գրկախառնվում են և հեռանում: Էկրանին գրվում է «Էսքիզ-Մարեն»: Մթնում է, քեմի մեջտեղում լսարան է Սովետական Հայաստան տղան, Մարեն մտնում է ներս, բերում է ջուր և բարձ, որը դնում է տղայի մեջքի տակ և նստում է կողքին):

«Էսքիզ-Մարեն»

ԳՐՈՂ – Մարեն…

Ես գրել եմ իմ տատի մասին, և նա էլ իմ մայրն է կամ տատը, թեպետ ընկերոջս մայրն է: Ձեռքերը կոշտացած են, չեչոտ քարի նման, ուրեմն ամենանուրբ բանն աշխարհում չեչոտ քարն է: Բաց կապույտ աչքեր ունի Մարեն, նրա առաջ պիտի լուռ մնաս, որովհետև բոլոր հնարավոր բառերը, որ կարող են իրար միանալ նախադասության մեջ, հոգնած են: Մարեն էլ հոգնած է: Մարեն հեռու լեռներում է թողել Սասունը, հիմա ապրում է Թալինի շրջանի մի գյուղում:

(Արցախ-աղջիկը մոտենում է գրողին և նստում իր կողքին):

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Եթե հանկարծ նստես թաց կանաչին ու զգաս, որ մեկը քո տակ փափուկ բարձ է հարմարեցնում, մի՛ ստուգիր. Մարեն է: Եթե նրանց տանը ծարավես, ու մեկը քեզ սառը ջուր մեկնի, մի՛ ստուգիր. Մարեն է:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Եթե պատահի գիշերով մնաս Մարեի տանը և քնած-քնած զգաս, որ մեկը ծածկում է բացված մեջքդ, մի՛ ստուգիր. Մարեն է: Հիշում եմ՝ մի անգամ Մարեն ասաց.

ՄԱՐԵ – …Աշխարհում ամեն բան կանցնի, լա՛ռ, սիրտդ տխո՞ւր է, կուրախանաս, գործդ լա՞վ չէ, լավ կլինի: Մենակ թե չմրսես, լա՛ռ…

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Եթե նա քո կողքին է, անպայման մի թևով կգրկի քեզ, մանավանդ եթե առաջին անգամն ես նրանց տանը: Եթե պատահի՝ էլի գաս, և հետդ լինի մեկը, որ առաջին անգամ է եկել, նրան կգրկի-կշոյի Մարեն:

(Արցախ-աղջիկը վեր է կենում, գալիս առաջ):

Նրա բարությունը բավական է, որ խաղաղվեն իրար դեմ կանգնած թշնամական բանակները, եթե հնար լինի այդ բարությունը մաս-մաս բաժանել բանակների մեջ:

(Արցախ-աղջիկը դուրս է գալիս, իսկ գրողը մոտենում է Մարեին):

ԳՐՈՂ – Իմ գրած գրքերը կարդացե՞լ ես, Մարե՛:

(Մարեն վեր է կենում և կանգնում գրողի կողքին):

ՄԱՐԵ – Ես չեմ կարողացել: Ջում կաթը լավ է, լա՛ռ, հիմի կկթեմ-բերեմ, խմեք:

(Մարեն վերցնում է բաժակն ու բարձը և դուրս է գալիս):

ԳՐՈՂ – Մարեն չի կարդում մեր գրած գրքերը, Մարեն չի լսում մեր տաք ճառերը, Մարեն իր մանկությունը թողել է Սասնա բարձրիկ լեռներում և միայն երկու անգամ է գնացել Երևան. մի անգամ, երբ Մուշեղը համալսարան ընդունվեց, մի անգամ, երբ Մուշեղը Մոսկվա պիտի թռչեր:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Եթե լռել են գողթան երգիչների քնարները, թող անմահ հոգիներն իջնեն երկնքից ու պսակեն հայոց քաջերին:

ԳՐՈՂ – Արծիվնե՛ր, բազենե՛ր, արագի՛լք, դուք հսկեցե՛ք այս աշխարհը, ժառանգեցե՛ք տունը հայոց: Նստե՛ք մոխիրների վրա, ավերակները բույն շինե՛ք, մինչև գա գարունը հայոց…

(Գրողը ևսրում է բեմի եզրին):

ԳՐՈՂ – Արի՛ նստենք արև ներծծած քարին:

(Սովետական Հայաստան-տղան նստում է գրողի կողքին, և հետևից մի երգ է լսվում):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ի՞նչ երգ է:

ԳՐՈՂ – Հին է: Մամս էր երգում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ես չէի լսել:

ԳՐՈՂ – Տխրեցի՞ր:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Մտածում եմ…

(Երգի ձայնը բարձրանում է, և նրանք, իջնելով բեմի աստիճաններից, տարբեր կողմերով բարձրանում են բեմ: Մթնում է: Էկրանին գրվում է «Էսքիզ-Ծիծեռնակաբերդ», գնում է տեսանյութ՝ Ծիծեռնակաբերդի ճանապարհը, և հնչում է կենդանի կատարում):

«Էսքիզ-Ծիծեռնակաբերդ»

(Էկրանին արխիվային կադրեր Ծիծեռնակաբերդից, բեմի երկու կողմերից ներս են մտնում սև հագած տարբեր մարդիկ, որոնք ծաղիկներ են դնում անմար կրակի մոտ և դուրս են գալիս, հետո նորից մտնում են բեմ և դուրս գալիս):

ԳՐՈՂ – Հեռվում ես տեսնում եմ Ծիծեռնակաբերդը, աչքերով գտնում եմ այն տեղը, որտեղ հուշարձանն է, ու կարծես ավելի որոշ եմ լսում այն հին, շատ հին երգը.

…Մոխիրների վրա նստեք, ավերակներ շինեք բույն.

Եվ ծիծեռնակ գա ու երթա, մինչև հայոց գա գարուն…

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ապրիլյան զրնգուն օր է. Ծիծեռնակաբերդի գալարուն ճանապարհներով գնում են, բարձրանում ծերերը, ջահելները, երեխաները:

ԳՐՈՂ – Ես քայլում եմ խլրտուն շարքի մեջտեղում, երբեմն շրջվում ետ եմ նայում. մարդկային գետ է, միայն թե վեր է բարձրանում: Ե՞րբ գեղեցկացանք այսքան, ե՞րբ մեր հին արյունը խենթացավ-փրփրեց ու ջահելացավ: Ծաղիկներ են տանում, պսակներ, նրանք, որ պսակներ են տանում, քայլում են զգույշ, հանդիսավոր: Այստեղ կարող է թվալ, որ ամբողջ մեր ժողովուրդը հիմա կազմված է քսան տարեկաններից:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Տարեց մարդի՞կ, ծերե՞ր…Կան, բայց նրանց ծածկում-տանում է երիտասարդների հեղեղը:

(Տղաները նույնպես մուրենում են էկրանի վրա պատկերված հուշահամալիրին և ծաղիկներ դնում):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Այստեղից երևում է Հայաստանի մայրաքաղաքը, քիչ է, երևում է Հայաստանը, որովհետև Հայաստա՞նն է քիչ… Ոչ միայն դրա համար: Համարյա մեր բոլոր լեռներն են ներկա՝ Արագածը, Արարատը, Ծաղկեվանքը, իսկ մեր քաղաքը ոչ մի ուրիշ կետից այսքան կենդանի, ապրող, ամրապինդ ու շքեղ չի երևում:

ԳՐՈՂ – Ամերիկահայ մի գրող, Ծիծեռնակաբերդից նայելով, ասել է. «Այս դամբարանը մեր նահատակներուն գերեզմանն է, իսկ Երևանը գերեզմանն է մեր ոսոխի…»:

(Ծիրանի ծառ-աղջիկը առաջ է գալիս):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Ձիլ՝ որպես փրկված կյանքի աղաղակ, երկինքն է խրվել մետաղե սուր անկյունը: Եթե գիշեր լիներ, կվառվեր ներսի լույսը, կբաժաներ բուրգը երկու մասի, և մենք կվիճեինք՝ ճարտարապետը Մասիսնե՞րն է խորհրդանշել, մեր ժողովրդի կիսված ճակատագի՞րը, թե՞…

(Տղաները նստում են սեղանի շուրջ, դնում են օղին և բաժակները):

Ծիծեռնակաբերդից վերադարձողների դեմքին ժպիտ կա, զրույցները գործնական են, տաք: Այսպես մտնում են քաղաք, տարրալուծվում փողոցների, նրբանցքների, զբոսայգիների, ապա՝ նաև տների, սրճարանների մեջ:

ԳՐՈՂ – Այս տարվա հերթական պարտքը մարված է համարվում, մի օրով վերականգնված ցավի խլիրտը մարում է ինքն իրեն, և մենք նստում ենք մեզ սպասող սեղանների առաջ:

(Ներս է մտնում նկարչուհին՝ մոլբերտը ձեռքին, տեղավորում է և սկսում է նկարել):

ԳՐՈՂ – «Լցրո՛ւ մի բաժակ, խմենք», բայց մինչև այդ մի բաժակը…

(Նկարչուհին քեմում դասավորում է նկարելու պարագաները և ընթացքում խոսում):

ՆԿԱՐՉՈՒՀԻ – Յուրաքանչյուր տարվա ապրիլի քսանչորսին Ծիծեռնակաբերդն իր բարձունքից նույն կերպ է նայում Հայաստանին ու հատկապես քաղաքամայր Երևանին, իսկ Երևանը՝ Ծիծեռնակաբերդի՞ն:

Բացի ապրիլի քսանչորսից՝ տարվա մնացյալ օրերից մեկն ընտրե՛ք ու հաղթահարե՛ք բարձունքը: Ընտրե՛ք ամենաերկար ճանապարհը, քանի որ հիշելու և մտածելու շատ բան կա: Արարատը,Արագածն ու Ծաղկեվանքն այնպե՛ս ամուր են շրջապատել բարձունքը, որ…, ինչևէ…, ապրիլյան այդ օրը երիտասարդը հազիվ թե տեսնի պատմական Երևանը: Կտեսնի մայրաքաղաք Երևանը, բայց կտեսնի՞ պատմական քաղաքը: Նա դժվարությամբ կկարողանա իր օտարերկրացի բարեկամին, ընկերոջն ապացուցել, որ Արգիշտիի ու Թամանյանի Երևանն աշխարհի առաջին քաղաքներից է:

ԳՐՈՂ – Ո՞ւր է քո հին Երևանը, եթե բոլոր կողմերում բարձրահարկեր են ու նորակառույց շենքեր:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Կներես, եղբա՛յր, մենք զարգանում ենք:

ԳՐՈՂ – Սա՞ պիտի լինի պատասխանը: Զարգանում ենք քանդելով: Ու հասկանում ենք, որ ոչ մեկին պետք չէ այդ թերուս զարգացումը: Ես վախենում եմ, որ տարիներ հետո երիտասարդը չի տեսնի Արամ Մանուկյանի տունը, Աֆրիկյանների ակումբը և այլ կառույցներ, որոնք հին Երևանի խոսուն վկաներն են: Հնությունը պատմություն է, անգամ ամենաանիմաստ (եթե կա այդպիսին) թվացող հնությունը պատմություն է, քաղաքի, ազգի, երկրի պատմությունը: Քանդելով հնությունը՝ քանդում ես պատմությունը: Վերացնել հին Երևանը, նույնն է, ինչ որ քանդել Գառնին, Զվարթնոցը, Սմբատաբերդը, Եղվարդի բազիլիկան: Իսկ այս ամենը համարժեք է ինքդ քեզ վերացնելուն:

ՆԿԱՐՉՈՒՀԻ – Ժամանակի պահանջին ընդառաջ քայլելն էական է, բայց տրամաբանակա՞ն է արդյոք քանդել հնությունն ու աշխարհի՝

առանց այն էլ չլսելու ընդունակ ականջին գոռալ՝ մենք հին ազգ ենք, հին է մեր պատմությունը, Երևանն աշխարհի առաջին քաղաքներից է, տրամաբանակա՞ն է քանդել մեր ներսն ու ուրիշից պահանջել, որ հարգեն, պահեն ու պահպանեն հանրապետության ներկայիս սահմաններից դուրս մնացած պատմամշակութային մեր արժեքները:

Վերցնենք մատիտ, թուղթ ու ռետին: Նկարենք դեմք՝ աչքեր, քիթ, շրթունք: Նայենք, հիանանք ու հետո առանց ափսոսալու ջնջենք դեմքը: Ինչպես կհամարձակվես ուրիշին պատմել, որ այդքա՜ն գեղեցիկ դեմք ես նկարել: Միգուցե համարձակվես, բայց կհավատա՞: Արդեն հավատա՛լն անտրամաբանական կլինի:

(Նկարչուհին հավաքում է իրերն ու դուրս գալիս, իսկ գրողը առաջ է գալիս և խոսելով իջնում բեմից):

ԳՐՈՂ – Նորակառույց շենքերը հազիվ թե Երևանին ազատ շնչելու հնարավորություն տան, ավելին՝ գուցե հակառակը լինի: Ես չեմ ուզում, որ իմ մայրաքաղաքը խեղդվի, ուզում եմ՝ շնչի ազատ, բայց հնի պահպանությամբ ու նորի զուգորդությամբ:

Երևանի հնությունը միայն ձուլված ու մաքրագործված երևացին չէ, որ պիտի լինի:

(Մթնում է: Լույսը միայն գրողի վրա է: Հետևում Ծիրանի ծառ-աղջիկն է: Էկրանին՝ բացված պատուհան: Գրողը խոսելով կրկին բարձրանում է բեմ):

ԳՐՈՂ – Հետո ես բարձրանում եմ հյուրանոցի իմ համարը, բացում պատուհանը և պատուհանի մեջ տեսնում Երևանը, որովհետև պատուհանը իմ ներսում բացեցի:

(Լուսավորությունը փոխվում է: Հնչում է Էդ. Հովհաննիսյանի «Էրեբունի-Երևան» երգը):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ– Երևա՜նը…մեր հույսերի ու երազների քաղաքը՝ իր զնգուն փողոցներով, իր տենդոտ շնչառությամբ, իր երեքհազարամյա քարերով և սքանչելի հրապարակով, որի գլխին փողփողում է պետական մեր դրոշը՝ իբրև հավատ և պատվանդան:

ԳՐՈՂ – Փոքրիկ պատուհանի մեջ տեսա նաև աշխարհը և աշխարհի բոլոր ծայրերում՝ մեր ժողովրդի կենդանի բջիջները, որ արյունատար անոթներով կապված են հայրենիքի հետ, տրոփում են հայրենիքով, և անխորտակ է այդ սերը:

Մեր երազների հայրենիքը՝ անկախ Հայաստանը, ապրում է յուրաքանչյուր հայի սրտում, որին մեծ փոթորիկը աշխարհի տարբեր լայնություններ նետեց:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Եվ նրանք՝ տարբեր լայնություններ նետված մեր հայրենակիցները, ապրում են յուրաքանչյուր հայաստանցու սրտում: Եվ իմ սիրտը որդիաբար խոնարհվեց նրանց առասպելական ջանքերի առջև, նրանց անհուն նվիրումի ու մեծ, անփոխարինելի սիրո առաջ դեպի մայր հայրենիքը:

(Անջատվում է գրողի վրա վառված լույսը, լուսավորվում է մյուս կողմը):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Նրանք ապրում են Հայաստանով, նրանք հպարտ են Հայաստանով, եկել են, գալիս են ու գալու են իրենց պապերի ու հայրերի, իրենց դեռևս չծնված զավակների, թոռների ու ծոռների հայրենիքը:

ԳՐՈՂ – Պատուհանի մեջ ես կրկին տեսնում եմ Հայաստանը և պարզ-պարզ լսում ընկերոջս պապի անբեկանելի պատվիրանը:

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Պինդ պահեք հայրենիքը: Դողացե՛ք նրա ամեն քարի վրա…

ԳՐՈՂ – Ու հասկանում եմ, որ ամենաճիշտ ժամանակն է, որ «դողացե՛ք ամեն քարի վրա» արտահայտությունն ընկալվի ոչ այլ կերպ, - քան… տառացիորեն, իր ամենաառաջին իմաստով. դողալ ամեն քարի վրա, դողալ՝ կառուցելով: Միգուցե Մայիսյան հերոսամարտերը ստիպեն դողալ ամեն քարի վրա…

(Գրողի խոսքից հետո բոլոր դերակատարները դուրս են գալիս բեմից, մթնում է, և թույլ լույսի տակ ներս է մտնում ուսուցչուհին աշակերտների հետ միասին: Էկրանին գրվում է «Էսքիզ-Անդրանիկ», փոխվում է նկարը, նկարում ձմեռային տեսարան է գնացքի կայարանում):

«Էսքիզ-Անդրանիկ»

(Բեմում վերարկուներով մարդիկ են հավաքված մի քանի խմբերով ու խոսում են միմյանց հետ):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Այդ ձմեռ շատ էր ձյուն եկել Ղարսում, այդ առավոտ ցուրտը կտրում էր թրի պես, բայց լիքը ժողովուրդ էր հավաքվել Նիկոլի տան առաջ, որտեղ նախորդ գիշեր իջևանել էր զորավարը: Սպասում էին. մեկն ասել էր, թե Անդրանիկը ճառ պիտի ասի:

ՉԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՂԱՅԻ ՉԱՅՆՈՎ – Թշնամին հասել է Էրզրումի տակ, զորավարը վերջին հույսն է, ամենավերջինը:

(Ձայնագրության ժամանակ մարդիկ նայում են էկրանին և հետո էլի սկսում խոսել)։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ձյունը շարունակում էր թափվել, ինչպես Նոր տարվա հեքիաթում, ժողովուրդն ավելանում էր, շատը տղամարդիկ էին, նաև ջահելներ: Խանութները չէին բացվել, ո՞վ պիտի գնար խանութ, հազիվ հասցրել էին մի-մի «ղահվե» խմել: Իսկ կայարանում՝ սառած ռելսերի վրա, փնչում էր շոգեքարշը:

(Էկրանին կանգնած գնացք և փնչոցներ, բուք, ձայնային էֆեկտներ)։

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Վագոնները շատ էին դատարկ, ինչո՞ւ… Քաղաքային գիմնազիայում այդ առավոտ դասի զանգ չեղավ: «Ամենեն լավ դասը ազգային հերոսի խոսքը լսելն է…»,– ասել էր տնօրենը և վարժապետի հետ շարք կանգնեցրել: Նիկոլի տան մոտ էին բերել գիմնազիստներին: Մրսում էին նրանք: Վերջապես պատշգամբի դուռը բացվեց: *(Էկրանին երևում է Անդրանիկը)*: Անդրանիկը հանեց գլխարկը, և ձյունը թափվում էր նրա գլխին, դրանի՞ց ներացավ: Հետո բարձրացրեց ձեռքը. փաթիլները հալվեցին նրա մատների մեջ:

Անդրանիկը նայեց նրանց կողմը, դեմքը մեղմացավ, աչքերի տխուր խստությունը հալվեց՝ որպես փաթիլը տաք մատների մեջ: Ամբոխը ողջունեց նրան. «Փա՛ռք Անդրանիկին»: *(Բեմին կանգնած ժողովուրդը կրկնում է)*: Անդրանիկը նայեց ուղիղ, ժպիտը լրջացավ, ձեռքի շարժումով խնդրեց, որ լռեն:

(Գործողությունները զուգորդված են խոսքով: Անդրանիկի խոսքի ժամանակ բոլորը նայում են էկրանին)։

ԱՆԴՐԱՆԻԿ

Էկրանից – Ես ձեր զինվոր մըն եմ և կերթամ ճակատ՝ հայրենիքը պաշտպանելու: Չեզմե ո՞վ կմիանա ինձի…

ԱՐՁԱԳԱՆՔ (ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ) – Չեզմե ո՞վ կմիանա ինձի…

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ջորավարի ձայնը արձագանք տվեց, մի պահ կարծես հապաղեցին նաև փաթիլները, սպասեցին օդում:..

ԱՆԴՐԱՆԻԿ

Էկրանից – Ո՞վ կուզե միանալ, թող շարք կանգնի:

(Հայաստան-տղան խոսում է, այդ պահին մարդիկ կազմում են շարքերը, իսկ երիտասարդ Անդրանիկը բարձրանում է բեմ և կանգնում ամբոխի դիմաց)։

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ու Անդրանիկը փայտե ճոճռան աստիճաններով իջավ պատշգամբից, ամբոխի բացած միջանցքով առաջ գնաց, կանգնեց մի բաց տեղ: Ամբոխը աղմկեց, լռեց, ու Անդրանիկի թիկունքը կամաց-կամաց սկսեց տաքանալ. զորավարը չէր նայում մարդկանց, նայում էր դեպի կայարան, որտեղ փնչում էր շոգեքարշը՝ դատարկ վագոններով: Հեռվում Էրզրումն էր՝ բզկտված, վիրավոր, հիվանդ, առջևում թշնամին էր ու գուցե իր ամենավերջին կռիվը: Թիկունքն ավելի էր տաքանում, և Անդրանիկն ասաց.

ԱՆԴՐԱՆԻԿ – Գնացինք:

(Բոլորը միասին սկսում են համաչափ քայլել):

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Նա քայլեց դեպի կայարան: Հետևից եկող ոտքերն անվարժ էին, ձյունը փափուկ էր, բայց երբ խումբը շարժվեց, ահագին աղմուկ եղավ: Անդրանիկ զորավարը ետ նայեց, առաջին անգամ ետ նայեց. գալիս էին: Հին զինվորի սիրտը փափկեց, և քայլը դարձավ ավելի հաստատուն: Գալիս էին, նա քայլում էր երիտասարդ ու ձիգ, և կարծես ոչ թե քիչ առաջվա ծեր գեներալն էր, այլ ֆիդայի Աղբանիկը՝ ջահել, ամրապինդ, խենթ:

Գալիս էին…

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ոտնաձայները նվաղում էին *(ամբոխը սկսում է կամաց քայլել և քիչ-քիչ հեռանում բեմից, Անդրանիկի հետ մնում է 2 հոգի),* իսկ թիկունքը կարծես մրսում էր: Շոգեքարշը փնչում էր ռելսերի վրա, դատարկ վագոնները մարդ էին երազում, և Անդրանիկը ետ նայեց. մնացել էին շատ քիչ մարդիկ: Տեսի՞ք էր, ուղեղի մորմո՞ք: Հաշվեց մեկառմեկ:

Հաշվեց, ծերացավ զորավարը: *(Էկրանից նայում է Անդրանիկը)*:

Մի բուռ մարդիկ…

(Բեմի վրա մնում է երիտասարդ Անդրանիկը):

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Վագոնի լուսամուտից մի վերջին անգամ Անդրանիկը նայեց Ղարսին, պարզ տեսավ քաղաքը: Խաճութները ճռնչյունով բացվում էին, շրխկում էին նարդու զառերը, գիմնազիայի վարժապետները հայրենիքի փրկության մասին ոգեշունչ ոտանավորներ (Միքայել Նալբանդյանի «Ազատությունը») էին սովորեցնում երեխաներին և երգում «Մեր հայրենիք՝ թշվառ, անտեր…»:

(Երգը հնչում է խառը ձայներով, և ողջ ասվածը ցուցադրվում է բեմում: Բոլորը հեռանում են՝ բեմից, գալիս է ուսուցիչը աշակերտների հետ միասին, աշակերտներից մեկը արտասանում է Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը, և հեռանում են բեմից երգելով «Մեր հայրենիք», էկրանին գրվում է «Էսքիզ-Օրորոցային», բեմի ձախկյունում երևում է Սեդայի հայրը և ասում է. «Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի»: Այդ պահին բեմի մյուս կողմից դեպի հայրն է վազում Սեդան (երազի մեջ)՝ գոռալով «հայրիկ», կորցնելով հոր պարկերը՝ Սեդան գալիս և պառկում է մահճակալին, այդ պահին փոխվում է ձկարը, և հնչում է կենդանի կատարում «Արի, իմ սոխակ» օրորոցայինը):

«Էսքիզ-Օրորոցային»

(Արցախ-աղջիկը խոսում է, իսկ Սեդան վեր է կենում և ձեռքը մեկնում օրորոցին, հետո շարֆը գցում է ուսերին, վառում է մոմը և կամաց է գալիս առաջ ու ձախում բեմի եզրին):

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Լուսադեմին Սեդան երազից վեր թռավ և անմիջապես ձեռքը մեկնեց օրորոցին: Թաթուլը քնած էր: Պատին ամրացված աշտանակի մոմը վառեց: Չցանկացավ արթնացնել երեխաներին, ամուսնուն: Մոմի թրթռուն թեների տակ ավելի առկայծուն դարձավ նրա մտքերը պաշարած երազը: Զգաց, որ ներսում փլվում էր կարծրացած կարոտը, հոր պատկերը դարձյալ հաղորդվում էր իրեն: Սեդան նրան միշտ հիշում էր անբաժան ափսոսանքով, մտերիմ ու անձնական ցավով: Պատերազմի շրջանում նա՝ տակավին 11-12 տարեկան աղջնակ, կարողացել էր իր այրվող ունկերի ծոցում պահպանել այն տխուր րոպեների ահեղ ցնցումները, որոնք այսօր էլ տնքացող վերքի մորմոքներով խառնել էին նրա երազները: Ու հիմա նա ինքն իր մեջ տարրալուծում էր այցի եկած երազի մանրամասները:

ՍԵԴԱ – Գյուղի եզրին՝ այնտեղ, ուր վերջանում էին ցորենի արտերը, որտեղից վերջին հրաժեշտն էին տալիս պատերազմ գնացողները, կանգնած էր *(Սեդան կանգնում է արագ և շարունակում խոսել)* հայրս, կանչում էր խռովածի նման, պանդխտացած, աղերսում էր, որ մեկն իր հետ գա, ինքը մեն-մենակ է…Եվ երբ ոչ ոք նրան չարձագանքեց, նա ինձ խնդրեց, որ նորածին Թաթուլին նվեր տամ իրեն. Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի…: *(Դործողություն)* Երազային այդ վայրկյանին ես դուրս թռա անկողնուց, գրկեցի օրորոցը:

Թաթուլ ջան, ի՞նչ անուշ քուն ես մտել, լողում ես մանկական երազների ծովում: Ես փորձում եմ կենտրոնանալ, մոռանալ

մղձավանջը, ժխտել երազն ու նրա մանրամասները, սակայն այս անգամ համառ էր հորս ձայվածքը, խոսքը խրոխտ էր ու բարձրից: Պատերազմից չվերադարձած հորս դեմքն ու աչքերը բարի էին: Ես այդպես էի մտապահել նրան կռիվ գնալու օրը:

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – *(Արցախ-աղջիկը խոսում է, այդ պահին Սեդան նայում է երեխային, համբուրում է, պինդ գրկում և կամաց հեռանում է):* Սեդան չէր ուզում այսօրվա իր երազը վերապատմել, բայց «Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի» հայրական կանչը ծակում էր ականջները, անսովոր դղիրդով զարկվում թպրտացող սրտին:

(Արցախ-աղջիկը հեռանում է, հնչում է օրորոցային՝ կենդանի կատարմամբ, հետո փոխվում է երաժշտությունը, էկրանին գրվում է «Էսքիզ-Աղբյուր-հուշարձան», ու փոխվում է նկարը, էկրանին աղբյուրի պատկեր է, փոսփոսարը նամակն է բերում ու խոսելով Արցախ-աղջկա հետ՝ հեռանում են, ներս են մտնում երեք աղջիկ՝ կուժերը ձեռքներին, դրանք դնում են էկրանին պատկերված աղբյուրի տակ ու լսում):

«Էսքիզ-Աղբյուր-հուշարձան»

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – Աղբյուրի մոտ նստել էին կանայք: Իրենց հերթին էին սպասում: Ջուրը բարակ էր, տատիս կծիկից կախված բրդե սպիտակ թելի նման:

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Երանի տղի թուղթն էլ եկավ, նրա մոր աչքերը քոռանան, Ակոպը հենց նոր տարավ թուղթը:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – «Սև» բառը նա չդրեց «թուղթ» բառի կողքին: Սևը գիտեին, Արամի սև թուղթը երրորդն էր, թեպետ նոր-նոր էր սկսվում 1941-ի նոյեմբերը: Ուրեմն Հակոբը, Անդրանիկը, հիմա էլ Արամը:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Կանայք ավելի սմքեցին, անշարժացան, ու եթե հեռվից նայեիր, կարող էր թվալ, թե փոքր քարերի վրա մեծ քարեր են դրված:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – Երբ լաց է լինում քարը, մամուռ է գոյանում, իսկ մարդու լացից՝ ամայություն, որ ոչինչ չի լցնի այլևս…:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Կանայք նստել էին անշարժ, իսկ աղբյուրի տակ դրված կժից վաղուց արդեն թափվում էր ջուրը՝ կորչելով ցեխի, խոտերի մեջ:

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Տղաները՝ երեքն էլ, պիտի նշանվեին նոյեմբերին:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – Եթե կռիվ չլիներ: Չեն նշանվի, նրանց համար այլևս հարսնախոս չեն գնա:

(Աղջիկները վեր են կենում և հագնում են սև զգեստները, վերցնում են կժերը և գալիս են կենտրոն, դնում են կժերը ներքև ու կանգնում իրար կողքի, դեմքով դեպի հանդիսատեսը):

Եվ ով չգիտեր նրանց հարսնացուների անունները, իմացավ, որովհետև գյուղում սև հագած երեք աղջիկ, էլ ուրիշ ոչինչ չփոխվեց աշխարհում:

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Ինչ-որ մի լուռ դաշինքով՝ երեք աղջիկ աղբյուր էին գալիս շատ տարիներ՝ նույնիսկ կռվից հետո, երբ տուն էին դառել նրանք, ովքեր տուն պիտի դառնային…

– Ու մի առավոտ…

Դաշտ գնացող մարդիկ տեսան, որ աղջիկները դատարկ կժերը դրել են ոտքերի տակ, բարալիկ, տղամարդու մատներ չտեսած ուսերով կպել իրար ու չեն նայում ճանապարհին: Երևի վերջապես հասկացել էին, որ էլ չեն գա, երբեք չեն գա իրենց նշանածները…

– Քարացել էին: *(Երեք աղջիկները քարանում են):*

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – Բայց երբ իրիկունն իջավ, ու մարդիկ կամաց-կամաց ցրվեցին, տուն չգնացին աղջիկները: Կժերն էլ չտվեցին ոչ ոքի, կժերը քարով էին լցված, շատ էին ծանր:

Այդպես էլ մնացին աղջիկները՝ խռովված աշխարհից ու իրենց փեսացուներից, որոնք խաբեցին…

Չծերացան աղջիկները, չծերացան իրենց փեսացուների պես, որ մնացին անհայտ ճամփեքի վրա, ու հիմա էլ՝ տարիներ անց, դեռ կանգնած են աղբյուրի մոտ՝ տխուր, ջահել ու անմատչելի:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Ու ամեն անգամ, երբ անցնում եմ այդ կողմերով, ես կանգնում եմ գյուղի եռանկյունի աղբյուրի մոտ, բարևում եմ աղջիկներին: Նրանք չեն բարձրացնում գլուխները, բայց ես հպարտ եմ նրանցով: Ես ուզում եմ շնորհակալության խոսք ասել նրանց բոլոր հայ տղաների անունից, որ մնացել են աշխարհի անհայտ ճամփեքի վրա, և նրանց անունից, որ, ով գիտե, մի օր գուցե կմնան:

(Երաժշտություն, աղջիկները վերցնում են կժերը, և բոլորը հեռանում են բեմից, հետո գալիս է մեկը՝ զենքը ուսին, անցում է կատարում և հեռանում, էկրանին գրվում է «Էսքիզ-Մելիք Ֆրանգյուլ», ու փոխվում է նկարը, էկրանին գյուղի պատկեր է):

«Էսքիզ-Մելիք Ֆրանգյուլ»

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ողջույն:

ԳՐՈՂ – Ողջույն:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ինչո՞ւ ես մտամոլոր, ինչ ես անում այս կողմերում:

(Գրողը խոսելով նստում է իր սեղանի դիմաց, լցնում է կոնյակն ու սկսում գրել):

ԳՐՈՂ – Ջանգեզուրում՝ Արծվանիկ գյուղից փոքր-ինչ ներքև՝ միայնակ ընկուզենու տակ, գերեզմանաքումբ կա: Շատ անգամ եմ եղել այդ կողմերում, և ամեն անգամ ինձ իջեցրել են մեքենայից, երկար-բարակ բացատրել.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Մելիք Ֆրանգյուլի գերեզմանն է, դավաճանի…

(Գրողը վեր է կենում):

ԳՐՈՂ – Պատմական բացատրությանը հետևել է տարրական հայհոյանքը: Աշխարհին է հայտնի, որ դավաճաններ կան բոլոր ազգերում, բայց սիրտս ի՛մ ազգի համար է ցավում. մենք փոքր ազգ ենք քանակով, և դա է պատճառը, որ շատ ավելի նկատելի է դառնում դավաճանը: Հետո ուղեկիցս տհաճությամբ թքել է գերեզմանին՝ խորհուրդ տալով, որ ես էլ անեմ նույնը. կարգ է, երկու հարյուր տարվա ավանդություն: Գերեզմանի վրա ես ոչ մի անգամ ծաղիկ չեմ տեսել, նույնիսկ խոտ չի աճում. միայն աշնանը, երբ թափվում են ընկուզենու տերևները, պատահում է, որ գերեզմանի վրա էլ են ընկնում…

ՊԱՀԱԿ – Դավիթ Բեկի մեծ անունն իմացողը գիտե նաև, թե ով է եղել Մելիք Ֆրանգյուլը. եթե չլինեին նա և նրա նմանները, գուցե և հաղթեր Դավիթ Բեկը, գուցե…: Որքան հայտնի է ինձ, այսօրվա Հայաստանի հողի վրա դավաճանի ուրիշ գերեզման չի պահպանվել, չկա:

Եվ հաճախ մտածել եմ՝ ավելի լավ չէ՞ր, որ ժամանակը հողին հավասարեցներ այս գերեզմանը ևս, որ մենք չիմանայինք, չփոխանցեինք իրար այդ մարդու անունն ու գործը:

ԳՐՈՂ – Գուցե ա՞յս էլ հարկավոր է, գուցե միա՛յն հերոսների, նահատակների գերեզմանները քի՞չ են, որ սթափ մնա ժողովրդի հիշողությունը:

ՊԱՀԱԿ – Գուցե *(գնում է)*:

ԳՐՈՂ – *(Ասում է Սովետական Հայաստանին):* Երևի դա բնազդական գիտակցությամբ է, որ անհայտ ձեռքեր շարունակ հող են ավելացնում Մելիքի շիրիմին, և ապրում է դավաճանի գերեզմանը երկար ու տարօրինակ կյանքով:

(Գրողը նստում է բեմի եզրին):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Մի գերեզման:

Բայց թերթենք մեր պատմությունը. քանի-քանի այդպիսի գերեզմաններ կան նրա էջերում, և ինչքան գրողներ ու պատմաբաններ հին դարերից մինչև հիմա անընդհատ հող են ավելացնում այդ գերեզմաններին:

ԳՐՈՂ – Ես փակում եմ աչքերս և տեսնում բլուրներ, բլուրներ, որոնց տակ դավաճանների ոսկորներ են: Երբեմն ինձ զառանցանք է թվում այդ ամենը, թվում է հնարովի, սուտ, ինչպես անստորագիր նամակ, որ կարող է նաև բանաստեղծը գրել: Երբեմն ես չեմ հավատում նույնիսկ պատմիչ Եղիշեին, որի մատյանն աղոթք է, բանաստեղծություն, պատվիրան: *(Կանգնում է ու շարունակում խոսել):* Չեմ հավատում Րաֆֆուն, հին ու նոր այն գրողներին, որ կենդանացրել են մեր ժողովրդի պատմության ողբերգական անցքերը: Ես նրանց բոլորին կարդացել եմ, երբ 14-16 տարեկան էի, իսկ հիմա չեմ ուզում կարդալ: Չեմ ուզում նորից տառապել նրա համար, որ մեր ժողովրդի պատմության բոլոր կարևոր հատվածները լիքն են դավաճաններով: Եթե Վարդան է, նրա կողքին Վասակ կա, Սամվել է՝ Մերուժան Արծրունի, Գագիկ թագավոր է՝ Վեստ Սարգիս, Մխիթար Սպարապետ է՝ Միհրան Հարյուրապետ, և այսպես անվերջ:

Իմ ժողովրդի քանի-քանի սերունդ է մեծացել՝ կարդալով այս գրքերը և արյան ու կաթի հետ իբրև դեղահաբ կուլ տվել նաև այն տխուր իրողությունը. հայոց պատմությունն անհնար է առանց դավաճանների: Քանի-քանի սերունդ հաշտվել է այս մտքի հետ և արդարացման խոսք չի գտել, երբ օտարներն էլ ակնարկել են այդ մասին…

(Գրողը գնում նստում է սեղանի մոտ և սկսում է ծխել):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Չգիտեմ՝ ինչու հաճախ մտածում եմ, որ այդ դավաճաններից շատերին մեր մեծ ու փոքր պատմիչներն են հորինել, քանի որ, եթե չեն եղել նրանք, այդ դեպքում ինչպե՞ս բացատրել մեր ողբերգությունները: Նրանք պարզեցրել են ամեն ինչ, մեր պատմությունը դարձրել ընդամենը մեկ անհայտով հավասարում: Եվ թող ների ինձ Եղիշեն, եթե 1500 տարի

անց ես կասկածանքով եմ թերթում նրա սուրբ մատյանի էջերը, և ուզում եմ մեծ Դեմիրճյանին օգնության կանչելով՝ ուրիշ բանալի գտնել՝ Վասակ Սյունեցուն հասկանալու համար, այն Վասակին, որի անունը Եղիշեից հետո դարձավ հասարակ անուն բոլոր դավաճանների համար: *(Լռում է):*

Անհեթեթ մտքեր են: Այդ դավաճաններից շատերը պատմական անձեր են, նույնիսկ գերեզման ունեն, ինչպես Մելիք Ֆրանգյուլը: Պատմությունը գրատախտակ չէ, որ դուրդ չեկած նախադասությունը ջնջես:

(Գրողը կանգնում է ու սկսում խոսել):

ԳՐՈՂ – Եթե այդպես է, չեմ հավատում նաև պատմությանը, որը, ի միջիայլոց, մարդիկ են գրում: Եվ հետո ուրիշ է մեր պատմության գիրքը: Այն դեռ չի դարձել գրապահարանի վերին դարակի գիրք, որ հանում են հինգ-վեց տարին մեկ, այն մեզ համար դեռ ոչ միայն գրասեղանի, հաճախ ճաշասեղանի գիրք է, գրպանի գիրք, ճամփորդության ուղեկից, մի խոսքով՝ մեզ հետ է ինչպես մեր հոդացավը, մեր ստվերը, մեր անցագիրը: Դրա համար պիտի զգույշ լինել, զգույշ, որ այդ պատմությունն առաջին անգամ թերթող պատանին չխճճվի դավաճանների սարդոստայնի մեջ:

Ես կուզենայի, որ այդ պատանին չհավատար մռայլ ստվերներին, և երբ նրան ցույց տայինք Մելիք Ֆրանգյուլի գերեզմանն անգամ, երկար, շատ երկար հարկ լիներ բացատրել «դավաճան» բառը, և նույնիսկ դրանից հետո պատանին ասեր.

– Չեմ հավատում:

(Գրողը ասում և հեռանում է):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Չեմ հավատում:

(Սովետական Հայաստան-տղան ասում և հեռանում է բեմից, մթնում է, էկրանին գրվում է «Էսքիզ-Քաժակաճառ», փոխվում է էկրանի նկարը, ու ներս են մտնում տղաները՝ հարբած, երաժշտության տակ պարելով՝ գալիս նստում են, սեղանին են դնում օղին և բաժակները, գալիս է նաև գրողը):

«Էսքիզ-Քաժակաճառ»

ՀԱՐԲԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ 1 – ...Լցրո՛ւ՝ մի բաժակ խմենք...:

ՀԱՐԲԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ 2 – Խմենք մեր ժողովրդի կենացը, խմենք ոտքի վրա:

(Երգում է տղաներից մեկը «Իբրև արծիվ սավառնում ես» Անդրանիկի մասին երգը)։

ԳՐՈՂ – Զորավարի Անդրանիկի մասին է երգը։ Ես շատ եմ սիրում։ Երևի գերեզմանատան երգիչներից է *(ասում է Սովետական Հայաստան-տղային)*։

ՀԱՐԲԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ 2 – Ես ղուրբան մեր ազգին, նա, ով իր ժողովրդին բոլորից վեր չի դասում, նա մարդ չի, մարդ չի։

(Նորից պարելով՝ տղաները դուրս են գալիս՝ տանելով իրենց հետ բաժակներն ու օղին)։

ԳՐՈՂ – Ես չեմ լսում։ Ես չեմ ուզում խմել մեր ժողովրդի կենացը *(վերցնում է բաժակն ու կանգնած խոսում)*, և ինձ համար, ինչ մեղքս թաքցնեմ, մեր ժողովուրդը բոլորից վեր չէ։ Ես եղել եմ Դեր Զորում, Կարսում, նայել եմ Մուսա լեռին, անուժ նստել եմ Եփրատի ափին, և ինձ ազգասիրության դաս դժվար է տալ։ Բայց ես չեմ խմում այդ կենացը։ Չեմ խմում։ *(Դնում է բաժակը սեղանին և շարունակում խոսել)։*

Ես անաղմուկ սեղանին եմ դնում չխմած բաժակս, դուրս գալիս փողոց։ Փողոցներում իմ «տանջված» ժողովուրդն է՝ հրաշքաղջիկներ՝ հագնված ինչպես Փարիզում, շտապող, գործնական տղամարդիկ, որոնց հայացքին ասես էլեկտրական հոսանք է միացրած, չշտապող ծերունիներ, հոլի կանայք, ավտոմեքենաների հեղեղ։

Մենք ծեր ժողովուրդ ենք, գուցե և հոգնած, մեր հավաքական դեմքին կնճիռներ կան, մեր հավաքական սիրտը հազար ինֆարկտ է տարել, բայց հարկավո՞ր է ամեն օր հիշել այդ մասին, հիշել, կրկնել, դիմել բաժակաճառի, հոգոցների, հարկավո՞ր է…

Ես հանկարծ ուզում եմ, որ հրաշք պատահի, որ գոնե մի հիսուն տարով մեր ժողովուրդը կորցնի իր հիշողությունը, մոռանա, որ Գառնի է կառուցել, որ մեր թատրոնը 2000 տարեկան է, որ եղել է 1915 թվական, որ Արարատը ամենագեղեցիկ սարն է աշխարհում։ Մտածի, որ նոր-նոր է ծնվել, որ ամեն ինչ նոր-նոր պիտի սկսի. բացի առաջին առուն, դնի առաջին քարը, գրի առաջին հայատառ նախադասությունը, ծնի իր առաջին տաղանդավոր զավակին։

Հետո ես, այնուամենայնիվ, մտնում եմ սրճարան և մի բաժակ օղի վերցնելով՝ խմում եմ մեր ժողովրդի կենացը։

Ես արդեն վաղուց գիտեմ, անսխալ կարող եմ ասել, թե նման սեղանների վրա օղու որերորդ շշից հետո կխմեն մեր ժողովրդի կենացը, ինչ երգ կերգեն, ինչ կասեն կենացից առաջ և հետո: *(Ասում և նայում է իր սեղանի մոտ: Գալիս է Հայաստան-աղջիկը):*

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Ո՞ւմ են ասում այս բոլորը, ովքե՞ր են սրանք. երևի վաճեցու, մշեցու, կարսեցու զավակ կամ թոռ, կամ վաճեցի, մշեցի, կարսեցի: Ի՞նչ են ուզում:

ԳՐՈՂ – Այս ներկայացման վարագույրը ե՞րբ կիջնի, ե՞րբ…

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Ե՞րբ բացվեց այս ողբերգության առաջին արարի վարագույրը: Ե՞րբ…

ԳՐՈՂ – Երևի այն դարում *(կանգնում է),* երբ մենք առաջին անգամ կորցրինք մեր պետականությունը և ապավինել սկսեցինք նահատակի լուսապսակին, խելահեղ հերոսությանը, բանավոր հայրենասիրությանը, ցնորքներին, որ մարմին չունեն, երբ սկսեցինք ապրել ոչ թե մեր ոտքի տակի հողով, այլ կորցրածով և դրա համար էլ սկսեցինք կորցնել ավելի շատ:
Հոգնել եմ: Հոգնել…, հոգնե՛լ:

(Գրողը նայում է բեմի եզրին՝ գլուխը ափերի մեջ, մի քիչ մթնում է):

ԳՐՈՂ – Երբ անցանք Կարսը, Ախուրյան մտանք, սիրտս զարմանալիորեն թրթռաց, մտածեցի, որ հետևում մնացածը գուցե ուղեղային մորմո՞ք է իսկապես, սրտի հիվանդությո՞ւն…Եվ թող ներեն ինձ Տիգրանակերտը, Անին, Կարսը *(կանգնում է),* եթե ես այդ կենդանի, թրթռացող Նաիրին եմ համարում իմ առաջին գործը, առաջին սրբությունը և հենարանը: Այդ Նաիրին ինձ է նայում ոչ թե հին քարտեզներից, ավերակներից ու հիշողության ծալքերից, այլ շեն տների երդիկներից, քարերից, այն ամեն-ամեն ինչից, որ կա այս 30 հազար քառակուսի կիլոմետր հողի վրա:

(Վերցնում է բաժակը):

Երկրորդ բաժակը ես խմում եմ միանգամից, մի թափով, խմում եմ այդ 30 հազար քառակուսի կիլոմետրի կենացը, որ կենդանի՛, ապրող Նաիրին է: *(Խմում և նայում է, մթնում է մի քիչ)*:

(Ժամանակակից պարզ երաժշտություն):

Վերջ առաջին մասի

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

(Նույն տեղում է, որտեղ ավարտվեց առաջին մասը: Շարունակություն):

ԳՐՈՂ – Երկու հայից մեկի մեջ անավարտ բանաստեղծ կա, ամեն հայի մեջ մի ավարտված փիլիսոփա և առնվազն կես արտաքին գործերի նախարար: Չենք ունեցել ամբիոն, չենք ունեցել նախարարական պորտֆել, բանաստեղծի գրասեղան, մնացել է… հացի և գինու սեղանը: Ու ամեն մեկն ուզեցել է ցույց տալ, որ ինքը բանաստեղծ է, փիլիսոփա, նախարար… Ու բաժակաճառ են ասել:

Երևի մի օր, եթե խելոքանամ, կգրեմ «Ասք բաժակաճառի մասին…»:

(Գրողը խոսում և դուրս է գալիս բեմից, մթնում է, էկրանին գրվում է՝ «Էսքիզ-Պատմական զուգորդություն, Վարդան (1941) – Դուշման Վարդան (1992)», Սասունիկ (1941) – Թաթուլ Կրպեյան (1991), էկրանին փոխվում է եկեղեցու պատկեր, և ներս են մտնում դերակատարները: Բեմի մի կողմում նստարան է դրված, որի վրա նստած է Սոնա մորաքույրը և գուլպա է գործում: Մյուս կողմում նստած է Զարիկ մայրիկը և նույնպես գուլպա է գործում: Վառվում է լույսը Սոնա մորաքրոջ կողմում):

«Էսքիզ-Պատմական զուգորդություն»

(Հեռավոր երաժշտություն, որը պատերազմ է հիշեցնում՝ «Թռչնի մտքով տուն», դահլիճից վազելով՝ գալիս է նամակ ընթերցող-աղջիկը):

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Սոնա մորաքո՛ւյր, Սոնա մորաքո՛ւյր, Վարդանից նամակ կա:

(Նստում է գետնին և ընթերցում է նամակը):

«...Իմ շատ սիրելի և թանկ մայրիկ,

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Տառ-տառ, հնարավորին չափ զրնգուն ու մաքուր առոգանությամբ կարդում եմ ես, իսկ Սոնա մորաքույրը նստել է ցածրիկ աթոռին: Լսում է, լսում է ու լաց է լինում անձայն, անշշուկ: Ինչո՞ւ է լաց լինում:

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Ուրեմն մայրիկիս ասեմ՝ կռվում ենք, դու քեզանից գրի: Խաղողը հավաքեցի՞ր, ո՞վ թիկունք եղավ, Սիմոն քեռուն ասեիր…»:

ՍՈՆԱ ՄՈՐԱՔՈՒՅՐ – Խեղճ Սիմոն քեռի, որի՞ս խաղողը հավաքի, նրա երկու եղբայրը գնացին, տղան՝ Սմբատը, գնաց, որի՞ն հասնի: Հավաքել եմ, հավաքել եմ, Վարդան ջան, հավաքել եմ, տրորել,

շիրան կարասներում պճպճում է, հարսանիքիդ գինին կա, հարսնացուդ կա… *(Հուզվում է)*:

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Ուրեմն որտե՞ղ մնացինք, հա... «Ո՞վ թիկունք եղավ»: Չէ՛, կարդացել եմ: «Շուտով ձյուն կգա, իսկ ես չհասցրի մեր կտուրին հող քաշել, մեկն ու մեկին փող տուր, թող հող քաշեն, թե չէ ձմեռը կկաթի: Չվախենաս, բայց երեկ ոտքերս փետացան, չէ, չէ, ցուրտը չի տարել, մի քիչ մրմռում են, իմ բաժին սպիրտով, որ տվել էին խմելու, շփեցի, կանցնի, չմտածես…»:

ՍՈՆԱ ՄՈՐԱՔՈՒՅՐ – ...Նորից կարդա այդ տեղը, արևիդ մատաղ, տառ-տառ կարդա, լավ չլսեցի…

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Տառ-տառ եմ կարդում.

Լավ, ի՞նչ մի մեծ բան է՝ ոտքերը մրսել են, մի տասը-քսան բաժակ թեյ խմի, մրսածությունը կանցնի-կգնա:

(Նամակ ընթերցողը իջնում է բեմից և գնում):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Տարիներ անցան, և պատմությունը նորից կրկնվեց, բայց այս անգամ…

(Վազելով մտնում է նամակ ընթերցողը ու բարձրանում բեմ՝ այս անգամ Զարիկ մայրիկի մոտ, որտեղ վառվում է լույսը, իսկ մյուս կողմում՝ հանգչում):

ՆԱՄԱԿԸ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Զարիկ մայրի՜կ, Վարդանն Արցախից նամակ է ուղարկել:

ԶԱՐԻԿ ՄԱՅՐԻԿ – «Մամա՜, իմ ամենաբարի ու սիրասուն մամա՜, իմ ամենագութ ու գթասիրտ, իմ կարոտա՜ծ: Գիտեմ՝ երկար ես սպասել այս նամակիս, անհանգիստ ու մանրիկ քայլերով արդեն քանի՜ անգամ…

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – *(Զարիկ մայրիկը խաղում է)*: «Գիտեմ՝ երկար ես սպասել այս նամակիս, անհանգիստ ու մանրիկ քայլերով արդեն քանի՜ անգամ չափել ես սենյակի լայնությունն ու երկարությունը…, անխիղճ է որդիդ, մա՜մ…Բայց դե գոյամարտ է, մամա՜ս, պատերազմ. հայրենի հողն ենք պահում: Հենց հիմա քո գործած գուլպաները ոտքերիս են. քո գործած գուլպաներով ես ավելի ուժեղ եմ, մա՛մ, շարունակի՛ր գուլպաներ գործել, որ մայրական հավատը լինի մեր կողքին, ու մենք կվերադառնանք հաղթանակա՛ծ…

Կարոտե՜լ եմ, մամա՛ս, բայց ների՛ր, չեմ ուզում թուլանալ, հոգի՛ս, իմ ամենա…, ամենակարոտ:

Մա՛մ, հավատա, ուր էլ գնամ, տուն եմ գալու…»:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Երկու օր հետո՝ դասերից տուն գալիս, մտա Սոնա մորաքրոջ մոտ:

(Նամակ ընթերցողը մուտևնում է Սոնա մորաքրոջը):

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Նամակ չկա՞:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Սոնա մորաքույրը գլուխը տխուր օրորեց, հետո ցույց տվեց թախտին դրված բրդե գուլպաները:

ՍՈՆԱ ՄՈՐԱՔՈՒՅՐ – Ուղարկեմ Վարդանիս, ես նրա ոտներին մեռնեմ: Սաղ գիշեր գործել եմ…

Լավ, փափուկ գուլպաներ են՝ սպիտակ բրդից:

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Էլ ոտքերը չեն մրսի, նամակ եկավ թե չէ, ձայն տուր, որ գամ՝ կարդամ…

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Նամակ այլևս չեկավ:

Չվերադարձան մեր վարդանները, չվերադարձան պատմության տարբեր ժամանակներից, իսկ «Մա՛մ, հավատա, ուր էլ գնամ, տուն եմ գալու…» արտահայտությունը մինչ օրս զրնգում է նրանց մայրերի ականջներում:

ՍՈՆԱ ՄՈՐԱՔՈՒՅՐ – Քանդել եմ իմ ունեցած բոլոր ներքնակները՝ բացի Վարդանի ներքնակից: Մեկ էլ հանկարծ առանց հեռագիր տալու եկավ, դուռը ծեծեց, ինչի՞ վրա քնի…

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ինչպես հետո պարզվեց, Վարդանը զոհվել էր ոտքերի ցրտահարումից:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Իսկ վերջին օրերին Սոնա մորաքույրը այլևս գուլպա չէր գործում, մինչև մութն ընկնելը նստում էր դռան մոտ սարքած փայտե նստարանին ու նայում էր: Ո՞ւր էր նայում:

(Երգ՝«Այ սիրուն չի»: Սոնա մորաքույրը դուրս է գալիս):

Տարիներ են անցել, էլի կանցնեն, ես երբեք չեմ մոռանա իմ սքանչելի Սոնա մորաքրոջը, որ իմ մորաքույրը չէր, որ պատերազմի բոլոր տարիներին՝ ամեն օր, գուլպա էր գործում կռիվ գնացած զինվորների համար, որոնցից միայն մեկն էր իր որդին:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Միայն մե՞կը:

ՆԱՄԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂ-ԱՂՋԻԿ – Մե՞կը…

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Մեկը:

(Առաջ է գալիս մի քայլ ու ասում):

Մի՞թե թշնամին այդպես էլ չհասկացավ, որ տարբեր ժամանակներում մոր սիրտը նույն կերպ է զգում ողբերգությունը: Ես զարմանում եմ, որ այսքան տարիներ հետո նորի՛ց է կրկնվում պատմությունը:

(Այս խոսքից հետո դուրս են գալիս, և փոխվում է էկրանի նկարը, նկարում Դուշման Վարդանն է):

ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆ

ՋԱՐԻԿ ՄԱՅՐԻԿ – Վարդանս կերակրել էր թշնամուց մնացած մի փոքրիկ հորթուկի, ա՛յն Վարդանը, որն ուներ Դուշման մականունը, որն ահ ու սարսափ էր թշնամու համար, որի անունը լսելիս թշնամին արդեն թշնամի չէր, բայց կենդանիներն այդ մականունն իրենց մաշկի վրա երբեք չզգացին, այն էլ, երբ պատերազմ էր:

ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆ – Մեր սնունդն այդքան շատ չէ: Ամենակարևորը մարդ մնալն է:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Առանց հիշելու Սումգայիթյան ջարդերը, Բաքվի կոտորածը, 1915-ը, Թալիշը ետ քայլենք հինգերորդ դար, երբ Հազկերտի հարեմը գերի էր Մուշեղ Մամիկոնյանի մոտ: Ես չեմ հավատում, որ հարեմը Հազկերտի արքունիքում ավելի արժանապատիվ կյանք էր ունեցել, ես հիմա էլ չեմ հավատում, որ հորթուկն իր նախկին տերերի մոտ ավելի կուշտ է եղել, որ աղրբեջանցի կանայք ու երեխաները, որոնք գերի էին մնացել մի հայկական գյուղ ազատագրելուց հետո, իրենց երկրում ավելի լավ կյանք են ունեցել, և որոնց Վարդանը ճանապարհել է ամենաանվտանգ վայրից: Այստե՛ղ է ազգերի տարբերությունը, իսկ համեմատությունն այնքան ոչ մարդկային կլինի, որքան քնած մարդուն սպանելը:

ՋԱՐԻԿ ՄԱՅՐԻԿ – …Իսկ Վարդանս երբեք զենքով տուն չէր մտնում, անգամ՝ թշնամու տուն:

Մի անգամ պատերազմական իրավիճակում մտնում է աղրբեջանցու մի ընտանիք, հենց այդ ժամանակ Վարդանի համար գլխագին էր սահմանված. գիտեին, թե ո՛վ է Դուշմանը: Վարդանը տեսնում է օրորոցի մեջ լացող երեխային, գրպանից կոնֆետ է հանում ու քսում փոքրիկի շուրթերին, հետո մոտենում է մորը, տալիս է վիտամինների կապոց ու ասում.

ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆ – Երեխայիդ դաստիարակի՛ր այնպես, որ իմ ազգի վրա զենք չբարձրացնի. վաղ թե ուշ իմ երեխան քո երեխային հաղթելու հնարավորություն հաստատ կունենա:

ՋԱՐԻԿ ՄԱՅՐԻԿ – Տան ծերունի պապը Վարդանին խնդրում է իր հետ նկուղ գնալ: Վարդանն աղրբեջանցու հետ միայնակ իջնում է նկուղ, որտեղից ծերունին դուրս է բերում իր պահած զենքերը տալիս Վարդանին ու ասում՝ սրանք ավելի շատ ձեզ են հարկավոր:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ես կանգնած եմ Վարդանի լուսանկարի առջև: Խաղաղ ու պայծառ են աչքերը, մի քիչ էլ՝ թախծոտ: Ժպտում է: Կամ էլ եղել է ծիծաղի մի քանի վայրկյան, իսկ լուսանկարիչը որսացել է այն: Ես հիմա եմ հասկանում մարդկանց չքողարկվող տխրությունն ու հպարտությունը քո մասին խոսելիս, որովհետև տեսել եմ Զարուհի մայրիկի տամուկ, բայց չլացո՛ղ աչքերը:

ՋԱՐԻԿ ՄԱՅՐԻԿ – Իսկ Զարիկ մայրիկի գործած գուլպաների կծիկը դեռ չի վերջացել ու վերջանալու միտում էլ չունի. այսօր էլ Վարդան Ստեփանյանի՝ Դուշման Վարդանի 76-ամյա Զարուհի մայրիկի գործած հագուստները կարծես զրահ են մեր զինվորների համար:

(Դուրս են գալիս, երաժշտություն – «Միապերս ու ես» երգը, մթնում է, և փոխվում է էկրանի ֆոնը, ֆոնում լեռներ են, ներս է գալիս լրագրողը և նստում սեղանի մոտ):

ԼՐԱԳՐՈՂ – Իմ սեղանին դարչնագույն մեծադիր մի գիրք է, որի կազմի վրա բրոնզե ծաղկավոր տառերով դաջված է՝ Սասունիկ: Թերթում եմ, էջերը տպված չեն, այլ մեքենագրված, առաջին էջին ջահել տղայի մի պարզ լուսանկար: Լուսանկարի տակ թվականների մի տխուր զույգ՝ 1921-1941:

Կարդում եմ նախաբանը: Գիրքը լուսանկարի տղայի՝ Սասունիկի պատմությունն է, հավաքել, կազմել է հայրը, չի հասցրել «հրատարակել»: Այդ արել են նրա մահից հետո՝ 1969-ին: «Հրատարակել են» 9 օրինակ, Սասունիկը 9 քրոջ միակ եղբայրն է եղել: Այս ամենը ես իմանում եմ հենց առաջին էջերից, զարմանում եմ, տխրում, շարունակում եմ կարդալ…

Տարբեր գրքեր եմ տեսել՝ հին, նոր, մեծ, փոքր, զարմանալի, սովորական: Բայց ինձ ցնցում է այս «գիրքը», որ հասարակ, նախնական է ջրի պես, կտրված մատից հոսող արյան պես, հացի պես… Ութ մաս ունի գիրքը:

«Սասունիկը զոհվեց քսան տարեկան հասակում… Նա ապրեց կարճ, բայց խոր ու բովանդակալից կյանք… Իսկ այս փոքրիկ հուշագիրքը կշարունակի խոսել նրա լեզվով…»: Երկրորդ բաժնում Սասունիկի աշակերտական բանաստեղծություններն

են, հետո՝ հրամանի քաղվածք համալսարանից՝ «…Աշխ.-գեոլոգիական ֆակուլտետի գեոլոգիական բաժնի 4-րդ կուրսի ուսանող Սասունիկ Գրիգորյանին տալ տարկետում բանակ գնալու պատճառով: 26-ը նոյեմբերի 1941 թվականի…»:

Այո՛, տարկետում…Շատ երկարեց:

Ապա՝ ուսանողական տարիների նամակագրություններ, հետո՝ բանակից ուղարկած նամակները:

ՍԱՍՈՒՆԻԿ – «…Այսպիսով, սիրելի՛ հայրիկ, մայրիկ, ես Երևանում ոչինչ չեմ թողել՝ բացի երեք ամսից, այն ամիսները, որ ամփոփելու էին տասնչորս տարվա չարչարանքս, սակայն այդ ևս կլինի, դա կլինի մեր հաղթանակից հետո»:

ԼՐԱԳՐՈՂ – Նա երեք ամիս հետո պիտի ավարտեր համալսարանը: Հետո մի քանի նամակներ՝ գնացքներից, կայարաններից, հետո այն, որ պիտի դառնար վերջինը.

ՍԱՍՈՒՆԻԿ – «Սիրելի՛ ծնողներ, գնում եմ ռազմաճակատ՝ Սևաստոպոլ… Չմտածե՛ք իմ մասին. ես մինչև իմ վերջին շունչը կկռվեմ հանուն մեր հայրենիքի, ձեր և իմ սիրելի քույրերի ազատության համար… Անցած քսան տարին ոնց որ երազ լիներ, ամեն րոպե հիշում եմ միայն մեր տունը…Գրում եմ դեռ Փոթիից, իսկ այսօր երեկոյան դուրս ենք գալիս. դեկտեմբերի 9-ը, 1941 թվական»:

ԼՐԱԳՐՈՂ – Իսկ դեկտեմբերի 23-ին Հայաստան է հասնում հեռագիրը. «Պառկած եմ հոսպիտալում, շտա՛պ արի Սոչի»:

(Ասում է հանդիսատեսին):

Հայրն ու մայրը շուտափույթ ճանապարհ են ընկնում, սակայն չեն հասցնում զինվորական գոսպիտալում ողջ տեսնել Սասունիկին:

Այսպես հայրն ու մայրը երկուսով պատերազմի ահավոր մղձավանջի միջով տանում են իրենց որդուն …մինչև Սուխումի: Այստեղ, երբ արդեն անհնար է լինում շարունակել ճանապարհը, ծնողները հողին պահ են տալիս իրենց որդուն, և միայն երկու տարի անց՝ 1944-ին, հայրը կրկին գնում է որդու ետևից, և այս անգամ նրանք վերադառնում են «երկուսով»: …Հիմա Սասունիկի շիրիմը հայրենի գյուղում է:

Այստեղ ես կարող եմ ավարտել նաև պատմությունը, եթե ավելացնեմ, որ Սասունիկի հայրը, 1915-ին օսմանյան սրից փախչելով, իր չորս աղջիկների հետ անցնում է Ախուրյանը, հաստատվում Շիրակում և նա հինգ աղջիկ ունենալուց հետո աշ-

խարիի չափ ուրախանում վերջին զավակով, որ առաջին տղան էր:

Այդպես երազել տղա զավակի մասին, այդպես փայփայել նրան և քսան օր շարունակ կրել նրա դագաղը, քսան գիշեր լուսացնել՝ նայելով նրա մոմե դեմքին, կարող է միայն իսկական տղամարդը՝ ամենափխրունը բոլոր արարածների մեջ: Այդպես ապրել վշտի ցավը և երկու տարի անց վերադառնալ որդու ետևից՝ նրան հայրենի գյուղ տանելու, անհնար է անգամ իսկական տղամարդու համար…

Եվ հետո երկար տարիներ հավաքել որդու ոշխարները, ցույց տալ այդ ամենը մարդկանց, նաև Ավետիք Իսահակյանին ու խնդրել, որ որդու մասին մի բան գրի Վարպետը: …Ու մեռնել այդ հավատով՝ վերջին շնչում էլ կտակելով փայփայել որդու հիշատակը: Եվ այդ կտակը՝ իբրև հրաման, դատավճիռ: Իսկ այդպիսի դատավճիռը բեկանման ենթակա չէ:

Խոնարհե՛ք ձեր գլուխները հոր առաջ:

(Ներս է մտնում գրողը):

ԳՐՈՂ – Պատմությունն անիվ ունի, որը պտտվում է անընդհատ: Երբ դանդաղում է պատմության անիվի ընթացքը, ուրեմն պատերազմ է: Մեր պատմության ընթացքում անիվը հաճախակի է դանդաղել, երբեմն ջրափոսն է ընկել, բայց այն միշտ շարունակում է կրկնել ճակատագրերը՝ վարդաններ, Սասունիկ, Թաթուլ Կրպեյան:

Թաթուլ Կրպեյանը ծնվել է 1965 թվականի ապրիլի 21-ին՝ Եղեռնից 50 տարի հետո: Պատահականությո՞ւն, թե՞ չհաստատված օրինաչափություն: Հինգ տասնամյակ, հիսուն տարի, կես դար հետո ծնվեց Թաթուլը, որ հաստատվի, որ դարն աղաղակի, ժամանակը թաթուլահարվի. մենք այստե՛ղ ենք: Գաղափարը զորացավ Արցախյան ազատամարտում: Արցախը սպասում էր Թաթուլին, սպասում էր, քանի որ քաջը քաջատեղյակ էր իր պատմությանը, գիտեր և՛ հերոսներին, և՛ հրոսակներին:

(Ներս է մտնում Արցախ-աղջիկը):

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Թաթուլը հաստատեց բանաձևը՝ գրիչ ու զենք միասին, գուցեև առանց գիտակցելու, որ դա պիտի լինի վերածնվող ազգի առաքելությունը. զենք ու գրիչ միասին՝ թաթուլյան բանաձևը, քանի որ ի

սկզբանե էր բանը. եթե երկու «զենքերից» մեկը վար դնենք, անարդյունք կլինի յուրաքանչյուր մաքառում…

(Ազգագրական պարեղանակ, որի ֆայլը դանդաղ ցածրանում է, էկրանին Թաթուլի նկարն է)։

ԼՐԱԳՐՈՂ – Բացում եմ լուսանկարների ալբոմը. թերթերն այրում են մատներս. լուսանկարում պարում է Թաթուլը, ես լսում եմ ազգային երգի անպարտելի հնչյունները, զգում Արտին լեռան ստորոտն անմահացնող ոգեղեն պարի ուժգնությունը…

Հոնեղ ճակատը ճակատամարտ է տալիս պատմության հետ, պատմություն, որ իր լուսանցքներից միգուցե դուրս պիտի թողներ Վասակին ու Մելիք Ֆրանգյուլին, իսկ ահա մյուս լուսանկարում *(փոխվում է նկարը՝ Թաթուլն է փոքրիկ Ասպրամի հետ)։*

Թաթուլն իր ամրակուռ բազուկներով կրծքին է սեղմել իր Ասպրամին. այնպե՜ս ամուր ու հպարտ է սեղմել ու… խաղաղ է հայացքը. մոռացել է Վասակի ու Մելիք Ֆրանգյուլի մասին: Հայացքի խաղաղությունն Ասպրամ անունն ունի: Լուսանկարների վերջին էջում Թաթուլի ձեռագրով թուղթ է՝ նամակ Արցախից:

(Նրանք դուրս են գալիս բեմից, ներս են մտնում Թաթուլն ու Սեդան, նրա չեռքում Թաթուլի նամակն է, նստում է նստարանին, իսկ Թաթուլը ասում է այն, ինչի մասին գրված է նամակում, Սեդան խաղում է)։

ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆ – Իմ ամենամոտի՜կ, էրգրի թախծամըմունջ հառաչանքները կրող Սեդա մայրիկ, ո՜նց կուզեի անուշաբույր ժպիտով հանդիմանեիր ինձ, որ այսքա՜ն մոռացել եմ քեզ: Մի՛ նեղացիր, մայրի՛կ, գիտես քո անհնազանդ որդուն դեռ օրորոցից. քելե լաո, քելե էրթանք մըր էրգիր…, դեռ հիշում եմ, ականջներիս մեջ է: Հիմա ռազմերգ են երգում տղերքը, կռվում է որդիդ… Արտին լեռը մեզ զորավիգ… Այս որտեղի՜ց լավաշի ծաղկածիծաղ բույրը: Մամ ջան, քո խնոցու թանը կհագեցներ ծարաված որդուդ ու ուժ կտար. կլկլան թանը, կարագը. է՜, մամ ջան, չմտածես, մի բան էր՝ ասացի: Մայրի՜կ, բայց դու միշտ ինձ սովորեցնում էիր, որ չհանձնվեմ. միտք էլ չունեմ, լուսառատ կերպարդ ինձ վահան է դարձել: Հա՛յ մամիկների աղոթքները մեզ զորավիգ:

Է՜հ մամ, էլի նամակս չստացվեց, չէ՜…: Դու էլի արտասվում ես ու գոգնոցով սրբում թախծոտ աչքերդ: Սիրում եմ քեզ, մայրի՛կ:

(Սեղան համբուրում է նամակը, սեղմում կրծքին ու հեռանում)։

ԳՐՈՂ – Նամակի վրա մատուռահառաչ մոմի հետքեր կան, որ չեն մաքրվի, ինչ էլ լինի, ինչպես արդեն քանի դար չի մաքրվում ու չի մաքրվի մատուռի ու մատուռին հենված խաչքարի պատմությունը։ Այնպես էլ հավերժի հետ կմնա Արտին լեռան կապտամրմունջ թախիծը, որը, շաղախվելով Սեղա մայրիկի սրբասուրբ կարոտին, կսպասի որդուն, իսկ որդի Թաթուլն Անմահություն է արդեն…

(Մթնում է, էկրանին գրվում է «Էսքիզ-հետևանքներ»)։

«Էսքիզ-Հետևանքներ»

ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – Ես մտածում եմ, թե ինչ կլինի, եթե Երևանի «Արմենիա» հյուրանոցի առջևի մայթը մագնիտոֆոնի ժապավեն դառնա հանկարծ և ձայնագրի մարդկային քայլերը, ձայները, գուցեև արցունքները։

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ-ՏՂԱ – Դուք ոչինչ չե՞ք լսում։ Չե՞ք լսում անիվների ձայնը, ձեռնասայլակի անիվների։ Ութսունչորս տարեկան անղամալույծ Հովակիմ Թութունջյանն է։ Ամերիկայի Լոս Անջելոս քաղաքից է եկել՝ այդ ձեռնասայլակի մեջ նստած։ Քայլել չի կարող, իջնել չի կարող։ Նրան անհարմար ճամպրուկի պես տեղափոխել են այստեղից այնտեղ. եկել է նավով, օդով, գնացքով և հիմա «Արմենիա» հյուրանոցի մոտ է։

ՀՈՎԱԿԻՄ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆ – Ասիկա մերն է, կհասկանա՞ս, ըսենք՝ չես հասկնար։ Դուն հոս ծնած ես, չես հասկնար։ Օր մը Ներսեսիկս լալով եկավ. «Հայրի՛կ,– ըսավ,– այս րոպեիս կուզեմ հայրենիք երթալ»։ Ահմեդն ըսավ՝ կորեք մեր երկրեն, ֆուտբոլ կխաղայինք, ըսավ, թե մենք թափառական շուն ենք, ըսավ՝ մեզ ոչ մեկը չի սիրեր…։ Ահմեդը մեր դրացիին մանչն էր։ Գեշ դրացի չէին, բան չունեմ, բայց Ներսեսս գնդակ զարկած էր անոնց դարպասին մեջ, մտաբերած էին, որ հայ է։ Կհասկնա՞ս։ Չես հասկնար…

(Միացված է ռադիո, որը խառը հայներ է արձակում)։

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – Անջատե՛ք մագնիտոֆոնը, մանավանդ որ դա մագնիտոֆոն էլ չէ, այլ սովորական ասֆալտ, իսկ «Հայրենիքի ձայն» թերթի յուրաքանչյուր համարում հարյուրավոր հայ մարդիկ դեռ փնտրում են հարազատներին։

Ընկերոջս՝ Վարուժանի տան պատին գո՞րգ էր, ասեղնագործ նկա՞ր էր, ի՞նչ էր…

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ – Դրոշ է, պապիս քաղաքի հին դրոշն է: 1916-ին Հալեպ է հասցրել՝ մեջքին կապած, տասնհինգ տարեկան է եղել պապս…

Պա՛պ, դու էիր երգում. «Հայաստան, երկիր դրախտավայր» ու Հալեպից նայում էիր Հայաստանի կողմը, հիմա գիտեմ՝ այստեղ էիր նայում:

Ասում էիր՝ պի՛նդ պահեք Հայաստանը, դողացե՛ք անոր ամեն մի քարու վրա:

Պի՛նդ ենք պահում, պա՛պ, ապրեիր, դո՛ւ էլ տեսնեիր, թե ինչ Հայաստան ունենք:

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – Եվ ես հիշեցի՝ ինչպես տարիներ առաջ Սան Ֆրանցիսկոյում ես հանդիպեցի իմ մի համագյուղացուն: Նա 40 տարի չէր եղել Հայաստանում: Մի օր իր տուն տարավ. «Նկարիչ եմ կանչել, ասաց, ամերիկացի է, ասաց, կաղաչեմ՝ նկարագրիր նրան մեր Մուշի ձորը, հին կամուրջը, թող նկարի, կուզեմ տանս պատին ունենալ…»:

Նկարիչն ինձ տարօրինակ հարցեր տվեց. «Ի՞նչ գույնի է ձեր կանաչը, ձեր քարերը ի՞նչ գույնի են, ձեր օդը…»: Ես պատասխան բառեր որոնեցի, բայց չգտա, ինչպես օտար մեկին պատմես քո հայրենի գետի գույնը, քարի գույնը, օդի գույնը: Օդը պատմել կլինի՞: Եվ երևի հենց այդ պահին էր, որ հասկացա՝ հայրենիքն այն է, որ ուրիշին պատմել չի լինի: Այդ ամենն ինձնից առաջ և հազար անգամ ավելի լավ գիտեր Վարուժանի պապը և հազար-հազար վարուժանների հազար-հազար պապերը, որոնք իրենց զավակներին կտակեցին իրենց կուտակած ամենամեծ հարստությունը՝ հայրենիքի սերը: Եվ նրանք եկան, հազարներով գալիս են ու կգան:

Պապի՛դ կենացը, Վարուժա՛ն:

(Երաժշտություն «Կռունկ»՝ կենդանի կատարմամբ: Փոխվում է էկրանի նկարը, ուր երևում է Կոմիտասի արձանը):

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – Ես գնում եմ Կոմիտասի այգի…

Ո՛չ, ես չեմ գնում Կոմիտասի այգի: Հիշում եմ մի հանդիպում, որ եղավ այս տարի Երևանի բանկի ընդհանուր սրահում՝ ապակե պատուհաններից մեկի մոտ: Հալեպից հյուր էր եկել, իմ ծանոթն էր, խնդրեց, որ միասին բանկ գնանք՝ սիրիական դրամը մերով փոխելու: Բանկի աշխատակցուհին և իմ ծանոթը

խոսում էին, երբ նույն պատուհանին մոտեցավ հիսուն-հիսունհինգ տարեկան մի մարդ:Նա մեր դրամն էր փոխում դոլարների:

– Ամերիկա՞ եք մեկնում:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ – Թյուրքիա:

ՍՓՅՈՒՌ-ՏՂԱ – Ե՞րբ:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ – Առավոտ կանուխ:

ՍՓՅՈՒՌ-ՏՂԱ – Գեղեցի՛կ քաղաք է Ստամբուլը: Շրջելո՞ւ եք գնում, թե՞ ազգական ունեք:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ – Մշտապես:

ՍՓՅՈՒՌ-ՏՂԱ – Մշտապե՞ս:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ – Այո՛, կբավե, երկու տարի ապրեցանք ձեր երկրում, կշտացանք…

ՍՓՅՈՒՌ-ՏՂԱ – Կշտացա՞նք: Կշտացանք: Այսինքն՝ հայրենիքից կշտացանք, Երևանից, Մասիսից, Ծիծեռնակաբերդից կշտացանք. կարծես թե հայրենիքը խորոված է, գարեջուր կամ երգ, որ լսում ես հազար անգամ:

Ես չկարողացա գտնել պատասխան բառեր: Ծխախոտ վառեցի, ծխեցի:

Ու ես ոչինչ չասացի նրան, չփորձեցի ոչինչ բացատրել: Ուզեցի միայն, որ այդ մարդը այնտեղ՝ Բոսֆորի ափին, երբեք չերգի «Անտունին», չտա Մեսրոպ Մաշտոցի անունը, մոռանա, որ Կոմիտասը Երևանում է, իր տան պատից չկախի Արարատների գունավոր լուսանկարը: Ես երկար նայեցի այդ մարդուն և մտածեցի, որ երբեք չեմ կարող նրան ներել:

ՍՓՅՈՒՌ-ՍՂՋԻԿ – Բայց գուցե հայրենի՞քը կների, ասում են՝ հայրենիքը մայր է, ներում է:

ՍՓՅՈՒՌ-ՏՂԱ – Սուտ է, հայրենիքը չի ներում երբեք, այդ մարդիկ են, որ պիտի ներեն իրենց հայրենիքին, եթե ինչ-որ բան կա ներելու: Մարդիկ, մենք՝ ամենքս, ապրում ենք հազիվ մի քանի տասնամյակ և ժամանակ չենք ունենա հայրենիքի ներմանն սպասելու: Իսկ հայրենիքը հավիտենական է:

(Կոմիտասի «Տեր ողորմյա»՝ կենդանի կատարմամբ):

ՍՓՅՈՒՌ-ՏՂԱ – Մեկ-երկու շաբաթ հետո այդ մարդը Ստամբուլի որևէ հայկական եկեղեցում կիսախուփ աչքերով կնայի խաչված Քրիստոսին, կմրմնջա Կոմիտասի «Տեր ողորմյան», և Կոմիտասը հան-

կարծ կլսի ու նորից կխելագարվի: Նորից, նորից, արդեն քանիերորդ անգամ…

ՍՓՅՈՒՌՔ-Աղջիկ – Սուտ է, Կոմիտասը չի խելագարվել, ես հանկարծ նրան տեսնում եմ Աշնակ գյուղում, սասունցիների կատաղի պարի մեջ՝ թաշկինակը ձեռքին, դեմքը քրտնած ու լուսավոր:

(Հնչում է Կոմիտասի «Վաղարշապատի պարը», մթնում է, էկրանին գրվում է «Էսքիզ-Վահան Պասկալ», բեմը փոխվում է, ռեստորանի մատուցողուհին մտնում է և բերում է մի շիշ գինի ու երկու բաժակ, դնում և դուրս է գալիս, ներս են մտնում ու նստում լրագրողը և Վահան Պասկալը):

«Էսքիզ-Վահան Պասկալ»

ԼՐԱԳՐՈՂ – *(Հանդիսատեսին)* Վահան Պասկալ, հավանորեն, Պասկալյան, այդպես էր անուն-ազգանունը: Հանդիպեցի 1963 թվականին Բեյրութի «Ստաֆ-Հաուս» հյուրանոցի ռեստորանում:

ՎԱՀԱՆ ՊԱՍԿԱԼ– Հայաստանի՞ց եք: Հա՞յ եք:

ԼՐԱԳՐՈՂ – Այո՛:

ՎԱՀԱՆ ՊԱՍԿԱԼ– Իսկակա՞ն Հայաստանից:

ԼՐԱԳՐՈՂ – Մի Հայաստան կա:

ՎԱՀԱՆ ՊԱՍԿԱԼ– Չեմ եղել, ասում են հիմա լավն է Հայաստանը:

ԼՐԱԳՐՈՂ – Նա խոսում է, իսկ ես մտքումս արագ-արագ գրում եմ նրա կյանքի փաստերը:

ՎԱՀԱՆ ՊԱՍԿԱԼ – Բժիշկ եմ, ծնվել եմ Երուսաղեմում, ապրել եմ Եվրոպայի տարբեր քաղաքներում, աշխատել եմ քառասունհինգ տարի, եղբայրներս մեռել են, քույրերս նույնպես: Վերջին հարազատը՝ կինս, մեռավ երեք տարի առաջ: Մեկ տարի կլինի, որ ապրում եմ այս հյուրանոցում:

ԼՐԱԳՐՈՂ – Երկա՞ր եք մնալու Բեյրութում (դադար)… Ես հանկարծ հասկանում եմ՝ ինչ անզգույշ հարց էր, աստված իմ, ծերունի բժիշկն այստեղ երևի սպասում է իր ամենավերջին հիվանդին՝ մահին, որը կգա, ներս կմտնի առանց դուռը ծեծելու: Ծերունին բոլոր հաշիվները փակել է կյանքի հետ, սպասում է: Ես նույնիսկ պատկերացնում եմ այդ օրը: Նա գիշերով կմեռնի, բայց միայն առավոտյան, երբ սպասուհին կմտնի նրա սենյակը մաքրելու, մարդիկ կիմանան, որ մահացել է: Այսինքն՝ ո՞վ, մարդիկ:

Պարզապես հյուրանոցի տնօրենը կզանգահարի ուր որ պետք է *(Հանդիսատեսին դիմելով)*: Համոզված եմ՝ ծերունին ժամանակին վճարած կլինի իր թաղման ծախսը, կգա մի սև մեքենա,

հետո կհայտնվի հայ մի քահանա նրան էլ ծերունին վարձատրած կլինի ժամանակին, ու կտանեն:

Կտանեն ու կաղոցվի Պասկալյան գերդաստանի տոհմական ծառի վերջին ճյուղը:

ՎԱՀԱՆ ՊԱՍԿԱԼ – Օտար երկիրը միշտ էլ հյուրանոց է՝ լավ կամ վատ, ի՞նչ նշանակություն ունի: Իսկ մարդուն ապրելու համար տուն է հարկավոր. ես ուշ հասկացա:

ԼՐԱԳՐՈՂ – Նախանցյալ տարի Բեյրութից եկած մեկն ինձ ասաց, որ ծերունին մահացել է: Չգիտեմ, կուզենայի, որ ճիշտ չլիներ այդ լուրը, բայց ի՞նչ կվոխվի դրանից: Ես իմ էության մեջ՝ որպես վիրահատությունից մնացած սպիներիս նման շոշափվող, կրում եմ Վահան Պասկալի դեմքը, աչքերը, տխրությունը, մահը և լսում եմ նրա մի քանի բառը.

ՎԱՀԱՆ ՊԱՍԿԱԼ – Ապրելու համար մարդուն տուն է հարկավոր:

Քնելն էլ՝ ժամանակավոր մահ, չէ՞: Մեռնելն էլ՝ ժամանակավոր քուն, չէ՞: Ուրեմն մարդ մի՛ տեղ միայն կարող է մեռնել: Բոլորը հույս ունեն, որ այդ մի տեղը հայրենիքն է:

(Գնում է դեպի հեռը, լրագրողը կարծես լսում է տարիներ առաջ տեղի ունեցածը):

ԼՐԱԳՐՈՂ – Թե հնար լիներ, այս խոսքերը զանգ կդարձնեի, կկախեի աշխարհի գլխին ու կզանգահարեի երբեմն մեղմ, երբեմն կատաղած ու տագնապով: Թող ներեն ինձ իմ հայրենակիցները, բայց Վահան Պասկալի տագնապն էր դա, մարդ, որ ապրեց ու մեռավ հյուրանոցում. լա՞վ, թե՞ վատ, ի՞նչ նշանակություն ունի:

ԳՐՈՂ – Ասում են՝ արձանները չեն խելագարվում, չեն ծերանում, նաև չեն զգում ո՛չ ատելություն, ո՛չ սեր: Եվ այնուամենայնիվ մարդիկ են երջանիկ և ոչ թե արձանները: Եվ մարդիկ են դժբախտ: Օգնի՛ր ինձ, Կոմիտա՛ս, հասկանալու ոչ թե աշխարհը, այլ ինքս ինձ, իմ ժողովրդին:

(Փոխվում է էկրանի նկարը, գրվում է «Էսքիզ-Ծիրանի ծառ», նկարում ծաղկած ծիրանի ծառ է և նկեղեցի):

«Էսքիզ-Ծիրանի ծառ»

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Ծառը գարնան դեմ նկատեցին: Պատահաբար: Գյուղական եկեղեցու գմբեթը ավերվել էր քսաներկու տարի, երեսուներկու տարի կամ քառասուներկու տարի առաջ, ո՞վ գիտե: Այսինքն՝ լրիվ չէր ավերվել. մինչև օրս էլ կանգուն է գմբեթի մի

կեսը կամ կեսից մի քիչ պակաս, և մինչև օրս էլ վերև բարձրացող հետաքրքրասերներից շատերը իրենց «անմահ» անուններ են ստորագրում կենդանի մնացած քարերին: Գմբեթի քանդված մասն ամառվա ամիսներին կանաչով է ծածկվում, վայրի խոտերը, պատի շաղախը ճեղքելով, օդ են խցկվում, պատահում են նաև ծաղիկներ՝ դեղին, բաց կապույտ:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Ու մի օր էլ…

Վայրի խոտերի մեջ մարդիկ ծառ տեսան, մի իսկական ծիրանի ծառ, ինչպես բանաստեղծները կասեին, գմբեթին կանգնել էր ջահել, կիսամերկ աղջկա նման և փեշերը տվել էր անամոթ քամուն:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Ո՞վ, ե՞րբ էր կորիզ նետել եկեղեցու գմբեթին՝ դժվար էր ասել: Ինչպե՞ս էր կորիզը հարմարվել քարերի արանքում, և ինչպե՞ս էր արմատները մազ-մազ տարածել պատի շաղախի մեջ, զարմանալի էր, բայց ծառը կար, ու մարդիկ դադարեցին զարմանալուց:

(Էկրանին գրվում է «Էսքիզ-Գրոնիկա», և մնում է ծաղկած ծիրանենու նկարը):

«Էսքիզ-Գրոնիկա»

ԳՐՈՆԻԿԱ – Երբ առաջին անգամ գալիս էի Հայաստան, 2017 թվականի հուլիսի 3-ն էր՝ «Սփյուռք ամառային դպրոցի» շրջանակում: Ազգային երգ-պար ուսանելու համար էի գալիս, որը Մայր բուհում էր անցկացվում: Մի զարմանալի հուզմունք էր պատել ինձ. հասկանում էի, որ ինչ-որ շատ կարևոր բան է կատարվելու ինձ հետ: Ես երբեք չեմ տեսել իմ հայրենիքը, նա չգիտի իմ մասին, չգիտի, որ ես էլ ժամանակին շաղ տված սերմի մի հատիկն եմ եղել: Ես ունեմ անուն, որը Բուլղարիայում, որտեղ ապրում եմ, օտար է բոլորին, ունեմ ազգանուն, որի մասին ես ոչինչ չգիտեմ: Ես նման եմ այն մարդուն, որն ունի հագուստ, բայց չունի մարմին: Ես գիտեմ իմ ազգի լեզուն, բայց այնպես գիտեմ, որ իմ ազգակիցներից ինձ ոչ ոք չի հասկանում, ես պարել չգիտեմ, բայց, երբ լսում եմ ազգային երաժշտությունը, ոտքերս ինչ-որ անհասկանալի, բայց իմ եսի պես հարազատ քայլեր են անում: Ու ես գնում եմ Հայաստան, որ սովորեմ պարել, սովորեմ խոսել այնպես, որ հասկանան՝ ո՛վ եմ ես, գնում եմ, որ գտնեմ ինձ:

(Գրոնիկան պարում է հայկական պար):

Գ. ԳԻՆՈՍՅԱՆ – Բավական է: Դու գիտե՞ս, թե որտեղից ես գալիս:

ԳՐՈՆԻԿԱ – Այո՛, գիտեմ, Բուլղարիայեն գուքամ:

(Նայեց, ժպտաց):

Գ. ԳԻՆՈՍՅԱՆ – Գիտե՞ս, թե քո ազգանունը որտեղից է գալիս, գիտե՞ս՝ ում ժառանգն ես: Դու Գավաֆյա՞ն ես:

ԳՐՈՆԻԿԱ – Այո՛, Գավաֆյան եմ:

Գ. ԳԻՆՈՍՅԱՆ – Գիտե՞ս, թե ով է Արշակ Գավաֆյանը:

ԳՐՈՆԻԿԱ – Չեմ գիտեր:

Ինձ ցույց տվեցին Զորավար Անդրանիկի զինակից Արշակ Գավաֆյանի՝ ֆիդայի Քեռու լուսանկարը: Ես նրա աչքերի մեջ գտա ծիրանի ծառը, գտա հորս հայացքը, իմ աչքերը, գտա ինձ: Երբ ես հասկացա ամեն ինչ, հորս զանգեցի ու բղավելով մոռացել էի, որ հայրս այնքան էլ լավ չի լսում, բայց ես նրան պատմեցի, պատմեցի ամեն ինչ, ու պարզվեց, որ ամբողջ հյուրանոցն է լսել, իսկ ինքը՝ հայրս, չի լսել…

Մորս զանգեցի, պատմեցի: Ինձ թվում էր, որ ես աշխարհում միակ, միգուցե վերջին Գավաֆյանն եմ: Ու հիմա ես փնտրում եմ աշխարհի բոլոր Գավաֆյաններին:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Ինչպե՞ս ապրեցիր, ծիրանի՛ ծառ…

ԳՐՈՆԻԿԱ – Այսպես, ապրեցի այսպես, օտար վանքի գմբեթին, բայց ամուր են արմատներս:

Հասկանում եք՝ որքան դժվար է ընկալել, որ ֆիդայու ժառանգ ես, դժվար է ոչ թե հավատա՛լը, այլ ընկալելը:

Ու հիմա ես ավելի ուժեղ պիտի լինեմ, հիմա ես ավելի ուժգին եմ զգում երակներիս արյունը, պիտի գամ, գամ ու մնամ:

(Գրոնիկան պարում է հայկական պար):

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Ապրեցինք:

…Թեպետ ամեն գարնան ջարդոտեցին մեր ճյուղերը, մեզ կերան ցոգոլ-ցոգոլ, այրեցին մեր ծաղիկները, որ նման են լույսի: Ինչպե՞ս ապրեցիր, ծիրանի՛ ծառ…

(Հնչում է Կոմիտասի «Ծիրանի ծառը», ներս են մտնում Հայաստան-աղջիկն ու տղան, կանգնում են բեմի երկու կողմերում):

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Հայաստա՛ն, քո յուրաքանչյուր զավակի դու հավասար բաժին ես հանում քո ունեցածից, որ նաև արցունքներ են, նաև կարոտ: Եվ այդ զավակներից յուրաքանչյուրն իր ներսում պիտի պահի ստացած այդ ամբողջ ժառանգությունը, նաև արցունքը, կարոտը, որ բանկ չեն ընդունում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ռոբերտ Կրայտոնը առաջին անգամ էր Հայաստանում: Ամերիկյան հայտնի գրողը մեկիկ-մեկիկ, չթաքցրած հետաքրքրությամբ նայում էր իրեն շրջապատող մարդկանց դեմքերին, Էջմիածնի Մայր տաճարում լիներ, թե Երևանի փողոցներում, Մատենադարանում, թե աշնանային շուկայում: Միայն վերջին օրը՝ մեկնելուց առաջ, նա ասաց.

ԳՐՈՂ – Նյու Յորքում մի ժամանակ ապրում էի հայերի մեջ: Նրանք ինձ հաճախ էին հյուր կանչում, ես սիրում էի հայկական սուր, համեղ կերակուրները: Հետո ձարդի էինք խաղում: Երբեմն իմ հարևանները երգում էին իրենց հին երգերը: Բայց մի բան զարմանալի էր. խմում էին, թե ձարդի խաղում, երգում էին, թե ծիծաղում, նրանց աչքերը տխուր էին: Այսպես, կամաց-կամաց ես համոզման հասա, որ հայերը միայն տխուր են լինում: Իմ մեջ ես հայերին նույնիսկ կնքել էի տխուր ժողովուրդ անունով:

…Եվ ահա եկա Հայաստան: Բայց ո՞ւր է իմ սիրելի տխուր ժողովուրդը: Մի՞թե սա է, որին ես տեսա Երևանի փողոցներում, համալսարանում, շուկաներում, Էջմիածնի Մայր տաճարում: Եվ հասկացա, որ այո՛, այսքան կյանք, կիրք, այսքան կրակ ես չեմ տեսել ոչ մի ժողովրդի աչքերում: Վերադարձիս ես պիտի ասեմ Նյու Յորքում իմ բարեկամներին. գնացե՛ք Հայաստան, և կփոխվեն ձեր աչքերը: Եթե ձեր աչքերը չէ, ապա ձեր որդիների աչքերը…:

Հետո ես մտա հյուրանոցի իմ համարը, երբ բացեցի պատուհանը, պատուհանի շրջանակի մեջ տեսա Երևանը, այո՛, տեսա Երևանը, որովհետև պատուհանը իմ ներսում բացեցի:

(Հնչում է երգ՝ Ա. Բաբաջանյան «Երևան», էկրանին գրվում է «Էսքիզ-Արցախյան ազատամարտ»):

«Էսքիզ-Արցախյան ազատամարտ»

(Էկրանին՝ Վազգեն Սարգսյան, Կոմանդոս, Անահիտ Մարտիրոսյան, Լեոնիդ Ազգալդյան, Մոնթե Մելքոնյան: Արխիվային կադրեր ցույցերից):

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – «Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները»,– 1988 թվականի հուլիսի 18-ին հայտարարեց Ստեփանակերտի պատվավոր քաղաքացի Հենրիխ Պողոսյանը: Այդ օրվանից անցել է շուրջ երեք տասնյակ տարի. Արցախի Հանրապետության ճակատագիրը այժմ էլ կարող են լուծել միայն բնակիչները՝ ներկա, ապագա, նախկին:

Ուզում եմ, որ Արցախի Հանրապետությունը չունենա նախկին բնակիչ:

1988 թվականի փետրվարի 27-29-ը Սումգայիթում ջարդեր էին: Սովորական ցեղասպանություն՝ վայրենում բնորոշ ամենաասովորական վայրագություններով: Պաշտոնական տվյալներով զոհվել են քսանյոթ հայեր: Պաշտոնական տվյալներով: Բայց քանի՞սը դարձան փախստական: Քանի՞սը՝ հարյուրնե՞ր, հազարնե՞ր: Կոտրվե՞ց ոգին, բանտարկվե՞ց ազատությունը:

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Երբ ազգն արդեն ալեկոծված փոթորկի էր պատրաստվում, ոտքերի տակ ալեկոծվեց երկիրն իր տարերային աղետով. 1988 թվական, դեկտեմբերի 7, երկրաշարժ: Բռունցքված ձեռքերը մնացին փլուզվող շենքերի փոշեղեն օդում: Կսկիծ դարձավ ազգը:

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – …1990 թվական, հունվարի 13-20, Բաքու: Ու կրկին կոտորած. կրկին նույնը, նույն վայրագությունը: Ու էլի՛ հայը փախստական է, ու էլի՛ պատմությունն իր ամենապարզ տրամաբանությամբ հիշեցրեց փոքրիկ եղեռններ պատմության տարբեր ժամանակներում:

Վազգեն Սարգսյան

(Էկրանին մայրամուտը պատկերող բնության նկար է):

ԳՐՈՂ – Արևը լուսավորել էր անեզր տարածքը, բայց մեջտեղում կանգնած մարդու միայն մի կեսն էր երևում:

ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ – Այս հողի վրա կբնավորվեր ճարահատ, բայց զարմանալի պինդ ու աշխատասեր մի ժողովուրդ: Այս հողը, այո՛, մարդու չնման-մարդու չհավան կնկա նման ուզվորին չէր տրվի: Սա բազմակողմանիորեն ու հանգամանալի մի լա՛վ պիտի մշակվեր: Աշխարհն էլ առա՛տ, ընտրության հնարավորությունը՝ մե՛ծ, ո՞վ գլուխ կդներ էդ սև տրճեի հետ: Զարմանալի պինդ ու համբերատար տղամարդկանց ցեղ էր պետք, որ սեփական ճակատագրի հետ քյալլա տալով էդ սև տրճեից բազմաբեղուն ծննդկան շիներ, և որ իրենց նման պինդ ու հաստատուն սերունդներ տային աշխարհին. մե՛նք, մե՛նք ենք, խոսե՛ք, տեսնենք՝ դուք ովքե՞ր եք:

Չեմ ուզում, չեմ ուզում վերապրել մեր հզոր ու ազնիվ պոռթկումին ի պատասխան վիրավորանքների, ստորացումների ու ողբերգությունների սահմռկեցնող զգացումները: Ճշմարտության հաղթանակի ճանապարհին մի մեծ ու հաստատուն քայլ արդեն արված է:

ԳՐՈՂ – Ինչո՞ւ չես գրում:

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ – Չգիտեմ՝ ինչից սկսեմ: Եվ իմաստ ունի՞ արդյոք գրելը: Ինձնից առաջ քանի-քանիսն են գրել, քանի-քանի «փայլուն» որոշումներ են կայացվել:

Աշխարհից մեր խնդրանքը մեկն էր, որ մեզ ճիշտ հասկանան, ոչ մեկի դեմ մենք կռիվ չունենք, մեր պայքարը ճշմարտության հաղթանակի համար էր, և աշխարհն էլ մեզ կարծես հասկացել-հասկանալու վրա էր:

ԳՐՈՂ – Դե լա՛վ, ի՞նչ ես ունքերդ հավաքել:

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ – *(Նայում է բեմեզրին):* Չեր ցավը տանենք,– այսպես աշխարհում միայն մենք ենք ասում, սա մեր էությունն է ու ճակատագիրը,– ձեր ցավը տանենք:

Սարոյանն ասում է. «Քրիստոսը դժբախտ էր, որովհետև երբեք ընտանիք չունեցավ»: Քրիստոսից էլ առաջ քրիստոնյա մեր ժողովրդի միակ պատվար-պահապանը ընտանիքն է եղել: Հարյուրավոր տարիներ պետականությունը կորցրած հայի յուրաքանչյուր ընտանիք մի-մի միկրոպետություն էր՝ իր թագավորով, մեծ ու փոքրով, օրենքներով և ավանդույթներով (երևի այս պատճառով է նաև, որ մեկ, միակ թագավորի հարցում շատ նախանձախնդիր ենք եղել: Ոչ անկառավարելի, այլ՝ նախանձախնդիր, մեզ արժանի թագավորի կարոտ): Հայի արյան կարմիր գնդիկներն են ընտանիքները, հարատևման խորհուրդը: Այս նույն ջավախեցի-էրզրումցիների մասին են պատմում. մեծ գաղթի ճանապարհին, վրաններում ծվարած, գարնանն սպասելիս երեք-չորս ամիս շնչելու ժամանակ են ունեցել ու հարսանիքներ են արել, ընտանիքներ են ստեղծել տնաշեններ *(վեր է կենում և կանգնում բեմին):*

Եկեղեցի և տուն շինող ժողովուրդ է հայը: Եկեղեցին ոգու տաճար է, տունը, օջախը՝ կեցության: Հասկանալ է պետք հիմնավոր տուն ու տեղ դնելու հայի պաշտամունքը, որքան շատ բան ունենաս կորցնելու, այնքան ավելի ամուր կլինես հող ու օջախիդ կապված, թիկունքում բան թողած մարդը կհասկանա, չթողածն ի՞նչ հասկանա…

Մենք մենք ենք…

(Դուրս է գալիս: Մի հրացանով աղջիկ վազում է բեմում, և էկրանին գրվում է «Էսթիզ-Անահիտ Մարտիրոսյան»):

«Էսթիզ-Անահիտ Մարտիրոսյան»

(Էկրանին՝ տեսաֆիլմ. իր հիշողություններն են Մարաղայի ջարդերը, իր ամուսնու սպանությունը ադրբեջանցիների կողմից: Անահիտը նստած է մի կիսամութ սենյակում՝ հոգեկան մղձավանջների մեջ):

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Անահիտի անխախտ ու անառ հակադարձումն էր: Անխախտ էր քսանութ քաջազունների առաջարկով «Անահիտ» ջոկատի ստեղծումն ու այդ ջոկատի ղեկավարումը հայ աղջկա փխրուն ուսերին…, բայց անկոտրում հավատին վստահելը:

(Թակում են դուռը, և Անահիտը թմբիրից սթափվում է):

ՋԻՆԱԿԻՑ – Ընկեր հրամանատար թո՞ւյլ կտաք զեկուցել:

(Անահիտն ուղղվում է):

ԱՆԱՀԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ – Այո՛:

ՋԻՆԱԿԻՑ – Գերի ենք բերել:

(Անահիտը խորհրդավոր ժպտում է):

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Այդ պահին փխրուն մարմնի երակներում ու զարկերակում զգում էր ավետյաց հողի տրոփյունն ու վրեժի անկատար ուխտը…: Ամուսնացած էր, զավակներ ուներ, իսկ ամուսնուն սպանել էին իր ու որդիների աչքի առաջ:

Ու հայ կինը զենք է վերցրել, կանգնել տղամարդու կողքին ու կռվել հավասար: Թշնամու համար դժվար թե գտնվի ավելի վտանգավոր մի բան, քան, երբ մարտի են ելնում կանայք, իսկ առավել վտանգավոր, երբ կռվի է ելնում հայուհին՝ հայ մայրը, հայ քույրը…՝ հայ հողը պահելու համար:

(Զինակիցները մտնում են գերու հետ: Գերին կանգնում է Անահիտի դիմաց: Վերջինս աթոռից վեր է կենում ու նայում ուղիղ գերու աչքերի մեջ):

ԱՆԱՀԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ – Դե հիմա ծնկի արի (գերին չի ուզում ծնկի իջնել. տղաները ստիպում են): Դու հիմա ծնկի ես գալիս ոչ միայն իմ, այլև բոլոր հայ կանանց առջև, հատկապես նրանց, ում դուք սև հագցրիք:

Մենք ձեզ ոչինչ չունենք տալու, բայց ձեզնից վերցնելու շատ բան ունենք: Այն հողը, որի վրայով մարշալներ են քայլել, չպիտի թողնենք ձեզ:

Տարե՛ք սրան, պատրաստե՛ք փոխանակման:

Առանց հայի ու Հայաստանի էլ ի՞նչ Հայկական հարց, առանց Բաքվի, էլ ի՞նչ խնդիր: *(Դուրս է գալիս):*

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Ծնկի եկեք բոլոր հայ կանանց առջև: Մենք հասարակ կին չունենք, հերոս են մեր բոլոր կանայք, որովհետև մենք մեր երեխաներին չենք սովորեցնում մարդատյացություն: Սովորեցնում ենք պահել այն, ինչ մերն է, իսկ ինչ մերն է, բնականաբար, ձերը լինել չի կարող:

(Փոխվում է էկրանի նկարը, որտեղ Եռաբլուրն է):

Մոնթե Մելքոնյան

ԳՐՈՂ – Սուրբ բլուրը երեկոյան այլ խորհուրդ ունի: Քայլել ու միաժամանակ հետևել արևի վերջին շողերին, որոնք ցողում են քարերը, ջերմացնում օդը, պատմում ընդհատված կյանքերի շարունակությունը…

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Ախր այդպես չեն մարդ նկարում: Մարդուն գլխից են նկարում, ոչ թե ոտքերից:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Իմ նկարած մարդու սկիզբը ոտքերն են, եղա՞վ,– ասաց աղջիկը՝ ուղիղ նայելով աչքերի մեջ:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Դու քանի՞ տարեկան ես, որ կարծիք ես հայտնում *(զարմացած հարցրեց տղան):*

(Աղջիկը հավաքեց իրերն ու ուզում էր գնալ):

Սպասի՛ր, ուր ես գնում:

(Չպատասխանեց):

Չե՞ս լսում:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Տանն ինձ ասել են, որ անծանոթների հետ չխոսեմ:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ– Հա՞, իսկ տանը քեզ չե՞ն ասել, որ այս ժամին մենակ վտանգավոր է:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Ես արև եմ նկարում բոլոր անարևների համար: Ես նկարում եմ Եռաբլուրի արևը:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Հետաքրքիր է: Արի միասին նկարենք, ես քեզ կսովորեցնեմ մարդ նկարել:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Իսկ ես չեմ ուզում, որ դու ինձ սովորեցնես, դու ինձ վախեցրիր:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ– Լավ, ես քեզ համար կնկարեմ, իսկ դու կնայես:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Չեմ ուզում քո նկարած մարդուկը: Այն երևի քեզ նման կլինի: Ես արևը պահող մեծ մարդ եմ նկարելու…

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Իսկ ինչ է, դու մտածում ես, որ ես մեծ չե՞մ:

(Աղջիկը մի անգամ էլ գննող հայացքով ուսումնասիրեց):

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Գիտե՞ս՝ ինձ ականջօղեր են նվիրել, բայց չի ստացվում կախել, կօգնե՞ս:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Դու ականջօղերո՞վ:

(Տղան ծիծաղից):

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Տեսնո՞ւմ ես, որ մեծ չես: Գնացի:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Չէ՛, սպասի՛ր, ո՞ւր ես գնում մենակ, հիմա տանը երևի քեզ են փնտրում: Ավելի լավ է ասա՝ ուր ես գնում, ես քեզ կուղեկցեմ:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Ես չեմ վախենում:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ– Լավ, տո՛ւր ականջօղերդ:

(Իմ ևնթադրյալ Արևիկը, Նարեն կամ Շողերը իր տոպրակից հանում է ականջօղերը, տալիս տղային, իսկ ինքը եւր է տրանում մազերը, տղան մի կերպ զսպում է ծիծաղը):

Ճիշտ է, ես տղա եմ, բայց կարծեմ ականջօղ կրելու համար նախ պիտի դակես ականջներդ, իսկ դու առանց ականջօղի ինձ ավելի ես դուր գալիս:

(Սեդան սուսուփուս վերցրեց ականջօղերն ու խնամքով տեղավորեց տոպրակի մեջ):

Իսկ դու ինչո՞ւ ես որոշել հենց այստեղ արև ու մարդ նկարել. բակում չե՞ս կարող:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Կարող եմ, բայց այնտեղ չի ստացվում, այստեղ ավելի շատ արևի կարիք կա:

(Մոտենում է հեղինակը):

ԳՐՈՂ – Իսկ դուք գիտեք, թե հիմա որտեղ եք:

ԵՐԿՈՒՍՈՎ – Եռաբլուրում:

ԳՐՈՂ – Գիտե՞ք՝ ովքեր են այստեղ:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Գիտենք՝ Անդրանիկը, Դուշմանը, Արմեն Հովհաննիսյանը:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Ադամ Սահակյանը, Մոնթե Մելքոնյանը:

ԳՐՈՂ – Դուք այդքանը որտեղի՞ց գիտեք:

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Հայրիկիս հետ հաճախ ենք գալիս, իմ հորեղբայրներն են այստեղ են…

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Իմն էլ…

ԳՐՈՂ – Օրն արդեն մթնում էր: Աղջամուղջի մեջ փռվել էին փոքրիկ աղջկա նկարած արևի ապրեցնող շողերը:

Հանկարծ լսվեց տղամարդու տագնապած ձայնը, որը մեզ սթափեցրեց: Աղջկա հայրն էր:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ – Աղջի՜կս…, էդ ո՞ւր ես գնացել

(Աղջիկը վազում է հայրի ուղղությամբ):

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Սպասի՜ր, քո անունն ի՞նչ է:

(Աղջնակը կրկնակի բարդր պատասխանեց):

ՆՈՐՕՐՅԱ ՍԵԴԱ – Սեդա՜, Սե-դա՜:

ՆՈՐՕՐՅԱ ՄՈՆԹԵ – Սպասե՜ք, կանգնե՜ք:

(Տղան վազելով մոտեցավ հորն ու աղջկան, բայց չհասավ ու գոռաց):

Մոնթե՜, իմ անունը Մոնթե է:

ԳՐՈՂ – …Եվ սա մեկն է այն լեգենդներից, որ հյուսվել է Մոնթեի ու Սեդայի անհերքելի ազդեցությամբ:

Ավոն այսօր սերունդների մեջ է, սերունդների կողքին:

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ – …Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը: Եթե կորցնենք Արցախը, մենք կկորցնենք ոչ այլ ինչ, քան մեզ:

ՋԻՆՎԱԿԻՑ – Մոնթե, ի՞նչ է նշանակում կորցնել Արցախը,– վախեցած, բայց խորհրդավոր ձայնով հարցնում է զինակիցներից մեկը:

(Մոնթեի աչքերը կախվեց, շուրթերը սեղմեց իրար, հետո հայրի ցածր ու անհաստատ տոնով ասաց):

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ – Կորցնել Արցախը նշանակում է մոռանալ բոլոր զոհված ու կենդանի հերոսներին: Կորցնել Արցախը նշանակում է այրել մեր պատմությունը՝ անգամ առանց վերջին էջը շրջելու: Այս պայքարը շարունակվելու է այնքան, քանի դեռ Նախիջևանն ու Ջավախքը մերը չեն, իսկ պատմությունը՝ ոչ ամբողջական:

ՋԻՆՎԱԿԻՑ – Մոնթե՜, անհանգիստ մարդ, ունեիր ամեն ինչ, բայց վտանգի տակ ես դնում կյանքդ:

(Խոսելիս լցնում է օղու բաժակը):

ՋԻՆՎԱԿԻՑ – Կենա՜ցդ, Մոնթե՜:

(Խմում են):

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ – Իմ կենացը մի՛ խմեք, այլ իմ գործը շարունակեք: Խմենք մեր հաղթանակի կենացը:

(Խմում է, հագնում զինվորական պիջակն ու հեռանում):

ԳՐՈՂ – Ասաց, հագավ զինվորական պիջակն ու գնաց. Արցախը սպասում էր նրան:

«Էսքիզ-Կոմանդոս»

(Կոմանդոսի զինակիցը, քարտեզը ձեռքին, մտնում է և ուսումնասիրություններ է անում: Մտնում է Կոմանդոսը):

ԿՈՄԱՆԴՈՍ – Չին փիլիսոփա Կոնֆուցիոսին հարցնում են, թե ինչ է հարկավոր պատերազմում հաղթելու համար: Նա պատասխանում է՝ հաց, զենք, ոգի: Նրան հարցնում են, իսկ եթե երկո՞ւ, փիլիսոփան պատասխանում է՝ զենք և ոգի: Իսկ եթե մեկ բան, ուրեմն՝ ոգի:

ՋԻՆՎԿԻՑ – Շուշին բացահայտ ուժով գրավելը համարյա անհնարին է: Բարձր ու ուղղաձիգ ժայռերի վրա է կառուցված Շուշին: Մոտենալ հնարավոր է միայն հյուսիսարևելյան կողմից: Այդ ուղղությունն էլ, սակայն, բարձրանալով լեռան վրա, ոլորապտույտ է և խճողված:

Դեռևս 18-րդ դարում Շուշին հնարավոր է եղել գրավել միայն խաբեությամբ, խարդավանքով կամ դավաճանությամբ:

ԿՈՄԱՆԴՈՍ – Շուշիի ռազմավարական նշանակությունը չափազանց մեծ է եղել, դրա համար էլ այն երբեք խաղաղության մեջ չի մնացել: Իսկ հիմա ժամանակն է պատմական սխալն ուղղելու:

ՋԻՆՎԿԻՑ – Բայց, Կոմանդոս, չէ՞ որ մեր մարդկային ռեսուրսներն ու զինամթերքը շատ քիչ են, ինչպե՞ս կկարողանանք Շուշին ազատագրել:

ԿՈՄԱՆԴՈՍ – Հային հատուկ խելքով և ոգով:

Եվ ինչպես հնուց եկող ճշմարտությունն է ասում՝ տիրել Շուշիին նշանակում է տիրապետել ամբողջ Արցախին:

Լեոնիդ Ազգալդյան

(Մտնում է Լ. Ազգալդյանը):

ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆ – Այս երկրում՝ մերօրյա Հայաստանում, ավելի քանկ արժեք ունեցող երևույթ չկա, քան կամավոր զինվորագրված հայ տղան: Իսկ սա Հայաստանն է և վե՛րջ: Ազատագրված Արցախի ոչ մի տարածք սակարկման ենթակա չէ:

ԳՐՈՂ – Ազատագրված Արցախի ոչ մի տարածք սակարկման ենթակա չէ:

Բայց մի՞թե որպես ազգ մենք անընդունակ ենք վայելելու մեր լավագույն զավակների արյան ու կյանքի գնով նվաճված հաղ-

թանակի պտուղները: Իսկ հերոսները լռում են այնտեղ, որտեղ խոսքի անեզր շարունակություն պիտի լինի, շարունակությունը կարող է լինել ի՛մը, քո՛նը ու այն չծնված գարնանը, որ ղեռ պիտի ծնվի ու շենացնի Արցախը, լեռներում նոր հարսանիքներ կազմակերպի, և… մեր գարունները նորովի վերընձյուղվի:

(Ազգագրական պար՝ «Յարխուշրա», կենդանի կատարմամբ, էկրանին գրվում է «Էսքիզ-Քառօրյա պատերազմ», այնուհետև էկրանին արխիվային կադրեր են):

«Էսքիզ–Քառօրյա պատերազմ»

(Տղաները կանգնում են իրար կողքի և խոսում):

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – Արդյո՞ք 90-ականների սերնդի շարունակությունը չէ՞ր, որ քայլեց 2016 թվականին ու Քառօրյա պատերազմում իր զարկը Աստծո պատգամ դարձրեց:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Հայաստա՛ն, ես քո ստվերն եմ, քեզ հետ եմ քո ծննդյան օրից, իսկ ե՞րբ ես ծնվել դու, չգիտեմ, բայց մենք միասին ենք ծնվել: Ես՝ քեզնից մեկ քայլ հետո: Ծնվել ես դու, իսկ քեզ հավերժացնելու և խենթորեն սիրելու համար ծնվել եմ ես, որ բոլոր քեզ չսիրողներին զսպաշապիկ հագցնեմ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Երբ զգում ես մահվան վախը, կյանքի նկատմամբ պատկերացումդ կտրուկ փոխվում է, սկսում ես ամեն ինչ արժևորել: Սովորական քաղաքացին ինչպես կպաշտպանի իր տունը. դիրք պահելը զինվորի համար տուն պահել է: Անցել են վախենալու և ենթարկվելու ժամանակները:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Երազանք… չկա: Հիմա պետք է նպատակ դնենք մեր առջև ու առաջ գնալով հասնենք դրանց իրագործմանը: Չգիտեմ՝ ինչպես կենդանի մնացի: Ասել, որ Աստծո հանդեպ հավատն է փրկել, սխալ կլինի, կստացվի, որ մյուս տղաները չէին հավատում, ուղղակի պատահականություն է եղել: Երևի:

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Զինվորն իր ծառայության արժեքն զգում է դիրքերում: Ուզում եմ, որ երկրում խաղաղություն լինի, կռիվները վերանան, բայց մեր կռիվն արդար է, մենք մեր հողերի համար ենք կռվում, մեզ պատկանող ամեն բուռ հողի համար, այդ իսկ պատճառով մենք հաղթելու ենք:

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – Հայրենի՛ք, ես պիտի քայլեմ քո կանչին ընդառաջ, քո կանչն ինձ համար ավետյաց դրոշ դարձնեմ ու պարտադրեմ քո անպատերա՛զմ գալիքը: Ցավերիդ հետ պիտի լուռ խոսեմ, ամոքեմ աղոթքներով ու լույս աշխարհ եկող նոր կյանքերով, որոնց սիրտը քո սրտի հետ մեկտեղված է բախում:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ՏՂԱ – Դու գիտես, որ խաղաղության երաշխիքը միայն պատերազմն է: Ես ատում եմ պատերազմը: Ես չեմ ուզում, որ մարդկանց աչքերը արցունքով լցվեն: Բայց նաև չեմ ուզում, որ քո վերքերից նորից արյուն հոսի, ուրեմն ուղղի՛ր մեջքդ, ձեռքս պի՛նդ բռնիր ու կանգի՛ր ամուր:

(6 տղաները բռնում են միմյանց ձեռք, և հնչում է Արթուր Ալթունյանի «Հայ զիվոր երգը»: Տղաները կանգնում են թեքությամբ դեպի էկրանը, որտեղ ևսրած են աղջիկները, տեսահոլովակ, որում Քառօրյա պատերազմի զոհերն են):

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Կյանքում պահեր կան, երբ տղամարդկային արժանապատվությունդ մահվան սարսափից ուժեղ է: Գիտես՝ ինձ համար միևնույն չէ, թե դու ինչպես ես ապրում. սոված ես, թե կուշտ, երջանիկ ես, թե դժբախտ: Ես ընկերներ եմ կորցրել Քառօրյա պատերազմում, ես կռվել եմ թշնամու դեմ, ու այդ ամենը կարժեզրկվի, իմ կռիվն անիմաստ կդառնա, եթե դու երջանիկ չլինես ու չսիրես քո երկիրը՝ ի՛մ երկիրը, եթե խռովես քո երկրից ու քո ժողովրդից:

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – *(Թեքվում է դեպի հանդիսատեսը):* Ի հիշատակ Քառօրյա պատերազմի զոհերի՝ մենք պիտի սովորենք ապրել, ապրել այնպես, որ մեզ հետ քայլելը հեշտ չլինի, ի հիշատակ Արցախյան ազատամարտի զոհերի՝ մենք ամուր պիտի պահենք մեր հոգու սահմանները, ոգեկոչելով տղաներին՝ պիտի սրբենք մեր արցունքները…:

Ինչպես Պերճ Զեյթունցյանը կասեր, «եթե ուզում ես վրեժ լուծել, թուրքերի քթի տակ ստեղծիր ուժեղ, բարեկեցիկ, օրինապահ երկիր, որտեղից մարդ չուզենա հեռանալ…»:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – *(Կանգնում է ու ասում):* Ու երբ «պետությունը» իր մատները երկարում է քո պատմության մեջ, պիտի հիշեցնես՝ մատներդ առյուծի երախում են: Ու ամեն անգամ հիշեցնելիս պիտի պատմությունն ազդարարի՝ արված գործերը պիտի՛ հիշվեն, չարվածները հնարավորինս չմոռացվեն:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ – Ուզում եմ՝ Հայաստանից հեռացող բոլոր ինքնաթիռները, գնացքները ուշանան: Մենք ունենք վերադարձողների ու չգնացողների կարիքը:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ՏՂԱ – Մեր պատմությունն ունեցել է արժանապատիվ պատմական թվականներ, բայց ամենապատմականը ազգի ինքնությունը խորհրդանշող բանակի ստեղծումն էր:

ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – *(Կանգնում է և ասում հանդիսատեսին):* Ես ուզում եմ, որ յուրաքանչյուր զինվոր իր թիկունքում կառավարության ուժն զգա: Յուրաքանչյուր զինվոր իր թիկունքում ժողովրդի ուժն է զգում, բայց…: Զինվորն ընդամենը կրակող չպիտի լինի: Հենց այդ ժամանակ է, որ հաղթանակն ավելի լիարժեք է կերտվում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – *(Կանգնում է և ասում հանդիսատեսին):* Մենք ունենք երեք հայրենիք՝ Հայաստանի Հանրապետություն, Արևմտյան Հայաստան, Արցախի Հանրապետություն:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Հայաստանը Արևմտյան Հայաստանի և Արցախի Հանրապետության ապրեցնող զարկն է, իսկ զարկող բազկի տերը՝ մե՛նք: Մե՛նք ենք, որ այդ զարկը ռիթմի պիտի վերածենք:

ԲՈԼՈՐՈՎ – Մենք ենք:

(Տեսանյութ, որից հետո բեմը պիտի վերադառնա իր նախկին չևին. յուրաքանչյուրն ասում է իր խոսքն ու կանգնում՝ կազմելով բեմի մասը, հնչում է Ա. Խաչատրյանի «Սուսերով պարը», դերակատարները դասավորում են դեկորը, փակում են վարագույրը և գնում են հետևաբեմ):

«Էսքիզ-Վերջաբան»

ՉԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – «Հայաստա՛ն»

(Բեմը լուսավորվում է, երկուսը բացում են վարագույրը ու հերթով բոլորը գալիս են բեմ: Երաժշտություն):

ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – Ո՞րն ես դու, Հայաստա՛ն:
Ես քեզ որոնեցի երկար ու ցավագին:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Հազար անգամ գտա:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Չգտա:

ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – Կորցրի:

ԳՈԹԱԿԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ՏՂԱ – Շփոթեցի:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Կասկածեցի:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Ես քեզ որոնեցի այսօրվա Հայաստանի թրթռուն, երիտասարդ մարմնի մեջ ու գունաթափ քարտեզներում, որոնցով գրգռեցին մեր պապերի դյուրավառ հոգին, որոնցով խաբվեցին բոլորը:

ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – Ես քեզ որոնեցի ամենայն հայոց կաթողիկոսների աղոթքներում առ Աստված և ամեն հայի հայհոյանքի մեջ, որտեղ ամենքս էլ զարմանալի բանաստեղծ ենք: Ես քեզ որոնեցի իմ տատի ոչ թե երկու, այլ երեք տեղից ծալվող մատներում, որ շատ են նման խաղողի ծերացած, բայց չկոտրվող ճյուղերի:

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Որոնեցի իմ որդու դպրոցական առաջին տետրերում և Մատենադարանի մագաղաթներում: Որոնեցի հայ մարդկանց տաք վեճերի մեջ, երբ միանգամից 40 ծրագիր է մեջտեղ բերվում, թե ինչպես էր հնարավոր փրկել Հայաստանը 5-րդ, 10-րդ, 17-րդ դարերում, 1915 թվականին:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Որոնեցի մեր լռության մեջ ու հարսանիքի աղմուկներում, աթարի դեզերի մոտ նստոտած ծերունիների ալարկոտ զրույցներում և համակարգչի առջև կռացած երիտասարդ գիտնականի կասկածների մեջ:

ԱՐՑԱԽ-ԱՂՋԻԿ – Որոնեցի գնացքներում թափառող կիսակույր աշուղների միամիտ երգերի և մեր՝ ավելի միամիտ ճիչերի մեջ, որ սկսվում կամ վերջանում են նման բառերով. «Երբ մենք բժիշկ ունեինք, այսինչ-այնինչ ազգերը դեռ չգիտեին, թե ինչ է հիվանդը…»:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Քեզ գտնելու համար ես անցա զարհուրելի ճանապարհի՝ Կարսից մինչև Ստամբուլ, նայեցի ամայացած հովիտներին, պղծված գերեզմաններին, իսկ ավելի շատ նայեցի գնացքի լուսամուտից դուրս խտացած մթությանը:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – Ես քեզ որոնեցի այսօրվա Երևանի շնչառության մեջ և պատմության խաչմերուկներում, որոնցից ոչ մեկով մեր ճակատագրի գնացքը չանցավ առանց վթարի:

ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – Ես քեզ որոնեցի ուրիշ ազգերի զավակների հետ ունեցած հանդիպումներում և ամեն անգամ ինձ զգացի հիվանդ, և ամեն անգամ նվացին հին վերքերը:

ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – Եղան դառը պահեր, երբ ուզեցի նույնիսկ ազատվել քեզնից, ապրել ինչպես բոլորը այս փոքրիկ մոլորակի վրա իբրև պարզապես դարի բնակիչ, բայց հասկացա, որ այդպես ապրելու համար պիտի դատարկվի իմ ողջ արյունը, պիտի կարողանամ դավաճանել նաև հորս գերեզմանը: Ու նորից որոնեցի…

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Որոնեցի հին գերեզմաններում և ծննդատներում, որոնեցի մեր բոլոր մեծ մարդկանց կենսագրություններում, որ շատ են նման իրար և շատ են տխուր:

ԱՐՑԱԽ-ՏՂԱ – Ես քեզ որոնեցի մեր պատմության բոլոր ապրիլներում, բայց հասկացա, որ մայիսն է ապրեցնում, որ Շուշին հայ ռազմարվեստի սրբավայրն է, որ Թալիշը թշնամու հաստատված բնազդն է, Քառօրյա պատերազմը՝ կենդանի հերոսների նետած նռնակը…

ԳՐՈՂ – Այս «Էսքիզներում» ես գուցե ավելի կորցրել, քան գտել եմ քեզ: Բայց կորցրել եմ՝ փորձելով գտնել և հավատալով, որ կգտնեմ: Կգտնե՞մ արդյոք…

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – Կգտնեն ուրիշները, և մի՞թե դա է կարևոր: Մենք շատ բան ենք կորցրել պատմության խաչմերուկներում և կորցրած տարածությունը կրճատելու համար պիտի վազենք: Բայց մենք վազում ենք ետ նայելով: Այդպես չի անում ոչ մի իսկական վազող, այդպես շատ ուրիշներն էլ, որ հիմա ղեռ գալիս են հետևից, առաջ կանցնեն: Մեզ թվում է՝ բավական է ետ չնայել, և կմոռանանք մեր պատմությունը, մեր պարանոցները շատ են ծռված: Ես քեզ որոնեցի այդ վազքի մեջ և ուզում եմ, որ դու վազես՝ առաջ նայելով:

ԳՐՈՂ – Առաջ, իսկ անցյալը մեր արյան մեջ է, մեր ճակատագրի, մեր լռության:

Այս էսքիզները ավարտելուց հետո ես նորից ճանապարհ կելնեմ՝ քեզ որոնելու:

(Կանգնում են՝ հերթով ասելով):

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – Ճանապարհ կելնեմ՝
ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – քեզ որոնելու,
ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՋԱՆ-ԱՂՋԻԿ – գտնելու,
ԳՈԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԿԱԾՐՋԱՆ-ՏՂԱ – չգտնելու,
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՋԻԿ – շփոթելու,
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՂԱ – կորցնելու,
ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ՏՂԱ – կասկածելու,
ԾԻՐԱՆԻ ԾԱՌ-ԱՂՋԻԿ– սիրելու,
ԱՐՅԱԽ-ՏՂԱ – մաքառելու,
ԱՐՅԱԽ-ԱՂՋԻԿ – հավատալու,
ՍՓՅՈՒՌՔ-ԱՂՋԻԿ – միավորելու,
ՍՓՅՈՒՌՔ-ՏՂԱ – քեզ համար ապրելու:
ԲՈԼՈՐԸ – Քե՛զ համար ապրելու:

(Երաժշտություն՝ Էդգար Գյումջյանի «Հայրենիք», մասնակիցների խոնարհում, այնուհետև բոլորը միասին, բեմեզրին կանգնած, երգում են):

Վերջ

Բովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 3
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ 4
ՀԵ՞Յ, Ո՞Վ ԿԱ… ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՋԻՄ ԴԵՆԴԻՆ 7
ՔԱՋ ՆԱԶԱՐ 33
ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ… 91
ՑՈՒՑԱԿԸ 119
ԸՆԿ. Բ. ՓԱՆՋՈՒՆԻ 131
ԿԱՐՈՏ 189
ԵՎ ԱՅՐ ՄԻ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ 201
ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ 223
ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ 293

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԻԵՄՆԵՐԻ ՍՑԵՆԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

(ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիա)

Նվիրվում է ԵՊՀ մշակույթի կենտրոնի հիմնադրման 15-ամյակին:

Համակարգչային շարվածքը՝ Վ. Սահիրադյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 25.05.2021:
Չափսը՝ 70x100 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 21.875 + 8 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021
publishing.ysu.am